Վահագն Դավթյան

ԱՍՏՂ ԵՎ ՅՈՐԵՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱՍՏՂ ԵՎ ՑՈՐԵՆ

Երևան 2016

Գիրքը տպագրության է պատրաստվել «Լոռվա ձոր» հայրենակցական միության աջակցությամբ

Կազմողներ և խմբագիրներ՝ *Սիլվա Յուզբաշյան*
Սերգո Երիցյան

Գրքում ամփոփված է Վահագն Դավթյանի գրական ժառանգության զգալի մասը, նպատակ ունենալով ընդգրկել ցայտուն նմուշներ նրա տարբեր տարիների ստեղծագործություններից՝ «Ամառային ամպրոպ», «Անկեզ մորենի», «Ասք սիրո», «Գինու երգը», «Անքնություն», «Գովքեր և ողբեր», «Հողմաշունչ գիշերներ», «Լույս առավոտի», «Լույս՝ իբրև հաց» բանաստեղծական ժողովածուներից:

ISBN 978-9939-75-065-1

© Էդիթ Պրինտ

Վահագն Դավթյանի կյանքի վերջին տասնամյակը աշխարհավեր երկրաշարժի, Ղարաբաղյան շարժման և Անկախության հռչակման շրջանն էր, որը հիմնովին վերափոխեց հասարակական գիտակցությունը: Այդ օրերին մեր մշակույթի շատ անվանիներ շփոթահար կանգ առան. Վահագն Դավթյանը՝ հավատարիմ սրտի ձայնին, ստեղծեց ոչ միայն այդ «աղմուկի» գիտակցության մեջ չտեղավորվող աննման քնարական բանաստեղծություններ, այլև նոր իրողություններին նվիրված բարձրարժեք ստեղծագործություններ՝ ակամա դառնալով ժամանակի պատմիչն ու դպիրը: Սակայն արժեհամակարգը բեկվել էր, նորը դեռ չէր հաստատվել, հինն էլ արդեն չկար, և սակավ չէին դեպքերը, երբ ցրտի ու սովի այդ ժամանակներում ծխնելույզներից երկինք էր հառնում գրքերի ծուխը: Չնայած գրական արգասաբերությանը՝ այդ տարիներին Վահագն Դավթյանը գրեթե գրքեր չհրապարակեց: Մահից հետո եկող տասնամյակներում հրատարակվեցին գրքույկներ, որոնք իրենց ծավալով չէին կարող լիովին ներկայացնել մեծ բանաստեղծին: Այս ժողովածուն հատընտիր չէ, որքան հնարավոր է մեկ գրքի սահմաններում ներկայացված են տարբեր տարիներին հրատարակված և վերջին տարիներին գրված բանաստեղծություններն ու պոեմները:

Պարզապես ձգտել ենք պահպանել Վահագն Դավթյանի ստեղծագործության ամբողջականությունը՝ ներկայացվող բանաստեղծություններով ու պոեմներով: Վահագն Դավթյանը կենդանության օրոք անաղմուկ ստեղծեց բանաստեղծական իր աշխարհը՝ զուտ Դավթյանական, քնարական իր կենսագրությունը, որն հոգու ճանապարհի պատմություն է, և սկիզբ է առնում ծննդավայր Արաբկիրից ու հասնում դեպի «Լույս առավոտի» ները... Այս գրքում ընթերցողին փորձել ենք ուղեկցել այդ ճանապարհի արահետներով... Ընտրելով դրանցից յուրաքանչյուրը՝ այս ժողովածուի համար հենց այս և նման իրողություններն ենք հաշվի առել, մանավանդ որ բարի կամեցողները ցանկություն էին հայտնել օժանդակել ներկայացվող ժողովածուի հրատարակությանը:

Առիթն ուզում եմ օգտագործել և շնորհակալություն հայտնել «Լոռվա ձոր» հայրենակցական միությանը և նրա նախագահ Սերգո Երիցյանին՝ այս ժողովածուի պատրաստման ու տպագրության գործում ունեցած օգնության ու աջակցության համար:

Սիլվա Յուզբաշյան, *ՀՀ վաստակավոր արտիստ*

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԻ ԱՇԽԱՐՀ

Վահագն Դավթյանի ստեղծագործությունն ամբողջացած մի աշխարհ է, ամբողջական մի շենք: Եվ այդ շենքը նման է միջնադարյան վանքի, հիմքերը՝ որձաքարե ժայռերի մեջ, գմբեթը՝ երկնքում: Եվ այդ այնքան է ներդաշնակ իր շրջապատին, այնպես է ձուլված ու խառնված բնությանն ու բնականին, որ շատ հեռուներից չի երևում: Տեսնելու, նրան հասնելու համար պետք է հավատավոր լինես ու արվեստի ուխտավոր, որպեսզի հաղթահարես ճանապարհի դժվարությունը: Իսկ վանքի ճանապարհը միշտ էլ դժվար է եղել: Երևի նրա համար, որ ուխտավորդ մարզի մարմինը, հոգնի ու տաճարի վեհության առաջ հանգստանա միանգամից ու վեհանա... Թե ինչ նոր օժանդակ շենքեր է կառուցելու Վահագն Դավթյանն իր տաճարի շուրջը, մեզ հայտնի չէ, թերևս չգիտե նաև ինքը: Կարևորն այն է, որ նրա կառուցածը տաճար է՝ երկար, շատ երկար ժամանակների և շատ սերունդների համար:

Թող Աստված չանի, իսկ Աստծո աչքը, թվում է, կշտացել է մեր գլխին աղետներ բերելուց և չի անի, եթե հանկարծ աղետ պատահեր և աշխարհի երեսից վերանար հայ բազմադարյան պոեզիան և հրաշքով փրկվեր միայն Վահագն Դավթյանի վերջին ծաղկաքաղ մատյանը, այդ մատյանը կարդալով, մարդիկ կպատկերացնեին, թե ազգային ինչպիսի մեծ ու ազնիվ պոեզիայի արդյունք է դա, թե բանաստեղծության ինչ լեզու և լեզվի ինչ բանաստեղծություն է ունեցել հայ ժողովուրդը: Կպատկերացնեին, ինչպես մենք ենք պատկերացնում նախաքրիստոնեական ժամանակների մեր պոեզիայի վեհությունը մեզ հասած պատառիկների շնորհիվ: Կպատկերացնեին, որովհետև այդ մատյանն իր մեջ առած

ունի հայ պոեզիայի բոլոր լավագույն հատկությունները՝ «Վահագնի ծնունդից» մինչև «Հոգեհանգիստ», մինչև «Ափ մը մոխիր», մինչև «Երկիր Նաիրի» (տերյանական), մինչև «Ես իմ անուշ Հայաստանի», մինչև «Արա Գեղեցիկ» ու «Ձայն հայրենական»: Այս բոլորը, երևի, այսքան նշանակալից չլիներ, չդառնար այդքան մեծ արժեք, եթե չկրեր Դավթյանի անխառն անհատականության կնիքը: Անհատականություն, որի անստորագիր կես տողի ելևէջն անգամ անմիջապես մատնում է հեղինակին: Իսկ ինչպիսի՞ բանաստեղծ է Վահագն Դավթյանը այդ մատյանով... «հանդա՞ռտ», «մեծադղո՞ռդ», «ինտելեկտուա՞լ», «զգացմունքայի՞ն», «կրքայի՞ն», թե՞ «կյանքայի՞ն»: Ես կասեի՝ բոլորը միասին, ամբողջական, միակտոր, միաձույլ, կատարյալ, անթերի:

Երջանիկ է Վահագն Դավթյանը, սերնդակից-գրչակիցները միշտ էլ բարի նախանձով են նայել ջուլիակ նախնիներից ժառանգած նրա աշխատասիրությանը, ազնիվ մտավորականի պահվածքին, գրական բարձր ճաշակին և քառատողերի անմրցակից ճարտարությանը...

Երկու տասնամյակ առաջ լրագրողի այն հարցին, թե ժամանակակից ո՞ր հայ բանաստեղծին եմ սիրում, պատասխանել էի. «Մեկին սիրելը լավ է միայն ընտանիք կազմելու և պահպանելու համար, իսկ գրականության մեջ պարտադիր չէ»: Նշել էի տասը բանաստեղծի անուն, որոնց սիրում էի և սիրում եմ ամեն մեկին մեկ կամ մի քանի առավելությունների համար: «Սիրում եմ այդ բոլորին,- ասել էի,- բայց խանդում եմ միայն Վահագն Դավթյանին, որովհետև նա, ասելիքից բացի, ունի նաև պատմելիք և ունի սեփական անհանգիստ միտքն անընդհատ կարգավորող խելք, որ ուրիշ խոսքով մեծ տաղանդ է նշանակում»:

Այսօր էլ, եթե ինձ տրվեր այդ հարցը, նույն պատասխանը կտայի, միայն մեր մյուս բանաստեղծներին չնեղացնելու համար կավելացնեի գուսանի նախնական ու սրտալի տողը.

«Սիրուններ, միք նեղանա, որ ես իմ յարին եմ գովում»:

Մի հանդիպման ժամանակ Վահագն Դավթյանին հարցրին՝ ո՞րն է Ձեր ամենալավ բանաստեղծությունը՝ Ձեր կարծիքով: Դավթյանը պատասխանեց, որ տակավին չի գրվել այդ բանաստեղծությունը, որ այդ բանաստեղծությունը պետք է լինի զարմանալի պարզ ու տաք մի երգ: Երգ, որն անբառ է իբրև թախծություն, իբր հառաչ, որ անհուն է, անմեկնելի է ու անեզրական...

Եվ սա ասում է այն բանաստեղծը, որ հայ պոեզիային տվել է այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Թոնդրակեցիներ», «Բայց ծնվեցի», «Ասք սիրո և սրի», «Ռեքվիեմ» պոեմները, տաղերի շարքը և բազմաթիվ այլ բանաստեղծություններ...

Ի՞նչ է սա՝ պչրականությո՞ւն, թե՞ անվստահություն իր ստեղծածի նկատմամբ: Ո՛չ մեկը, ոչ մյուսը: Եվ ո՛չ էլ այն, որ իր պոեզիայի այդքան ներդաշնակ ու ամբողջական տաճարներից չի կարող առանձնացնել մի քար, մի քանդակ և ասել՝ սա՛ է ամենից լավը... Շենքի ներդաշնակությունը խախտելու վախ նա չունի: Պարզապես ճշմարիտ արվեստագետի համար իր ամեն մի ձեռքբերումը, նվաճումը, հաղթանակը ոչ թե արտոնություն է բերում, այլ նոր պատասխանատվություն, մի նոր պարտք, և վճարած ամեն մի պարտքը դառնում է հրամայական նոր պարտքերի... Եվ այսպես շարունակ: Այսպես է: Բայց ես կուզենայի, իբրև Դավթյանի պոեզիայի հավատավոր ընթերցող, իրավունք վերապահել ինձ և ասել, որ Վահագնը ինձ համար արդեն գրել է այդ զարմանայի պարզ ու տաք երգը, երգ, որ անբառ է իբրև թախծություն և իբրև հառաչ...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ
1982 թ.

ԵՐԲ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ

Երբ վերջին անգամ աչքերս փակվեն այս աշխարհի դեմ,
Եվ հայացքիս դեմ թրթռա վերջին ծառագայթը ջինջ,
Կոպերիս տակով մի վերջին անգամ կվազի, գիտեմ,
Մի ոտաբոբիկ, բարակ մի աղջիկ:

Նա, որ աչքերի առեղծվածներում լույս ուներ ու սև,
Նա, որ անմեղ էր և անմեղորեն չար ու մեղսական,
Նա, որի հետքով պատանությունս վազեց հևիհև,
Վազեց կարոտով, չհասավ սակայն...

Երբ վերջին անգամ աչքերս փակվեն այս աշխարհի դեմ,
Ու երբ ծակատիս թրթռա շունչը ուրիշ մի հովի,
Իմ կոպերի տակ մի վերջին անգամ կփովի, գիտեմ,
Մի արևավոր, հեռավոր հովիտ:

Կխշշա խաղաղ ոսկե մի գետակ ու բարդի մի զով,
Կթախծի լռին կտուրն արևոտ տունն իմ հայրական,
Հեռու մի հովիտ, ուր կարոտներիս արահետներով
Քայլեցի անվերջ, չհասա սակայն...

Երբ վերջին անգամ աչքերս փակվեն այս աշխարհի դեմ,
Ու փովի իմ դեմ անհուն լռության ուրիշ մի եզերք,
Ծարավից ճաքած շուրթերիս վրա կդողա, գիտեմ,
Մի զարմանալի, պարզ ու տաք մի երգ:

Երգ, որ անբառ է իբրև թախծություն ու իբրև հառաչ,
Երգ, որ անհուն է, անմեկնելի է ու անեզրական,
Երգ, որ ողջ կյանքում իմ շրթունքների կարոտին թառած՝
Թրթռաց, դողաց, չծնված սակայն...

1970

Մի լիցի ինձ
Երկնել և ոչ ծնանել...
Ամպել և ոչ անձրևել,
Ընթանալ և ոչ հասանել...

Գրիգոր Նարեկացի

ԱՆԿԵԶ ՄՈՐԵՆԻ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

...Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում,
Իմ ցավի մեջ ու հույսի կապույտ աստղեր են կաթում:

Կապույտի մեջ ու լույսի մեր այն տունն է՝ հնօրյան,
Որի դռնակն էր բուրում որպես աղոթք ու ցորյան:

Մեր բարդիները բոլոր արշալույսներ են հագել,
Զրնգում են օդի մեջ լեցուն ու տաք փեթակներ:

Արածանին անեծքի շառաչյունը մոռացել
Եվ ծայրեծայր օրհնություն ու շարական է դարձել:

Մեր լեռնաշխարհն է փռված մինչև Սասուն, մինչև Վան,
Որպես հայացքն Աստըծո՝ կապույտ երկինքը վրան:

Ծուխ է ելնում շեներից... Ու ծխի մեջ արևոտ
Անուշ բուրմունք կա հացի, ու կա մի սուրբ խղճի հոտ:

Ֆիդայիները բոլոր լեռներից տուն են դարձել,
Եվ ափերի մեջ նրանց մաճն է նորից քաղցրացել:

Հորովելն է երկարում ճառագայթի պես բարի,
Խիղճը աստված է նորից ու խոփն է տերն աշխարհի:

...Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում
Այդ աստղային պատրանքից ցավիս մեջ ցավ է կաթում:

ԾՆՆԴԱՎԱՅՐ

Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Նա, որ բուրում էր իբրև ցորեն հաց
Եվ բուրում իբրև գարնան հող ու ցել...

Եվ մնացել է առաջին անգամ
Աշխարհում տեսած իմ աղբյուրն այն ջինջ,
Որից զրնգուն ու անապական
Եվ որից պայծառ չտեսա ոչինչ:

Եվ մնացել է լուսեղեն մի ամպ,
Եվ մնացել է այնպիսի մի ձյուն,
Որ իր բարությամբ ու արդարությամբ
Նման էր այնպես մանկության Աստծուն:

Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Երկինք ու բարդի, ճառագայթ ու լաց,
Իմ հողի հոտն է այնտեղ մնացել...

ԿԱՆՉ

Ու ես ասում եմ. – Կանգնիր, առավո՛տ,
Ես էլ եմ գալիս,
Այնպես է թվում, թե հեռու հեռվից
Ինձ ձայն են տալիս:

Ու ես չգիտեմ, դա անլսելի
Զնգո՞ցն է քարի,
Շշո՞ւկը հողի, թե՞ սոսափյունը
Սոսյաց անտառի:

Ու ես չգիտեմ. անդնդում կորած
Գե՞տն է տվայտող,
Թե՞ հին խաչքարից ինձ ձայն է տալիս
Մամռոտած մի տող:

Լռությո՞ւնն է դա ճգնակեցությամբ
Ապրող անձավի,
Թե՞ կաթիլ-կաթիլ մորմոքն է քամվում
Հնամյա ցավի:

Գուցե լեռներում վարգում է մի որբ,
Տխուր հովատակ,
Եվ կապույտի մեջ փշրվում է խուլ
Վրնջոցը տաք:

Կամ գուցե, գուցե դա դարեր առաջ
Ինձանից զատված
Իմ իսկ ղողանջն է, որ ետ է դառնում
Մաքուր ու զտված:

Այդ կանչերի մեջ մի կորած, հեռու
Աշխարհ է լալիս:
Ու ես ասում եմ. – Կանգնիր, առավո՛տ,
Ես էլ եմ գալիս:

ԱՌԱՋԻՆ ՀՈՒՇ

Առաջին տեսիլ, առաջին երազ,
Առաջին իմ հուշ...
...Մի կավե կտուր, մի չթե վերմակ,
Ու գիշեր է ուշ:

Ինչ-որ խուլ ցավից արթնացել եմ ես,
Լալիս եմ աղի,
Արցունքներիս մեջ դողում են բարդին
Ու աստղը ծավի:

Տատիկս ելել, չոքել լուսնի դեմ,
Աղոթք է անում
Եվ աղերսում է նա ինչ-որ մեկին,
Չգիտեմ, թե ում...

Արցունքիս միջով նայում եմ լուսնին,
Կեսն ամպի տակ է,
Իմ տատի դեմքն էլ այդպես ամպամած
Ու սպիտակ է:

Լուսնի դեմ չոքել, աղոթք է անում
Ձեռքերը սրտին,
Սակայն ոչ մի կերպ ես չեմ հասկանում
Խոսքերն իր խրթին:

Ախ, գիտեմ, գիտեմ, որ չի հասկանում
Եվ Աստված ինքը,
Թե չէ ինչպե՞ս է, որ մեզ չի տանում
Իր մոտ՝ երկինքը...

Ասում են այնտեղ փափուկ է այնպես,
Փափուկ է ու տաք,
Ցավ չկա այնտեղ, կա միայն արև,
Ամպ ու հրեշտակ:

Բայց գուցե սուտ է... Տես, մի աստղ ընկավ,
Որ հեռվում մարի,
Երևի այնտեղ, ախ, նրա ոտքն էլ
Առել է քարի:

Ու քար գլորվեց... Մթին ձորերով
Այծամարդն անցավ...
...Մի կավե կտուր, մի չթե վերմակ,
Ինչ-որ խուլ մի ցավ:

ԳԱՌԸ

Մեր հին այգին է,
Մեր եղրևանու թուփը կապուտակ
Ու ձերմակ մի գառ,
Որ արածում է եղրևանու տակ...

Օրն արևոտ է...
Տաք շառավիղը աչքերս է ծակում,
Երմոնյա տատս սև բուրդ է թրջում Ոսկեգետակում:
Սև բուրդ է թրջում ու խոսում կամաց,
Ո՞ւմ հետ է խոսում,
Ջրի՞,
Արևի՞...
Դեմից սարերն են նայում քարացած,
Սարերի հետ է
Կամ Աստծո հետ է խոսում երևի:

Տատս սև բուրդ է գետում լվանում,
Բայց ջուրը խփում, ալիք է տալիս
Ու բուրդը տանում:
Տատիս պատկերն էլ
Ալիքների մեջ օրորվում հանդարտ
Ու փշրվում է,
Ու ջրերի հետ գնում է անդարձ:
Երեկոն իջնում,
Լուռ ծվարում է եղրևանու տակ,
Ու ինչ-որ մեկը մորթում է այգում գառն այն սպիտակ:

Հետո մշու՛շ է...
Մի պաղ մահիկ է երկնքից նայում,
Եվ ամբողջ կյանքում
Մի մորթվող գառ է սրտիս մեջ մայում...

ՋՐՀՈՐԸ

Գլուխս կախել, նայում եմ անթարթ
Ու ինձ եմ տեսնում մեր մութ ջրհորում,
Ասում են՝ այնտեղ ցերեկով անգամ
Երկնքի ոսկե աստղերն են լողում:

Ամառ է ու շոգ, սակայն ջրհորից
Բուրում է մի զով, մի խոնավ աշուն...
Մայրս դույլն առել, եկել է նորից,
Թեքվել ջրհորին ու ջուր է քաշում:

Դույլը իջնում է զվարթ զնգոցով
Եվ արձագանք է խորքերում տալիս,
Դույլը ելնում է ծանր տնքոցով
Եվ պատերն ի վար արցունք է լալիս:

Նայում եմ նորից ջրերին խավար,
Որ հանդարտվեցին ու իրար եկան...
Թաց քարերն ի վար, մամուռներն ի վար
Արցունք է կաթում... Ու աստղեր չկան...

ՀԵՔԻԱԹԸ

«Հեքիաթ-հեքիաթ... Այս պապս,
Կարմիր քուռակը տակս...»:

Հեքիաթ-հեքիաթ... Ու դրսում
Պար է բռնել սատանան...
Այդ ծտերն են աղերսում,
Որ ներս առնենք, տաքանան...

Ու ձգում է քամու հետ
Տատս կծիկն իր խոսքի...
Կրակի մեջ, նայեցեք,
Ինչ կապույտ կա ու ոսկի:

Քունը եկել, ծովացել
Ու աչքերիցս է թափվում,
Ախ, ձեռքերը իմ տատի
Ինչքան տաք են ու փափուկ:

Լողում եմ ես ու սուզվում
Ամպերի մեջ սպիտակ:
– Եկեք, եկեք, թռչուններ,
Այստեղ լավ է, այստեղ տաք:

«Հեքիաթ-հեքիաթ... Այս պապս,
Կարմիր քուռակը տակս...»:

Աչք եմ բացում, ոչ կապույտ,
Ոչ ոսկի կա, ոչ կրակ...
– Ո՞վ գողացավ, ո՞վ տարավ
Քեզ, հրեղեն իմ քուռակ...

ԳԻՇԵՐ

Սև գերան է, սև պատ,
Սև լուսամուտ, սև շուք,
Տվայտում է մթնում
Մի խեղդված շշուկ.

– Հիսու՛ս, բոբիկ Հիսու՛ս,
Այստեղ փուշ է ու քար,
Եվ դու իզուր, Հիսուս,
Այս երկիրը եկար:

Մեր սրտի մեջ սև ամպ,
Սև կարկուտ է ու ձյուն,
Մենք ո՞ւր պատսպարենք
Մեզ պես արնոտ Աստծուն:

Սև գերան է, սև պատ,
Սև լուսամուտ, սև շուք,
Տվայտում է դրսում
Գիշերվա խուլ մի բուք:

– Հիսու՛ս, բոբիկ Հիսու՛ս,
Ճամփադ փուշ է ու քար,
Եվ արյուն է կաթում
Քո սքեմից երկար:

Բայց թե կուզես՝ արի,
Արի մեր տուն, օրհնած,
Որ այս անգամ արդեն
Տառապանքից ոռնաս:

ՎԻՐԱՎՈՐ ԿՌՈՒՆԿԸ

Գարնան առավոտ...
Կանաչ է ուռին...
Մի կռունկ իջավ
Մեր տան կտուրին:
Օրը զնգում է,
Օրը վրնջում,
Բայց տատիս երգը
Տխուր է հնչում:

«Ձնից ձերմակ է
Քո թևը, կռու՛նկ,
Սիրտդ ամպի պես,
Ախ, սև է, կռո՛ւնկ,
Դու զույգ գնացիր,
Մենակ ես գալիս,
Ո՞ւր է, ախ, ո՞ւր է
Քո սերը, կռո՛ւնկ»:

Երամից զատված
Իջել կտուրին,
Կտուցով թևն է
Շոյում նա լռին:
Մղկտում է նա,
Վիրավոր լալիս
Ու հետո նորից
Թևին է տալիս:

«Հարավա քամին
Թեթև է, կռունկ,
Բայց, ա՜խ, ջարդել են
Քո թևը, կռունկ,
Դու էլ չես հասնի
Չված երամիդ,
Կարմիրդ անցավ,
Քո սևն է, կռունկ»...

ՀԱՄՐ ՔԱՐԵՐ

Ախ, այն քարերը,
Ծա՛նր քարերը,

Ամռան արևից շիկացել, կիզվել,
Մի կաթիլ ջրի տենչից այրվել են,
Սառնամանիքից ճաքճքել, կիսվել,
Ձյունամրրիկից հողմահարվել են:

Ախ, այն քարերը,
Հա՛մր քարերը...

Ես հեռու հեռվից լսում եմ ասես
Նրանց հառաչն ու ցավի քրքիջը...

Ինչ ահավո՛ր է
Համրերի ճիչը...

ՈՍԿԵԳԵՏԱԿԸ

Ակունքը հեռու,
Ակունքը կապույտ,
Ակունքը կանաչ
Լեռների տակ էր,
Ջուրը՝ արտասուք,
Հատակը ոսկի,
Եվ անունն, այո՛,
Ոսկեգետակ էր:

Թեքվել եմ ահա
Վազող ջրերին,
Որ աստղով, լույսով,
Շողքով են լիքը,
Ուզում եմ բռնել,
Բայց ձեռքերիս մեջ
Թռչուն է դառնում
Վճիտ ալիքը...

Թռչուն է դառնում,
Զարկում ափերիս
Իր թրթռացող
Թևերի դողը,
Թևին է տալիս,
Թռչում է հեռու,
Տանում է անդարձ
Իր լույսն ու շողը:

Ակունքը հեռու,
Ակունքը կապույտ,
Ակունքը կանաչ
Լեռների տակ էր,
Ոսկի էր տանում,
Հեռու էր տանում,
Անդա՜ռծ էր տանում
Ոսկեգետակը...

ԱՐՅՈՒՆՈՏ ԼՈՒՅՍ

Անքնությանս մեջ
ժայռեր էին, հավքեր...

ժայռեր էին,
Խաչված իրենց ստվերներին,
Եվ անանուն հավքեր,
Որ լուռ տվայտանքով
Փախչում էին, հավետ, իրենց ստվերներից...

Ու մասրիներ էին...

Չէին ծաղկել, օ՜, ոչ...
Նրանց փշոտ ու չոր ձեռքերի մեջ
Անվերջ թպրտալուց
Լույսն էր արյունոտվել:
ժայռեր էին,
Հավքեր
Ու մասրիներ էին...

ԱՄՊԵԼ ԷԻՆ, ՄԹՆԵԼ ԷԻՆ

Ամպել էին, մթնել էին
Դեմի լեռները,
Պարան-պարան կապում էին
Ա՜խ, մեր բեռները:

Կապում էին աման-չաման
Ու հին կարպետը,
Թողնում էին մեր թթենին,
Մեր տունն ու գետը:

Կապում էին վերմակ ու բարձ
Ու հին պղինձը,
Թողնում էին ոսկե առուն,
Մեր դաղձն ու սինձը:

Դարսում էին, կապում էին
Մեր ճամփի հացը,
Թփերի տակ թողնում էին
Ծիծաղս ու լացս:

Պարան-պարան կապում էին,
Ա՜խ, մեր բեռները,
Ամպերի տակ թողնում էին
Մեր հին լեռները...

ՇՈՒՆԸ

Չեմ հիշում հիմա, թե անունն ի՞նչ էր...
Հայացքը տխուր, տխուր ու ջինջ էր:

Մորթը սևուկ էր ու չալ էր պոչը,
Աստղերի հետ էր նրա հաչոցը:

Նրա ոռնոցը լուսնի դեմքին էր,
Ու նրա տեղը մեր տան շեմքին էր:

Հետո ամեն ինչ մեգ-մշուշում է,
Եվ մշուշի մեջ ոռնում է շունը:

...Նա մեր գնալու հոտը առել էր,
Ցավից կուչ եկել ու պառավել էր...

Տխուր էր այնպես ու սրտադող էր,
Ոռնում էր անվերջ, փորում էր հողը:

Եվ շան մասին էր իմ տատի հարցը.
–Ի՞նչ պիտի լինի խեղճ արարածը:

Հետո ամեն ինչ մեգ-մշուշում է,
Ու մշուշի մեջ ոռնում է շունը:

...Մեր բեռը կապած ու ձին բարձած էր,
Մեր դռան առաջ արցունք ու լաց էր:

Շունը կլանչում, շեմքը թողնում էր,
Փաթաթվում տատիս, տխուր ոռնում էր:

Մերթ վազում դեպի մեր քարավանը,
Մերթ ետ էր դառնում, պառկում դռանը:

Հարցում էր անում, ասես, մեր շունը.
Թե թողնի՞ արդյոք այգին ու տունը,

Ծանոթ աստղերը, ծանոթ լուսինը,
Որ ամեն գիշեր մեր տան ուսին էր:

Հետո ամեն ինչ մեգ-մշուշում է,
Ու մշուշի մեջ ոռնում է շունը:

Տխուր զնգում է ձիու զանգակը,
Մեր ճամփան հեռու երկնքի տակ էր:

Ու քանի անգամ, ախ, քանի-քանի,
Նա եկավ հետքով մեր քարավանի:

Հևիհև էր նա, լեզուն հանած էր,
Խոնավ աչքերում խոնավ մի հարց էր:

Փաթաթվում էր ինձ, լիզում էր ձեռքս,
Կիսում էր հացս, կիսում էր վերքս:

Ոռնում, վայում էր նա գիշերն ամբողջ
Ու ետ սլանում իր եկած ճամփով:

Հետո ամեն ինչ մեգ-մշուշում է,
Ու մշուշի մեջ ոռնում է շունը:

Կլանչում է նա, վազում հևիհև
Մեր քարավանի ու մեր տան միջև...

ԵՓՐԱՏԸ

Եվ ոլորվում է մեր քարավանը,
Մեր քարավանը իջնում է վար,
Ձորից ելնում է Եփրատի ձայնը,
Ձորում որոտ է, փրփուր ու քար:

Գետը ծեծում է իր քարե պատը,
Գետը ողբում է ու մռնչում...
Տատս պատմել է, որ այծամարդը
Մթնով սրինգ է այստեղ փչում:

Որ նա մտնում է մթին այրերը,
Որ նա իջնում է ջրի հատակ
Եվ իր գանձերը, անգին քարերը
Հանում, փռում է լուսնյակի տակ:

Ու ես նայում եմ, ժայռերը թաց են,
Եվ արեգակն է ջրին ծաթել,
Այնտեղ փռվածը, այնտեղ ցրվածը
Անգին քարեր են ու սրմաթել:

Կամուրջը մոտ է, խենթ մռնչում են,
Ահեղ շնչում են ջրերը, տե՛ս...
Մեր ձին խրտնում է ու վրնջում է
Ու փրփրում է Եփրատի պես:

Ջրերի ողբ է, ջրերի ճիչ է,
Ժայռը զնգում է իբրև զանգակ...
Ի՞նչ իմանայի՝ թողածս ի՛նչ է
Եվ ի՛նչ եմ տեսնում վերջին անգամ...

ՓՈՒՇԸ

...Ու մինչև հիմա չգիտեմ հաստատ,
Դեղին տենդ է դա,
Երազ է,
Թե՞ հուշ...

Գնո՜ւմ է, գնում հոգնած մի մանուկ,
Ոտաբոբիկ է,
Ճանապարհը՝ փուշ:

Ամռան արևը դաշտին ու սարին
Իր դեղին ու տաք մորմոքն է քամել,
Մանուկը նստել շիկացած քարին
Եվ ուզում է փուշն իր ոտքից հանել:

Ու մինչև հիմա դեղին տենդի մեջ
Արևն իր դեղին մորմոքն է քամում...

Մանուկն ուզում է
Ոտքի փուշն հանել,
Բայց մինչև օրս չի՛ կարողանում:

ԵՎ ՄԻ ԱՇԽԱՐՀ ՄՆԱՑ ԱՅՆՏԵՂ

Եվ մի աշխարհ մնաց այնտեղ՝ բարդիներով, գետերով,
Լեռներն ի վար ծալ-ծալ իջնող անիրական եթերով:

Եվ մնացին ակնաղբյուրներ, որ բխում աջ ու ձախից
Ու արծաթե թարթիչներին լույս են տանում ու թախիծ:

Եվ կատարներ, որոնց վրա՝ ոտքերի տակ ձյուն ու ամպ,
Արշալույսն է միայն կանգնում իր բարբարոս մերկությամբ:

Եվ լճակներ, որ ծվարած կատարներին, վերերում
Միայն Աստծո ու աստղերի ցոլանքից են երերում:

Մնաց քամին թափառական, մնաց քարափն ամայի,
Քարափի տակ մի բուռ կանաչ ու անմոռուկ մի վայրի:

Եվ մնացին արահետներ, որ շվարած կարկամում
Ու չգիտեն, ո՞ւր են գալիս, ո՞ւր են գնում, ո՞ւր տանում:

Եվ հանդերում, լուսնյակի տակ մնացին տաղ ու կանչեր
Որ գիշերով զարթնում հանկարծ և ուզում են ղողանջել:

Եվ ծայրեծայր մնաց մի գետ, որ փրփրած ծառանում,
Հետո անզոր փշրվելով, իր որձաքարն է ծամում....

ՄԵՐ ԾԻԾԵՌՆԱԿԸ

Եվ երևի հաջորդ գարուն,
Երբ աչք բացեց մեր տան առուն,
Ծաղկեց մեր թուփն ու ծառը մեր,
Վերադարձավ ծիծառը մեր,
Որ ձագ հանի մեր տան քիվին,
Նորից երկինքն առնի թևին,
Ճախրի թեթև ու թևածի
Լույսերի մեջ լուսաբացի...

Բայց տեսնելով թափուր մի տուն,
Մամռած մի սեմ, բակ մի տրտում,
Ի՞նչ իմանաս, նա ի՞նչ արեց...
Ա՜խ, երևի թափահարեց,
Մեկ ցած իջավ, մեկ ելավ վեր,
Ճչաց տխուր ու կարեվեր,
Եվ տեսնելով, որ արդեն բուն
Պատի խորշում դրել է բույն,
Փետուրները քամուն տված,
Մեր տան վրա տխուր ծվաց...

Եվ այլ մի հավք նստած ծառին,
Երբ հարց տվեց մեր ծիծառին,
Թե՝ ծիծեռնակ, դու էս գարուն,
Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արուն,
Ի՞նչ իմանաս, ի՞նչ ձայն հանեց,
Մեր ծիծառն ի՞նչ պատասխանեց...

ԱՅՆՏԵՂ, ԱՐԵՎՈՏ ԱՅՆ ՔԱՐԱՓՆԵՐԻՆ

Այնտեղ՝ արևոտ այն քարափներին
Իմ մանկությունը պիտի ղողանջեր,
Թառեր Եփրատի փրփրած թևին
Եվ ընկուզենու կատարից կանչեր:

Կիրճերի մթին քարանձավներում
Որոներ պիտի նա գաղտնիք ու գանձ,
Սլանար պիտի հանդերի հեռուն
Ու տուն գար, ամռան բուրմունքը հագած:

Կավե կտուրից պիտի գիշերով
Ջրվորի տաղին նա ականջ դներ,
Երկնքից բռներ ասուպներ ու շող
Եվ այդ ամենը ծոցն առած, քներ...

Եվ լուսաբացին անուշ քնի մեջ
Նա լսեր պիտի երգը մաքոքի,
Ու վրան փռվեր այն երկինքը մեծ
Իբրև Աստծո կապուտակ ոգի:

Բայց հուշի փշուր, մոխիր է ու հող,
Հանգած ասուպ է ու շող է տրտում,
Հեռավոր հովտում դանդաղ ավերվող
Քարե մի տնակ, հայրենի մի տուն:

ԿԱՊՈՒՅՏ ԱՆԴՈՒՆԴ

Եվ հիմա այնտեղ խորունկ մի ձորում
Գարունն է վառում քնքշանքն իր վայրի,
Ձնծաղկի աչքից կապույտ է ծորում,
Կապույտով լցնում անդունդն ամայի:

Աղբյուրը ժայռից ներքև է կախում
Իր հեկեկանքն ու լույսը իր թախծի,
Եվ պատառոտված ժայռի երախում
Ծվար դողում է մենավոր մի ծիլ:

Անդունդներն ի վար թավալվում են դեռ
Զարթնող որոտներ ու մեռնող ձյուներ,
Ու լեռներն ի վեր գալարվում են դեռ
Անձև կարոտներ ու թախծություններ:

Գարնան պաղ քամին մոլորվում ձորում,
Քարայր է մտնում, որ տխուր վայի,
Ձնծաղկի աչքից թախիծ է ծորում,
Թախիծո՛վ լցնում անդունդն ամայի:

ՁԱՅՆԵՐ

...Ու գիտեմ հաստատ,
Որ երբ գիշերն է իջնում աշխարհին,
Երբ քարափներից լուսինը թել-թել ցնորք է կախում,
Երբ քարաքոսը գայլի մորթու պես ցոլանք է տալիս,
Եվ հովն է զնգում քարանձավների մթին երախում,
Այնտեղ՝
Ճամփեքին ու ամայացած հովիտներն ի վեր,
Այնտեղ՝
Լեռներում ու շենների մեջ այն ավերակված
Զարթնում են հանկարծ վաղեմի ձայներ,
Արձագանքներ են արթնանում հանկարծ:

Զարթնում են ձայներ,
Որ իրիկնային ղողանջ են եղել,
Եղել հորովել՝ հովերի մեջ տաք,
Քարափի գլխից մանկանը կանչող մոր կանչ են եղել
Ու ջրվորի տաղ՝ լուսնկայի տակ...
Որ վարդավառի ուրախ ու տխուր զնգոց են եղել
Ու եղել հառաչ ու եղել են սուգ,
Ձայներ, որ թաքուն ու գոց են եղել,
Եղել են հեռվից պանդուխտին կանչող,
Հարսի լի կուրծքը գիշերով տանջող,
Տանջող, ախ, տանջող տաք ու խուլ շշուկ:
Ու ձայներ, ձայներ՝ Աստծո հետ խոսող,
Ձայներ ծնկաչոք, ձայներ աղերսող,
Ձայներ խնկահոտ ու հողոտ ձայներ,
Ձայներ արևոտ ու շողոտ ձայներ...

Արթնանում հանկարծ, իրար են գալիս,
Լուսնկայի տակ ծիծաղում, լալիս,
Զրնգում են զիլ,
Տվայտում են խուլ
Եվ լուսաբացին պապանձվում նորից,
Քար ու փշի մեջ ննջում են տխուր:

ԵՎ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՀԵԿԵԿԱՆՔ...

Ու երբ տանջել ես, ծարավ,
Ու երբ երազն է տարել,
Վեր եմ կացել ու կորած
Այն աշխարհում թափառել:

Մտել եմ կիրճն այն մթին՝
Ակնա ձորը բյուրական,
Ուր Եփրատն է որոտում՝
Շուրթին մի հին շարական:

Գտել եմ գյուղն այն փոքրիկ,
Ուր ուռիներ կան կախված՝
Իրիկնային արևով
Ու թախիծով թաթախված:

Թափառել եմ վիհերում,
Ժայռերի մեջ այն վառող,
Ուր աղբյուրներն են խոսում
Մանուկ Աստծո բարբառով:

Գտել գետն իմ մանկության՝
Ոսկեգետակ անունով,
Որ երկինքներ է բերում
Ու տանում է իր հունով:

Ուրցի ծաղիկ է տանում,
Լույս է տանում ու ակներ

Եվ մասրենուց կաթկթող
Ծիրանագույն ցոլանքներ:

Եվ լեռների գոգերին,
Վիհերի մեջ քարադուռ
Զանգերի պես զնգացող
Վանք եմ գտել ու մատուռ:

Եվ վանքերի բակերում,
Ձորերն ի վար, ջուրն ի վար
Արթնացել է հրաշքով
Մի վաղեմի վարդավառ:

Հնչել են տաղ ու հայրեն,
Զնգացել են վեմ ու վանք
Եվ արձագանք են դարձել,
Եվ դարձել են հեկեկանք...

ՄԵՂԵԴԻ

Եվ հնչում մի անբառ, մի անհուն մեղեդի,
Ծավալվում էր անվերջ հրդեհվող երկնքում,
Դա նվաճն էր արդյոք հրեղեն եղեգի,
Թե՞ բեկված կարոտիս ձայնալարն էր զնգում:

Եվ անբառ այդ երգում կար թախիծ մի անբառ,
Եվ արյան հեկեկանք, և աղերս մի տրտում,
Մի հովիտ կար հեռու, մի քարոտ ճանապարհ,
Մենավոր մի բարդի, մի դռնակ ու մի տուն:

Եվ կային քամու դեմ զնգացող զանգակներ,
Կար ավեր մատուռի տվայտող լռություն,
Եվ կանչեր հեռավոր, որ վաղուց են հանգել,
Բայց կանչում են կրկին ու կանչում են քեզ տուն:

Եվ իջնող մութի դեմ իր թևերը ջարդած,
Մեղեդին երկնքում մղկտում էր ցավոտ
Ու գնում էր հեռու, ու գնում էր անդարձ՝
Մթան մեջ թաղելու վիրավոր մի կարոտ:

ԱԿՆԱ ՁՈՐՈՒՄ

Այնտեղ՝ Ակնա ձորի վիհերն ի վար հոսում,
Դեռ երևի Եփրատն հայերեն է խոսում:

Սարավանդի վրա՝ հին ակոսներն ի վար
Հորովելն է հողոտ դեռ թպրտում շվար:

Որձաքարե անձավն իր կապույտը խնկում,
Ինչ-որ կորած մանկան ծիծաղով է զնգում:

Եվ քարափի վրա մի կիսավեր կոթող
Շուրթին պահել է դեռ մեսրոպատառ մի տող:

Եփրատի խոլ գոռոց, ձանապարհներ լռած,
Ու ոչ մեկը չկա, որ հասկանա նրանց:

Իսկ կործանված վանքի եղինջներում շաղոտ
Արթնանում է հանկարծ մի մոլորված աղոթք,

Եղինջներից այրում իր շրթունքներն անեղծ,
Քարեքար է զարկվում ու դառնում է անեծք:

ԱՍՏՂԻ ՊԵՍ

Եվ նորից սիրտս տվայտում է շոգ,
Թախծում է նորից այս խեղճն, այս վայրին,
Ուզում է գնալ, իջնել ծնկաչոք
Իր հողին, ջրին, ծննդավայրին:

Իջնել այն կապույտ առավոտի դեմ,
Որ բուրում ծխով, բուրում էր հացով,
Եվ հանդ գնացող խաղաղ հոտի դեմ,
Որ երկարում էր գառների լացով:

Իջնել այն բարդուն, որ կապույտ հագած,
Տարուբերվում է լույսերում վերին,
Եվ հայրենի տանն իմ ավերակված,
Որ բույն է դարձել լացող բվերին:

Այն եղինջներին, որ հեռվից վառում
Եվ այս մորմոքն են արյանս տալիս,
Եվ այն ջրհորին, որի խավարում
Իմ մանկությունն է աստղի պես լալիս:

ԹԵ ՀՐԱՇՔՈՎ...

Թե հրաշքով ձամփաս տանի
Դեպի Եփրատ ու մանկություն,
Հոտոտելով քեզ կգտնեմ,
Հայրենական փոքրիկ իմ տուն:

Այն կապույտից ու այն ոսկուց,
Որ ջրերին էին թառում,
Կճանաչեմ ու կգտնեմ
Իմ մանկության ոսկե առուն:

Հազարի մեջ կճանաչեմ
Իմ մանկության բարակ բարդին,
Որ խշշում էր երկինքն ի վեր,
Երկինքն առած իր սաղարթին:

Եվ օդի մեջ, ոլորտի մեջ,
Հովերի մեջ լուսաբացի
Ես կգտնեմ բույրերը տաք
Մեր տան ծխի ու մեր հացի:

Թե հրաշքով ձամփաս տանի
Դեպի Եփրատ ու մանկություն,
Հոտոտելով քեզ կգտնեմ,
Հայրենական փոքրիկ իմ տուն:

ՄԻ ԳԻՇԵՐՈՎ ԱՐԹՆԱՆԱՅԻՐ...

Մի գիշերով արթնանայիր,
Իմ հեռավոր աշխարհ,
Եվ լուսնկան մեր կտուրից
Թվար խոշոր նշխար:

Կարկաչեր երգը ջրվորի
Գիշերվա մեջ վճիտ,
Ու երկինքը խշշար վրաս
Իբրև աստղոտ մի չիթ:

Եվ կալերից արևաբույր
Գային բարակ հովեր,
Ու մեր բարդին՝ թաթին ելած,
Շեկլիկ աստղը շոյեր:

Նորից ամեն տերևի մեջ
Դողար մի լույս ասուպ,
Տատս չոքեր ու Աստծո հետ
Աներ զրույցն իր սուրբ:

Գետի ահեղ որոտը գար
Մութն ու ահեղ ձորից,
Եվ աշխարհում ամեն ինչի
Հավատայի նորից:

Հավատայի, որ այդ գետում
Կան ջրի լույս հարսներ,
Եվ նրանցից մեկն անպայման
Պիտի որ ինձ հասներ:

Հավատայի, որ շողերից
Ճանապարհներ հյուսել,
Դու ես շրջում, Աստվածամայր,
Բաժանում գութ ու սեր...

ՓՇՐՎԱԾ ԼՈՒՍԻՆ

Այնտեղ հովիտ կար արևով լցված,
Եվ արծաթով էր գետակը հնչում,
Արևածագի ցողով լվացված
Նժույգներ էին այնտեղ վրնջում:

Դու՝ իմ կորուսյալ, դու՝ իմ ավետյաց,
Իմ կանաչ երկիր, իմ կարմիր հնչյուն,
Արշալույսի մեջ ծայրեծայր ձգված,
Դու՝ արեգակի ոսկե վրնջյուն:

Եվ գյուղ կար այնտեղ՝ արևը վրան,
Զանգակատուն կար առ Աստված միտող,
Բարդիներ կային բարակ, հուրհրան,
Որ ոտից գլուխ երգ էին ու դող:

Եվ տուն կար այնտեղ, պատերում քարե
Մի նախնադարյան բույր կար ու շաղախ,
Կավե կտուրին չիր կար ու արև
Եվ ամռան օրվա օրհնանքը խաղաղ:

Եվ մայրամուտ կար... Հոտի վերադարձ,
Կորած գառների լալագին մայուն,
Ջրերի զնգոց, լուսին կար լրած,
Որ մեր ջրհորի մութին էր նայում:

Դու՝ իմ կորուսյալ, դու՝ իմ ավետյաց,
Դու թախիծ՝ իջած իրիկնալույսին,
Դու ջրհորն ի վար դիտապաստ ընկած
Ու փշուր-փշուր ավերված լուսին:

ԴԵՊԻ ՍԿԻԶԲԸ

Ու ես թոթափած իմ անքնության ստվերները սև
Եվ ստվերներից միակ կապույտը՝
Կարոտը առած՝
Դեպի սկիզբն եմ ընթանում ահա
Քամիների հետ
Ու թռչունների...
Ասում են՝ այնտեղ ծաղիկները դեռ
Վայրի են այնպես,
Ցողերը՝ խոշոր,
Առավոտները՝
Բարբարոսաբար գեղեցիկ ու մերկ,
Ոչ մի բան այնտեղ դեռ չունի անուն,
Եվ «կարոտ» բառը դեռ չի արարված:

Երևի այնտեղ ինչ-որ թփի տակ
Իմ մանկությունից ծվեններ կան դեռ՝
Մոլորված շողի
Եվ անմոռուկի,
Եվ խոտի տեսքով...
Ու ես թոթափած իմ անքնության ստվերները սև
Եվ ստվերներից միակ կապույտը՝
Կարոտը առած,
Դեպի սկիզբն եմ ընթանում ահա
Քամիների հետ
Ու թռչունների...

Գուցե այդպես է,
Ով որ գնում է դեպի սկիզբը,
Գնում է միայն
Քամիների հետ
Ու թռչունների...

ՃԱՆԱՊԱՐՀ

Ու ես գնում էի, երկի՜ր... Աջ ու ձախից
Ինձ հետ ջրերդ էին գնում:
Մաքուր,
Կապույտ
Ու սանձակոծ:

Մաքուր,
Կապույտ
Մի տանջանքով
Զարկվում էին վեմ ու քարի
Եվ ժայռերի
Ժանգոտ ու շեկ ժանիքներից հոշոտվելով,
Ոռնում էին որոտաձայն ու փրփրում:

Վիհերի մեջ,
Վիհերի դեմ
Իրենք իրենց խենթ քրքրում
Ու ծովերին էին տանում
Կապույտ զովը լեռան ձյունի:

Իսկ ես ծարավ էի սաստիկ...
Քարափների
Ու վիհերի շուրթերի պես
Պատառոտվել,
Այրվում էին շուրթերս չոր,
Ճաքճքում էր մաշկն իմ տոչոր,
Մի կաթիլ ջուր էր թախանձում...

Բայց արևը վերից խանձում,
Ողողում էր
Ինձ հրեղեն իր քրքիջով:

Իմ այդ տեսիլք-տենդի միջով
Անվերջ գնում էի, երկի՜ր,
Եվ քո ջրերն էին ինձ հետ անվերջ գնում՝
Մաքուր,
Կապույտ
Ու սանձակոծ...

ՄՇՈ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Եվ ես քնեցի Մշո լեռներում,
Գլուխս՝ ժայռի քարեղեն ծունկին:
Ճաճանչն աստղերի խորհուրդն էր բերում,
Խառնում աղբյուրի վճիտ արցունքին:

Եվ գիշերը մեծ ու սքանչելի
Ականջ էր դնում անհունի ձայնին,
Ցածում հովիտը կապույտով էր լի,
Արծաթով էր լի մայր Արածանին:

Եվ հովիտն ի վար և հովիտն ի վեր,
Աստղալույսի մեջ ու աստղաթելի
Թափառում էին լուսե ստվերներ
Եվ ոգիները հին առասպելի:

Թափառում էին կրակներ ու կայծ,
Հառնում ու փլչում տաճարները հին:
Եվ գետի ափին երևաց հանկարծ
Ինքը՝ Աստղիկը, ինքն՝ աստվածուհին:

Աստղի՛կ, կարոտի շքեղ բոնկում,
Աստղի՛կ, դու կրակ, կնություն ու սեր,
Դու մեր դաշնության տենչանքը քնքուշ,
Մեր արյան աղերսն ու ծարավը մեր:

Լոգանքի ժամ է... Նա քողն արձակում
Եվ զիստերն ի վար նետում է խոտին...
Մերկ է... Քայլում է, մթան դեմ ծագում
Լուսաստղի նման ու առավոտի:

Լուսնկայի տակ ստինքներն առույգ
Մի թեթև-թեթև թրթիռ են առել,
Աստղի ցոլցլանքն իրեն չարչարում,
Չի կարողանում այդ դողին թառել:

Եվ հանկարծ բոցեր, և հանկարծ խարույկ...
Մութը ծվատվում ու նետվում է դեն...
Այդ հովիվներն են, կրակ են վառում,
Որ մերկ Աստղիկի լոգանքը դիտեն:

Աստղի՛կ... Եվ սակայն Աստղիկը հանկարծ
Մշո լեռներից մշուշ է բերում,
Պարուրում, ծածկում մերկությունն իր պարզ
Եվ չքանում է այդ մշուշներում:

Եվ ամբողջ դաշտը կորչում է մուժում,
Եվ ամբողջ դաշտը ծփանք է տալիս,
Միայն աստղերը ինչ-որ բան հիշում
Ու գիշերն ի լույս արցունք են լալիս:

ՀՈՂՄԵՐԻ ԴԵՄ

Եվ ճանապարհը
Երկինք է տանում
    Ու ընկնում է վար,
Եվ ճանապարհը
Անդունդների մեջ
Խարխափում շվար
Ու նորից դեպի երկինք է տանում:

Գնում եմ, գնում
Ու չեմ հասկանում՝
Երկինքն է արդյոք տապալվել վերից,
Թե՞ լեռնաշխարհը երկինք փոթորկել
Իր ժայռ ու քարի,
Թուփ ու մացառի
Սուր մագիլներով կապույտ է պոկել
Ու ծվեն-ծվեն վար բերել իր հետ:

Երկինքներով են այնտեղ լեփ-լեցուն
Անդունդ ու լճակ,
Սարահարթ ու գետ...
Ու ես գիշերով վախենում էի
Լեռներում շրջել,
Որ ոտքս հանկարծ
Շեկ աստղի չառնի

Կամ մոլորակի...
Անդունդ
ու կատար,
Թռիչք
ու անկում՝
Ամեն ինչ այստեղ պահպանում է դեռ
Չևը կրակի:

Արարման օրից
Անդունդներն այստեղ
Շարունակում են
Դեռ անկումն իրենց,
Ու ես խորհում եմ,
Որ Աստվածն ինքն էլ
Ընկնելու ահից
Աչքերը փակել,
Հեռու է քաշվել
Այս լեռնաշխարհի երկնակամարից:
Հեռու է քաշվել
Ու լեռնաշխարհն այս
Թողել աշխարհի
Բոլոր կողմերի
Ահեղ հողմերին...

ԾՈՒՆԿԻ ԵԿ, ԾՈՒՆԿԻ...

Ծննդավայրս... Ծունկի եկ, ծունկի
Եվ գնա դանդաղ, և գնա բոբիկ,
Երեկոն, նման կապույտ արցունքի,
Թառել է ձորի քարեղեն կոպին:

Ծննդավայրս... Բարդիներն ի վեր՝
Սրբատաշ ու պարզ մի զանգակատուն,
Հողե տանիքներ ու հողե քիվեր,
Որոնցից դեռ տաք արև է կաթում:

Ծննդավայրս... Իմն է ամեն ինչ...
Ծննդավայրս... Քարափ է ու կալ...
Հեկեկո՛ւմ էր միշտ այս աղբյուրը ջինջ,
Թե՞ նոր սկսեց այսպես հեկեկալ:

Եվ ղողանջում են հեռավոր ձայներ,
Երազում լսած ձայների հանգույն,
Եվ ոլորվում են քարոտ կածաններ
Ու թախծություններ մանուշակագույն:

Ես որոնում եմ մեր տնակը հին,
Պիտի որ լինի նա ահա այստեղ,
Իրիկնամուտի լո՞ւյսն է կտուրին,
Թե՞ թթի դեղին չորացող պաստեղ:

Օ՜, Տեր իմ, օ՜, Տեր... Այստեղ ամեն ինչ
Հեռու մանկության բույրով է խնկում,
Խնկում են օդը, խոտեր ու եղինջ
Ու ձանապարհի աղուրը քնքուշ:

Ուր որ է հիմա տատս շվարած
Պիտի ինձ բակից ընդառաջ վազի
Եվ մանկան նման իմ կրծքին փարած
Օրհնություն տեղա ու աղոթք ասի:

Ու հետո հոգնած կմտնեմ ես տուն,
Հոտը կշնչեմ նոր շփխած կավի,
Եվ իմ մանկության սպիտակ կատուն,
Ոտքիս փաթաթված, պիտի մլավի:

Հետո կսպասեմ ես մերոնց գալուն,
Որ տուն կբերեն այգեստան ու կալ...
...Հեկեկո՞ւմ էր միշտ մեր դռան առուն,
Թե՞ նոր սկսեց այսպես հեկեկալ:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐ

Եվ ես այդ գիշեր քնեցի մեր տան
Կավե կտուրին,
Եվ ես այդ գիշեր իմ մանկության հետ
Մնացի մենակ,
Եվ ես այդ գիշեր մանկան խոսքերով
Աղոթում լռին,
Օրհնում էի քեզ, հայրենի տնակ:

Եվ մանկության պես հովն էր փաթաթվում
Բարդու սոսափին,
Եվ մանկության պես աստղը շեկլիկ էր,
Ծողուն էր ու տաք,
Ու ես մանկորեն գլուխս նորից
Դրել իմ ափին,
Սուզվում էի լուռ ամպերում ձերմակ:

Եվ հետո քամին դաղձի բուրմունք էր
Խառնում երազիս,
Եվ բարձիս վրա կալի մղեղը
Ցնորք էր ցրում,
Դաշտից մեր գյուղի ամենասիրուն
Աղջիկն էր գալիս,
Ու կակաչի պես շորն էր թրթռում...

Աստղի ճաճանչն էր հսկումի կանգնել
Կոպերին իմ փակ,
Հովը հևում էր՝ մայրական ձեռքը

Ճակատիս պահած,
Թաթի ծայրին էր ընթանում ասես
Առուն մեր հստակ,
Որ չխռովի իմ քունը խաղաղ:

Եվ հոգնությունս թեթև էր այնպես
Ու քունս՝ դյուրին,
Բարդու սոսափ էր, աստղի շշուկ էր,
Խշշոց էր արտի,
Ես երազիս մեջ խոնարհվում էի
Մեր կաթնաղբյուրին,
Եվ շուրթիս հա՛մն էր մայրական կաթի...

ԱՌԱՎՈՏԸ

Եվ առավոտյան զարմանքով տեսա,
Որ թռչունները
Ինձնից շուտ զարթնել,
Արևի բոցից,
Թոնրի բուրմունքից
Ու ծլվլոցից
Ինչ-որ մի ծանոթ նվագ են հյուսում,
Որ փռեն բոբիկ ներբաններիս տակ...

Ու տեսա նաև,
Որ ծաղիկները
Նույնպես ինձանից կանուխ են զարթնել
Եվ իրենց մանրիկ,
Փխրուն ձեռքերով
Մի-մի ցող առել,
Թեքվել են խոնարհ,
Որ ցողով օծեն ոտքերն իմ բոբիկ...

ԷԼ ԲԱՎԱԿԱՆ Է...

Էլ բավական է... Թախիծն այս ցավոտ
Անվերջ ու անվերջ սիրտս է ծվատում:
Պիտի վեր կենամ ես այս առավոտ
Ու գնամ այնտեղ ու գնամ մեր տուն:

Թեկուզ և գիտեմ, որ տեսիլք է սա,
Որ այն աշխարհը հեռու է ու փակ,
Բայց միևնույն է, ճանապարհ, սուրա՛,
Սլացիր իբրև հրեղեն պապակ:

Բայց միևնույն է, անցիր վիհերով,
Մոլորվիր մթին անդունդների տակ
Եվ քարափների մամռոտ քիվերով
Ոլորվիր դեպի այն հովիտը տաք:

Այնտեղ արև կա ու հոտ կա հարդի,
Այնտեղ գետակ կա, քարեր կան կիզող,
Արև է շնչում մի խաղաղ բարդի,
Որ կիսով կանաչ, արծաթ է կիսով:

Ու տուն կա այնտեղ, քարե մի տնակ,
Եվ գիտեմ, նրա հին առաստաղից
Մի հին կարոտ է մաղում շարունակ,
Ու կաթկթում է մի մրոտ թախիծ...

ԾՈՒԽԸ

Եվ խաղաղորեն ծուխ էր բարձրանում
Ակութներն ի վեր,
Եվ խաղաղորեն իրար խառնված,
Թրթռում էին տերև ու թռչուն,
Լույսը դաշտերով ու քարափներով
Սուրում անստվեր,
Շեկ զամբիկի պես
Դոփում էր անձայն, անձայն վրնջում:

Օրը նայում էր կապույտ աչքերով
Ու տեսնում հանկարծ,
Որ իր գիշերվա
Ոսկե երազն է աշխարհին թառել,
Իրար գիրկ ընկած կարկաչում էին
Ջուր ու ճառագայթ,
Եվ թռչունները թևերի վրա
Գերեվար տանում մի հսկա արև:

Եվ առավոտը՝
Որձաքարի պես կապույտ ու առողջ,
Ինքն իր խորքերից
Զրնգում էր մեղմ ու անլսելի,
Սաղարթ ու տերև
Զրուցում էին մի պարզ բարբառով,
Եվ ծաղիկները զրուցում էին
Քամիների հետ ու թռչունների:

Եվ որոնում կար,
Մեղուն ծաղիկ էր որոնում անհագ,
Ճառագայթը՝ ցող,
Հայացքը՝ աստված,
Ջրի երգը՝ հուն...
Եվ առավոտն այդ որոնումի մեջ
Ուզում էր դառնալ
Հողի,
Ջրերի
Եվ աստվածների
Ներդաշնակություն:

ՏԵՍԻԼՔ

Ես լույսերի մեջ թափառում լռին
Եվ ամենուրեք փնտրում եմ նրան...
Աղբյուրի ճամփին կամ տան կտուրին
Չի՛ ծփա արդյոք շորը հուրհրան:

Սիրտս մարում է ամեն մի կանչից
Եվ սկսում է տխուր երազել,
Մեր հին թզենին թեքվում ականջիս,
Ուզում է, կարծես, նրա տեղն ասել:

Եվ առուն, գի՛ժը, ձեռքիցս բռնած,
Նրանց տան ճամփով քաշում է ինձ վար...
...Բայց ճռնչում է մի փայտե դռնակ,
Եվ ինքն է ահա՝ շփոթ ու շվար:

Կաս-կարմիր շորը ցոլքին է տալիս,
Բոցի պես թեթև թռչում առվակով:
Գալիս է մեր տուն... Երևի գալիս
Կրակ տանելու հին պատրվակով:

Քանի՛ տարի է իրար չենք տեսել...
Ու համրանում ենք ինչ-որ ցավերից:
Նույն իրանն է ճոճ, նույն մազերը սև,
Միայն աչքերն են խոնարհ ավելի:

Միայն հայացքը ավելի տխուր,
Եվ շորն ավելի մատնիչ է դարձել,
Իսկ շրթունքներին կայծկլտում են լուռ
Այրվող շշուկներ ու թաքուն հարցեր:

...Տեր իմ, թող գիշեր լինի կապուտակ,
Թող պոկվի հեռվից քնքուշ մի հայրեն,
Ու ծածկաբերան մեր թզենու տակ
Թող ստինքները շապիկս այրեն:

Թող արև բուրի նրա վարսերից,
Եվ աչքերի մեջ արտասուք ցոլա,
Թող հին թզենին օրհնի մեզ վերից,
Ու մեր սրտի մեջ թող գաղտնիքը լա...

Նայում ենք իրար... Աչքերի մեջ տաք
Մի խաժ ամառ է, գույներ են կալի,
Եվ ինչ-որ բան կա քնքուշ ու հստակ,
Եվ ինչ-որ բան կա անհասկանալի:

ԿԱԼԸ

Ես կալ եմ գնում... Մղեղը դեղին
Իր ցոլցլանքն է փռել աջ ու ձախ,
Ու թվում է, թե արար աշխարհին
Ծուփ-ծավալվել է անձայն մի ծիծաղ:

Բարդին շոգի մեջ կարկամել շվար
Ու որոնում է ստվերն իր կապույտ,
Թուխ արտույտները թևում վեր ու վար
Եվ թևիկներից օրհնանք են թափում:

Ամեն ինչ այնպես պայծառ է ու պարզ,
Եվ ամեն ինչից զնգոց է ելնում...
Մի ոտաբոբիկ, թխորակ մի հարս
Կալի մեջ կանգնել, ցորեն է էրնում:

Լեփ-լեցուն մաղը պարզում է երկինք,
Ու մաղից թել-թել արև է ծորում,
Ամեն շարժումից ստինքները գիրկ
Ծոցի մեջ մի տաք դող են օրորում:

Մազերին ոսկե մղեղ է իջել՝
Լուսապսակ է ու լուսե կամար,
Ասես երկնքի ու հողի միջև
Կանգնել է խարտյաշ մի աստվածամայր:

Մանուկը թռչում, կանգնում է կամին,
Եվ քայլ են անում եզներն սպիտակ...
Բացում է հանկարծ թափառիկ քամին
Այդ աստվածամոր ծնկածալը տաք:

Արևի մեջ է նա ոտից գլուխ,
Արևի մեջ է աշխարհը արար,
Խաղաղությո՛ւն քեզ, հայրենի իմ գյուղ,
Խաղաղությո՛ւն, քեզ, իմ ծննդավայր...

ԱՄՌԱՆ ՕՐ

Այստեղ տո՛ն է եղել, հող ու ջրի հանդես,
Աստվածներն են այստեղ խրախճանել հարբած,
Եվ ամառն իր խարտյաշ գիսակները քանդել,
Նրանց համար այստեղ պարել է մերկ ու բաց:

Ծղրիդները ոսկե սրինգներ են սուլել,
Ու բամբիռ են զարկել առուները արծաթ,
Ընթացել են ճերմակ, կորովաբիբ ցուլեր,
Եղջյուրների վրա հողի փառքը բարձած:

Անցել դանդաղորեն, անցել ծանրակաճղակ,
Երակների մեջ հորդ մի արարիչ մոլուցք,
Եվ ռունգերով ամռան արեգակը շնչած,
Բառաչել են երկար արևի դեմ ցոլուն:

Մկանների եռքից մի տաք դող է առել
Ու թրթիռ է առել նրանց մեջքը ողորկ,
Ընթացել են նրանք առողջ, որպես տարերք,
Եվ գեղեցիկ, որպես խոյահարող բողոք:

Ու տարել են նրանք արեգակը արդար
Ճակատների վրա ու աչքերում թախծոտ,
Եվ բառաչից նրանց՝ երինջները մատաղ
Բռնկվել են հեռվում երանելի քաղցով:

Բառաչի դեմ՝ բառաչ... Ձգվել երկար ու ձիգ,
Սաստկացել է արյան մի արարիչ կարոտ...
Ամռան օր է եղել, եղել արև ու կիրք,
Եղել կարմի՛ր, կանա՛չ, անծայրածի՛ր արոտ...

ՎԱՅՐԻ ՄԵՂՐ

Եվ շեկ ժայռերի խոռոչների մեջ
Բույր կար ու բզզյուն,
Եվ շեկ ժայռերի խոռոչների մեջ
Շեկ մեղուները մեղր էին նյութում,
Որ ծանր լույս էր
Ու լույծ արեգակ:

Եվ մեղրի բույրն էր
Տոթի պես կանգնել ժայռերի միջև,
Այդպես շեկ հողն է
Բուրում ամառվա անձրևից հետո,
Այդպես բուրում է ծաղիկը խարտյաշ,
Բուրում է հացը,
Մարմինը կնոջ...

Եվ շեկ ժայռերից
Մինչև շեկ հովտի ծաղիկները շեկ
Ձգվում էր բարակ, մեղրոտ մի ճամփա,
Մի աներևույթ, ոսկեղեն մի լար,
Որ զրնգում էր
Ինքնաբաշխումի խաղաղ բերկրությամբ:
Եվ շեկ ժայռերի
Խոռոչներն ի վար կախվում էր մեղրը,
Որ ծանր լույս էր
Ու լույծ արեգակ...

ՆՈՒՌԸ

Եվ նու՛ռը, նու՛ռը...
Կողերի վրա արշալույսը ալ
Եվ ամառային միջօրեների
Շոգը իր ներսում,
Հասուն կրծքի պես սկսում եռալ
Ու մի առնական ձեռք էր աղերսում:

– Եկ, մենք քեզ համար
Լցվեցինք այսպես միջօրեներով,
Լցվեցինք բոսոր
Ու արևահամ հյութերով հողի,
Եկ, մենք քեզ համար նյութեցինք մի տաք,
Մի քաղցր գորով,
Որից ճաքում է
Մաշկը մեր կողի...

Եկ, առ սիրտը մեր
Ու քո բռունցքի առնությամբ զորեղ
Քամիր շուրթերիդ
Ու քամիր քիմքիդ ծարավին անհագ,
Եվ քո արյան մեջ մենք կզրնգանք
Իբրև միջօրե,
Իբրև բերկրության կարմիր աղաղակ...

ԱՄՌԱՆ ԳԻՇԵՐ

Գիշեր է, լուսնյակ է ու լույս,
Ծղրիդը արծաթ է մանում,
Տերևը դողում է քամուց
Եվ աստղին աչքով է անում,
Իմ գյուղը վրան է առել
Կապույտն ու խշշոցը բարդու,
Իսկ հովը տանիքից տանիք
Հայրեն ու տաղիկ է տանում:

– Ախ, հոգի, սոխակը եկել,
Եկել է, վարդին է թառում,
Մի չար ձեռք իմ ու քո մեջտեղ
Սևավոր բոցեր է վառում,
Մանուկ եմ քեզ սիրել, հոգի,
Սիրել ու կարոտս չառել,
Քո ձեռքով պաղ ջրիկ տուր ինձ,
Ծարա՛վ եմ, սրտիկս է մարում:

Ու տաղը թրթռում թեթև,
Թառում է տերևի դողին,
Տերևը տաղի հետ մարում,
Շողեր է թափթփում հողին,
Իսկ ուրիշ կտուրից ահա
Հնչում է մանրիկ մի ծիծաղ,
Աղջկա մի ձայն է հնչում,
Պատասխան նետում երգողին:

– Սոխակը թառել է վարդին,
Բայց սրտին փշիկն է հասել,

Ինչքան էլ խաղ ու տաղ կանչես՝
Ոչ ջրիկ կտամ ու ոչ սեր,
Բոցի պես քեզ այնքան վառեմ
Ու ծարավ պահեմ քեզ այնքան,
Մինչև որ ծուխ ու մուխ ելնի
Թուխ ու մուխ այդ դունչիկդ ի վեր:

Ծառերը ծիծաղում մանրիկ,
Խփում են լուսնյակի լարին,
Առվակը աստղեր է առել,
Զնգոցով զարկում է քարին,
Հայրենը տանիքից տանիք
Ճշուկ ու ծիծաղ է տանում,
Տանում է, լույսի պես փռում
Հանդերին, լանջերին, սարին:

– Երդիկից կհանեմ քեզ դուրս
Ու բարձրիկ լեռներս կելնեմ,
Վախվորած տատրակի նման
Քեզ կառնեմ ձեռներս, կելնեմ,
Խոցոտ է, ա՛խ, շատ է խոցոտ
Սրտիկը սիրուտեր մարդու,
Ով էլ գա ու դեմս ելնի,
Իմանամ մեռնելս, կելնեմ..

Գիշեր է, լուսնյակ է ու լույս,
Ծղրիդը արծաթ է մանում,
Տերևը դողում է քամուց
Եվ աստղին աչքով է անում,
Ծղրիդը, տաղիկը, քամին
Թել թելի երազ են հյուսել,
Անհունը նայում է վերից,
Օրհնություն ու սեր է մաղում:

ՄՈՐԵԽԸ

Եվ նախ թվաց, թե ամպ է դա,
Ամպ չէր, սակայն,
Ապա թվաց, թե հողմ է սև,
Հողմ չէր դա, ո՛չ...

Հեռվից հեռու
Խլրտում էր խլուրդի պես հսկայական
Ու սողում էր գետնաթավալ ու ծանրապոչ...

Եվ սողում էր
Խշխշոցով մի խժալուր
Ու խժալուր կափկափոցով,
Որ կափկափոց էր չախկալի:

Սողում էր նա,
Գալիս էր նա սպառնալի:

Ամպ չէր սակայն,
Հողմ, չէր դա, ոչ...

Համատարած մի սև մորեխ,
Համատարած մի սև մարախ,
Համատարած մի սև երախ,
Համատարած խածող ժանիք,
Խայթ էր խոցող...

Սողում էր նա
Իր խժալուր կափկափոցով,
Խուժում խռիվ ու խուռներամ

Եվ ամեն ինչ սևով ծեփում:
Կար արեգակ մի հուրհրան,
Որ շողում էր
Բարակ, բարի
Ու ոսկեգույն ճառագայթով...

Եկավ,
Խփեց իր սև թաթով
Եվ սկսեց խժռել իբրև ոսկե ծղոտ
Ու ոսկե խոտ
Ճառագայթներն այդ ոսկեգույն...

Ու ճառագայթ չեղավ իսկույն,
Չեղավ արև...

Ապա երախն իր արնախում
Պարզեց վերև
Եվ սկսեց ծամել ոխով
Կապույտ-կապույտ երազանքը ոլորտների...
Եվ վայրկյանում
Չեղավ կապույտ, չեղավ երազ...

Սարավանդին
Արտն էր փռվել՝
Ճեկլիկ,
Խոնարհ
Ու ոսկեվարս...
Եվ հասկերը
Մի իմաստուն լռության մեջ
Նյութում էին սերն ու բարին,
Որ ձեռքերով իրենց ոսկե

Պարզեն մարդուն
Եվ աշխարհին...

Եկավ հեռվից,
Մի անխարխափ հոխորտանքով
Խփեց արտին,
Եվ հասկերը
Մի պահ միայն
Սարսռացին փշաքաղված
Եվ մոխրացան, և չքացան:

Եվ արտ չեղավ,
Չեղան հասկեր...

Եվ մեղուները ոսկեվոր
Իրենց անուշ բեռը բարձել,
Դեպի խորիսխն էին տանում
Եվ կամ նորից թեթև թևով
Դեպի շաղոտ,
Արևահոտ
Ծաղիկների երազն էին վերադառնում...

Եկավ,
Զարկեց ծաղիկներին,
Ավերակեց բույն ու խորիսխ
Եվ տարածեց
Շաղոտ, շողոտ,
Արևահոտ ծաղիկների
Ու ոսկեվոր մեղուների
Դիակները ոսկեվորիկ...

Եվ ծանրացավ,
Եվ թանձրացավ

Ծառին,
Կալին
Ու ողկույզին,
Աղբյուրների մաքուր լույսին,
Հողին,
Ծողին,
Այգաբացին,
Այն աշխարհին՝ ավետյացին...

Իջավ, նստեց
Մի սև մորեխ,
Համատարած մի սև մարախ,
Համատարած մի սև երախ,
Համատարած խածող ժանիք,
Համատարած խայթ մի խոցող...

Ողջը՝ կմախք,
Ողջը՝ դիակ,
Ողջը՝ մոխիր,
Ողջը՝ անծայր մի սևություն,
Մի զարհուրիկ ամայություն...

Եվ հանդերի,
Հովիտների,
Արոտների վրա ամա
Մի մահահոտ հողմ է շրջում...

Բացում երախն իր խժալուր,
Կափկափում է ու քրքջում:

ԻՐԻԿՆԱՄՈՒՏ

Ծիրանի լույսն ամպի տակ հոգեվարեց ու հանգավ
Եվ Տավրոսի լանջերին թողեց մոխիրն իր կապույտ,
Հեռու վանքից ղողանջեց իրիկնային մի զանգակ
Եվ կարկաչեց դաշտերով արևահար ու թափուր:

Ծննդավայրս է ահա ձորալանջին ծվարել
Կտուրներով իր կավե, բարդիներով վիթխարի,
Ցերեկն ամբողջ՝ արևից իրենց կողերը վառել
Եվ հիմա տաք են շնչում ապառաժներն այս վայրի:

Կտուրներին աղջիկներն առվակի ջուր են ցողել,
Ու խոնավ կավն է բուրում երիցուկով և ուրցով,
Ամռան գիշերն է նստում կտուրներին այդ հողե
Հողվորների հոգնությամբ և աստղերի զրույցով:

Հայացքի տակ Աստծո իրիկնահացն է դրված,
Ու բուրմունքներն են փռված ցորեն հացի ու դաղձի:
Ղողանջում է լռությունն ու կապույտի մեջ խրված
Բարդիներն են օրհներգում արդարությունն այդ հացի:

Հետո հեռու կտուրից մորմոքում է անտունին,
Այդպես տխուր ու մոլոր ոմ է կանչում, արդյոք ոմ...
Իսկ մի ուրիշ կտուրից աղջիկը՝ աչքն անհունին,
Լսում է երգն ու հետո վերմակի տակ հեկեկում:

Բարդիները լուսնի հետ կտրում արծաթ երազներ,
Թափթփում են հոգնաբեկ հողվորների կոպերին,
Ծղրիդի երգը ելել, երկնքի դուռն է հասել,
Խաղաղություն հայցելու ոլորտներից այդ վերին...

ԱՆԿԵԶ ՄՈՐԵՆԻ

Այրվում է, այրվում... Եվ բոցը բոսոր,
Կապույտ է ու հիր,
Այրվում է, այրվում... Եվ բոցը մորմոք,
Կարոտ է ու կանչ,
Անկեզ մորենին այրվում է, այրվում,
Եվ չկա մոխիր,
Չկա սպառում, և չկա վախճան...

Եվ բոցերի մեջ հուրհրատում է
Աշխարհի մի հեռու,
Եվ բոցերի մեջ տեսիլքն է վառվում
Կապույտ ու կանաչ,
Արևածագ է բռնկվել ասես
Ձյունոտ լեռներում,
Եվ հովիտն ի վար ցոլանք է ցանած:

Եվ հովիտն ի վար ծփում է խաղաղ,
Արևոտ մի ծուխ,
Մի մայր արագիլ ճաճանչն ուզում է
Կտուցին առնել,
Բոցերի նման կարմիր ձիերն են
Այստեղ արածում,
Եվ արածում են սպիտակ գառներ:

Եվ բոցը դողում, գալարվում է բոցն
Ու ողջը ջնջում,
Եվ բոցը նորից դառնում է մորմոք
Ու անշեջ կրակ,
Եվ բոցի միջից մի զարմանալի

Բարբառ է հնչում,
Եվ ծավալվում է մի սուրբ պատարագ:

Ծավալվում է նա, իջնում ամայի
Դաշտին ու հանդին,
Ծավալվում է նա, խունկի պես օծում
Մասունք ու աճյուն,
Ծավալվում է նա այրված ու ծարավ
Այն անապատին,
Որ իր հրեղեն ողբն է հառաչում:

Եվ այրվում է նա... Եվ բոցը բոսոր,
Կապույտ է ու հիր,
Այրվում է, այրվում... Եվ բոցը մորմոք,
Կարոտ է ու կանչ,
Անկեզ մորենին այրվում է, այրվում,
Եվ չկա մոխիր,
Չկա սպառում, և չկա վախճան...

1969-1971

ԱՍՔ ՍԻՐՈ

Սերը... նման է նա ճշմարտության,
Կես ճշմարտություն չի լինում կյանքում,
Չի լինում կես սեր...

ՀԻՄՆ ԿՆՈՋ

Լուսաբացին, երբ քնատ քո ձևերն են նվաղում,
Մարմինդ ի վար տաք հողի շնչառությունն է խաղում:

Ու երբ ելնում ես զարթնած, նետում քողը քո հագի,
Քեզ հետ զարթնում է ասես քնած շունչը կրակի:

Հողի պես սուրբ ու բեղուն և կրակի նման նենգ,
Դու՝ հայտնություն հրաշքի, տառապանքի դու օրենք:

Դու՝ առաջին ձնծաղիկ՝ տրված լույսին ու քամուն
Եվ շուրթերս արյունող անապատի դու սամում:

Դու՝ հավատի մաքրություն ու մեղավոր դու հերձված,
Դու՝ մեկնելի մեղեդի ու սեպագիր առեղծված:

Շրթունքներս ձաքձքող ծարավի դեմ ու քաղցի
Հաղորդություն դու գինու, հաղորդություն դու հացի:

Քեզ եմ գալիս ես անվերջ ծարավս ու քաղցս առած,
Եվ արյունն իմ հնամյա ծնկաչոք է քո առաջ:

1970

ԺԱՄ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

Հիմա գիտեմ հաստատ՝ օրերիս օրն էր դա,
Հայտնության ժամն էր դա մեծ ու վերին...
...Կապույտի մեջ սուզված բարդիները խարտյաշ
Ոչ թե խշշում խաղաղ, այլ աղոթում էին:

Կապույտի մեջ սուզված՝ բարդիները ձգվում,
Նայում էին հեռվից թաքուն, դողով,
Որ քարափին տեսնեն քո հասակը ճկուն,
Քո ոտքերը բոբիկ, ծամը ցողոտ:

Եվ տոն եղավ, եղավ հայտնության մեծ մի ժամ
Ու այդ ժամը եղավ քարանձավում:
Մատներս էին ցավում քո քնքշանքից դաժան,
Աչքերս էին դաժան լույսից ցավում:

Աչքերս էին ցավում այդ մութ քարանձավում,
Այդ մութ քարանձավում երգն էր արյան,
Ինչ-որ անտես ոգի ասես մեղքն էր քավում,
Աղոթում էր ասես, երգում «հարյավ»...

Որձաքարից քամվող արցունքները մաքուր
Մեզ մկրտում էին որպես կարոտ,
Եվ քարանձավն ասես մեզ օրհներգում էր լուռ
Նախամարդու գտած միակ բառով:

Ու երբ կուրծքդ էր հանկարծ թեթևակի բացվում,
Բուրում ցորենի պես, ուրցի, խունկի,
Արշալույսով էին իմ աչքերը լցվում,
Ու գաղտնիքն էր իմ դեմ իջնում ծունկի:

Ես՝ պատանի, ես՝ կույր, բայց հասկացա արյամբ,
Որ դա սեր չէ միայն, այլև սկիզբ,
Որ դա հող է ու ջուր, ճակատագիր ու բախտ,
Հրո վայելք է դա, հրո կսկիծ...

Խավար է դա ու լույս, ճառագայթ է ու խայթ,
Անդունդի ահ է դա, բարձունքի դող,
Եվ ինչքան էլ բացվի, պիտի մնա անհայտ,
Պիտի մնա անհաս ու անհաղորդ:

Այդպես անհաս ու մերկ՝ հեռուներում կանգնած,
Պիտի կանչի իբրև կարոտը բորբ,
Պիտի հավետ ձայնի իբրև արյան տագնապ,
Բայց և հավետ թողնի ծարավ ու որբ:

...Եվ օրերիս հեռվից ես օրհներգում եմ քեզ,
Փառաբանում եմ քեզ լուռ ու ծնկած,
Քե՛զ, օրերի իմ օր, իմ առաջին վայելք,
Իմ հավերժող ծարավ, դաժան իմ քաղց...

1979

* * *

Այսօր քեզ նորից հիշել եմ
Ու ետ եմ կանչում, անգին,
Աշխարհում կապույտ գիշեր է,
Ու հովն է սուլում հանդից:

Ծաղիկներն աղոթում են
Այնպես մեղմ, այնպես արդար...
Եկ, այսօր խավարի մեջ
Զողջումիս երգը կարդամ:

1940

* * *

Առուներում փշուր-փշուր
Լուսնկաներ կային,
Իմ կարոտը դարձել շշուկ,
Կանչում էր, որ գայիր...

Հևում էին ինչ-որ հովեր,
Թևում հեռո՜ւ-հեռո՜ւ,
Աստղեր էին ուզում շոյել
Բարդիները վերում:

Ախ, ծամփաներ դուք ամայի,
Ախ, հովի խենթ ալիք,
Ինչ-որ մի տեղ գիշերային
Տխուր հավքն էր լալիս...

1940

* * *

Դաշտով վազում է
Մի բարակ աղջիկ,
Ոտաբոբիկ է
Ու շորն սպիտակ...

Ամպրոպի հոտ կա,
Որոտ կա օդում,
Ու հեկեկանք կա,
Ծանթ կա ամպի տակ:

...Ամպը որոտաց,
Հեկեկաց, անցավ,
Արցունքի մեջ են
Ծաղիկ ու թփեր...

Աղջկա շորը
Կպել կոնքերին
Ու թրթռացող
Կրծքին է կպել...

Դաշտով վազում է
Մի բարակ աղջիկ,
Անձրևի ցող է
Ու շող է ծամին...

Դեռ վազում է նա,
Դեռ վազում եմ ես,
Չեմ հասնում նրան
Ու ծիածանին...

1977

* * *

Մի հեռավոր ծղրիդի կանչ,
Մի բարալիկ, տխուր ուռի...
Քուն է մտել կտուրը տան
Լուսնյակի մեջ ու լազուրի:

Պառկել եմ ես՝ կոպերիս տակ
Լուսնկաներ փշուր-փշուր,
Ու մի աղջիկ՝ շորն սպիտակ
Ու ինքը տաք, մի տաք շշուկ...

Առուն գնում սիրտը ելած,
Տանում է լույս երազանքներ,
Երկինքն ի վար՝ աստղերի լաց
Ու աստղային տխուր զանգեր...

Երկինքն ի վար՝ ամենամեծ,
Ամենատաք, ամենահուր
Ասուպն ընկել իմ սրտի մեջ
Ու սրտիս հետ մխում է լուռ...

Մի մոլորված կապույտ թռչուն,
Մի բարալիկ, տխուր ուռի,
Մի աստղային անքնություն՝
Լուսնյակի մեջ ու լազուրի...

1976

* * *

Գալիս էր՝ բոբիկ, մազերը արձակ,
Գալիս էր՝ ձեռքին ծաղիկ մի կապույտ:

Հիլ զրնգում էր ծիծաղը արծաթ
Ու զրնգալով կանչում, խուսափում...

Գալիս էր բոբիկ, գալիս էր շաղոտ,
Գալիս էր որպես խենթ բերկրությունը...

Ի՞նչ իմանայի, որ այդ ծիծաղով
Գալիս է ինքը՝ ողբերգությունը...

1979

* * *

Երկու ծաղկած փշատենի
Օրորվում են վերջալույսին,
Մեկը թեքվում է, որ հենի
Գանգուր գլուխը մյուսին:

Ինչ-որ բան են իրար ասում,
Ասես գգվում մեկը մեկին,
Նրանց սոսափն եմ ես լսում
Ու շշուկները անմեկին:

Կարկաչո՜ւմ է գարնան առուն,
Շուրջը դաշտերն են լուռ ննջում...
Ես այնպես լա՜վ եմ հասկանում,
Թե նրանք ի՜նչ են շշնջում...

1944

* * *

Գարնան ջրերն են հորդում, գարնան ջրերն են երգում,
Ասես սիրուց հեկեկում ու կարոտում եմ ես քեզ:

Թափառում եմ մայթերում, քեզ եմ փնտրում ամեն տեղ,
Սրտիս մեջ քեզ եմ երգում ու կարոտում եմ ես քեզ:

Իմ առաջին երգի պես, հազար անգամ մտքիս մեջ
Սիրուս խոսքերն եմ հեգում ու կարոտում եմ ես քեզ:

Սակայն հանկարծ փողոցում, քեզ պատահմամբ հանդիպած,
Իմ ճանապարհն եմ թեքում ու կարոտում եմ ես քեզ:

1949

ՁՄՌԱՆ ԳԻՇԵՐ

Ձյո՛ւն է գալիս դրսում... Եվ որքան լավ է այս
Գիշերի մեջ նստել ու անրջել,
Խորհել, որ կյանքը կա, որ աշխարհում դու կաս,
Որ գարուն կա պահված հողի մեջ ջերմ...

Որ դու իջնող ձյունի քնքշությունը հագած
Այս գիշերով խաղաղ կարող ես տունն իմ գալ,
Ներշնչանքի նման սպասված և սակայն
Ներշնչանքի նման անակնկալ:

Որ դու կարող ես գալ այս գիշերով խաղաղ՝
Թարթիչներիդ վրա ձյունն սպիտակ,
Քո մատներով քնքուշ՝ մազերիս հետ խաղալ
Ու մեղմորեն շոյել ճակատս տաք:

Որ կարող է քո սև թարթիչներին իջած
Ձյունափոշին հալվել իմ տաք շնչից:
Ու կարող ես դու ինձ գիշերի մեջ ժպտալ
Սիրո մաքուր-մաքուր արտասուքի միջից:

Ձյո՛ւն է գալիս դրսում... Եվ որքան լավ է այս
Գիշերի մեջ նստել ու անրջել,
Խորհել, որ կյանքը կա, որ աշխարհում դու կաս,
Որ գարուն կա պահված հողի մեջ ջերմ:

1946

* * *

Ալիքը խփում ու տանում է նավակը,
Եվ հովը երգեր է ասում.
Ինչ բաց է երկինքը, արևը ինչ տաք է,
Ինչ լավն է այս լիճը լազուր:

Ճայերը թրջում են ջրի մեջ թևերը,
Ճախրում ու ճչում են օդում,
Քամին քանդակում է չքնաղ քո ձևերը,
Շոյում է վարսերը քո թուխ:

Բաց ծովն է մեր դեմը, ջրերը երգում են,
Ափերը թողել ենք հետև.
Երբ սերն է վարում քո նավակը կյանքում այս,
Ինչ հեշտ է ուղին ու թեթև:

Ծովի պես ծփում է հոգուս մեջ խայտանքը,
Ու սիրտս լեցուն է այնպես,
Սիրում եմ արևը, սիրում եմ այս կյանքը,
Այս լիճը, աշխարհը ու քեզ:

1947

* * *

Հովի շունչը կար ու հովի թև,
Ու լուսին կար խոշոր,
Եկել էր նա՝ հագին թեթև,
Հագին բարակ մի շոր:

Եկել էր նա, եկել թաքուն,
Բայց հլու չէր, ա՜խ, չէր,
Գալարում էր մեջքը ճկուն
Եվ ուզում էր փախչել:

Բայց վախվորած սիրտը սրտիս
Ուրի՜շ բան էր ասում...
Ու բուրում էր նրա շուրթից
Մեղքի համը հասուն:

Հովե՛րն էին... կուրծքը բացին,
Շա՜տ էր բարակ հագել,
Ու լուսնի տակ թպրտացին
Տատրակի զույգ ձագեր:

Եվ դողում էր, դողում էր նա՝
Հագին բարակ մի շոր...
Շողում էին լուսնյակի տակ
Արցունքները խոշոր...

1976

* * *

Շաղոտ փեշը քամուն տված,
Ծամը նետած ետև,
Կանաչ-կանաչ դաշտի միջով
Վազում էր նա թեթև:

Քամին սուրում, քամին հասնում,
Ելնում հասակն ի վեր,
Բաց էր անում քնքուշ-քնքուշ
Ու մեղավոր ձևեր...

Եվ ձևերից այդ մեղավոր
Լո՜ւյս էր կաթում հողին...
Ասես վազում էր, որ ձուլվի
Հեռաստանի շողին:

Ախ, դու քամի մեղսոտ ու չար,
Ախ, մեղավոր ձևեր...
Ո՞ւր է աղջիկն, ո՞ւր է քամին,
Ո՞ւր են, ո՞ւր են թևել...

1970

ՔԵԶ

Չէիր եկել դու դեռ, դեռ ինձ համար կյանքում
Դու չկայիր անգամ, միակ իմ սեր,
Բայց իմ պատանության թախծոտ երազանքում
Ես քո պատկերն էի լույսից հյուսել:

Ու դու եկար հանկարծ, եկար անակնկալ,
Եկար որպես գարնան շունչը մաքուր,
Հպարտորեն եկար ու քնքշորեն եկար,
Եկար որպես մուսա ու որպես քույր:

Մոլորվել էր գիշերն աչքերիդ մեջ խորին,
Դողում էր քո կրծքին ծանր մի ծամ,
Դու նրբիրան էիր, որպես բարակ լորին,
Թեթև էիր, որպես սարի այծյամ:

Եկար ու թև տվիր դու իմ ներշնչանքին,
Սրտիս երազ տվիր, երգիս՝ ոգի,
Այնպես նման էիր դու իմ անրջանքին,
Այնպես նման չէիր դու ոչ ոքի:

Ու սիրեցի ես քեզ պատանորեն, անքուն,
Ինչպես սիրում է լոկ սիրտն այն անեղծ,
Որ մի ծաղկի համար այրվել գիտե կյանքում
Ու խեղդվել մի շիթ արցունքի մեջ:

Ու երբ հեռու եղա, ու երբ մենակ եղա,

Ու երբ թախծեց հոգիս լուռ ու տրտում,
Դու կարծես ծուխ դարձար հայրենի տան վրա
Ու կանչեցիր հեռվից, կանչեցիր տուն:

...Երկար է դեռ ճամփան... Ու մեր ճամփին հեռու
Դեռ կարող է լինել մրրիկ ու ձյուն,
Տո՛ւր ինձ ձեռքդ փոքրիկ, ապավինիր սիրուս,
Դու իմ միա՜կ, իմ սե՛ր, իմ քնքշությո՛ւն:

1954

* * *

Եվ ամեն անգամ քեզ հանդիպելիս
Ես թեթևակի բարև եմ տալիս,
Ու անցորդներին այնպես է թվում,
Թե մենք հազիվ ենք իրար բարևում:
Չգիտեն նրանք և ի՞նչ իմանան,
Որ կանգ է առնում սիրտն իմ մի վայրկյան,
Որ ես քայլերս եմ մի պահ շփոթում,
Մոռանում աշխարհն, օդ փնտրում օդում...
...Բայց անցորդներին այնպես է թվում,
Թե մենք հազիվ ենք իրար բարևում:

1951

ՍՊԱՍՈՒՄ

Զարթոնքի շունչ ու բուրմունք ու լո՛ւյս ու լո՛ւյս կա օդում,
Լեռան հետև ինչ-որ տեղ գարնան ամպն է որոտում:

Շուտով, շուտով երևի կիջնի անձրևը հստակ,
Ուրախության ու սիրո արտասուքի նման տաք:

Իսկ դու ճամփին ես, հիմա, իսկ դու ինձ մոտ ես գալիս,
Դո՛ւ՝ իմ վաղո՛ւց երազած, անմատչելիս, ցանկալիս:

Գուցե բռնի քեզ ճամփին այս անձրևը մաքրաշիթ,
Իջնի քո նուրբ ուսերին ու վարսերի մեջ քո խիտ:

Եվ շո՛ւտ անցնի երևի, անցնի հոգնած ու խոնարհ,
Ադամանդներն իր թողած քո վարսերի մեջ խոնավ:

Ու երբ դու գաս, երբ դու գաս, կրծքիս վրա կանձրևի
Բույրը քո թաց վարսերի և ադամանդն անձրևի:

Սպասում ու չգիտեմ՝ գարնան ա՛մպն է դա օդում,
Թե իմ սիրտն է կրծքիս տակ սպասումից որոտում:

1949

* * *

Ո՞ւր գնամ հիմա և ո՞ւր թափառեմ,
Երբ ամեն ճամփա ձեր տունն է բերում,
Ո՞ր հեռուներում կարոտս մարեմ,
Երբ քոնն են հավետ մոտիկն ու հեռուն:

Մենք բաժանվեցինք, ու թվում էր ինձ՝
Քեզ կմոռանամ անցնող օրերում,
Ի՞նչ իմանայի, որ քամու շնչից
Թույլ կրակներն են միմիայն մարում:

Ի՞նչ իմանայի, որ հեռվից հեռու
Կանչելու է միշտ քո ձայնը թովիչ,
Ու սիրտս, սիրտս քո ձայնին հլու
Ձեր տան ճամփան է փնտրելու նորից:

Ո՞ւր գնամ հիմա և ո՞ւր թափառեմ.
Երբ ամեն ճամփա ձեր տունն է բերում,
Ո՞ր հեռուներում կարոտս մարեմ,
Երբ քոնն են հավետ մոտիկն ու հեռուն:

1944

* * *

Նորից ձնհա՛լ է, ձնհա՛լ...
Նորից ջրերն են կանչում,
Հողի փոքրիկ մի պատառ,
Տես, կանաչել է արդեն,
Ախ, կարոտները այս խենթ
Ինչո՞ւ են սիրտն իմ տանջում,
Ո՞ւր են, ո՞ւր են ինձ կանչում,
Ո՞ւր են տանում, չգիտեմ:

Բախտը վաղուց է կյանքում
Մեր ճամփաները շեղել,
(Առաջին սերն աշխարհում
Միշտ անհաս է երևի),
Բայց քո հեռու կարոտից
Նորից սիրտս է հեղեղվել,
Ինչպես ջրերը գարնան
Ցոլանքի դեմ արևի:

Սիրտ ցավելու չափ ամուր
Կարոտել եմ քեզ նորից,
Բայց դու հեռո՜ւ ես, հեռո՜ւ,
Դու չես կարող արդեն գալ.
Եվ այնքան շատ են այսօր
Հոգուս մեջ սեր ու թախիծ,
Որ ես պատրաստ եմ այս խենթ
Ջրերի հետ հեկեկալ:

Նորից ձնհալ է, ձնհալ...
Նորից ջրերն են կանչում,
Հողի փոքրիկ մի պատառ,
Տես, կանաչել է արդեն,
Ախ, կարոտները այս խենթ
Ինչո՞ւ են սիրտն իմ տանջում,
Ո՞ւր են, ո՞ւր են ինձ կանչում,
Ուր են տանում, չգիտեմ:

1953

* * *

Արեգակն է համբուրում,
Բուրում է հողը կրկին,
Ու կանաչ դաղձն է բուրում
Առուների եզերքին:

Դու հիշեի՜ր իմ մասին,
Գայիր խոնարհ ու հլու,
Ու գնայինք միասին՝
Հեռուներում շրջելու:

Թափառեինք... Ու հանկարծ
Մաղեր անձրևը հստակ,
Դու տատրակի պես հոգնած
Ծվարեի՜ր թևիս տակ:

1955

* * *

Իմ պատանության կապույտ գիշերներ,
Լեցուն աստղերի ոսկե շշուկով,
Հովանի եղաք դուք սիրուն իմ ջերմ
Հին փշատենու օրորուն շուքով:

Սերն իմ աղջիկ էր պարզ ու հասարակ,
Մազերը՝ մետաքս ու զգեստը՝ չիթ,
Գալիս էր թաքուն, հևում էր արագ:
Աստղոտ գիշերը աչքերում վճիտ:

Ու պարզ հրաշքով ի՜մն էին դառնում
Աստղային ոսկու անձրևը վարար,
Ամռան գիշերվա կապույտը անհուն,
Հեքիաթը, երազն ու աշխարհն արար:

Ի՜մն էին դառնում մոտիկն ու հեռուն,
Անհասը, անհայտն ու անկարելին,
Ես կարող էի աստղերը շողուն
Հավաքել, շաղել նրա վարսերին:

Ես կարող էի երկնքի մթին
Մետաքսը նրա ուսն ի վար թափել
Եվ Կաթնծիրի արծաթե գոտին
Նրա բարալիկ իրանին կապել:

Ես կարող էի...
Այն նույն հազարաչք
Գիշերվա նման գիշեր է կրկին,
Բայց չի կատարվում էլ ոչ մի հրաշք,
Ու էլ չի՜ հասնում ձեռքս երկնքին...

1980

ՎԱՅԵԼՔ

Այնտեղ ծառերն ի վար ու շեկ ժայռերն ի վար
Կախվել էին ճաքած ու արնաածոր նոներ,
Ու ես քեզ հետ, իմ թուխ, իմ արևոտ, իմ լավ,
Այգիների ոսկե ճամփան էի բռնել:

Ծոցվոր ծառերն էին տարուբերվում խոնարհ,
Ու ծփում էր մի տաք հասունության ալիք,
Աշնան բույր էր գալիս քո շուրթերից խոնավ,
Եվ արևի բո՜ւյր էր քո ուսերից գալիս:

Արեգակն իր կարմիր ընդվզումն էր վառում,
Եվ այգեստանն ասես նվաղում էր կրքից,
Քո լուսալիր կուրծքն էր ծանր տուրևառում՝
Հասունությամբ աշնան, հասունությամբ մրգի:

Ծռայլ էին այնպես աշուն, արև ու հող,
Ծռայլ էին այնպես, գինով էին ու բաց...
Ու ես օրհնում էի քո շուրթերը բուրող
Եվ քո վարսերը թուխ՝ մերկ ուսերիդ թափած:

Ու ես օրհնում էի հողն այս բազմադարյան,
Ու քեզ էի օրհնում, բռնկումը քո լուռ,
Ու ես օրհնում էի ընդվզումը արյան՝
Հրա՜շքն ամենասուրբ...

1961

* * *

Գիշերն ի լույս իմ բոլոր
Հին սերերը հիշեցի...
Մեկն առեղծված էր ասես,
Մեկը՝ դատարկ մի խեցի:
Մեկը անսիրտ էր ու չար,
Մեկը՝ սիրտ էր ու հոգի,
Մեկը երգի էր նման
Ու նման չէր ոչ ոքի...
Վերհիշեցի բոլորին
Կարոտանքով ու խանդով,
Մաքրվեցի ես նորից
Մի լուսեղեն տանջանքով:
Վերհիշեցի բոլորին
Ու բոլորին ներեցի,
Ու բոլորին, բոլորին
Այսօր նորից սիրեցի:

1962

* * *

Ասում են հին վերքն հաճախ է ցավում,
Երբ եղանակը ամպոտ է ու վատ...
Բայց գարունն այսօր այնպես արևում,
Փռում է լույսի հրճվանքն անարատ:

Ծիծառներն այնպես հարբա՜ծ են թևում,
Այնպե՜ս է շիկնել ծաղկած դեղձենին,
Որ ես չգիտեմ, ինչո՞ւ է նվում
Սիրտն իմ, որի մեջ բեկոր կա մի հին:

...Ե՞րբ է գարունն այս դառնալու ամառ,
Որ խաղաղ զարկի սիրտն իմ խենթացած,
Վատ եղանակ է սա սրտի համար,
Ուր հին բեկոր կա սիրուց մնացած:

1961

* * *

Դու եկար այն գիշեր, դու եկար ինչպես սերն է գալիս,
Քնքշորեն ու հպարտ դու եկար ու եկար հևիհև,
Ձնհալի բույրերով, կանացի բույրերով մի ալիք
Փշրվեց իմ կրծքին ու ծփաց վարսերի հետ քո սև:

Ողողանջում ու կանչում էր երկինքն աստղերով, երազով,
Հով գիշերն էր շրշում, ու մետաքսն էր շրշում քո հագի,
Ես օրհնում, օրհներգում էի քեզ, քո հասակը նազող
Ու վարսերը, վարսերը քո սև՝ նման սև կոհակի...

Դու եկար այն գիշեր, դու եկար, ինչպես բախտն է գալիս,
Ու հետո հեռացար... Եվ անդարձ հեռացար բախտի պես,
Բայց կոպերդ փակած ու կրծքիս քնքշորեն հևալիս,
Չիմացար, որ իմ կուրծքը բացի ու հավետ քեզ այնտեղ դրի ես...

1961

* * *

Ծաղկի, ցողի ու լույսերի մեջ ծավի
Հեռու մի օր դու իմ դիմաց բարձրացար,
Աչքերիդ մեջ գիշերները հարավի
Ու հարավի արշալույսները պայծառ:

Կյանքը պարզ էր, պարզ էր աշխարհը անգամ,
Սերդ անմեղ ու անչար էր ու անցավ,
Դու հիմն էիր և իմն էիր դու այնքան,
Որ քեզ մի օր անփութորեն մոռացա:

Ես հիշում եմ հիմա օրերն այն ծավի,
Մութ ու լույսով լեցուն աչքերը քո հեզ...
Դու փոխվում ես կարոտանքի ու ցավի,
Եվ զգում եմ ես քեզ ցավող սրտի պես:

1961

ԱՆԱՆՈՒՆ

Կա անանուն մի կարոտ, անհասնելի ինչ-որ տենչ,
Որ արթնանում է հանկարծ ու մորմոքում հոգուդ մեջ:

...Ահա գնացքը կանգնեց մի անծանոթ կայանում:
Եվ անծանոթ մի աղջիկ կարծես ձեռքով է անում:

Բարալիկ է ու խարտյաշ, աչքերը լի կապույտով,
Չթե զգեստն է ծփում երիցուկով ու պուտով:

Եվ թվում է հոգուդ մեջ կան շշուկներ ու բառեր,
Որ պիտի սիրտդ կյանքում միայն նրան վստահեր:

Թվում է նա՛ է, այդ նա՛, քո երազանքն իսկական,
Որին փնտրել աշխարհում ու չես գտել դու սակայն:

Բայց զիլ ղողանջ ու սուլոց... Մնում է նա կայանում,
Իսկ քեզ գնացքը նորից հեռո՜ւ-հեռո՜ւ է տանում:

Եվ անանուն մի կարոտ, անհասնելի ինչ-որ տենչ
Արթնանում է քո հոգում ու մորմոքում է անվերջ:

1961

* * *

Երազիս մեջ այսօր քեզ հետ էի նորից,
Նորից քեզ հետ էի, իմ հեռավոր...
Մենք բարձրանում էինք անձրևաթաց ձորից,
Թրջված, ցողաթաթախ ու բախտավոր:

Դու նույն աղջիկն էիր, այնպես նուրբ ու բարակ,
Անսեթևեթ այնպես, այնպես բարի,
Դու նույն աղջիկն էիր՝ մազերդ հյուս արած,
Ամենալավ աղջիկն այս աշխարհի:

Դեռ հողմը չէր անցել սիրո դաշտով պայծառ
Ու չէր տարել իր հետ ոչ մի ծաղիկ,
Դեռ անծանոթ էիր դու խաղերին քո չար,
Ես անծանոթ էի խանդի ցավին:

Շուրջը ծաղկած ծառերն անուշ բուրում էին,
Երկնքի մեջ կապույտ՝ և ոչ մի ամպ,
Ես քեզ շոյում էի, քեզ համբուրում էի
Ուխտավորի սիրով ու սրբությամբ:

Ուրախ լալիս էին առուները հորդած,
Արևի տակ պայծառ՝ հողն էր մխում...
...Ես արթնացա քնից՝ դրսում աշուն էր թաց,
Ու անձրևն էր լալիս մեղմ ու տխուր...

1962

ԱՄԱՌԱՅԻՆ ԱՄՊՐՈՊ

Ես մոռացել էի, որ ամպրոպ կա կյանքում...
Օրը գորշ էր այնպես,
Երկինքն այնպես անգույն:
Կանաչ ծառերն անգամ,
Որ գիտեին սիրո սուրբ սարսուռով դողալ,
Լուռ կարկամել էին:
Ծաղիկների երանգն ասես քամել էին,
Թռչունները բոլոր իջել էին վերից
Եվ չգիտես, թե ուր ապաստանել,
Քամին մտել քարայր,
Սիրտ չէր անում իր տաք գլուխը դուրս հանել:
Բարակել էր առուն
Եվ չէր զարկում իրեն էլ քարեքար,
Այդ ամենը, այո, հենց այդպես էր, որ կար,
Բայց ոչ հողի վրա, այլ իմ սրտում...

Ու չգիտեմ ինչպես
Ու չգիտեմ ինչից
Հանկարծակի փոխվեց օրն այդ տրտում:
Ու չգիտեմ ինչպես
Խավարի ու լույսի խաղ սկսվեց հանկարծ...
Մերթ մթնեցին ամպերն ու մերթ տվին ոսկուն,
Մերթ արևը շողաց ու թաքնվեց իսկույն,
Մերթ ծանրացավ մի ամպ ու չանձրևեց սակայն,
Ու մերթ ամպերն ամեն լույս ու հրդեհ հագան...
Եվ այդ թովիչ խաղը խավարի ու լույսի

Մերթ խոստումի պես էր,
Մերթ նման էր հույսի...
Այդ ամենը, այո, հենց այդպես էլ եղավ
Եվ, սակայն, ոչ վերում,
Այդ ամենը եղավ
Իմ աչքերին նայող քո աչքերում:

Ու չգիտեմ ինչպես
Ամպի սրտում հանկարծ շքեղ շանթը շողաց,
Ու չգիտեմ ինչպես
Ամպի կոպին հանկարծ արտասուքը դողաց,
Ու չգիտեմ ինչպես սկիզբ առավ հանկարծ
Արտասուքով, լույսով, շանթերի շեկ խաղով
Ու կապույտով հարուստ մի խենթ տեղատարափ...
Խելագարվեց առուն, նետվեց քար ու քարափ,
Ծառը ծափեց, դողաց
Ու թրթռաց որպես կանաչ մի սիրտ,
Իսկ օդը, օդն ամռան
Ձնծաղիկով բուրեց...

1963

* * *

Դու խուժեցիր իմ բախտի մեջ
Իբրև մի տոթ հարավ,
Տվիր լույսի շնորհը մեծ,
Բայց և մի խոր ծարավ:

Մերթ կանչելով՝ խուսափեցիր,
Խուսափելով՝ եկար,
Մերթ հով եղար, սոսափեցիր,
Ու մերթ՝ մրրիկ մի չար:

Մերթ ապառաժ դարձար ու վեմ
Ու մերթ՝ փխրուն մի սիրտ,
Մերթ մթնեցիր, որ մոլորվեմ,
Մերթ տո՛ւն արիր լույսիդ:

Իմ կարոտի և սպասման
Գիշերներին ի վարձ
Դու ինձ թողիր անպատասխան
Ու անմեկին մի հարց:

Անզոր եղա ես քո անափ
Լույսն ու մութը զատել,
Անզոր եղա քեզ հասկանալ,
Անզոր եղա ատել:

Ու քայլում եմ հոգնած ու լուռ
Ոտնահետքով ես քո,
Դու, իմ մեղսո՛ւտ, դու իմ մաքո՛ւր,
Դու իմ Մանոն Լեսկո:

1963

ԳՆԱՆՔ, ՍԻՐԵԼԻՍ...

Գնանք, սիրելիս,
Ինձ համար մեկ է, դու ընտրիր ուղին
Եվ ժամանակը դու ընտրիր նույնպես,
Ես սիրում եմ քեզ երկնքի նման և նման հողի,
Եվ ո՛ւր էլ գնանք
Ու ե՛րբ էլ գնանք,
Երկինք կլինի և հող կլինի,
Կլինի նաև այն հրաշքը սուրբ,
Որ լուրթ երկնքի ու սևահողի
Դաշնությունից է արարվում անտես:

Դու իմ հողեղեն,
Եվ դու չգիտես ինչքա՜ն եմ սիրում
Փոքրիկ ձեռքերիդ թուլությունը խոնջ
Եվ պարագիծը քո գիրգ իրանի,
Քո նազանքների ծփանքը դողդոջ,
Ծփանք մի, որով հպարտ ալիքն է ծփում ծովի մեջ
Եվ լուսաբացին ծփում է օդում ծո՛ւխը ծիրանի:
Եվ դու չգիտես ինչքան եմ սիրում
Բույրը քո այդ մերկ, լուսեղեն ուսի
Եվ քո վարսերի բույրը խելահեղ
Ու մի քիչ թունոտ,
Ու մի քիչ թունոտ,
Բույր, որ նման է այնպես այն բույրին,
Որ խնկարկում է ծառը ընկույզի...

Դու իմ հողեղեն
Եվ իմ երկինքը դու միանգամայն,
Այնտեղ ճախրանքի իմ հրճվանքն անափ
Եվ ահն անկումի,
Այնտեղ ծիածանն իմ աննյութեղեն
Եվ շանթը՝ թաղված սև ամպի ծոցում,
Այնտեղ աստղերի հրախաղը թեժ
Եվ ասուպների անկումը շքեղ...

Բայց միևնույն է, գնանք, սիրելիս...

1968

ՍԵՐ

Թրթռուն կրծքով
Մի աղջիկ – Եվա,
Մի խանդոտ, տենդոտ
Այրամարդ – Ադամ,
Ու նրանց միջև
Մի մեծ առեղծված,
Ալեկոծություն
Մի հավերժական...

1980

* * *

Գիտեմ, սիրված ես եղել կյանքում,
Ու տենչանքով են միշտ քեզ նայել,
Այդ քո հայացքն է ասում թաքուն
Եվ քո նազանքը ինքնավայել:

Բայց հավատա ինձ, իմ մեղավոր,
Բայց հավատա ինձ, միակ իմ սեր,
Սերն իմ ուրիշ է՝ արևավոր
Կարոտներից եմ ես այն հյուսել:

Սերն իմ ուրի՞շ է, քեզ անհաղորդ
Բարձունքներից է իջել նա վար,
Նա և՛ խոնարհ է, որպես աղոթք,
Ե՛վ ահավոր է ու հողմավար:

Նա բարի լույսն է իմ բաղձալի
Բարի գիշերն է կեսգիշերին,
Իմ տառապանքն է հրաշալի
Ու ներշնչանքն է նա մի վերին:

Ամբողջ գիշերը կոպերիս տակ
Ոսկե երազ է ու ոսկե ամպ,
Լուսաբացի դեմ հեղեղ է տաք,
Լեցուն ահեղ մի ուրախությամբ:

Եվ աղերսում եմ քեզ, իմ անգին,
Քեզ, մեղավոր իմ, իմ սեթևեթ,
Չխառնես բոցն իմ տառապանքի
Քո փոքրիկ ու հեշտ սերերի հետ:

1963

ԵԹԵ ՀԱՐՑՆԵՍ...

Իմ հպարտ, իմ սեր,
Եթե հարցնես, թե ինչպե՞ս եղավ, որ քեզ սիրեցի,
Ոչինչ չեմ ասի,
Քանզի չգիտեմ,
Թե ձյունն ինչպես է փոխվում ձնհալի,
Թե ցայգածաղիկն ինչպես է բացվում ծերպերին լեռան,
Եվ ծովի խորքում ինչպես է ծնվում հակինթը շողուն...
Եվ սակայն կասեմ.
Իմ ձնհալն ես դու,
Ցայգածաղիկը
Եվ իմ հակինթը՝ ծովերից հանված:

Իմ խոնարհ, իմ սեր,
Եթե հարցնես, թե ես ինչպե՞ս եմ հասակդ սիրում,
Ոչինչ չեմ ասի,
Միայն կպատմեմ բաղեղի մասին,
Որ մերկ լորենու հասակն է զուգում,
Կպատմեմ նաև ծովի խենթացած ալիքի մասին,
Որ փշրվում է ավազի վրա...
Եվ հետո կասեմ
Իմ լորին ես դու,
Իմ ավազն ես տաք:

Իմ քնքուշ, իմ սեր,
Եթե հարցնես, թե ես ինչպե՞ս եմ սիրում քո հոգին,
Ոչինչ չեմ ասի,
Կպատմեմ միայն ես Փարվանայի այն լեգենդը հին,
Կպատմեմ նաև,
Թե վայրի գազանն ինչպես է գերվում
Եղջերափողի դյութական ձայնից...
Ու հետո կասեմ.
Իմ կրակն ես դու,
Եղջերափողի ձայնն ես դյութական:

1963

* * *

Ես հաշտ էի ապրում իմ բախտի հետ
Ու տարբերում հստակ չարն ու բարին,
Բայց դու ինչո՞ւ եկար, իմ սեթևեթ,
Ու կանգնեցիր սիրուս ճանապարհին:

Ինչո՞ւ եկար, որ ես ոչինչ, ոչինչ
Չհասկանամ նորից պատանու պես,
Ոչ հայացքները՝ քո խրթին ու ջինջ,
Ոչ հմայքները քո՝ և չար, և հեզ:

Ինչո՞ւ եկար, որ ես երազանքիս
Ճքեղ գաղտնարանը նորից բանամ,
Ծիածաններ, գույներ հանեմ անգին,
Քեզ զարդարեմ ու լուռ սքանչանամ:

Որ քեզ հանեմ լուսե մի բարձունքի
Ու կերպարանքը քո լույսով ցողեմ.
Մաքրության մեջ վճիտ իմ արցունքի
Ամբողջ քո հասակը արտացոլեմ:

Եվ որ հետո, հետո բերեմ քեզ վար
Իբրև իմ իսկ ձեռքով կերտված բագին...
Ես հաշտ էի ապրում, ինչո՞ւ եկար
Ինձ մատնելու այս հին տառապանքին:

1963

ՏԱՔ ՁՅՈՒՆԸ

Այսօր իջնում է առաջին ձյունը...

Եվ տա՜ք է ձյունն այդ, ա՜խ, այնքան է տաք,
Որ ինձ թվում է, թե ձյուն չէ բնավ,
Որ դա ամպերի կարոտն է մաքուր,
Եվ որ ամպերը թեթևանում են իրենց կարոտից:

Ինչ-որ անանուն ծաղկի բուրմունք եմ առնում ես օդից...
Բայց ոչ, երևի դա բուրմունքը չէ անանուն ծաղկի,
Դա՝ աղջիկների այտերի վրա
Շիկնանքից հալչող ձյան փաթիլներն են երևի բուրում:

Իսկ դու, սիրելիս,
Դու, որ ինձ համար
Ամենքից լավ ես շիկնում աշխարհում,
Հետս չես, չկաս ու չես էլ գալու:

Մայթերին կախված մշուշը դալուկ
Ձյունի օրորվող փաթիլների հետ
Իմ բաց ճակատն է քնքշորեն շոյում...
Բայց ինձ, սիրելիս, քո տաք ձեռքն էր պետք:

Նայիր, այս մայթին դեռես չկա ոչ մի ոտնահետք,
Իսկ ես կուզեի,
Որ իմ այս մոլոր հետքերի կողքին
Ոտնահետքերդ տպվեին մանրիկ...

Իսկ ես կուզեի,
Որ այս ձյունը տաք
Օրհնության նման ու բարության պես
Իջներ երկուսիս ուսերի վրա և հասակն ի վար,
Քանզի իր մաքուր ու տաք քնքշանքով
Այս ձյունը շատ է մեր սիրուն վայել:

Կուզեի հիմա քո աչքերի մեջ ես անվերջ նայել
Ու քեզ շշնջալ տողերն այն երգի,
Որ դեռ չեմ գրել,
Բայց որոնք արդեն
Վերուվարում են երակներիս մեջ
Եվ ինձ շշնջում.
– Սերը... նման է նա ճշմարտության,
Կես ճշմարտությունն ինչի՞ է նման,
Ինչի՞ է նման կես սերն աշխարհում...

Այսօր է միայն, որ քեզ չեմ տեսել,
Եվ կապույտ բոցով կարոտս է այրվում:
Այսօր է միայն,
Որ քո ձեռքի հետ
Չեմ կիսել քնքշանքն իմ այրվող ափի
Ու մոլորվել եմ, չգիտեմ արդեն,
Թե որտեղով է անց կենում, իրավ,
Սահմանագիծը բախտավորության ու տառապանքի:

Ու եթե հանկարծ գայիր դու, անգի՛ն,
Եթե պատահմամբ ելնեիր իմ դեմ,
Ելնեիր ձյունո՜ւտ,
Ցողո՜ւտ,
Ծիծաղկո՜ւտ,
Հավատա, հոգիս,

Որ եթե անգամ ես լուռ մնայի,
Չշնջայի տողերն այն երգի, որ դեռ չեմ գրել,
Դու կլսեիր շշուկը նրանց.
– Սերը... նման է նա ճշմարտության,
Կես ճշմարտություն չի լինում կյանքում,
Չի լինում կես սեր...
Ու եթե սերը կիսվում է հաճախ,
Ապա կիսվում է
Լոկ երջանկության ու տառապանքի,
Իսկ տառապանքն այդ (քա՜ղցր տառապանք),
Հավատա, որ նույն երջանկությունն է:

Այսօր իջնում է առաջին ձյունը...

1963

ԿԵՍՆ Է ԳԻՇԵՐՎԱ...

Կեսն է գիշերվա...
Կուզեի այնպես ես քո տունը գալ,
Տեսնել շփոթմունքն ու շիկնանքը քո,
Հոգնած ամպի պես
Իմ կարոտները կրծքիդ հեկեկալ
Եվ սրտիս նման դողացող ձեռքով
Մատներդ շոյել,
Վարսերդ շոյել,
Բազուկներիս մեջ
Քո փխրուն ու տաք նազանքն օրորել...
Իմ քնքշանքների թավիշն անարատ,
Իմ թախիծների կապույտն ալիքվող,
Իմ արցունքների կայծկլտումը տաք
Ու տառապանքիս բոսորը փռել հայացքիդ ի տես,
Ասել, որ դու ես տերն այդ բոլորի,
Սակայն չգիտես:

1963

* * *

Ես չգիտեմ, ի՞նչ ես շահում
Քո քմահաճ խաղից,
Բայց ես՝ մի ողջ պատանություն
Ու մի մաքուր թախիծ:

Գուցե հրճվում ես դու թաքուն,
Որ հանգիստս տարար,
Իսկ ես աչքերս եմ լուռ փակում,
Ու իմն է լույսն արար:

Գուցե շոյում է քեզ սրտիս
Շփոթմունքը վրդով,
Իսկ ես հարուստ եմ, սիրելիս,
Իմ շփոթված սրտով:

Գուցե դու չար սատանությամբ
Ծիծաղում ես, խաբում,
Իսկ ես գտած պատանության
Երկինքներն եմ չափում:

Բայց, սիրելիս, ինչ էլ լինի,
Եթե խաբես անգամ,
Շնորհակալ եմ քեզանից
Հարյուր, հազար անգամ:

1963

ԻՄ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ ԵՎ ՏԱՄՆՈՒԹԸ ՔՈ...

Մի շաղոտ, շողոտ, արևոտ կածան
Քարափից կախվել, գլորվում է վար:
Հենց նոր է գարնան ամպրոպը անցել,
Եվ Հրազդանը լրի՛վ խենթացել,
Իր խենթությունն է խփում քարեքար:

Մի պատանի է իջնում ձորն ի վար,
Ու մի աղջիկ է բարձրանում ձորից...

Ամպրոպն աղջկան բռնել է ձորում,
Անձրևի ցողն է մազերին թափել
Եվ բարակ շորը թրջել է, ծեփել
Բարակ իրանին...
Իսկ ձորում ծաղկած ճերմակ ծիրանին
Ծաղկաթերթերի շնորհն է շաղել
Նուրբ հասակն ի վար:

Եվ շաղոտ, շողոտ կածանի վրա
Կանգնում են նրանք ու նայում իրար:

Պատանին ես եմ և աղջիկը՝ դու:

Բայց ո՛չ, սիրելիս, այդպես չի եղել,
Կյանքում շատ ուշ եմ հանդիպել ես քեզ,
Հանդիպել եմ քեզ,

Երբ իմ գարունը անցել է վաղուց,
Եվ ամառն անգամ կիսվել է արդեն:
Այո, սիրելիս, այդպես չի եղել:
Եվ այդ ամենը ես հնարեցի,
Որ իմ հրաշքով իրար հանդիպեն
Իմ քսան տարին և տասնութը քո:

Շատ էի ուզում, որ հանդիպեին,
Շատ էի ուզում,
Որ քո կիսափակ կոպերի տակից
Աղջիկ օրերիդ խոնարհությունը վախվորած նայի,
Եվ ափերիս մեջ մատներդ դողան
Առաջին սիրո խոստովանությամբ:

Շա՜տ էի ուզում քեզ հետ, սիրելիս,
Անցնել այս բոլոր ճանապարհներով,
Որ անց եմ կացել կյանքում առանց քեզ...
Շատ էի ուզում, որ անցյալ բոլոր օրերիս վրա
Քո սիրո քնքշանքն ու լույսը ձգես...
Շատ էի ուզում, որ հանդիպեին,
Եվ հանդիպեցին:

Ամպրոպն ապրիլի քեզ բռնել ձորում,
Անձրևի ցողն էր մազերիդ թափել
Եվ բարակ շորդ թրջել էր, ծեփել
Բարակ իրանիդ,
Բարակ, սիրելիս,
Եվ այնքան բարակ,
Որ թվում էր ինձ, թե նազանքն ինքն է
Քո տեսքով նազում...
Առուներն էին քարափից վազում
Եվ մոլոր կորչում ժայռ ու քարի մեջ:

Ես էլ իմ ձամփան կմոլորեի,
Բայց ոչ մի ուրիշ ճանապարհ չկար,
Բացի կածանից...
Աշխարհը ասես կախվել էր խաղաղ մի ծիածանից
Եվ օրորվում էր ու մեզ օրորում:

Կանգնել էիր դու քո բարակ շորում
Եվ քո վարսերից,
Քո թարթիչներից
Կաթ-կաթ արտասուք ու լույս էր ծորում:

Կանգնել էիր դու,
Կանգնել էի ես:

Իմ մարմնի վրա՝ դեռ ոչ մի սպի
Եվ ոչ մի սպի՝ իմ սրտի վրա...
...Ես դուրս եմ նայում,
Կեսն է գիշերվա,
Մի ասուպ, իրրև հրեղեն սպի, երկինքն է ձևում...

1963

ՍՐՏԻՍ ԶԱՐԿԵՐԸ ԵՎ ԺՊԻՏԸ ՔՈ...

Գլուխդ կրծքիս՝ շնչում ես դու մեղմ,
Ու ես չգիտեմ,
Ննջո՞ւմ ես արդեն,
Թե խոնջ քնքշությամբ կոպերդ փակած,
Սրտիս զարկերն ես լսում դու լռին:

Իսկ ի՞նչ են ասում զարկերն իմ սրտի...

Ասում են.
– Հոգիս, ես սիրում եմ քեզ, –
Ասում և սակայն զգում են նաև,
Որ այդ խոսքերով չե՞ն ասում ոչինչ...
Լռում են մի պահ, նոր խոսք որոնում
Եվ չգտնելով, կրկնում են նորից
– Ես սիրում եմ քեզ...

Ու դա երևի
Ե՛վ ամենահին,
Ե՛վ ամենանոր,
Ե՛վ ամենալավ երգն է աշխարհի:

Իսկ ի՞նչ է ասում ժպիտը քո լուռ...
Ասում է.
– Սակայն այդ խոսքերը դու
Շատ շատերին ես ասել, սիրելիս...
Զարկերն իմ սրտի ասում են.
– Այո:

Ես շատերին եմ այդ խոսքերն ասել,
Բայց այդ խոսքերով
Ես քո հասցեն եմ փնտրել երևի
Ու գտել եմ, տե՛ս:

Բայց թարթիչներիդ կապույտ շուքի տակ
Ծվարած ժպիտն անմեկին է շատ,
Ու չեմ հասկանում՝
Զարկերը սրտիդ կրկնո՞ւմ են արդյոք
Այն ամենահին,
Այն ամենանոր,
Այն ամենալավ երգը աշխարհի:

– Խե՛նթ, թե չեն կրկնում, ինչո՞ւ են հապա
Մազերս այսպես քո կրծքին թափված:
Մազերս,
Նայիր,
Երեկ հինա եմ մազերիս դրել,
Որ երբ արձակեմ քո կրծքի վրա,
Նրանք հին ոսկու փայլակումը տան
Ու բուրեն կրծքիդ հին գինու բույրով:
Եթե չեն կրկնում,
Ինչո՞ւ եմ հապա ես գեղեցկանում,
Երբ մոտդ եմ գալիս...

– Թե իրավ է դա,
Որտեղի՞ց հապա այն չարությունը,
Որ խառնում ես դու քնքշությանը քո..
Ինչո՞ւ է հաճախ
Մեր հանդիպումի հույսն՝ անհուսալի,
Մեր մոտիկությունն՝ անմերձենալի,
Պարզությունը քո՝ առեղծվածային,

Քնքշանքը՝ դաժան,
Նազանքը՝ խոցող,
Եվ կրակը քո ինչու է հաճախ
Ողջակիզումի խարույկի նման:

– Ես կին եմ, իմ խենթ...
Ու թեկուզ հիմա
Մազերիս ոսկին թափել եմ կրծքիդ,
Եվ կիսաբաց է իմ կուրծքը քո դեմ,
Չխաբվես սակայն...
Ես դեռ շատ անգամ քեզ կշնորհեմ
Մեր հանդիպումի հույսն անհուսալի,
Մեր մոտիկությունն անմերձենալի,
Քնքշանքն իմ դաժան,
Նազանքն իմ խոցող...
Գարուն կլինի, կանցնեմ փողոցով
Գերեվարելով հայացք ու հիացք
Եվ շնորհելով քեզ շանթը խանդի...
Գարուն կլինի,
Ես հեռվից հեռու կձայնեմ քեզ լուռ
Եվ կխուսափեմ...
Գարուն կլինի,
Գեղեցկանալով ես մոտդ կգամ
Եվ կհեռանամ
Առավել փխրուն ու գեղեցկացած:

Ես կի՛ն եմ, իմ խենթ,
Եվ ամենահին,
Եվ ամենանոր,
Եվ ամենալավ երգը աշխարհի
Այդ ե՛ս եմ հյուսել
Եվ այդպե՛ս հյուսել:

– Գիտեմ, սիրելիս,
Գիտեմ և քեզ եմ ես փառաբանում:
Փառաբանում եմ
Մազերիդ ոսկին՝ իմ կրծքին թափված,
Փառաբանում եմ կուրծքդ կիսաբաց
Եվ թարթիչներիդ կապույտ շուքի տակ
Ծվարած ժպիտն այդ անմեկնելի,
Որ մեղավոր է ու թովիչ սակայն...

Փառաբանում եմ
Մեր հանդիպումի հույսն անհուսալի,
Մեր մոտիկությունն անմերձենալի,
Գեղեցկացումը քո գարնանային,
Քո հեռացումը,
Քո վերադարձը
Եվ անգամ ահեղ
Խանդի սև շանթն եմ ես փառաբանում...

...Ողջ գիշեր այսպես զրույց են անում
Սրտիս զարկերը և ժպիտը քո:

1963

ԿԱՐՄԻՐՆ ՈՒ ՍԵՎԸ

Այսօր առավոտ զանգ տվեց նա ինձ.
– Բարի լույս, – ասաց:
Եվ իմ սենյակում, ուր լույս էր արդեն,
Լույսի տոն եղավ,
Ու եղավ լույսի արարողություն:

Հետո նա ասաց.
– Ի՞նչ էիր անում:
– Ի՞նչ էի անում,
«Երգ երգոցն» էի կարդում, սիրելիս:
– Ա՜խ, «Երգ երգոցը»,
Այդտեղ է, կարծեմ, որ ասում է, թե՝
Ես սև եմ, սակայն գեղեցիկ եմ ես,
Քանզի նայեցավ արեգակն ընդ իս...
– Այո՛, սիրելի՛ս,
Այդտեղ է ասված,
Ասված է նաև,
Երկվորյակ, ձերմակ ուլերի մասին,
Որ արածում են շուշանների մեջ...
Ասված է նաև,
Որ Թերսայի պես գեղեցիկ ես դու
Եվ դրոշակիր զորքերի նման ահարկո՛ւ նաև...

Այսքանը:
Այսօր զանգ տվեց նա ինձ.
– Բարի լույս,– ասաց:
Եվ իմ սենյակում, ուր լույս էր արդեն,

Լույսի տոն եղավ,
Եվ եղավ լույսի արարողություն:

Բայց ինչպե՞ս եղավ...
Ինքս էլ չիմացա, թե ինչպես եղավ,
Չիմացա նաև, թե այս գործի մեջ ո՞վ էր մեղսակից,
Զարթնող գարո՞ւնը՝ իր հրապույրի թափանցիկ քողով,
Թե՞ գարնանային կապույտ երեկոն
Եվ այնքա՜ն կապույտ,
Որ Սևանում էր ասես թաթախվել
Եվ հետո իջել, փռվել քաղաքին...
Կամ կակաչների հովի՞տն այն գուցե,
Հովիտն այն, որին զրնգուն մի օր մենք հյուր գնացինք,
Հովիտն այն հեռու, ուր ամեն կակաչ
Կարմիր ու սևի թաքուն խորհուրդն էր թերթերում պահել,
Ես այնտեղ մի մեծ, մի բռնցքաչափ, օ, ո՛չ, սրտաչափ
Կակաչ պոկեցի,
Պարզեցի նրան ու հարց տվի մեղմ.
– Քեզ դո՞ւր է գալիս...
– Իհարկե, օ, շա՜տ, սևը հատկապես,
Ինչ վա՜ռ է, նայիր...

Այո՛, իհարկե,
Մեզ կակաչներն այդ մեղսակից եղան
Իրենց կարմիրով և իրենց սևով:

Հետո նա ասաց.
– Գիշերը կգամ:
Ու ցերեկն ամբողջ խորհում էի ես,
Գիշե՞ր կլինի, աստղալույսի հետ կգա նա խոնարհ,
Ես նրա ձեռքը ափիս մեջ կառնեմ
Ու ինձ կթվա, թե կանգնած ենք մենք

Ամենաբարձր լեռան կատարին,
Ուր ջրվեժների շունչ կա պաղպաջուն,
Ուր լույս կա ու հողմ, ու խինդ կա վայրի...

Գիշեր կլինի, կգա նա խոնարհ,
Ես լուռ կշոյեմ սև քնքշությունը նրա վարսերի
Եվ ինձ կթվա, թե մտնում ենք մենք անտառ մի անհուն,
Ուր խոնավ բույրեր,
Ծշուկներ կան խենթ
Ու խորհուրդներ կան անիմանալի:

Գիշեր կլինի... Ու ես՝ ձեռքիս մեջ
Սև քնքշությունը նրա վարսերի,
Հպարտ գլուխը կթեքեմ վերև՝
Դեպի երկինքը,
Դեպի աստղերը,
Որ նրա խոնավ ու տաք շուրթերի
Համը համբուրեմ...

...Եվ սակայն հանկարծ հեռախոսի զանգ.
Այդ նրա ձայնն էր.
– Չեմ գա, սիրելիս...
Մութ եղավ ու լույս:
Հետո նոր երգս կարդացի նրան:
«Տառապանք» բառը
Զրնգուն հանգ էր դարձել իմ երգում:
Լսեց ուշադիր
Ու ներողամիտ ժպիտով ասաց.
– Ողջունո՜ւմ եմ ես հաջողությունդ:

Հեռանում էր նա:
Բանտված մրրիկ կար նրա քայլվածքում,

Ու մի կակաչ էր ծփում աչքիս դեմ:
Հեռանում էր նա:
Եվ անտես մի թել ձգվում ինձանից
Ու խճճվում էր նրա քայլվածքում:
Մոլորվել էի՝
Կտրե՞լ այդ թելը...
Բայց թել չէր դա, ո՛չ,
Զարկերա՜կս էր դա...

Մութ եղավ ու լույս: Մոռանալ էր պետք:
Իսկ մոռանալու համար, գիտեի,
Հեռանալ էր պետք:
Հպարտ և ուրախ մոտեցա նրան.
– Վաղը թռչում եմ,– ասի,– սիրելիս:
– Եվ ո՞ւր...
– Շատ հեռու...
– Չե՛ս թռչի,– ասաց:
– Ահա և տոմսը:
– Չե՛ս թռչի,– ասաց:

Կակաչներ էին աչքիս դեմ ծփում,
Եվ ալիքվում էր անթափանց մի քող:

Այսօր առավոտ զանգ տվեց նա ինձ.
– Բարի լույս,– ասաց:

Եվ իմ սենյակում, ուր լույս էր արդեն,
Լույսի տոն եղավ,
Ու եղավ լույսի արարողություն:

– Ի՞նչ էիր անում:
– «Երգ երգոցն» էի կարդում, սիրելիս...

– Ա՜խ, «Երգ երգոցը»...
Այդտեղ է կարծեմ, որ ասվում է, թե՝
Ես սև եմ, սակայն գեղեցիկ եմ ես,
Քանզի նայեցավ արեգակն ընդ իս...

– Այո՛, սիրելիս, այդտեղ է ասված,
Ասված է նաև,
Որ Թերսայի պես գեղեցիկ ես դու
Եվ դրոշակիր զորքերի նման ահարկո՛ւ նաև...

1963

* * *

Այնպես մի անի, որ ես ուրանամ իմ սրբությունը,
Այնպես մի անի, որ սրտիս համար արդեն մեկ դառնա,
Թե ում ոտքի տակ դնի իր սերն ու իր քնքշությունը,
Եվ ում համբուրեն իմ շրթունքները՝ ծարավից արնած:

Իմ հավատն էիր...
Բայց այսօր ցավի ամպերը խավար
Կարկուտ են տեղում ու թափում սիրո ծաղիկ ու թերթեր...
Դու գիտե՞ս արդյոք, թե ինչ ասել է կորցնել հավատ,
Եվ ինչ ասել է փշրել այն կուռքը, որ ինքդ ես կերտել:

1963

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ցավն իմ տաք է դեռ, ու գիտեմ, գիտեմ,
Որ կսկիծն այրող հետո պիտի գա...

Ես դուրս եմ գալիս,
Աշխարհի բոլոր ճանապարհները փռված են իմ դեմ,
Լոկ քեզ մոտ գալու ճանապարհ չկա:

Ցավն իմ տաք է դեռ,
Ու ես ափիս մեջ
Կարողանում եմ դեռ սեղմած պահել
Իմ ճեղքված սրտի երկու կեսերը:

...Ոչ, դու չիմացար, թե իմ բախտի մեջ
Ինչ էր քո սերը,
Չիմացար, հոգիս, որ քո հայտնության հրաշքից հետո
Ես հաճախ էի բռնում ինքս ինձ
Քարը,
Կանաչը,
Հողը շոյելիս,
Փողոցով անցնող զույգերի առաջ
Իմ գորովանքի քողը փռելիս,
Աստղի դեմ,
Ծաղկի,
Տիեզերքի դեմ
Հիացմունքի մեջ անզոր լռելիս:

...Գիշերներն ի լույս,

Դու և երազս քույրերի նման,
Ձեր գլուխները նույն բարձին դրած,
Նույն բարձին փռած վարսերը ձեր բոց,
Զրուցում էիք կիսաքնի մեջ
Ու երջանկության առասպելներից պատմում մեկմեկու...

Եվ լուսաբացին,
Երբ զարթնում էի ու ելնում փողոց,
Ձեր զրույցն էր դեռ իմ ականջներում,
Ու ժպտում էի ես մռայլ մարդկանց,
Ու ժպտում էի մառախուղի մեջ կորած արևին:

Իսկ երբ այս հորդուն, վարար մայթերով
Ես քայլում էի քեզ հետ, սիրելիս,
Ինձ թվում էր, թե քայլում են ինձ հետ
Հպարտությունս և ինքնությունս,
Թե ինչ-որ դաժան հողմերից խլված
Միակ քնքշանքն է իմ կողքին քայլում:

Եվ հիմա չկաս.
Քայլում եմ մենակ,
Ինքս իմ ձեռքով սիրտս եմ փայփայում,
Ծոյում եմ նրան որպես որբ մանկան
Ու որպես հավքի, որ վիրավոր է:

Քայլում եմ մենակ:
Իրիկնամուտը արևավոր է,
Լեռներն են վառվում,
Ասես լեռներում տոն է, կիրակի,
Հեթանոսական ինչ-որ մի հանդես:

Ի՞նչ անեմ, ասա,
Չբռնե՞մ արդյոք այս դժվար ձամփան

Ու գնամ, գնամ, գնամ լեռն ի վեր
Եվ սիրտս պահեմ լեռնալանջերի
Մրրիկների դեմ...

Սակայն մի անգամ
(Խենթ պատանության օրերին էր դա)
Փորձել եմ, գիտեմ,
Գիտեմ, բաժանման մրրիկների տակ
Լոկ թույլ ու առկայծ կրակն է մարում,
Եվ սաստկանում է զորեղն ավելի:
Բայց ճամփաները շատ են աշխարհում,
Կայարաններն են աղմկում անվերջ,
Եվ քաղաքներն են շառաչում ահեղ
Աղմուկով դարի,
Չգնա՞մ արդյոք,
Որ այդ մետաղե աղմուկների մեջ
Սրտիս հետ խոսող
Այս այրո՜ղ, այս տա՜ք շշուկը մարի:

Արցո՜ւնքը...
Հիմա այնպես լավ գիտեմ,
Որ նրա փոքրիկ ու ջինջ կաթիլը
Ծովի համն ունի
Եվ խորհուրդն ունի փոթորկված ծովի:
Սակայն, սիրելիս,
Ես քեզ երբևէ էլ չեմ վրդովի:
Ինքս իմ ձեռքով սիրտս կփայեմ,
Կշոյեմ նրան որպես որբ մանկան
Եվ որպես հավքի, որ վիրավոր է:

1964

* * *

Այո, սիրելիս, իմ և քո սերը նման եղավ շատ
Մի վտանգավոր
Եվ սակայն թովիչ մի ճամփորդության:

Բարեբաստիկ էր ծովային քամին,
Առագաստները և սրտերը մեր շատ էին լեցուն.
Ու մենք նավեցինք...
Մեր ճանապարհին
Մենք հայտնություններ արինք հիասքանչ՝
Գտանք անանուն,
Անհայտ կղզիներ,
Նրանց քնքշագին անուններ տվինք
Եվ բնակեցրինք
Մեր երազներով,
Թախծություններով
Ու մեր հույսերով:

Եվ հայտնություններ արինք մենք ուրիշ,
Տեսանք, որ ծովը
Հույսի այն փոքրիկ, աննշմար կղզուց
Մինչև երազի կապուտակ կղզին,
Շատ է մթամած,
Եվ մրրիկն այնտեղ շատ է մոլեգին:

Եվ հայտնություններ արինք մենք ուրիշ՝
Տեսանք, որ չքնաղ երազի կղզու
Ափի ժայռերը շատ են ուղղաձիգ,
Եվ ափ ելնելու չկա ոչ մի ճար,
Եվ արինք նաև հայտնություն մի այլ՝
Որ այդ ծովն ունի միայն մի խորհուրդ՝
Ընթանալ անվերջ, չհասնել սակայն...

1964

* * *

Գիշերը անցավ ու ծանր անցավ:
Լուսայգն է ահա բացվում համրորեն՝
Գիշերվա գործած ծանր մեղքերից շառագունելով:

Հեռացար: Հետո լռեց ամեն ինչ,
Եվ լռությունն այդ գիշերվա մեջ խոր
Նման էր այնպես
Ծանր փորձության
Ու արհավիրքի:

Սիրտս զգում էր,
Կանխազգում էր նա այդ արհավիրքը,
Ինչպես ծովային ծեր գայլն է զգում
Հեռավոր շունչը ահեղ փոթորկի:
Նշմարում էի ես նշանները այդ արհավիրքի՝
Ես տեսնում էի
Քո հայացքները հեռվում թափառող,
Որ նման էին այն երամներին,
Որոնք չվում են փոթորկից առաջ:
Ես տեսնում էի շիկնանքները քո՝
Այդպես արևն է փոթորկից առաջ
Շիկնում մի այրող
Ու վտանգավոր մի գեղեցկությամբ:

Եվ փոթորիկը, հիրավի, եղավ:
Լուսայգն է հիմա բացվում համրորեն:
Ու ես հաշվում եմ իմ կորուստները:
Իսկ բեռն իմ, հոգիս,
Ախ, շատ էր հարուստ ու շատ էր ծանր:
Ծանր՝ մի գանձով, որ անուն չունի,
Այլ ունի լոկ գույն՝
Հրե՜, հրավա՜ռ, հրեղե՜ն մի գույն:

Արևն է ծագում:
Լուսայգն է ահա բացվում համրորեն՝
Գիշերվա գործած ծանր մեղքերից շառագունելով:

1964

* * *

Վերջերս հաճախ երազներիս մեջ
Ես կարապներ եմ տեսնում, սիրելիս,
Ճերմակ կարապներ՝
Սև լճերի մեջ,
Ու սև կարապներ՝
Լճերում ճերմակ...

Դա լինում է միշտ, երբ քնից առաջ
Ես քո մասին եմ խորհում, սիրելիս:

1964

* * *

Քոնն է մեկընդմիշտ,
Քոնն է այն ամենն, ինչ ունեմ կյանքում
Եվ ինչ երբևէ ունենամ պիտի:
Բայց ամենից շատ ու ամբողջովին
Քոնն է սրտիս մեջ աննկատ բացվող
Այն տխուրաչյա կապույտ ծաղիկը,
Այն կապույտ բոցը,
Որի անունը կարոտ է...
Այո,
Քոնն է մեկընդմիշտ
Այդ կապույտ բոցը,
Այդ տխուրաչյա կապույտ ծաղիկը՝
Ամենաթանկը, ինչ ունեմ կյանքում:

1965

ՏԱՐԵԼԻՑ

Այնտեղ ծառերն իբրև կանաչ մարգարեներ
Իրենց սաղարթների խորհրդավոր խոսքով
Ինձ հուշեցին կամաց,
Որ կսիրես դու ինձ...
Օրը մեծ էր,
Ասես լույսի տեսությունից
Վար էր իջել շքեղ մի կիրակի
Ու քայլում էր երկրի հովիտներով:

Այգեստանի ձեռքից հազիվ պոկված մի հով
Հիացումիս նման փարվում էր քեզ
Ու քեզ ոտից գլուխ երկրպագում:

Տարելիցն է հիմա այդ նույն օրվա,
Ու ես մենակ նստած իմ աչքերը փակում,
Ձեզ եմ ձայնում, ծառեր,
Մարգարեներ կանաչ,
Ասեք, ո՞ւր է հապա խոստումը ձեր,
Եթե իրավ էիք,
Հապա ինչո՞ւ եմ ես
Հող ու ջրին այսքան ընտելացել:
Վկաներ իմ սիրո, մարգարեներ կանաչ,
Այդ նա պատճառ եղավ, որ այս տարի
Ես այսպես լավ, այսպես լավ հասկանամ,
Թե ինչ խաղ է խաղում ծովի ալիքն այն խենթ,
Որ զարկում է ժայռին ու հեռանում,
Որ հակինթ է հանում ծովի տակից հանկարծ
Ու իսկույն ետ տանում...

Եվ հասկացա նաև
Թե ինչու է բարձունքն իր ոտքի տակ
Միշտ խորխորատ բանում...
Եվ հասկացա, այնպես լավ հասկացա
Նաև լեգենդն այն հին,
Ուր Լիլիթն է սուրում կրակի պես
Ու իմ նախահորը իր հետքերով տանում...

Օրը մեծ է...
Կարծես լույսի տերությունից
Նորից ցած է իջել մի կիրակի
Ու քայլում է երկրի հովիտներով...
Նորից բարակ մի հով
Սաղարթներն է հուզում այս ծառերի:
Ու ծառերը, որպես կանաչ մարգարեներ,
Ինձ հուշում են թաքուն,
Որ կսիրես դու ինձ...

– Ուրեմն, քեզ ողջո՜ւյն, իմ նոր թախիծ,
Անքնություն, ողջո՜ւյն,
Ողջույն ծարավ,
Ու ողջո՜ւյն ձեզ, ողջո՜ւյն,
Նոր սպիներ..

1964

ՏԱՐ ԻՆՁ, ՔԱՄԻ

Ոչ, դու չէիր դարձյալ, ուրիշն էր ինձ զանգում:

...Ես լուռ նստել էի, ու տխրությունն անքուն
Իմ կոպերն էր փակել, կոպերն իմ թաց,
Իսկ կոպերիս ներքո դո՛ւ, միայն դո՛ւ էիր
Քո նազանքով փխրուն ու հմայքով հորդած:
Եվ դեմ դիմաց ահա կանգնել ենք դու և ես,
Դու՝ հմայքով քո ողջ,
Ես՝ իմ հպարտ սիրով:

Դրսում ձյուն է գալիս
Նշխարի պես խոշոր
Ու արևի պես տաք փաթիլներով:
Դրսում ձյուն է գալիս, բարի ու մի տաք ձյուն
Եվ անսահման ներո՜ղ, ներո՜ղ, ներո՜ղ...

Ես ի՞նչ անեմ հիմա,
Արդյոք փողո՞ց նետվեմ՝
Վայելելու մենակ օրհնությունն այս ձյունի...
Բայց առանց քեզ, ավա՜ղ,
Այս առաջին ձյունն իսկ ձյունի բուրմունք չունի:

Ախ, եթե հողմ լիներ, մրրիկ լիներ եթե,
Կնետվեի փողոց, որ նա ձերմակ բոցով
Իմ ճակատի անտես բոցը մարեր,
Եվ սակայն ձյունն այսօր այնքան մեղմ է ու տաք,
Որ թվում է ձյուն չէ, այլ սպիտակ արև:

Ես ի՞նչ անեմ, ասա:
Կար ժամանակ, որ ես իմ ափերով
Քո կրծքի դողը սուրբ,
Վարսիդ ծանր հյուսկեն
Եվ քո փոքրիկ ձեռքի քնքշանքն էի կշռում...

Ախ, թափո՛ւր է, թափո՜ւր ձեռքս հիմա
Ու քո ձեռքն է հիշում:
Ես ի՞նչ անեմ, ասա:
Քո կրծքի սուրբ դողից, քո քնքշանքից թափուր՝
Ձեռքս որոնում է գինու բաժակը ալ:

Իսկ բաժակում գինին, տես, այնպես է շողում,
Որ թվում է վերից մեջը աստղ է ընկել
Ու սկսել շողալ:
(Իմ աստղը չէ՞ արդյոք):
Իսկ բաժակում գինին, տես, այնպես է վառվում,
Ասես Արարատյան այն աշունը լինի,
Որ ինձ ու քեզ մի օր իր ճամփեքով տարավ,
Մի օր երբ դու այնքան լավն ու բարի էիր,
Երբ դեռ սիրում էիր,
Երբ տաք էիր որպես սիրո հարավ:

Հրդեհվում էր աշունն ինքն իր կրակի մեջ,
Ու դու քայլում էիր թևիս հակված:
Հրդեհի մեջ այդ շեկ Զվարթնոցն էր լռում՝
Անմեկնելի՜,
Շքե՜ղ,
Ավերակվա՜ծ:

Ավերակվա՞ծ, օ, ոչ...
Ես այդ պահին, հոգիս,

Այնպես էի լեցուն արարչությամբ,
Որ իմ հրամանով սյուներն ընկած
Հառնում էին, կանգնում,
Իսկ կամարներն հանկարծ
Ծիածանվում էին բարձրաթռիչ:

Եվ իմ հրամանով լույս եթերից
Այն զվարթունք թեթև իջնում էին արագ,
Եվ բարձրաբերձ, վսեմ գմբեթների ներքո
Սկսվում էր լույսի մի պատարագ:

Այդ պահերին ես էլ
Նման էի անչափ այդ տաճարին՝
Սե՛րդ էր, սե՛րդ էր իմ մեջ պատարագում:
Սակայն հիմա նորից երբ աչքերս եմ փակում
Ու նայում եմ հոգուս,
Այնտեղ Զվարթնոց կա ավերակված՝
Գետնաթավալ սյուներ, –
Հավատս էին նրանք,
Ու կամարներ բեկված, –
Իմ երազներն էին,
Ապա մկրտության
Ավազան մի ցամաք, –
Ավա՜ղ, քո սերն էր դա:

Ավազանն այդ... այնտեղ մկրտվում էր առաջ
Սիրտս–լուսաթաթախ մանկան նման,
Իմ կարոտը–խոշոր մի աստղի պես,
Եվ իմ հիացմունքը–ճաճանչի պես բարի:

Ձյուն է գալիս դրսում, ու քամի կա արդեն...
Իմ սրտի մեջ պարող հողմի ահեղ կանչով

Ո՞ր անդնդում քնած հողմն է արդյոք զարթնել:
Ու ես դուրս եմ գալիս: Հողմի շրթունքն է ցուրտ
Ինձ համբուրում իբրև բարեկամի:
Ես լիաթոք շնչում ու գոչում եմ ապա.
– Ուր որ ինքդ ես ուզում, տար ինձ, քամի՛...
Ես հողմի հետ ձերմակ թև թևի եմ տալիս,
Փողոցներն եմ չափում աննպատակ:
Կես է գիշերն արդեն:
– Տար ինձ, տար ինձ, քամի,
Ինձ օրորիր ահեղ քո շնչի տակ:

Սակայն ի՞նչ ես անում,
Ո՞ւմ դուռն ես դու ծեծում,
Իմ խենթ քամի, այս ո՞ւր, ինձ ո՞ւր բերիր...
. . . . . .
Լույսն է վառվում քո տան,
Հետո դուռն ես բացում,
Ու ես՝ մեղք չգործած,
Ծշնջում եմ.
– Ների՛ր...

1964

* * *

Ներիր, սիրելիս, ներիր ինձ լուռ,
Որ քո սեթևեթ նազանքի տակ
Ես չէի տեսել քո սիրտը տաք
Եվ արտասուքիդ լույսը մաքուր:

Չէի նշմարել, որ այդ անհոգ
Եվ այդքան թեթև քո ծիծաղից
Թաքուն հորդում է մի լուռ թախիծ
Եվ տառապանք մի նուրբ ու անօգ:

Ու չգիտեի, որ քեզ զուգող
Այդ քողը նետած, կարող ես գալ,
Իմ կրծքին ընկնել ու հեկեկալ
Այսպիսի խոշոր արտասուքով...

1965

ԽՈՍՔ ՆՈՐ ՏԱՐՈՒՆ

Ես ի՞նչ եմ ուզում, որ բերես դու ինձ..
Ոչինչ... Ախ, միայն ոչինչ չտանես,
Միայն չխլես
Ու քո անզիջում հողմերին չտաս
Այս սերը՝
Իր մեջ առաջին սիրո
Կապույտն ունեցող
Ու լույսն ունեցող
Այս սերը,
Նրա հրաշքն անքնին
Եվ անգամ նրա տառապանքն անքուն:

Չտանես,
Քո խենթ հողմերին չտաս,
Ու ես ամեն ինչ կունենամ կյանքում:

1965

* * *

Ժամն է արդեն, սիրելիս, եկ բաժանվենք մենք անձայն,
Ամեն մեկս մեր բախտին ու կորստին մեր հլու...
Ամառային խելահեղ այն ամպրոպները անցան,
Սիրտս խաղաղ է հիմա և ուժ ունի ներելու:

Աշնան հավքերը չվել, կարկաչել են երկնքով,
Եվ հոգնաբեկ ծառերից քամին տերև է տանում,
Համբուրելով է տանում ու տանում է քնքշանքով
Ու տանում է նա այնպես, ասես շնորհ է անում:

Այս կորստի ցավի հետ ես մտերիմ եմ վաղուց,
Ծանոթ ու լավ եմ ծանոթ, աշնան քամու արածին...
Ինչ տխո՜ւր է, երբ բարակ, անգույն անձրև է մաղում,
Երբ խանդի շանթը չկա, ու ներում են սիրածին...

1966

ՏԽՈՒՐ ԷՐ ՉՈՒՆ...

Եվ ասացին մարող
Աչքերդ հեզ,
– Ոչ քեզ հետ եմ կարող,
Ոչ առանց քեզ...

Չվող հավքերն անցան,
Տխո՞ւր էր չուն...
Դու՝ իմ լուսե հանցանք,
Իմ սև զղջում...

1967

* * *

Շնորհապարտ եմ քեզ
Սպասումի, դողի
Եվ խոստումով խոսող
Քո այն կանչի համար,
Այն քնքշության համար,
Որ ձեռքիս մեջ թողիր
Եվ սեթևեթ ու նուրբ
Քո նահանջի համար...

Անհայտությամբ բուրող
Քո վարսերի համար
Եվ շուրթերիդ համար,
Որ շոգով են հևում,

Եվ քո հագի մատնիչ
Մետաքսների համար,
Եվ այդ գոտու համար,
Որ իրանդ է ձևում:

Շնորհապարտ եմ ես
Այդ հայացքիդ համար,
Որ ինձ ու քեզ զատող
Ինչ-որ քող է այրում,
Եվ կանացի քնքուշ
Առեղծվածիդ համար,
Որ երգում է քո մեջ
Իբրև լույս ու արյուն:

Շնորհապարտ եմ ես,
Շնորհապարտ եմ քեզ,
Այս մշուշի, մուժի
Այս թախծության համար,
Այս արևի, լույսի,
Շոգի համար այս կեզ
Եվ այս շռայլ ու խենթ
Հարբածության համար...

1971

ՔՈ ՄԱՍԻՆ ԽՈՐՀԵԼԻՍ

Քո մասին խորհելիս,
Մի խոնավ ձնծաղիկ եմ հիշում,
Գարնան օր եմ հիշում,
Որ քնից արթնացած
Մերկ մանուկ էր ասես...
Ու ձնհալ եմ հիշում,
Ջրերի պղտորված հեկեկանք
Ու լույսի մաքրություն եմ հիշում:

Քո մասին խորհելիս
Իմ սրտի մանկությունն եմ հիշում:

Եվ հետո մատներիս
Բաբախող մաշկի տակ
Պարանոց եմ հիշում,
Խենթացող մի երակ եմ հիշում,
Խենթացող քնքշություն:

Քո մասին խորհելիս
Քնքշանում են մատներս նորից:

Եվ ամառ եմ հիշում,
Ճառագայթ եմ հիշում ու արև
Եվ հիշում հոգևոր մի նվագ,
Որ ասես օրհնություն էր լույսի
Ու հացի օրհնություն...
Այդ իմ սիրտն էր օրհնում

Եվ օրհնում էր նա քեզ,
Քո մարմինն էր օրհնում...

Քո մասին խորհելիս
Ջրերի պղտորված հեկեկանք եմ հիշում...

1968

* * *

Մենք բաժանված ենք:
Եվ սակայն սերը շարունակվում է,
Շարունակվում է մայրամուտի պես...

Շարունակվում է հորիզոնն ի վար
Մխացող ամպով,
Մթնելուց առաջ իր բույնը փնտրող
Հավքի տագնապով,
Գետափին մրսող սպիտակ ու մերկ
Ծաղկի սարսուռով,
Ձղջումի նման քարայրում զարթնող
Հողմի պաղ սույլով,
Շարունակվում է ձոր ու անդունդի
Մութ մխանքներով,
Եվ իրար փնտրող հեռախոսային
Անխոս զանգերով...

Մենք բաժանված ենք:
Եվ սակայն սերը շարունակվում է,
Շարունակվում է մայրամուտի պես...

1967

* * *

Ինչ-որ տեղ հիմա
Շրջում է սերը...
Ոտաբոբիկ է,
Մերկ են ուսերը:

Սև աչքերի մեջ
Լույս է ու թախիծ,
Ու տաք ծոցի մեջ
Բույր կա փեթակի:

Եվ տվայտում է
Կարոտս ամպած,
Ախ, սերը կույր է,
Կգտնի՞ ճամփաս...

1971

* * *

Այն կինը, որի մատները պիտի
Բռնեի դողով,
Որի աչքերում
Գլխապտույտս պիտի օրորվեր,
Ինչ-որ տեղ հիմա երևի մենակ
Ու շատ է մենակ.
Եվ չկա մեկը,
Որ աստվածացնի
Նրա մատների քնքշությունը թույլ:

Եվ այն խոսքերը,
Որ երբևիցե չեմ ասի նրան,
Շուրթերիս վրա մեռնում են դանդաղ...

1971

* * *

Իրիկնամուտ է
Ու տաք քամի է...
– Դու ո՞ւր ես գնում
Եվ ո՞ւր ես տանում
Երգող մարմինդ:

Իրիկնամուտ է:
Այրվող ամպերում
Իրար են առել
Կարմիրն ու սևը:

– Անծանոթուհի՛,
Ախր, ես գիտեմ
Այդպես գեղեցիկ
Քայլում է միայն
Մեղավոր սերը...

1971

* * *

Զարթնում է նորից խռովքն իմ վայրի...
Զգում եմ... Դո՛ւ ես... Գալիս ես խաղաղ,
Դու՝ գիշերային շողուն խավարի
Եվ արշալույսի լուսեղեն շաղախ:

Ասես գալիս ես այլ ժամանակից,
Գալիս մոգությամբ մի անհնարին,
Եվ թարթիչներիդ թախծության տակից
Քնքշանքն է նայում՝ խառնված չարին:

Այլ աշխարհից ես բերում դու ասես
Քո շրթունքների հեգնանքը տանջող,
Բարակ իրանիդ բեկումը այդ հեզ
Եվ հմայքներդ նուրբ ու նահանջող:

Գալիս ես, որ քեզ լոկ հեռվից շնչեմ,
Որ մտքով անգամ ես քեզ չբանամ,
Քո մաքրության դեմ այսպես երկնչեմ
Ու կարոտիդ դեմ այսպես սրբանամ:

Այլ աշխարհից ես գալիս դու ասես,
Բերում այս դողը, ծարավն այս վերին,
Եվ հայացքիդ տակ հավատում եմ ես
Սիրուց մեռնելու առասպելներին:

1971

* * *

Ես չկանչեցի, դու ինքդ եկար,
Եկար նազանքիդ բեկումով փխրուն,
Եվ թարթիչներիդ թախիծը թեքած,
Նստում էիր լուռ ու ինձ հետ տխրում:

Ու ես, որ կյանքում զատել գիտեի
Եվ մեղքի շողքը, և սերը արդար,
Քո աչքերի դեմ կարկամում էի
Եվ անզոր էի հայացքդ կարդալ:

Մերթ դողում էր նա իբրև սև արցունք,
Մերթ վառում թաքուն ու կանչող լույսեր,
Դու՝ ոտից գլուխ մի խրթին հարցում,
Դու՝ ոտից գլուխ տառապանք ու սեր:

Եվ ինչո՞ւ եկար, ի՞նչ էիր ուզում,
Ինչո՞ւ հեռացար... Չգիտեմ ոչինչ:
Եվ հիմա հեռվից տենդորեն հուզում,
Այրում են հեռվից աչքերը քո ջինջ:

Քեզնից մնացած այս թախիծը խոր
Մթնով զարթնում է ու լուռ հեծեծում...
Նա քո՛ննն է նաև, նա մանուկ է որբ
Ու որբի նման քո դուռն է ծեծում:

1971

* * *

Մենք իրարից զատված երկու շշուկ,
Ու մեր միջև հողմեր,
Քամի ու ձյուն...

Եվ լինում են, սակայն, անհուն պահեր,
Երբ շշուկն իմ հանկարծ հողմի միջով
Տաք ալիքն է բռնում քո շշուկի
Ու զրուցում քեզ հետ
Ու զրուցում...

Զրուցում են նրանք որբերի պես,
Ծշնջում են իրար,
Որ ցուրտ է խիստ,
Որ քաղցած են սաստիկ
Ու մրսում են...

Մենք իրարից զատված երկու շշուկ,
Որ որբի պես մերկ են ու դրսում են:

1971

* * *

Եվ ահա կրկին ցավոտ մի թախիծ
Գալիս է անտես ու ինձ ողողում:
...Եվ կրկին քո սև թավիշի տակից
Սպիտակ ուսդ է քնքշորեն շողում:

Շողում են կրկին աչքերը քո ջինջ,
Որ ասես մոլոր գիշերներ լինեն,
Եվ այդ աչքերից լուռ նայում է ինձ
Մեղավոր ու սուրբ այն Մագդաղինեն:

Դու ո՞ւր ես հիմա... Քայլերդ բեկուն
Որտե՞ղ են երգում մեղեդին այն տաք,
Ո՞ւմ ուսերին ես գլուխդ թեքում,
Իբրև քնքշորեն հոգնած հպատակ:

Եվ քո աչքերը ո՞ւմ են ցոլանում
Մեղավոր ու տաք մի առավոտով,
Եվ ո՞ւմ են այրում մատները քո նուրբ
Իրենց ընտանի ու թաքուն տոթով:

...Ու ես ուզում եմ մինչև վերջ հարբել,
Ու ես ուզում եմ այսօր խենթանալ,
Խանդի մրուրը մինչև վերջ պարպել
Եվ գալ հողմի հետ, քո դուռը բանալ:

Մտնել հոգուդ մեջ, խառնել ամեն ինչ,
Քեզ նորից անել հեզ ու հպատակ,
Եվ արցունք տեսնել աչքերին քո ջինջ,
Եվ արցունք տեսնել ձեռքերին իմ տաք...

1971

* * *

Հեռանում ես դու...
Եվ մի իմանա,
Որ արյանս մեջ դու պիտի փակվես
Վերջալույսի պես
Եվ պիտի մխաս
Հանգչող արևի տխուր մխանքով:
Եվ մի իմանա, որ մենության մեջ,
Երբ քո անունն եմ ինքս ինձ տալիս,
Զարթնում են հանկարծ թախծագին բառեր
Եվ իրիկնային կապույտի միջով
Գնում են կորած մանուկների պես
Ու հեռուներում հեծկլտում են խուլ...

Եվ մի իմանա, որ երբ ուսերիդ
Հպարտ ու շողուն քնքշանքն եմ հիշում,
Իմ որբ մատները տառապում ցավով,
Դառնում են այնպես
Քնքուշ ու վայրի...

Հեռանում ես դու...

Եվ չէի ուզի,
Որ իմ այս սերը բառերի փոխված,
Պոկվի ինձանից ու հեռու գնա:

Ախր, նա շատ է
Փխրուն ու ցավոտ,
Նա շա́տ է իմը
Ու... վերջի՛նս է նա...

1971

* * *

Եվ դու, որ մի օր եկար քնքշորեն ու անակնկալ
Եվ իմ օրերը մեղկ ու փոշոտված
Փոխեցիր մաքուր, նախնական ու մեծ առավոտների
Եվ իմ մենության տաղտկությունը մեղկ
Փոխեցիր կապույտ սպասումների ու կարոտների
Եվ սրտիս մաշված ոտանավորը
Փոխեցիր զնգուն բանաստեղծության,
Ինչո՞ւ, ախ, ինչո՜ւ դարձար հեռավոր ու դարձար անհաս...

Եվ դու, որ մի օր ինձ համար հացի համ ու հոտ եղար,
Հողի հոտ եղար ու խոտի բուրմունք
Եվ եղար խաղաղ միջօրեի մեջ
Երգող փեթակի արևոտ բերկրանք,
Եղար առաջին օրհնված ողկույզ
Եվ եղար նռան կեղևում պահված բոսոր բարություն,
Ինչո՞ւ, ախ, ինչո՞ւ ոգու սով դարձար ու արյան ծարավ...

Եվ դու, որ մի օր իմ ձեռքերի մեջ խոնարհվող ցողուն
Եվ իմ գրկի մեջ քնքուշ ընդվզման հոգնություն եղար,
Եվ խոնարհ հատնում, և շռայլ վատնում եղար ինձ համար
Եվ եղար շնորհ, և եղար բախտի լիաբուռ պարգև,
Ինչո՞ւ, ախ ինչո՞ւ դարձար հեռավոր,
Հեռու հեռավոր ծովափին կանգնած մենավոր մի կին...

1975

* * *

Փխրուն է ավազն ու ավազը տաք,
Կապույտ է երկինքն ու երկինքը ջինջ,
Եվ հսկայական այդ երկնքի տակ
Կանգնել ես մենակ իբրև սեր ու կին:

Ծովը ծփում է կապույտ սոսափով
Եվ անրջում է հպարտ ու տրտում...
Ու գեղեցիկ ես դու որպես սափոր
Ու որպես սափոր սլացիկ ես դու:

Դու քայլ ես անում, նազող համրությամբ
Վարսերիդ սևը նետում ես ետև,
Եվ կուրծքդ է դողում ծովի ծանրությամբ
Ու աստղալույսի թրթիռով թեթև:

Քո աչքերի մեջ լույսն է նվաղում՝
Գեղեցիկ, ինչպես մեղքը Եվայի,
Եվ հասակդ ի վար թախիծ է մաղում
Հեռավոր կանչը մենավոր ձայի...

1975

* * *

Եվ կար ժամանակ, որ իմ քաղաքի
Քնած մայթերով շրջում էինք մենք
Ու չէինք փնտրում աշխարհում ոչինչ...

Իբրև լույս ու դող
Մատներդ ունեի ես իմ ձեռքի մեջ,
Եվ դու ունեիր
Կոպիցդ կախված արցունքը քո ջինջ:

Եվ չէինք փնտրում աշխարհում ոչինչ:

Հետո իմ ձեռքն էր
Քո ուսի վրա այրվելով տխրում,
Տառապում իբրև չարձակված մի ճիչ...

Ուսը, քո ուսն էր
Այրվող ձեռքիս տակ քնքշորեն փխրում,
Ու ծանրանում էր արցունքը քո ջինջ:

Եվ չէինք փնտրում աշխարհում ոչինչ:

1975

* * *

Եվ հիշում եմ ես՝ կարմիր էր գինին,
Գինին եռեփ էր ու գինին հարբած,
Նա երակներիս թախծության մեջ հին
Վառվում էր իբրև արյան այգաբաց:

Նա քո շուրթերի թաց ու տաք մաշկին
Մեղսանքի թաքուն բույրով էր շնչում,
Նա մեզ առնչում լույսի հրաշքին
Ու խավարին էր նա մեզ առնչում:

Եվ այդ վայրկյանը խորհուրդ էր ու դող
Ու մեղք էր մթին, ու լույս էր արդար,
Ճակատագիր էր, հրեղեն մի տող,
Որ անզոր էի, սակայն, ես կարդալ:

Եվ լռության մեջ դողում էր դանդաղ
Այդ մութ վայրկյանի խորհուրդը թաքուն,
Ու նվաղեցին աչքերդ հանկարծ,
Քո սև աչքերը դարձան մեղրագույն:

Փխրուն ուսերիդ քնքշանքը հորդել
Ու կաթկթում էր մատներից քո տաք...
Առեղծվածները քանդվում թել առ թել,
Հեկեկում էին մեր ոտքերի տակ...

1975

* * *

Կայիր դու այդպես, կայիր իմ կյանքում,
Կայիր դու որպես քնքուշ հպատակ,
Կայիր դու որպես հավատը վանքում,
Ղողանջը զանգում, լույսը կոպի տակ:

Եվ ընտանությամբ քո խոնարհ ու տաք
Գիտեիր այնպես հմտորեն տանջել,
Վանել գիտեին մատներդ բարակ,
Հայացքդ գիտեր կիսախուփ կանչել:

Եվ քո այդ անմեղ-մեղավոր խաղից
Ինչ-որ մի ուրիշ լույս էր թևածում,
Տարուբերվում էր մի թաքուն թախիծ,
Ու մի արևոտ անձրև էր հածում:

Եվ նահանջում էր կիսամութն ասես,
Արար աշխարհը զիջելով լույսին,
Երբ հանկարծակի զգում էի ես
Քո պարանոցի բեկումն իմ ուսին:

Երբ զգում էի քնքուշ մի անկում,
Եվ նվաղումը քո թույլ ձեռքերի...
Կայիր դու այդպես, կայիր իմ կյանքում,
Կայիր այդպես պարզ ու անմեկնելի...

1975

* * *

Եվ հիմա միայն
Անունդ մնաց,
Եվ հիմա նրա ամեն մի տառից,
Որ մոմերի պես այրվում են իմ դեմ,
Կարոտ է կաթում,
Ու աստղ է կաթում,
Ու կաթկթում է հրե մի թախիծ:

Անո՜ւնդ...
Ծովի այն մթնշաղից
Նա ալիքի պես հևիհև գալիս,
Իմ շրթունքներին տառապում անքուն,
Իմ շրթունքներին դողում լույսի պես
Ու հաղորդության
Եվ իմ ծարաված այդ շրթունքների
Աղի ու լեղի կարոտն է լալիս:

Անունդ՝ ալիք,
Անունդ գալիս,
Իմ շրթունքներին տառապում անքուն
Ու սրտիս վրա
Աստղեր է լալիս...

1975

* * *

Հեռու ծովափին նստել երևի
Ու քո վարսերն ես սանրում դու նազով,
Մերկ ուսերդ ի վար ալիքը սևի
Բուրում է ծովի ջուր ու ավազով:

Ծովը հևում է հլու հոգնությամբ
Ու իր խորքերից տխուր ղողանջում,
Նա կանչում է քեզ վայրի մոգությամբ,
Սրտաբեկությամբ նա քեզ է կանչում:

Նա կանչում է քեզ կապույտ մխանքով
Եվ իր վիհերի թաքուն մթությամբ,
Կանչում ծովային իր տառապանքով
Եվ իր տվայտող տեղատվությամբ:

Կանչում է նա քեզ ելնող թևերով
Եվ իր ծնկաչոք խոստովանությամբ,
Իր հնարավոր բոլոր ձևերով,
Իր խոնարհությամբ ու ըմբոստությամբ:

Կանչում է նա քեզ, որ խենթ հորդելով
Քո արևավոր ծնկներին փարի,
Եվ իր կարոտած, աղի շուրթերով
Համբուրի նորից քո համը բարի:

Եվ ալիքները ելնում են տխուր,
Բերում արևի շշուկները տաք,
Ափի քարերին տառապում են խուլ
Ու փշրվում են քո ոտքերի տակ:

1975

ԱՆԾԱՆՈԹ ԾԵՍ

.... Եվ ահա նորից մենք հանդիպեցինք:
Իմ ու քո միջև հողմեր են շաչել,
Եվ տառապել է մեր բաժանումի
Օվկիանոսը մութ:
Եվ սակայն՝ հրաշք,
Դու առաջվա պես դեռ շիկնել գիտես
Եվ առաջվա պես գեղեցիկ ես դեռ:

Եվ այլ մի հրաշք՝ ասելիք չունենք:
Այդպես երևի ծովերն են լռում
Փոթորկից հետո,
Այդպես երևի անտառն է լռում
Մայրամուտի դեմ,
Այդպես լռում է այն տունը լքված,
Ուր կատարվել է թաքուն ու մթին
Մի ողբերգություն:

Եվ այլ մի հրաշք՝
Մեր հարազատի – խանդի մահը սև
Մեզ հարազատ է դարձրել ավելի:
Եվ ես ուզում եմ շոյել քնքշորեն
Քո սպիները, որ ես եմ թողել.
Եվ դու երևի ուզում ես շոյել
Այն վերքերը հին, որ թողել ես դու:

Եվ իմ ու քո մեջ ծավալվում է լուռ
Մի զարմանալի սրբագործություն
Կամ բոլորովին անծանոթ մի ծես,
Որ անուն չունի...

1980

* * *

Բարալիկ էր նա, խալ ուներ այտին,
Հայացքը թեքում ու ինձ չէր նայում,
Նայում էր ասես հեռու անհայտին,
Հեռու մեկին էր ասես հմայում:

Աշխարհում հազար աղջիկներ կային,
Բայց նա միակն էր, ինչպես այն Եվան...
Ա՜խ, ինչքան եմ ես քո իրիկնային
Թախիծը շնչել, քաղաք Երևան...

Բայց ի՞նչ իմանար իմ սիրտը, ավաղ,
Որ երանելի ուխտավոր եմ ես,
Որ այդպես տխուր ու այդպես ցաված՝
Մի հարուստ, հարբած բախտավոր եմ ես:

Եվ ի՞նչ իմանար, որ երբ ցուրտ քամին
Հորդորի այսպես, որ դուռս բանամ,
Ես պիտի վառեմ այդ թախիծը հին,
Նստեմ նրա դեմ ու քիչ տաքանամ:

1979

ԱՍՏՂԻ ՊԵՍ

Քո աչքերի խավարում
Ժամադրվեն թող այսօր
Իմ գաղտնիքը թախծալի
Եվ առեղծվածը քո լույս...

Վաղը կգամ,
Քեզ համար
Չասված խոսքեր կբերեմ:

Վաղը կգամ,
Քեզ համար
Մի մաքրություն կբերեմ,
Որպես վաղուց գոյացած
Ու չլացած արտասուք:

Վաղը կգամ,
Ափիդ մեջ
Կդնեմ սերն իմ վերջին,
Լուսաբացին մարմրող
Վերջին տխուր աստղի պես...

1976

ԿԱԽԱՐԴՈՒՀԻՆ

Ես գիտեմ հիմա, դու սիրո ծաղկից ու խանդի խոտից
Ինչ-որ անծանոթ մի խմիչք էիր եփում ինձ համար,
Որ դառն էր, որպես մրուրը գինու, թույնը կարոտի,
Ու քաղցր, որպես վերին մանանա:

Ես գալիս էի, երբ կեսգիշերն էր իջնում քաղաքին,
Ես գալիս էի, ասես երկնքի դուռն էի բախում,
Ես խմում էի քո ձեռքով պարզված թույնն այդ դառնագին
Հետո հեռանում, չգիտեմ, ա՜խ, ուր...

Քնած քաղաքում կորցնում էի ես ճամփա և ուղի,
Մութ բավիղներում երերում էի ես հարբածի պես,
Չէի հասկանում, չար ոգի՞ ես դու, թե կախարդուհի,
Ու երդվում էի մոռանալ ես քեզ:

Բայց երբ գիշերն էր իջնում քաղաքին, որպես մեղսագործ,
Ու սև ծառերի սև ցնորքներն էր մայթերին կախում,
Ես գալիս էի, ես բախում էի նորից դուռը քո,
Նորից երկնքի դուռն էի բախում:

...Դեռ քիմքիս վրա անհայտ խմիչքիդ մրուրն է մթին,
Ու դեռ չգիտեմ, անիծո՞ւմ եմ քեզ, թե լուռ աղոթում,
Բայց կարոտում եմ ես անդունդների գլխապտույտին
Ու երկնքին եմ նորից կարոտում...

1980

Ի ՍԿԶԲԱՆԵ

Երբ շատ հոգնեի
Ձերմակ թղթի դեմ երկյուղածելուց,
Երբ շատ հոգնեի
Համառող տողի քմահաճ խաղից,
Ամեն ինչ թողած ելնեի փողոց,
Եվ հանդիպեինք մենք պատահաբար:

Եվ դա ամառվա մի շեկ օր լիներ,
Ու բոլոր կանայք աչքիս թվային
Թուխ ու գեղեցիկ:

Եվ դու լինեիր թուխ ու գեղեցիկ,
Գեղեցիկ, ինչպես հասկը ցորենի,
Ինչպես ձառագայթն արտասուքի մեջ,
Ինչպես ամռան օրն ամպրոպից հետո
Եվ ինչպես ինքը՝ անհայտը հեռու...

Եվ խորհրդավոր լինեիր նաև,
Եվ խորհրդավոր, ինչպես գաղտնարան,
Եվ խորհրդավոր,
Ինչպես ներշնչման ցավը մոտալուտ:

Իսկ ես, ախ, գիտեմ,
Պիտի թվայի քեզ ծեր ու հոգնած,
Եվ զարմանայիր պիտի քնքշորեն,
Թե ինչո՞ւ եմ ես
Քեզ նայում այդպես քնքուշ ու վայրի:

Բայց դու, որ կին ես,
Եվ գեղեցիկ ես, ինչպես անհայտը,
Եվ խորհրդավոր,
Ինչպես ներշնչման ցավը մոտալուտ,
Հաջորդ վայրկյանին կհասկանայիր,
Որ թեև հոգնած ու ծեր եմ թվում,
Բայց դեռ չեմ հոգնել սիրելու ցավից:

Հետո երևի այդ շեկ օրվա մեջ
Հնչեր մի անհայտ երաժշտություն,
Որ ողջ աշխարհում
Լսելի լիներ միայն ինձ ու քեզ:

Եվ երգն այդ անհայտ
Հուշեր ինձ ու քեզ,
Որ կա աշխարհում դրախտ ու դժոխք...

Եվ ամենայն ինչ
Սկսվեր նորից, ի սկզբանե...

1976

* * *

Այդ ես նկատեցի, որ չես քայլում դու, ոչ,
Այլ ծփում ես թեթև, որպես ալիք,
Այդ ես գուշակեցի, որ քո հոգու մեջ գոց
Ծվարել է մի լուռ հրաշալիք:

Եվ շողացիր աշնան քամիներիս մեջ ցուրտ
Իբրև անհայտ ու տաք սիրո աշխարհ:
Հետո հրաշք եղավ, ու հրաշքով այդ սուրբ
Ջուրս գինի դարձավ, հացս՝ նշխար:

Իսկ դու քանի գնաց, այնքան գեղեցկացար,
Կարոտի պես, հուշի, ներշնչանքի,
Եվ չիմացա՝ ինչպես ճակատագիր դարձար
Ու փոխվեցիր անբառ մի տանջանքի:

Երակներիս մեջ փակ դարձար քնքուշ մի ցավ,
Դարձար ցավոտ, ցավոտ մի քնքշություն,
Արտասվեցիր իմ մեջ իբրև թաքուն անձավ
Ու մխացիր որպես կարոտ ու խունկ:

Գիտեմ, սիրո համար հիմա ցուրտ է դրսում,
Եվ թափառում է նա մերկ ու եղծված,
Բայց իմ ու քո միջև բոցկլտում է մի սուրբ,
Սիրո թաքուն ու սուրբ մի առեղծված:

Եվ անպաշտպան ես դու, որպես գեղեցկություն,
Որպես անհայտ ու տաք սիրո աշխարհ,
Առ իմ խիղճը մաքուր, ապավինիր սիրուս,
Դու՝ հողմերից փրկված իմ սուրբ նշխար...

1977

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Հավատում էի, գիտեի հաստատ, որ այս աշխարհում
Դու ինչ-որ մի տեղ ապրում ես ու կաս,
Բայց չգիտեի, որ մոտ ես այդքան ու հենց այս գարուն
Հայտնվես պիտի ու գարնան հետ գաս:

Այդպես է, հոգիս, ով հավատում է կյանքում հրաշքի,
Նրան է միայն հրաշքն այցելում,
Հավատավորը, ուխտավորն էի ես այդ հրաշքի,
Ու հայտնվել ես, հրաշք այցելու:

Եկել ես ահա ու բերել նորից գաղտնիքն ու ցավը,
Որ գիտեն այնպես տրտմորեն լացել,
Եվ իմն է ասես լեռներում կորած այն քարանձավը,
Որի գաղտնիքը ոչ ոք չի բացել:

Իմն է հեքիաթի ցայգածաղիկը, այն ծաղիկը լուրթ,
Որի ծաղկումը չի տեսել ոչ ոք,
Իմն է լեռնային անհայտ այն լճի թրթիռը կապույտ,
Որի դեմ պիտի իջնել ծնկաչոք:

Իմն է ձնհալի այն վայրկյանը լույս, վայրկյանը վայրի,
Որից գետերն են հանկարծ ցնորվում,
Իմն է շուրթերիս ծարավին թառող ժպիտն անառիթ,
Որ խենթերին է միայն շնորհվում:

Եկել, կախվել ես իմ բախտի վրա դու որպես ասուպ
Ու որպես գաղտնիք, ու լույս, ու խավար...
Եվ նորից ահա աստղերն են խաղում իմ գինու թասում,
Որ պիտի հոսեն երակներս ի վար...

1977

* * *

Դու անհայտն ես,
Անմեկնելին...
Բայց քո հեռու շշուկներից զգում եմ ես,
Որ տաք ես դու, որպես շշուկ,
Անմեկնելի, որպես շշուկ,
Որ ես գիտեմ,
Գեղեցիկ է անմեկնելին...

Ու ես գիտեմ,
Գեղեցիկ ես ոտից-գլուխ,
Քանզի կինը
Տաք շշուկով զրուցելիս,
Գեղեցկանում ոտից գլուխ
Ու կրկնակի՜ կին է դառնում...

Ու ես գիտեմ,
Այս մեղավոր,
Այս հողահոտ գարնան նման
Կարող ես գալ,
Ինձ դուրս հանել իմ ափերից,
Խփել նորից ժայռ ու քարի
Ու քրքրել,
Ու քրքրել...

1977

* * *

Օրհնյալ լինես դու...
Քո գալուց առաջ
Դատարկ, անխռով ու կույր էի ես,
Ինչպես երևի Ադամն է եղել
Արգելված պտուղն ուտելուց առաջ:

(Այդ աստվածները ինչո՞ւ են ուզում,
Որ մենք կույր լինենք, լինենք անխռով
Ու լինենք դատարկ)...

Օրհնյալ լինես դու,

Քո գալուց հետո
Ես տառապանքի կշիռն զգացի,
Խռովքը խանդի, շիկնանքը շանթի,
Տեսա մերկության ցոլանքը մաքուր,
Ես լո՜ւյսը տեսա...

Ես աստվածներին դարձա հավասար:

Օրհնյա՜լ լինես դու...

1977

* * *

Աշնան ծառերը բոց են ու բեհեզ,
Աշնան ծառերը ոսկի են ու սուգ...
Օրը ջինջ է դեռ արտասուքի պես
Եվ սակայն տխուր, որպես արտասուք:

Ու ոլորվում է ճանապարհս դեռ,
Իմ ճանապարհը՝ թախծալի հրաշք...
Եվ քո աչքերը՝ լուսավոր աստղեր,
Դեռ խոնարհվում են իմ բախտի վրա:

Եվ մի հեռանա, թող լույսն անհունի
Մի քիչ էլ դողա իմ թարթիչներին,
Թե առեղծվածը պատասխան ունի,
Ապա քեզ մոտ է գաղտնիքը վերին:

Շուտով կփչի հողմը ձյունաբեր,
Ոտքի տակ կառնի ոսկի ու հրաշք,
Եվ քո աչքերը՝ սգավոր աստղեր,
Լուռ կխոնարհվեն իմ բախտի վրա...

1978

* * *

Ես, սիրելիս, շատ եմ ապրել,
Բայց չգիտեմ մինչև հիմա,
Թե ո՞րն է լավ,
Որոնումի ու երազի անհաս ճամփա՞ն,
Թե՞ հասնելու
Եվ գտնելու վայելքը մեծ:

Ու ես գիտեմ,
Թե հանդիպենք,
Ապա պահն այդ գուցե նման լինի այնքան
Այն վայրկյանին,
Երբ առաջին մարդը մի օր
Առաջին կայծն ու առաջին բոցն է տեսել:

Կա՛յծը,
Բո՛ցը,
Հրաշալին,
Հրաշալին ու տանջալին:

Ես, սիրելիս, շատ եմ ապրել
Ու վախենում եմ կրակից:
Հոգուս մաշկին
Այրվածքների հետքեր կան դեռ
Ու հետքեր կան խարանների,
Եվ մատներս,
Որ շեկ աստղեր են շոշափել,
Այրվում են դեռ...

Ու ես գիտեմ,
Թե հանդիպենք,
Պիտի թվա,
Թե մենակ ենք մենք աշխարհում,
Ու մեզ հետ է միայն ինքը՝
Երկինքը մեծ:

Ես, սիրելիս, շատ եմ ապրել,
Շատ եմ եղել երկնքի մեջ,
Եվ չեն մարել իմ թևերում
Անհունության ցավը կապույտ
Եվ կսկիծը անկումների:

Ու ես գիտեմ,
Թե հանդիպենք,
Նորից իմը պիտի լինի
Եվ կրակի մորմոքը շեկ,
Եվ անհունի ցավը կապույտ...

1977

* * *

Դրսում նորից ապրիլ է մեծ,
Եվ աշխարհում կապույտն է շատ
Ու շատ այնքան,
Ու թե նայեն տիեզերքից,
Թվա պիտի,
Թե մեր երկիրն անհունության կոպից կախված
Արտասուք է մի կապուտակ...

Ես ապրում եմ
Այդ կապուտակ արցունքի մեջ:

Դրսում նորից ապրիլ է մեծ:
Ձյունը լեռներն է նահանջել,
Մերկացել են հովիտ ու դաշտ,
Եվ թվում է,
Թե ապրիլի աղջիկը խենթ
Կարծ է հագել,
Մերկացրել սրունք ու զիստ...

Ապրիլ է մեծ ու խենթություն:
Ի՞նչ անեմ ես,
Ես, որ հիմա ոչ ջահել եմ
Ու ոչ էլ ծեր,
Ի՞նչ անեմ ես...
Եվ այն, ինչ դու ես ինձ տվել,
Ոչ կարոտ է,
Ոչ թախիծ է

Ու ոչ էլ սեր...
Ուրիշ է սա, ի՞նչ անեմ ես...

Դրսում նորից ապրիլ է մեծ:
Ու ես գիտեմ,
Որ հողի տակ
Նորից սերմերն են տառապում,
Որ արձակեն ծիլ ու ցողուն...

Ապրիլ է մեծ:

Ու զարթնում է իմ մեջ նորից
Տաք հողի հետ լուռ մխալու
Կարոտը տաք...

1977

ՍԵՊԱԳՐԵՐ

Քո աչքերը ասես սեպագրեր էին,
Անմեկնելի, խրթին սեպագրեր,
Որ հայացքիս հանդեպ այդպես լռել էին,
Իրենց առեղծվածով այդպես լռել:

Եվ ի՞նչ գաղտնիք էին նրանք իմ դեմ փակում,
Եվ ի՞նչ էին հուշում այդպես անխոս...
Ես վերծանում էի տառապանքով թաքուն
Այդ բարբառը քնքուշ ու բարբարոս...

Ես վերծանում էի սպասումի դողով,
Ես վերծանում էի խանդով մի մութ...
Ու մերթ իմն էր հույսի արշալույսը ցողոտ,
Ու մերթ իմն էր մռայլ մի մայրամուտ:

Ու մերթ իմն էր հողի շնչառությունը տաք,
Ու մերթ իմն էր հողմի շունչը ահեղ,
Մերթ ճաքճքում էին իմ շուրթերը պապակ
Ու մերթ այրվում էին հարբած ու խենթ:

Ու երբ հետո, հետո, տառապալի մի օր
Վերծանեցի գաղտնիքն այդ հին գրի,
Նա բարբառեց այսպես. «Ես՝ Շամիրամս նոր,
Նվաճեցի սիրտն այս ու մատնեցի հրի»...

1977

ԱՆԱԿՆԿԱԼ ԱՄՊՐՈՊ

Ամպը որոտաց, տեղատարափը ամեն ինչ խառնեց,
Հորդեց, որոնեց ճանապարհ ու հուն...
Եվ մայթեզրյա հին լորենու տակ կայծակը բռնեց
Ինձ ու ցողաթաց անծանոթուհուն:

Փա՛ռք քեզ, Արարիչ, լվանում էիր մոլորակն այս հին,
Որ այնտեղ մաքուր բույրերը հևան:
Ու մի պահ թվաց՝ ես ու ցողաթաց անծանոթուհին
Մենակ ենք, ինչպես Ադամն ու Եվան:

Ամպրոպը նրան բռնել, փորձել էր հագուստը հանել,
Բարակ մետաքսը ծեփել էր կրծքին...
Ու երբ ուզում էր իր առատ ու թաց վարսերը քամել,
Դառնում էր այնպես հմայիչ ու կին...

Լույսն ու խավարը մեկմեկու բացել գաղտնիք մի անեղծ,
Կայծակով էին զրուցում վերում,
Երբ փորձում էի ինքս նրա հետ նույն զրույցն անել,
Ժպտում էր թախծոտ ու նայում հեռուն:

Ու ես չիմացա, թե ինչպես լռեց այդ ամպրոպը խենթ,
Չիմացա՝ ինչպես պոկվեց նա տեղից:
Հետո լորենուց կաթկթում էին մարմրող աստղեր,
Ու կաթկթում էր մի ցողոտ թախիծ...

1979

* * *

Մայրամուտ է ու մշուշ... Այրվող ամպերն են մարում,
Վերջին ղողանջն է մարում ինչ-որ անտես մի զանգի...
Եվ հեռանաս պիտի դու, քո աչքերի խավարում
Կրակներ կան թափառիկ, որ նման են մեղսանքի:

Իսկ ես աչքերս փակել, հայտնության օրն եմ հիշում,
Երբ քո մարմինը բուրեց իբրև գինի ու ցորեն...
Գլխապտույտ կար ասես, իմ արյան տաք մշուշում
Լույսը ծունկի էր իջել ու երգում էր քրմորեն:

Ես չուզեցի իմանալ, թե ինչ՞եր ես դու ցրել,
Թե ինչ՞եր ես կորցրել ճանապարհին քո անցած,
Բայց հասկացա, որ քո մեջ մեղքը թախիծ է դրել
Եվ աչքերիդ մեջ դրել մի տառապող առեղծված:

Ես ուզեցի քո հոգին իմ մաքրությամբ մկրտել
Ու մկրտել իմ սիրո կարոտներով արարող...
Եվ ինձ թվաց բուրեցիր՝ մաքուր, որպես ծաղկի թեր,
Ու որպես ցող նախնական ու նախնական՝ որպես հող:

Եվ հեռանում ես հիմա: Շատ եմ սովոր ես ցավի,
Կորստի շատ եմ սովոր– հին սպիներս են վկան...
Բայց երբ թևերդ արնեն, երբ նորից սիրտդ ցավի,
Երբ ցուրտ լինի ու քամի, կանչիր հեռվից, ու կգամ...

1980

* * *

Եվ առեղծվածն է ինձ դեռ կուրորեն տանջում,
Եվ դեռ մինչև հիմա չեմ հասկանում ոչինչ,–
Այն մեղավոր աչքերն ինչո՞ւ են ինձ կանչում,
Եվ ինչո՞ւ եմ անդող աչքերի դեմ այս ջինջ...

Ինչո՞ւ այդպես հաճախ ճանապարհս շեղած՝
Իմ լավերին այն հեզ անփութորեն թողի
Եվ տենչացի նրանց, որ մեղավոր եղան
Ու մատնեցին հոգիս խենթ ու խռով դողի:

Ինչո՞ւ չթովեցիր հովիտների շուշան,
Ինչո՞ւ չկանչեցիր մանուշակի թախիծ,
Եվ մոգեցիր դու ինձ անդունդի մոտ բուսած
Հրաբուխի կարմիր, վտանգավո՜ր ծաղիկ...

...Թեև տառապանքից արդեն հոգնել եմ շատ,
Եվ իմ սերը պիտի խոնարհ ու հեզ լիներ,
Բայց ողջո՜ւյն ձեզ կրկին, օրհնությո՜ւն ձեզ ու փառք,
Մեղավորներ, չարեր, գնչուհիներ...

1980

ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

Իմ կրակները դանդաղ կմարեն,
Իսկ քո աչքերը կմնան շողուն,
Ու մի օր հանկարծ ես կնշմարեմ,
Որ ինչ-որ մեղքից ձեռքերդ են դողում:

Հետո կնայեմ աչքերին քո ջինջ,
Որ կխոնարհվեն նույն մեղքի դողով,
Չեմ հանդիմանի, չեմ ասի ոչինչ,
Մենակ ու տրտում դուրս կգամ փողոց...

Ու ցուրտ կլինի, կլինի քամի,
Խուլ կհառաչի փողոցը խավար,
Ես մթան միջով ու տարաժամի
Կտանեմ իմ սիրտն ու սերն իմ ցաված:

Հանկարծ կձյունի երկինքը մթին,
Եվ քամին հանկարծ կփոխվի հողմի,
Նա ձերմակ թաթը կդնի սրտիս
Ու բիրտ քնքշանքով ցավս կմեղմի:

Ոչ ոք չի տեսնի իմ երթը տխուր
Գիշերվա միջով ցուրտ ու ամայի,
Եվ հողմը միայն ոռնոցով իր խուլ
Հետքերիս վրա տխուր կվայի...

1981

ԱԿՆԹԱՐԹ

Ամռան օր է, ժայռեր են տաք,
Ամռան օր է ու շոգ...
Իսկ ձորի մեջ, ծառերի տակ՝
Գետի արծաթ խշշոց:

Եվ կածանն ինձ ձորն է տանում,
Հասնում է զով գետին,
Նայում, սակայն չեմ հասկանում
Տեսիլք է սա, թե կին...

Կանգնել է նա մերկ ու ցողոտ,
Քամում է վարսն իր սև,
Ստինքների թեթև դողով
Մաղում գորով ու սեր:

Ինձ տեսնելով ահից ճչում,
Մեջքն է ճկում բարակ,
Գետի մաքուր ալիքներում
Նա՝ տագնապած կարապ...

Ձեռքերն իսկույն խաչ է անում
Թրթռացող կրծքին,
Նա՝ վախվորած անմեղ մանուկ,
Նա՝ մեղավոր, նա՝ կին...

...Պա՜հ էր լոկ դա, վայրկյան էր լույս,
Ակնթարթ էր դա կարճ,
Բայց աշխարհը ոտից գլուխ
Ուրի՜շ դարձավ հանկարծ...

1981

ԳԱՐՈՒՆ

Գարո՛ւն, արբունքահաս աղջկա պես
Դու գալիս ես ահա ոտաբոբիկ,
Քամին պատառոտել քող ու զգեստ
Քո զիստերն է բացել ու կուրծքը պիրկ:

Գարո՛ւն, մենության մեջ իր անձավի
Մի կախարդ է ապրում, հոգնած մի մոգ,
Քնքշության է այնպես նա ծարավի
Ու ծարավի այնպես շնչին քո տոթ:

Կար ժամանակ, գարո՛ւն, այդպես գալիս,
Իսկույն նրան էիր դու այցելում,
Նրա կրծքին ընկած անուշ լալիս
Ու ծիծաղում էիր, չա՛ր այցելու...

Այսօր ծաղիկներով քո ծիծաղի
Անցար, չնայեցիր անգամ վրան,
Ասիր՝ ձերմակել է, էլ ի՞նչ ծաղիկ,
Էլ ի՞նչ քնքշանք է պետք կյանքում նրան:

Գարո՛ւն, հիմար աղջիկ, դեռ մի գնա,
Տես, կանչում է նա քեզ, ձեռքով անում...
Եվ ի՞նչ անի, ասա, ի՞նչ անի նա,
Որ ձերմակել, սակայն չի ծերանում...

1981

ԵՐԵՎԱՆ, ԻՆՁ ՆԵՐԻՐ

Երևան, ինձ ներիր, ինձ ներիր, Երևան,
Որ թողած սրբատաշ հրաշքներն այս քարի,
Որոնեմ այն մայթերն ու փոշին նաիրյան,
Որ Չարենցն է երգել ու երգել Մահարին:

Որ թողած լույսերում պողոտա ու մայթեր,
Ես գնամ, մոլորվեմ գիշերում քո այն կույր,
Որոնեմ այն հին բակն ու դռնակն այն փայտե,
Որ իմ դեմ աշխարհի լույսն ու բախտն էր փակում:

Որոնեմ ջրերում փշրված լուսնկան
Ու լսեմ գիշերով հեկեկանքը թառի,
Մահու չափ կարոտեմ ծամավոր աղջկան,
Ու սրտիս անամոք թախծությունը թառի:

Որ մորմոք խառնվի իմ հացին ու գինուն,
Հեկեկա գիշերվա մայթերում ամայի,
Հասկանամ, որ կյանքում սերը մեկն է լինում
Ու միակն է լինում կյանքի պես ու մահի...

1981

ԿՈՐՈՒՍՏ

Ինչո՞ւ հիշեցի, ու ինչո՞ւ այսպես
Կարոտներիս մեջ ցոլաց նա կրկին...
Անտառ է, բացատ, խոտի տաք մի դեզ,
Ու դեզին պառկած ոսկեգույն մի կին:

Նա իմ հայացքին հանկարծ հանդիպած,
Նայում է երկար ու նայում է խոր...
Փակում է դանդաղ նա զիստերն իր բաց
Ու հետո ժպտում մեղմ ու մեղավոր:

Թարթիչների տակ, շուքի պես ընկած,
Ինչ-որ մի կապույտ թախիծ է լռում,
Իսկ աչքերի մեջ՝ լույսով բռնկած
Զույգ արտույտներ են ասես թրթռում:

Ու կայծեր կան նենգ, խայծեր կան անքող
Այդ թրթռոցի լույսերում վերին...
Երևի պիտի վայրի հայացքով
Նշան բռնեի զույգ արտույտներին:

Բայց մուժ է, աշուն... Նստել անհամար
Իմ կորուստներն եմ հաշվում ես կրկին...
Կորուստներիս մեջ՝ անտառ է, ամառ
Ու դեզին պառկած ոսկեգույն մի կին...

1981

* * *

Թվաց, գիշերվա հողմի մեջ ահեղ
Լսեցի հանկարծ ձայնդ հեռավոր,
Ձայնդ, որ ասես սոսափյուն էր մեղմ
Ու մի քիչ ցավոտ, մի քիչ մեղավոր...

Երևի այդպես քնքուշ ու ցավոտ
Հովերն են երգել լքվող դրախտի...
Ի՞նչ իմանայի, որ քո մեղմ ձայնով
Շաչում է վրաս սուլոցը բախտի:

1981

* * *

Դու կհեռանաս, ու թղթերիս մեջ
Երգեր կմնան տխուր ու ցավոտ,
Երգեր՝ կարոտի արցունքների պես,
Ու երգեր, որպես տրտմության աղոթք:

Գուցե փառք բերեն այդ երգերը ինձ,
Սակայն առանց քեզ ինչպե՞ս այն կրեմ,
Փառքի ծիրանին ինձ պետք է, հոգիս,
Որ ես քնքշորեն ոտքիդ տակ փռեմ...

1983

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԹ

Տխուր էի ես... Իսկ փողոցներում գիշերվա քամին
Ինչ-որ մոռացված երգ էր նվագում...
Չգիտեմ ինչու հանկարծ այդ ցրտին ու տարաժամին
Ուզեցի տեսնել աչքերդ մաքուր...

Աչքերդ ու քեզ, որ աղջիկ էիր վայրի ու բարակ,
Քեզ, որ խուսափող խաղ էիր ու բոց,
Քեզ, որ հոգուս մեջ ծավալվում էիր որպես պատարագ
Ու ապրում որպես սրբություն սրբոց:

Քեզ, որ ողջ կյանքում տարա իբրև ցավ, իբրև առեղծված
Ու պահ տվեցի իմ երազներին,
Եվ նման դարձար մեր մատյաններում հավիտյան լռած
Ու չվերծանված մեր հին խազերին:

Գինով էի ես... Ու իմ կարոտը հեծկլտում էր խուլ,
Այրվում էր իբրև ծարաված մի տենդ,
Բայց քամին հանկարծ ճակատիս դրեց մատներն իր տխուր
Եվ ասաց՝ այդ ո՞ւր, իմ հիմա՜ր, իմ խե՜նթ...

Ինչո՞ւ ես խառնել երկինք ու գետին, կրակ ու մոխիր,
Ինչո՞ւ ես խառնել վայրկյան ու տարի,
Դու մոռացե՞լ ես, թե նրան այդ երբ ու որտեղ թողիր
Այդպես գեղեցիկ ու այդպես վայրի...

Լսիր, ասացի, չկա ժամանակ ու չկա տարի,
Կա միայն վայրկյան, կա թախիծ ու թույն,

Կա միայն կարոտ, կա միայն ծարավ, կա տենդ մի վայրի,
Ու կա աստղային մի հավերժություն:

Հարբած էի ես... Ու գնում էի աստղերի միջով,
Ու ինձ հետ էր նա վայրի ու բարակ,
Եվ թեև քամին հետքերս էր ջնջում մի չար քրքիջով,
Բայց և հնչում էր մի սուրբ պատարագ...

1983

* * *

Ես բաց եմ ապրել ու սիրել եմ բաց,
Եվ սպիներ կան դրանից սրտիս...
Իսկ քեզ մոտ եկա արդեն տառապած
Ու սերտած սիրո խորհուրդը խրթին:

Միամիտ էի, ինձ տանջում էին,
Հիանում վերքիս գեղեցիկ ցավով,
Խուսափում էին ու կանչում էին
Ու ժպտում էին մեղմ ու հանցավոր:

Ես գնում էի նրանց հետքերով,
Խենթանում էի ու հարբում էի,
Հարբելիս դառնում բարի ու ներող
Ու ներումներից տառապում էի:

...Դրսում մայրամուտն ամպեր է բարդել,
Շուտով գիշերը կիջնի հարավի...
Հասկացի՛ր, հոգիս, հոգնած եմ արդեն
Ու քնքշության եմ միայն ծարավի...

1983

* * *

Գիշերն այս մութ ու խորհրդավոր է՝ որպես բնազդ,
Ու բնազդի պես՝ տագնապահար...
Վերում ծայրեծայր իր սպին գծեց հրե մի աստղ,
Ու նորից մութ է, նորից խավար:

Փակում աչքերս ու մտորում եմ աստղի մասին.
Ինչո՞ւ բռնկվեց, ինչո՞ւ հանգավ...
Եվ հանկարծ ողջը թվում է այնպես դատարկ ու սին,
Այնպես անմիտ ու այնպես անկապ:

Ես սարսափում եմ ու սպասում եմ լուսաբացին՝
Քո տաք քնքշանքը աղերսելու,
Աղերսելու քո ոսկե մարմինը, նման հացի,
Աղերսելու քեզ ու ասելու.

– Գնա՛նք, ես հեռվում մի հովիտ գիտեմ, մի տաք քարափ,
Նա արևոտ է, որպես եդեմ...
Բայց դու վարանես, տագնապես պիտի, իմ թուխ կարապ,
Ու պիտի չգաս, ես այդ գիտեմ:

Պատուհանիս տակ լուռ կծկվել է գիշերը սառ
Ու մղկտում է, որպես կսկիծ...
Դու պիտի չգաս... դու քնած էիր ու չտեսար
Ոչ այդ անկումը, ոչ այդ սպին...

1983

ԱՍՏՎԱԾ ՔԵԶ ՊԱՀԻ

Հիշում եմ հիմա,
Դու այն երեկո ուրիշ էիր շատ,
Դու այն երեկո շատ էիր նման
Մի չակնկալված
Ու հանկարծ ծնված բանաստեղծության:

Դու այն երեկո արյան կանչ էիր,
Արյան ամոթխած արարողություն
Ու փոքրիկ ձեռքի վախվորած քնքշանք:

Գլուխդ ուսիս՝
Դու ուսիս իջած փառքի պես էիր,
Դու փառքի նման բաղձալի էիր
Ու վտանգավոր:

Դու նման էիր ելած ալիքի,
Եվս մի վայրկյան՝
Ու թվում էր, թե փշրվես պիտի
Իմ ծարավների ավազի վրա:

Հետո երազում
Մենք քայլում էինք վիհերի եզրով,
Որ բաղձալի էր ու վտանգավոր:
Ու ես երազում դողում քեզ համար
Եվ մի խոսք էի միայն շշնջում.
– Աստված քեզ պահի...

1983

* * *

Քաղաքը թողինք,
Թողինք ներքևում տրտմությունը գորշ,
Իսկ այնտեղ արև, ծաղիկ էր ու ձյուն,
Ձնհալի մեջ էր լեռնաշխարհը ողջ,
Լեռնաշխարհը ողջ
Դարձել էր ասես հսկա մի արցունք...

Դու ինձ հետ էիր,
Դու՝ մոտիկ, անհաս, անհասկանալի,
Ու մատներս էին քնքշանքից ցավում:
Ձորում գետակը հորդել ձնհալից,
Քեզ պես՝
Չգործած իր մեղքն էր քավում...

Մեր գլխի վրա՝ կապույտն անհունի,
Մեր ոտքերի տակ ահն էր խորության,
Ու չգիտեի,
Ո՞ւր է սահմանը ծաղկի ու ձյունի,
Սահմանը ցավի ու երանության...

Ամեն ինչ պարզ էր,
Ամեն ինչ՝ խրթին ու մութ մի հարցում,
Եվ չկար նորից ոչ սկիզբ, ոչ վերջ...
Լեռնաշխարհը ողջ
Դարձել էր ասես հսկա մի արցունք,
Ու կանգնած էինք մենք արցունքի մեջ:

1983

ՈՐՄՆԱՆԿԱՐ

Տաճար է ավեր, տապալված կամար,
Պատին՝ ծեփաթափ մի Աստվածամայր...

Վարսի մի հյուսկե, զույգ աչքեր են ջինջ,
Ուսի մի բեկոր և ուրիշ ոչինչ:

Ես տեսիլներիս գույները վառում
Ու եղծանվածն եմ նորից նկարում:

Քնքշորեն կորվող ուսն Աստվածամոր
Զարդարում եմ ես ոսկե մի ծամով:

Սրբազան դողով կուրծքն եմ նկարում,
Քողի տակ պահած գորով ու գարուն:

Այնպես եմ անում, որ մատներն ի վար
Քնքշություն կաթի ու շող մի շվար:

Եվ ոտքերի տակ՝ տապալված քարեր,
Հերքված աստվածներ, մամռոտած դարեր,

Քնած մրրիկներ, հողմեր մոլեգին,
Քայլում է ահա հողեղեն մի կին...

1983

* * *

Ու ես գիտեմ,
Պիտի անվերջ
Կանչես այդպես ու հեռանաս,
Պիտի անվերջ թվաս մոտիկ,
Բայց և հավետ լինես անհաս:
Լինես ծարավ
Ու ոգու քաղց,
Տագնապի պես ինձ հետ թևես,
Մերթ ինձ այրես պիտի տենդով
Ու մերթ վրաս լուռ անձրևես...
Պիտի անվերջ
Քո կարոտի
Հրաշք-հավքը վրաս հսկի
Ու թևերից իր կապուտակ
Պիտի մաղի ցավ ու կսկիծ...
Ու ես քայլեմ պիտի անվերջ
Գլխապտույտ վիհի ափով,
Հարբած լույսով,
Մութով հարբած,
Հարբած սիրով ու տագնապով...
Կարոտներով ու ցավերով
Ճանապարհս պիտի ցողեմ,
Բայց և հավետ,
Բայց և հավետ
Օրհնանքներով քեզ ողողեմ...

1977

ՊԱՀԸ

Եթե իրավ է, որ այս աշխարհում չի կորչում ոչինչ,
Եթե իրավ է, որ չի մահանում ժամանակն անգամ,
Ուրեմն դեռ կա, դեռ թրթռում է այն գիշերը ջինջ,
Ու ցոլցլում է դեռ այն լուսնկան:

Եվ կա այն տղան, որ ոտքից գլուխ տագնապ էր ու դող,
Ու աղջիկն այն կա, կոպին՝ անհայտի արցունքը բյուրեղ,
Ու կա պահն այն սուրբ, երբ այդ պատանու շուրթերն աղոթող
Սիրտ չէին անում նրան համբուրել:

Կապույտների մեջ ալեվետում է ուրիշ մի կապույտ,
Աստղալույսի մեջ ուրիշ աստղերի զնգոց է հոսում,
Կապույտի, բարդու և աստղալույսի շշուկով մաքուր
Ինքը՝ գաղտնիքն է ասես սաղմոսում...

Լսո՞ւմ ես, տղա, դու մնա այդտեղ, դու առաջ չգաս,
Դու մնա այդտեղ քո դողով, լույսով, տագնապով քո լուռ,
Վարանիր այդպես ու չհամբուրես դեռ այն աղջկան
Ու դեռ չբացես նրա կուրծքը սուրբ:

Իսկ ես կգնամ... ինձ մրրիկներն են սպասում ծամփին,
Ճերմակ հողմեր են սպասում հեռվում, որ հոգիս խանձեն,
Որ խլեն ինձնից այդ տագնապը, դողն, այդ գաղտնիքն անբիծ
Ու թողնեն հետո այս պարապն անձև:

Եվ կգա մի օր, գիտեմ, հեռու չէ այդ օրը արդեն,
Ու քեզ կկանչեմ, որ դու գաս դողով այդ հրաշք պահի,
Որ կոպերիս տակ, իբրև սրբազան ու միակ պարգև,
Ես այդ սուրբ պահը տանեմ աշխարհից:

1983

ԵՐԿԻՐ
ԳԱՂՏՆԱՐԱՆ

Ես՝ քարեղեն մոլուցք, ձյունահողմի գանգատ,
Ծաղկաթերթի թախիծ ու մամուռի արցունք...

ԵՐԿԻՐ, ՔԱՐԻ ՄՈԼՈՒՑՔ...

Երկի՛ր, քարի մոլուցք ու մոլեգնած դու ջուր,
Երկի՛ր, սեզի սոսափ ու կապույտի սահանք,
Աստծուն խոյահարող լեռան քարե եղջյուր
Ու զղջացող վիհի քարե ապաշխարանք:

Երկի՛ր, ձյունահողմի ձերմակ ու ձիգ գանգատ
Եվ անդունդներն ընկած մրրիկների հարցում,
Երկի՛ր, քարափն ի վար ջրի կապույտ զանգակ,
Ծաղկաթերթի թախիծ ու մամուռի արցունք:

Երկի՛ր, պղնձի ձիչ, որձաքարի հառաչ
Եվ խաչքարին խաչված գեղեցկության աղերս,
Երկի՛ր, արեգակի ու անհունի առաջ
Դու ծնկածալ աղոթք, վեր խոյացող դու ծես:

Երկի՛ր, որդին եմ քո, դար ու դարեր անկանգ
Ես գնում եմ քեզ հետ ճամփիս վիհ ու բարձունք,
Ես՝ քարեղեն մոլուցք, ձյունահողմի գանգատ,
Ծաղկաթերթի թախիծ ու մամուռի արցունք:

1971

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Անդունդներդ ի վար ու վիհերդ ի վար փլչող բարձունքի,
Քարանձավներիդ երակներն ի վար քամվող արցունքի,
Նահատակներիդ սրբության վրա ծխացող խունկի
Հին տառապանքը, այս հին մխանքը տվեցիր դու ինձ:

Չորս կողմից եկող մրրիկների մեջ հողմահարվելու,
Ապառաժներիդ ու լեռներիդ պես անբոց այրվելու,
Շեկ հողերիդ հետ պատառոտվելու ու ծարավելու
Այս տվայտանքը, այս դժվար կյանքը տվեցիր դու ինձ:

Լուսնկայի տակ տխրորեն թևող անտունիների,
Բեկված խաչքարի, փլված կամարի, խախտած սյուների,
Գարնան կանաչի ու ծաղկի վրա իջած ձյուների
Այս թախծությունը և խստությունը տվեցիր դու ինձ:

Որձաքարերիդ ու սարերիդ հետ անձայն տոկալու,
Հոգսը՝ ակոսին, ցավը՝ սյուների խոյանքին տալու,
Արշալույսի դեմ ծունկի չոքելու և հավատալու
Այս տառապագին հարստությունը տվեցիր դու ինձ:

1971

* * *

Ասում են հեռու Եփրատն է մի օր
Օրորել մանուկ իմ հոգու քունը,
Արագիլների կանչը սգավոր
Ու կապույտ իրիկունը...

Մեր ասպատակված, մեր հին հարկի տակ
Ոչ մի երեկո կրակ չեն վառել,
Ու լուսինն է լոկ լույսն իր սպիտակ
Մեր երդիկն ի վար տխրորեն մաղել:

Ձգվել է գիշերն ու ձգվել երկար,
Խուլ խշշացել է ջուրը Եփրատի,
Լոկ նա է խախտել լռությունը քար
Ու յոթնապատիկ անեծքն իմ տատի:

Տանիքի վրա օրորվել է մեղմ
Հրդեհից փրկված մենավոր բարդին,
Ու վիշտ, վիշտ է խառնված եղել
Դեռատի իմ մոր անարատ կաթին:

Հեռո՜ւ է, ո՞րբ է այն տունը... Ու միշտ
Գիշերով ցավն է զարթնում իմ հոգում.
Այդ դո՛ւ ես, դո՛ւ ես, հայրենի իմ վիշտ,
Երակներիս մեջ այդպես մորմոքում...

1947

ՀԱՅՐԵՆԻՔ

...Եվ թվում է ինձ՝ աղջամուղջի մեջ այն վաղնջական
Բարբառել մի ձայն, այսպես է ասել ձայնն այդ բարբառող.
– Այստեղ քար է բիրտ, անդունդ է մթին, վիհեր են անկման,
Արի քեզ տանեմ ես ուրիշ մի հող:

Արի քեզ տանեմ մի ուրիշ աշխարհ, հեռավոր դաշտեր,
Ուր հողը փափուկ, ուր ջուրը առատ ու խոտն է թավիշ...
Իսկ ես ասել եմ. – Այստեղ եմ ծնվել, կմնամ այստեղ,
Թեկուզ կաղկանձեմ ու ոռնամ ցավից...

Նախ քարանձավ էր... Ու ես առաջին խարույկիս բոցով
Որձաքարերի վայրենությունն եմ քնքշորեն շոյել,
Հետո կայծքար եմ առել ու նրա տխուր զնգոցով
Երազանքներս եմ պատերին փորել:

Ժայռերի վրա արյունոտվել են ոտքերն իմ բոբիկ,
Լեռնալանջերի մրրիկները ցուրտ իմ կուրծքն են վառել,
Եվ իմ բարբառը արձագանքելով քարերի մեջ բիրտ,
Ինչ-որ քարեղեն զնգոց է առել:

Այդ բիրտ բարբառով, երկի՜ր, քնքշանք եմ քեզ շշնջացել,
Քնքուշ անուններ տվել ծառերիդ ու թռչուններիդ,
Իմ հոգում նիրհող առասպելների ծալքերը բացել,
Կապույտ եմ հանել, կախել վիհերիդ:

Քո մերկ ժայռերին իմ երազների կանաչն եմ հինել,
Սրտիս հառաչն ու հոգուս շառաչն եմ խառնել գետերիդ,

Հորինել եմ ես գեղեցիկ ու մերկ աստվածուհիներ,
Շնորհել լազուր ու սուրբ եթերիդ:

Թախիծ եմ դրել սոսափյունի մեջ քո բարակ ուռու.
Առեղծվածների մշուշով լցրել այրերդ խավար,
Լուսնի լույսի հետ որպես հմայիլ ու որպես հուռութ
Բաղձանք եմ կախել քարափներդ ի վար:

Ես ոգիներ եմ դրել փչակում քո կաղնիների,
Սոսյաց անտառում հմայողների հանդես եմ բացել,
Հողիդ եմ տվել ես աձյունները իմ նախնիների,
Եվ մայրացել է հողն ու հայրացել:

Ու երբ եկել են, որ խլեն ինձնից լեռնաշխարհն այս լուրթ,
Խոցվել եմ հաձախ ես ոսոխների նետ ու նիզակից.
Արյունս կաթ-կաթ ծծվել է հողում, և այս հողը սուրբ
Դարձել է այդպես ինձ արյունակից...

Ու երբ նորից է բարբառել հեռվից ձայնն այդ հմայող,
Ու երբ նորից է խոստացել չքնաղ ու կանաչ ափեր,
Ասել եմ նրան.– Չկա այսպիսի հայրենիք ու հող,
Քանզի այստեղ եմ արյունս թափել:

Այս հողին եմ ես դարեդար խառնել արցունք ու կարոտ,
Խառնել տառապանք, հրաշք եմ խառնել ու խառնել ոգի,
Որ երբեք, երբեք չթողնեմ կյանքում երկիրն այս քարոտ
Ու երբեք, երբեք չտամ ոչ ոքի...

1979

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ

Ծղրիդը բռնել ամռան արևի հրեղեն մի թել,
Երգի է փոխում ու հետ առաքում...
Երկրպագության սրբազան դողով ծունկի է իջել
Մի պղնձաշուրթ, լուսաբառ մի քուրմ...

Պղինձ ու բրոնզ... Կռվից են դարձել ռազմիկներն արի,
Որ արծվաքիթ են, թուխ են ու խայտակ,
Հոնքերին՝ փոշի, իսկ հագուստներին դեռ երիվարի
Երախից պոկված փրփուրներ կան տաք:

Նորաթուխ հացի բուրմունք է, օրհնանք, ծփանք է ու ծուխ,
Իսկ գավաթներում գինու բոց ու եռք...
Խրախճանում են ռազմիկներն արի... Եվ հարձերն են թուխ
Նրանց ծնկներին նազում կիսամերկ:

Որտեղ եմ տեսել... Ծանոթ են այնպես այս դեմքերն ամեն,
Ծանոթ ծիծաղ է ու ծանոթ թախիծ:
Այնպես է թվում, որ եթե երկար ու անթարթ նայեմ,
Կարող եմ գտնել անգամ ինքս ինձ:

...Ծղրիդը բռնել ամռան արևի հրեղեն մի թել,
Ձգում է երկար ու հավերժորեն:
Ձքացած տեսիլք: Ածխացած աղյուս: Ածխացած պատեր:
Կարասների մեջ՝ ածխացած ցորեն:

Դարեր են անցել, թե՞ ակնթարթ ու վայրկյան է թևել
Արարատ լեռան լուռ հայացքի տակ...
Եվ մանուկներ են բարձրանում ահա շեկ բլուրն ի վեր,
Որ արծվաքիթ են, թուխ են ու խայտակ:

1979

ՃՆՃՂՈՒԿԸ

Ծիծառների մասին այնքան
Լավ երգեր կան գրված,
Ես ինքս էլ եմ հազար անգամ
Փառաբանել նրանց:

Բայց երբ աշնան քամին սուլեց,
Ամառն իր հետ տարավ,
Նրանք թողին բներն իրենց
Ու չվեցին հարավ:

Նրանք դժգոհ հեռու թռան՝
Որոնելու նոր սեր
Ու չուզեցին ինձ հետ ձմռան
Ցյունն ու ցուրտը կիսել:

Բայց դու, իմ հեզ, խիզախ թռչնակ,
Չվախեցար ձյունից,
Չչվեցիր ափերը տաք,
Քո հայրենի բնից:

Գուցե հիմա դու չես գտնում
Ոչ մի փշուր, հատիկ,
Ու դողում են, դողում ցրտից
Քո ոտքերը բոբիկ:

Սակայն դու ես մարդկանց համար
Գարնան երգը երգում,
Թեկուզ և չես փառաբանված
Ինքդ ոչ մի երգում:

1955

ԵՍ՝ ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՍ՝ ՔԱՐԵ...

Իմ լեռները աստղամերձ խենթ խոյանքներ են հոգուս,
Որ փոթորկել են ցավից ու կապույտում քարացել,
Եվ անդունդներն իմ մթին գաղտնարաններն են ոգուս,
Ուր դարերով ցասումիս հեղեղներն են շառաչել:

Հազար կայծակ իր շեղբով իմ գոյությունն է հերքել,
Ու Եփրատն իմ սանձակոծ դուրս է եկել իր ափից...
Տաղերգուներն իմ նստած այնքան եղեռն են երգել,
Որ մագաղաթը անգամ դժգունել է սարսափից:

Բայց, Արարա՛տ, կատարիդ ցոլցլանքներն այն մաքուր
Իմ հույսերն են դարավոր, որ չեն մարել երբևէ,
Եվ դարերի խավարից սեգ արծիվներն իմ հոգու
Վերացել են ու դեպի այդ ցոլանքներն են թևել:

Ու ես ապրել եմ նորից, կերտել շեներն իմ թափուր,
Ստեղծածիս վեհությամբ իմ վեհությունն եմ չափել
Եվ օրորել սրտիս մեջ Սևանա լիճն իմ կապույտ,
Որպես հույսի ու լույսի նվիրական առասպել:

Եվ դարերով տառապած ու կործանված, ու ավեր,
Վերջին եղեռն եմ տեսել ես աչքերով դեռ իմ թաց,
Երբ իմ բախտի երկնքում լուսնի մահիկն էր կախվել,
Որպես ջարդի յաթաղան, որպես անեծք շիկացած:

Բայց լեռներն իմ աստղամերձ խենթ խոյանքներն են հոգուս,
Որ փոթորկել են ցավից ու կամքի պես քարացել,

Եվ անդունդներն իմ մթին գաղտնարաններն են ոգուս,
Որ նորածին լույսերի օրորոցներ են դարձել:

Ու ես ելել եմ նորից, կերտել շեներն իմ թափուր,
Ստեղծածիս վեհությամբ իմ վեհությունն եմ չափել...
Ես՝ Հայաստան, ես՝ քարե, ես՝ հրագույն, ես՝ կապույտ,
Ես՝ հարության առեղծված, հավերժության առասպել...

1946

* * *

Դու փոքրիկ ես, իմ աշխարհ,
Հայաստան իմ, Հայաստան,
Մի բուռ հող ես, մի բուռ քար,
Հայաստան իմ, Հայաստան...
Բայց քո մի բուռ այդ հողում
Ու քո մի բուռ քարի մեջ՝
Քանի բարձունք ու կատար,
Հայաստան իմ, Հայաստան...

1956

ԵՐԳՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Լույս է շաղում եղեգան փողն ու թրթռում վինը գողթան,
Եվ վարձակներն են կաքավում հեզաձկուն ու նազանի...
Բուրմունքի պես խոնավ հողի ու ծխի պես հայրենի տան
Ձգվում է երգն իմ փառավոր, իմ դարավոր Հայաստանի:

Պանդուխտն ահա մախաղն առած, շրջում է հեգ օտար հողում,
Երկիր չվող ծիծեռնակին տալիս կարոտն իր, որ տանի,
Ճինականի երդիկն ի վար ամպն իր տխուր լացն է ցողում,
Ու վերքի պես երգն է մխում իմ վիրավոր Հայաստանի:

Մոկաց հարսներն են շորորում՝ աչքերը սև, հոնքերը կեռ,
Լուսնյակ գիշեր... Ոսկե արտում ջահել հնձվորն, ախ, ի՞նչ անի,
Հարսն իր ֆիդան յարին հիշել՝ ձեռքը ծոցին երգում է սեր,
Ու սիրո պես երգն է վառվում իմ սիրավոր Հայաստանի:

Սասնա պարթև ծռերի պարն ասես մրրիկ է սանձակոծ,
Ու ռամկական ահեղ պարից թնդում են թունդ տուն ու տանիք,
Մերթ փոթորկված անտառի պես, մերթ որպես թեժ օջախի բոց,
Երգն է շաչում ու շառաչում իմ թևավոր Հայաստանի:

Աշնան ոսկին է հրդեհվում այգիներում Արարատյան,
Դեպի կապույտն է երկարում ծիրանի ծուխն իմ ծխանի,
Ու ծխի հետ հայրենի տան ձգվում է երգն հավերժության
Իմ վիրավոր, իմ սիրավոր, իմ հին ու նոր Հայաստանի:

1950

ՁՎԱՐԹՆՈՑԻ ԱՐԾԻՎԸ

Տապալված սյուներ, որմեր հողմածեծ
Ու քանդակազարդ բեկորներ քարի,
Որ հրաշագործ նախշերում իրենց
Դեռ պահպանում են շունչը հանճարի:

Եվ այդ տապալված հրաշքի վրա,
Որմերի վրա հին ու փառահեղ,
Իր արքայական թևերը փռած,
Քարե մի հզոր արծիվ է թառել:

Քարե մի արծիվ, որ իր թևերին
Տաճարի վսեմ գմբեթն է պահել,
Պահել մեր ոգու թռիչքը վերին
Ու ժամանակի ծանրությունն ահեղ:

Հողմեր են եկել, հողմեր են անցել
Ու այս որմերն են ծեծել դարեդար,
Շատ խոյակ ու սյուն փոշի են դարձել,
Բայց մնացել է արծիվն անվթար:

Ու հպարտ թառած՝ հայացքն անհանգիստ
Հառել է ահա հեռո՜ւ, շատ հեռո՜ւ,
Կարծես հենց նոր է իջել ճախրանքից
Ու պատրաստվում է նորից ճախրելու...

Լսիր, շաչում են թևերը նրա,
Կանչում է նրան երկինքը անծիր...
– Ճախրիր, սավառնիր, սլացիր հպարտ,
Հայոց հանճարի սրաթև արծիվ:

1954

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Մարտիրոս Սարյանին

Արև, արև, ու կապույտում
Բարդիներ կան արևավոր,
Արև, արև, ու կապույտում
Արարատ լեռն է փառավոր,
Արև, արև, ու իմ դիմաց
Հրաշքի պես ահա բացվում
Իմ օրրանը, իմ հայրենին,
Իմ Հայաստանն է տարածվում...
Փռվում է դաշտն Արարատյան
Դեղձիների անուշ հոտով,
Ողկույզների մեջ մեղրացող
Իր կեսօրվա ոսկե տոթով,
Իր նորաթուխ հացի բույրով,
Ճամփեզրյա իր օշոշով,
Թոնիրների կապույտ ծխով
Ու կալերի ոսկե փոշով,
Իր մրգերով, իր բերքերով,
Աշնանային թուխ հերկերով,
Այգիների մեջ ոլորվող
Կոմիտասյան իր երգերով...
Արև, արև, ու լույսի մեջ
Ահա լեռները կապուտակ,
Որ կարծրացել են դարերի
Ու շանթերի հարվածի տակ:
Ժայռերն ահա, որոնց շուրթից

Խոլ ջրվեժներ են որոտում,
Տեսիլների պես ոսկեղեն
Ծիածաններ թողած օդում,
Ու ժայռերի քարե կրծքին,
Թերթերի մեջ հակինթ ու ցող,
Անմոռուկներ, տերեփուկներ
Ու կակաչներ բոցկլտացող,
Ամպեր՝ թեթև ու սպիտակ,
Արահետներ՝ ոլոր ու կեռ,
Եվ անդունդները անհատակ,
Որպես հսկա սրի հետքեր...
Արև, արև, ու արևի
Ցոլանքների մեջ հուրհրան՝
Կյանքի պես թանկ մի հայրենիք,
Արյան պես սուրբ մի օրրան...

1954

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Հավատում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ,
Քեզ, որ լեռներում այս բարձրիկ ու լուրթ
Ապրել ես դարեր, դարեր մաքառել
Եվ քո կրակը միշտ վառ ես պահել...
Քեզ, որ առաջին հասկն ես սերմանել,
Քեզ, որ առաջին գինին ես քամել,
Լույսի դեմ չոքել հեթանոսորեն,
Փառաբանել ես ողկույզ ու ցորեն,
Քեզ, որ կերտող ես դարերում եղել,
Քարեր ես ձևել, ժայռեր ես պեղել,
Քարի քար խղճից հանել ես բարին,
Ազնվությունդ տվել խաչքարին
Եվ քո վաստակով, քո կոթողներով,
Քո մատյաններով, սիրո տողերով,
Գողթան երգերով, խորունկ վերքերով
Եվ խոյանքներով քո լույս հանճարի
Կանգնել ես դարեր սրի դեմ չարի...

Ցեղեր են եկել, արշավել ցեղեր,
Քո արդար ու հին արյունն են հեղել,
Ասպատակել են ու ջարդել են քեզ,
Դարեր ու դարեր աղարտել են քեզ,
Բայց դու Նարեկով ինքդ քեզ զտել,
Քո սուրբ հարության հրաշքը գտել
Եվ քո վաստակով, քո կոթողներով,
Քո մատյաններով, սիրո տողերով,
Գողթան երգերով, խորունկ վերքերով

Եվ խոյանքներով քո լույս հանձարի
Հասել հողմերին այս ահեղ դարի:

Հավատում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ,
Քեզ, իմ տառապանք, իմ խորին խորհուրդ,
Քեզ, որ Դեր-Զօրի խորշակով կիզված,
Եվ այդպես ցրիվ, և այդպես կիսված,
Ապրեցիր նորից, նորից տևեցիր,
Դեպի երազդ նորից թևեցիր,
Հավատում եմ քեզ, քո արմատներին,
Քո հոգու թաքուն խորխորատներին,
Բիրտ ու բարբարոս քո կարծրությանը,
Խոնարհ ու փխրուն քո թախծությանը,
Քո հին արյանը, քո արյան կանչին,
Քո հզոր լեզվին՝ մեծասքանչին,
Քո մաքուր գինուն, քո արդար հացին,
Հարատևության քո առեղծվածին...

Գիտեմ, այս դարի հողմերում վրդով
Դարերից բերած խորին խորհրդով
Քեզ պիտի նորից Նարեկով զտես,
Խաչքարիդ ազնիվ լույսով մկրտես,
Ջրդեղես պիտի Չարենցյան հրով
Ու քո վաստակով, քո կոթողներով,
Քո մատյաններով, սիրո տողերով,
Քո մաքուր գինով, քո արդար հացով,
Հարատևության քո առեղծվածով
Հավերժես պիտի լեռներում այս լուրթ,
Հավատում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ...

1954-81

* * *

Քարե մրրիկն է այստեղ ննջում թևերը ծալած,
Անգամ գետակն այս կապույտ ասես թե քար է հալած...
Այն եղնիկնե՞ր են արդյոք, թե՞ լեռնային քարայծեր,
Որ նետահար են եղել ու քարափին քարացել,
Թե՞ արծիվներ, որ մի օր բարձունքներին այս չոքել,
Ապա անզոր են եղել ժայռից թևերը պոկել
Ու քարացել են այստեղ, բարձունքներում այս սիրած,
Մագիլները հավիտյան քարաքոսի մեջ խրած...
Քա՛ր է այստեղ ամեն ինչ, քարե սլացք ու խոյանք,
Քարե անտաշ կամարներ, անտաշ սյուն է ու խոյակ...
Իսկ ամենից բարձր ու վեր, ուր արծիվներն են թևում,
Իր քարակոփ վեհությամբ քարե բերդն է երևում:
Ոսոխի սուրն է մի օր այս ձորերում շառաչել,
Ու մեր ոգին է այսպես սրերի դեմ քարացել...

1961

* * *

Մի փոշոտ, փափուկ ճամփա,
Փշատի փոշոտ ծառեր,
Մի կապո՜ւյտ, կապո՜ւյտ երկինք
Ու արև, արև, արև...

Կատարին՝ լույսից շիկնած
Մի թեթև ամպի ծվեն,
Արարատ լեռն է ցոլում՝
Նյութեղեն-աննյութեղեն...

Ուխտավոր հոգնած մի հով,
Անցնելով բարդուց բարդի,
Գնում է, ծունկի իջնում
Խորանում Արարատի:

Մի փոշոտ, փափուկ ճամփա,
Փշատի փոշոտ ծառեր,
Մի կապո՜ւյտ, կապո՜ւյտ երկինք
Ու արև, արև, արև...

Հովի հետ այդ ուխտավոր,
Անցնելով բարդուց բարդի,
Ուզում ես գնա՜լ, գնա՜լ
Ու փարվել Արարատին...

1962

ՔԱՐԵ ՔՆՔԾԱՆՔ

Լեռ ու անդունդ, ձոր ու կատար,
Ապառաժներ պատառ-պատառ,
Քարե թռիչք, քարե անկում...
Կապույտ մշուշ, կապույտ եթեր,
Ու կապույտից պոկված գետեր,
Որ կապույտով են հորձանքում...

Լեռներն այստեղ բարձր են այնքան,
Որ շանթակերպ արծիվն անգամ
Թև չի բախում նրանց ձյունին,
Վիհերն այստեղ խորն են այնքան,
Որ ձմեռվա կեսին անգամ
Բո՜ց է հագնում հանկարծ հոնին:

Ժայռերն այստեղ կարծր են այնքան,
Պղնձաջիղ, որձամկան,
Որ բախվելիս շանթ են ցանում,
Բայց և քնքուշ, քնքուշ այնքան,
Որ պղնձի միջից անգամ
Ծաղկի հրաշք ծիլն են հանում:

Հողմերն այստեղ այնքան են բիրտ,
Որ լեռներից ժայռ են պոկում
Ու գլորում անդունդն ի վար,
Հովերն այնքան են քնքշասիրտ,
Որ ծաղկի դեմ խոնարհ չոքում,
Աղոթում են մեղմ ու շվար:

Լեռ ու անդունդ, ձոր ու կատար,
Ապառաժներ պատառ-պատառ,
Քարե թռիչք, քարե անկում...
Հայոց երկիր, հայոց իմ հող,
Դու իմ քարե մոլուցք ու ոխ,
Իմ քնքշություն, իմ քնքշություն...

1963

ՔԱՐԱՓ Է, ՔԱՐ Է...

Քարափ է, քար է ամբողջովին,
Քարաբեկոր է վայրի ու կուռ,
Բայց պղնձագույն նրա կողից
Շատրվանել է ծառ մի գանգուր:

Ծառն այդ դժվար է ապրել կյանքում,
Ու թվում է, երբ բնին խփես,
Նա, կարծրացած իր տառապանքում,
Զրնգա պիտի պողպատի պես...

1961

* * *

Երբ կարոտել եմ խոյանքի՝ Արարատիդ եմ ես նայել,
Լույսերի մեջ հավերժացող բաց ճակատիդ եմ ես նայել:

Դու դարերի կապույտ միգում աստղ ես եղել ոսկեվորիկ,
Աստղալույսի պես ինձ հասած մագաղաթիդ եմ ես նայել:

Ստեղծումի և արարման հրաշքն է միշտ գերել հոգիդ,
Հրաշակերտ Զվարթնոցիդ ու Հաղպատիդ եմ ես նայել:

Եվ սակայն կարծր ես դու եղել բիրտ սրի դեմ ու նիզակի,
Որձաքարե հիմունքներիդ, սյուն ու պատիդ եմ ես նայել:

Տառապանքի հերկերի մեջ՝ դու ոսկեբուռ մի սերմնացան,
Թեև փոքրիկ, սակայն արդար ցորեն արտիդ եմ ես նայել:

Սառն ու ահեղ հողմերի դեմ պտղավորված դու ծիրանի,
Ժայռ ու քարի մեջ մխրճված խոր արմատիդ եմ ես նայել:

1962

ՅՈԹ ԵՐԳ՝ ԵՐԿՐԻՆ

Ա

Երկիր,
Լեռներիդ կապույտ ալիքը
Կապույտ աստղերի ու կապույտ ցրտի
Ցոլքերի մեջ է լողանում հավերժ...
Երկիր,
Վիհերիդ մութ անդունդներում
Նախապատմական մշուշն է լողում
Առասպելներիդ ծվենների հետ:
Չգիտեմ,
Երկիր,
Ո՞ւմ ներշնչանքից
Դու ծնունդ առար ու արարվեցիր,
Եվ սակայն գիտեմ՝
Դու արարվել ես միայն այն պահին,
Երբ միացել են իմաստությունը և խենթությունը:
Երկիր,
Կարող եմ բարձրանալ հիմա կատարներդ ի վեր
Եվ այնտեղ կանգնած
Խոսել կապուտակ քո աստղերի հետ,
Ինչպես խոսում են մանուկների հետ ու ծաղիկների:
Կարող եմ,
Երկիր,
Ձորերդ իջնել
Եվ անձավներիդ մութի դեմ կանգնած
Զրուցել նրանց լռության հետ քար,
Ինչպես խոսում են իմաստունների ու ծերերի հետ:

Երկի՛ր,
Ժայռերդ՝ կարծր տառապանք,
Եվ ծաղիկներդ՝ զոհաբերություն,
Ջրերդ՝ մաղթանք,
Ու երկինքը քո՝ լույս ու բարություն:

Կանգնել եմ,
Երկի՛ր,
Կանգնել եմ քո դեմ, չգիտեմ սակայն,
Քեզ եմ լուռ դիտում,
Թե՞ թափառում եմ էությանս մեջ...

Բ

Երկի՛ր,
Երբ ձյունե քո կատարների
Թրթռուն ցոլքն եմ զգում ճակատիս,
Հպարտանում եմ ես իմ ճակատով:
Երբ քո լեռնային բուռ-բուռ լճերում
Պատկերս եմ տեսնում լույսով շաղախված՝
Աստվածանում եմ ինքս իմ աչքին:

Երբ քո լեռներից ու անդունդներից
Արձագանքներն եմ լսում իմ ձայնի՝
Մեծանում եմ ես ու ահագնանում:

Երկի՛ր,
Երբ հոգնած ներբաններիս տակ
Զգում եմ քարե կարծրությունը քո՝
Ամեն քայլիս հետ հավատ եմ տանում:

Գ

Դու փոքր ես,
Երկի՛ր,

Սրտի չափ ես դու,
Եվ դրա համար
Իմ սրտի մեջ եմ ես քեզ միշտ պահում:

Կոպիտ ես, քարոտ,
Քնքշանքի կարոտ,
Եվ դրա համար
Ամենաքնքուշ իմ քնքշանքով եմ
Ես քեզ փայփայում...

Եվ բարձր ես,
Երկիր,
Բարձր ես աստղորեն,
Եվ դրա համար լռում ակամա
Ու իմ գլուխն եմ քո դեմ խոնարհում:

Դ

Երկիր,
Տառապանքն այն ակոսն է սև,
Որի մեջ լույսի ու իմաստության
Սուրբ հասկն է աճում:

Այդ ակոսն ես դու,
Այդ կնճիռն ես դու աշխարհի դեմքին:

Եվ ծանրացել է քո հասկը,
Երկիր,
Լցվել է լույսով,
Ցորյանով մաքուր...
Երկիր,
Դու ակոս,
Սրբազան դու հասկ
Եվ հաց անսպառ, և՛ հաց ոգեղեն...

Ե

Երկի՛ր,
Լեռներդ ըմբոստ են այնքան,
Որ թվում է, թե ուր որ է ահա
Հրաբուխներով որոտան պիտի,
Եվ կապույտն այնքան հեթանոսական,
Որ թվում է, թե արևաթաթախ
Առավոտն է դեռ այն նավասարդի...

Ծխանի ծուխ կա օդում ծփացող,
Եվ ինչ-որ մի տեղ լեռնալանջն ի վեր
Եղջերուներն են երևի վարգում,
Փողեր են փչում,
Թմբուկ են զարկում,
Ու զարթնում է մի կապույտ առասպել...

Արևագալի լույսերից հարբել,
Օրորվում է մի համբարձող բարդի:

Ականջս փողի հեռավոր ձայնին՝
Կարծես գնում եմ,
Գնում ու սուզվում
Առավոտի մեջ այն նավասարդի:

Զ

Երկի՛ր,
Փակում եմ աչքերս քո դեմ,
Եվ կոպերիս տակ հրդեհ է մնում,
Կրակ է մնում
Ու մնում ոսկի...

Երկի՛ր,
Բացում եմ աչքերս քո դեմ՝

Ոսկի է կաթում,
Կրակ է կաթում,
Հրդեհ է կաթում քո ամեն ոստից:

Երկի՜ր,
Ամեհի անդունդներդ ի վար
Գահավեժ նետվող ջրերդ բոլոր
Իրենց փառավոր այդ անկումի մեջ
Ճերմակ կրակ են
Ու ճերմակ հրդեհ...

Երկի՜ր,
Աստղամոտ քո բարձունքներում
Լաճեր կան կապույտ,
Որ երկինքն ի վեր
Կապույտ աղոթքի բոցով են մխում:

Եվ քարերիդ մեջ,
Ապառաժեղեն երակներիդ մեջ
Կայծեր կան նիրհող
Ու նիրհող բոցեր,
Որ բախումներից զարթնում են հանկարծ՝
Բաշերի նման...

Եվ այրվում ես դու,
Դու ոտից գլուխ այրվում ես,
Երկի՜ր,
Եվ այրումի պես գեղեցիկ ես դու:

Է

Լեռներդ, լեռնապարերդ
Մեկը մյուսի խոյանքն են կրկնում
Մի անկրկնելի վեհափառությամբ:

Եվ քո ջրերը,
Մաքուր ջրերը
Այստեղ դարեդար ժայռեր են փշրում
Իրենց իմաստուն խելագարությամբ:

Եվ ծաղիկներդ,
Եվ ծաղիկներդ,
Քարերի վրա արյուն են ծորում
Մի անկիզելի ողջակիզությամբ:

...Դարեր են գալիս,
Գնում են դարեր,
Եվ ապրում ես դու,
Հավերժում ես դու
Քո անմեկնելի ըմբոստ հեզությամբ:

1963

ԱՆԻ

Այստեղ տնքում է դարեր վիրավոր մի գեղեցկություն,
Եվ համրանում է քարե մի Նարեկ,
Անի,
Լուռ Անի,
Փշրված կամար,
Փշրված դու սյուն,
Դու ստեղծումի փշրված տարերք:

Իմ ու քո միջև
Լուռ հառաչում է փլված մի կամուրջ,
Եվ մրրկում է ալևոր մի գետ,
Դու այսքան մոտիկ,
Այսքան նյութեղեն՝
Եվ սակայն անուրջ,
Որ անմատույց է
Ու խոսում է լոկ իմ արյունի հետ:

Կանգնել եմ քո դեմ
Եվ քեզ արարել նորից սյուն առ սյուն,
Արարել նորից՝
Ինչպես որ կայիր,
Քո կամարներն եմ կապել երազուն
Եվ գմբեթներդ եմ սուզել ես նորից
Ոլորտների մեջ այս արևային:

Եվ կանգնել ես դու,
Կանգնել քո հպարտ
Ու տխուր փառքում,

Կանգնել ես մենակ ընդդեմ աշխարհի,
Եվ պատերիդ տակ
Գեղեցկությունդ են ահա սակարկում
Խարդավանքը, դավն ու ոխը վայրի:

Եվ իմ դեմ ահա՝
Դարեր վիրավոր մի գեղեցկություն
Ու մի փշրված երազի գմբեթ,
Ոգու սուրբ փոշի,
Երազի աձյուն,
Եվ հառաչանքից ձերմակող մի գետ:

Սակայն ոչ,
Անի,
Դու քար և, սակայն, քարեղեն կրակ,
Քարեղեն երազ,
Քարեղեն դու երգ,
Դարեր ու դարեր սրտե սիրտ ձգվող
Դու արյան երակ,
Դու արյան մրրիկ ու արյան տարերք:
Դու՝ աննյութեղեն,
Դու՝ շունչ ու ոգի,
Դու՝ գեղեցկության երկրպագություն,
Դու՝ արարչության մաքուր մեղեդի,
Հրեղեն դու սյուն...

1964

ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ԵՄ ՔԵԶ

Ամռան հրդեհներից այրված, խարկված լեռներ,
Ձմռան մրրիկներից ծեծված, զարկված լեռներ,
Լեռներ, հայոց լեռներ,
Խոնարհ ու բաց լեռներ,
Հոբի նման տանջված
Ու տառապած լեռներ...

Ու ես,
Գարնանամո՛ւտ,
Շնորհապարտ եմ քեզ,
Շնորհակալ եմ քեզ ու քո գերին,
Որ մի քանի կաթիլ մանուշակով
Դու այցի ես եկել այս լեռներին...

1969

ԻՄ ՀՈՂԸ

Աշնանամուտ է... Իմ լեռնաշխարհն է շողում ոսկեվոր,
Մասիսի վրա լույսի ծվեն է ձյունը նորապատ...
Քայլում եմ, քայլում... Չգիտեմ սակայն, թե ինչ խոսքերով
Եվ ինչպե՞ս լինեմ ես շնորհապարտ
Նրանց, որ հողն այս, փոքրիկ այս հողը՝ նման նշխարի,
Փրկել դարերից, փրկել դավերից ագահ աշխարհի,
Փրկել են, բերել ու ինձ շնորհել...

Միայնության մեջ հաճախ եմ խորհել,
Ես ի՞նչ կանեի, եթե չլիներ հողն այս մի պատառ,
Թե ճամփիս վրա չխշշար բարդին այս բարձրակատար,
Թե չշնչեի բուրմունքն այս հողի, ուրցի, փշատի,
Թե աշնան քամին թոնրի հոտն առած՝ դեմս չվազեր,
Թե չշրջեի ճանապարհներին հին Արտաշատի,
Եվ ավերակն այս քարե լռությամբ
Ինձ նախնիներիս պատգամը չասեր:

Ես ի՞նչ կանեի, եթե չլիներ հողն այս մի պատառ,
Ինչո՞վ կլցվեր անհունը հոգուս,
Երակների մեջ իմ արյունատար
Ինչպե՞ս կխայտար և ինչպե՞ս դեպի սիրտս կհոսեր
Այն զգացումը,
Որ հողե մարդուն դարձնում է աստված
Եվ կոչվում է սեր...
Ինչպես ավիշը ծառաբունն ի վեր,
Նա մայր հողից է բարձրանում իմ մեջ երակ առ երակ,
Մի բուռ սրտիս մեջ դառնում է անծուխ, անբոց մի կրակ,
Այրում է, տանջում,
Եվ այնպես քաղցր է այդ տանջությունը...

Եվ տանջությունն այդ գուցե հենց ինքը՝ երջանկությունն է...

1964

ԻՄ ՄԱՅՐԵՆԻ, ԻՄ ԲԱՐԲԱՌ

Իմ մայրենի, իմ բարբառ, կրակի հետ արարել,
Կրակի պես սրբազան քեզ դարեդար եմ տարել:

Ձգել եմ բոցը քո շեկ ես եղեգան փողն ի վեր,
Որ աստվածներ ծնես դու բոցամորուս ու հուրհեր:

Եվ հայրենի կավածեփ խուղերում եմ վառել քեզ,
Որ ծխանի ծխի հետ հավերժորե՛ն երկարես...

Իմ մայրենի, իմ բարբառ, քեզ հացի հետ արարել
Եվ հացի պես սրբազան քեզ դարեդար եմ տարել:

Քարից քամված ցորյանիս համն ու հոտն եմ տվել քեզ,
Որ անսպառ լինես դու այն օրհնված հացի պես:

Որ հեռավոր ճամփեքին օտարության ու քաղցի
Դու շուրթերիս մերձենաս հաղորդության պես հացի:

Իմ մայրենի, իմ բարբառ, քեզ գինու հետ արարել
Եվ գինու պես սրբազան քեզ դարեդար եմ տարել:

Եվ քեզանով արբեցած՝ դարձել տրտունջ ու բողոք,
Ծառս եմ եղել երկնքի գահերի դեմ անողոք:

Ես քեզանով իմ հոգու լույսն ու խավարն եմ հունցել
Եվ կապույտի, անհայտի, հավերժի հետ զրուցել:

Իմ մայրենի, իմ բարբառ, աշխարհում ինչ էլ լինի՝
Դո՛ւ իմ կրակ, դո՛ւ իմ հաց, դո՛ւ սրբազան իմ գինի...

1967

ԿԱ ՄԻ ՀԱՅ ԱՂՋԻԿ

Բուենոս-Այրես հեռու քաղաքում
Կա մի հայ աղջիկ,
Նա որոնում է դեմքն իր մանկության,
Սակայն չի գտնում:

Իսկ այստեղ ահա ամեն թփի տակ
Ցողի, ճաճանչի թարմ խոտի տեսքով
Մանկություններ են անփույթ թափթփած...

Ինչպե՞ս հավաքեմ
Եվ ինչպե՞ս, արդյո՞ք, առաքեմ նրան:

Իսկ այստեղ ահա անձրև է եկել,
Հայոց ապրիլի լիաբուռն անձրև,
Եվ ոտաբոբիկ արեգակն ահա
Ճողփում, վազում է
Անձրևի թողած լույս լճակներով:

Իսկ նա երևի Բուենոս-Այրես հսկա քաղաքի
Մետաղյա ու չոր աղմուկի միջով
Անցնում է մի տաք շշուկի նման
Եվ անցնում իբրև արյան աղերսանք ու հիշողություն...
Ե՞րբ էր... Գիշեր էր...
Սևանա վանքն էր
Առեղծվածորեն երկնքից առկախ,

Եվ լճի ափին՝
Բուենոս-Այրես հեռու քաղաքից եկած մի աղջիկ,
Կոպերին՝ խոշոր-խոշոր արտասուք:

Բուենոս-Այրես հսկա քաղաքով
Հիմա երևի անցնում է նա լուռ
Ու վախենում է, որ արտասուքը կպոկվի կոպից
Ու կընկնի հանկարծ շիկացած մայթին:

Ու վախենում է, որ օվկիանոսի հողմերը աղի
Իր փոքրիկ, փխրուն ձեռքերից հանկարծ
Չխլեն բույրը հայրենի քամու, հողի և աշնան:

Անցնում է նա լուռ ու որոնում է:
Ու որոնում է դեմքն իր մանկության
Եվ իր սկիզբը, և իր արմատը...

Աստծո դռան զանգն է նա տալիս,
Բարձրանում է վեր,
Եվ գիշերն ամբողջ
Դեմառդեմ նստած զրույց են անում
Մի համր Աստված ու մի հայ աղջիկ:

Եվ այդ զրույցը գանգատ է ու քեն,
Եվ այդ զրույցը հնամյա արյան ծնկաչոք աղերս,
Եվ այդ զրույցը՝ Գեղարդա վանքի կամարների տակ
Դարեր տվայտող նույն պաղատանքը,
Հրե արցունքով լացող նույն մոմը,
Բեկված խաչքարի նույն տխրությունը
Եվ Արտամետի հին խնձորենու ծաղկաթերթերի
Նույն սուգն սպիտակ...
Եվ հետո նորից Բուենոս-Այրես հսկա քաղաքով

Անցնում է նա լուռ,
Անցնում է իբրև
Մեր հին խաչքարից զատված տխրություն
Եվ Արտամետի հին խնձորենուց
Պոկված ծաղկաթերթ...

Իսկ շուրջը հողմեր,
Ու հողմերի մեջ՝
Այդ տխրությունը,
Այդ ծաղկաթերթը...

Անցնում է նա լուռ
Ու չի հասկանում, թե այդ ինչպես է աշխարհում եղել,
Որ ինքն իրենից զատել են այդպես
Եվ օվկիանոսներ դրել արանքում:

1968

ԽԱՉՔԱՐ

Տատասկների, քարերի մեջ
Քամիների, արևի մեջ,
Ձյունների մեջ, շոգ ու տոթի,
Այսպես մենակ, այսպես ոտի,
Այսպես խոնարհ, այսպես ըմբոստ,
Այսպես փխրուն, այսպես շիտակ,
Այսպես խրթին ու այսպես պարզ
Կանգնել է նա երկնքի տակ...
Կանգնել է նա արևի դեմ,
Որպես թախիծ ու խղճի սյուն,
Կանգնել է նա դարերի դեմ,
Որպես խաչված գեղեցկություն...

1970

ՄԱՐՄԱՇԵՆ

Ներսում, խնկահոտ չեչաքարերին
Ծնկները դրել իբրև մեղապարտ,
Մի հին թախիծ է տվայտում լռին,
Մի հին մորմոք է զարկվում պատեպատ...
Աղոթում են դեռ ոգիները հին,
Հին ստվերները դողում են շվար...

Դրսում արև է, վանքի գմբեթին
Ծիծեռնակները ճախրում են զվարթ...

1971

* * *

Քանի հազար տարի,
Քանի հազար տարի
Կարծրությունը ճեղքել
Այս բիրտ որձաքարի,
Դու շնչել ես իբրև
Ցայգածաղիկ...

Քանի հազար տարի,
Քանի հազար տարի
Մրրիկների մեջ ցուրտ
Ու հողմերում վայրի
Անրջել ես իբրև
Ցայգածաղիկ...

Իմ հայրենի, իմ հող,
Ապառաժին կպած
Եվ շուրթերդ՝ կապույտ
Արշալույսին հպած՝
Արշալույսով շնչող
Ցայգածաղիկ...

1971

ՀԵՌՎԻՑ

Ես կարծում էի,
Թե ամենայն ինչ քեզ խոստովանել,
Ասել էի քեզ խոսքերն այն բոլոր,
Որ նիրհում էին իմ արյան մեջ հին,
Ինչպես քո գինին՝
Վազերիդ կարմիր երակների մեջ,
Ինչպես քո ոգին՝
Տխուր փառքի մեջ ավերակներիդ,
Եվ ինչպես լույսդ՝
Մագաղաթներիդ խնկահոտ ծալքում...

Բայց ահա կրկին հեռու եմ քեզնից,
Ու կանչում ես դու,
Կանչում ես դու ինձ,
Եվ զգում եմ ես,
Որ անսկիզբ ու անվախճան ես դու,
Ինչպես արյունս,
Որ անսկիզբ ու անվերջ է նաև
Խոստովանանքս...

Եվ կանչում են ինձ քարանձավներդ,
Որ հեռու-հեռվից
Խալդերենով են ինձ հետ զրուցում,
Անվերծանելի,
Բայց հասկանալի մի խալդերենով:

Եվ կանչում է ինձ

Գառնո քարափի ստվերում բուսած
Ծաղիկն այն վայրի,
Որ մինչև հիմա անանուն է դեռ:

Եվ ինձ են կանչում ապառաժներդ,
Կանչում պղնձե քո գրաբարով:

Եվ թվում է ինձ,
Թե քամիներդ ինձ են որոնում,
Որ իմ ճակատին քնքշորեն դնեն
Իրենց բարալիկ ու զով մատների
Հրաշքը տխուր:

Ինձ է որոնում քո առավոտը՝
Լեռան կատարին,
Ասես կայծքարի ծայրին բռնկված
Այդ հսկայական, կապուտակ կայծը...

Ինձ են որոնում գիշերներն ամռան,
Որոնց հրեղեն աստղաթափի տակ
Բանաստեղծներ են ծնվում երևի...

Ինձ են որոնում ամպրոպները քո,
Որ առասպելի մանուկների պես
Մեկմեկու ձեռքից շանթեր են խլում,
Մեկմեկու շուրթից
Որոտմունքներ են խլում անդադար,
Հետո ծիծաղում
Ծիածանները ծիրանի դողով:

Եվ ինձ է կանչում
Ձորակում կորած մի հին ջրաղաց,

Որ թվում է, թե մատյան է խղճի՝
Քարե մի Նարեկ:

Եվ ինձ է կանչում ժպիտդ, երկի՛ր,
Մի բեկված, խոնարհ, տառապած ժպիտ,
Որ մորս դեմքի արտացոլանքն է:

Կանչում ես, երկի՛ր,
Ու դառնում եմ ես
Տխուր ու փխրուն, որպես արտասուք,
Ես ոտից գլուխ դառնում եմ ասես
Հոգևոր մաքուր երաժշտություն
Եվ զրնգում եմ
Օտար աշխարհի քամիների մեջ:

Եվ հեռու հեռվից շշնջում եմ ես,
– Գալիս եմ, երկի՛ր, որ քո հին հողում
Հող դառնամ մի բուռ...

1976

ԱՎԵՐԱԿ ՎԱՆՔՈՒՄ

Լեռնային ձամփա, քար է ու կապան,
Վանք է ավերակ, ավերակ մի խուց...
Չեմ եղել այստեղ, ամեն ինչ սակայն
Սիրտ ցավելու չափ ծանոթ է վաղուց:

Քայլում եմ մամռած քարերի միջով,
Կակաչի սուգ է, եղինջի թախիծ,
Ու թվում է, թե չեչաքարն այս չոր
Մաշվել է հենց իմ ծնկների ցավից:

Տեսնում եմ ասես, չոքել եմ մենակ,
Մոմի ստվերն է թրթռում պատին,
Եվ Աստվածամոր տեսքով տխրունակ
Սեր եմ նկարում ես մագաղաթին:

Քարերը լռում, դարերը լռում,
Բուրում են ծխով ու բուրում խունկով,
Իսկ մոմի բոցը հոգնած թրթռում,
Հեկեկում է դեռ հրե արցունքով...

1980

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Քանի գնում, այնքան քաղցրանում ես քիմքիս,
Հին գինի ես դառնում, արշալույսի տաք հաց...
Իմ մայրենի բարբառ՝ որձաքարը հիմքիս,
Դու սրբազան իմ հող, ակոս իմ բաց...

«Հող» եմ ասում ահա, և դու մխում ես լուռ,
Եվ մխանքից քո տաք նախնյաց հոտ է գալիս,
Եվ մխում են նորից սպիներդ տխուր,
Եվ մխում է ցավը կորուսյալի:

«Մայր» եմ ասում, և դու քնքշանում ես այնպես,
Թրթռում ես որպես խղճի շշուկ ու հույս,
Ցավ ես դառնում խոնարհ, դառնում աղոթք մի հեզ
Ու հեռվից տուն կանչող իրիկնալույս:

«Սեր» եմ ասում, և դու արձագանքում ես «սուրբ»,
Ալեվետում ես դու մի ոգեղեն դողով,
Դու քրմորեն ծնկում ու համբուրում ես լուռ
Հողն ու արշալույսի ձեռքը ցողոտ:

Ես «Արյուն» եմ ասում, և դու այրվում ես հիր,
Բոցկլտում ես հեռու մուժից նախնադարյան,
Զոհասեղան դառնում Ավարայրում կարմիր,
Խենթ ոգի ես դառնում, երգում «հարյավ»...

Ես «Ցորյան» եմ ասում, դու աստղի պես ցոլում,
Գեղեցկանում ես դու որպես վաստակ,

Ջրաղաց ես դառնում, զրնգում ես ձորում
Ու բուրում ես իբրև ալյուրը տաք:

Ես «Ողկույզ» եմ ասում, դու օրհնվում լույսով,
Բուրումներն ես փռում շողուն շոգի,
Հողի համն ես բերում, աստղի ցոլանքը զով,
Բերում արարչական մի մեծ ոգի:

Ես «Հավատ» եմ ասում, հնչյուններդ բոլոր
Ասես ծունկի իջնում Արարատի հանդեպ,
Բռնկվում են ասես մի սրբազան դողով,
Շիկանում են ասես, դառնում շանթեր:

Ես «Երդում» եմ ասում, և իմ աջը դանդաղ
Բարձրանում է, հանգչում սրտիս վրա...
Քեզ իմ շունչը վերջին, իմ արյունը արդար,
Քեզ, իմ ոգի, իմ հող, հաց ու կրակ...

1978

ՔԱՐ Է ՈՒ ԼՈՒՅՍ

Քար է ու լույս,
Լույս է ու քար...

Խելակորույս
Ու խելագար՝
Քարը ելնում,
Երկինք սուրում,
Բիրտ շուրթերով
Լույսն համբուրում,
Փշրվում է
Վիհերն ի վար...

Քար է ու լույս,
Լույս է ու քար...

1978

ՔԵԶ ՀԵՏ ԵՄ, ԵՐԿԻՐ...

Քեզ հետ եմ, երկի՛ր, քո մեջ եմ, իմ հող,
Կատար եմ ու վիհ, քարափ ու անդունդ,
Կիրճերում կորած գետ եմ տվայտող,
Որ իր քարեղեն ափերն է քանդում:

Ժայռերիդ բուսած հրեղեն մի թուփ,
Հրե ծաղիկ եմ ու վայրի ցորեն,
Քարանձավներիդ թախծությունն եմ մութ,
Որ աղոթում է ձգնակեցորեն:

Լճակներիդ մեջ կապույտ եմ ու դող,
Ծարավի ձիչ եմ հայրենի հանդում,
Բայց ամենից շատ գետ եմ տվայտող,
Որ իր քարեղեն ափերն է քանդում:

1979

ՁԱՅՆ ԻՄ ԱՐՅԱՆ

Դու ամբողջ գիշեր գլխիս տակ էիր, իմ զարկերակ,
Ես ամբողջ գիշեր քեզ էի լսում, ձայն իմ արյան,
Քո շշուկի մեջ ինչ-որ կռինչ կար նախնադարյան,
Ծարավի ձիչ կար, որ գալարվում էր որպես կրակ:

Հողմի հառաչ կար ու խուլ շառաչ կար որձաքարի,
Բիրտ բարբառիդ մեջ ինչ-որ սուլոց կար սկյութական,
Եվ մի աղոթք կար, որ անմեկին էր ու դյութական,
Եվ զրուցում էր սոսիների հետ սուրբ անտառի:

Եվ մի աղոթք կար, որ մերթ ձախրում էր ու վերանում
Ու մերթ ծնկում էր կապույտների մեջ լուսաբացի,
Որ օրհներգում էր լույսի հրաշքն ու համը հացի,
Գինու հրաշքն ու ծխանի ծուխն էր փառաբանում:

Եվ ինչ-որ զարկ կար, ինչ-որ զնգոց կար տառապագին,
Ինչ-որ զնդան էր, ինչ-որ կռան էր անվերջ զնգում,
Եվ արձագանքը աղջամուղջի մեջ ծանր տնքում,
Ահագնանում էր անդունդների մեջ Արարատի:

Եվ խուլ մռունչ կար, որ որձաքար էր ասես ծամում,
Ինչ-որ տրտունջ կար, որ սաստկանում ու դառնում էր ողբ,
Եվ ողբն ահեղ էր, ողբը ցասում էր, ցասումը՝ ոխ,
Եվ ոխը շանթ էր, որ շառաչում էր ու կարծրանում:

Եվ մի մրրիկ կար, որ անարատ էր խղճի նման,
Որ բարձրանում ու երկնքի դուռն էր ասես բախում,

Որ ասուպի պես իր հրե հարցն էր վերից կախում
Եվ փշրվում էր, և մոխրանում էր անպատասխան:

Եվ նորից ճիչ էր, նորից կռինչ էր նախնադարյան,
Կռանի զարկ էր, ողբի հառաչ էր, ոխի շառաչ,
Լույսի աղոթք էր, խղճի շշուկ էր, կարոտի կանչ...
Եվ այդ ամենը և անսկիզբ էր, և անվախճան...

1980

* * *

Որձաքարի բեկոր՝
Վրան այրված մամուռ,
Ու քարաքոս,
Ու ժանգ...

Սակայն անթարթ նայիր՝
Երակների մեջ բիրտ
Լո՜ւյս է,
Կայծ է
Ու շանթ...

1977

ՄՈՐՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1.
Մա՛յր, ես դեռ կյանքում ոչ մի երգ չունեմ քո մասին գրած,
Ես չեմ կամեցել երկյուղած սերս փոխարկել բառի,
Խորհել եմ միայն, թե կա՞մ աշխարհում մի այլ արարած
Այսքան տառապած ու այսքան բարի:

Գիշեր է հիմա... Լույսը նիրհում է ու ցավն արթնանում,
Եվ հանգչում ես դու հին ավերակի թախծալի փառքով,
Մի բուռ ես դարձել, ոչ հառաչում ես ու ոչ ձայն հանում,
Մարում ես խաղաղ մի հոգեվարքով:

Երեկ կանչեցիր, որ նստեմ կողքիդ ու Նարեկ կարդամ...
Կարդում էի ես, իսկ դու քո Աստծո հետ էիր խոսում,
Եվ ծավալվում էր ձակատիդ վրա այն լույսը արդար,
Որ տեսել եմ լոկ վանքերում մեր սուրբ:

Այդ լույսերի մեջ երևի մեր հին բարդին էր խշշում,
Արծաթ էր կտրում ու լույս էր տանում հեռավոր մի գետ,
Մեր տան հատակին ընկել արևի ոսկե մի փշուր
Ու խաղ էր անում իմ մանկության հետ:

Դու մանկությունս կտանես քեզ հետ իբրև սուրբ նշխար,
Հանգչող ձայները կտանես հեռու այն մթնշաղի,
Կտանես քեզ հետ մի կարմիր, կանաչ, մի կորած աշխարհ
Եվ համը հացի, և համը աղի:

Մարում ես, մայրի՛կ, դու խիղճ իմ արդար, խորան իմ ցավի,
Մարում ես, մայրի՛կ, դու սուրբ նահատակ, դու տանջված վկա,
Գալիք օրերում, երբ ոտքս արնի ու սիրտս ցավի,
Արտասուքներս որտե՞ղ հեկեկամ...

Ու երբ մեր շեմքին կանգ առնի հանկարծ վիշտ մի անանուն,
Ո՞վ պիտի դեմը մեր դուռը, սիրտը, մեր խիղճը բանա...
Մարում ես, մայրի՛կ... Լսո՞ւմ ես, սակայն, այդ ի՞նչ ես անում,
Ես՝ ոչինչ, խիղճը պիտի որբանա...

2.
Եվ դու մահացար գարնան մի արդար կիրակնալույսի,
Ասես արարման յոթերորդ օրը դու հանգստացար,
Քո տառապանքը փոխվել մի թեթև, ներող մի լույսի
Ու դեմքիդ վրա ցոլում էր պայծառ...

Մնարիդ վրա կանգնել էի ես գլուխս կախած,
Արցունքն ու խիղճն էր իրար խառնված հոգուս մեջ տնքում,
Քեզ ի՞նչ քնքշանքներ կարող էի տալ, որ սակայն, ավաղ,
Չգիտեմ ինչու, չտվի կյանքում...

Ի՞նչ անեմ հիմա բեռն այդ քնքշության, այդ ցավը վերին,
Ի՞նչ անեմ հիմա, քեզ ինչպե՞ս ասեմ խոսքերն իմ չասված,
Ի՞նչ անեմ, ասա, կեսգիշերային այն լուռ ժամերին,
Երբ մենակ մնանք ես, դու և Աստված...

Կեսգիշերային այն լուռ ժամերին, երբ խորհեմ ահով,
Որ մենակ ես դու, հողի տակ ես դու, ու ցուրտ է այնտեղ,
Ինչպե՞ս փայփայեմ ձեռքերդ մրսած ու սիրտդ ցավոտ,
Ինչպե՞ս ծնկաչոք իջնեմ քո հանդեպ:

Մա՛յր, հող ես դառնում... Ու ես քնքշանքս հողին պիտի տամ,
Մա՛յր, հող ես դառնում... Պիտի քնքշանքս ստանամ հողից...
Եվ այդպես օրեր... Լսո՞ւմ ես, մայրի՛կ, մինչև ես էլ գամ,
Ու մենք սուրբ հողում միանանք նորից...

1980

ԶՎԱՐԹՆՈՑ

Զվարթնոց: Գիշեր: Լռություն է մեծ,
Հին ավերակի քարե տվայտանք...
Իսկ մկրտության ավազանի մեջ
Անձրևաջուր է ու աստղի ցոլանք:

...Աստղերի նման մանուկներ են մերկ
Մկրտվում քարե այս ավազանում,
Խունկի մխանք է, օրհնություն ու երգ,
Հույսն ու հավատը աղոթք են անում:

Լռություն է մեծ... Ոչ հուշ, ոչ անուն,
Անձրևաջուրը ցոլցլում է ջինջ,
Իսկ աստղը վերից այնպես է նայում,
Որ ասես ինքն էլ չի հիշում ոչինչ...

1980

ՄԱՅՐ

Մա՛յր իմ, նոր եմ հասկանում, որ Հայաստանն էիր դու,
Որի սրտով աշխարհի բոլոր հողմերը անցան,
Որ դու էիր հերարձակ ու արցունքոտ, ու տրտում
Նստել ավեր Անիի բեկորներին սրբազան:

Մա՛յր իմ, նոր եմ հասկանում, որ Հայաստանն էիր դու,
Այդքան փխրուն ու ամուր, այդքան տանջված ու արդար,
Խորհրդավոր մեր ոգին, մեր արյան ձայնն էիր դու,
Որի գաղտնիքը, ավաղ, անզոր եղա ես կարդալ:

Մա՛յր իմ, նոր եմ հասկանում, որ Հայաստանն էիր դու,
Որի առջև երկյուղած կարկամել եմ ու լռել,
Եվ սիրո խոսքն իմ չասված, խոստովանանքն իմ տրտում
Արթնանում է գիշերով ու մղկտում ինքնիրեն...

1980

ՈՒՐ ԵՍ ԳՆՈՒՄ...

Մուշեղ Գալշոյանի հիշատակին

Աշնան օրն է տխուր մարում
Ծաղիկների շողքից,
Պառկել ես դու այնտեղ՝ սարում,
Հրացանը կողքիդ:

Վերում կապո՛ւյտ-կապո՛ւյտ երկինք,
Կարոտի չափ տրտում.
Հեռու-հեռվում մի լուրթ երկիր,
Սասնա կորած մի տուն:

Ծուխն է ելնում բարա՛կ-բարա՛կ,
Անուշ հոտ կա հացի,
Ու կա մաքուր մի աղբյուրակ,
Նման անուշ լացի...

Ո՞վ է կանչում հեռվից քեզ, ո՞վ,
Ո՞վ է ձայնում, իմ ծուռ,
Աչքերդ փակ՝ սև կածանով
Ո՞ւր ես գնում, ախ, ո՞ւր...

Սար ու հանդին մուժ է իջել,
Չկա դարձի հնար,
Կանգնիր, տղա՛, քո հերթը չէ,
Նախ ես պիտի գնամ:
Բայց գնում ես աչքերդ փակ,

Ու վիհն այդ շատ է շեղ,
Ախ, ետ դարձիր, իմ կապուտաչ,
Գալշոյի ծուռ Մուշեղ:

Այդ առավոտ Սասնա սարում
Մի աստղ ընկավ հանգած,
Լացն իր լացեց մի ջինջ աղբյուր
Ու չորացավ հանկարծ:

Կարմրել են ծաղիկ ու սեզ
Քո արյան տաք շողքից,
Պառկել ես դու ֆիդայու պես՝
Հրացանը կողքիդ...

1980

ՆԵՐԲՈՂ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻՆ

Դու՝ սեր առաջին, առաջին մորմոք, առաջին աղոթք,
Որ տառապանքով փոխվեցիր բառի ու դարձար լեզու...
Ու երբ «Հայրենիք» անունը տվինք հողին այս քարոտ,
«Մայրենի» դրինք անունը քո սուրբ...

Եվ դու դարեդար մեզ շնորհեցիր կանչը քո արյան,
Համը քո հացի, եռքը քո գինու, ցոլքը քո հրի,
Տվիր պղնձե այս քարափների կռինչը վայրագ
Ու քնքշությունը լացող մամուռի:

Մեզ նավասարդյան առավոտների լույսով օծեցիր
Եվ մկրտեցիր առասպելների ուժ ու զորությամբ,
Աստվածների հետ քո աստվածային լեզվով խոսեցիր,
Ոսոխների հետ՝ որոտով քո բամբ:

Ու մենք դարձրինք քեզ երդում, ոգի, դարձրինք աստված,
Թեև գիտեինք, որ աստվածները զոհ են պահանջում,
Եվ Ավարայրում ընկանք արնաքամ, ընկանք ծվատված,
Բայց չզիջեցինք և ոչ մի հնչյուն:

Ու երբ փուլ եկավ մեր կամարների թռիչքը հպարտ,
Կամար ոգեղեն՝ դու մեր ոգու հետ հարատևեցիր,
Երբ սյուները մեր ծնկները ծալած ընկան դիտապաստ,
Դու՝ սյուն հրեղեն, երկինք թևեցիր:

Երբ ողկույզը մեր առան արշավող սմբակների տակ,
Գինի սրբազան, մեր շրթունքները դու համբուրեցիր,

Ու երբ խլեցին ու խափանեցին թոնիրը մեր տաք,
Դու՝ հաց անսպառ, նորից բուրեցիր:

Եվ մենք քեզ համար, մեր մեսրոպատառ, խորհուրդ մեր խորին,
Եվ մենք քեզ համար, մեր մեծասքանչ, մեր ոսկեղենիկ,
Ելանք ազգովին, բռնեցինք ահեղ ծամփան Դեր-Զորի,
Մեր կեսը տվինք, բայց քեզ չտվինք:

Քանզի գիտեինք, որ քեզ սրբորեն կոչել մայրենի,
Քեզանով ենք մենք դարեդար հառնել, առել շունչ ու կյանք
Ու թե քեզ դավենք, ուրեմն չունենք հող ու հայրենիք,
Ու թե քեզ դավենք, ուրեմն չկանք:

Եվ հիմա, հիմա, անթեղի նման քեզ պիտի տանենք,
Քեզ պիտի տանենք իբրև հրդեհից ազատված մանկան,
Հողմերից փրկված կանթեղի նման քեզ պիտի տանենք
Եվ տանենք իբրև երդում ու պատգամ:

Եվ տանենք պիտի իբրև առաջին հավատ ու աղոթք,
Եվ տանենք պիտի իբրև սրբազան հաց, գինի ու հուր...
Եվ հիշենք, որ երբ «Հայրենիք» ասինք հողին այս քարոտ,
«Մայրենի» դրինք անունը քո սուրբ:

1980

* * *

Լուռ է լինում ու խավար, քունն է կանչում այն ափից,
Բայց հանկարծ վեր եմ թռչում ինչ-որ մի խուլ տագնապից:

Մորս ոգի՞ն է արդյոք, որ արթնանում այդ ժամին
Ու հեծկլտում է տխուր, ինչպես անձրևն ու քամին:

Թե՞ մի գաղտնիք է մթին, որ ծվարել մշուշում
Ու շշուկով մի դաժան ինչ-որ չարիք է գուժում:

Իմ արյան մեջ է գուցե տնքում տագնապը այդ խուլ,
Որ դարերից է գալիս ու երկարում է տխուր:

Ու երկարում է այնքան, որ թվում է կվայի...
– Տե՜ր իմ, ինչո՞ւ ինձ տվիր ծանր արյունը հայի:

1981

* * *

Նա այդ գիշեր մինչև լույս խոնարհված էր սնարիս...

Դեռ ինձանից հողմի հոտ ու ծխի հոտ էր գալիս,
Վառոդի հոտ էր գալիս սպիներից իմ ցավոտ,
Իսկ իմ բարձից՝ մանկության ու մայրական ձեռքի հոտ:

Նա այդ գիշեր մինչև լույս խոնարհված էր սնարիս...

Լսում էի կիսարթուն՝ Աստծո անունն էր տալիս,
Հավատում էր, թե իրոք նա պահպանել իր որդուն
Ու փրկել է հրաշքով, ու բերել է ահա տուն:

Նա այդ գիշեր մինչև լույս խոնարհված էր սնարիս...

Զարթնում էի... Շշուկով դեռ աղոթում, դեռ լալիս,
Դեռ սպիներս էր շոյում, թեքվում, ծածկում էր վրաս,
Չէր հավատում դեռ կարգին՝ իրակա՞ն է, թե՞ երազ:

Նա այդ գիշեր մինչև լույս խոնարհված էր սնարիս...

Ու չկա մայրս հիմա... Նա երազիս է գալիս,
Թեքվում, ծածկում է վրաս, Աստծո անունն է տալիս,
Նոր սպիներս է շոյում, աղոթում է ու լալիս...

Եվ թվում է, հավիտյան խոնարհված է սնարիս...

1981

ՀՈՂ ԻՄ ԿԻՍՎԱԾ...

Ալեքսան Կիրակոսյանին

Հող իմ կիսված՝ սիրտ չկիսվող,
Կքել եմ ես քո պարտքի տակ,
Ցավում եմ ես խղճի նման,
Վերքի նման մխում եմ տաք:

Ախ, ինչ ասեմ, ո՞ւշ ծնեցիր,
Ես քեզ արյուն պիտի տայի,
Էրզրումի ցուրտ լեռներում
Ես՝ արնաքամ մի ֆիդայի:

Արյունն իմ հին քո հողի մեջ
Սուզվեր պիտի երակ-երակ,
Նիրհեր այնտեղ, սակայն նիրհեր
Ինչպես կրակն անթեղի տակ:

Նիրհեր պիտի որպես կարոտ,
Որպես մորմոք, որպես թախիծ,
Որպես լեռան սրտում ապրող
Հրաբուխի կարմիր ծաղիկ:

Խառնվեի պիտի հողիդ,
Արածանուդ ահեղ լացին,
Միանայի հուր հավիտյան
Քո հարության առեղծվածին:

Ախ, ինչ ասեմ, ուշ ծնեցիր,
Ես քեզ արյուն պիտի տայի,
Չցավեի խղճի նման,
Վերքի նման չմխայի:

1981

ԵՐԿԻՐ, ԳԱՂՏՆԱՐԱՆ...

Երկի՛ր Հայաստան, նորից լեռնային ճամփադ է իմ դեմ,
Քարափ է, վիհ է, որ ամեհի է, ու աղբյուր է ջինջ...
Ես կարծում էի, թե ոտից գլուխ քեզ անգիր գիտեմ,
Եվ, սակայն, ներիր, չգիտեմ ոչինչ:

Մութ քարանձավ է, փուշն ու մացառը բերանն են փակում,
Ներսում բյուրեղ է, փիրուզ է, մարջան, հեքիաթի քարեր,
Եվ այս ամենը ինչպե՞ս ես պահել ինձանից թաքուն,
Աշխարհից թաքուն ինչպե՞ս ես պահել:

Ավերակ բերդը նստել քարափին ու նայում է ցած,
Ես նայել հեռվից ու կարծել էի՝ դա ժայռ է անել,
Եվ սակայն նայիր, սա մագաղաթ է ասես քարացած,
Որ պիտի բացել, պիտի վերծանել:

Եվ վիհ է ցածում՝ կապույտով լեցուն անհուն մի թախիծ,
Ի՞նչ կա խորքի մեջ... երևի գետի արծաթե մի թել,
Բայց խոսք են խոսում, թե ցերեկ օրով նրա հատակից
Կարող ես ոսկե աստղերը դիտել:

Երկի՛ր, հրաշքի ցոլքերով լեցուն քարանձավ իմ մութ,
Երկի՛ր, գաղտնարան, որ մինչև հիմա դեռ փակ է իմ դեմ,
Երկի՛ր, առեղծված, դեռ պիտի իջնեմ վիհերը ոգուդ,
Այնտեղից՝ ոսկե աստղերդ դիտեմ...

1982

* * *

Ձորի մշուշ, վիհի մխանք,
Լեռան կապույտ ու ձյան ալիք՝
Իրիկնային մուժում կորչող
Մի քարեղեն հրաշալիք...
Ու ես գիտեմ, վիհերն ի վար
Խենթ ջրերի ծուխ է ու ձայն,
Քարի արցունք, մամուռի լաց,
Կաթող ծաղիկ ու ծիածան:
Եվ անձավներ ու ոգիներ՝
Անձավներում այդ կապուտակ,
Որ արթնանում կեսգիշերով,
Թափառում են լուսնյակի տակ:

Ձորի մշուշ, վիհի մխանք,
Լեռան կապույտ ու ձյան ալիք,
Կապույտի մեջ ու ձյունի մեջ՝
Իրար կպած աստղ ու ծաղիկ:
Ու ես գիտեմ, վիհերն ի վեր
Վանք է ավեր, գիր է եղծված,
Ու վանքից վեր, երկնքից վեր՝
Ինչ-որ թախիծ ու առեղծված,
Ինչ-որ հավքի թևաբախում,
Ինչ-որ աստղի մի տաք մխանք՝
Տառապանքի նման մի սեր
Ու սիրո պես մի տառապանք...

1981

ԵՐԳՈՂ ԽԱՉՔԱՐ

Լուսինե Զաքարյանին

Որտեղի՞ց եկավ նա այսքան անեղծ,
Այսքան ոգեղեն, այսքան անմեկին...
Եվ ինչ հրաշքով խաչքարից հանեց
Նրա մեջ նիրհող մաքուր մեղեդին:

Եվ մաքրությունն այդ ծավալվում վերում,
Հալչում էր իբրև ղողանջը զանգի,
Կանչում էր ասես երկիր մի հեռու
Եվ կանչում էր մեզ խոստովանանքի:

Մեզ, որ օրերի վազքի մեջ անքուն
Մոռացել էինք ինքներս անգամ,
Որ մեր հոգու մեջ այդքան սրբություն
Ու թախիծներ կան դեռ անանձնական...

Երգեց... Ու այնտեղ՝ կապույտում վերին,
Ինչ-որ մի խորին խորհուրդ էր թևում,
Աստղային լույսը խոնարհ կոպերին՝
Մայր Հայաստանն էր ասես երևում:

Ծիրանի ծառը բուրում էր բարակ,
Եվ անրջում էր ակոսը տրտում,
Կաթկթում էին ցողերն անարատ,
Մեղավորներիս լույսով մկրտում:

Երգեց... Եվ հուշեց ձայնն այդ մոգական,
Որ թե այդ փխրուն աղջկա հոգում
Դարերից ձգվող ոգի կա այդքան,
Ուրեմն շա՜տ ենք համառ ու տոկուն:

Որտեղի՞ց եկավ նա այսքան անեղծ,
Այսքան ոգեղեն, այսքան անմեկին...
Եվ ինչ հրաշքով խորքերից հանեց
Մեր հոգում նիրհող մաքուր մեղեդին:

...Ծավալվում անվերջ երգի լույսն անեղծ
Ու թրթռում է կապույտ եզերքում...
Կանգնած հողմերի ու արևի մեջ
Ասես մի փխրուն խաչքար է երգում...

1981

ԿԱՅԾՔԱՐ

Դու՝ ժայռեղեն իմ երկիր, իմ հողմահար, իմ վայրի...
Եվ ժայռ չեղար դու սակայն, նման եղար կայծքարի:

Ու երբ պայտած սմբակներ ու նիզակներ դիպան քեզ,
Քո մեջ նիրհող հրեղեն առեղծվածը բռնկեց:

Երբ ուզեցին քեզ փշրել, պեծին տվիր ու կայծին,
Եվ կայծիդ մեջ քո հոգու հրաշքները ցոլացին:

Եվ արյունդ հնամյա, որ այդքան ծանր է տնքում,
Երակ ունի կայծքարի ու կայծքարի բռնկում:

Եվ չտեսան, որ անգամ կարոտներիդ մեջ փխրուն,
Որ արցունքի՛դ մեջ անգամ կայծքարի ցոլքն է տխրում:

... Շա՜տ եմ խորհել քո մասին, կշռել եմ չարն ու բարին
Եվ հավատում եմ, սակայն, ես քո ոգու կայծքարին:

1981

ՊԱՐՏՔ

Լեռան լանջից նայում եմ քեզ, ե՛լ, Հայաստան, կապույտ հագիր,
Ես քո ամեն առավոտին երազանքի կապույտ եմ պարտք,
Դու՝ քարեղեն իմ առեղծված, իմ քարեղեն ճակատագիր,
Քո քարեղեն տառապանքին որդու գորով ու գութ եմ պարտք:

Գետերդ ի վար, ձորերդ ի վար ուռիներդ են շարվել տրտում,
Քո տրտմության ուռիներին ես քնքշության շոյանք եմ պարտք,
Կատարներիդ լճեր կան լուրթ, ուր քո ոգին է մկրտվում,
Այդ լճերի ծփանքներին ես մաքրության ցոլանք եմ պարտք:

Փլված կամար, վեմ տապալված, եղինջներով բուրող Անի,
Քո այդ փլված կամարներին ես խոյակներ ու սյուն եմ պարտք,
Դար ու դարեր բոցկլտացող հրաշք կանթեղ՝ իմ մայրենի,
Ոսկեղենիկ քո կանթեղին ես յուղի տեղ արյո՛ւն եմ պարտք:

Ես ծունկի եմ իջել հոգնած Դեր-Զորի սև ավազներին,
Բայց զոհերիդ անհայտ ու որբ շիրիմներին դեռ խունկ եմ պարտք,
Սիրտս բացել, բույն եմ տվել քո վիրավոր երազներին,
Տու՛ն հայրենի, ես քո շեմքին որդիական արցունք եմ պարտք:

Արարատն է նայում հեռվից՝ կրծքին խորունկ վիհը վերքի,
Ես քո ցավին այդ վիհերից վեր ելնելու խոյանք եմ պարտք,
Կապույտի մեջ քո հարության սուրբ հրաշքն է ցոլում, երկի՛ր,
Քո հարության այդ հրաշքին ես ողջակեզ ու կյանք եմ պարտք...

1982

ՑՈՐԵՆ

Երբ ասում են, թե դու, հող հայրենի,
Հայրենիքն ես հասկի ու ցորենի,
Հավատում եմ դրան ես սրբորեն...
Ցորենի հոտ ունի արևը քո,
Ցորենի համ ունեն բառերը քո,
Եվ մաքուր է խիղճդ որպես ցորեն:

Ցորեն արտի նման քեզ տրորել,
Հողմերին են տվել, հունդդ ցրել,
Բայց միշտ կանաչել է նորից արտդ,
Խոր ակոս են դարձել ցավերը քո,
Ոսկե սերմ են դարձել տառերը քո,
Ցորեն արտ է դարձել մագաղաթդ:

Հասկի նման կանգնել ոսկեճակատ,
Հասկի հույս ես եղել, հասկի հավատ,
Եվ արդար է եղել ոգուդ հերկը,
Ցորենի խիղճ ունի Նարեկը քո,
Ցորենի ուժ՝ քո տաղն ու երգը,
Ցորենի հոտ ուներ մորս ձեռքը:

Իմ Հայաստան, իմ հող, իմ հայրենի,
Դու օրորան, ակոս դու ցորենի,
Հավատում եմ ոգուդ ես սրբորեն,–
Ցորենի հոտ ունի արևը քո,
Ցորենի համ ունեն բառերը քո,
Եվ հավերժող ես դու՝ որպես ցորեն..

1981

ԻՆՔՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Հայոց իմ հող, հայոց երկիր՝
Լեռ ու կատար, վիհ ու անկում,
Դու ինձ կյանքում ստեղծեցիր
Քո պատկերով ու քո հանգույն:

Դու կապուտակ կատարներիս
Տվիր մաքուր ցոլանք ու ձյուն,
Անդունդներիս ու վիհերիս
Խուռն ու խռով մի թախծություն:

Ինձ արցունքոտ լույսը տվիր
Քո արցունքոտ լճակների,
Շնորհեցիր ծաղիկը հիր
Քո մամոտած փչակների:

Քարափներիդ ծարավը տաք
Ու ձիչը տաք տվիր դու ինձ
Եվ կախեցիր կոպերիս տակ
Աղբյուրներիդ երազը ջինջ:

Հողիդ փխրուն բարությունից
Գորով տվիր դու մատներիս,
Որձաքարիդ զորությունից
Երակ տվիր արմատներիս:

Հայոց երկիր, հայոց իմ հող,
Դու՝ անմեկին, դու՝ գաղտնարան,

Արայի պես նետահարվող,
Բայց և հառնող, որպես Արան...

Դու իմ արյան հյուլեներին
Տվիր մի փակ, ցավոտ այրում,
Բայց և տվիր գաղտնիք մի հին,
Որ դո՛ւ գիտես լոկ աշխարհում:

Հանդեսներից նավասարդյան
Տվիր գինու և հացի տոն
Ու խուցերից քո ճգնության՝
Մի ծնկաչոք ծարավ ու ծոմ:

Մկրտեցիր ինձ Նարեկիդ
Տառապանքով անեզրական,
Բայց և տվիր դու Քուչակիդ
Սերը զվարթ ու մեղսական:

Կորուստներիդ ցավի հետ լուռ
Հույսի հացը տվիր դու ինձ,
Տառապանքից լույս քամելու
Առեղծվածը տվիր դու ինձ:

1982

* * *

Արագածն է այնտեղ, այնտեղ՝ Արան,
Այնտեղ արշալույսն է լեռնաշխարհի...
Նա մաքուր է՝ որպես ապաշխարանք,
Գեղեցիկ է՝ որպես սիրո թախիծ:

Արագածն է այնտեղ, այնտեղ՝ Արան,
Բոցկլտում է այնտեղ ծաղիկ մի հուր...
Նա կապույտ է՝ որպես աղոթարան,
Գեղեցիկ է՝ որպես լուսաստղը լուրթ:

Արագածն է այնտեղ, այնտեղ՝ Արան,
Այնտեղ հասկն է ցոլում՝ ճակատը բաց,
Նա խոնարհ է՝ որպես խիղճը արյան,
Գեղեցիկ է՝ որպես մանուկ Աստված:

Արագածն է այնտեղ, այնտեղ՝ Արան,
Հրախաղ է այնտեղ, լույսի ալիք...
Իմ հայրենի՛ք, իմ խաչ, իմ քավարան,
Իմ արշալույս, իմ հասկ ու իմ ծաղիկ...

1982

ԳԱՌՆՈ ՁՈՐԸ

Ես Գառնո ձորը հիշեցի նորից...
Քարափի վրա ծաղկած մասրենին
Թրթռաց,
Դողաց
Ու հուրհրատեց...

Ես Գառնո ձորը հիշեցի նորից...
Խաչքարի թևից խաչված երազի
Կսկիծը կաթեց:

1976

* * *

Հողի շեկ շուրթին՝ ոսկեվոր մի արտ,
Երկնքի շուրթին՝ սրբաքար մի վանք...
Երկիր իմ խոնարհ, երկիր իմ հպարտ,
Հողի ու ոգու դու խոստովանանք:

Հողմեր են սուլել ու հավերժորեն
Ծեծել են այս արտն ու վանքն այս քարե...
Դու հողի շուրթին դարձել ես ցորեն,
Երկնքի շուրթին դարձել ես Նարեկ...

1982

ԻՆՁ ԹՎՈՒՄ Է ՄԻՇՏ...

Ինձ թվում է միշտ՝ մեկ էլ եմ ապրել
Ես դարեր առաջ
Ու գողթան երգով ծունկի եմ չոքել
Արևի առաջ:

Ապրել ու մի օր ահեղ կռվի մեջ
Ընկել սրահար,
Եվ կորցրել է շենս մի գուսան
Ու մի սիրահար...

Եվ ապրել եմ ես ձեր կապույտի մեջ,
Իմ Կարնո սարեր,
Հոտաղ եմ եղել, մաճկալ եմ եղել
Ու հող եմ վարել:

Ապրել ու մի օր ահեղ կռվի մեջ
Ընկել սրահար,
Եվ կորցրել է գյուղս մի մաճկալ
Ու մի սիրահար...

Եվ ապրել եմ ես իմ այն սրբաքար
Քաղաքում Անի,
Զինվոր եմ եղել պարիսպների տակ
Իմ մայր ոստանի:

Ապրել ու մի օր ահեղ կռվի մեջ
Ընկել սրահար,
Եվ կորցրել է Անիս մի զինվոր
Ու մի սիրահար...

1982

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐ

Տուն եմ դարձել, բայց ողջ գիշեր
Իմ աչքերում տենդոտ
Դեղին լեռներ, լեռներ են շեկ,
Լեռան ծարավ ու տոթ:

Մեկն ուզում է ծունկը ծալի
Ու խոնարհվի խոհեմ,
Որ մեկ հատիկ փրկված ծառի
Հողն արցունքով ցողեմ:

Այն մեկն ուղտի համբերությամբ
Իր ծարավն է ծամում,
Երազում է ծանրիկ մի ամպ
Եվ սպասում քամուն:

Այն մեկն ըմբոստ վեր է սուրում
Լեռնապարի միջից
Ու երկնքի սիրտն է խրում
Պղնձացած մի ճիչ:

Մեկը՝ նվազ ու տենդահար,
Դարձել դեղին թախիծ,
Կարկամել է՝ անդունդն ի վար
Տապալվելու ահից:

Գալիս այդպես, գալիս հերթով
Աչքերիս դեմ չոքում
Ու ծարավից ճաքած շուրթով
Իրենց ցավն են ոգում:

Եվ զգում եմ, լեռներ իմ հին,
Իմ տառապած լեռներ,
Որ ձեզ համար ուզած պահին
Կարող եմ ես մեռնել...

1982

ՄԵՆԱՎՈՐ ԾԱՌ

Կանգնել է նա ժայռի ծերպին,
Կանգնել բարակ, թեթև
Ու խշշում է՝ սաղարթներին
Մի կապուտակ եթեր:

Աշուն է ուշ... Ոտից, գլուխ
Բռնկվել է ոսկով
Ու այնպես է նա ցոլցլում,
Որ չես պատմի խոսքով:

Մագաղաթյա ոսկեբանված
Մի հին մատյան գիտեմ,
Ասես նրա էջից հանված
Հրաշք թուփ է իմ դեմ:

Հազա՜ր ափսոս, շատ է անհաս,
Հենց երկնքի քունքին,
Ուխտավորի պես բարձրանաս,
Դեմը իջնես ծունկի...

1982

ՄԵՐ ՏԱՌԵՐԸ

Տեսիլքից են ծնվել տառերը մեր,
Հողմերով են սնվել տառերը մեր,
Ջրդեղվել են, դարձել երկաթագիր,
Քարերին են գրվել տառերը մեր,
Երբ փորձել են ջնջել ու եղծանել,
Կայծակին են տվել տառերը մեր...

1982

* * *

Գրոհը կարճ տևեց... Գիշերը խիտ էր, թավ,
Ու գիշերվա միջով շարքերն առաջ անցան...
Չնկատեց ոչ ոք, որ մի զինվոր ընկավ
Եվ աչքերը փակեց անհառաչ ու անձայն:

Բայց մի հեռու գյուղում, տեսած մի չար երազ,
Սպիտակած մի մայր, սև շորերը հագին,
Անհույս հառաչանքով նստեց ծամփի վրա
Ու ողջունեց լացով ծագող արեգակին:

1942

* * *

Ո՛չ, ես չեմ կարող մոռանալ նրան,
Այն խարտիշահեր, ջահել զինվորին...
Նա ընկած էր բաց դաշտի մեջ գարնան՝
Գլուխը դրած հայրենի հողին:
Սրտին էր դիպել գնդակն արձիձե,
Ճակատի վրա դեռ քրտինք կար պաղ,
Եվ ինձ թվում էր, թե նինջն է իջել
Նրա կոպերին՝ մանկորեն խաղաղ,
Եվ ինձ թվում էր, թե նա չի մեռել,
Թե պառկել է նա ծաղկունքի մեջ սուրբ
Ու իր ականջը մայր հողին դրել,
Հեռվից տուն կանչող մոր ձայնն է լսում...

1945

ԲԱԼԼԱԴ

Մի ժամ էր արդեն, ինչ հողագնդում
Լռել էր որոտը ահեղ,
Մի ժամ էր արդեն, ինչ վերքը սրտում
Մեռնում էր զինվորը ջահել:

Հաղթության կանչից աշխարհն էր թնդում՝
Անզոր իր հրձվանքը պահել,
Բայց կռվի վերջին գնդակը սրտում
Մեռնում էր զինվորը ջահել:

Շատ էր երազել այդ օրվա մասին,
Երազել գարուն ու արև,
Եվ սակայն, հասած իր մեծ երազին,
Մեռնում էր զինվորը ջահել:

Շուրջը գարուն էր, ծաղկունք ու մայիս,
Անցել էր գիշերը ահեղ,
Հրձվանքից ժպտում ու ցավից լալիս,
Մեռնում էր զինվորը ջահել:

1945

ԶԻՆՎՈՐԸ ՎԵՐՋԻՆ ԲԱՐՁՈՒՆՔԻ ՎՐԱ

Հեռվում լռել էր վերջին որոտը,
Շուրջը բուրում էր մայիսը տաք,
Իսկ նա շնչում էր գարնան տաք օդը՝
Վերջին բարձունքը ոտքերի տակ:

Բայց մինչ բարձունքն այդ ճամփան երկար էր,
Ճամփան դժվար էր, դառն ու ահեղ,
Նրա սրտի մեջ թե հազար կյանք կար,
Բյուր հազար մահ էր հետքից քայլել:

Նրան ծեծել էր աշնան անձրևը,
Նրան կիզել էր արևը տաք,
Ու նրա դեմքը արդեն դարձել էր
Բրոնզից ձուլած խրոխտ քանդակ:

Եվ քանդակին այդ խոր դրոշմել էր
Վիշտը իր հետքը որպես կնճիռ,
Իսկ հաղթությունը այնտեղ թողել էր
Իր վեհությունը պայծառ ու ջինջ:

Սակայն լռել էր վերջին որոտը,
Շուրջը բուրում էր մայիսը տաք,
Ու նա շնչում էր գարնան թարմ օդը՝
Ոսոխի հողն իր ոտքերի տակ:

Աչքում ցոլում էր բախտի արցունքը,
Իսկ դեմքը խիստ էր որպես քանդակ,
Եվ ինձ թվում էր ոչ թե բարձունք է,
Այլ պատվանդան է ոտքերի տակ...

1947

ԳԻՆՈՒ ԵՐԳԸ

Ճառագի՛ր, արդար,
Մարդասեր, չողա,
Շատանա բարին:

ՆԱԽԵՐԳ

Այնտեղ արտույտն է կախվում ճառագայթից արևի
Ու թրթռում կապույտի ոլորտների մեջ անհաս,
Արևի շիթն է կաթում բարդու կանաչ տերևին,
Ոտից գլուխ աստղոտում բարդու հասակը կանաչ:

Այնտեղ առու կա մաքուր, որ բերկրությամբ կարկաչում
Ու դաղձի ոտքն է թրջում արտասուքով իր ցողի,
Այնտեղ խոհուն ու խոնարհ խաղողի վազն է աճում,
Բարի արմատը խրած բարության մեջ այս հողի:

Եվ այգեպանն է այնտեղ՝ սպիտակած արարիչ,
Բայց արարիչ, որ միայն քաղցրությո́ւն է արարում,
Աշխարհի սերն է այնտեղ, որ աղջիկ է բարալիկ,
Կրծքի մեջ դողն արբունքի, շուրթերին՝ թաց մի այրում:

Եվ այդ հողից, անձրևից, այդ ջրերից զրնգուն
Ու մի ոգուց, որ իր հետ բերում է լույսն այդ առատ,
Այնտեղ ծնունդ է առնում գինին՝ սիրո պես մաքուր,
Եվ այնտեղ սերն է ծնվում՝ գինու նման անարատ:

ԱՅԳԵՊԱՆԸ

Դեմքը թուխ է հողի պես, բայց լույսո՜վ է վարարում,
Արարչական մի լույսով, որ քրտինքից է առել,
Եվ ինձ այնպես է թվում, թե այդ նա է աշխարհում
Առաջին լույսն արարել:

Ելել, կանգնել է մի օր մթնշաղի դեմ կապույտ,
Ելել, կանգնել է գարնան զարթոնքի դեմ գեղեցիկ,
Բահը խրել հողի մեջ, սրբել քրտինքը մաքուր,
Ասել է. «Լո՜ւյս եղիցի»...

Ու լո՜ւյս, ու լո՜ւյս է եղել, վազը լույսով է լացել,
Ու կանաչ լույս է կաթել բողբոջների աչքերից,
Լույսի նման է իջել ու լույսով է շառաչել
Գարնան անձրևը վերից:

Ու լո՜ւյս, ու լո՜ւյս է եղել, ամռան լույսն է վարարել
Եվ կաթել է շիթ առ շիթ տաք սրտի մեջ ողկույզի,
Կարասների մեջ կավե հետո ծնունդ է առել
Գինին՝ աղջիկը լույսի...

ԱՅԳԵՊԱՆԻ ԱՂՋԻԿԸ

Դուրս է եկել, ոտաբոբիկ կանգնել հողին
Ու նայում է, նայում հեռուն,
Հողից խայտանք է բարձրանում, փոխվում դողի
Ու կրծքի տակ քաղցը եռում:

Սև են ծամերն, իսկ երեսից լույս է ծորում,
Բարալիկ է՝ նման վազի,
Այս գարնան հետ աչքերի մեջ նրա խորունկ
Ցոլքն է ուրիշ մի երազի:

Այս գարնան հետ, ախր, շատ է գեղեցկացել,
Դարձել թախիծ ու կարոտանք,
Չթե շապիկն այս գարնան հետ նեՀ է դարձել,
Սեղմել կրծքի ալիքը տաք:

Ինչ-որ դողից թրթռում է թևը հոնքի,
Ու նա աչքերն է լուռ փակում,
Բոբիկ է նա, հողը հրաշքն իր զարթոնքի
Նրա մեջ է շարունակում...

ԱՅԳԵՊԱՆԻ ԽՈՍՔՆ ԱՐԵԳԱԿԻՆ

Գարնան արեգակ,
Արդար արեգակ՝
Ակունք բարության,
Շողա՛ վերստին
Եվ աշխարհն արար
Բարությամբ օծիր:

Արագիլ հավքին
Ավետիք հղիր՝
Հարավից թող գա,
Հյուսի բույնն իր նոր
Քո շողից պոկած
Ծղոտով ոսկե:

Սառույցով կնքված
Ակնաղբյուրն է փակ՝
Լուծանո՛ղ եղիր,
Թող ծիծաղն իր ջինջ
Ղողանջի նորից
Բխումով զվարթ:

Ճառագայթ հղիր
Դեռ ննջող սերմին,
Բողբոջին դեռ փակ.
Թող զարթնի սիրո
Արարիչ խորհուրդն
Ու ցնծա խայտմամբ:

Թող ծաղկած դեղձին
Հարսանյաց մաքուր
Առագաստ դառնա,
Եվ թող վազը հեզ
Մայրության անուշ
Արտասուք հեղի:

Ճառագի՛ր, արդար,
Մարդասեր, շողա՛,
Շատանա բարին,
Բարություն լինի,
Լավություն լինի
Աշխարհում արար...

ԱՅԳԵԲԱՑ

Արեգակի շողերից, ադամանդե ցողերից
Այսօր աչք է կուրանում,
Եվ այգեպանը, վազե՛ր, այսօր ձեր տաք կողերից
Հողե վերմակն է առնում:

Այգեբաց է, ու բացվում, արթնանում եք դուք, վազեր,
Եվ բոլորդ թաց եք, թաց,
Եվ բոլորդ, բոլորդ թուխ մանուկնե՛ր եք ասես
Քաղցր քնի մեջ քրտնած:

Քնից զարթնում եք հիմա, ճմլում աչքերը ձեր փակ
Եվ թևերն եք կոտրտում,
Հետո ձեր շուրջն եք նայում, արևը՝ մեծ, օրը՝ տաք,
Եվ արագիլն է օդում:

Իսկ այգեպանը, վազե՛ր, բացում է ձեզ, ու սակայն
Դողում է սիրտը բարի,
Որ պարտվածի նենգությամբ սառնամանիքը հանկարծ
Ձեր դեմ նոր դավ չլարի:

Բայց արեգակը, նայե՛ք, վստահությամբ արդարի
Բարդու ճյուղին է թառում,
Բացվե՛ք, վազե՛ր, ու ծաղկե՛ք, թող երազին ձեր բարի
Լինի բարի կատարում...

ԾԱՂԿՈՒՄ

Ես չիմացա՝ դեղձենին արշալույսից բոնկվեց,
Թե՞ արշալույսը՝ նրա բոնկումից այս ծաղկած...
Եվ կանգնել է ծառն ահա այգաբացի լույսի մեջ՝
Իբրև փոքրիկ այգաբաց:

Կանգնել վառվում է մենակ, կանգնել վառվում է լռին,
Օ, լռելյայն է հնչում աշխարհում երգն այրումի,
Զով այգաբացն իր ձեռքով ցող է մաղել բոցերին,
Որ խենթ այրումը մեղմի:

Սակայն լուրն այս ծաղկումի, իբրև բարի ավետում,
Այդ ոմ տարավ այդքան շուտ մեղուներին ոսկեթև,
Որ եկել են ու իրենց բոցերի մեջ են նետում՝
Իբրև փոքրիկ ասպետներ:

Ու երգում է ծառը, տե՛ս, քաղցր մի երգ է երգում,
Երգում է երգը սիրո, նվիրումի ու այրման,
Եվ այդ երգից, այդ երգից ջրերն անզուսպ հեկեկում,
Քարը լալիս է անձայն:

Եվ մեղուները ոսկե, և մեղուները զեղուն
Հեռանում են՝ քաղցրության բեռն ու պաշարը կապած,
Ու վառվում է դեղձենին այգաբացի լույսերում՝
Իբրև փոքրիկ այգաբաց:

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

Երկնքով գլոր-գլոր թավալվեց մի խոլ որոտ,
Ու շողաց կայծակ մի շեկ, որ ասես շեղբ էր խոփի,
Նշենին ահից դողաց, ի՞նչ անի ձերմակ շորով,
Իր ձերմակ, իր նոր շորով ո՞ւր փախչի այս ամպրոպից:

Իսկ ամպրոպն ահագնացավ, իսկ ամպրոպն ապստամբեց,
Ամպերում իրար եկան, զարկեցին լույս ու խավար,
Անձրևի խոշոր մի շիթ շողալով հողը շանթեց,
Իսկ հետո սկիզբ առավ մի ցնծուն տեղատարափ:

Իսկ հետո պարան-պարան ադամանդ ու լույս տեղաց,
Ու տեղաց որպես շնորհ, ու տեղաց որպես մաղթանք,
Նշենին, ծնկների մեջ իր ձերմակ շորը պահած,
Անձրևին տվեց իրեն, և անձրևն, ախ, շա՜տ էր տաք:

Իսկ հետո արև եղավ, հեղեղներ անցան ձորով,
Կայծակի բույր կար օդում, կայծակի, լույսի, հողի,
Նշենին արևի տակ մխում էր իր թաց շորով
Ու ժպտում, ժպտում էր լուռ արբունքի քաղցր դողից:

ՎԱԶՆ Է ԼԱԼԻՍ...

Վազն է լալիս այգում, լալիս հուլունք-հուլունք,
Ինչպես աղջիկները հարսնանալուց առաջ,
Կամ աշխարհում, արդյոք, այդքան անզուսպ ու լուռ,
Այդքան ուրախությամբ լեցուն ուրիշ մի լաց:

Այդ լացի մեջ լռին՝ մայրանալու հրձվանք,
Այդ լացի մեջ պայծառ՝ հուզմունքն արարողի,
Այդ լացի մեջ գարնան բուրումն ու շունչը տաք
Ու տարփանքները տաք՝ հասունացած հողի:

Եվ այդ լացին պայծառ, արտասուքին այդ լուռ
Չի՜ հասնի ոչ մի խենթ ուրախության շառաչ...
Վազն է լալիս այգում, լալիս հուլունք-հուլունք,
Ինչպես աղջիկները հարսնանալուց առաջ:

ԱՅԳԵՊԱՆԻ ԽՈՍՔԸ ՀՈՂԻՆ

Դու միակ բեղուն,
Դու միակ օրհնյալ
Ու միակ բարի,
Արբունքից հարբած,
Հարսնացի՛ր կրկին
Արևին այս խենթ:

Հարսնացիր ու մերկ
Առագաստ մտիր
Արևի հետ տաք,
Առագաստը ձեր
Թող զուգված լինի
Մանուշակ ծաղկով:

Թող զուգված լինի
Ուռենու ճյուղով
Ու շաղով առատ,
Եվ վայելքը ձեր,
Տարփանքները ձեր
Թող օրհնյալ լինեն:

Թող օրհնյալ լինեն,
Կատարյալ լինեն
Ու լինեն բեղուն,
Եվ թող կուրծքը քո
Մայրության կաթով
Ու լույսով ցնծա:

Ու թող դուստրը ձեր՝
Ոսկեհեր գինին,
Քո շնորհն առնի,
Արևից առնի
Նրա բոցն անմար
Ու երազը հուր...

Հղացի՛ր, բեղուն,
Մայրացի՛ր, օրհնյալ,
Շատանա բարին,
Բարություն լինի,
Լավություն լինի
Աշխարհում արար:

ԿԱՆԱՉ ՀՐԴԵՀԸ

Հարավքամին է փչում, ու քամուց այդ տաք
Թև է առնում ծառերի ծաղիկն սպիտակ:

Թև է առնում ու հետո իջնում է խոնարհ,
Ծիրկաթիններ է փռում սևահողն ի վար:

Քամին տանում է ձերմակն ու ձերմակի տեղ
Բորբոքում է մի կանաչ, ցոլո՛ւն մի հրդեհ:

– Արագիլնե՛ր, փրկեցեք ձեր տունն ու տեղը,
Գալիս, աշխարհ է բռնում կանաչ հրդեհը:

ԱՄԱՌ

Ամա՜ռ... Հալած ոսկի, լույս է հալած...
Ամա՜ռ... Խելակորույս պայծառություն...
Եվ բարդիներն ահա թևասլաց
Ոտից գլուխ լույս են ու լույսի սյուն:

Ամա՜ռ... Բահի շողքը իր հրդեհով
Արեգակի հսկա աչքն է ծակում,
Ադամանդ է դարձել առուն տեղով
Առուն ծիծաղ ունի իր կոհակում:

Լռության մեջ խորին աշխարհն արար
Մի ձպուռի երգ է միայն լսում,
Իսկ արեգակն արդեն վախերն ի վար
Ցոլուն զմրուխտներ է ընդելուզում:

Հորանջում է լույսից բոցն օշոշի,
Եվ կակաչն է շոգից ուշաթափվում...
Ամա՜ռ, ոսկե արև, ոսկեփոշի,
Ամա՜ռ, զրնգացող լույս ու կապույտ:

ԿԱՐԱՍՆԵՐ

Օ, կարասներ կավե, արևի տակ դրված,
Արևի տակ դրված արեգակներ խոշոր,
Ձեր շաղախն են հունցել Արմավիրից պեղված,
Մեր հեթանոս նախնյաց արևավոր փոշով:

Օ, կարասներ հսկա, ձեր կավեղեն ծոցում
Հովն է հիմա երգում խորհրդավոր մի երգ,
Սակայն լսում եմ ես այդ մեղմ գվգվոցում
Գալիք երգ ու պարի մի փոթորկվող տարերք:

Օ, կարասներ կավե, օ, կարասներ ծարավ,
Ձեր ընդերքում դատարկ պիտի ծփա շուտով
Մի ողջ արևավոր ու հրեղեն հարավ՝
Իր ամառով, շոգով, իր արևի հյութով:

Թրծվեք, օ, լավ թրծվեք շողքով արեգական,
Ձեր մեջ լցվեն պիտի աստղեր, կրակ ու կայծ՝
Մի խենթությո՛ւն, որից սիրտ է պայթում անգամ,
Կավը սիրտ չէ, ավա՜ղ, չի դիմանա հանկարծ...

ՔՐՏԻՆՔԻ ԿԱԹԻԼ

Քրտինքի կաթիլ-շողո՛ւն արշալույս,
Քո մեջ արևն է կրկնում ինքն իրեն
Իր արարչությամբ
Ու իր բարությամբ...

Քրտինքի կաթիլ-ոսկեցո՛ղ դու հույս,
Քո մեջ ապրում է, շողում է քո մեջ
Խորհուրդը լույսի,
Հրաշքն հաճության:

Քրտինքի կաթիլ–դու փոքրիկ, դու տաք,
Բոլոր հույսերից, բոլոր լույսերից
Ամենամաքուր,
Ամենաբարի...

Դու փոքրիկ, բայց երբ ցոլում ես հստակ
Ծեր այգեպանի հոգնած ճակատին,
Ավելանում է
Լո՛ւյսն այս աշխարհի...

ՎԱՂՆ Է ԽՈՍՈՒՄ

Խոնարհ եմ ու հեզ, դալար ճյուղերս
Կպած են հողին,
Երբ ծանրանում եմ, հողին եմ կպչում
Ես ամբողջովին:

Սպասեք սակայն, ու ես ավիշով
Իմ տաք ողկույզի
Կտանեմ մարդուն դեպի աստղերը,
Ոլո՛րտը լույսի:

Ես թախիծ կտամ ու թախծության հետ
Լույսն իմ զվարթուն,
Թախիծն ու լույսն են լոկ սրբագործում
Հողեղեն մարդուն:

Խոնարհ եմ ու հեզ, դալար ճյուղերս
Կպած են հողին,
Բայց ինչ-որ բանով նման եմ Աստծուն՝
Լո՛ւյսն արարողին:

ՇՈԳԸ

Ձյուղից ձյուղ ձգված աննշմար ու սուրբ թելը ոստայնի
Շողում է որպես հրեղեն մի լար,
Լռություն է մեծ, շոգից հալվել է շշուկն իսկ ձայնի,
Ու կարկամել է տերևը դալար:

Երկինքը ջինջ է: Արարատ լեռան ձյուներին մոտիկ
Ճախրում է միայն արծիվը վայրի,
Ասես ելել է, բարձրացել է վեր, որ ահեղ տոթից
Հանկարծ թավարծի թևերը չայրի:

Ժայռերը հեռվում շիկացել, դարձել կիսահալ պղինձ
Ու դողդողում են, երերում կամաց,
Անգույն խարույկներ, անգույն բոցերի լեզուներ է ջինջ
Ծածանում օդում հողը կարկամած:

Եվ լռության մեջ, որ ծովացել է անհունով իր լուրթ
Եվ ծովացել է ոսկով իր շոգի,
Անտես, աննկատ կատարվում է մեծ, խորին մի խորհուրդ՝
Ծնունդ է առնում գինու խենթ ոգին:

Ծնունդ է առնում ինչպես սերը, երգն, արցունքը մանկան,
Ինչպես ներշնչումն, աստղը հրեղեն,
Ծնունդ է առնում այնպես աննկատ ու սովորական,
Ինչպես աշխարհի հրաշքներն ամեն:

ԱՅԳԵՊԱՆԻ ԽՈՍՔԸ ՋՐԻՆ

Բարության բաշխիչ,
Հարության սկիզբ,
Բերկրության պատճառ,
Թող օրհնյալ լինի
Լեռներում կորած
Ակնակունքը քո:

Թող բխումը քո
Ուղխորեն առատ
Ու զվարթ լինի,
Եվ ճամփիդ վրա
Թող խնկեն անուշ
Նունուֆար ու դաղձ:

Շուրթերով պապակ
Փափագում է քեզ
Անձկալի այգիս,
Քեզ իմ հողն է հեզ
Փափագում ինչպես
Ծովինարն այն կույս:

Եկ, բարու բաշխիչ,
Ես ճամփան եմ քո
Ուռենով զուգել,
Եկ, գիշերն ի լույս
Թող այգում իմ զով
Ցնծություն լինի:

Եկ, շնորհդ տուր,
Տուր քո ցողն առատ
Արմատին բարու,
Ողկույզի մեջ շեկ
Դարձիր լույս ու շող
Եվ գինու հրաշք:

Կարկաչի՛ր, բաշխիչ,
Կենարար, շողա՛,
Շատանա բարին,
Բարություն լինի,
Լավություն լինի
Աշխարհում արար:

ԱՌՈՒՆԵՐ

Առուներով այս գիշեր լուսնյակի լույսն է հոսում,
Լուսնյակի լույսն է երգում առուներում այս գիշեր,
Ծղրիդներին խլացրել, միայն ինքներդ եք խոսում,
Գորտե՛ր, հարբած դուք գժեր:

Տերևների մեջ բարդու մութն ու ճաճանչը լույսի
Պահմտոցի են խաղում մանուկների նման չար,
Անհունի մեջ այս գիշեր ցոլանքներ կան փիրուզի
Ու թախծություն մի պայծառ:

Ու թախծություն մի պայծառ, ու ծարավ կա մի կիզող
Քաղցրությունից ծանրացող ողկույզների սրտերում,
Ու երազում են նրանք մխիթարանքը այն զով,
Որ առուներն են բերում:

Ու գալիս են հևիհև առուները վարարած,
Արագածի ձյուների զով արցունքով են գալիս,
Համբուրում են վազերի ոտքերը մերկ ու բարակ
Ու փշրվում քնքշալի:

Ջրվոր տղան է գալիս ջրերի հետ այդ վարար,
(Լուսնկայի արծաթե հայելին է բահն ուսի),
Ախ, սիրտը շատ է կարոտ, ախ, սիրտը շատ է ծարավ,
Ծարա՜վ՝ նման ողկույզի:

Ու չգիտի, չգիտի, որ հոլիկի կտուրին,
Ուր երազներ է հյուսում իր շողերով լուսնկան,
Ինքը երազ է դարձել, ինքը գրկել է լռին
Այգեպանի աղջկան:

Ու երբ լուսաստղն է ծագում, ու շիկնում է այգն ամռան,
Քնում է նա հոգնաբեկ՝ գլուխը թաց մի խուրձի.
Հոգում դեռ աստղ է կաթում, և աստղերից, ով զարմանք,
Գալիս է բո՜ւյրը ուրցի...

ԴԱՐՁՅԱԼ ՎԱՂՆ Է ԽՈՍՈՒՄ

Մի արդար ծերուկ իջել կատարից Արարատ լեռան
Ու այս հովտի մեջ իմ շիվն է տնկել:
Հին է արմատս, իր ջուրն առաջին նա ջրհեղեղյան
Վերջին ցամաքող առվից է ըմպել:

Հին է արմատս և կարմիր՝ նման արյան երակի,
Երակի պես պիրկ ու խորագնա,
Եվ հին է գինիս, մարդու ստեղծած այն սուրբ կրակի
Երկվորյակն է նա:

Իմ էության մեջ այս Արարատյան հողն ու ջուրն առել,
Առել եմ լույսի խորհուրդն անքնին,
Եվ դար ու դարեր ես իմ ինքնության ողկույզն արարել
Եվ արարել եմ իմ ոգու գինին:

Դարեր են եկել ու շառաչելով դարեր են անցել,
Ես՝ հողին կառչած, ապրում եմ ու կամ,
Թեև ողկույզն իմ տառապանքներից չի էլ դառնացել,
Սակայն գինուս մեջ թախիծ կա այնքան:

ՍԻՐՈ ԳԻՇԵՐ

Լուսնկայի դեմ դողում էր բարդին,
Ու բարդու վրա
Տերևներն էին սրտի պես դողում,
Ամեն տերևին թառել էր ասես
Աստղ մի հուրհրան,
Եվ աստղերի մեջ բարդին էր շողում:

Ամեն ինչ այնպես պարզ եղավ ու հեշտ...
Հանկարծ ձեռք մի տաք
Աղջկա բարակ իրանը վառեց,
Գալարվեց նա լուռ, թպրտաց, դողաց
Ու այդ ձեռքի տակ
Տատրակի նման անզոր ծվարեց:

Ղողանջում էին ջրերը կապույտ,
Աստղերն անհամար,
Տերևներն էին անգամ ղողանջում,
Իսկ ծաղիկները աղոթում էին
Այդ սիրո համար
Ու կանչում էին, ո՞ւր էին կանչում...

– Իմ լա՛վս,– ասաց տղան շշուկով,
Ասաց ու լռեց,
Իսկ մնացյալը ջրերը ասին,
Իսկ մնացյալը հովերը ասին,
Աստղերը հրե,
Եվ ասաց ամռան հսկա մի լուսին:

Եվ լուսադեմին, երբ հոգնած, շիկնած
Ու գաղտագողի
Աղջիկը այգու հոլիկը գնաց,
Շուրթերին՝ կրակ, թուխ մազերի մեջ
Հակինթ կար ցողի,
Իսկ չթե շորը շաղերո՞վ էր թաց...

ԱՅԳԵԿՈՒԹ

Աշնանային առավոտն իբրև զվարթ լուսարար
Կանգնել կապույտ տաճարում
Եվ արևի ճաճանչով բարդիների սրածայր,
Հսկա ջահերն է վառում:

Իսկ մի կարմիր աքաղաղ, որ երևի հրդեհվող
Արշալույսից է փախել,
Կանգնել հողե կտուրին և աշխարհի վրա ողջ
Մի կարմիր ճիչ է կախել:

Կարմիր ճիչեր կան օդում, աղաղակներ կան դեղին,
Ու շշուկներ կան խարտյաշ,
Այդ ճաքած նուռն է ճչում, վազն է կանչում խաղողի
Ու փշատին բեռնաբարձ:

Այգեկութ է, այգեկութ... Հողն իր բոլոր ձեռքերով
Պարզել է ողջն, ինչ ունի,
Իր բարությունն է պարզել, պարզել է սեր ու գորով
Եվ տաքությունն այրումի:

Պարզել է բաց ու շռայլ, իմաստնորեն ու հանդարտ,
Ինչպես Աստծո՛ւն է վայել...
Օ, շռայլման, նվիրման աստվածային ակնթարթ,
Դու գոհություն, դու վայելք:

Եվ աղջիկները ահա տաք բարությունն են հողի
Տանում կողով առ կողով,
Զամբյուղներով ուռեհյուս տանում բոցը խաղողի,
Սերն են տանում ու գորով...

Եվ դեռ ճիչեր կան օդում, աղաղակներ կան դեղին,
Ու շշուկներ կան խարտյաշ,
Այդ ճաքած նուռն է ճչում, վազն է կանչում խաղողի
Ու փշատին բեռնաբարձ...

ԳԻՆՈՎ Է ԼՑՎՈՒՄ...

Ուռենու վրա լրած լուսնկան
Իջել է որպես արծաթե սափոր,
Եվ ուռին կարծես աղջիկ է չքնաղ,
Ջրի է գնում առվակի ափով:

Հեռվում մի հոգնած, քնատ մի ջրվոր
Երգում է խումար աչքերի մասին,
Ու նրա երգը ջինջ ու հեռավոր
Երազ է հյուսում գյուղի երազին:

Իսկ այգեպանը աստղերի տակ հեզ
Ննջում է հանդարտ՝ գլուխը հողին,
Ու երազի մեջ լսում, թե ինչպես
Գինով է լցվում սիրտը խաղողի:

ԲԱՐԴԻՆԵՐ

Գուրգեն Մահարուն

Աշնան գույներն են խառնվել
Առուների ջրում հստակ,
Փշատի ծառն է բեռնվել
Ու խոնարհվել է ոսկու տակ:
Հնձաններից բույրն է հորդում,
Այդ բույրերից ասես հարբել
Եվ օրորվում են կապույտում
Սեգ բարդիներ, շեկ բարդիներ:

Թուխ ծամերը գցած հետև՝
Առավոտվա շաղ ու շողով
Մի աղջիկ է անցնում թեթև՝
Ուսի վրա մի լի կողով,
Անցնում, կորչում է նա այգում,
Ասես տեսիլք ու հուշ լիներ,
Եվ օրորվում են կապույտում
Սեգ բարդիներ, շեկ բարդիներ:
Լսվում է երգ մի հեռավոր
Լուսաբացի մաքուր օդում,
Գուցե մի թուխ ջահել ջրվոր
Այդ աղջկան է կարոտում
Եվ կարոտը խառնած երգին՝
Առվի ափով քայլում է վեր,
Եվ օրորվում են ճամփեքին
Սեգ բարդիներ, շեկ բարդիներ:

ՈՂԿՈՒՅԶՆԵՐ

Ողկույզներ են սևահատիկ
Ու ոսկեգույն, շեկ ողկույզներ՝
Գիշերներ են կաթիլ-կաթիլ,
Հատիկ-հատիկ արշալույսներ:

Եվ գիշերվա ամեն կաթիլ
Մի աստղ ունի ծոցում պահած,
Արշալույսը ոսկեհատիկ՝
Բարակ շաղով է շղարշած:

Ողկույզներ են շող ու շաղոտ.
Մեկը սաթե ու մեկն ագաթ,
Ողկույզներ են մթնշաղոտ,
Աստեղնացող ու շողակաթ:

Արեգակ կա մեկի այտին,
Մեկի այտին՝ շիկնանք մի կույս,
Գիշերներ են կաթիլ-կաթիլ,
Արշալույսներ՝ ողկույզ-ողկույզ:

Եվ բոլորի մեջ՝ անձրևի
Վաճիտ շիթեր ու արեգակ,
Եվ բոլորը՝ սրտի՜ ձևի,
Եվ բոլորը՝ սրտի՜ պես տաք:

ԱՇՈՒՆ Է...

Ոսկե տերև է հոսում առվի վճիտ ջուրն ի վար,
Ոսկե տերև է հոսում, ոսկե փշատ ու ընկույզ,
Արդեն աշուն է, աշուն, աշուն է շեկ ու շռայլ,
Ու կապույտի մեջ աշնան՝ նորից երգն է զրնգում:

Արդեն աշուն է, աշուն, աշուն է շեկ ու շռայլ,
Իմ լեռնաշխարհն է շողում իր ոսկեղեն փառքի մեջ,
Արևը սուր ճաճանչով ճեղքել է սիրտը նռան,
Ոտից գլուխ հրդեհել բարդիները փողփողէջ...

Բռնկվել է նռնենին, հագել բեհեզ ու կրակ,
Բռնկվել են, բռնկվել դեղձենիները շարքով...
Հրդեհվո՞ւմ են այգիներն, ու փշատին է մենակ,
Որ հրդեհից այդ բոսոր ազատվել է հրաշքով:

Արդեն աշուն է, աշուն... Քաղցրության տակ իր բեռան
Մի բռնկված, մի ծոցվոր, ոսկեվոր դաշտ է հևում,
Նորից աշունն է վառվում մինչև լանջերը լեռան
Եվ իմաստուն այրումով քաղցրություն է հեղեղում:

ԱՅՍՕՐ ԽԱՂՈՂ Է ՃՄԼՈՒՄ...

Ոտքերի տակ իր բոբիկ ասես աստղեր է առել
Ու պարո՞ւմ է, պարի մեջ բարակ իրանն օրորում,
Եվ ոտքերից նրա մերկ աստղի կաթիլք ու արև,
Շիթ-շիթ արև է ծորում:

Այգեպանի թուխ աղջիկն այսօր խաղող է ճմլում,
Ու սրտիկն է թրթռում աստղի նման ու զանգի,
Ոտքերի տակ՝ ծփացող եռք է, կայծ է ու փրփուր.
Գինին է իր հարսանքի:

Աշնանաբույր զգեստի չթե փեշը հավաքել,
Ծնկներից վեր է առել ու քիչ էլ վեր ավելի,
Ջրվոր տղան է տեսել, ու սիրտն, ու սիրտն է ծակել
Ինչ-որ անուշ ցավերից:

Ոտքերի տակ իր բոբիկ ասես աստղերն է առել,
Ասես այդ սիրտն է առել ու ճմլում է, տրորում,
Եվ ոտքերից նրա մերկ աստղի կաթիլք ու արև,
Շիթ-շիթ արև՞ է ծորում:

ԳԻՆԻՆ

Արդեն ծփում է, վառվում է արդեն նա կարասներում,
Ինչպես թոնրի մեջ բոցերը խարտյաշ,
Ինչպես արթնացող առյուծի շեկ բաշ՝
Փշաքաղվում է, պեծին է տալիս, վառվում ու եռում:

Պղպջումի մեջ բուրմունք կա հողի ու աստղի ցոլանք,
Հողի և աստղի խորհուրդ մի վերին,
Որ մարդու սիրտը առած թևերին,
Կարող է տանել դեպի աստղային անսահման մի լայնք:

Նրա մեջ՝ ինչ-որ անհասկանալի, անքնին ոգի,
Գարնան անձրևի թախիծը մաքուր,
Ամռան արևի երազանքը հուր
Եվ կի՛րքը, կի՛րքը մեր Արարատյան հողի ու շոգի:

Նա՝ սևահողի ու արեգակի դաշինքն անարատ
Եվ ներշնչանքի քույրն է նա բարի,
Նա գիտե ձամփան մի այլ աշխարհի,
Ուր բարությունը առատ է այնքան, ու սերն է առատ:

ՄԱՌԱՆԸ

Երբ նրա դուռը բացես, քեզ ընդառաջ կվազի
Խոտումներով բռնկված խարտյաշ ալիքը աշնան,
Այնտեղ ծիծաղն է հողի, այնտեղ բերկրանքն է վազի,
Տո՜ննն է այնտեղ քաղցրության:

Ողկույզները՝ հրեղեն ասուպներից գոյացած,
Հսկա ջահեր են կարծես, որ կախվել են օձորքից,
Ասուպներ են, որ կախվել ու չեն ընկնում սակայն ցած,
Որ վառվում են ու սակայն չեն հատնում կայծ ու շողքից:

Ապա նռներն են կախվել՝ մի-մի կարմիր մոլորակ,
Ու եթե մեկն ընկնի ցած ու փշրվի հատակին,
Շուրջը աստղեր կցրի, կայծկլտումներ ու կրակ՝
Հողե հատակը փոխած ամռան աստղոտ երկնքի:

Ու սերկևիլն է այստեղ կախվել ողկույզ առ ողկույզ՝
Աշնան վերջին արևի հատնող ցոլանքը վրան,
Ծիրանի չիրն է փռվել իբրև թանձր աստղալույս,
Ու փշատը՝ մի այտին շիկնությունը հուրհրան:

Եվ լավաշները դեզ-դեզ, լավաշները նորաթուխ,
Որ գրտնակի տակ ընկած լուսնկաներ են պայծառ,
Իրենց բուրմունքն են խառնել բուրումներին այս հորդուն,
Սրբագործել են մառանն իբրև օրհնանք մի արդար:

Եվ մառանն է շողշողում՝ չորս պատերի մեջ պահած
Գարնան անձրևը առատ, ամռան արևը բարի,
Արտի ծփանքը խաղաղ, այգու ծիծաղը կանաչ
Ու բարությո՜ւնն աշխարհի...

ՀԱՐՍԱՆԻՔ

Այս գիշեր երգ է ու տոն... Եվ բարդին հարբել այգում,
Լիրն առած լուսնկայի արծաթե դափն է զարկում:

Իսկ աշնան զնգուն մի հով սարերի ծոցից փախել
Ու հարբած այգու վրա սրնգի երգ է կախել:

Երկնքից ընկնում աստղերն ու գինու բաժակներում
Գինու հետ ցոլք են տալիս, գինու մեջ հալված՝ եռում:

Սպիտակ քող է առել թուխ աղջիկն այգեպանի,
Թարթիչներն ահով կախել, չգիտի, ախ, ինչ անի:

Օրորվող լույսերի մեջ աշխարհը կա ու չկա,
Հարբել է աշնան գիշերն, ու հարբել սիրտն աղջկա.

Հարբել է, անուշ հարբել, թվում է պիտի մարի,
Իսկ դափը զնգում է զիլ ու կանչում հարսնեպարի:

Նա տեղից ելնում է լուռ, կոպերը ահով փակած,
Ախ, ասես ծառ է նշի՝ սպիտակ ծաղիկ հագած:

Եվ հանկարծ քամին խլում ուսերի շղարշը նուրբ,
Գիշերվա կապույտի մեջ ձգում է իբրև ասուպ:

Մանրաքայլ առաջ գալիս, բացում է կոպերը փակ,
Կոպերին, աստղերի պես, հարսնության արցունքն է տաք:

Հարսնության արցունքն է տաք, հարսնության արցունքն է ջինջ,
Այդ լացից քաղցր ու պայծառ երևի չկա ոչինչ:

Այդպիսի արտասուքով, արևին հարսնանալիս,
Հիշո՞ւմ եք, գարնան մի օր խաղողի վազն էր լալիս:

Ու լալիս, լո՜ւյս է լալիս թուխ աղջիկն այգեպանի,
Սրտիկը շատ է տխուր, շատ ուրախ, ախ, ի՞նչ անի...

Ու շվար աղջիկն հանկարծ ետ նետում գլուխն արագ,
Պարզում է թևերն իր բաց, ճոճում է մեջքը բարակ:

Եվ հանկարծ ոտից գլուխ դառնում է նազանք ու սեր,
Դողում է կուրծքն, ու կրծքին դողում են մի զույգ հյուսեր:

Եվ հանկարծ աշխարհն է ողջ քարանում հրաշքի դեմ,
Չեն թարթում աստղերն ասես, որ հրաշք պարը դիտեն:

Եվ միայն հարբած բարդին օրորվում նորից այգում,
Լիրն առած լուսնկայի արծաթե դափն է զարկում:

ԱՅԳԵՊԱՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՐԴՈՒՆ

Բարության վազից
Տքնությամբ քամած
Իմ արդար գինին
Վաստակած հոգուս
Բերկրությամբ զվարթ
Առաքում եմ քեզ:

Այս գինու մեջ սուրբ՝
Արևի նշխար
Եվ հողի մասունք,
Հոգևոր մի երգ,
Անքնին մի հուր,
Անմեկին ոգի:

Այս գինու մեջ սուրբ՝
Աստղերից իջած
Մի աստղոտ երազ
Ու թախիծ մի ջինջ,
Որ մխալ գիտե
Արարիչ լույսով:

Գինի չէ, օ, ոչ,
Արևի, հողի
Ու իմ երգն է սա,
Նվիրում է սա,
Ողջակեզ մի բոց,
Մի խոնարհ այրում:

Բա՛ց սեղանը քո,
Եվ սեղանդ բաց
Թող գինով ցնծա,
Որ խաղաղ հոգուս
Բերկրությամբ զվարթ
Առաքում եմ քեզ:

Երազով հարբիր
Ու հարբիր լույսով՝
Շատանա բարին,
Բարություն լինի,
Լավություն լինի
Աշխարհում արար:

ՎԵՐՋԵՐԳ

Այսօր բարակ եղյամից ձերմակել են թուփ ու սեզ,
Ու պաղ քամին ծառերի վերջին ոսկին է թափում,
Աշնան երկինքը այսօր թախծության երգ է ասես,
Եվ առուները բարակ՝ հեկեկանքներ են կապույտ...

Այգեպանը այգու մեջ այսօր տերև է այրում,
(Արդյոք ծխի՞ց է կոպին արցունքի շիթը այդ ջինջ),
Իսկ ծուխը, ծուխն օդի մեջ այնպես անհետք է հալվում,
Որ կարծես տեղը չկար ու չէր եղել, ախ, ոչինչ:

Չէին եղել ծաղիկներ՝ լի արցունքով ու լույսով՝
Ամեն մեկը մի մաքուր հարսանեկան առագաստ,
Հետո աստղերը վազից չէին կախվել ողկույզով,
Ու չէր վառվել նոնենին՝ արևներով ճառագած:

Սակայն անցավ ամեն ինչ... Թաց տերևներն են մխում,
(Արցունքիդ շիթն, այգեպան, լոկ ծխից չէ երևի):
Գուցե ոչինչ ավելի թախծալի չէ ու տխուր,
Քան մերկ այգին ու վերջին թրթռոցը տերևի:

Ու դու տխրում ես, աշուն, սակայն իզուր ես տխրում,
Կարասներում ետմահու քո կյանքն ու փառքն է բարի...
Օրհնյա՛լ լինի թող հավետ նա, ով սրտից իր փխրուն
Երգ ու գինի է քամում ու շնորհում աշխարհին:

1964-1965

ՏԱՂԵՐ

Շնորհիր նորից այն խոսքը միակ,
Որով գնում են խոստովանության...

ՏԱՂ ՆԵՐՇՆՉՄԱՆ

Ինձ շռայլորեն շնորհիր նորից
Խոսքն այն նախնական,
Ուր մարմին բառը բուրում է կավով ու արեգակով,
Եվ ոգի բառը թրթռում է դեռ խորհրդով լույսի:

Այն բառերը տուր,
Որ ցորենի պես արդար են ու տաք,
Եվ այն բառերը, որ ցոլցլում են աստղերի նման...
Եվ իրար խառնիր դու աստղ ու ցորեն,
Որ երկինք ու հող խառնվեն իրար:

Այն բառերը տուր,
Որ վայրկյանի պես հսկում են վրաս,
Ու հսկումի տակ գտնում ենք իրար առեղծվածն ու ես:

Եվ այն բառերը,
Որ երակներիս թախիծը հանկարծ փոխում են լույսի
Եվ ինձ դարձնում
Այնքան համասփյուռ ու անանձնական,
Որքան աստղալույսն ու որքան քամին,
Որքան անձրևը ու որքան խոտը...
Այն բառերը տուր, որ վերծանում են,
Թե ինչ է ասում ծղրիդն իր երգով, աստղը՝ լռությամբ:

Եվ այն բառը տուր,
Որ թղթի ձերմակ թախծության միջով
Գնում է որպես ծարավից այրվող անապատական
Եվ որոնում է կարկաչը ջրի,
Եվ որոնում է հեռաստանների թրթիռը կանաչ:

Շնորհիր նորից այն խոսքը միակ,
Որով գնում են խոստովանության...

ՏԱՂ ԱՆԱՆՁՆԱԿԱՆ

Եվ ես ասում եմ.
Օրհնյալ են նրանք ու երանելի,
Ովքեր օրերի թախծության միջով
Ընթանալ գիտեն դեպի ակունքը,
Որ խղճի պես է, հավատի նման...

Եվ նրանք, ովքեր հավքի թևի մեջ
Զգում են իրենց սեփական հոգին
Եվ թպրտում են կապույտի տենչով
Ու հեռուների կարոտով մաքուր:

Եվ նրանք, ովքեր
Չվող հավքերի հեռու կանչերում
Եվ սոսափներից նրանց թևերի
Աշխարհի տխուր, ամենատխուր երգերն են լսում:

Եվ նրանք, ովքեր
Գիտեն վայելքը խոստովանության
Եվ ծանրությունը գիտեն արցունքի,
Եվ գիտեն նրա թեթևությունը:

Եվ նրանք, ովքեր զարմանալ գիտեն
Խոտով, անձրևով ու ճառագայթով
Եվ գիտեն քամու շշուկների մեջ
Վաղուց մահացած մարգարեների հառաչը լսել:

Եվ նրանք, ովքեր
Վերծանել գիտեն ու գիտեն կարդալ
Անծանոթ կնոջ գաղտնագիրը լույս,
Եվ նրանք, ովքեր չգիտեն կարդալ ու մոլորվում են:
Եվ նրանք, ովքեր
Արևածագը խմում են որպես ներշնչման գինի
Ու մայրամուտին գեղեցկանում են ու սրբանում են,
Ինչպես վաստակած սերմնացանները...

ՏԱՂ ԱՄՊՐՈՊԻ

Նախ որոտում ես, խոստովանում ես ասես աշխարհին,
Խոստովանում ես կայծակիդ մաքուր, հրեղեն տողով...
Քո որոտի մեջ ցասումիդ մութն ու ընդվզումն է հին,
Եվ կայծակիդ մեջ քո սիրո լույսն է իր քնքուշ դողով:

Եվ այդ սիրո դեմ ցածում խոտերը խոնարհվում են վար,
Եվ այդ սիրո դեմ հողն է սարսռում,
Եվ այդ սիրո դեմ խռովում կաղնու սաղարթը խավար,
Մերթ շառաչում է ու մերթ սպասման տագնապից լռում:

Եվ վար է ընկնում լույսով թաթախված կաթիլն առաջին,
Եվ վար են ընկնում տաք արտասուքներ,
Եվ սրտի նման երկինքը փլչում սիրո հառաչից,
Տեղում է աստղի, կապույտի, ամպի մաքուր մասունքներ:

Եվ օրորվում են, տարուբերվում են պարտեզներ կախված,
Եվ օրորվում են, տարուբերվում են թափանցիկ զանգեր,
Եվ վար է հոսում երկինքն անհունի խորհրդով շաղված,
Եվ վար են հոսում տաք երազանքներ...

Եվ կաղնին ահա կայծակի հանդեպ իր կուրծքն է բացում,
Լավ է մի վայրկյան ապրել բոցի պես, քան փտել դարեր.
Հրդեհվում է նա, կրակե թևով երկինք համբարձում,
Իբրև կրակի մաքուր մարգարե...

Եվ աշխարհն արար ասես սրբորեն իջնում է ծունկի,
Եվ աշխարհն արար ասես երգում է փառք ու գոհություն,
Եվ աշխարհն արար դառնում է լույսի, ցողի, արցունքի
Մի զարմանալի արարողություն:

Հետո ամեն ինչ կիսով կապույտ է ու կիսով ոսկե,
Հետո ջրերն են տխուր ծիծաղում և ուրախ լալիս,
Իսկ մի թուխ արտույտ երկինք բարձրացած օրհներգում է քեզ
Եվ տրտնջում է, որ ուշ-ուշ ես դու մեզ այցի գալիս...

ՏԱՂ ԿԱՐՈՏԻ

Գարնան օրն ասես
Դեղձենուց պոկված ծաղկաթերթ էր թաց,
Գարնան օրն ասես
Անձրևի վերջին արտասուքն էր ջինջ...
Մի խարտյաշ աղջիկ ամեն ինչ առել,
Տանում էր անդարձ
Ու չէր շնորհում, չէր տալիս ոչինչ:

Այդ գարնան օրը,
Այդ աղջիկն ես դու:

Այնտեղ՝
Քարափի պղնձե շուրթին
Մի վանք կար ավեր,
Ու վանքից ներքև մի հովիտ կար տաք,
Եվ այդ տաք հովտի կանաչների մեջ
Լուռ արածում էր մի ալ հովատակ:

Այդ հովիտն ես դու,
Այդ հովատակը:

Վերում թափառող ամենամաքուր երազը առել,
Փշրում էր Աստված
Ու վար էր թափում իբրև լույս մի ձյուն...
Առաջին ձյունն էր...
Իջնում էր թեթև
Ու բերում իր հետ
Խոստովանելու մի տաք ցանկություն:

Այդ մաքուր ձյունն ես,
Այդ ցանկությունը:

Եվ ինչ-որ մեկը ասես ականջիս
Հանկարծ դնում է ծովային խեցի...
Ու ծովն է խշշում,
Ու ծովի ափին
Այդ ո՞վ է այդպես մերկ ու գեղեցիկ...

Դու ես երևի,
Այդ դու ես նորից:

Կար մի խուլ ձորակ,
Բարդիներ կային,
Եվ մի ջրաղաց, որ լուռ էր վաղուց,
Եվ մի ջրաղաց, որ կքել ցավից
Ու իր թախիծն էր մեն-մենակ աղում:

Այդ ձորակը խուլ,
Այդ թախիծն ես դու:

Այդ ե՞րբ էր,
Որտե՞ղ...
Ժայռի բռան մեջ աղբյուր կար մաքուր,
Մեջը երկնքի ու արեգակի
Բեկորներ էին փշրելով թափել,
Դու կարող էիր ծնկաչոք իջած,
Մաքրություն,
Կապույտ
Ու լույս հավաքել:

Այդ աղբյուրն ես դու:

ՏԱՂ ԱՌԱՋԻՆ ՁՅԱՆ

Իջնում ես նորից...
Բայց այն օրերին ուրիշ էիր դու,
Դու այն օրերին ասես ավելի սպիտակ էիր,
Ավելի թեթև, ավելի մաքուր,
Դու այն օրերին ասես տաք էիր:

Իջնում էիր դու...
Եվ անցնում էր նա թեթև ու հպարտ,
Եվ անցնում այնպես, ասես կրկնում էր քո նազանքը, ձյուն,
Նա, որ աղջիկ էր սեթևեթ ու չար,
Բայց ուներ քնքուշ մի ծաղկի անուն:

Եվ ամբողջ օրը շրջում էի ես մենակ ու տրտում,
Եվ ամբողջ օրը ձերմակ երազդ իջնում էր ծունկի,
Եվ ամբողջ օրը շուրթերիս վրա հալչում էիր դու
Ու թողնում այնտեղ համը երկնքի:

...Ես շատ եմ ապրել...
Կորստի ցավ կա իմ երակներում,
Եվ կարոտներ կան,
Որ թաքուն լալիս ու տնքում են խուլ
Եվ կանչում են ինձ, կանչում այն հեռուն,
Ուր դու ես իջնում
Առաջվա նման թեթև ու տխուր:

Գնամ, մոլորվեմ
Քո այդ սպիտակ թեթևության մեջ,

Որ առաջվա պես ինձ ոտից գլուխ քո լույսը կնքի,
Որ շուրթիս վրա հալիլի նորից քո փաթիլն անեղծ
Ու թողնի այնտեղ համը երկնքի...

Գնամ, մոլորվեմ...
Ու իմ քայլերից թող զարթնի հանկարծ
Քո հողմն սպիտակ, որ քուն է մտել դաշտում ամայի,
Եվ կորուստներիս ու կարոտներիս կսկիծը առած,
Թող վայի մենակ ու տխուր վայի...

ՏԱՂ ՀՈՂԻ

Եվ այրող մի տենդ իր կարմիր, դեղին, կապուտակ ցոլքով
Ինձ պոկել հողից ու դեպի վերին ոլորտն էր տարել...
Մերթ ընդ մերթ միայն աստղափոշին էր սուրում իմ կողքով,
Սուրում և սակայն չէր կարողանում իմ տենդը մարել:

Եվ սուրում էի... Ամպեր չկային, ու ամպրոպ չկար,
Չկար անձրևի հրաշքը մաքուր, չկային ջրեր,
Եվ չկար քամի, որ կապույտի մեջ տխուր զրնգար,
Եվ չկար արտույտ, որ արևի մեջ իր թևը խրեր:

Եվ չկար բուրմունք... Չկային բույրեր հողի ու խոտի
Եվ լուսաբացի ծխի հետ ձգվող հացի բույրը տաք,
Եվ չկար բույրը այն ամառային մեծ առավոտի,
Որ արևի մեջ բզզում է իբրև ոսկեղեն փեթակ:

Չունեի մարմին... Ես, որ հունցվել եմ մի բուռ հում կավից
Եվ ոգու ցավից ծանրացել այնքան,
Այնքան ծանրացել հրաշքի, լույսի, ցողի ծարավից,
Որ ծանրությունն այդ տարել եմ իբրև փառքն իմ անձնական:

Վար էի նայում ու տեսնում հողի կնճիռները խոր,
Որ լույսով լեցուն՝ ինձ թվում էին հանձարեղ տողեր,
Եվ տեսնում էի ես անդունդներն ու վիհերն ահավոր,
Որ կայծակների շեղբերն են թողել:

Եվ տեսնում էի կապույտ գետերի երակները ձիգ,
Որ մոր ձեռքերի երակներ էին մաքուր ու մաշված,
Եվ տեսնում էի լուսապսակը նրա գեղեցիկ,
Նման պսակին, որ ուներ գլխին որդին իր խաչված:

Եվ ես՝ մոռացած, թե որքան ցավ ես պատճառել ինձ, հող,
Ու որքան կսկիծ ու որքան ծարավ,
Երազում էի քո անձրևների լույսը արարող
Եվ քո վիհերի խորհուրդը խավար:

Երազում էի քո շոգը դեղին, շունչը քո բուքի,
Քարեքար զարկվող առեղծվածներիդ տանջանքը ցավոտ.
Համը քո աղի, համը արցունքի,
Իմ ծանրությունը, սերն իմ հանցավոր:

Ճշնջում էի՝ դու սև, և սակայն քո սև ծալքերում
Մանուշակների երազն է կապույտ,
Քո մեջ հանգչում է գերեզմանների թախծությունը լուռ,
Եվ սակայն վրադ արտույտն իր երգով անհունն է չափում:

Եվ անհունի մեջ օրհներգում էի, օրհնում էի քեզ,
Դու հավետ ծարավ, հավետ ճաքճքած.
Հավետ ցրտահար, հավետ տոթակեզ,
Հավետ ոտքի տակ, բայց հավետ՝ Աստված...

ՏԱՂ ՁՆԾԱՂԿԻ

Հողի մեջ քնած գարունն արթնացավ առավոտ կանուխ
Ու դստերն ասաց.
– Ելիր, ձնծաղիկ...
Ծաղիկը ելավ, շուրջը ձյուն է դեռ ու դող է քամու,
Իսկ ինքը մենակ, ինքը՝ մերկ ու բաց, ինքը՝ բարալիկ...

Եվ կանգնեց այդպես նա աշխարհի դեմ մենակ ու մաքուր,
Եվ կանգնեց այդպես՝ փխրուն, արցունքոտ ու ձառագայթող,
Վերից կարկուտը սպառնաց նրան գնդակով իր կույր,
Ու վարից հողմը՝ իր ծանր թաթով:

Եվ կանգնած այդպես ցուրտ հողմերի մեջ, երազում էր նա.
Շուտով, ախ, շուտով գարուն կլինի ու կանաչ թրթիռ,
Իր հետքով կգա մանուշակների ծփանքը անափ,
Ու քարի կրծքին կվառվի մասրին իբրև ալ հրթիռ:

Ձյունի արցունքը, հողի գոլ կանչով սարերից եկած,
Ծիծաղ կդառնա, կանաչ ծիծաղով հողից կհառնի,
Դեղձին կբացի մաքուր ասագաստն իր հարսանեկան
Ու հարբած մեղվին իր ծոցը կառնի:

Զանգակ ծաղիկը կնազի՝ կապույտ ծարիրը կոպին,
Եվ կապույտ նազով խոստումներ կտա սրան ու նրան,
Ձմրուխտ կհագնի ու ալ կհագնի քարափն իսկ կոպիտ՝
Ջրվեժի ձերմակ օրհնանքը վրան:

Ու տոն կլինի... Կզնգա աշխարհն արևի զանգից,
Հողը կդառնա հաց մի անսպառ, ու լույսը՝ գինի...
Բոլորը կգան, բոլորը կգան այդ խրախճանքին,
Բայց ինքը, ավաղ,
Մեռած կլինի...

ՏԱՂ ՆԺՈՒՅԳԻ

Սլանում ես դու հեռու լեռների կանաչ երիզով,
Ուր արշալույսը շող ու շաղով է սեզերը օծել,
Քո աչքերի մեջ այդ արշալույսի տխրությունն է զով,
Կողերիդ վրա՝ հալիլող, մարող-բռնկող բոցեր:

Սլանում ես դու, սուրում հովի հետ, բայց ո՞ւր, չգիտես...
Ու ծառս ես լինում, ու հողն ես փորում, ու խուլ վրնջում,
Հետո գլխահակ կանգնում ամայի լեռներին ի տես,
Եվ պայտերիդ մեջ նորից կայծերն են թախծելով ննջում:

Իմ հպարտ, իմ հեզ, բաշդ հիշում է սույլը հողմերի,
Ականջներիդ մեջ քամին է զնգում ցնծության ձիչով,
Ու երազի մեջ սուրում, սլանում, թռչում ես էլի
Առավոտների ու կապույտների մաքրության միջով:

Ու երազիդ մեջ ձեռքերն են շոյում պարանոցդ տաք,
Շոյում աչքերիդ տխրությունը հեզ, շոյում քո ագին,
Դու երազի մեջ կանգնում ես հետո լուռ ու գլխահակ
Ու լաց ես լինում ընկած ասպետիդ արնոտ դիակին:

Իմ տխուր, իմ լավ, այս ի՜նչ խոշոր է արտասուքը քո,
Ինչ քնքշանքով ես թեքել դու ահա պարանոցդ ձիգ,
Եվ բաշդ, բաշդ, որ վար է հոսում անձայն մի սուգով,
Ասես սիրեցյալ կնոջ վարսերի սուգ է գեղեցիկ:

Իմ հավատարիմ, իմ տխուր, իմ լավ, հիմա լեռներում
Թափառում մենակ, աչքով չափում ես անդունդը դեմի,
Եվ երբ կայծակն է, բնազդիդ նման, երկինքը ձևում,
Դու քո արյունը, քո ընդվզումն ես հիշում վաղեմի:

Ու երբ ձորերից ելնում, փռվում է գիշերը խավար,
Ու հեռվից հեռու, երբ չոր մետաղի սուլոց է գալիս,
Դու բաշդ ցնցում, դու վրնջում ես բարձունքներն ի վար,
Եվ քո աչքերը բարձունքներն ի վար աստղեր են լալիս...

ՏԱՂ ԿՆՈՋ

Դեռ չգիտեի ես այն ժամանակ, որ Տերը մի օր
Քեզ իմ կողից է ստեղծել այդպես, իմ կողի ցավից,
Գիտեի միայն, որ քո աչքերի տխրությունը խոր
Իմ երազից է ստացել իր լույսն ու ցոլքը ծավի:

Դու այն ժամանակ հյուսեր ունեիր երկար ու ոսկե
Եվ չթե մի պարզ զգեստ ունեիր դու այն ժամանակ,
Ու չգիտեիր դու սիրո խոսքեր,
Ինքդ, դու ինքդ սեր էիր համակ:

Գինով էի ես... Իմ գորովանքից ասես հատնելով,
Բարդու կատարին շողում, դողում էր լուսաստղը մաքուր,
Ես քո օձիքը, քո կուրծքը բացի իմ տաք մատներով,
Եվ նրա լույսը թախծություն դարձավ ու ծարավ մի կույր:

...Անապատների հեռվում են ծնվում միրաժները զով
Ու կանչում են քեզ ու քեզ կանչելով, իրենք հեռանում,
Քամին ելնում է, քամին աչքերդ է ծեփում ավազով
Ու տանում է քեզ ու այդպես ծարավ ո՜ւր է քեզ տանում:

Կանգնել էիր դու... Եվ կանգնել էիր հեզ ու հպատակ,
Բայց աչքերիդ մեջ մշուշ կար արդեն, թափառիկ մի ամպ,
Առաջվա նման փխրուն էիր, տաք,
Բայց շիկնել էիր ու շիկնել դավող մի գեղեցկությամբ...

Եվ տվայտում էր երակներիս մեջ տխրությունը ծեր,
Խանդն էր արթնանում իր մութ անձավում,
Գիտեի արդեն՝ քեզ իմ կողից է Տերը ստեղծել,
Բայց չգիտեի՝ ինչո՞ւ էր այդպես իմ սիրտը ցավում...

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՂ ԿՆՈՋ

Փարիզյան գիշերն ասես թե կին էր՝ լուսե լանջը բաց,
Ու լանջի վրա՝
Գոհարի, ոսկու, մարջանի շարեր,
Ու թվում էր, թե ուր որ է, վերջին շղարշը նետած,
Մերկանար պիտի
Ու պիտի պարեր...

Իսկ մայթերն ի վար այդ նրանք էին՝
Բաց ու մեղսական,
Շպարի շուքով կանչող,
Սակարկող,
Անդող ու անկայծ...
Լսել էի ես ու մտքով տեսել... Չիմացա սակայն,
Թե ինչը բռնեց
Ու ծառի նման ցնցեց ինձ հանկարծ...

Կինը՝ և այսպես...
Կի՛նը՝
Գաղտնիքը,
Կրակե ուրուն,
Կի՛նը՝
Շաղախված լույս ու խորհրդով...
Թե համբուրեիր,
Քեզ թվար պիտի լույս ես համբուրում,
Կամ օրհներգության խոսքեր ես ասում երկյուղած շուրթով:

Կի՛նը...
Հրա՛շքը...
Ու եթե հանկարծ մերկ ծունկը բացվեր,
Պիտի արյունդ ճչար տագնապով

Ու կարոտդ լար,
Եվ օրդ պիտի արևածագի լույսով լվացվեր,
Եթե օձիքից կրծքի ծվենը հանկարծ ցոլցլար:

Իսկ այստեղ ահա
Գաղտնիքն ինքն իրեն մայթերին փռել,
Հոգեվարում է կրունկների տակ,
Իսկ այստեղ ահա
Խորհուրդն է մեռել,
Ու դողն է մեռել,
Թաղվել,
Շպարը դարձրած պատանք:

Իսկ այստեղ ահա
Կանացի շիկնանք – հրաշքն է մեռել,
Սարսուռն է մեռել,
Սկիզբն է մեռել...
– Մարդկությո՛ւն, ոտի՛...
Ինչպես կելնեիր,
Թե իմանայիր, որ այսուհետև
Էլ չի ծագելու
Լույսն առավոտի:

Ապակու միջով
Պաղ արյունի պես նեոնն է հոսում.
Չար քմծիծաղ է
Ու ցուրտ ծիծաղ է նա դարի դեմքին...
Իսկ սրանք ահա
Նազում են անկիրք,
Տխուր աղերսում,
Եվ ինչ-որ մի տեղ նրանց սրտի մեջ
Լալիս ես դու, Կի՛ն...

ՏԱՂ ԱՆԾԱՆՈԹՈՒՀՈՒ

Եվ այս տաղն ահա քեզ պիտի ձոնեմ,
Քեզ, որ հայացքիդ մեն մի շողով ես օծել իմ ուղին,
Որ եղել տարբեր, եղել բյուրանուն, եղել բազմադեմ,
Բայց մի անուն ես ունեցել միայն՝ Անծանոթուհի...

Եվ պատահել է, որ քո հայացքը զրույց է եղել,
Հավիտենական սկզբից ձգվող հայացք մի թովիչ,
Դողացել դանդաղ ու խոնարհվել են կոպերդ թեթև,
Թաղելով անդարձ առեղծվածներիդ լույսը վրդովիչ:

Եվ պատահել է, որ մինչև անգամ դու ետ ես նայել,
Ու նայել հլու, նայել քնքշության թաքուն կանչերով,
Բայց և նույն պահին դարձել ես հպարտ ու ինքնավայել,
Անցել, քայլիդ տակ իմ հիացումի լույսը տանջելով:

Դու մերթ ծովային կապույտից առած շոր ես ունեցել,
Եվ քո նազանքը եղել է ալիք,
Դու հեռվից եկել, մի վայրկյան միայն ափերն իմ ծեծել
Ու հեռացել ես՝ տանելով անհայտն ու զարմանալին:

Ու մերթ քո մեջքի գալարումն ասես բոցից ես առել,
Բոցից ես կտրել շորը քո հագի,
Լիլիթի նման անցել, փողոցը ծայրեծայր վառել
Ու հեռացել ես՝ քեզ հետ տանելով գյուտը կրակի:

Ու մերթ գիշերվա սևի թավիշն ես ասես դու հագել,
Այդ սևի միջից լույսով է բխել պարանոցդ տաք

Ու մատնել է նա, թե քո հրաշքը ինչպես կծագեր,
Թե սևն այդ սահեր ու քո ուսերից ընկներ ոտքիդ տակ:

Եվ սկսվել է հավերժից ձգվող զրույցը մեր հին,
Եվ սկսվել է ալեբախումը լույսի ու մութի,
Անցել ես հպարտ՝ դու՝ հազարանուն Անծանոթուհիդ,
Արար աշխարհը փոխելով հարբած գլխապտույտի:

Անցնում ես այդպես, այդպես գնում ես, անդարձ հեռանում,
Կորչում ես, ինչպես անհայտ ծովերում փշրված ալիք,
Եվ գիտե՞ս, սակայն, որ հնարավոր հրաշքն ես տանում,
Եվ գիտե՞ս, սակայն, որ ոտքերիդ տակ գաղտնիքն է լալիս...

ՏԱՂ ԵՐԳԻ

Девушка пела в церковном хоре…
А. БЛОК

Երգում էր աղջիկն ավերակ վանքում,
Սպիտակ հագած աղջիկն այն բարակ
Մխում էր ասես,
Եվ արթնանում էր խորհուրդը քարի,
Գաղտնիքն էր զանգում,
Եվ ժամանակն էր հսկումի կանգնում ճառագայթի պես:

Այդպես լինում է լեռների վրա,
Ուր ցողն է առատ,
Ուր ծաղիկները վայրի են այնպես
Ու բուրմունքը՝ սուր,
Ուր քամին իր զով շնչառությունը երկնքից առած,
Այնպես մաքուր է ու այնպես լազուր:

Այդպես լինում է հովիտների մեջ այն արևավոր,
Ուր ժամանակը կանգնում է ասես ու էլ չի զարկում,
Ուր մեղուները ներշնչանքի մեջ իրենց թևավոր,
Երգում են խաղաղ ու արեգակը մեղրի փոխարկում:

Երգում էր այդպես,
Երգում էր աղջիկն ավերակ վանքում,
Եվ ավերակը ասես թե դանդաղ ելնում էր ծունկի,
Գմբեթներն ասես կամավորվում էին քարե ճախրանքում,
Եվ քարից քամվում, դողդողում էին շիթերն արցունքի:

Ու թվում էր, թե գնում ես դեպի հողն այն նախնական,

Հասնում հովիտներն այն արևավոր,
Ուր մարդն արդար է
Արևի,
Հողի
Ու սիրո նման.
Եվ հողը,
Սերը
Ու արեգակը
Աստվածներ են նոր:

Եվ արթնանում էր
Մի զարմանալի, մաքուր տխրություն,
Եվ տխրության մեջ զիլ զրնգում էր փառքը գոյության,
Ու ի՜նքդ, ի՜նքդ լույսով մաքրվում,
Դառնում սխրություն,
Բարձրանում ասես ու գնում էիր ինքնազոհության...

ՏԱՂ ԵՐԱՉԻ

Ես երազիս մեջ ջրերի վրա մեն-մենակ շրջում,
Դեգերում էի, չափչփում էի մոլորակն այս հին,
Լուսավոր էի ու տրտում էի որպես ներշնչում,
Ոգեղեն էի, ինչպես լինում են արարման պահին:

Եվ ճանապարհիս արարում էի ինքս ինձ համար,
Խավարը այրում անկեզ մորենու ցոլցլուն բոցով,
Քարանձավների ցուրտ մթությունը լցնում ծայրեծայր
Մեղվապարսերի տաք զրնգոցով...

Հովերի թևին դնում բարություն մի անանձնական,
Խիղճ էի խառնում վայրի հողմերին ու հեղեղներին,
Որ սուրան նրանք իբրև օրհնություն ու իբրև մաղթանք
Եվ ոտից գլուխ իրենցով օծեն մոլորակն այս հին...

Եվ ահա կանգնել
Ու ծովին իջնող շնորհն անձրևի
Տեղափոխում եմ անապատների շիկնած շուրթերին,
Ու այնտեղ հանկարծ ծառերն են ծաղկում հրաշքի ձևի՝
Աստղերի ցողը ծաղկաթերթերին...

Եվ այնտեղ ահա լճեր են ծփում թեթև ու ծավի,
Անհայտ հավքերը իրենց զմրուխտով կապույտն են վառում...
...Հետո Լիլիթից ու այն հողեբույր, հողե Եվայից
Ուրիշ, մի ուրիշ կին եմ արարում...

Նախ աչքերի մեջ իրար եմ խառնում գորով ու գինի,
Մեջքը բարալիկ, կոնքերը նուրբ եմ ստեղծում այնքան,

Որ մի տերևն իսկ, թզի տերևն իսկ բավական լինի,
Դառնալու նրա շորը նախնական:

Ապա եվայից առնում եմ նրա հողի բույրը տաք,
Խառնում Լիլիթի խուսափող հրին ու հևքին վայրի,
Որ նա հողի պես լինի քնքշորեն հեզ ու հպատակ,
Բայց և հրեղեն իր առեղծվածով հավիտյան այրի:

Հողմի տարերքը, աստղերի դողը և հողի ոգին
Իրար շաղախած, հրաշքն եմ հունցում բանաստեղծության
Ես գինու միջից հանում եմ թույնի խայթը մոլեգին
Եվ թողնում միայն երանությունը թավշե թախծության:

Հիացքով օծում հովատակներին պղնձամկան
Եվ խարազանի շառաչյուններն եմ կողերից վանում,
Առանց խարազան, առանց թամբ ու սանձ և առանց լկամ
Որքան ազատ են ու գեղեցիկ են նրանք սլանում...

...Այդպես ողջ գիշեր ջրերի վրա մեն-մենակ շրջում,
Դեգերում էի, չափչփում էի մոլորակն այս հին,
Սլանում էի, վեր էի սուրում իբրև ներշնչում
Ու ներշնչման պես անծանոթ էի անկումի ահին...

ՏԱՂ ԱՐՅԱՆ

Դու իմ մարմնի մեջ,
Ինչպես կանաչը ցորեն արտի մեջ,
Վառվում, շողում ես քո թաքուն սևով,
Դու՝ գիշերային իմ անքնության տվայտանքը մեծ,
Դու՝ արշալույսի բերկրությունը զով:

Եթե հրաշքով հյուլեիդ կարմիր գաղտնիքը բացվի,
Նրա մեջ պիտի բարբարոս թախիծն ու կարոտը լա,
Ու շողա պիտի սկիզբը կայծի,
Առասպելների լույսը ցոլցլա:

Դու հին, հնամյա...
Դու Աստծո խանդով, խանդով թռչունի
Դեպի աստղային ոլորտն ես միտել դարեր ու դարեր,
Եվ դու մեղեդի, որ մինչև հիմա դեռ անուն չունի,
Բանաստեղծություն, որ մինչև հիմա դեռ չունի բառեր:

Դու՝ զարմանալի,
Դու տառապանքը իմ սիրտը մղում,
Արտամղում ես մի թեթևություն, որ կոչվում է հույս...
Դու այսքան հոգնած, դու այսքան ծանր, դու այսքան տխուր,
Բայց դու՝ մարմնիս մեջ փակված արշալույս:

ՏԱՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Թախծությունն, նետիր քո սքեմը սև,
Ու գնանք դեպի անձրևները ջինջ,
Նրանք հարության գաղտնիքը կասեն,
Իսկ մեզ դա է պետք, և ուրիշ ոչինչ:

Գնանք, թաթախվենք նրանց լույս փոշով,
Մկրտվենք նրանց շնորհի մեջ տաք,
Աստղի պես բռնենք կաթիլը խոշոր
Ու կշռենք նրա հրաշքը հստակ:

Ու գնանք դեպի արտերի հեռուն
Եվ շնչենք նորից բույրը բարության,
Փշրենք հասկը շեկ ու մեր ափերում
Զգանք կարոտը անսպառության:

Եվ գնանք դեպի ծառերը կանաչ,
Նայենք, թե իրար ինչպես են փարվում,
Թե ազատ քամին, արևը հսկա ու կապույտն անափ
Ինչպես են փոքրիկ տերևին թառում:

Ու գնանք դեպի քարանձավը մով,
Մխրճվենք սիրտը ապառաժ քարի,
Ուր մեղուների ինքնազոհումով
Խոստանում է լույսն ու մեղրը վայրի:

Ու հետո այդպես անձրևաթաթախ,
Այդպես արևոտ և օրհնաբերան
Ընթանանք դեպի բարձունքը խաղաղ
Ու ոգենք այնտեղ աղոթքը լեռան...

ՏԱՂ ԾԱՌԻ

Ես զարմանալի առնչությունն եմ հող ու երկնքի,
Հող ու երկնքի
Անիմանալի շնչառությունը,
Կանաչ թրթիռ եմ,
Կանաչ շնորհ եմ,
Կանաչ կիրակի,
Ես ինքս եմ հրաշք այն հարությունը:

Լեփ-լեցուն եմ ես ճառագայթների դողով ու խաղով
Եվ ծվեններով առեղծվածների
Ու երազանքի,
Ես ոտից գլուխ օրհնանք եմ դառնում,
Կանաչ մի աղոթք,
Երբ հավքերն իմ մեջ
Կատարում են ծեսն իրենց տարփանքի:

Իմ ճյուղերի մեջ
Աստղերը իրենց գաղտնիքն են լալիս,
Անձրևներն՝ իրենց տխրությունը ջինջ,
Եվ մեղուները
Քաղցրության համար իմ գիրկն են գալիս,
Առնում են, տանում
Ու չի պակասում ինձանից ոչինչ:

Հողի երազը,
Հողի շնորհը
Ու լույսը հողի
Ես վեր եմ պարզում
Կանաչ, թրթռուն իմ այս մատներին,
Բայց տառապանքը,
Լուռ տառապանքն ու ցավն արարողի
Հայտնի են միայն իմ արմատներին...

ՏԱՂ ԿՐԱԿԻ

Այրվո՞ւմ ես ահա...
Բոցդ ոսկի է ու բոցդ բոսոր,
Եվ բոցիդ ծայրը
Նման է այնպես կապույտ թախծության,
Նման է այնպես
Յոթ երկնքի հետ շշուկով խոսող
Բանաստեղծության:

Այրվո՞ւմ ես, այրվո՞ւմ...
Եվ գեղեցիկ է տառապանքը քո,
Եվ գեղեցիկ է որպես արարում
Ու որպես սկիզբ,
Որպես ներշնչանք
Ու որպես կարոտ
Ու որպես սիրո անավարտ կսկիծ:

Այրվո՞ւմ ես, այրվո՞ւմ...
Եվ օրհնյալ ես դու, հրեղեն հառաչ,
Եվ օրհնյալ ես դու, կապույտ թախծություն,
Ծուխդ՝ երկնքին,
Մոխիրդ հողին խառնելուց առաջ,
Դառնում ես կապույտ բանաստեղծություն...

ՏԱՂ ՍՊԱՍՄԱՆ

Նա ճիրք է ծնվել...
Այն օրը գուցե, երբ գաղտնիքը քեզ
Կանչեց, հմայեց
Ու խուսափելով, սուրաց գեղեցիկ...
Եվ սպասում ես...
Բայց նա թևավոր,
Բայց նա՝ հրակեզ,
Իսկ դու՝ հողեղեն, հողաբույր խեցի...

Եվ սպասում ես...

Եվ սպասում ես դու ամեն վայրկյան...
Անքնության մեջ
Քո սպասումը արշալույս է զով,
Ձմեռների մեջ՝ հողի տաք խայտանք,
Ամպրոպի շունչ է,
Կայծակի բույր է,
Ծաղկաթերթ ու ցող:

Եվ սպասում ես...

Եվ սպասումդ
Լույս է աղբյուրի հեկեկանքի մեջ,
Եվ Հարդագողի հրեղեն հառաչ, բարբառ է անհուն,
Կռունկի կանչ է,
Ակոսի տող է,
Դող է զանգի մեջ

Ու չվերծանվող բանաստեղծություն:
Եվ սպասում ես...

Կինն է քեզ նայում
Ու նայում այնպես,
Որ թվում է, թե
Պիտի արգելված պտուղը քաղի,
Բայց խուսափում է,
Հեռանում անդարձ,
Ու նորից անտես
Թախիծն է գալիս
Ու ծարավն աղի...

Եվ սպասում ես...

Եվ սպասում ես դու ներշնչանքիս,
Իսկ նա գալիս է,
Գալիս սիրուհու քմահաճ խաղով,
Գալիս,
Մատնում է ողջակիզումի անլուր տանջանքին,
Բայց թողածն ի՞նչ է, –
Մի բուռ մոխիր է,
Մի անբառ աղոթք...

Եվ սպասում ես...

ՏԱՂ ԺԱՄԱՆԱԿԻ

Ո՞ւր ես սլանում,
Այդ ո՞ւր ես սուրում...

Կանգնեիր մի պահ,
Կանգնեիր գոնե լոկ այն վայրկյանին,
Երբ թռիչքի մեջ արծիվն է հանկարծ
Վսեմ մի դողով կանգնել լազուրում...

Ո՞ւր ես սլանում,
Այդ ո՞ւր ես սուրում...

Կանգնեիր մի պահ,
Կանգնեիր գոնե լոկ այն վայրկյանին,
Երբ իր արծաթե սոսափյունի մեջ
Բարդին է հանկարծ լռել լազուրում...

Ո՞ւր ես սլանում,
Այդ ո՞ւր ես սուրում...

Կանգնեիր մի պահ,
Կանգնեիր գոնե լոկ այն վայրկյանին,
Երբ իմ գրկի մեջ սերն է նվաղել,
Եվ հրաշքներ են շրջել լազուրում...

Ո՞ւր ես սլանում,
Այդ ո՞ւր ես սուրում...

ՏԱՂ ՀԱՅՐԵՆԻ ՏԱՆ

Կանչո՞ւմ է նա ինձ...

Իր մաշված դռան տխուր ճռինչով,
Որ հեռու հեռվից ասես երգում է
«Առավոտ լուսո»,
Կանչո՞ւմ է նա ինձ...

Առաջին անգամ այնտեղ եմ առել
Ես հոտը հացի ու համը աղի...
Եվ նրա կավե կտուրից եմ ես
Տեսել, թե աստղը
Ինչպես է սրբում իր արտասուքը...

Եվ իմ առաջին արցունքի միջից
Մայրական դեմքի ցոլանքն եմ տեսել,
Տեսել արևը,
Երկինքը,
Բարդին
Եվ օդում կախված հավքի թրթիռը:

Եվ գիտեմ հաստատ,
Այն տան պատերի մթին ճեղքերում
Թրթռում է դեռ
Շուրթերիս ծնված այն բառն առաջին,
Որ կամ հիացում,
Կամ ցավ է եղել:

Եվ գիտեմ հաստատ,
Որ այդ տան վրա
Ամեն առավոտ ու ամեն գիշեր
Ինչ-որ մի անհայտ,
Ինչ-որ մոլորված հավք է թպրտում
Ու ճչո՜ւմ տխուր...

Հասկացիր, Աստված,
Կանչում է նա ինձ...
Իր մաշված դռան երկար ճռինչով,
Որ հեռու հեռվից երգում է ասես
«Առավոտ լուսո»,
Կանչո՜ւմ է նա ինձ...

Եվ սակայն ինչպե՞ս հասկանաս,
Աստված,
Երբ ոչ մայր ունես,
Ոչ հայրենի տուն,
Ոչ ծննդավայր...

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Ապրել ես այսքան,
Բայց դեռ չգիտես ո՞վ ես դու և ի՞նչ...

Եվ գիտես միայն,
Որ նման ես դու
Բարբարոս ու բիրտ այն քնքշությանը,
Որ տառապում էր առաջին մարդու
Թանձր շրթունքին
Եվ չէր կարենում վերածվել բառի:

Եվ գիտես՝
Անձև քո ստվերները տվայտում են լուռ,
Որ գեղեցկանան,
Անրջանքների ու ներշնչանքի
Քույրերը դառնան,
Բայց չեն կարենում:

Գիտես,
Որ անգույն անքնության պես
Ուզում ես փոխվել մի մեծ երազի,
Որ կապուտակ է
Ու թեթև՝ որպես
Եթեր
Ու ծաղիկ:

Եվ գիտես նաև,
Որ հիվանդ ես դու կապույտի ցավով,

Որ բնակվում է էությանդ մեջ
Անլուր տագնապը վիրավոր հավքի...

Որ հիվանդ ես դու և այլ մի ցավով,
Որ գիշերային երազներիդ մեջ
Լեռնալանջն ի վար աղբյուր է արծաթ,
Մամուռը՝ ոսկի, ու գուռն է արծաթ,
Եվ մի թուխ աղջիկ առավոտ լուսին
Աղբյուր է եկել կավե կուժն ուսին,
Աղբյուր է եկել,
Ջրին կռացել
Ու թուխ ծոցիկն է
Լույսի դեմ բացել...

Եվ գիտես նաև,
Որ երբ երեկոն
Երկնքի կապույտ լուսամուտի մեջ
Առաջին աստղի թրթիռն է վառում,
Քեզ թվում է միշտ,
Թե ինչ-որ հեռու, անհայտ աշխարհում
Մի ոսկեվորիկ ճրագ են վառել,
Սպասում են քեզ:

Եվ գիտես նաև,
Որ քեզ տանջում է
Մի զարմանալի ու խենթ ցանկություն,
Որ ուզում ես դու ամենայն ինչի
Տալ նոր մի անուն.
Սիրո անունը
Առեղծված դնել,
Քարի անունը
Դնել քնքշություն,

Հացը,
Սուրբ հացը
Անվանել հրաշք...

Եվ գիտես նաև,
Որ շնչում ես դու
Մաքուր՝ որպես խիղճ,
Ցավոտ՝ որպես խիղճ,
Թեթև՝ որպես խիղճ,
Ծանր՝ որպես խիղճ:

Եվ գիտես նաև,
Որ այս աշխարհում
Ամենից առաջ ու ամենից շատ
Այս հողն ես սիրում,
Փոքրիկ այս հողը,
Որի քարն ասես
Արծվի կռինչ է բիրտ ու բրածո,
Եվ որի խոտը խոնարհություն է...
Փոքրիկ այս հողը,
Որ բնակվում է սրտիդ այն խորշում,
Ուր բնակվում են
Երդումն ու ցավը...

1975–1976

ԵՐԳԻ ԾՎԵՆՆԵՐ

...Ախ, ծիածանը՝
Մեռած անձրևի
Այս կարմիր-կանաչ տապանագիրը...

* * *

Բոլոր բառերից ամենաշատը
«Կապույտն» եմ սիրում:

Կապույտ աստղի պես
Հանգչում ես հեռվում,
Տո՛ւն իմ հայրենի...

* * *

Երկիր, ես քո դեմ ծունկի եմ իջնում,
Որ խոստովանեմ
Քո հողին,
Քարին,
Ջրի շառաչին...
Ու պետք չեն բառեր,
Ինձ շշուկն այն տուր,
Որ ունեցել է մարդու ստեղծած
Աղոթքն առաջին:

* * *

Գարնան ամպրոպը՝
Ցասում ու գանգատ.
Գարնան ամպրոպը՝
Տառապանք ու լույս,
Գարնան ամպրոպը՝
Շանթի շեկ մոլուցք
Եվ արցունք բարի...

Գարնան ամպրոպը՝
Մայրենի լեզուն
Իմ լեռնաշխարհի...

* * *

Գնա՛մ...
Հեթանոս իմ նախնիների՝
Մեր կաղնիների
Խիտ սաղարթներից
Պոկեմ վայրենի բերկրություն ու ճիչ...

Եվ աղբյուրների՝
Ջինջ ու զրնգուն մանկությունների
Ակունքների մոտ
Ծնկաչոք իջած՝
Հավաքեմ արդար արեգակ ու խիղճ...

* * *

Իմ հայոց երկինք՝
Կապույտ վեհարան...

Արծիվն է այստեղ
Անհունը չափում,

Եվ Արարատն է
Նստում խորհրդի՝
Արևածագի
Ծիրանին վրան...

Իմ հայոց երկինք՝
Կապույտ վեհարան...

* * *

Աղքատ եմ նորից...

Կոպերս փակեմ,
Գնամ,
Մանկության մաքուր գետակից
Արծաթ հավաքեմ:

* * *

Արշալույսն այնտեղ
Իրար է խառնում աստղեր ու ծաղիկ,
Արշալույսն այնտեղ
Խարտյաշ հասկերի խոնարհ հարսնություն
Ու փեթակների բզզոց է բարի...

– Սիրտ իմ,
Պանդուխտն ես դու այդ աշխարհի:

* * *

Տուն իմ հայրենի,
Ամեն երեկո առ աստղ մի տրտում
Ու սեմիդ վրա մոմի պես վառիր:

– Իմ հեռավո՜ր,
Կորա՜ծ,
Հի՜նս,
Դուռդ բաց պահիր:

* * *

Աղբյուրը...
Լեռան աղբյուրն արևոտ...

Բոբիկ մանկան պես
Ասես, թե ոտքը
Զարկել է քարի
Ու ծիծաղում է
Արցունքի միջից:

Աղբյո՛ւրը...
Լեռան աղբյուրը վճիտ...

* * *

Այս ծաղիկները երևի հողի
Բառերն են անձայն,
Այս շուշանները
երևի սիրո շշուկներ են սուրբ,
Մանուշակները՝ թախծության խոսքեր,
Եվ զանգակները
Կապույտ կարոտի կապույտ կանչերն են...

Իսկ կակաչները,
Որ խենթանում են երաշտից առաջ,
երևի հողի ալ հառաչներն են..

* * *

Անձրևը անցավ...
Ու ծիածանը
Կախել է ահա ծիրանի ծիրը...

Ա՛խ, ծիածանը,
Մեռած անձրևի
Այս կարմիր-կանաչ տապանագիրը...

* * *

Գարնան անձրևի առաջին կաթիլ,
Դու անհայտ հավքի
Վճիտ ծլվլոց
Ու լո՜ւյս հայտնության,
Հայտնության թախիծ...

Եվ քո լույսի դեմ
Ծունկի է իջել,
Լուռ աղոթում է կապույտ մի ծաղիկ...

* * *

Գյուղի առավոտ...
Կապույտ ու բարդի:
Թոնիրների մեջ հացն է արթնանում,
Ինչ-որ տեղ գառն է մայունով լալիս...

Ու խղճի հոտ է
Աշխարհից գալիս:

* * *

Ամառ է:
Տոթ է:
Ոչ քամի, ոչ հով,
Բայց սոսափում է մենավոր բարդին...

Երևի օդում թաքուն թափառող
Ինչ-որ տագնապ է թառել սաղարթին:

* * *

Մայրամուտն ասես հնդիկ է մի թուխ,
Սրինգ է սուլում,
Ու նվագի տակ
Բարակ օձի պես պարում է քամին:

Ծնորհապարտ եմ, սի՛րտ իմ, քեզ այնպես,
Որ հեքիաթներ ես հորինում անգամ
Այս գորշ ու տխուր իրիկնաժամին:

* * *

Ցողի կաթիլը
Արցունքի նման կախվել է ծառից...

Էհ, ի՞նչ իմանաս,
Գուցե ծնվել է վաղուց մոխրացած
Ինչ-որ մի աստղի ոսկե ծիծաղից:

* * *

Բարդիներ,
Քուրմեր,
Ես ձեզ երգ եմ պարտք:

Առավոտ կանուխ
Բարձրացել էիք ձեր մերկ թաթերին,
Որ առաջինը լույսը համբուրեք
Եվ ձոնեք նրան օրհնություն ու փառք...

Բարդիներ,
Քուրմեր,
Ես ձեզ երգ եմ պարտք:

* * *

Ծիծեռնակները վերադարձել են,
Ճախրում, ճչում են
Խենթ հարբածները...

Եվ միայն ճամփի հողմերը գիտեն,
Որ նրանք այն նույն
Տառապածներն են:

* * *

Աղբյուրը...
Լեռան աղբյուրը մաքուր
Ուշաթափվում է ասես ծիծաղից:

Բայց երկար նայիր,
Ընդերքից ելած տառապանք է լույս
Ու տառապանքով մաքրված թախիծ...

* * *

Ամենատխուր,
Ամենամաքուր
Ու վսեմ
Երգը
Երևի երգն է մեռնող կարապի...

Ու ես չեմ լսել երգը կարապի:

* * *

Ես երեկ արտում մի կակաչ տեսա...

Ու մինչև հիմա մեն-մենակ կանգնած
Բոցկլտում,
Այրվում,
Թախծում է իմ դեմ:

Ու չեմ մոռանում:
Ինչո՞ւ:
Չգիտեմ...

* * *

Ժայռի շրթունքին՝ աղբյուրի ծիծաղ,
Ձորի կոկորդում՝ գետի հեկեկանք...

Եվ դա երևի հենց դու ես,
Իմ երգ,
Եվ դա երևի հենց դու ես,
Իմ կյանք:

* * *

Շանթի հետքեր կան ժայռի կողերին,
Եվ կնճիռներ կան ճակատի վրա...
Այդ կնճիռներում թրթռում թեթև,
Ոգիանում է
Լույսը արևի...

Նայի՛ր դու անթարթ, նայի՛ր այդ ժայռին,
Ու կնմանվի նա մարգարեի:

* * *

Արցունքի կաթիլ
Փոքրիկ,
Շողարձակ...

Ու մեջը՝ կսկիծ,
Ու մեջը՝ կարոտ,
Ու մեջը՝ ամպրոպ
Ու մեջը՝ կայծակ...

* * *

– Թռչուններ, ասեք,
Դուք էլ երազներ տեսնո՞ւմ եք կյանքում,
Երբ կապույտներից իջնում եք ներքև
Եվ գորշ բներում ննջում եք հանգիստ...
– Տեսնում ենք, այո՛,
Տարբերում նույնիսկ
Մեր գորշ երազը մեր կապույտ կյանքից:

* * *

Բառը դողում է
ու դառնում երդում,
Հավքը դողում է
ու դառնում թռիչք,
Կինը դողում է
ու դառնում մեղսանք...

Դրանք, երևի,
Ամենավերին վայրկյաններդ են, կյանք...

* * *

Երբ լուսաբացին ճանապարհ ընկնես,
Լուսաստղը վերցրու իբրև թալիսման
Եվ լուսաստղի հետ մի բառ վերցրու՝
«Խիղճը» կամ «սերը»...

Իսկ ավելի ճիշտ՝
«Խիղճը» և «սերը»:

* * *

Եվ փաթիլը ձյան իմ բաց ափի մեջ
Այսօր այնպիսի հրաշքով թառեց,
Ինչպես կթառեր
Անհայտությունից իջած աստղը ջինջ...

Օրհնությո՛ւն քեզ, բա՛խտ,
Ուրեմն դեռ դու ունես ամեն ինչ:

* * *

Վաղն առավոտյան ինձ շուտ արթնացրեք,
Ձնհալի հոտից զգում է հոգիս,
Որ հողը ձայնել
Ու կռունկներին արդեն կանչել է...

Կգան, կգնան,
Չեմ տեսնի հանկարծ,
Չեմ լսի նրանց անուշ կանչերը:

* * *

Գարո՜ւն է,
Մեղքն է քայլում աշխարհով,
Ծառերը ասես
Սիրուց արտասվող աղջիկներ լինեն...

Այդպես երևի լացել է մի օր
Մեղավոր ու սուրբ այն Մագդաղինեն:

* * *

Բարձրացել էիր ոտներիդ ծայրին,
Որ խնձոր քաղես...
Բացվել,
Ցոլում էր ծնկածալդ թուխ...

Ու ես հիշեցի,
Եվա է եղել,
Եղել արգելված,
Սակայն ի վերջո ճաշակված պտուղ:

* * *

– Անձրև հուլիսյան,
Մտիր ծառերի տաճարը կանաչ,
Թող մաքրությունդ
Այնտեղ լուսաբուխ իր աղոթքն անի...

Եվ չմոռանաս,
Կա Երևանում լուսաչյա մի կին,
Վարսերին իջիր,
Նա օրհնությանդ շա՜տ է արժանի:

* * *

Դու նման էիր այնտեղ բոլորին,
Եվ սակայն հանկարծ ինչ-որ մի խոսքից
Այնպես շիկնեցիր,
Որ թվաց պիտի գարունը բուրի...

Ու ես հասկացա՝
Կնոջ շիկնանքը կին է մի ուրիշ:

* * *

Ու նախ անձրևի մի կաթիլ իջավ,
Հետո՝ երկրորդը,
Հետո՝ երրորդը,
Հետո բոլորը իջան վարսերիդ՝
Իբրև աստղային անարատ նվեր...

Ու կանգնել էիր դու աստղերի մեջ,
Ու կանգնել էիր դու աստղերից վեր:

* * *

Թե իմ պատճառով
Սև հագնես մի օր ու անզարդ մնաս,
Օրհնե՛մ,
Սիրելիս,
Որ առավե՛լս դու գեղեցկանաս...

* * *

Նորից ու նորից կարոտը գալիս,
Վառվում է,
Ծխում,
Մխում է իբրև
Հոգնաբեկ մի ամպ:

Գեղեցիկ է նա
Ու տառապալի...

Գեղեցիկ է նա իմ տառապանքով
Ու տառապալի՝ քո գեղեցկությամբ:

* * *

Ամառ է,
Տաղտուկ...
Եվ հորանջում է փողոցը հանգած...

Բայց կինը անցավ,
Եվ օրը ասես
Թրթռաց իբրև արծաթե զանգակ:

* * *

Գիշերը դրսում անձրև էր գալիս...

Ու երազիս մեջ այնպես էր թվում,
Թե այդ գիշերը
Կին է հիասքանչ,
Որ իր անձրևե վարսերն է սանրում
Եվ ժպտում է ինձ
Մեղավոր ու տաք...

Գիշերը դրսում անձրև էր գալիս,
Գարնան առաջին անձրևը հստակ...

* * *

Գարունն է անցնում,
Անցնում խենթ,
Տխուր,
Քսան տարեկան...
Անցնում,
Բոցի պես իր սերն է տանում...

Եվ աղջիկները նայում են նրան,
Նայում են, այրվում
Ու գեղեցկանում...

* * *

Եվ ես ասում եմ.
– Նայեցեք ահա,
Այս ոսկեձակատ,
Փոքրիկ այս հասկը,
Աշխարհի հոգսը
Ու բեռն է ուսել...

Քամիներ,
Հովեր,
Օգնական եղեք,
Նուրբ է ցողունը
Եվ ուսի բեռը՝
Գթություն ու սեր:

* * *

Գիշերը հողմ էր, գիշերը մրրիկ,
Գիշերը դաշտով արհավիրքն անցավ,
Արտի մեջ քնած կապույտ մի ծաղիկ
Հենց քնի մեջ էլ տխուր մահացավ,
Արտույտն իր բնում՝ տաք, փոքրիկ մի սիրտ,
Տագնապ էր ու դող, մորմոք էր ու ցավ...

Բայց օրը նորից
Արտույտի ոսկե երգով լուսացավ:

* * *

Եվ լիներ այնպես,
Որ բանաստեղծը համոզեր Աստծուն,
Ու նա ողջ գիշեր աշխարհի վրա
Մաղեր անձրևի օրհնությունը զով
Ու ցերեկն ամբողջ
Արևի ոսկե
Երազը հիներ...

Ինչ կարմիր-կանաչ աշխարհ կլիներ...

* * *

Երգել եմ ուզում...
Սիրտս ծակծկում,
Սիրտս այրում է կսկիծ մի հրե...

Ու գիտեմ,
Սրինգ դառնալուց առաջ
Եղեգն էլ այս նույն կսկիծն է կրել...

* * *

Թեթև, որպես լույս ու որպես ներում,
Թափառում էի ես վերևներում...
Լռ՝ւռ էր ամեն ինչ,
Միայն բարձունքում
Վայրի ծաղիկն էր մեն-մենակ զնգում,
Մղկտում, որպես կարոտն իմ արյան...

Երազ չէր դա, ո՛չ,
Երգ էր համարյա...

* * *

Երբ երգ եմ գրում, ինձ թվում է միշտ,
Թե ծունկի իջել
Ու անձրևի տակ կրակ եմ վառում...

Եվ ծուխը սև է,
Եվ ծուխը դառն է,
Եվ ծուխը կծու,
Մաքուր են սակայն արտասուքներս
Որ իմ երգերի կոպին են թառում:

* * *

Բանաստեղծություն,
Նման լինեիր ամռան գիշերվա
Խորունկ երկնքին
Կամ ոտից գլուխ երկինք հագնեիր...

Եվ բառերը քո,
Ո՛չ,
Բոլորը չէ –
Բառերն այն, որոնք երդում են ու խիղճ,
Բառերն այն, որոնք հավատ են ու սեր,
Շողային՝ նման մոլորակների:

* * *

Ամպրոպն անցել է, -
Անձրևը՝ անցել:

Եվ լյառն Արարատ թեթև է այնքան,
Ասես չքացել մարմինը նրա,
Ու սուրբ հոգին է միայն մնացել...

* * *

Ես սրտիս ցավից արթնացա հանկարծ...
Լուսամուտիս մեջ,
Իմ ցավի նման,
Ինչ-որ մենավոր աստղ էր թրթռում...

Իմ ցավի նման՝ այրվում կարեվեր
Ու լռում, լռում...

* * *

Լեռների վրա զրնգաց տխուր
Գարնան անձրևը՝
Արծաթե զանգակ...

Եվ ծիածանը հիմա ջինջ օդում
Կախվել է, որպես կապույտ արձագանք...

* * *

Մի զարմանալի, մենավոր թռչուն
Թառել թփերին,
Երգում է իր սերն ու ցավն անհատնում:

Չգիտե սակայն այդ զարմանալին,
Որ զարմանալի երգով ու տաղով
Իր տեղն է մատնում...

* * *

Աստղերը նայում
Մեր մոլորակին,
Դառնում են զարմանք
Ու հրե հարցում.
– Այս որքա՜ն հրաշք,
Այս որքա՜ն ծաղիկ,
Եվ որքա՜ն արյուն,
Եվ որքա՜ն արցունք...

1975–82

ԼՈՒՅՍ ԱՌԱՎՈՏԻ

Գիտեմ, ախ, գիտեմ, նա չի ծերանում
Ու չի էլ թողնում, որ ես ծերանամ...

* * *

Լռություն առավոտի,
Դու, որ նման ես երաժշտության,
Եկ ու ինձ փրկիր այս գիշերային անդաշնությունից,
Շաղոտ շուրթերով շշնջա նորից խոսքը հաշտության
Ու սիրտս զտիր,
Որ պղտորվել ու ելել է հունից:

Ամբողջ գիշերը
Ես նման էի մի մութ անձավի,
Ուր կասկածների քամին էր հեծում,
Կսկիծն էր զարթնել ինչ-որ մի անցած, մոռացված ցավի
Ու մոլոր հավքի հուսահատությամբ պատերս էր ծեծում:

Եվ թվում էր ինձ,
Ձայներ եմ լսում ես ինչ-որ տեղից,
Որ աղերսում են արևի գինի, մուրում սեր ու հաց...
Ես գնում էի
Արևի,
Գինու,
Հացի հետևից,
Բայց վերադառնում ունայն ու հոգնած:

Լռություն առավոտի,
Դու, որ նման ես երաժշտության,
Եկ ու փարատիր այս տագնապը խուլ,
Շաղոտ շուրթերով շշնջա նորից խոսքը հաշտության

Ու դիր ձակատիս
Բարակ մատներիդ հրաշքը տխուր:

Գիտե՛ս դու,
Գիշերն իմ այս տարիքում ցավ է ու կասկած,
Ե՛կ, արտույտի պես ինձ վրա թևիր,
Դիր ափերիս մեջ հավատն իբրև հաց,
Ու գնանք նորից
Արևի,
Գինու,
Հացի հետևից...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես Հարությանն այն մեծ,
Չեղյալ անեիր Եղեռնը արնոտ,
Ու ես ծնվեի,
Ու ես ապրեի պապերիս տան մեջ,
Ու ես հերկեի երկնքին կպած դաշտը մեր Կարնո:

Թռչունի նման
Զարթնեի ծագող արևից առաջ
Ու լվացվեի լեռներից պոկված կապուտակ քամով...
Ու դաշտ գնայի՝ ուսերիս առած
Արտույտի օրհնանքն ու երկինքը մով:
Եվ տողերի տեղ,
Որ հաճախ այնքան դատարկ են ու սին,
Մխացող ու տաք իմ ակոսները հողում շարեի
Եվ բառերի տեղ այս մաշված ու հին,
Սերմի ծանր ու ձույլ ոսկին շաղեի:

Չլիներ կյանքում
Այսքան երկարող մորմոքն այս դեղին,
Չլիներ կյանքում կասկածանքն այս կույր,
Ապավինեի միայն մայր հողին,
Անձրևին,
Ցողին,
Աստղերին մաքուր:

Մեկին սիրեի,
Սիրեի խորունկ, սիրեի հավետ
Ու չվատնեի շնորհն այդ վերին,

Եվ ոչ ոք կյանքում սերս չդավեր ու չխարդավեր,
Ոչ ոք չմատներ խանդի խաղերին:

Ու երբ տխրեի,
Դաշտերի խոտը խունկի պես բուրեր,
Ու երբ թախծեի,
Լեռան աղբյուրը ինձ հետ հեկեկար,
Հովն իր արծաթե սրինգը սուլեր,
Եվ օրհնության պես մայրամուտը գար:

Հետո,
Երդիկից ցողի հետ կաթող աստղալույսի տակ,
Քնեի խաղաղ, խորն ու մանկորեն,
Ու խիղճս, խիղճս լիներ անարատ,
Ինչպես աստղ ու ցող ու ինչպես ցորեն...

Ու երբ օրը գար,
Ես այդպես խաղաղ, այդպես մանկորեն
Քնեի հավետ պապերիս հողում
Ու ցող դառնայի,
Դառնայի ցորեն,
Դառնայի հավքի ոսկե ճռվողյուն...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես մի մեծ կրկնության,
Սակայն կրկնության, որ ամեն անգամ նոր է ու պայծառ,
Կրկնեիր այդպես երգը հեռավոր իմ պատանության,
Որ իմ շուրթերից պոկեց ու տարավ մրրիկը այն չար:

Իմ այդ երգի մեջ
Աստղերի մաքուր հեկեկանքը կար,
Բարդիներ կային, կար լույս ու թախիծ,
Կար մեր տան շեմքին բառաչով մորթվող սպիտակ մի գառ
Ու ցաված մի սիրտ, ու ցաված մի խիղճ:

Դեղձիներ կային –
Որ թերթեր էին քնքշորեն թափում,
Եվ առավոտներ,
Որ մաքուր էին, որպես արտասուք,
Գիշերներ կային՝ խենթորեն կապույտ,
Ու կապույտի մեջ՝
Բարակ մի աղջիկ, բարակ մի ասուպ:

Ո՞ւր է նա հիմա,
Ո՞ւմ հետ է լույսի իր խաղերն անում,
Ո՞ւմ է նա կանչում ու խուսափելով հեռանում անձայն...
Գիտեմ, ախ, գիտեմ, նա չի ծերանում
Ու չի էլ թողնում, որ ես ծերանամ:

Ասում են, անգամ օրը ցերեկով խորունկ ջրհորից
Կարող ես տեսնել երկինքը՝ լեցուն աստղ ու ասուպով,
Լո՛ւյս առավոտի,
Այդ շնորհն արա՝ աչքերս նորից
Աստղերով լցրու
Ու մորթվող գառի սուրբ արտասուքով...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես ոսկե կածանի,
Տա՛ր ինձ, քո երդվյալ ու հին ճամփորդին...
Եվ այնպես արա,
Որ ոտքս չառնի փուշ ու մացառի,
Որ ծովով անգամ ընթանամ, ինչպես Աստըծո որդին:

Ես պիտի գնամ,
Կորուսյալներիս փնտրեմ մշուշում,
Վաղուց, ա՜խ, վաղուց նրանց չեմ տեսել,
Նրանցից մեկը կնոջ տեսք ուներ, սակայն չեմ հիշում,
Կարո՞ղ էր կոչվում,
Տառապա՞նք,
Թե՞ սեր...

Եվ մեկ ուրիշը նժույգ էր ասես՝ կողերը ցոլուն,
Իսկ աչքերի մեջ հեռաստանների լույսն էր թախծալի,
Ո՞ւր է նա հիմա,
Ո՞ր լեռներում է շանթի պես ցոլում,
Ո՞ւր է սլանում առանց հեծյալի:

Եվ մեկ ուրիշը պարզապես ծառ էր,
Ուռի էր բարակ,
Նա աղջկա պես բոբիկ ոտքերն ու փեշերը թրջել,
Կանգնել էր մենակ, տխո՛ւր, շվարա՜ծ,
Չէր կարողանում գետակը թռչել:

Եվ մեկ ուրիշը ինչ-որ հովիտ էր՝
Հողի ծուխ ու ցող,
Ամպերը լացել ու հեկեկացել ու անցել էին,
Արտույտներն օդում ցող էին կտցում ոսկե կտուցով,
Իսկ կակաչները խենթացել էին:

Իսկ մեկ ուրիշը թև էր կապուտակ մի ծիածանի,
Որ հեռու մի օր իմ սիրո ճամփին կախվել էր վերից...

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես ոսկե կածանի,
Տա՛ր, որ միանամ կորուսյալներիս...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես օրհնաբանության,
Իջիր աշխարհին, իջիր լիաբուռ,
Իջիր ու թաքուն փոխվիր բարության,
Հասկ դարձիր,
Փեթակ
Ու լեռան աղբյուր:

Ժայռի պղնձից բուսել է ահա կապույտ մի ծաղիկ,
Դժվա՜ր է բուսել,
Բուսել է ցավով ու շատ է ծարավ,
Վրան երկնային քո ցողը մաղիր,
Արմատը շաղիդ արժանի արա:

Եվ թող հեթանոս այս արտույտները գալուստդ տոնեն,
Թող արշալույսի բուրմունք խառնվի նորաթուխ հացին,
Իսկ թե բառերը մաշվում են իրոք,
«Խիղճ» բառը գոնե
Թող քո շուրթերին միշտ ցոլա՝ որպես աստղը նորածին:

Իջի՛ր,
Մշուշի ծվենը վերջին դարձրու երազանք,
Քո շառավիղը ճամփա դարձրու լույսին ու բարուն,
Եվ այնպես արա,
Որ երկաթը՝ խոփ,
Որ պղինձը՝ զանգ,
Աղջիկն հարսնացու դառնա աշխարհում:

Իսկ ինձնից, շռայլ,
Չխլես երբեք այս թրթիռն անքուն,
Որ կարողանամ դեռ սիրահարվել,
Քանզի շուրթերն այն, որ կնոջ շուրթից չեն այրվում կյանքում,
Չեն կարող նաև մարգարեական խոսքերով այրվել:

Եվ այսպես դանդաղ,
Այսպես տխրորեն մխալու տեղակ,
Տուր ինձ մի վսեմ, անմոխիր այրում,
Կայծակով խոցված
Եվ արտասուքի ցողով ջրդեղված
Ինձ այն բախտը տուր,
Որից հրաշք է ծնվում աշխարհում...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես կնոջ շիկնանքի,
Հավատա,
Վաղուց չէի հանդիպել ես շիկնող կնոջ...
Ու ինձ թվում էր, թե պակասել է հրաշքը կյանքի,
Թե պակասել է վերին մի շնորհ:

Թե պակասել է արշալույսների թիվը աշխարհում,
Ու պակասել է շշուկն աստղերի ու աստվածների...
Եվ սիրո համար մի չար աղետ էր սիրտս գուշակում,
Գուշակում մահը առեղծվածների:

Բայց թույլ տուր հիմա,
Որ քեզ շշնջամ գաղտնիք մի վերին,
Գաղտնիք, որ անգամ վախենում եմ ես ինքս ինձ բացել.
Կա Երևանում փխրուն,
Բարալիկ,
Լուսաչյա մի կին,
Որ դեռ քեզ նման լուռ շիկնել գիտե
Ու գիտե թախծել...

Նա՝ զարմանալի,
Նա՝ լույս ու մութի անմեկին շաղախ,–
Ու վրաս մի մեծ թախիծ է իջել...
Ու մոլորվել եմ,
Ու կարկամել եմ ես նորից ահա
Նրա շիկնանքի
Ու իմ հին արյան ծարավի միջև:

Եվ այս ամենը տառապալի է ու շատ է ցավոտ, –
Մանուկ եմ ասես, ու բոբիկ ոտքս առել է քարի,
Բայց այդ ցավի մեջ
Ինչ-որ մի բան կա մաքուր ու շաղոտ,
Որ նորոգում է հրաշքն աշխարհի:

Լո՛ւյս առավոտի,
Ի՞նչ անեմ, ասա, ոչինչ չգիտեմ,
Լո՛ւյս առավոտի՝
Իմ սուրբ գաղտնարան ու աղոթարան,
Այսպես մոլորված,
Այսպես շփոթված կանգնել եմ քո դեմ,
Փա՛ռք եմ շշնջում,
Օրհնանք եմ տալիս ես քեզ ու նրան...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես մի մեծ շնորհի,
Եկ ու շնորհիր ինձ հանդիպումի բերկրությունը տաք...
Եվ այնպես արա,
Որ նա քնքշորեն ծվարի նորից
Վաղուց որբացած իմ թևերի տակ:

Նա թուխ է, փխրուն...
Առաջին անգամ երբ նրան տեսա,
Թվաց՝ եկել է կղզուց մի անհայտ,
Հեռու մի կղզուց,
Ուր ծառերը բոց, զմրուխտ են ու զառ,
Եվ ոսկեգույն են կիսամերկ կանայք:

Դու ինձ հավատա,
Որ չէի ուզում ես արդեն ոչինչ,
Որ հաշտ էի ես արդեն աշխարհի
Ու իմ բախտի հետ...
Բայց այդ մա՛շկը թուխ,
Այդ սև աչքերի առեղծվա՛ծը ջինջ,
Եվ բեկվող մեջքի քնքշությո՛ւնն այդ խենթ...

Ձնհալ է հիմա...
Ջրերը դարձել լույս ու հեկեկանք
Ու ծիծաղում են, ծիծաղում տխուր...
Եվ իմ մեջ զարթնել,
Մխում է իմ մեջ արցունքոտ մի բախտ,
Եվ հողի նման կարոտն է մխում:

Ու ես չգիտեմ,
Թե ինչպես զարթնեց մեղավոր մի սեր,
Չգիտեմ՝ դժբախտ,
Թե պատանորեն բախտավոր եմ ես...
Ու գիտեմ միայն, որ նա ինձ համար սուրբ վանք է դարձել,
Եվ նորից ահա ուխտավոր եմ ես:

Լո՛ւյս առավոտի,
Երբ նա արթնանա, թառիր կոպերին
Եվ փովիր վրան իբրև օրհնություն մի արևավոր...
Ու լուռ շշնջա, որ ների հոգում,
Քնքշորեն ների
Սերն իմ ուշացած, սերն իմ մեղավոր...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես երկրպագության
Եվ ծնկաչոք ես աշխարհի առաջ, ծաղկի ու խոտի,
Ծունկի եկ նորից ու արա նորից դողով մաքրության
Արարողությունն այս առավոտի:

Տե՛ս, արտ է այնտեղ,
Արտի եզերքին կանգնած է մի այր
Եվ ափերի մեջ հասկ է տրորում,
Հետո մատներով, որ ճաքճքած են ու խորշակահար,
Ցորենի սիրտն է քնքշորեն շոյում:

Նա ոտից գլուխ բուրում է որպես ակոս ու ցորեն,
Ու թե աշխարհում սրբեր կան իրոք, ինքն է արդարև,
Նրա դեմ ծնկիր երկյուղածորեն,
Համբուրիր նրա մատները քարե:

Մացառների մեջ խաչքար է ընկած՝
Ազնիվ մի բյուրեղ,
Ո՞ւմ տքնությամբ է փոխվել հրաշքի,–
Ոչ անուն, ոչ գիր...
Եթե ուզում ես հրաշք համբուրել,
Դեմը ծունկի եկ ու երկրպագիր:

Նայի՛ր,
Սենյակում խարտյաշ մի կին է հենց նոր արթնացել
Ու դեռ թափանցիկ շղարշ է հագին,
Ասեմ քեզ թաքուն,

Որ նա գիշերս է միայն կին դարձել,
Չոքիր նրա դեմ ու երկրպագիր:

Եվ նո՛ւռը, նայիր,
Արշալույսներդ առել է վրան
Ու տքնում է լուռ,
Որ կեղևի տակ արև հավաքի,
Խոնարհվիր նրան և օգնիր նրան,
Որ քաղցրությունից սրտիկը ճաքի:

Լո՛ւյս առավոտի,
Ծաղիկների մեջ բզզոց կա բարի,
Ծունկի եկ խոնարհ այդ բզզոցի դեմ, այդ տաք փեթակի...
Հացն է արթնանում,
Նրա բուրմունքը խիղճն է աշխարհի,
Ամենից առաջ նրան խոնարհվիր ու երկրպագիր...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես սուրբ ճշմարտության,
Եկ ու փարատիր աղջամուղջային այս մշուշը կույր,
Իմ գիշերային խարխափումները մատնիր պարտության
Եվ այն խոսքը տուր,
Որ խղճի նման մեծ է ու մաքուր:

Ի՞նչ անեմ, ասա՛,
Ես գիշերային անքուն տքնությամբ
Որոնում բառեր,
Խոսքեր եմ փնտրում ու թղթին տալիս,
Բայց քո գալու հետ, լո՛ւյս առավոտի, տեսնում եմ սակայն,
Որ ցավն ու ոգին մնացել դրսում,
Անբառ են լալիս:

Նայիր այս ժայռին,
Այնքան է զարկվել հողմ ու կայծակով,
Որ մարգարեի ու առաքյալի կերպար է առել...
Ու եթե խոսեր,
Ինչե՞ր կպատմեր շուրթերով ճաքող
Եվ սակայն, ավա՜ղ, չունի նա բառեր:

Կամ թեկուզ փոքրիկ,
Թեկուզ ցոլցլուն այս ցողին նայիր,
Թե կարողանար ինչ-որ հրաշքով իր սիրտը բացել,
Երևի պատմեր, թե ինչ երկնային
Տառապանքով է ինքը գոյացել:

Երգել եմ անվերջ,
Բայց և փակ եմ դեռ, որպես գաղտնարան,
Եվ դեռ լողում է իմ էության մեջ աղջամուղջը կույր,
Առանց բառերի
Հեկեկում է դեռ գաղտնիքն իմ արյան,
Անմեկնելին է իմ մեջ հեկեկում:

Կարապն, ասում են,
Լոկ մի անգամ է երգում աշխարհում,
Եվ դա, երևի, միակ ճշմարիտ երգն է աշխարհի,
Լույս առավոտի,
Շնորհաբաշխդ,
Ոչինչ չեմ ուզում,
Հոգնած կոպերս փակելուց առաջ
Այդ երգն ինձ տայիր...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես մի մեծ հայտնության,
Իսկ ավելի ճիշտ՝
Միակ հայտնությունն հենց ինքդ ես, որ կաս,
Եկ, բռնիր նորից ճանապարհները քո արդարության,
Նորից արյունդ գինի դարձրու ու մարմինդ՝ հաց:

Եվ ինձ էլ քեզ հետ տար ճամփաներով, որպես առաքյալ,
Ու հավատա ինձ,
Արժանի եմ ես այդ մեծ շնորհին,
Նայիր ճակատիս, ցոլում է այնտեղ լույս մի տառապյալ,
Աչքերիս նայիր, այնտեղ դարերի թախիծն է խորին:

Ես շատ եմ ապրել...
Այն ջրհեղեղի վերջին հառաչից
Ես իմ առաջին աղոթքանման բառերն եմ հանել,
Ես եմ, երևի, աշխարհում քամել գինին առաջին,
Ցորենն առաջին ես եմ սերմանել:

Բայց, հավատա ինձ,
Աշխարհում միայն ես ունեմ խաչքար,
Թե Գողգոթայի ճամփորդը փայտե խաչ է լոկ տարել,
Իմը քարակոփ,
Իմը քարակուռ,
Իմը քարածալ,
Իմը քարի հետ դարեդար ձգվող հառաչ էր քարե:

Տես, այնտեղ, հեռվում մենավոր վանքս է կանգնել քարափին,
Կանգնել բարալիկ,
Տխուր ու փխրուն միանձնուհու պես,
Ու չե՞ս զարմանում, թե ինչպես ապրեց հողմերի մեջ բիրտ,
Նենգ ու վավաշոտ հայացքների դեմ նա ինչպե՞ս ապրեց...

Բայց ապրել եմ ես,
Ես որոնել եմ ափերը հուսո,
Ես իմ արյունն եմ գինի դարձրել ու մարմինը՝ հաց,
Քանզի դու էիր իմ շրթունքներին, «Առավո՛տ լուսո»,
Քանզի դու էիր, «ձառագա՛յթ փառաց»...

Լո՛ւյս առավոտի,
Փոթորկված է դարն ու դարը՝ ահեղ,
Իմ տագնապները զարթնում գիշերով, փոխվում են լացի,
Եվ սակայն քեզ եմ իմ շրթունքներին ես նորից պահել,
Հավատում եմ ես քո առեղծվածին...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես անմոխիր այրման
Եվ նման այնպես ողջակիզության այն սուրբ խորհրդին,
Ինձ էլ դարձրու քեզ պես անմարմին ու անանձնական,
Այրում դարձրու հայոց աշխարհի ճաքճքած շուրթին:

Արարատ լեռն է կանգնել կապույտում՝ կրծքին վիհ ու վերք,
Այդ վերքի վրա ինձ կախիր որպես անկեզ մորենի,
Թող նա բոցկլտա գիշեր ու ցերեկ
Եվ աշխարհներին թող տեսանելի ու հայտնի լինի:

Քարերը այստեղ
Նահատակների շիրիմներ են սուրբ,
Մառախուղները
Դեռ թաղումների խունկով են մխում,
Այդ քարերն ի վեր ինձ պարզիր իբրև հրեղեն մի սյուն,
Որ այնպես թվա,
Թե նրանց սրտից դեռ լույս է բխում:

Փլված որմերին
Գրեր կան խամրող, բառեր կան հանգած,
Խոսքեր կան մամռած, որ սուրբ են իբրև երդում ու պատգամ,
Այդ բառերի մեջ ինձ շող դարձրու,
Դարձրու շանթ ու կայծ,
Որ ցոլան իրենց լույսով նախնական:

Լեռան թեք լանջին տաճար է ավեր,

Ընկած որմ ու սյուն,
Եվ մկրտության ավազանի մեջ եղինջ է բուսել,
Ինձ լույսի մաքուր անձրև դարձրու այդ ավազանում,
Որ մեջս նորից աստղեր մկրտվեն ու ոգի ու սեր...

Թող այրվեմ թեթև մասրենիներիդ թրթռոցներում,
Սոսափյունի մեջ սոսյաց անտառի,
Երկնքին կպած քո լճակների կապույտ բոցերում,
Բռնկումի մեջ ծիրանի ծառի...

Ծիրանի ծա՜ռդ...
Ծաղկել, վառվում է նորից քաղցրորեն,
Բայց տագնապում է ձյունի, կարկուտի, հողմի խուլ շնչից,
Ինձ գոլ դարձրու,
Թող առէջքներին աննկատ ծորեմ,
Ծվարեմ այնտեղ ցողերի հետ ջինջ:

Լո՛ւյս առավոտի,
Ինձ ոտից գլուխ դարձրու այրում,
Հավատ դարձրու, երդում դարձրու ողջակիզության,
Թող այնպես թվա, թե զինվոր եմ ես դեռ Ավարայրում
Ու չունեմ հանգիստ,
Ու չունեմ դադար,
Ու չունեմ վախճան...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես հսկա արտույտի,
Հավատացյալդ եմ
Ու կույր բվերի երդվյալ թշնամին,
Այդ նրանից է, որ շատ եմ խմել մրուրը մութի,
Այդ նրանից է, որ շատ է զարկել ինձ ահեղ քամին:

Տե՛ս, նոր արարված Եվայի նման գեղեցիկ ու մերկ
Քո դուստրը չքնաղ՝ քո արշալույսն է կանգնել աշխարհում,
Բայց քանի անգամ ազատության պես նա առևանգվել,
Քանի անգամ է սև ու սուգ հագել ու հագել արյուն:

Ինձ հղացել են սև տրտմության տակ սև առաստաղի,
Տվել եղեռնի սևով մակարդված մի ծանր արյուն,
Ու ես երևի ապրեի պիտի գայլի պես վայրի՝
Երակներիս մեջ միայն մաղձ ու թույն:

Բայց իմ արյան մեջ, երևի անգամ ինձանից թաքուն,
Ապրել է մաքուր լույսը հավատի ու այգաբացի,
Դարերից ձգվող արևի մի սուրբ երկրպագություն,
Երկրպագություն գինու և հացի:

Երկրպագություն՝ ծաղկած դեղձենուց թափվող քնքշանքի,
Երկրպագություն՝ տաք ակոսներից ելնող գոլորշու,
Աղբյուրի տեսքով քարափից կախված կապուտակ զանգի,
Կապուտակ ծաղկի,
Որ ցոլցլում է ժայռի շեկ խորշում:

Ու թեև հաճախ գիշերով զարթնում մորմոքն իմ արյան,
Մերթ ոռնում երկար ու մերթ որբի պես նա լաց է լինում,
Բայց, հող հայրենի,
Խաչ ու հարություն իմ բազմադարյան,
Լուսերգությանդ եմ ես ապավինում:

Թող արտույտներիդ թևերին դողան լույսերը վերին,
Ոգուդ հերկերին թող պատարագի կապույտը անհուն,
Բվի կռինչով
Եղինջ է բուսնում ավերակներին,
Արտույտի երգով
Արտն է հարսնանում...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես մի մեծ մաքրության,
Եկ ու ինձ մաքրիր, ինչպես Նարեկա այն տառապյալին,
Սրտիս մեջ վառիր լույսն անանձնության
Եվ ինձ դարձրու
Լեռան առավոտ,
Աղբյուրի ալիք...

Նայի՛ր,
Թե սրտիս ինչ-որ մի խորշում փուշ կա նախանձի,
Հանիր քո բարակ ու նուրբ մատներով,
Թե քեն ու ոխի սև մացառ տեսնես,
Անխնա խանձիր
Քո արդարության ճառագայթներով:

Գիտես, որ շուտով ես պիտի գնամ խառնվեմ հողին,
Իսկ հողը այնպես կարոտ է սիրո,
Քնքշության կարոտ,
Դու սեր գումարիր քո ամեն շողին
Եվ տուր, որ տանեմ,
Խառնեմ աշխարհի սրտին քարքարոտ:

Եվ ինձ ներումի մեծ շնորհը տուր,
Սերն ու ներումը որբացել վաղուց
Ու շատ են տխրում,
Տուր շռայլորեն,
Ինչքան որ ունես, ինձ բոլո՛րը տուր,
Որ հողը դառնա մի քիչ ավելի խոնարհ ու փխրուն:

Եվ տուր ինձ խղճի ցորենը մաքուր ու անանձնական,
Որ նա հասկ դառնա թեկուզ շիրիմիս այս փոքրիկ հերկում,
Հասկի կարոտով թող լուսաբացին արտույտները գան,
Իսկ դու լավ գիտես,
Թե լուսաբացին
Արտույտներն այդ խենթ ինչե՞ր են երգում...

* * *

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես հավիտենության,
Եկ ու աշխարհը քո խաղաղության անձրևով ցողիր...
Ինչպե՞ս թաքցնեմ քեզանից մորմոքն իմ սև մենության
Եվ գիշերային իմ տագնապների խռովքը խորին:

Գիշերը ամբողջ՝ ընկնող աստղերի արցունքը կոպին
Եվ ոտքերի տակ ձերմակ մշուշի մոխիրն ալեվետ,
Լյառն իմ Արարատ նման էր այնպես տառապյալ Հոբին
Եվ Հոբի նման ահեղ զրույց էր բացել Աստծո հետ:

Եվ ասում էր նա.
- Տե՛ր, հարկ է, որ ես տրտունջ ու բողոք
Կրծքիս տակ նիրհող հրաբուխներով դեմքիդ նետեի,
Սակայն կոկորդս խցկել ես, ավաղ, դու քար ու հողով
Եվ թողել ես ինձ միայն մարդկային բարբառն այս թերի:

Դե լսիր, քննո՛ղ,
Ի՞նչ էի արել, ասա, քո հանդեպ,
Որ կուրծքս այսպես այս վերք-վիհերով պատառոտեցիր,
Որ իմ ճակատին փշրեցիր անվերջ կայծակ ու շանթեր
Եվ զավակներիս արյունն աչքիս դեմ այսպես ոթեցիր:

Ի՞նչ էի արել...
Իմ զավակներին շուրջս բոլորած,
Ես գինի էի քամում իմ ոգու արդար ողկույզից,
Արշալույսների մաքուր քուրայից հանում խիղճ ու հաց,
Տաճարներ էի կերտում հավատի քարից ու լույսից:

Իմ անդունդներում
Ես չարի ոգին հավիտյան բանտել,
Շղթաներ էի դրել ձեռքերին այն չար արքայի,

Պատգամել էի իմ դարբիններին, որ հավետ զարկեն
Ու այնպես զարկեն, որ չարը երբեք չնստի գահի:

Ինչո՞ւ ուզեցիր,
Որ ձյունս դառնա արցունքի հեղեղ,
Ինչո՞ւ իմ կրծքին բացիր վիհերն այս վերքի ու խոցի,
Իմ բարձունքները դարեդար արծվի բներ են եղել,
Ինչո՞ւ թողեցիր, որ սողա այնտեղ վտառը օձի:

Ինչո՞ւ տվեցիր
Վատթարագույնը բոլոր ցավերից՝
Իմ իսկ հողի մեջ պանդուխտ լինելու մորմոքը անքուն,
Եվ հառաչանքս իմ իսկ հողմերից ծանր է ավելի,
Եվ հեծությունս մթին է՝ որպես անդունդի անկում:

Այն սև օրերին
Աղաղակեցի ես հուսակտուր,
Այն սև օրերին ինքս ինձ փոխեցի վիթխարի զանգի,
Բայց խուլ էր աշխարհն...
Իսկ երբ աշխարհի սիրտն ու խիղճն է խուլ,
Ահագնանում է ու խտանում է ամպը մեղսանքի:

Երբ քնում է խիղճն,
Աշխարհի վրա մահն է արթնանում,
Երբ զանգն է լռում,
Սուտը նստում է սև խրախճանքի...
Տեսնում եմ նորից.
Մահը սնկաձև իր խայթն է հանում,
Որ վերջին անգամ գրոհի ընդդեմ լույսի ու կյանքի:

Ընդդեմ անձրևի,
Որ անհայտության հեռու ոլորտից
Մաքրության խորհուրդն ու ծլարձակման հրաշքն է բերում,

Եվ ընդդեմ հողի այն տաք գոլորշու, այն տաք կարոտի,
Որ սերմի փառքը թևերին առած, ճախրում է վերում:

Տեր, Քեզ եմ դիմում՝
Կրծքիս տակ նիրհող հրաբուխներով
Ես քեզ եմ դիմում՝ հողմի պես ձգվող ահեղ հեծությամբ,
Գոնե այս անգամ դու եղիր արդար ու եղիր ներող,
Չարը խափանիր բարուդ մեծությամբ:

Տո՛ւր ամենեցուն դու խաղաղության շնորհը վերին,
Հեղի՜ր ամենուր արդարությունդ որպես մանանա.
Իսկ ինձ քիչ է պետք.
Թող գեթ սառուցյալ իմ բարձունքներին
Հույսի մանուշակն իր աչքը բանա:

...Գիշերը ամբողջ՝ ընկնող աստղերի արցունքը կոպին
Եվ ոտքերի տակ ճերմակ մշուշի մոխիրն ալեվետ,
Լյառն իմ Արարատ՝ նման մոխրի մեջ տվայտող Հոբին,
Այսպես էր խոսում
Աշխարհի,
Դարի
Ու հավերժի հետ:

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես հավիտենության,
Դու, որ հավերժն ես,
Զորավիգ եղիր իմ Արարատին,
Վառիր ճակատին քո լույսը կապույտ այն ծաղկի նման,
Արժանի արա նրան քո վերին ու արդար դատին:

1981-1982

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՍՏՂԸ

...Բանաստեղծի ճամփի նման
Վտանգավոր ու գեղեցիկ...

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՍՏՂԸ

Բացվել էին երկնքի բոլոր դռներն այդ գիշեր,
Երկնքով լույս էր հոսում,
Աշխարհն ասես ծայրեծայր սիրո շշուկ էր ու սեր
Ու Աստծո հետ էր խոսում:

Եվ ծղրիդները բոլոր հարբել լույսից ու բույրից,
Տաղեր էին հորինում,
Իսկ ես մանկան թախիծով մեր տան կավե կտուրից
Իմ աստղն էի որոնում:

Եվ մեկը կար, մեկը կար, որ այնպես մեծ էր ու մով
Ու դող ուներ իր շուրթին,
Բայց բռնկվեց նա հանկարծ ու գեղեցիկ անկումով
Կախվեց մթին անդունդին:

Ես աչքերս փակեցի... Ինչ-որ հավք էր մորմոքում,
Ինչ-որ թախիծ էր ու ցավ...
Հենց այդ գիշեր երևի իմ արյան մեջ ու հոգում
Բանաստեղծը արթնացավ...

1982

ՏՐՏՈՒՆՋ

Դու ծնվեցիր կյանքում մի լավ երգի համար,
Երգ, որի մեջ միայն ալեբախեր ոգին,
Երգ, որ սրտիդ նման լոկ կապույտով մխար
Ու ապաստան դառնար քո մորմոքին:

Երգ, որի մեջ սգար մանկության տունն ավեր,
Մանկության աստղը մով կախվեր որպես արցունք,
Որ կորստի խայթից վերքի նման ցավեր
Ու տվայտեր, որպես անպատասխան հարցում:

Երգ, որի մեջ ճչար անտուն ու որբ մի սեր,
Ու մորմոքար անքուն սրնգահար մի կույր,
Երգ, որ կարողանար հացն ու լույսը կիսել
Ու տալ ամենեցուն այդ շնորհը մաքուր...

Երգ, որ խղճի նման ծունկի իջներ հողին,
Արդարություն հայցեր ու աղերսեր հրաշք,
Երգ, որ փոխվեր ամպի, ամպրոպային ցողի
Ու հեկեկար բոլոր կորուստներիդ վրա:

Երգ, որի մեջ ոչինչ չպահեիր թաքուն,
Ոչ տառապանք, ոչ ցավ, ոչ կասկածներ լռին,
Երգ, որ խղճի նման ու սիրո պես մաքուր
Դու պարզեիր մարդուն, քո աշխարհին, դարին:

Սակայն հիմա հասած ճանապարհիդ կեսին,
Դու ցավով ես նայում քո օրերին անցած,

Սև զղջումի նման դու տառապում ես, սի՛րտ,
Եվ հրկիզում է քեզ մի ակամա հանցանք:

Իսկ երգերդ չերգած հաճախ դուռդ են բախում,
Երազիդ մեջ հաճախ քեզ այցի են գալիս,
Դու ուզում ես բռնել, սակայն նրանք սահում,
Ծուխ են դառնում, տեսիլ ու հեռացող ալիք:

Եվ մարում են նրանց շշուկները, ավա՜ղ,
Որ խոսեին պիտի սիրուց, խղճից, բարուց,
Ամոքեին պիտի մարդու սիրտը ցաված,
Ցավ, որ շատ էր այնքան քո այս ահեղ դարում:

Եվ մեղքի տակ կքած դու քայլում ես կրկին,
Տանում ծարավ մի խոր և՛ տառապանք, և՛ թույն...
Քեզ ոգին է կանչում քո որոնած երգի,
Խոստանալով հրաշք ու քավություն...

1962

ՍԻՐՏՍ

Մի նուրբ ձնծաղիկ հողից նոր ելած՝
Արցունքի մի շիթ թերթերի մեջ թաց,
Մի ծիծեռնակի սրաթև սլացք,
Ինչ-որ աղջկա քնքուշ մի հայացք,
Արևի մի շող բեկբեկուն ու տաք,
Ու թրթռում ես, սի՛րտ իմ, կրծքիս տակ...
Ի՞նչ ես դու հիշում,
չգիտեմ,
բայց ես
Շնորհապարտ եմ, սիրտ իմ, քեզ այնպես,
Որ դու կարող ես այդպես թրթռալ
Եվ որ խենթացած կարող ես դու լալ,
Մի նուրբ ձնծաղկից, մի բեկոր հուշից,
Դաշտերին իջած կապույտ մշուշից,
Գարնան հալոցքից, հավքի սլացքից,
Ինչ-որ աղջկա քնքուշ հայացքից:

1960

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Իմ դեմ հորանջում, ծանր շնչում է մի մթին անտառ,
Ու ձանձրանում է անքնությունից գունատ մի լուսին,
Դրսում վայում է անտուն մի քամի, ու դանդաղ, դանդաղ,
Դանդաղ են զարկում ժամանակ ու սիրտ:
Չգիտեմ ինչու, միշտ գիշերով են ցավերն արթնանում
Ու լռության մեջ մխում են կամաց,
Չգիտեմ ինչու, հենց այն հուշն է քեզ բռնում ու տանում,
Որ կուզենայիր մոռանալ հավետ,
Սակայն հիշում ես, տանջվում ակամա:
Չգիտեմ ինչու, արթնացել հանկարծ ու մխում է խուլ
Վաղուց մոռացված ու սպիացած վերքը գնդակի,
Գուցե վերքը չէ դա ամենևին, այլ հուշ մի տխուր,
Գուցե հուշ էլ չէ, այլ մի մոլորված, կորած մի թախիծ:
Ախ, եթե լիներ հիմա մի կտոր շաղոտ ծիածան,
Վիրակապի պես ես կդնեի այս այրվող տեղին.
Կամ լիներ, լիներ գարնան ամպրոպի հեռավոր մի ձայն,
Մի կտոր արև, մի արծաթ ծիծաղ,
Աշնան առավոտ մի ոսկեդեղին...
Բայց մութ է, գիշեր: Ծանր շնչում է մի մթին անտառ,
Ու ձանձրանում է անքնությունից գունատ մի լուսին,
Դրսում վայում է անտուն մի քամի, ու դանդաղ, դանդաղ,
Դանդաղ են զարկում ժամանակ ու սիրտ...

1962

ԱՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՐԻՆ

Կես է գիշերն արդեն... Ու խավարում այս գաղջ
Ծխախոտիս նման հուշն է մխում...
Ի՞նչ իմանամ, հոգիս,
Հեքիաթներ կան ուրախ,
Բայց այս մեկը տխուր, շա՜տ է տխուր:

Ու չգիտեմ ինչո՞ւ, ու չգիտեմ ինչպե՞ս
Ինձ այցի է գալիս հարբած մի մարդ,
Ցնցոտիներ հագած մի շրջմոլիկ,
Մի խենթ,
Ցնցոտիներ հագած, բայց քրմի պես հպարտ:

Ծաղիկներ էր ծախում նա մայթերի վրա,
Իսկ ավելի հաճախ բաժանում էր ձրի,
Գինետուն էր մտնում
Ու այնտեղից ելած,
Տերն էր դառնում բոլոր ծաղիկների:

Ու նա ոչինչ չուներ ծաղիկներից բացի
Ու երկնքից բացի՝ այլ տեղ ու տուն...
Միայն հուշեր ուներ նա «Չարյանցից»,
Որ պատմում էր հարբած ու մղկտում:

Ու նա հարբած էր միշտ,
Հարբած, ինչպես քամին,
Ինչպես երգը,
Սերը
Ու ծովն անեզրական...

Ու նա ազատ էր միշտ,
Ազատ, ինչպես քամին,
Ինչպես երգը,
Սերը
Ու ծովն անեզրական:

Խոստովանանք լինի, որ ես ինքս էլ կյանքում
Շատ ուզեցի հասնել մարդուն այդ խենթ
Ու չհասա սակայն:

Եվ նա մեռավ մի օր,
Մենակ,
Արձակ դաշտում,
Ծաղիկների մեջ թաց
Ու անձրևի ներքո աստղակաթի:

Ախ, ինչ ասեմ քեզ, Տե՛ր,
Ախ, ինչ ասեմ քեզ, կյա՛նք,
Որ չտվիր ինձ բախտն այդ հեքիաթի:

Մեկն իմ ծաղիկների քնքշությունը խլեց
Եվ հողմերին տվեց ժամանակի,
Մեկը առևանգեց խենթությունն իմ հրե,
Մեկը լեղի խառնեց իմ բաժակին:

Կես է գիշերն արդեն... Ու խավարում այս գաղջ
Ծխախոտիս նման ցավն է մխում...
Ի՞նչ իմանամ, հոգիս,
Հեքիաթներ կան ուրախ,
Սակայն իմը տխուր, շա՜տ է տխուր...

1964

* * *

Սիրտ, ես գլուխս եմ խոնարհում քո դեմ...

Դու այսքան փոքրիկ, բայց մի մեծ խղճի
Ապաստան դարձար,
Այրվեցիր այսքան, այսքան մխացիր,
Բայց չմոխրացար:

Գլխիս հետ հավետ վեճի մեջ մտած
Դու քեզ վատնեցիր,
Երբ արդար չեղա, դու շիկնանք դարձար
Ու ինձ մատնեցիր:

Ո՛ր տեղս էլ ցավեց, զարմանքով տեսա,
Որ այնտեղ ես, սիրտ,
Որ ասպետորեն ցավերն իմ բոլոր
Առնում ես ուսիդ:

Դու այսքան փոքրիկ, բայց ամբողջովին
Երգ ես ու արյուն...

Սիրտ, ես գլուխս եմ քո դեմ խոնարհում:

1969

* * *

Սիրտ իմ, նման ես Գեղարդա վանքի...

Բավ է շշուկն իսկ, որ արձագանքի,
Թրթռոց դառնա, երգ դառնա ու դող,
Որ դեպի վերին ոլորտը միտող
Ալեբախություն ու թախիծ դառնա,
Որ հնչյունի պես երկինք համբառնա,
Զնգա ղողանջով հեռավոր զանգի...

Սիրտ իմ, նման ես Գեղարդա վանքի:

1971

ՈՒ ՑԱՎՈՒՄ ԵՍ, ՍԻՐՏ...

Սիրտ իմ, հաճախ ես ցավել դու կյանքում,
Ցավել ես սիրուց, կորստից ցավել,
Տանջել է հաճախ քեզ կարոտն անգութ,
Հաճախ զղջումով մեղքեր ես քավել,
Սակայն ամոքվել ու ապաքինվել,
Ասես հրաշքով նորից ես ծնվել
Ու բախել նորից դաշնորեն ու հաշտ...

Սակայն մի ցավից, ցավից մի անհուն,
Որ գուցե կյանքում չունի և անուն,
Չես ապաքինվում դու այսքան տարի...
Սիրտ իմ, լի՜ ես դու, լի՜ ես աշխարհի
Բոլոր գույներով, բոլոր ձայներով,
Բոլոր հողմերով, ծիածաններով,
Աշխարհի լավո՛վ,
Աշխարհի ցավո՛վ,
Լեցուն այնպիսի սուրբ հրաշքներով,
Որ եթե հանկարծ դու կարողանաս
Ու հրաշքներն այդ աշխարհին բանաս,
Շլանա պիտի հայացքն աշխարհի...
Բայց տառապում ես դու այսքան տարի
Եվ այդ ամենի մի երանգն անգամ,
Հեռու հեռավոր արձագանքն անգամ
Չես կարողանում հետ տալ աշխարհին
Ու ցավում ես, սի՜րտ:

1962

* * *

Ինչ-որ հեռու տեղ մոլորված գառի
Լալագին ու որբ մայունը հանգավ,
Եվ աստղը նորից բարդու կատարին
Թրթռաց, իբրև արծաթե զանգակ:

Կապույտ է հոսում վիհերով Մասյաց,
Եվ աստղալույս է լանջերով հոսում,
Մի աստվածային ներշնչման հասած,
Անտես ծղրիդն է հեռվից սաղմոսում:

Ճամփան մտորում, գնում է անվերջ,
Ուզում է, ասես, ինքն իրեն հասնել,
Մի ծեր տանձենի չոր ճյուղերի մեջ
Տարուբերում է ծաղկած երազներ:

Հողն իր մխացող խոր հարդը հանել,
Հյուսում է բարակ աստղային թևին,
Ծեր Արարատը մրափը վանել,
Քննում է անհայտն ու անքննելին:

Ուշացած հավքն է թևածում ճիչով,
Խռովում նիրհած մորմոքը մթան,
Իսկ ինչ-որ մեկը անհունի միջով
Գնում է անհայտ մի լողարկության:

1970

ՃԱՆԱՊԱՐՀ

Աշուն է ուշ... ճամփիս վրա
Բարդիները կանգնել շարքով,
Սրսփում են կապույտն ի վեր
Մի ոսկեվոր հոգեվարքով:

Ես վաղուց եմ ընկել ճամփա,
Խենթ որոտներ կային օդում,
Լեռան շուրթին շանթերը շեկ
Աստղեր էին ասես զոդում:

Զրնգում էր մի զով քամի,
Վրնջում էր մի հովատակ,
Եվ ինձ առած տանում էին
Անհայտության հովիտը տաք:

Ու ես հավքեր էի տեսնում՝
Փետուրներին կապույտ ու բոց,
Կտուցներին՝ երկինքն արար
Իբրև հսկա մի ծլվլոց:

Իսկ ծաղիկներն այնքան անհայտ,
Զարմանալի էին այնքան,
Որ թվում էր դաշտում ցրված
Երազանքներ են մանկական:

...Հիմա արդեն աշուն է ուշ,
Իր հեռավոր մթնշաղից

Ձին դոփում է որպես կարոտ,
Քամին զնգում որպես թախիծ:

Գնում եմ ես... Աշնան բարդին
Գլխին առել ոսկե մի խույր,
Խոսք է հուշում ինձ շշուկով,
Ու շշուկը շա՜տ է տխուր...

1975

* * *

Կատարներ կան այնտեղ,
Այնտեղ կապույտ կա զով,
Որ հունցված է Աստծո
Եվ աստղերի լույսով:

Այս հոգնության բեռից
Ոչինչ, ոչինչ չառած,
Ախ, լինեի այնտեղ
Արշալույսից առաջ...

1971

* * *

Աշնան բարակած ջրերը լալիս,
Աշնան ոսկին են իրենց հետ տանում,
Ու դուք, կռունկներ, անհայտից գալիս,
Դեպի անհայտն եք նորից հեռանում:

Կապույտ լույսով է հեռուն բռնկել,
Քամին մենավոր մի ծուխ է բեկում,
Ու ձեր կանչի մեջ, չվող կռունկներ,
Ինչ-որ կարոտ է անվերջ հեկեկում:

Կապույտը կտրած գնում եք անվերջ,
Ու աշնան ձեր չուն նման է լալու...
Ինձ էլ տեղ պահեք ձեր երամի մեջ,
Կռունկներ, շուտով ես էլ եմ գալու...

1972

ՏԵՐԵՎ ԵՆ ԱՅՐՈՒՄ

Ոսկի է ու ծուխ...
Տերև են այրում,
Այրում են աշնան
Երազը ոսկի,
Ծուխը դողում է,
Բարակ գալարվում
Կարոտի նման
Ու չասված խոսքի...

Տերև են այրում...
Ու դառնում է ծուխ,
Դառնում է մի բուռ
Ալևոր մոխիր,
Այն, ինչ սոսափ էր,
Սիրո դող էր սուրբ,
Սրտի թրթիռ էր,
Թրթիռ էր հողի...

Տերև են այրում...
Մի կծու մխանք,
Կսկիծ է կծու
Ու մի բուռ մոխիր...

1975

ԵՐԳԸ

Անքուն գիշեր է,
Մի լուռ մխանք է...
Ու բերածն ի՞նչ է,–
Մի քանի հանգ է:

Կապուտակ տենդ է,
Սարսուռ ու դող է...
Ու թողածն ի՞նչ է,–
Մի քանի տող է:

Հոգու մրրիկ է,
Սիրո տարերք է,
Եվ թղթի վրա
Փոքրիկ մի երգ է...

1976

ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

Եվ այս ամենը նման է այնպես
Ինչ-որ հեռավոր աստղից արձակվող
Լուսե տագնապի ու լուսե դողի...

Եվ նման այնպես այն բառ ու հանգին,
Որ թպրտում է երակներիդ մեջ,
Սակայն ոչ մի կերպ չի փոխվում տողի:

Եվ նման այնպես այն տվայտանքին,
Որ գիշերային հավքի տեսք առած,
Զարկվում պատեպատ, վայում է մթնում...

Եվ նման այնպես այն արտասուքին,
Որ թաքուն ծնվում էությանդ մեջ,
Սակայն դուրս գալու ճամփան չի գտնում:

1976

ԱՆԱՆՁՆՈՒԹՅՈՒՆ

Լռեր խռովքն այս, ու ինձ թվար,
Թե ես աղբյուր եմ մամուռն ի վար,
Գարնան անձրև եմ ու առավոտ,
Ցողաթաթախ եմ ու շաղավոտ,
Լեռնային լիճ եմ, այնքան եմ ջինջ,
Որ մեջս լույս է ու էլ ոչինչ,
Ցորենի հասկ եմ, որ լուռ հակվում,
Ճառագայթով է շարունակվում,
Լեցուն փեթակ եմ, ոսկե փեթակ,
Որ զրնգում է արևի տակ,
Կապույտ ծաղիկ եմ, խոտ եմ ու սեզ,
Այնքան խոնարհ եմ, հո՜ղ եմ ասես,
Այնքան թեթև եմ, անանձնական,
Որ բարի լո՜ւյս եմ, որ ես չկամ...

1976

ՔԱՐԸ

Հուշ կդառնամ մի օր... Դարը կիջնի դարի,
Եվ այս քարոտ հողում ես կփոխվեմ քարի:

Ինձ կզարկի կայծակն, ինձ արևը կայրի,
Կշառաչեն կողիս մրրիկները վայրի,
Կկարծրանամ ցրտից, կշիկանամ շոգից,
Ու իմ քարե խորքում լուռ կմնա հոգիս:

Բայց երբ կանաչ-կանաչ մամուռն իջնի վրաս,
Իջնի իբրև քնքշանք, իբրև սիրո երազ,
Ու երբ մաղի անձրևն իր թախիծը թավիշ,
Ես իմ քարե խորքում կհեկեկամ ցավից...

1976

ՊՈԵՏԱԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ

Ահա կգա Բոդլերը, կերևա Էդգար Պոն։
Ե. Չարենց

Անքնության մուժը դարձավ դեղին մորմոք,
Անքնության մուժը դարձավ դեղին թախիծ...
Եվ Բոդլերը չեկավ,
Չերևաց Պոն,
Չարենցն ինքը ելավ մթնշաղից:

Ֆայտոն նստեց,
Անցավ Երևանով խաղաղ,
Հետո Նորքի այգում՝ դուդուկի տակ,
Ամենամեծ աստղը իբրև բաժակ առավ
Ու գինու պես խմեց թախիծը տաք:

Խմեց,
Ու երբ հեռվից լսեց անհայտ կանչեր,
Երբ մորմոքեց հավքը գիշերային,
Ձայնեց, հեռու հեռվից Վարուժանին կանչեց,
Եսենինին կանչեց ու Լորկային:

Եկան նրանք գունատ,
Եկան հպարտ ու լուռ,
Ու երբ հնչեց հանկարծ երգը թառի,
Լորկան տեղից ելավ ու մատներով տխուր
Շոյեց զնգուն լարերն իր կիթառի:

Եվ մեղեդին ծորաց նման արտասուքի.
– Երբ մահանամ, թաղեք կիթառի հետ...
Վարուժանը շոյեց սպիներն իր քունքի,
Ու խենթացավ նորից Չարենցը խենթ...

Հետո Բուդդայի պես աստղերի դեմ չոքեց,
Չոքեց կապույտի դեմ անեզրական
Ու բարբառեց գունատ.
– Ուրիշ ոտքեր
Կախաղանին երբեք թող մոտ չգան...

Եսենինը թեքել շեկ գլուխը ուսին
Ու թախծում էր, ինչպես հասկը արտում...
Բարձրանում էր դանդաղ մի վիրավոր լուսին,
Որ տրտմորեն թառի Նորքի բարդուն...

1977

ՎԱՅՐԿՅԱՆ

Զրնգացող լույսի նման
Մի ձայն հնչեց իմ ականջում,
Եվ ցոլացին մոգություններ
Զարմանալի ու թախծալի,
Թվաց հեռվում ինձ են հիշել,
Թվաց հեռվից ինձ են կանչում,
Թվաց հեռվից աչքով արեց
Մի արևոտ ցայգածաղիկ:

Մանուկ օրվա կապույտի պես
Մի քնքշություն ալեվետեց,
Սահեց, գնաց ու խառնվեց
Աղբյուրների ուրախ լացին...
Ու մեկն անցավ հեռուներով,
Վրաս տխուր մի լույս նետեց,
Անցավ հպարտ՝ այնպես նման
Այն քնքշորեն հեռացածին...

Հետո գույներ՝ կանաչ ու հիր,
Գույներ նռան ու մարջանի,
Գույներ, գույներ, որ քամու հետ
Թափառում են արոտներով...
Ու թռչուններ չտեսնված՝
Փետուրներում կայծ ու քամի,
Ու գազաններ հրաշամորթ,
Հրաշալի մռութներով:

Ու ես գնում էի թեթև,
Աղբյուրների խմբերգն առած,
Ինձ հետ հավքերն էին գնում,
Գնում էին դաշտ ու լեռներ,
Չկար գաղտնիք ու չկար մութ,
Չկար ստվեր ու առեղծված,
Եվ գիտեի ես սիրուց լալ,
Եվ գիտեի սիրուց մեռնել...

Զրնգացող լույսի նման
Փայլատակեց մի հուր վայրկյան,
Զրնգացող լույսի նման
Մի ձայն մարեց իմ ականջում,
Եվ ափերիս պարապի մեջ
Մի թախծություն մնաց հանգած,
Մնաց մի տաք լույսի մոխիր,
Մնաց մի տաք աստղի աճյուն...

1977

ԿԱՐՈՏ

Ամեն ինչից ավելի դու տրվեցիր ինձ կյանքում,
Դու արյան հետ տրվեցիր ու տրվեցիր արյան պես...
Դու տրվեցիր որպես ձայն ու տրվեցիր որպես գույն,
Որպես կապույտ տրվեցիր, որ անկումներն իմ չափես:

Դու կանչ եղար մորմոքի, ղողանջ եղար հեռավոր,
Հասկի ոսկե սոսափյուն, աստղի շշուկ եղար դու,
Եղար քարի մեջ նիրհող այն մրմունջը դարավոր,
Որ արթնանում է հանկարծ ու զնգում է Գեղարդում:

Սակայն ծաղիկը եղար, որ գույն ունի կրակի
Եվ հուրհրում է հանկարծ հրաբուխի շուրթերին...
Մերթ կնոջ տեսք առար դու, մերթ հեռավոր տնակի,
Մերթ օրհնության թևերով ելար ոլորտը վերին:

Եվ այնտեղից ասացիր, որ ինչ-որ տեղ, ներքևում
Ինձ վայրկյանն է սպասում ու գաղտնիքը մերկացող,
Որ ուզածս կգտնեմ... արշալույսի ձեռքերում՝
Ցորենի պես գեղեցիկ ու գեղեցիկ, որպես ցող...

Հիմա աշուն է արդեն, հովերը ցուրտ են ու ջինջ,
Խոտն է մրսում մանկան պես, սարսռում են սեզ ու ցող...
Դու էլ ո՞ւր ես ինձ տանում, դու էլ ո՞ւր ես կանչում ինձ՝
Ցորենի պես գեղեցիկ, գաղտնիքի պես մերկացող...

1977

ՔՆՔՇԱՆՔ

Հեռվից մի զանգ է ասես ղողանջում,
Հեռվից բուրում է ծաղիկ մի տխուր,
Եվ այս քնքշանքը ինձ նորից տանջում,
Երակներիս մեջ հեկեկում է խուլ...

Ի՞նչ անեմ, ասա, չտանե՞մ ու տամ
Հեռու դաշտերում մահացող խոտին,
Ծառերին այս մերկ, ջրերին տարտամ,
Այս աշնանային վաղ առավոտին:

Ի՞նչ անեմ, ասա, մխում է նա թաց,
Մխում է անվերջ ու չի մոխրանում,
Շուրթերիս վրա դողում է հանկարծ
Որպես հեռավոր ու կորած անուն:

Գնում է, վերջին տերևին թառում,
Նրա հետ դողում անկումի ահից
Ու ձեռքերիս մեջ հանկարծ նվաղում
Մեկին շոյելու մաքուր ծարավից:

1979

ՆԵՐՇՆՉԱՆՔ

Մթնշաղի ու շաղի հոտ եմ առնում ես օդից
Ու ամպի հոտ եմ առնում, հոտ եմ առնում ամպրոպի...
Շուտով շանթը կշողա, ու նրա շեկ որոտից
Տեղատարափը պիտի ահագնանա ու դոփի:

Պիտի թվա, թե նորից դեմ հանդիման են ելել
Ճակատագիր ու Աստված, ելել են նյութ ու ոգի...
Առեղծվածը կխոսի իր բարբառով հրեղեն,
Եվ հրաշքը կշողա, և գաղտնիքը կլոգի...

Պիտի թվա, թե նորից ինչ-որ մոտիկ մի հովտում
Ինձ անհայտն է սպասում և սպասում որպես կին,
Ու թե գնամ, կժպտա նա աչքերով իր տրտում
Եվ կառնչի ինձ նորից իր թախծալի հրաշքին:

Պիտի թվա, թե հեռվում կայծկլտում են ցող ու հուր,
Եվ Աստըծո ոգու պես պայծառանում է հեռուն,
Թե քարերն են հեկեկում, ու բառաչով մի տխուր
Ծիածանի թևի տակ ձագ է բերում եղջերուն:

Ու կտեսնեմ ես նորից, թե անկումի ցավի մեջ
Ջրվեժները խելագար ինչ ցնորքներ են կախում,
Թե լոկ մեկ օր ապրելու ողբերգությունը իր մեծ
Փոքրիկ թիթեռն ինչ թեթև ու գեղեցիկ է խաղում:

Եվ վայրկյանը կդառնա անպարագիծ ժամանակ,
Եվ վայրկյանը կդառնա մի անվախճան ճառագայթ...

Կավի խոնավ բուրմունքից ու մամուռից մթամած՝
Նա կձգվի, կհասնի մինչև խորհուրդը անհայտ:

Ու ես մի պարզ հրաշքով անլսելին կլսեմ,
Լույսի կշիռը կզգամ ես ափերի մեջ իմ բաց,
Եվ վայրկյանում այդ վերին, ակնթարթում այդ վսեմ
Կհաշտվեն իրար հետ ճակատագիր ու Աստված:

1978

ԵՐԳԻՑ ՀԵՏՈ

Վերջին տողը գրվեց: Ծխախոտս հանգավ,
Եվ մոխրամանն իմ լի դեռ բուրում է կծու...
Այդ նա գիտի միայն, թե ես քանի անգամ
Խավարի հետ եղա և Աստըծու...

Սիրտս քանի անգամ անհայտ ցավով ծակեց,
Քանի անգամ լցվեց երանության դողով,
Ճառագայթը բռնած՝ ակնթարթը չափեց,
Դարձավ թռիչք, անկում, տենդ ու բողոք:

Անդունդներով անցավ, անցավ հովիտ ու կիրճ,
Նորից գնաց դեպի այն աշխարհը կորած,
Գտավ տնակն իր հին ու ներս մտավ շեմքից,
Մտավ այնպես, ասես մտավ խորան...

Ինչ-որ տեղից լսեց մի հրեղեն բարբառ,
Ինչ-որ լեռան վրա տեսավ այրվող մի թուփ
Ու թռչուններ տեսավ, որ կապույտով հարբած,
Դեպի անհայտն էին անվերջ միտում:

Եվ որտեղից որտեղ հիշեց մի թուխ կնոջ,
Թուխ այտերի վրա կախարդանքի փոսեր,
Նա, որ ժպտաց իբրև անակնկալ շնորհ,
Նա, որ ստեղծվածի լեզվով խոսեց:

Հետո ձորում կորած մի ջրաղաց հիշեց.
Որ մեն-մենակ կքել ու թախիծ էր աղում,

Մտաբերեց մի մութ, մի ահավոր գիշեր,
Երբ մոտիկ էր թվում շունչը մահու:

Նորից բույրեր առավ երիցուկի, խունկի,
Տեսավ այրվող մոմի արտասուքը հստակ,
Եվ այն վերքը հիշեց, որ Պարույրի քունքին
Մարող աստղի նման մխում էր տաք:

Նորից տվեց-առավ ու տվայտեց անքուն,
Ինքն իր խղճի առաջ նորից իջավ ծունկի,
Ապաշխարեց ասես Նարեկա սև վանքում
Ու մաքրվեց լույսով իր արցունքի:

Վերջին տողը գրվեց: Հետո թախիծ եղավ,
Հետո այցի եկավ կասկածանքի ոգին...
Ի՞նչ իմանաս, երգդ տենդ ու դողով գրված՝
Գուցե պետք չէ կյանքում և ոչ ոքի...

Ի՞նչ իմանաս... Սակայն պիտի տքնես անքուն,
Պիտի այդպես անվերջ փոխվես տենդ ու դողի,
Այդպես կամաց-կամաց պիտի մխաս կյանքում,
Այդպես կամաց-կամաց դառնաս մոխիր....

1979

ԵՂԻՃԵ ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ

Առասպել ես ասես ու անսկիզբ լեգենդ,
Նաիրեցի մի բիրտ ու բարբարոս մի խալդ,
Հազարամյա թախիծ, հազարամյա մի տենդ
Եվ արշալույս ես հիր, և արշալույս ես ալ:

Ցավը նվում էր խուլ ու հոլովվում դարեր,
Ցավը տնքում, զնգում ու փոխվում էր ոգու:
Ու դու եկար... Դեմքիդ մի թախիծ էր թառել
Ու մի լույս էր թառել, որ վերուստ է չոքում:

Ճանապարհն էր մեռնում հոգեվարքով դեղին,
Ու երազն էր մեռնում ճանապարհի փոշում...
Ցոլցլում էր վերում Հարդագողի ուղին,
Ու աստղային ձայնով աղջամուղջն էր խոսում:

Ու հարբեցիր... Գինին աստղերից էր քամած...
Ու խենթացար... Թվաց՝ լույս է բխում վերքից...
Դու վիհերից ելար՝ աչքերիդ մեջ առած
Մի հարության հրաշք ու մի ավեր երկիր...

...Ու չտեսա ես քեզ (երևի բախտն էր չար):
Վերջին երգդ գրած պատին քո սև խուղի,
Նորից լեգենդ դարձար ու առասպել դարձար
Ու բռնեցիր նորից Հարդագողի ուղին:

Եվ քեզ ոտից գլուխ անգիր ու գոց արած,
Թափառել է անքուն պատանությունն իմ որբ

Ու որոնել է քեզ՝ կոպերի տակ առած
Մահվան մի սև տեսիլ ու արեգակ մի բորբ:

Ու որոնել է քեզ... Ու մերթ տեսել մեր հին
Մատյանների ծալքում՝ իբրև վկա ու սուրբ,
Մերթ սերմնացան որպես, որ հայրենի հերկին
Իր ցորյանն է տեղում՝ մաքուր, որպես ասուպ:

...Մի գանգրահեր տղա շիրիմների մեջ հին
Քո շիրիմն է փնտրում ու չի գտնում սակայն...
Ու կանչում է նրան Հարդագողի ուղին,
Ու կանչում է, կանչում կապույտն անեզրական:

1977

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ՀԵՏ

Եկար գունատ ու տրտում
Աղոթեցիր ու անցար...
...Եվ թռչուններ մնացին
Կապույտի մեջ ու լույսի,
Ցավի ծաղիկը մնաց
Ցողաթաթախ ու անչար,
Եվ մնացին շշուկներ
Ու մշուշներ սնդուսի...

Ոսկե ծառեր մնացին,
Մնաց լուսե մի կածան,
Արևի մեջ աղոթող
Մի ոսկեվոր կիրակի,
Մնաց մամուռ ու արցունք,
Մամուռն ի վար՝ ծիածան,
Ու կանչող ծուխը մնաց
Քո հեռավոր հյուղակի:

Եկար գունատ ու տրտում,
Աղոթեցիր ու անցար...
...Եվ բուրումներ մնացին
Երիցուկի և ուրցի,
Ու ասես ցավն աշխարհում
Դարձավ աղոթք մի պայծառ,
Ու ասես մահն աշխարհում
Փոխվեց անմահ զրույցի...

1977

ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻ ՀԵՏ

Նորից կանչերը լուռ մորմոքեցին...
Ու ես կանգնել եմ շիրիմիդ առաջ,
Մարմարը սև է, ձերմակ է կեչին,
Կեչին՝ դաշտերի հեռավոր հառաչ:

Կեչին, որ սեր էր, աղջիկ էր բարակ,
Կեչին, քո կեչին, որ մնաց այրի...
Նա իր վարսերն է տարածել վրադ,
Որ կարոտը լա ծննդավայրիդ...

Որ կարոտը լա խոտի ու թփի
Ու հին տնակիդ մորմոքը անքուն
Եվ արցունքի պես վրադ թափթփի
Երեկոները մանուշակագույն:

Որ իր ձեռքերով բարակ ու երեր
Քեզ վրա հողի օրհնանքը մաղի...
Ու թվում է, թե հենց ինքն է բերել
Եվ դրել քարիդ ծաղիկն այս ծավի...

Ծաղիկն այս կապույտ, այս ծաղիկը թաց,
Տափաստանային քնքշանքն այս վայրի...
...Ու ես չգիտեմ, ինչո՞ւ է հանկարծ
Արթնանում ցավն իմ ծննդավայրի...

Օ, ո՛չ, նման չէ նա քո Ռյազանին,
Այնտեղ քարափ է, վիհ է ու անդունդ,

Այնտեղ վայում է լեռնային քամին,
Ու խենթ Եփրատը ժայռեր է քանդում:

Այնտեղ թախծում է որբացած մի տուն,
Եվ հողը, հո՛ղն է ծարավից շիկնել,
Քարերը ոխով երկինք են միտում,
Բայց այնտեղ էլ կան կապույտ ծաղիկներ:

Ու գիտեմ, մի օր, երբ ձեռքն իմ թափուր
Քարանա հանկարծ, ու սիրտս մարի,
Ոչ ոք չի բերի ծաղիկն այդ կապույտ,
Որ դնի իմ սև շիրիմի քարին:

...Կանգնել եմ ահա շիրիմիդ առաջ,
Երկինքն ամպել է, անձրև կմաղի...
Ձգվո՞ւմ է իմ մեջ խոնավ մի հառաչ,
Ու մորմոքում է մի կապույտ ծաղիկ...

1978

ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱՅԻ ՀԵՏ

Բանաստեղծների
Սիրտը երևի
Լույսով է հունցել
Երկնային Տերը...
Սև խավարի մեջ
Գնդակները սև
Ինչ հեշտ են գտնում
Նրանց սրտերը...

Չգիտեմ, ե՞րբ են
Այդ սև գնդակը
Սրտիդ մեջ մեխել...
Եվ գիտեմ սակայն,
Որ շուրջն ամեն ինչ
Խավար է եղել
Ու սև է եղել:

Ինչ-որ հեռու տեղ
Կիթառն է լացել,
Ու լաց են եղել
Արևածագի
Ալ նժույգները...
Գեղեցիկ ու մերկ՝
Հենվել նարնջի
Ոսկեվոր ծառին,
Ու լաց է եղել
Հենց ինքը՝ Սերը...

Ախ, խավարի մեջ
Գնդակները սև
Ինչ հեշտ են գտնում
Բանաստեղծների
Լուսե սրտերը:

Ճաքած նոներից
Ասուպ է կաթում,
Կաթկթում են հուր
Արտասուքները...
Եվ լաց են լինում,
Եվ լաց են լինում
Արևածագի
Ալ նժույգները...
Հետո ցնցում են
Բաշերը իրենց,
Թամբերին առնում...
Վիրավոր Սերը,
Արար աշխարհով
Սուրում են անսանձ
Արևածագի
Ալ նժույգները...

1977

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ ՀԵՏ

Դրսում խշշում է աշնան բարդին,
Ու մի ծղրիդ է անքուն սուլում...
Արդեն հասե՞լ ես դու դրախտին,
Թե՞ թափառում ես դեռ լազուրում:

Եթե հասել ես, ապա գիտեմ,
Որ նա նման է քո հին Վանին,
Այգեստաններն են այրվում քո դեմ,
Ծովից կապույտ է բերում քամին:

Եվ շարմաշուղը՝ շողը վրան,
Լուռ շեփորում է արշալույսին,
Եվ բարդիներ կան բարակիրան,
Եվ սաղմոսում է մի մեծ լուսին:

Եթե հասել ես, ապա գիտեմ,
Որ երբ դրել ես ոտքդ շեմքին,
Հանկարծ Չարենցն է ելել քո դեմ
Եղերերգության լույսը դեմքին:

Անուշ մայրիկդ է երևացել,
Եվ լույսերի մեջ նա այդ վերին
Այրվող վերքերդ է մեկ-մեկ բացել,
Զով ամպը դրել քո վերքերին:

Ինչպե՞ս դիմացար, ի՞նչ հրաշքով
Անուշ մայրիկիդ արտասուքին,
Ինչպե՞ս դողացին շուրթերը քո
Դիպած Բակունցի պայծառ քունքին:

Աշնան գիշերվա կապույտ թևով
Մի լուր ուղարկիր ինձ, Գուրգեն խան,
Ուղարկիր աստղի, շողի ձևով,
Ու քեզ չեմ թողնի անպատասխան:

Ասա՛, այդտեղ էլ երգեր գրում,
Աստղերի դողը փոխում տողի,
Թե՞ լոկ լռում եք, լռում, լռում
Փոշիների մեջ Հարդագողի:

Եկ քիչ էլ խոսենք «վասն սիրո»,
Շատ էիր սիրում նման բաներ...
Հրեշտակները, թե կան իրոք,
Քեզ թույլ տալի՞ս են սիրաբանել...

Գիտեմ, ժպտում ես դու խորամանկ
Քո սև մութից այդ, քո դարանից...
Բայց դե դրախտը գտել ես փակ,
Մտիր դժոխքը, մի՛ վարանիր...

Ո՞վ պիտի քեզնից լավ իմանա,
Որ դա չարիք չէ մի ահավոր,
Չէ՞ որ այնտեղ են և այն կանայք,
Որ գեղեցիկ են ու մեղավոր:

Եվ գիտեմ, նորից ժպտում ես կեռ
Կամ ծիծաղում ես դառն ու աղի,
Եվ այն ասուպը, որ վար սահեց,
Գուցե արցունքն է քո ծիծաղի...

1977

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԵՏ

Հաց է եղել ու գինի, ու լռություն է եղել,
Ու թախիծն է կաթկթել, որ մաքուր էր որպես ցող,
Մենք նստել ենք իրար դեմ ու թախիծով այդ ցողել՝
Ես՝ իմ աշխարհը կորած, դու՝ քո աշխարհը կորչող:

Ինչ տխուր է լեռներում չվող կանչը կռունկի,
Եվ սիզախոտը այրված ինչ թախծագին է բուրում,
Թափառական մի կարոտ այնտեղ իջնում է ծունկի,
Հեկեկացող աղբյուրի մանկությունը համբուրում:

Վանք է եղել ավերակ, չորացած հուն ու ակունք,
Ու եղինջները կարծես բոբիկ ոտքերդ են վառել,
Դու լռել ես քարի պես, բայց ես նայել եմ թաքուն
Ու աչքերիդ չհասած արցունքները նշմարել:

Ո՞ւր են տանում, չգիտեմ, արահետներն այս քարոտ,
Բարդիներն այս արծաթե ո՞ւր են այսպես հեռանում...
Այնտեղ շրջում է անվերջ թափառական մի կարոտ,
Ծխանի հոտ, հացի հոտ, ուրցի հոտ է որոնում:

...Ես չգիտեմ, մեզանից ո՞վ պիտի շուտ հեռանա
Դեպի եզերքն անհայտի, ուր տառապանքն է լռում,
Բայց մեզնից մեկը, գիտեմ, պիտի կրկին որբանա,
Ես՝ աշխարհում իմ կորած, դու՝ քո կորչող աշխարհում:

1980

ՏԵՆԴ

Գիշերը երազիս ճամփին կորցրել մի ուրիշ երազ,
Քրքրում անհունը կապույտ, որոնում ու չէի գտնում,
Մերթ ասես ասուպ էր դառնում, մոխրանում, թափվում էր վրաս,
Մերթ իբրև թափառիկ կրակ հեռանում, մարում էր մթնում:

Մերթ կնոջ տեսքով էր գալիս, անծանոթ ու ծանոթ կնոջ,
Մի վայրկյան շղարշն իր բացում ու հետո փակում էր անդարձ,
Կոպերով կանչում էր ասես, խոստանում մի վերին ցնորք
Ու հետո հոնքերով վանում, հեռանում, գնում էր անդարձ:

Իսկ ճամփան կածան էր մի նեղ, մացառը կածանը պատել,
Ծեծում էր ծնկներս հոգնած, ծեծում ու քերծում էր վայրի,
Եվ սակայն չէր ծորում արյուն... Ա՜խ, գոնե, արյունս կաթեր,
Ասում են՝ արյունը հեղվող մարում է խորհուրդը չարի:

Ա՜խ, գոնե ընկնեի վերից, ջարդեի կողերս բոլոր
Եվ ցավի կսկիծը առած, տնքայի, զգայի, որ կամ...
Բայց, ավա՜ղ, գամվել եմ տեղում, կարկամել, գամվել եմ մոլոր,
Հառաչը կոկորդս խցկել, կորել է շշուկս անգամ:

Եվ հետո կածան էր նորից, մացառը կածանը պատել,
Գնում էր, գնում էր անվերջ, չգիտեմ, թե ուր էր տանում...
Իսկ կորած երազս նորից կարմիր ու կանաչ էր հագել,
Իսկ կորած երազս կանգնել ու հեռվից ձեռքով էր անում...

1978

ԱՌԱՆՑ ՀԵԾՅԱԼԻ

Առանց հեծյալի տուն վերադարձած նժույգի նման
Աշնան գիշերը իմ սեմի վրա վրնջում է խուլ...

Ո՞ւր է հեծյալդ, նժույգ իմ տխուր...

Նա ելավ մի օր,
Քո բաշը գրկած սլացավ հեռու,
Գնաց փնտրելու այն գետն արծաթե,
Ուր դեռ ապրում են ջրահարսերը:

Գնաց փնտրելու այն եղեգը հուր,
Որ արշալույսին երգում ինքն իրեն,
Կարոտ է մաղում
Եվ լույսն ստանում իբրև արձագանք:

Գնաց փնտրելու հովիտն այն կանաչ,
Ուր սերը մերկ է,
Եվ բոլոր մարդիկ
Դեռ խառն են ապրում աստվածների հետ...

Առանց հեծյալի տուն վերադարձած նժույգի նման
Աշնան գիշերը իմ սեմի վրա վրնջում է խուլ...

Ո՞ւր է հեծյալդ, նժույգ իմ տխուր...

1979

ՆԻԱԳԱՐԱ

Նիագարա... Մոլեգնում են ջուրն ու քարը,
Մոլեգնում է այս ճգնավոր խելագարը...

Նիագարա, ոգի դարձած դու ջուր ահեղ,
Նիագարա, դու գետերի Նարեկացի,
Ես դեռ մանկութ քո տեսիլքն եմ իմ մեջ պահել
Ու եկել եմ, անակնկալ եկել այցի:

Կարծում էի՝ խրախճանք ու տոն ես երգի,
Կարծում էի՝ գեղեցկության հանդես ես լոկ,
Մինչդեռ ճերմակ ճգնավորն ես տիեզերքի
Ու աշխարհի մեղքն ես քավում դու ծնկաչոք:

Նիագարա... Ճերմակ ողբ ես, ճերմակ սուգ ես,
Խենթ բողոք ես ու զայրույթի արտասուք ես:

Նիագարա, որոտում ես ու թնդում ես,
Բարձունքում ես ու նույն պահին անդնդում ես,
Խոլ թռիչք ու խելակորույս անկում ես դու,
Անկումիդ մեջ անվախճան ու անքուն ես դու:

Անկումիդ մեջ տառապում ու մաքրվում ես,
Ասես լույս ես, լույսի սյուն ես, լույսի քուրմ ես,
Լույսի հիմն ես, լույսի ձայն ես ու աղոթք ես,
Երազանքդ ծիածան է, որ շաղոտ է:

Նիագարա... Դու մաքրության աղերսանք ես,
Խղճի ձայն ես ու տագնապի ահեղ զանգ ես:
Նիագարա, ես կուզեի բաշդ շոյել,
Ես կուզեի խոսքեր ասել քո ականջին,
– Ել մթամած այս անդունդից, ահեղ պոետ,
Ել ու գնա այս աշխարհի տխուր կանչին:

Ել ու գնա. նա մաքրության է ծարավի,
Ծարավի է հրաշալի մի հարության,
Սրբիր փոշին, խլացրու ձայնը ցավի,
Կախիր ծավի ծիածանը արդարության...

Նիագարա... Մոլեգնում են ջուրն ու քարը,
Մոլեգնում է այս ճգնավոր խելագարը...

1979

ԻՆՔՍ ԻՄ ԴԵՄ

Ներշնչումներիս լույս մշուշի մեջ
Ես այնպես հաճախ տեսնում եմ նրան:

Աչքերն եմ տեսնում՝
Աստվածաշնչյան առավոտի պես մաքուր են նրանք,
Աստվածաշնչյան առավոտի պես զարմացած ու մեծ:

Իսկ իմ աչքերը լեցուն են, ավաղ,
Կասկածանքների մութ ծվեններով
Եվ հարցումներով, որ մինչև հիմա չունեն պատասխան:

Շուրթերն եմ տեսնում՝
«Հաց» բառը այնտեղ նոր է արարվում ցորենի բույրից,
«Աղ»-ը դեռ ծովի համն ու հոտն ունի,
Եվ թրթռում է «Սեր»-ը առաջին աղոթքի նման:

Իսկ իմ շուրթերին
Մաշվել են, ավաղ, բառերն այդ բոլոր,
Կորցրել համը, կորցրել հոտը ու թրթիռը սուրբ:

Եվ սիրտն եմ տեսնում՝
Բանաստեղծության բույն է նա ասես,
Եվ թռչունները՝ կապույտ թռչուններ, ոսկե թռչուններ,
Ելումուտ անում, ճախրում են որպես թևավոր օրհնանք...

Իսկ իմ սիրտն, ավաղ,
Չասված խոսքերի

Ու նահատակված բանաստեղծության շիրիմ է ասես:
Հոգին եմ տեսնում,
Խաղաղ է այնտեղ, ինչպես լինում է ամպրոպից հետո,
Եվ մահը մահ չէ, այլ լուսաբացին, ցորենին, ցողին
Հավետ ծուլվելու արարողություն:

Իսկ իմ հոգու մեջ
Մարմին ու ոգի բզկտում իրար,
Դեռ ոխ են դառնում ու դառնում են քեն:

Ներշնչումներիս լույս մշուշի մեջ
Ես այնպես հաճախ տեսնում եմ նրան,
Ու գնում, գնում, որ հասնեմ նրան...

1980

ՍՐՆԳԱՀԱՐԸ

Արևը մայր մտավ, հանգան հրդեհ ու հուր,
Կապույտի փակ կոպին աստղը դարձավ արցունք...
Իրիկնային քամին՝ սրնգահար մի կույր,
Կախեց մի հին թախիծ ու մի տխուր հարցում...

Ո՞ւր է, հիշո՞ւմ ես դու, կար մի պայծառ տղա
Ու բանաստեղծ էր նա. երգեր ուներ անտիպ,
Անծանոթ էր նա դեռ կասկածանքին մռայլ
Եվ անծանոթ գինուն, և անծանոթ խանդին...

Եվ կար մի հին փողոց, նաիրյան հին մի բակ,
Ու բարդիներ կային կապույտի հետ խոսող,
Եվ այդ բակում մի լույս ու գաղտնիք կար մի փակ,
Որ ծանր ծամ ուներ, աչքեր ուներ խոշոր:

Եվ կար պատին հենված սրնգահար մի կույր՝
Մի թափառիկ թախիծ, մի մոլորված կարոտ,
Նրա երգը ծնվում աստղերի հետ մաքուր
Ու մարում էր հետո աստղերի հետ մարող...

...Մշուշվեցին հեռվում գիշերներն այն զնգուն
Ու բարդիներն այն ձիգ կապույտի հետ խոսող...
Եվ փակ մնաց հավետ այն գաղտնիքը քնքուշ,
Որ ծանր ծամ ուներ, աչքեր ուներ խոշոր:

Քամին ցրեց, տարավ այն երգերը անտիպ...
Քամին հարցեր կախեց անպատասխան,

Ու մշուշվեց ցավից, ու մշուշվեց խանդից,
Ու մշուշվեց գինուց, այն լավ տղան:

Եվ նա հետո կյանքում ուրիշ երգեր գրեց,
Բայց ոչ մի երգ չայրվեց այն կապուտակ բոցով,
Ուրիշներով հարբեց, ուրիշներին սիրեց,
Բայց ոչ մի սեր չեղավ այնպես խոցող:

Մո՛ռ է գիշերն արդեն... Ու կապույտին կպած
Դողդողում է աստղի արտասուքը մաքուր...
Հեռու հեռվից իբրև ճակատագիր ու բախտ
Սուլում է դեռ, սուլում սրնգահարն այն կույր:

1979

ԵՐԱՉ

ԴաՀր է անցել, թե՞ տարի... Ես արդեն չկամ:
Աշնան գիշերն է նորից իջել քաղաքին:
Եվ նշմարում եմ հեռվից ես այն աղջկան,
Որ շրջում է սպիտակ շղարշը հագին:

Անպաշտպան է որպես խիղճ, որպես սեր ու գութ,
Ու գեղեցիկ, գեղեցիկ, որպես թախծություն...
Քամին ելնում է ահա ու շնչով իր ցուրտ
Խոստանում է մոտալուտ փոթորիկ ու ձյուն:

Իսկ նա շղարշը հագին թափառում է դեռ,
Թափառում է սիրո պես ու մարող հուշի,
Թարթիչներին աստղային արցունքն է սառել,
Ու մազերի մեջ խոնավ բույրն է մշուշի:

Բայց աչքերի մեջ մաքուր շողք է ու արև,
Ոսկե ցնորք է կախում երգը արտույտի,
Աստվածային ինչ-որ ձեռք իրար է խառնել
Սերը լույսի հետ առատ ու լույսը՝ գութի:

Ես ճանաչում եմ նրան՝ իմ երազն է դա,
Որ ինձ հետ էր ողջ կյանքում իբրև խիղճ ու երգ...
Նա որբացել իմ մահով ու այդպես հիմա
Թափառում է աշխարհում անպաշտպան ու մերկ:

Ես ուզում եմ բարձրանալ հոգնած և ուժատ,
Գիրկս առնել ու շոյել ձեռքերը տխուր,
Եվ սակայն չեմ կարենում, հողը ծա՜նր է շատ,
Ու ես ծանր հողի տակ հեկեկում եմ խուլ:

1981

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

– Ո՞վ էր նա, ասա...

– Չգիտեմ ոչինչ,
Այն տեսա միայն, որ աչքերի մեջ
Հեռու անհայտի առկայծումը կար:

– Որտեղի՞ց եկավ...

– Չգիտեմ հաստատ, բայց մերկ ոտքերից
Գարնան տաք հողի բուրմունք էր գալիս,
Իսկ բաց ճակատին
Մուժի ծվեն կար ու աստղափոշի:

– Ի՞նչ ասաց նա քեզ...

– Լավ չհասկացա,
Աղոթքի էին խոսքերը նման
Եվ նման էին մի սուրբ մեղեդու,
Որ բառեր չունի:

– Ո՞ւր տարավ նա քեզ...

– Նախ հովիտ էր տաք,
Ծառերը այնտեղ
Հրաշքի բոլոր ձևերն ունեին,
Եվ ամեն ծաղիկ խոստում էր բարի:
Հետո անդունդ էր, որ լի էր մութով:

– Եվ ո՞ւր հեռացավ...

– Գիշերը մեծ էր ու ճամփան անհայտ,
Գիշերվա միջով նա գնում էր լուռ,
Եվ ճամփի վրա
Ոսկե աստղերը հեկեկում էին...

1979

ՀԱՎԱՏ

Պատահել է հաճախ՝ ցուրտ է եղել այնպես,
Կորցրել ես հավատ ու ներշնչանք ու սեր,
Եվ թախիծդ դեղին մի սովահար շան պես
Ոռնացել է տխուր ու թաթերը լիզել...

Բայց երբ լույսը նորից կոպերիդ է իջել,
Ներշնչանքդ նորից դարձել է ձույլ մի զանգ,
Դու կանգնել ես հողի ու երկնքի միջև,
Շշնջացել նորից՝ դու օրհնություն ես, կյանք...

Հառաչել է քո մեջ մի կորուսյալ աշխարհ,
Որ արյունդ արդար դեղին մաղձի փոխի,
Երազանքդ իբրև մի սրբազան նշխար
Ոտնատակ է եղել ու դարձել է մոխիր...

Սակայն բավ է եղել ցայգածաղիկ մի լուրթ,
Փեթակի խուլ մի ձայն, հասկի մի շեկ ցոլանք,
Մի օրհնված ողկույզ, մի աստղահամ աղբյուր,
Որ շշնջաս նորից՝ դու օրհնություն ես, կյանք...

Հաճախ գլխիդ վրա ինչ-որ անհայտ թևեր
Սավառնել են անտես ու շառաչել տխուր,
Ունայնության փոշոտ տագնապները բերել
Ու կանչել են, կանչել դեպի հովիտ մի խուլ...

Սակայն բավ է եղել, որ լուսամուտն ի վեր
Կամ արծաթում գետի, իբրև ոսկե պատրանք,

Քեզ պատահմամբ ցոլա կնոջ մարմինը մերկ,
Որ շշնջաս նորից՝ դու օրհնություն ես, կյանք...

Հիմա գիշեր է մեծ, ամռան հսկա գիշեր,
Ասուպներ են դառնում մոլորակներն անհայտ,
Ծավալվում է, ծփում աստղային լույս մի շեր,
Ծավալվում է, ծփում մի ահավոր տագնապ:

Ի՞նչ է գուժում տագնապն ու ի՞նչ պիտի բերի,
Ի՞նչ են հուշում ընկնող մոլորակներն այս տաք...
Սակայն ինչ էլ հուշեն, դու հրաշք ես վերին,
Սակայն ինչ էլ լինի, դու օրհնություն ես, կյանք:

1978

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Երևի, իրոք, ինչ-որ ժամանակ ես հող եմ եղել,
Քանի որ իմ մեջ մորմոքում է դեռ ծարավ մի վերին,
Անձրև է տենչում ու կապույտ հեղեղ,
Ուզում է գնալ ու ծնկի իջնել մեր աղբյուրներին:

Իրոք, երևի, ինչ-որ ժամանակ ես հող եմ եղել,
Քանի որ գիտեմ, հողի պես գիտեմ այն գաղտնիքը մութ,
Թե սևահողի սև տառապանքից ինչպես է ելել
Ծաղկի հրաշքը կարմիր ու կապույտ:

Երևի նաև ինչ-որ ժամանակ թռչուն եմ եղել,
Քանի որ անվերջ կապույտն է կանչում,
Քանի որ անվերջ երազներիս մեջ թռչում եմ թեթև
Եվ մեջքիս վրա զգում թևերի մի խուլ շառաչյուն:

Իրոք, երևի, ինչ-որ ժամանակ թռչուն եմ եղել,
Ու մինչև հիմա իմ մեջ լալիս է կապույտը վերի,
Իսկ թիկունքիս մեջ, թիակներիս մեջ ինչ-որ ցավ կա դեռ,
Երևի ցավն է կտրած թևերի...

1978

ԲԱՂՁԱՆՔ

Պատանության օրերի առաջին ձյունն իջներ ցած,
Եվ փաթիլներն օդի մեջ երազանքներ հինեին,
Թափառեի ես մենակ, թափառեի գլխաբաց
Եվ քնքշորեն ու տխուր սիրահարված լինեի:

Թափառեի, փնտրեի ես քո տեսիլքը տրտում,
Քո հասակը՝ ձյան քողով ու գաղտնիքով պարուրված,
Չգտնեի, մտնեի մի ծխամած գինետուն
Ու դուրս գայի այնտեղից մի քիչ թեթև, մի քիչ բաց:

Եվ ձյունը գար, ձյունը գար, իջներ մաքուր ու խոշոր,
Ձմռան քաղաքը խաղաղ՝ ձնծաղիկի պես բուրեր,
Եվ ձյունը գար, ձյունը գար, ծածկեր աշխարհն այն փոշոտ
Ու ամեն ինչ մաքրության երազներով պարուրեր:

Փակ լինեին աշխարհի առեղծվածները բոլոր,
Առեղծվածները սիրո դեռ չբացված լինեին,
Թափառեի ես մենակ, թափառեի ես մոլոր
Եվ քնքշորեն ու տխուր սիրահարված լինեի:

1979

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՏՐՏՈՒՆՋ

Գուցե այդ պահին տխուր էիր, Տեր,
Տառապում էիր արարման ցավից,
Իսկ ես հող էի,
Կավ էի ես դեռ,
Ու դու քո ցավը
Ակնթարթի հետ խառնեցիր կավիս:

Դրսում գիշեր է,
Անձրևն է լալիս:

Անձրևն է լալիս:
Ու թվում է ինձ՝ առել ցավն այդ հին,
Խոնավ պատերին իմ քարանձավի
Թռչող եղնիկի տեսքով տխրագին
Դրոշմում եմ դեռ պատկերն այդ ցավի,
Սակայն եղնիկը
Խուսափում, թռչում, սլանում հեռու
Ու մոտ չի գալիս...

Դրսում գիշեր է,
Անձրևն է լալիս:

Մութ գիշերվա մեջ
Ինչ-որ գնացք է սուլոցով սուրում,
Եվ այդ սուլոցից
Իմ մեջ կարոտն է հանկարծ սարսռում,
Ուզում է փոխվել տողի, հնչյունի,

Սակայն տողերը խուսափում են լուռ
Ու մոտ չեն գալիս...

Դրսում գիշեր է,
Անձրևն է լալիս:

Դիմացի հարկում
Ցոլում է հանկարծ կապուտակ մի լույս,
Եվ վարագույրին տպվում, դողում է
Կիսամերկ մի կին...
Ու ես ուզում եմ
Երգս առնչել նրա գաղտնիքին,
Սակայն գաղտնիքը խուսափում է լուռ
Ու մոտ չի գալիս...

Անձրևն է լալիս...
Ինչո՞ւ այս ցավը խառնեցիր կավիս...

1979

ՈՒՐ ԵՔ...

Լույսի մաքուր մերկությամբ
Ինչ-որ տեղ սերն է նիրհել,
Ինչ-որ տեղ լույսն է նիրհել
Կնոջ մաքուր մերկությամբ,
Իսկ ինձ հետ դուք եք միայն,
Իմ մենության ստվերներ,
Ծվեններ իմ ծխացող,
Մխանքներ իմ ու իմ ամպ:

Մոմ իսկ չկա՝ բոցկլտար,
Դողար ծաղիկն իր ծավի,
Լար հրեղեն արցունքով
Եվ սպառվեր ինքն իրեն,
Որ զգայի ես նորից
Գեղեցկացումը ցավի
Եվ դիտեի հատնումի
Թրթիռները հրեղեն:

Շատ եմ հոգնել մխալուց,
Ծխալուց շա՜տ եմ հոգնել...
Ո՞ւր եք, ո՞ւր եք, ասուպներ,
Վաղուց, ախ, չեք երևում,
Որպես կանչող կարոտի
Խարտիշահեր ասպետներ,
Շառաչեիք մի վայրկյան
Ու մեռնեիք վերևում...

1977

* * *

Պարույրի հիշատակին

Ընկել են ջահել,
Ընկել,
Սրտերում չարի նետն առած,
Ընկել՝ հանձարեղ,
Ծուրթերին՝ երգի շշուկը վերին:

Մահը,
Որ կին է չար ու պառաված,
Սիրահարված է
Ջահել,
Հանձարեղ
Բանաստեղծներին...

1971

ԿՐԿՆՎՈՂ ԵՐԱԶ

Պարույր Սևակին

Դու, որ կյանքում երբևէ չէիր կրկնում ինքդ քեզ,
Հիմա անվերջ կրկնվող իմ երազն ես դու դարձել,
Գալիս ու նույնն ես ասում՝ թե այն օրը պարզապես
Ուշաթափված էիր դու, իսկ մենք մեռած ենք կարծել:

Թե քունքիդ վերքը փոքրիկ վաղուց արդեն լավացել,
Սպիացել է վաղուց, ու չի ծորում էլ արյուն...
Հետո ուզում ես ասես ինչ-որ գաղտնիք ինձ բացել,
Սակայն մարդիկ են խուժում, աղմկում ու խանգարում:

. . . . . .

Մեր հանդիպումը վերջին իմ այրվող ցավն է դարձել.
Դեմքիդ լույս կար մի խաղաղ, համակերպում կար մի մեծ,
Ուզում էիր դու ասես ինչ-որ գաղտնիք ինձ բացել,
Սակայն մարդիկ խուժեցին, ու շրթունքդ կարկամեց:

Ծշնջացիր ինձ՝ «Հետո»...
Իսկ «Հետոն» ծուխ էր ու շանթ,
«Հետոն» կայծակ էր մի սև, «Հետոն» վերքն էր քո քունքի,
«Հետո» կանգնել էի ես դագաղի մոտ քո դաժան,
Դամբանականս խառնած իմ կաթկթող արցունքին...

. . . . . .

Այս առավոտ կոպերիս նորից ցողն է արցունքի,
Եկել էիր դու նորից, իմ թուխ, իմ խենթ, իմ անսանձ...
Եվ նորից սիրտս է ցավում, որպես վերքը քո քունքի,
Եվ նորից սիրտս է մխում, որպես գաղտնիքն այն չասված...

1981

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

Գարնան առավոտ, դու այսօր այնքան մեծ ես ու բարի,
Ասես հանձարեղ մի երգ ես գրել:
Կամ ասես հենց նոր՝ վաղուց երազած, վաղուց բաղձալի
Մի կնոջ հետ ես դու ժամադրվել:

Գարնան առավոտ, դու այսօր այնքան ջինջ ես ու բյուրեղ,
Ասես չես տեսել մուժ ու թախծություն...
Բայց ես չգիտեմ, ինչո՞ւ եմ ուզում նստել ու գրել
Մի սաստիկ տխուր բանաստեղծություն...

Գուցե նրանի՞ց, որ հենց այսպիսի մի օր էր, երբ ես
Առաջին անգամ սիրահարվեցի,
Ու հետո սերս թախծություն դարձավ ու կարոտ մի հեզ.
Ու սիրտս դարձավ ցավի փակ խեցի:

Գուցե նրանի՞ց, որ քամին ծառից խլում է թերթեր
Եվ փռում իբրև ձերմակ հեկեկանք,
Գուցե նրանի՞ց, որ մինչև հիմա չգիտեմ ես դեռ,
Հրաշք ես, թախի՞ծ, թե՞ մորմոք ես, կյանք...

Գարնան առավոտ, դու այսօր այնքան ջինջ ես ու բյուրեղ,
Ասես չես տեսել մուժ ու թախծություն,
Բայց ես չգիտեմ, ինչու եմ ուզում նստել ու գրել
Մի սաստիկ տխուր բանաստեղծություն...

1980

ԱՅՐՎԱԾ ԿՏԱՎՆԵՐ

Մինաս Ավետիսյանի հիշատակին

Շրջանակներ այրված, շրջանակներ պարապ,
Շրջանակներ, որպես սպիտակած բիբեր...
Եվ ներշնչման ոգին՝ մի նետահար կարապ,
Մոխիրների վրա հոգեվարում է դեռ:

Բոցկլտում էր այնտեղ մի հրեղեն կարոտ,
Ու տեսիլն էր ցոլում ծվեններով ծավի,
Մի ծարավ էր այրվում կածաններին քարոտ,
Եվ մի կորչող աշխարհ գեղեցկանում ցավից:

Ու ցավի մեջ այդ տաք՝ որձաքարե տներ,
Մի հոգնատանջ գեղջուկ ու թևաթափ մի մայր...
Եվ չգիտեն նրանք, որ Հիսուս են ծնել՝
Տառապանքի, ցավի ու հրաշքի համար:

Շրջանակներ այրված, շրջանակներ անդեմ,
Շրջանակներ, որպես մութ վիհերի հառաչ...
Հետո կանգնել էի գերեզմանիդ հանդեպ՝
Այդ ահավոր, վերջին շրջանակի առաջ:

Կանգնել էին նրանք՝ մի հոգնատանջ գեղջուկ
Ու թևաթափ մի մայր... Եվ անձրև էր մաղում...
Չգիտեին նրանք՝ ի՞նչ է եղել, ինչո՞ւ,
Չգիտեին նրանք, որ Հիսուս են թաղում:
Շրջանակներ այրված, շրջանակներ պարապ,

Շրջանակներ, որպես սպիտակած բիբեր,
Ո՞վ է նշան բռնել քեզ, ներշնչման կարապ,
Այդ ի՞նչ մրրիկ է սև քո թևերին դիպել:

Պիտի շանթը շողար, բայց անձրևն էր մաղում,
Պիտի որոտ լիներ, բայց շշուկ էր տխուր...
Երբ աշխարհում աշխարհ ու հրաշք են թաղում,
Ամպրոպ, ինչո՞ւ ես լուռ...

1981

ԻՄ ՄՈՒՍԱՅԻՆ

Դու ինձ համար կյանքում ճակատագիր եղար,
Հավատ եղար, կասկած, տագնապ ու դող,
Մշուշի մեջ կորած Հրո երկիր եղար,
Անհայտի կանչ եղար դու կախարդող:

Հեռուներում մարող հայրենի տուն եղար,
Հեռուներում լռող երգ ու աղոթք,
Կարոտի սև կսկիծ ու տրտմություն եղար
Ու կարոտախտ եղար դու ծվատող:

Նման եղար այնքան դու քմահաճ կնոջ,
Որ մի վայրկյան միայն իրեն բացում,
Հեռանում է հետո, թողած իբրև շնորհ
Միայն ծարավ ու քաղց ու հիացում:

Բայց թռչունի նման, որ ինքնությունն իր թանկ
Օդի մեջ է զգում, լույսի, քամու,
Ես ինձ զգում էի այն պահերին միայն,
Երբ դու գալիս էիր ու ինձ տանում:

Իսկ երբ գալիս էիր, բոլոր տաճարների
Զանգերն էին ասես մեկից ոգում,
Եվ իջնում էր վրաս քո շնորհը վերին,
Իբրև վերին վայելք ու ամոքում:

Ի՞նչ կանեի, ասա, թե չլիներ կյանքում
Քո հրաշքը տխուր, քո դողը սուրբ,

Այն վայրկյանը հավերժ, երբ մորմոքը անգույն
Բռնկվում է, դառնում աստղ ու ասուպ:

Երբ կարոտից ճաքած շրթունքներին քո սև
Ճառագայթը հանկարծ դառնում է տող,
Եվ սկսում ես դու երանորեն այրվել,
Իբրև մի ինքնակամ, խոնարհ մի զոհ:

Քայլի՛ր, քայլի՛ր այդպես քո պարտքի տակ կքած,
Քայլիր, իբրև հոգնած մի թիապարտ...
Ես անիծում եմ քեզ, իմ տառապա՛նք, իմ քա՛ղց,
Ես օրհներգում եմ քեզ, վերին իմ բա՛խտ:

1981

ԿՈՐԱԾ ՏՈՂԸ

Կիսաքնիս խառն ու խռիվ ամպի մեջ
Տող էր ծնվել ու դողում էր իմ շուրթին,
Որ, հիշում եմ, գեղեցիկ էր շանթի պես
Ու թախծալի, ինչպես անբառ մեղեդին:

Արթնացել եմ, որոնում եմ, ու չկա,
Ցնդել է նա, ցողի նման չքացել,
Եվ շուրթերիս լոկ իբրև հետք ու վկա
Լույսի թեթև մի թրթիռ է մնացել:

Սկիզբն էր նա գուցե հրաշք մի երգի
Կամ երազված հրաշք երգն էր նա գուցե,
Որ կարող էր բախել դուռը երկնքի,
Որ կարող էր անհայտի հետ զրուցել:

Տողը ոչինչ... Այնքան տողեր եմ ցրել,
Բայց սրտիս մեջ դեռ կորուստն է մորմոքում,
Թվում է, թե ինչ-որ սեր եմ կորցրել,
Ինչ-որ մեկի տաք աձյունին եմ չոքում...

1982

ԵՍ ԵՎ ԵՍ

Կապույտի մեջ սոսափող բարդիներ են նաիրյան,
Առուներ են նաիրյան, լուսնկա է ու թախիծ...
Հանդիպեցինք ես ու նա... ճանաչեցի ես նրան,
Չճանաչեց, ա՜խ, նա ինձ:

Շրթունքներին Չարենցից ինչ-որ տող էր, ինչ-որ հանգ,
Գրպաններում ու սրտում՝ անտիպ տողեր ու գազել...
Եվ գիտեի, մի աղջիկ՝ մի գեղեցիկ տառապանք,
Քնքշորեն «Ո՛չ» է ասել:

Ու գնում էր նա մենակ մուժի միջով ու ցավի,
Ու գնում էր նա մենակ, որպես կարոտ ու թախիծ,
Շշնջացի ես նրան. «Դու հարուստն ես աշխարհի»...
Չհավատաց, ա՜խ, նա ինձ:

Հին մայթերին ինչ-որ տեղ Կարաբալան հանդիպել
Ու տեսնելով, որ տղան խեղճ ու տխուր է սաստիկ,
Մոտեցել էր ու կապույտ մի ծաղիկ էր նվիրել,
Նման կապույտ մի աստղի:

Ու գնում էր... Նաիրյան լուսնկան էր զրնգում,
Ձեռքի ծաղիկն էր ցոլում, որպես ցնորք ու թախիծ...
«Պահիր ծաղիկն, – ասացի, – դա չես գտնի էլ կյանքում»,
Չհասկացավ, ա՜խ, նա ինձ...

1983

ՊԱՏՐԱՆՔ

Ես չգիտեմ, պատրա՞նք է սա, թե ցնորք,
Անքնության տառապա՞նք է, թե թախիծ...
...Երբ լուսնկան շող է կախում ու շնորհ,
Ելնում է նա քարանձավի երախից:

Մորուք ունի, ասես մամուռ է սաթե,
Աչքերի մեջ ինչ-որ հեգնանք կա թաքուն,
Ձեռքը պարզում, բռնում է հովն արծաթե
Ու շուրթերին սրինգ արած նվագում:

Լույս է ծորում այդ արծաթե եղեգից,
Ու աստղային արտասուքներ են կաթում,
Ծավալվում է խորհրդավոր մեղեդին
Եվ ամեն ինչ ոսկեզօծում բացատում:

Լույսի շող է, լույսի քող է, լույսի դող,
Տերևներն են հաշտ ու թեթև թրթռում,
Եվ աստղերը ցողերի մեջ մկրտվող
Ճեկլիկ ու տաք մանուկներ են ինձ թվում:

Աղբյուրն անուշ հեկեկում է իր ակից,
Հովն է շոյում գանգուրները թփերի,
Եվ ինչ-որ մութ, ինչ-որ մամռած փչակից
Հայտնվում է զարմանալի մի փերի:

Նստում է նա, որ թաց վարսերը սանրի
Ու կանչում է, ու կանչում է ինձ հեռվից,

Բայց կախարդն այն քրքջում չար ու մանրիկ,
Մուժ է կախում, փուշ է կախում թփերից:

Ես քայլում եմ... Ծավալվում է մեղեդին,
Ես քայլում եմ, քայլում ու չեմ նկատում,
Որ փշերին, ծաղիկներին, թփերին
Իմ ծնկներից արյուն ու ցավ է կաթում:

Ու քայլում եմ, ու քայլում եմ ես մենակ,
Գլխիս վրա գիշերվա հավքն է ճչում,
Լույս մեղեդին ծավալվում է շարունակ,
Ու կախարդն է չար ու մանրիկ քրքջում:

1982

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Երեկ սև ամպն էր սպառնում վերից,
Եվ տագնապով էր ծիլը բռնկել,
Այսօր նշենու բարակ ճյուղերին
Ասես մի հսկա լուսաստող է ընկել:

Երեկ ամայի, երեկ միգամած,
Երեկ լուռ էի, որպես թախծություն,
Այսօր շուրթերիս դողում է կամաց
Ինչ-որ մի անհայտ բանաստեղծություն:

...Ծաղիկների մեջ արցունք է կապույտ,
Հեկեկանքի մեջ լույս ունի առուն...
Հավատում եմ քեզ ու երկրպագում,
Խուլ տառապանքով արթնացող գարուն...

1981

ԱՄՊՐՈՊԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լեռների վրա խռովություն է,
Խավարի խաղ է, դող է ու տենդ,
Վայրի հեղեղը կորցրել հունը
Եվ մոլեգնում է խռով ու խենթ:

Լեռների վրա ողբերգություն է,
Ողջը դարձել է հիմնահատակ,
Մեռած ծաղիկը լույսի աճյուն է,
Փշրված շանթը՝ սուրբ նահատակ:

Լեռների վրա արև ու ձյուն է,
Ձնծաղիկներ են քարատակի,
Երկինքը փառք է և օրհնություն է,
Կապույտ ոգին է նահատակի:

1981

* * *

Ես փախա ցավից,
Գնացի հեռու, ուր ձոր էր, անտառ,
Հների նման ասես քաշվեցի մենավոր մի վանք,
Բայց դու շան նման հետքերս գտար
Ու եկար, իմ ցավ, իմ վիրավորանք:

Հետո գիշեր էր,
Անտառը ասես անտառ չէր, այլ մեգ,
Մահու թափոր էր, երթ էր կմախքի,
Ու թվում էր, թե
Նա իր ծոցի մեջ չի պահել երբեք
Ցոլանքը, ցողը, ծիծաղը ծաղկի:

Եվ ամբողջ գիշեր
Ասես երազս խաչին էր գամվում,
(Վաղո՜ւց, ախ, վաղո՜ւց այդպես չէր եղել),
Ու ձեռքերից չէր արյունը քամվում,
Սրտի մեջ էիք մխրճվել, մեխե՛ր:

Հետո լուսինն էր դանդաղ բարձրանում,
Որ սև ծառերի ձեռքերին թառի,
Ու թվում էր, թե
Ինչ-որ սպիտակ աճյուն է տանում
Թափորն անտառի:

Տխուր քամու հետ
Սգերթն էր հոսում մութ հեղեղատով,
Հառաչում էին անդունդ ու անտառ:
...Հեռացող գիշերն իբրև Պյուղատոս
Գունատ ձեռքերն էր լվանում դանդաղ...

1983

ԴԵՂԻՆ ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Ժամը՝ տարի, գիշերը՝ դար...
Ու մի դեղին տենդ է վառում,
Ինչ-որ դեղին մի տվայտանք,
Ու անդունդ է դեղին-դեղին...
Եվ բարդին է աչքերիս դեմ
Սալոմեի նման պարում,
Լուսնի դեղին գլուխն առած
Երկնքի սև սկուտեղին...

Դեղին-դեղին մի տվայտանք,
Ու անդունդ է դեղին-դեղին,
Ինչ-որ հուշ է զարթնում հանկարծ,
Դառնում է մաղձ, դառնում է թույն,
Ու թվում է ողջն անիմաստ,
Ու թվում է ողջն անտեղի,
Ողջը՝ դեղին մի զառանցանք,
Ողջը՝ դեղին ունայնություն:

Ժամը՝ տարի, գիշերը՝ դար...
Դեղին տենդն այդ դեռ երկարում
Ու շուրթերին անդունդների
Տվայտանք է դառնում դեղին,
Բարդին է դեռ աչքերիս դեմ
Սալոմեի նման պարում,
Լուսնի դեղին գլուխն առած
Երկնքի սև սկուտեղին...

1982

ԿԱՆՉ

Փողե՞ր են հնչում, ինչ-որ հեռավոր ու անհայտ փողեր,
Թե՞ դա պարզապես ականջս է կանչում...
Այդ ո՞վ է, արդյոք, որ իր երազը կիսատ է թողել
Եվ իմ անունն է շուրթերին տանջում:

Ոչ ոք երևի... Մայրս քնած է հավիտյան քնով,
Իսկ մյուսներից այդ ո՞վ է արթուն...
Փողեր են հնչում... կախվում է վրաս անձև մի ցնորք
Ու իր զարմացած աչքերն է թարթում:

Փողե՞ր են հնչում... Հնչում թախծալի, ու ահա նորից
Ես չեմ հասկանում աշխարհում ոչինչ,
Ոգի՞ն է խոսում տիեզերական անձայն ժխորից,
Թե՞ ընկնող աստղի հեկեկանքն է ջինջ...

Կանչը հեռանում, կանչը խլանում, լռում է անդարձ,
Ու ինչ-որ հարց է ինքն իրեն տանջում, –
Ինչո՞ւ էր ղողանջն այդքան թախծալի, այդքան տագնապած,
Ինչո՞ւ էր կանչում և ո՞ւր էր կանչում...

1982

ԳԻՇԵՐԱՄՈՒՏ

Մայրամուտի մեջ մեն-մենակ այրվող
Ամպի թախծություն,
Սարալանջն ի վեր հոգնած գալարվող
Ճամփի թախծություն,
Թախծություն ծաղկի, որ լուռ սրսփում,
Մրսում է մթնում,
Թախծություն հավքի, որ մոլոր ծփում,
Բույնը չի գտնում,
Հեռու քարափի մթան մեջ հալվող
Վանքի թախծություն,
Անհայտության մեջ անլուր ծավալվող
Զանգի թախծություն,
Թախծություն հուշի, հուշի պես լացող
Ինչ-որ աղբյուրի,
Խտացող մուժի, մուժում ցոլացող
Անհայտ մի հրի,
Ինչ-որ կրակի, որ առկայծում է,
Չգիտես սակայն,
Կրա՞կ է իրոք, թե թախծությունն է
Տիեզերական...

1983

ՆԵՐԵՑԵՔ, ՏՂԵՐՔ...

Մանկության ընկերներիս՝
Երվանդի և Սուրենի հիշատակին

Երազում տեսա, որ ընկել եմ ես կռվում այն ահեղ,
Երազում տեսա, որ քսան տարիս թաղված է հողում,
Օտար աշխարհի սպիտակ բուքը ոռնում խելահեղ,
Ձյունափոշով է թումբս ողողում:

Մայրս մեռել է... Աշխարհում էլ ինձ ոչ ոք չի հիշում,
Եվ իմ անունը ծանոթ չէ այնտեղ արդեն ոչ մեկին,
Ու միայն ասես ինչ-որ բան տեսած հեռու մշուշում,
Թախծում է մի պահ ձերմակող մի կին:

Եվ կողքիս ահա իմ ընկերներն են պառկած հոգնաբեկ,
Երկուսն էլ ինձ պես քսան տարեկան ու սիրահարված,
Մեկի ձակատին փոքրիկ աստղի պես ցոլում է մի վերք,
Մյուսի կուրծքն է մի թեթև այրված:

Հողմը լռել է... երևի վերում գարուն է գալիս,
Ինչ-որ շշուկ կա, երևի խոտ է մեզ վրա աճում,
Մի տաք խշշոց կա, երևի գարնան անձրևն է լալիս,
Որոտ կա՝ գարնան ամպն է շառաչում:

Ես շատ եմ սիրել կյանքում այդ շառաչն ու շանթերն այդ շեկ
Ու վեր եմ թռչում, թոթափում եմ հողն ու սևը վանում,
Բայց դուք՝ իմ կողքին մանկորեն քնած ընկերներ իմ հեգ,
Դուք հողից ելնել չեք կարողանում:

Մի կաթիլ արձիձն ինչ ահավոր է ու ինչ ծանր է, Տեր,
Ինչքան է կշռում... ոչ ոք երևի դա չի իմանում:
Ես ձեռք եմ պարզում, ես չարչարվում եմ, որ հանեմ ձեզ վեր,
Ներեցեք, տղերք, չեմ կարողանում:

...Զարթնել եմ ահա... Աշնան գիշերն է լռում իմ դիմաց,
Մի մրսած քամի դրսում սևակնած իր սուգն է անում...
Ես շատ եմ ապրել կյանքում առանց ձեզ... բայց ցուրտ է հիմա,
Հիմա առանց ձեզ չեմ կարողանում...

1982

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՅՑ

Այս գիշեր եկել էր նորից,
Եկել էր իմ մայրը մեռած,
Եկել էր, թեքվել էր վրաս
Ու ձեռքը դրել էր սրտիս,
Ասում էր.
– Քո վրա երեկ
Տեսել եմ ես մի չար երազ
Ու եկա, որ ցավդ տանեմ,
Որ վրադ աղոթեմ, որդիս:

Աչքերդ հանգել են մի քիչ,
Մազերդ մոխիր են դարձել,
Կոպերիդ, տեսնում եմ ահա,
Թառել է թախիծը դեղին,
Երևի ինձանից հետո
Քեզ մենակ ու որբ են կարծել
Ու հացիդ լեղի են խառնել,
Ու գինուդ խառնել են լեղի:

Հիշում եմ, դեռ մանկուց կյանքում
Ոչնչից չունեիր դու ահ
Ու միայն ցրտից էիր դու
Մահու չափ վախենում, որդի...
Աշխարհը ցրտել է ասես,
Ու պաղ են ձեռքերդ, ինչ պաղ,
Երևի մնացել դրսում,
Որբի պես մրսել ես ցրտից:

Ու գիտեմ, երբ ցավից խմել
Ու հարբած ուզել ես ճչալ,
Այն մեկը, առաջվա նման,
Երեսիդ անեծք է նետել,
Եկել եմ աղոթքով իմ սուրբ
Խափանեմ անեծքը այդ չար,
Եկել եմ, որ փռեմ վրադ
Մանկության երկինքը թեթև:

Եկել եմ, թևերիս առած,
Քեզ տանեմ մեր տունը հեռու,
Արևը առել է նրան,
Ու տաք են պատերը քարե,
Հիշո՞ւմ ես, գետակը մեր ջինջ
Սարերից կապույտ էր բերում,
Ծիծաղ ու ծաղիկ էր բերում,
Բերում էր ոսկի ու արև...

Ինչ կո՛շտ է քո բարձը, որդի,
Ինչո՞ւ են այս քարը դնում,
Եկ գնանք, ամպի հետ փափուկ
Գլխիդ տակ իմ ափը դնեմ...
Հիշում եմ, արևից առաջ
Քո քունը խորունկ էր լինում,
Եկ գնանք, որ այդպես խորունկ
Ու այդպես մանկորեն քնես...

1983

ԻՐԻԿՆԱՅԻՆ ՏԵՍԻԼ

Իրիկնամուտի հոգնաբեկ քամին տվայտում է խուլ,
Ու իմ մոխրացած գլուխը արդեն թեքվում է բարձին,
Բայց հայտնվում է ծանոթ մի տղա ու ասում տխուր.
– Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին...

Դու ինձ ասացիր, որ հեռու հեռվում մի հովիտ կա տաք,
Այնտեղ կապույտ է, կապույտի կոպին աստղ է նորածին,
Կանաչների մեջ քեզ է սպասում մի ալ հովատակ,
Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին:

– Ներիր ինձ, տղաս, կար այդ հովիտը, հովատակն այդ կար,
Մատներս նույնիսկ շոյել են նրա աչքերը հրկեզ,
Նա շատ էր վայրի, մորթին շողուն էր ու աստղանկար,
Երևի բռնել, լկամ են դրել ու տարել կրկես:

– Դու ինձ ասացիր՝ սերը հրաշք է, սերը քնքշություն,
Որ ճանապարհիս ինձ է սպասում հավերժ կանացին,
Սակայն ես գտա խուսափող մի հուր, խանդի մաղձ ու թույն,
Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին:

– Ներիր ինձ, տղաս, առաջին սերս հողմերը տարան
Ու տարան անփույթ, տարան իբրև ծուխ ու աշնան տերև,
Ու մինչև հիմա իմ մեջ լալիս է կարոտը արյան,
Եվ ոչինչ, ոչինչ հիմա չեմ կարող ես էլ հետ բերել:

– Դու ինձ ասացիր, որ կպարգևես լույսի հացն առատ
Եվ կգումարես աստղային գինին այդ արդար հացին,

Բայց հացիս՝ որոմ, լեղի խառնեցին գինուս անարատ,
Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին...

Իրիկնամուտի հոգնաբեկ քամին տվայտում է խուլ,
Եվ իմ մոխրացած գլուխը արդեն թեքվում է բարձին,
Ծայրեծայր ձգվում ու հեծկլտում է հառաչն այդ տխուր.
– Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին:

1983

ՀԱՐՑՈՒՄ

Տեր, եթե ինձ այսուհետև էլ չես տալու
Բոցի հրաշքն ու հրաշքը խենթանալու,
Թե չես տալու գլխապտույտն այն արարող,
Որ իրար է խառնում հանկարծ երկինք ու հող,
Կավս խլում, իմ մեջ թողնում միայն ոգի,
Վայրկյանի մեջ ինձ վերածում ասես մոգի,
Վայրկյանի մեջ ինձ դարձնում այնքան արդար,
Որ կարող եմ ճակատագիրն անգամ կարդալ,
Թե չես տալու, թող որ լինի կամքդ վերին,
Հաշտ եմ Քեզ հետ, եկ ու ինձ տար Քո թևերին:

Թե չես տալու ինձ կարոտի աստղը ծավի,
Որ դողում է թարթիչներին մթնշաղի,
Պահերն այն սուրբ, երբ մաղում է անձրևը տաք,
Կինը փխրում, ծվարում է թևերիդ տակ,
Բուրում հանկարծ, բուրում իբրև անհայտ եդեմ,
Պահերն այն սուրբ, երբ կանգնում ես փակ դռան դեմ
Ու այնպիսի դողով թակում դուռն այդ թաքուն,
Որ թվում է, թե հենց բախտիդ դուռն ես թակում,
Թե չես տալու, թող որ լինի կամքդ վերին,
Հաշտ եմ Քեզ հետ, եկ ու ինձ տար Քո թևերին:

Թե չեմ կարող էլ տեսիլքի լույսն ստանալ,
Հեռու գետի մի արծաթով հարստանալ,
Հարստանալ մի ծվենով կապույտ մեգի
Ու հեկեկալ ցավով, ի՞մ չէ, ուրիշ մեկի,
Թե այսուհետ սիրտս լույսից չի նվալու,
Տերևի դողն ինձ մոգություն չի թվալու,
Շշուկն աստղի չի թվալու հմայություն
Ու բոնկումն արշալույսի՝ սուրբ հարություն,
Հաշտ եմ Քեզ հետ, թող որ լինի կամքդ վերին,
Եկ ու ինձ տար Քո թևերին...

1983

ԱՍՏՂԱՅԻՆ ԲԱԽՏ

Երկինքն ասես այս գիշեր հողի կարոտն է հիշել
Ու աստղեր է թափթփում, աստղի անձրև, աստղի ցող...
...Ես ծնվել եմ այսպիսի օգոստոսյան մի գիշեր,
Եվ ասել են երևի, թե ես ծնվել եմ աստղով:

Ճիշտ են ասել երևի, բախտն իմ աստղի էր նման,
Բայց այն աստղին, որ ասես արցունքի շիթ է շողուն,
Բայց այն աստղին, որ կախվել թարթիչներից թախծության
Ու դողում է կարոտից, սպասումից է դողում:

Եվ այն աստղին, որ այնպես անհուսորեն է տրտում
Սիրահարված է եղել երկնային սուրբ մի ծաղկի...
Եվ մինչև օրս իրեն իր արցունքով մկրտում
Եվ սպասում է անհույս դեռ հանդիպման հրաշքի:

Ասուպները երկնքի ասպետներն են հրեղեն,
Ասուպները երկնքի նահատակներն են այրվող,
Ու թե իմ բախտն իսկապես աստղային բախտ է եղել,
Իմ վախճանն էլ աշխարհում աստղի վախճան լինի թող:

Բան չեմ ուզում, երբ անքուն կարոտներից ու ցավից
Ասուպի պես բռնկվեմ ու մարմրեմ խավարում,
Թող ծաղիկն այն հեռավոր վերև նայի այդ պահին
Ու շշնջա ինքն իրեն. «Ինչ գեղեցիկ է այրվում»...

1982

ԱՇՆԱՆ ԱՆՏԱՌ

Քարափն ի վեր կրակ ու բոց, հրդեհ է նա վայրի...
Ու շշնջում է մեկն ասես՝ չմոտենաս՝ կայրի:

Բայց մխալուց հոգնել եմ շատ ու գալիս եմ, անտա՛ռ,
Ինձ քո կարմիր հրին խառնիր, բոցին խառնիր ու տար:

Բացատի մեջ մենակ կանգնած, թրթռում է թխկին՝
Ոտքից գլուխ կրակ հագած բարակիրան մի կին:

Գամ հոգնաբեկ ու երկյուղած, հասակն ի վեր փարվեմ,
Եվ միասին հովին տանք մեզ, և միասին այրվենք:

Սաղարթների թրթռոցից հովը բոց է պոկում...
Օ՜, այրումի մաքուր խորհուրդ, թեթևություն ոգու...

...Հնար լիներ խառնվեի սաղարթներին թեթև,
Թրթռայի ու նրանց հետ վերանայի եթեր...

1982

ՅՈԹ ԽՈՐՀՈՒՐԴ ԻՄ ԵՐԳԻՆ

Ա
Դու կայծակի պես
Վերևում ծնվիր,
Եղիր երկնային
Ճախր ու սլացում,
Բայց և նախնական
Այն կայծակի պես
Իջիր և օջախ
Դարձիր դու ցածում:

Բ
Ջրհորի նման
Այնքան խորացիր,
Որ մեջդ հողի
Արմատները լան...
Ու գիտեմ հաստատ,
Հետո քո խորքից
Օրը ցերեկով
Աստղեր կցոլան:

Գ
Երբ տողդ ձգվի
Իբրև տառապանք
Ու վայի իբրև
Թախիծը վայրի,
Պարզիր արևին,

Թող տողիդ վրա
Արևի թեթև
Թրթիռը թառի:

Դ
Եվ նոր եղիր դու
Հին գինու նման
Եվ հին եղիր դու
Առավոտի պես,
Ու քո խորքերից
Կելնի, կցոլա
Նորի հրաշքը
Թաքուն ու անտես:

Ե
Ճյուղերդ պարզիր
Հեռու և վերև,
Անձրևներն օտար
Քեզ շիթեր թող տան,
Բայց արմատներիդ
Ծարավը մարիր
Ջրով հայրենի,
Ջրով քո Գողթան:

Զ
Դաշնավոր եղիր,
Եղիր նվագուն,
Քո չափերը առ
Զարկերից սրտիս,
Բայց այն զարկերից,
Որ դողում տենդով,

Որ խենթանում են
Ու դառնում թրթիռ...

Է
Եվ ամեն անգամ
Ինքդ քեզ խորհիր,
Որ վերջինն ես, երգ,
Ու վերջինն ես, հանգ...
Եվ որպես վերջին
Մերկ եղիր ու բաց,
Սուրբ երդում եղիր
Ու խոստովանանք...

ԼԵՌԱՆ ՃԱՄՓԱ

Անդունդների մութը խմած,
Ժայռերն ի վեր ելնում է ձիգ,
Բանաստեղծի ճամփի նման
Վտանգավոր ու գեղեցիկ:

Նա մերթ շանթ է դառնում ասես,
Մերթ խառնվում մուժ ու մեգին,
Բանաստեղծի ներշնչման պես
Անբռնելի ու անմեկին:

Քրքրվում է փշերի մեջ,
Դեմ է առնում քար ու քերծի,
Տառապալի ու հողմածեծ,
Որպես բախտը բանաստեղծի:

Կայծակներ է գծում անվերջ,
Կայծակելով՝ ըմբոստանում
Եվ հետմահու լույս փառքի պես
Դեպի երկինք է նա տանում:

1983

ՀՐԱԾՔԸ

Ես հավատում եմ,
Աշխարհում դեռ կան անհայտ կղզիներ...

ՀՐԱՇՔԸ

...Եվ այսքան հրաշք տեսնելուց հետո
Ինձ համար դարձյալ հրաշքը վերին
Տաք հողի միջով բոբիկ քայլելու
Այն վաղնջական երանությունն է...
Դարձյալ ու դարձյալ
Այն վայրկյանն է սուրբ,
Երբ աչքերի մեջ բաղձալի կնոջ
Վարանումները մարմրում անզոր,
Դառնում են անմեղ-մեղավոր խոստում:
Եվ դա էլ դարձյալ,
Դա էլ երևի
Տաք հողի միջով բոբիկ քայլելու
Նույն վաղնջական երանությունն է...

1978

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Խշշում է նորից վտակը այն խենթ,
Որ խաղընկերն է իմ մանկության,
Գգվում է հովը մանուշակի հետ,
Որ կապույտ սերն էր իմ մանկության:
Ավազն է փայլում գետափին նորից,
Որ ոսկե գանձն էր իմ մանկության,
Ու ես չգիտեմ՝ գարո՞ւն է գալիս,
Թե՞ վերադարձն է իմ մանկության...

1946

* * *

Աշո՛ւն, տխրաչյա աղջիկ ես դու,
Վաճիտ անձրևը արցունքն է քո,
Որ լուռ մաղում է այս երեկո,
Աշո՛ւն, տխրաչյա աղջիկ ես դու,
Հմայքդ տված ամեն մարդու՝
Հիմա թախծում ես քաղցր մեղքով,
Աշո՛ւն, տխրաչյա աղջիկ ես դու,
Վաճիտ անձրևը արցունքն է քո...

1940

ՆԺՈՒՅԳՆԵՐ

Պատանության կանաչ մարգում
Ալ նժույգներ էին վարգում,
Բաշերը՝ ծուփ կրակ,
Վարգո՜ւմ էին, թռչո՜ւմ էին,
Ասես հրե թռչուն էին,
Թռչո՜ւմ էին նրանք...
Աչքերի մեջ նրանց խոշոր
Բոցկլտում էր արևը շոգ
Ու քնքշանքը տխուր,
Այդպես տխուր ու գեղեցիկ,
Քամուն տալով բաշերը ձիգ,
Ո՞ւր հեռացան, ախ, ո՞ւր...

1960

* * *

Այնպես տխրում է հոգիս, այնպես թախծում է լռին,
Երբ հրաժեշտ եմ տալիս աշնան չվող հավքերին:

Ինձ թվում է, թե նրանք կատարներով այս լազուր
Ինձնից մի բան են տանում՝ պայծառ ու տաք մի մասունք:

Տանում են լուռ մի կարոտ, ինչ-որ ծարավ անմեկին,
Չգտնված ինչ-որ խոսք, որ չես ասել դեռ մեկին:

Տանում, հեռու են տանում բախումներով թևերի.
Տանում են ու երբևէ հետ չեն բերի երևի:

Այնպես տխրում է հոգիս, այնպես թախծում է լռին,
Երբ հրաժեշտ եմ տալիս աշնան չվող հավքերին:

1961

ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ

Ձյուն է տեղացել,
Մաքուր, անարատ, մարմարե մի ձյուն.
Ու ձյունի վրա՝ ոչ մի ոտնահետք....
Ուզում եմ քայլել,
Բայց մի անմեկին երկյուղածություն
Ինձ գամել շեմքին ու պահում է ետ:
Ձյուն է տեղացել...
Եվ իմ հոգու մեջ
Լուռ դողդողում է սրբազան մի լույս...
Երևի այդ նույն դողն են զգացել
Իմ նախնիները
Տաճա՛ր մտնելուց...

1962

* * *

Հինա է դրել բարալիկ թխկին,
Լորին ուսերին ալ քող է առել,
Աշնան քամու տակ անտառը կրկին
Նազում է շիկնած, ուզում է պարել:

Ու նազանքի դեմ աշնան անտառի
Մշուշը կապույտ իր խունկն է ծխում:
Ցնծում է անտառն, ու միայն վայրի
Կաղնին է կանգնել խոհուն ու տխուր:

Ձմեռ է շուտով... Թխկին ու լորին
Սովոր են պարել ամեն քամու տակ,
Իսկ կաղնին կանգնած խորհում է լռին
Ու մտաբերում հողմերն սպիտակ:

1962

* * *

Ամառ է,
Արտ է,
Ու լուսաբաց է...

Արտույտներ,
Փոքրիկ, թևավոր քուրմեր,
Փառաբանեցե՛ք այս լույսն ու հացը:

Ամառ է,
Արտ է,
Ու լուսաբաց է...

Արտույտներ,
Աստծո արդար որդու պես
Մի զարմանալի,
Մի պարզ հրաշքով
Անսպառ արեք այս լույսն ու հացը:

Ամառ է,
Արտ է,
Ու լուսաբաց է...

1965

* * *

Ապառաժ է վայրի,
Որձաքար է կոպիտ,
Եվ արցունք է ծորում
Որձաքարի կոպից:

Եվ արցունքը ծանր է,
Եվ արցունքից ծավի
Ցածում ծնվում է լուռ
Մի անանուն ծաղիկ:

Մի անանուն ծաղիկ՝
Մենավոր ու կապույտ...
Որձաքարի կոպից
Արտասուք է կաթում:

1969

* * *

Դեղին տոթ է ու քար,
Դեղին խոզան ու խոտ...
Իսկ լեռների վրա՝
Կանա՛չ-կանա՛չ աղոթք:

Կանա՛չ-կանա՛չ քամի
Ու թրթիռ է կանաչ,
Եվ կանաչի վրա
Ցոլուն ցող է ցանած:

Եվ ոտնահետք չկա
Կանաչներում շաղոտ...
Կանա՛չ-կանա՛չ հով է,
Կանա՛չ-կանա՛չ աղոթք:

1970

* * *

Ամառային մի արշալույս՝
Ոտից գլուխ կապույտ հագած,
Քայլ է անում ճամփաներով
Եվ բաժանում լույսն իբրև հաց:

Պարզ հրաշքով բացում է նա
Աղջամուղջի աչքերը կույր,
Տերևների բաց ափի մեջ
Դնում է նա ցողն իր մաքուր:

Քայլում է նա ճամփաներով,
Մտնում ամեն դարպաս ու տուն
Եվ ծավալում է ծայրեծայր
Մաքո՛ւր, որպես մկրտություն:

Փռվում է նա ցորեն արտին,
Ջրերի հետ է նա ծփում
Եվ արևոտ իր ձեռքերից
Մանկություն է նա թափթփում:

Մոտիկները տանում հեռու,
Հեռուները բերում մոտիկ,
Հետո տատասկ-փշի միջով
Քայլում է նա ոտաբոբիկ...

1971

ԿԱՆՉՈՒՄ Է...

Կանչում է...
Գնա՜մ:

Գնամ ու ճամփիս
Մի լավ խոսք ասեմ մասրենու թփին,
Ու թող նա շիկնի աղջկա նման:

Գնամ,
Աղբյուրի շուրթերի վրա
Երկինք համբուրեմ ու լույս համբուրեմ:

Քարափին բուսած կարմիր թփի հետ
Բոցկլտամ մի քիչ
Ու մամուռն ի վար շիթ-շիթ գլորվեմ:

Գնամ
Ու քամին,
Բարալիկ քամին թևերիս առնեմ
Ու տանեմ իբրև թեթև աղջկա:

Կանչո՜ւմ է, գնամ...

1973

ՏԵՍԻԼՔ

Գիշերային մշուշները թոթափած,
Ես մեն-մենակ գնում էի դաշտերով...

Բարդիները զնգում էին լույսի մեջ,
Ճառագայթը հեկեկում էր ոտքիս տակ,
Եվ լուսայգի թարթիչներին մնացած
Ինչ-որ աստղ էր արցունքի պես դեռ դողում:

Միանալով քրմանման ծառերին,
Արևի դեմ երգում էի ոգեձայն,
Եվ իմ երգը օրհնություն էր ու գորով:

Գնում էի... Ոսկեփետուր մի թռչուն,
Կաղնիների փչակները մտնելով,
Դուրս էր թռչում և կտուցից, թևերից
Զարմանալի հրաշքներ էր թափթփում:

Արեգակը անդունդների հատակից
Ծիրանագույն առասպելներ էր հանում
Ու փռում էր արշալույսի թևերին:

Գնում էի... Մի շողշողուն հովատակ
Վրնջում էր, ու թվում էր, թե օդում
Զրնգում են զանգակները արծաթե:

Աշնան դաշտը հրդեհվել էր ծայրեծայր,
Աշնան դաշտը զոհասեղան էր ասես,

Ու Մասիսը նրա բոցն էր սպիտակ...
Եվ այդ բոցը այնքան քաղցր էր ու արդար,
Որ իմ հոգին խառնվում էր նրա հետ
Ու այրվում էր երանորեն ու տխուր:

Գնում էի... Ինչ-որ տեղից շարունակ
Զրնգում էր արևահար մի ծղրիդ
Ու կապույտի, հավերժի հետ էր խոսում:

Գնում էի լույսի միջով ու շողի,
Գնում էի... Չկար մահ ու ժամանակ,
Կային միայն թրթռոցներ ոսկեղեն,
Առասպելներ
Ու հրաշքներ արևոտ,
Եվ կար միայն հավերժություն մի անհուն:

1973

ՈՐՏԵՂ ՈՐՈՆԵՄ...

Հրաշքն էր մի օր անցնում քո բախտով՝
Աչքերի խորքում ծառագայթ ու ցավ...
Եվ այդպես ցավոտ ու ծառագայթող
Ո՞ւր գնաց, ասա, ո՞ւր անհետացավ:

Եվ ծանապարհդ էր մի օր ոլորվում
Աստեղնալույսի մոգության միջով,
Որտեղ է հիմա հոգնած մոլորվում,
Որտեղ է հանգչում փոշոտ մի ձիչով:

Եվ մի աղբյուր կար լեռների վրա,
Որ խղճի պես էր ու արտասուքի,
Դու ե՞րբ կորցրիր ակունքը նրա,
Որտե՞ղ որոնես ու իջնես ծունկի:

Մամուռը լալիս, քարերն է թրջում,
Մխում է մշուշն իրիկնաժամի,
Անհետ սուրում է մի կապույտ թռչուն,
Ու տվայտում է մի հոգնած քամի...

1973

ԱՇՆԱՆ ՕՐ

Աշնան հեռացող արագիլների
Թևերի ձերմակ սոսափն եմ լսում,
Որ թախծագին ու խորհրդավոր է...

Եվ ջինջ է օրը:

Մենավոր բարդին կրակ է հագել,
Վառվո՜ւմ է, վառվո՜ւմ...
Ուր որ է շուտով
Մոխրանա պիտի այդ մենավորը:

Եվ ջինջ է օրը:

Մամուռից վերջին արցունքն է կաթում,
Եվ քարափի տակ ծաղիկ մի ծավի
Լսում է հովի վերջին օրորը:

Եվ ջինջ է օրը:

1974

ԱՌԱՎՈՏ

Լեռներն արևի ոգին շնչելով,
Թոթափում են լուռ մուժն իրենց հագի,
Քարանձավները մամռոտ դնչերով
Կապույտն են խմում արևածագի:

Արցունք է կաթում քարափներն ի վար,
Մարջան է կաթում ու կաթում արև,
Թռչուններն օդում խառնվել իրար,
Չեն կարողանում շողերին թառել:

Վայրի մի ծաղիկ հողից նոր ելած,
Նայում է իր շուրջն ու լուռ զարմանում,
Մուժի ծվեն է, ծիծաղ է ու լաց,
Իսկ ինքը, ինքը չունի դեռ անուն:

Ու մոլորվել է աղբյուրակը ջինջ,
Ո՞ւր գնա արդյոք, ո՞ր գետի կանչին...
Այսօր անհայտ է ասես ամեն ինչ,
Եվ արարչության օրն է առաջին:

Ու եթե հանկարծ ձերմակ, բարալիկ՝
Դու աչքերիս դեմ ելնեիր նորից,
Կհավատայի, որ հրաշալիդ
Հենց նոր արարվեց կողիս ոսկորից...

1974

ԴՈՒ՝ ԻՄ ՀԱՆՑԱՎՈՐ

Հալ ընկած ձյուն է,
Ծիծաղ է ու լաց,
Հալ ընկած ձյուն է,
Լույս է ու թախիծ,
Ինչ-որ տեղ հիմա
Թաց հողից ելած՝
Աշխարհ է գալիս
Մի կապույտ ծաղիկ...

Հալ ընկած ձյուն է,
Հեկեկո՜ց է տաք,
Ու մի հեռավոր
Զնգոց է գալիս...
Ինչ-որ տեղ հիմա
Աչքերը դեռ փակ
Մի քարանձավ է
Ինքն իրեն լալիս:

Հալ ընկած ձյուն է,
Լույս է ու մխանք...
Եվ հիվանդ եմ ես
Լուսեղեն ցավով...
Այդ դու ես, գարո՛ւն,
Իմ հին տառապանք,
Դու՝ իմ լուսեղեն,
Դու՝ իմ հանցավոր...

1975

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՔԵԶ, ԿՅԱՆՔ...

Գիտեմ, նա կգա տխուր մի շուքով
Ու ինձ կտանի իր սև նժույգով...

Եվ հետո նորից կլինի գարուն,
Լույսը թախծության թերթեր կմաղի,
Ու անծայրածիր, կապույտն աշխարհում
Մերթ լաց կլինի, մերթ կծիծաղի:

Դաշտերով կանցնի մի խարտյաշ հմա,
Ու կբռնվեն հավքերը վեճի...
Գարուն կլինի, այն գարնան նման,
Երբ ես աշխարհում սիրահարվեցի:

Հետո մամուռը կիջնի դարեդար,
Կրեղծի անհետ տարեթիվ ու տառ:

Եվ նորից պայծառ գիշեր կլինի,
Ծայրեծայր կանցնի մի ոսկե ասուպ,
Ու կապույտն ինչպես աստղային գինի
Կցոլա նորից անհունի թասում:

Գիշեր կլինի, այն գիշերվա պես,
Երբ ես հին այգուց նայել եմ լույսիդ,
Նայել, թե ինչպես կանգնել կիսամերկ,
Վարսերդ ես քանդել ու թափել ուսիդ...

Եվ հողի խորքից մի խուլ արձագանք
Կզնգա տխուր. «Օրհնություն քեզ, կյա՛նք»...

1976

ՇՆՈՐՀ

Մաքուր՝ որպես խիղճ,
Արդար՝ որպես հաց,
Տրվեցիր դու ինձ,
Ամռան լուսաբաց:

Ամբողջ գիշերը
Իմ երակներում
Մխում էր մի հին
Ցավոտ մի ներում:

Կախվում էր իմ մեջ
Մի ծանր արցունք
Ու դողում որպես
Կսկիծ ու հարցում:

Ամբողջ գիշերը
Իմ մոխրամանում
Չասվող ցավի հետ
Տողն էր մոխրանում:

Ու տրվեցիր ինձ,
Ամռան լուսաբաց,
Մաքուր՝ որպես խիղճ.
Արդար՝ որպես հաց:

1976

ԾԱՂԻԿՆԵՐԸ

Ծաղիկների խոսք ու շշուկ,
Ծաղիկների դող է այնտեղ,
Մեկը՝ ծիծաղ, մեկը՝ թախիծ,
Մեկը՝ կերոն, մեկը՝ կանթեղ...

Գտնեմ ծաղիկն ամենաբիլ՝
Մթնշաղի շաղը շուրթին,
Ու երկյուղած նայեմ անվերջ
Նրա շաղին ու կապույտին:

Թող նա դողա հայացքիս դեմ
Որպես թրթիռ, որպես աղոթք...
Ու զարմանամ, ու զարմանամ
Այդ կապույտով ու այդ շաղով...

1977

ԱՂԲՅՈՒՐԸ

Լո՜ւյս է բխում քարի տակից
Ու երկինք է ասես բխում...
Ծունկի իջնեմ ու համբուրեմ
Քեզ, իմ կապույտ, քեզ, իմ տխուր...

Ծունկի իջնեմ ու ափերով
Առնեմ մի ջինջ, ցոլուն ալիք,
Ու թող դողա նա ձեռքիս մեջ
Իբրև գերված հրաշալիք:

Դողա իբրև խոշոր ասուպ,
Իբրև ճաճանչ, իբրև եթեր,
Դողա իբրև կապույտ թռչուն,
Որ չի բռնել ոչ մեկը դեռ...

1977

ԼԻՃԸ

Երազներ է առնում վերից,
Երազներ է վեր առաքում,
Կապույտի մեջ ու մաքրության
Մաքրություն է պատարագում:

Ճայը թառել նրա դողին,
Օրորվում է երանորեն
Ու երբ պոկվի, թևերն ի վար
Կապույտ աստղեր պիտի ծորեն:

Մի մեծ երազ ես ունեի,
Մի անմարմին, անհուն արև,
Ճրբ է պոկվել նա իմ սրտից
Ու լեռների շուրթին թառել...

1977

* * *

Սիրտս հաշվում է ժամ ու ժամանակ
Ու անձկության մեջ
Մարում է անձայն:

Գուցե ինչ-որ տեղ հիմա դաշտերով
Կարմիր ու կանաչ
Քամիներ անցան...

Գուցե ինչ-որ տեղ անձրևից հետո
Ցողը գինի է,
Ճառագայթը՝ հաց...

Ու սիրտս նորից
Ուխտավոր դարձավ
Ու նորից դեպի անհայտը գնաց...

1977

ԱՅՆ ՀԵՌԱՎՈՐ ԼԱԶՈՒՐՈՒՄ

Այն հեռավոր լազուրում արծաթ գետեր են սուրում,
Արծաթ հավքեր են սուրում այն հեռավոր լազուրում,
Զորզորա զով աղբյուրի արծաթ զանգերն են զնգում,
Ու բարդիներ են զնգում այն հեռավոր երկնքում:

Եվ մի հովիտ կա այնտեղ, մի արևոտ քարատակ,
Կակաչներ կան՝ ժայռից ասուպների պես կախված,
Դեռ արածում է այնտեղ մի հրեղեն հովատակ,
Քամիներով, արևով ու կապույտով թաթախված:

Գիտեմ, ամառը այնտեղ լույս ու խրխինջ է ցրել,
Ճառագայթներ փշրված ու հրաշքներ անհամար...
...Ես հեռավոր այն հովտում մի գաղտնիք եմ կորցրել,
Մի երազ եմ կորցրել՝ մի ծովաչյա Ծովինար...

Մի գիշեր եմ կորցրել ու մի ցողոտ լուսաբաց,
Մի քարանձավ, ուր ասված-չասված խոսքեր են լռում:
...Այս տարիքը թոթափած, այս հոգնությունը թափած,
Ելնե՛մ, գնա՛մ, մոլորվե՛մ այն հեռավոր լազուրում...

Այն հեռավոր լազուրում, ուր խենթ գետեր են սուրում,
Արծաթ հավքեր են սուրում, անհետանում լազուրում...

1978

ԵԼՆԵԻ ԿԱՆՈՒԽ

Ելնեի՜ կանուխ... Առաջին անգամ տեսնեի կյանքում,
Թե ոսկե աստղը ինչպես է ցայվում իր իսկ արցունքով,
Արարման ոգին ներշնչանքի հետ սավառներ անքուն,
Եվ աշխարհն արար բուրեր մշուշով ու բուրեր խունկով:

Ու խո՜տը բուրեր... Դաշտում չլիներ ոչ մի ոտնահետք
Բոբիկ Աստըծո և արշալույսի հետքերից բացի,
Առաջին ծուխը ելներ, խառնվեր կապույտ ոգու հետ,
Առաջին անգամ բույրը առնեի նորաթուխ հացի:

Եվ նոր լինեին բառերը բոլոր այդ հացի նման
Ու ցոլցլային հենց նոր օրհնված ողկույզի լույսով,
Հեթանոսորեն դեռ նոր ոգեի երգերը գողթան,
Երկյուղածորեն նոր մրմնջայի «Առավոտ լուսոն»:

Եվ հանկարծ, հանկարծ որոտար վսեմ ամպրոպը գարնան,
Շանթը շողշողար, լույսը հեծկլտար, մութը հառաչեր,
Եվ մաքրության մեջ ու արցունքի մեջ նախաստեղծության
Հավատի նման կաղնին շառաչեր...

1978

ԻՐԻԿՆԱՄՈՒՏ

Իրիկնամուտի արևն է այրվում
Լեռների կապույտ զոհասեղանին...
Դեղին դողի պես բարդուն է փարվում
Անհայտից եկած թափառիկ քամին:

Ճրբ էր... Լուսնյակի օղը ականջին
Եվ հասակն ի վար սև-սաթե հյուսեր,
Գիշեր-գնչուհին գալիս իմ կանչին,
Գուշակում էր ինձ բախտ, հրաշք ու սեր...

Գիշեր է շուտով... Ամպերում բոց է,
Մի լուրթ աշխարհ է այրվում ամպերում...
Եվ ինչ-որ հեռու մի հեկեկոց է
Ամպ ու ծխի հետ ծավալվում վերում:

Հենց նոր ինքնաթիռ անցավ վերևով,
Ժամանակի պես սուրաց շեշտակի,
Ո՞վ գիտե, գուցե ահեղ թևերով
Դիպավ սպիտակ մի հրեշտակի...

Այդ նա է գուցե մղկտում վերում,
Թևերն արնոտած տրտմորեն լալիս,
Կամ գուցե, գուցե առաջին սիրո
Հեռու երկրից է այդ լացը գալիս...

Գիշեր է շուտով... տխուր գալարվում,
Հառաչ է դառնում թափառիկ քամին...
Իրիկնամուտի արևն է այրվում
Լեռների կապույտ զոհասեղանին:

1978

ԿԱՆՉ

Ես հեռու հեռվից
Լացող արծաթի ձայներ եմ լսում:

Երբ գարունը գա, ու ձյունը հալչի,
Կգնամ վերև,
Կգնամ դեպի լեռները Կանաչ:

Ես այնտեղ մաքուր մի աղբյուր գիտեմ,
Որ քնից զարթնած մանկան է նման,
Կոպերի վրա՝ արցունք ու ծիծաղ:

Ես հոգնած եմ շատ ու մի քիչ հիվանդ,
Ինձ այդ ծիծաղը ու այդ արցունքի
Մանկությունն է պետք:

Ես այնտեղ փոքրիկ մի հովիտ գիտեմ:
Ամբողջ գիշերը գլուխս դրած
Մի արևաբույր ու մամռոտ քարի,
Կքնեմ խաղաղ:

Եվ անքնության մորմոքը դեղին
Ինձ չի այցելի,
Եվ լուսադեմին ոչ ոք չի հանի
Մանուկ օրերի իմ երազներից:

Ու երբ արթնանամ, ինձ պիտի թվա,
Թե առավոտը արցունք է խոշոր,

Եվ աշխարհն արար
Շրջվել է խոշոր այդ արցունքի մեջ՝
Իմ հոգնությունը
Վաստակած հոգու բերկրանք է դարձել,
Ցավը՝ ներշնչանք,
Կասկածը՝ հավատ...

Ես հեռու հեռվից
Լացող արծաթի ձայներ եմ լսում...

1979

ԱՅՍՔԱՆԸ ՄԻԱՅՆ

Անձրևի բարակ ձեռքերը բռնած,
Դաշտերն ընկնեի ու պարզ հրաշքով
Հասկի փոխեի մացառը ցավի:

Ինքս ինձանով հաստեի նորից,
Որ տառապանքի ակոսից է սև
Բարձրանում լույսի ծաղիկը ծավի:

Եվ նրանց, ովքեր երազ չեն տեսնում,
Կարմիր ու կանաչ երազներ տայի:

Այսքա՛նը միայն... ու հեռանայի...

1980

* * *

Ես հավատում եմ,
Աշխարհում դեռ կան անհայտ կղզիներ,
Ծովերում կորած ցամաքներ կան դեռ,
Ուր առավոտը այնքան նախնական ու այնքան է մեծ,
Որ թվում է, թե հենց նոր են ոգել այն «Լույս եղիցին»...
Եվ այնտեղ իրենց զմրուխտ որջերից
Ելնում հիասքանչ, շողուն գազաններ,
Չորս կողմն են նայում վայրի հայացքով,
Ապա հիացքից ոռնում են տխուր:

Ծառեր կան այնտեղ՝
Ճյուղերի վրա պտուղն արգելված,
Որ չի արգելված:

Եվ ցողն է ցոլում
Իբրև փշրված բանաստեղծություն:

Եվ սերը մերկ է, վայրենի ու մերկ,
Մարմինը նրա թուխ է հողի պես,
Սակայն երկնքի բուրումներ ունի:

Ես հավատում եմ՝
Աշխարհում դեռ կան անհայտ կղզիներ,
Ուր մայրամուտը նման է այնպես
Հարության չքնաղ այն առասպելին:

1979

ԱՄՊՐՈՊ ԿԼԻՆԻ

Լուսամուտներս բաց թողեք այսօր,
Բաց թողեք քամու,
Երկնքի,
Բարդու
Ու գիշերվա դեմ:

Գիշերը ամպրոպ կլինի,
Գիտեմ:
Եվ թող ամպրոպն այդ
Շանթերի շողքով
Եվ արտասուքի շիթերով խոշոր
Տեղա փոշոտված երազներս ի վար...

Ու հետո, հետո
Թող երազիս մեջ խշշա հողմավար
Կայծակով,
Շանթով
Ու արտասուքով
Մկրտված բարդին:

1975

ԼԵՌԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Մամռած կածան է,
Արահետ է նեղ,
Ջուրը լալիս է,
Եղինջը՝ վառում...

...Երևի մի օր
Վարդավառն այստեղ
Խենթ ծիծաղում էր,
Ծիծաղից մարում:

Արևն ընկնում էր
Ակնաղբյուրի մեջ,
Ծիծաղում մանրիկ
Ու ծափ էր տալիս:

Տղան հարցում էր
Անում աղջկան.
– Ի՞նչ ես կորցրել,
Ի՞նչ ես ման գալիս...

– Ականջիս օղն եմ
Կորցրել, կտրի՛ճ,
Օղս ոսկի էր,
Քարը՝ կապուտակ...

– Եկ, գնանք ինձ հետ,
Հեռանանք մի քիչ
Ու օղդ փնտրենք
Քար ու թփի տակ...

– Չէ, վախենում եմ
Օղս մոռանաս,
Ծոցիկս բանաս,
Սիրտս գողանաս:

Արևը խաղում
Ալիքների հետ,
Ջուրը ծիծաղում
Ու ծափ է տալիս...

...Մամռած կածան է,
Փակված արահետ,
Եղինջը վառում,
Ու ջուրն է լալիս...

1979

ԱԿՆԹԱՐԹ

Լսո՞ւմ ես... Հեռվից ձայներ են գալիս,
Աստղը զնգում է, միրհավը լալիս...

Ուր որ է ահա ջրահարսերը
Կցայեն գետում ոսկե վարսերը:

Փչակից կելնի այծամարդն ինքը,
Կսուլի հովի արծաթ սրինգը:

Կգան գազաններն այն հրաշամորթ
Ու ծունկի կիջնեն աղբյուրների մոտ:

Հետո երկնքից աստղեր ճանկելով,
Կխաղան նրանց ոսկե զանգերով:

Ծաղիկ կքաղեն ջրահարսերը,
Կզուգեն իրենց ցողոտ վարսերը:

Եվ այծամարդու մութ հայացքի տակ
Կդողան այդպես մերկ ու սպիտակ:

...Հանգչում է սակայն ակնթարթն այդ ջինջ,
Մացառ է, քար է և ուրիշ ոչինչ...

Մեռնում է պատրանքն ու մահանալիս,
Լալիս է հեռվում, տխրորեն լալիս...

1979

ԹԵԿՈՒԶ ԳԻՏԵՄ...

Թեկուզ գիտեմ, որ այնտեղ ընկել եղնիկը վերջին,
Ու մեռել է կարոտից վերջին տխուր եղջերուն,
Սակայն գնամ, միանամ նրանց տխուր բառաչին
Եվ սլանամ նրանց հետ դեպի կապույտն ու հեռուն:

Ու գիշերով, երբ սարից ելնի լրած լուսնկան,
Արծաթ կախի ու նարոտ հասակն ի վար թփերի,
Գնամ բացատ ու նայեմ գաղտագողի ու ծնկած,
Թե ինչպես են լուսնի տակ պարում նայադ ու փերի...

Գնամ... թեկուզ և գիտեմ, որ ինչ-որ մեկն այդ ժամին
Չոքում, նշան է բռնում երազներիս երամին...

1980

ԱՅՆՏԵՂ

Կապույտն այնտեղ՝ կապույտ մի դող,
Աղբյուրները՝ պատարագ,
Բարդիները լույս պաղատող
Սրբի ձեռքեր են բարակ:

Ծողը այնտեղ դիպչում ցողին,
Աստղ է ծնում ու ասուպ,
Աղբյուրները ամբողջովին
Լույս են, լույսի արտասուք...

Հեռուն այնտեղ այնքան մոտիկ,
Մոտիկն այնքան է հեռու,
Որ թե գնաս ոտաբոբիկ,
Պիտի հալվես լույսերում:

Պիտի թվա, թե աշխարհում
Չկա մահվան շունչը ցուրտ,
Կա լույսի հետ խառնվելու
Պարզ ու պայծառ մի խորհուրդ...

1980

ԱՇՆԱՆԱՅԻՆ

Հրաշալի է արշալույսն այսօր...

Հրաշալի է, որպես թաց շուշան,
Հրաշալի է այն կնոջ նման,
Որ արձակել է վարսերն իր ոսկե:
Հրաշալի է որպես ճաքած նուռ,
Որպես ցող, որպես հեթանոս Աստված...

Հրաշալի է արշալույսն այսօր
Ու տխո՜ւր, տխո՜ւր...

Ու տխուր, որպես հեռացող երամ,
Ու տխուր որպես գիշերվա թողած
Աստղը մենավոր ու քաղված այգին...
Ու տխո՜ւր, տխո՜ւր,
Այն հրաժեշտի խոսքերի նման,
Որ ժամանակին ու անժամանակ
Շշնջացել եմ իմ սիրածներին...

Հրաշալի է արշալույսն այսօր
Ու տխո՜ւր, տխո՜ւր...

1980

ՍՊԱՍԻՐ ՄԻ ՔԻՉ

Ունայնության պես ու հոգնության պես փոշոտ մի քամի
Ինձ է որոնում, բայց ես ասում եմ՝ սպասիր մի քիչ...
Դեռ չի ավարտվել այրվող հրաշքը իրիկնաժամի՝
Ուշացած սիրո հրաշքն ամոքիչ:

Ու դեռ ինձ հետ են անձրևն արծաթե, արծաթե բարդին,
Լուսաստղը, հասկը, խոնավ բուրմունքը նոր հնձած խոտի,
Իրիկնամուտի ոսկե թրթիռը՝ թառած սաղարթին,
Ամպը, նժույգը, ցողն առավոտի:

Ու դեռ ինձ հետ են այս խոնարհ հողի խորհուրդը տրտում,
Խաչքարի թախիծն ու ավեր վանքի մտորմունքը լուռ,
Արևագալը, որ աղբյուրի մեջ իրեն մկրտում
Ու լեռան լանջին կանգնում է մաքուր:

Ես շատ ապրեցի, բանաստեղծները չեն ապրում այսքան,
Բայց շրթունքներիս խոսքեր կան տանջող, որ կիսատ թողի,
Թեև լավ գիտեմ, որ այդ խոսքերը հասարակ են, քան
Հասկի շշուկն ու ցոլանքը ցողի...

Իսկ ասելիքս այն է, որ մի քիչ շատ սիրենք ու լավ,
Որ կարողանանք քնքշորեն փխրել աստղից ու հասկից,
Որ կարողանանք խենթանալ խոտի բուրմունքից խոնավ
Եվ այս ուշացած սիրո հրաշքից...

1981

ԱՄՊՐՈՊԻ ԿԱՐՈՏ

Քիչ է մնում այս տաղտուկից սիրտս նորից ցավի,
Ո՞ւր ես, ամպրոպ, ո՞ւր ես պահել կայծակներդ ծավի:

Ե՛կ, շրխկա, շրխկոցով պատուհանս փեղկիր
Եվ առնչիր ինձ երկնային քո լուսավոր մեղքին:

Ե՛կ, ամպեղեն քո շուրթերով շաղիր շողեր ու շանթ,
Թող մայթերի թաց սևի մեջ ցոլան աստղ ու շուշան:

Նայի՛ր, կին է անցնում մայթով, ճանապարհը փակիր,
Օրհնիր նրան ոտից գլուխ, չոքած՝ երկրպագիր:

Վարսերի մեջ քո այն խոշոր շիթերը թող շողան,
Թող նա վազի ու շորի տակ հրաշքները դողան:

Հետո հեռու քարափներից հեղեղներդ կախիր,
Հեկեկալով թեթևացիր, դարձիր կապույտ թախիծ:

Քո կարոտի արցունքներով մամուռները թող լան,
Բարդիները կապույտի մեջ կանաչ բոցով ցոլան:

Արտույտները թող խենթանան, ու արևի ոսկին
Հինա դնի ուռիների ցողաթաթախ հյուսքին:

Հովը բարակ իր մատներով կակաչի բոցն առնի,
Աղջկա պես թող սլանա, կապույտներին խառնի...

Հետո այդպես ցողոտ, շաղոտ, այդպես մաքուր, շռայլ
Գնա գտիր ու բաց արա լուսամուտը նրա:

Ոչինչ չասես, պարզիր մի թաց ծիածանի ծվեն,
Կհասկանա, որ ես եմ դա հղել իրեն նվեր...

1982

ԱՂԲՅՈՒՐԻ ԿԱՐՈՏ

Դու՝ մաքուր...
Ասես ինչ-որ մարգարե
Քո ակունքի մեջ իր խիղճն է թողել,
Ինքը՝ հեռացել...

Դու՝ ցոլուն...
Ասես ամպրոպը գարնան
Քեզ պահ է տվել իր շանթերը շեկ,
Հետո մոռացել...

Դու՝ կապույտ...
Ասես ոսկեթել ցանցով
Հեքիաթի կապույտ թռչունը բռնել
Ու բաց չես թողնում...

Դու՝ ծիծաղ,
Դու՝ լաց...
Ասես մի հրաշք մանուկ է զարթնել
Կապույտ անկողնում...

Հիշում եմ, աղբյուր,
Աստղերից քամված
Մաքրությունը քո
Զնգում էր սարում:

Ջուրդ խմելու
Այլ հնար չկար,–
Ու ծունկի իջա,
Ինչպես տաճարում:

1982

ԼԵՌԱՆ ԿԱՐՈՏ

Լեռներում ծուխ է, լեռներում մուժ է մանուշակագույն,
Ու թվում է, թե աշխարհը նոր է այդ մուժից ծագում:

Ամեն ինչ այնտեղ նման է այնպես նախաստեղծության,
Ու խառն է ասես նյութը ոգու հետ, լույսը՝ թախծության:

Թվում է՝ այնտեղ քարանձավների դեռ տաք երախից
Բառեր են ծնվում, հնչյունների մեջ՝ վայրի մի թախիծ:

Թվում է՝ այնտեղ դեռ չեն բաժանվել երկինք ու գետին...
Գնամ, ոտք դնեմ Կաթնծիրների լույս արահետին:

Գնա՜մ, հավաքեմ ծնվող աստղերի ցոլանքը գունեղ
Եվ բառեր, որոնք Աստծո մեծությունն ու խորհուրդն ունեն:

Գնա՜մ, մկրտվեմ այդ լույսերի մեջ ու այդ մշուշի,
Ոտքերիս վրա հողի հոտ բերեմ ու աստղափոշի...

1982

ՁՅԱՆ ԿԱՐՈՏ

Առաջին սիրուս թախծության վրա
Փաթիլներ կային առաջին ձյունի,
Ու թե աշխարհում էլ չկա հրաշք,
Թող գոնե ձմռան երկինքը ձյունի:

Օդում աստղաձև լույսեր թող պարեն,
Թող բուրի օդում ձնծաղիկը տաք,
Ելնեմ, մայթերում նորից թափառեմ,
Հենց այնպես, անմիտ ու աննպատակ:

Աղջիկներ անցնեն թեթև ու գերիչ,
Վարսերին՝ ձյունն ու ոսկին հինայի,
Եվ գուցե մեկի տխուր աչքերից
Առաջին սերս վախվորած նայի:

Պարզել եմ աջն իմ որպես մուրացկան,
Քո քնքշությունն եմ աղերսում ես, ձյո՛ւն,
Աղերսածն իմ քիչ ու շատ է այնքան՝
Մի բուռ փաթիլ է, մի մեծ մաքրություն...

ԳՈՒՅՆԵՐԻ ԿԱՐՈՏ

Այս գորշ օրով բան չեմ ուզում,
Արեգակի ոսկին տուր ինձ,
Ոսկեփոշին ճամփաների,
Քարափների բոցը տուր ինձ,
Տուր հասկերի շշուկը շեկ,
Կալի մղեղն արևավոր,
Տուր ճախրանքներն արտույտների,
Որ ոսկիներ են թևավոր:

Բան չեմ ուզում... Ծաղիկներից
Ամենաբիլն ու լուրթը տուր,
Լեռան ալիք ու վիհ դարձած
Կապույտների կապույտը տուր,
Կապույտը տուր ինձ թախծության,
Կապույտը տուր քարանձավի,
Տուր ոգու պես վեր համբարձող
Լճակներիդ բոցը ծավի:

Բան չեմ ուզում... Ալը նռան,
Նռան ճաքումն ու ճիչը տուր,
Հովերի մեջ խելագարվող
Կակաչների քրքիջը տուր,
Տուր ինձ անկեզ այն մորենին,
Տուր բռնկված ծառը հոնի
Ու ծայրեծայր ծփանք տվող
Հրդեհը տուր հորիզոնի:
Բան չեմ ուզում... Արծաթ լեռան

Արծաթաշող ամպերը տուր,
Քարափների կրծքին կախվող
Աղբյուրների ծամթելը տուր,
Տուր կարոտի պես զնգացող
Ինչ-որ զանգի արծաթի ձայն
Ու արծաթե հեռուն տանող
Մի արծաթե անհայտ կածան...

* * *

Նա եկել է նորից,
Ինձ գտել է նորից
Այս թախիծը փոշոտ,
Այս տաղտուկը,
Հի՛նը...
Իմանայի միայն,
Թե որտեղ է բացվում
Ձնծաղիկը ձյունոտ,
Առաջի՛նը...

1971

ԱՆՏԱՌԻ ԿԱՐՈՏ

Գալիս եմ, անտառ, ու դանդաղորեն
Քո մեջ խորանում,
Որ կարոտիս հետ ծունկի գամ նորեն
Քո զով խորանում:

Հոգնած եմ, փոշոտ, քո աստղանման
Ցողերը հեղիր,
Վրաս օրհնության ու թեթևության
Սոսափյուն եղիր:

Օգնի՛ր, որ գտնեմ ծաղիկն այն կապույտ,
Ծաղիկն այն թաքուն,
Որ բնակվում է հինավուրց կաղնուդ
Մամռած փչակում:

Մեկնի՛ր, թե մթին քո ծմակներում
Իրիկնաժամին
Իրար ականջի ի՞նչ են շշնջում
Տերևն ու քամին:

Թե տեսիլներ կան քո մեջ մոլորված,
Իմ դեմ ծածանիր,
Անտառապահի տնակն այն կորած
Աչքիս դեմ հանիր:

Անտառապահը թող մի ոսկեհեր
Աղջիկ ունենա,

Ու թող նա քնքուշ ու քնքշության հետ
Վայրի լինի նա:

Թող նստի շեմքին, սանրի վարսերի
Հրաշքը թել-թել...
Հասկացի՛ր, անտառ, հեքիաթների է
Սիրտս կարոտել...

* * *

Լիներ այնպես, լուսաբացին
Լավ երազով արթնանայի,
Եվ իմ հոգնած ականջներում
Ոչ մի օտար ձայն չլիներ,
Լիներ բարդու սոսափը պարզ,
Ջրի զրույցն հասկանալի
Եվ կապույտով վերադարձող
Կռունկների կանչը լիներ...

1971

ԴԱՇՏԻ ԿԱՐՈՏ

Ախ, երևի ամպը լացել,
Խաղաղվել է այնտեղ,
Արտույտներն են վեր սլացել,
Դարձել թևող կանթեղ:

Ու երևի սուր են բուրում
Այնտեղ ծաղիկ ու սեզ,
Ցողերն այնպես են փայլփլում,
Ճռվողում են ասես:

Ուռին, որ խենթ քամու գրկում
Գալարվում էր դողով,
Մերկությունն է հիմա ծածկում
Իր վարսերի քողով:

Իսկ օրն ամռան՝ շողն արևի
Լկամի պես ծամում
Ու իր բաշին կանաչ-կարմիր
Երազներ է տանում:

Կակաչները կանաչի մեջ՝
Կայծկլտացող անթեղ,
Ոտաբոբիկ լինեի ես
Ու լինեի այնտեղ:

ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Մեծ արջը քնել երկնքի որջում,
Լիզում է թաթերն իր աստղաթաթախ...
Ու դու, մերկ անտառ, մթան մեջ կորչում,
Թվում է՝ դու էլ ննջում ես խաղաղ:

Բայց վաղը, գիտեմ, երբ քո գիրկը գամ,
Հրաշքով պիտի ելնես ընդառաջ,
Ինձ պիտի պարզես բոցդ մոգական,
Որ արեգակի ծվենն է կանաչ:

Եվ պիտի պարզես դողն այն երկնային,
Որով կդողա տերևդ վառման,
Եվ այն ծաղիկը, որ ինձ կնայի՝
Թաց աչքերի մեջ մի կապույտ զարմանք:

Եվ պիտի խորհեն, թե դու ես, գարուն,
Դու ես պարզապես անտառին փարվել...
Եվ չի հասկանա ոչ ոք աշխարհում,
Թե մի գիշերում ի՞նչ է կատարվել...

1983

Հասնում,
Զէր հասնում,
Հասնում,
Զէր հասնում,
Զէ՛ր հասնում նրան...

ԱՐԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ա

...Եվ դրախտ չեղավ աշխարհի վրա:

Ցուրտ հողմեր եղան,
Ու թախիծ եղավ քարանձավային:

Անծանոթ ու սև գազանի նման
Գիշերը եկավ,
Թաթերը դրեց անձավի քարին
Եվ հողմերի մեջ
Ու հողմերի հետ
Տխրորեն ոռնաց:
Եվ հողմերի մեջ
Ու հողմերի հետ
Հողմասուն ու սև գայլեր ոռնացին,
Եվ գայլերի հետ
Ոռնաց մարդկային թախիծը վայրի:
Եվ սարսուռի մեջ իր ցուրտ քարայրի
Նա ուզեց հանկարծ
Ու սաստիկ ուզեց,
Որ շողեր կաթեն
Հողին ու քարին,
Ծլվլոց կաթի
Հավքերի լեզվից,

Ու տերևներից՝
Մանանա ու ցող...

Եվ հողմերի տակ բիրտ ու ոռնացող,
Երբ ծանր ու մթին կոպերը փակեց,
Շող էր կաթկթում
Հողին ու քարին,
Եվ մանանա էր
Ծառերից կաթում,
Ու կաթում էր ցող:

Քնից վեր թռած,
Նա ուզեց բռնել լույսն այդ հեռացող,
Բայց ափերի մեջ պարապը մնաց:

Ու նա տեսիլքի ետևից գնաց:

Եվ եղավ երազ:

Երեկո եղավ,
Եղավ վաղորդայն,
Եվ դա օրերի օրն էր առաջին:

Բ

Եվ եղավ երազ...
Ու երազի հետ
Նաև մենության թախիծը եղավ,
Եղավ ծարավը ինքնաբաշխումի,
Թեկուզ դեռ նրանք չունեին անուն:
Եվ մարդը տեսավ,
Որ իր կրծքի տակ

Ինչ-որ մի բան է
Հանկարծ խենթանում,
Երբ գալիս է նա...

Իսկ նա՛...
Աղջիկ էր նա սովորական,
Անգամ ամենից գեղեցիկը չէր
Եվ մինչև անգամ
Նենգ էր նա մի քիչ...

Բայց ուրիշ էին աչքերը նրա,
Մեջքի բեկումը
Ու քայլքը՝ ուրիշ:
Թրթռում էին ստինքներն առույգ,
Եվ կոնքերը կոր
Մայրության զորեղ աղերսն ունեին:

Ու երբ ժայռից ժայռ
Սլանում էր նա
Գեղեցիկ ու մերկ,
Սլանում էր նա
Գեղեցիկ ու նենգ,
Մարդը հևիհև հասավ ետևից,
Գլուխը նրա առավ իր զորեղ
Զույգ ափերի մեջ,
Ասաց.
- Ի՞մն ես դու...

Աղջկա զնգուն ծիծաղը եղավ,
Որ նենգ էր մի քիչ:

Եվ հետո նորից
Սլանում էր նա ժայռերի միջով,

Սլանում էր նա
Գեղեցիկ ու մերկ,
Սլանում էր նա
Գեղեցիկ ու նենգ...
Մարդը վազում ու չէր հասնում նրան,
Հասնում,
Չէր հասնում,
Հասնում,
Չէր հասնում...

Չէ՞ր հասնում նրան...

Եվ եղավ սերը...

Երեկո եղավ,
Եղավ վաղորդայն,
Եվ օրն էր երկրորդ:

Գ

Եվ եղավ սերը...
Եվ այդ սիրո հետ
Սրտի մեջ եղավ այնպիսի մի բան,
Որ նման էր շատ
Ժանիքի թողած մխացող վերքին:

Եվ նա չիմացավ,
Թե ինչ է ուզում,
Իմացավ սակայն,
Որ ինչ ուզում է, աշխարհում չկա:

Իմացավ սակայն,
Որ ինքն ուզում է այնպիսի մի բան,

Որի մեջ տխուր անձրևը շողար,
Լիներ արեգակ,
Ու խոտը բուրեր...
Այնպիսի մի բան,
Որ պատառոտված իր շրթունքների
Համը ունենար
Եվ սակայն նաև գեղեցիկ լիներ,
Ինչպես արցունքը,
Ինչպես նժույգը
Եվ ինչպես շանթը...

Հետո չիմացավ,
Սրտի մեջ էր դա,
Թե՞ շրթունքներին,
Որ շողաց,
Դողաց
Անծանոթ մի բան:
Որ շողաց
Դողաց,
Զրնգաց ինչպես ջրվեժը՝
Վայրի,
Թրթռաց ինչպես տերևը՝
Թեթև,
Եվ տեղաց ինչպես անձրևը՝
Տխո՞ւր...

Եվ եղավ երգը...
Երեկո եղավ
Եղավ վաղորդայն,
Եվ օրն էր երրորդ:

Եվ եղավ երգը...
Ու երգն էր բարի...

Ու երբ աշխարհին
Ծանրացավ նորից թևը խավարի,
Այդ երգն էր բարի,
Որ հանկարծ մարդու ձեռքում կարծրացավ
Ու փոխվեց մի զույգ
Զրնգուն քարի:

Ու երգն էր բարի,
Որ իրար զարկեց
Զնգուն բեկորներն այդ որձաքարի,
Եվ խավարի մեջ բռնկվեց հանկարծ
Ինքը՝ սկիզբը,
Ինքը՝ մաքուրը,
Եվ գեղեցիկը...

Բոցերը խարտյաշ աղջիկների պես
Նախ ելան ոտի
Ու երբ պատի մեջ տաքացան լրիվ,
Իրենց ուսերից
Նետեցին ծխի սև մորթիները
Եվ սկսեցին մերկանդամ պարել...

Եվ կարմիր՝ նման արևածագի,
Եվ բոսոր՝ ինչպես ծաղիկը նռան,
Եվ դեղին՝ ինչպես աշնան բռնկում,
Խենթացավ անվերջ
Ինքը՝ սկիզբը,
Ինքը՝ ըմբոստը,
Ինքը՝ ազատը...

Եվ բոցերի մեջ կապույտ կար այնքան...
Ու մարդուն թվաց,
Որ եթե ձեռքը բոցերին պարզի,

Կարող է քաղել
Մով մանուշակներ,
Երազ ու երկինք...

Եվ եղավ կրակ...

Երեկո եղավ,
Եղավ վաղորդայն,
Եվ օրն էր չորրորդ:

Դ

Եվ եղավ կրակ...
Բայց մարդը տեսավ,
Որ ահա կրկին աշխարհի վրա
Դառնությունն է շատ,
Քաղցրությունը՝ քիչ:

Ու տեսավ նաև, որ հողն է բարի,
Եվ արեգակն է միայն ամոքիչ:

Եվ ուզեց քամել
Եվ ըմպել ուզեց
Հուրն արեգական
Եվ հյութը հողի...

Եվ նա իր աղի, լեղի քրտինքով
Ոռոգեց առատ որթը խաղողի,
Որ մոտիկ լինեն
Ճյուղերն արևին,
Եվ խորունկ լինի
Արմատը հողում...

Լցվեց, ծանրացավ
Ողկույզը շողուն:

Եվ ողկույզի մեջ
Թախիծն էր հողի,
Եվ ողկույզի մեջ՝
Լույս արեգական,
Եվ ողկույզի մեջ՝
Մի ալ խենթություն,
Եվ ողկույզի մեջ՝
Դառնություն ու թույն...

Եվ քաղցր եղավ ըմպումը նրա,
Եվ բարձր եղավ խենթությունը խոլ
Եվ արթնացումը՝
Դառն ու անքնին...

Եվ եղավ գինին...

Երեկո եղավ,
Եղավ վաղորդայն,
Օրն էր հինգերորդ:

Ե

Եվ եղավ գինին...
Ու մարդն արարիչ,
Երբ այդ ամենը արարեց այդպես,
Զարմանքով տեսավ,
Որ անաստված է աշխարհը դարձյալ...

Որ հողմ է դարձյալ,
Թախիծ է ու վերք:

Եվ կոպիտ ձեռքով
Նա իր երազից ծվեններ առավ,
Գումարեց սիրո լույսին ու ցավին,
Գումարեց երգին,
Կրակին,
Գինուն
Ու աշխարհ բերեց անհուն մի ոգի:

Եվ ապա ասաց.
- Հարկ է, որ սրան
Իմ նմանությունն ու պատկերը տամ,
Որ իմ եղբայրը լինի զորավոր,
Հավա՛տը,
Սե՛րը...
Ու երբ որ կանչեմ,
Լսի ինձ ու գա...
Եվ մարդը, իրավ,
Իր նմանությունն
Ու իր պատկերը տվեց այդ ոգուն,
Պարուրեց լույսով,
Հանեց ամպերից,
Աստղերից էլ վեր
Եվ կոչեց Աստված...

Եվ եղավ Աստված...

Երեկո եղավ,
Եղավ վաղորդայն,
Օրն էր վեցերորդ:

Զ
Եվ եղավ Աստված...

Բայց յոթերորդ օրն աշխարհի վրա
Չեղավ կիրակի,

Ցուրտ հողմեր եղան
Ու թախիծ եղավ քարանձավային:

Անծանոթ մի սև գազանի նման
Գիշերը եկավ,
Թաթերը դրեց անձավի քարին
Եվ հողմերի մեջ
Ու հողմերի հետ
Տխրորեն ոռնաց:

Մարդը ձայն տվեց,
Կանչեց Աստծուն,
Բայց Աստված սուզված
Ամպերի ծերմակ երանության մեջ,
Չլսեց նրան:
Մարդը աղոթեց:
Ոգեց,
Աղերսեց,
Բայց Աստված չեկավ:

Եվ սարսուռի մեջ իր ցուրտ քարայրի
Նա ուզեց դարձյալ
Եվ սաստիկ ուզեց,
Որ շողեր կաթեն
Հողին ու քարին,
Ծլվլոց կաթի
Հավքերի լեզվից,
Ու տերևներից՝
Մանանա ու ցող...

Եվ հողմերի տակ՝ բիրտ ու ոռնացող,
Երբ ծանր ու մթին կոպերը փակեց,
Շող էր կաթկթում

Հողին ու քարին,
Եվ մանանա էր
Ծառերից կաթում,
Եվ կաթում էր ցող...

Նա ուզեց բռնել
Լույսն այդ հեռացող,
Բայց ափերի մեջ պարապը մնաց:
Եվ նա
Երազի ետևից գնաց...

Երեկո եղավ,
Եղավ վաղորդայն,
Եվ եղավ հոգնած հավիտենություն...

1970

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Որիշ է բախտը բանաստեղծների...
Այդ նրանց ցավն է,
Որ դառնում է փառք,
Դառնում է անուն:

Եվ որքան խորն են վերքերը նրանց,
Այնքան նրանցով խորն են հիանում:

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Անքնությո՛ւն,
Դեղին թախիծ,
Դու, որ կյանքում հետապնդել
Ու հալածել ես ինձ անվերջ, իբրև ոսոխն իմ անձնական,
Ինչպե՞ս դարձար այսքան մոտիկ,
Ինչպե՞ս դարձար այսքան ընտել
Ու սիրելի դարձար անգամ...

Կա՛ն այդպիսի համառ կանայք,
Սիրահարվում կյանքում մեկին,
Հետապնդում խոնարհ ու լուռ,
Թվում են թույլ, թվում անկամ,
Բայց տեսնում ես կամաց-կամաց,
Որ զորությամբ մի անմեկին
Դառնում մոտիկ ու մտերիմ,
Բաղձալի՛ են դառնում անգամ:

Անքնությո՛ւն,
Դեղին մորմոք,
Դու չսիրած-սիրած իմ կին,
Եթե չգաս ամեն գիշեր ու սնարիս լուռ չհսկես,
Ինչպե՞ս պիտի գտնեն իրար
Ու հասկանան իրար կրկին
Ցերեկների տենդում կորած իմ եսն ու ես...

Թե դու չգաս,
Ես առանց քեզ ինչպե՞ս անեմ հոգեհարցում,

Ինչպե՞ս խոսեմ անհայտի հետ,
Կապույտի հետ,
Ցողի,
Խոտի,
Փոշեկալած իմ հոգու մեջ
Ինչպե՞ս գտնեմ խիղճ ու արցունք,
Ինչո՞վ ցողեմ բացվող դեմքը առավոտի:

Թե դու չգաս,
Ինչպե՞ս լսեմ քամու հառաչն անպատմելի,
Ինչպե՞ս, ասա,
Ականջ դնեմ զղջումներիս հեռու լացին,
Ինչպե՞ս բռնեմ ընկնող ասուպն ու կսկիծով իմ մատների
Տանեմ նորից պատանության իմ սիրածին:

Ինչպե՞ս գնամ ծննդավայր,
Ինչպե՞ս գտնեմ գետակն իմ զով.
Մեր դուռը փակ,
Որ նա իմ դեմ բացվի որպես ավետարան,
Ծուխ ծխանին,
Թոնիրը տաք, որ լեցուն էր արշալույսով
Եվ այս ամենն, ինչ ինձանից
Դարի հողմերն անհետ տարան:

Ուրեմն,
Փա՛ռք ու գոհություն
Քե՛զ, իմ տանջված, քեզ, իմ արդար,
Դու՝ ցավող սիրտ,
Արթուն կարոտ,
Անջնջելի խղճի խարան,
Դու՝ կորստի ու զղջումի տառապալի հաշվեհարդար,
Դու՝ աստղայի՜ն իմ քավարան...

* * *

Անքո՛ւն գիշեր,
Դեղի՛ն գիշեր,
Բերել ես դու, կախել վրաս
Լիալուսին մի ոսկեգույն, իբրև հսկա մի հմայիլ...
Նա, որ գիտե
Թովչուհու պես իրար խառնել կյանք ու երազ,
Որ շուրթերին սիրո շշուկ
Ու շշուկներ ունի մահի...

Նա, որ ծովեր է փոթորկում,
Օվկիանոսներ հանում ծունկի,
Որ ջրերի մութ անդունդներն է խուզարկում,
Ա՜խ, նա գիտե,
Լավ գիտե նա՝
Թաքուն լիծն եմ ես արցունքի,
Ու ողջ գիշեր ափեափ է հոգիս զարկում:

Խաղ է անում ուզածի պես,
Իրար խառնում ջուր ու ավազ,
Իմ հատակից նավաբեկյալ երազներ է անվերջ հանում,
Ալիքներիս վրա դառնում խարտիշահեր մի ծովահարս
Եվ կանչում է հմայելով,
Եվ տանջելով՝ անէանում:

Ամպի տակից հայտնվելով,
Նորից թովում,
Նազում է նա,
Հին օրերի մտերմությամբ

Պչրանքներ է փորձում ցրել...
Եվ նայում է այնպես մաքուր,
Նայում այնպես անմեղսունակ,
Որ թվում է, թե երեկ չէր,
Որ կուսությունն իր կորցրեց...

Ու ողջ գիշեր
Սահում խաղաղ,
Օվկիանոսներ հանում ծունկի,
Մութ անդունդներն է խուզարկում չար ոգու պես...

Եվ նա գիտե,
Լա՜վ գիտե նա՝
Թաքուն լիճ եմ ես արցունքի,
Ու մինչև լույս ուզածի պես
Խաղ է անում իմ հոգու հետ...

* * *

Գիշերն ահա երևակվում
Ու դառնում է կամաց-կամաց
Ինչ-որ հեռու լեռնահովիտ,
Ուր արծաթե գետն է սուրում,
Ուր բարալիկ մի տխրություն
Իբրև աղջիկ
Մի տխրամած,
Կանգնել փայտե կամրջակին
Ու սրինգ է անվերջ սուլում:

Հետո ասես հեռուներից
Զրնգում է արծաթ մի զանգ,
Բռնկում է ակնթարթում
Լույս մի մաքուր...
Վերի՜ն-վերի՜ն մի ակնթարթ,
Մաքո՜ւր-մաքո՜ւր մի կարոտանք,
Որի կապույտ մառախուղից
Ներշնչանքի աստղն է ծագում:

Հետո անցնում է համրորեն
Իմ մենության անապատով
Մի զորավոր գեղեցկություն,
Ծածանելով բոցը բաշի,
Ծառանում է վայելչորեն
Ու իր վայրի,
Ծանր թաթով
Մեջքն է կոտրում այս տաղտկության,
Այս զառամյալ գետնաքարշի...

...Ձյուն է տեղում հանկարծակի,
Աստղծո պես ծերմակ մի ձյուն,
Տեղում առատ,
Մեծափաթիլ՝
Լույսի նման ու նշխարի...
Հետո գարնան արեգակով
Հալվում է նա,
Դառնում շաչյուն,
Եվ շաչյունով տանում իր հետ
Կեղտն ու փոշին այս աշխարհի...

Ծնորհապարտ եմ քեզ,
Գիշեր,
Իմ տառապած մտերմուհի,
Այդ վայրենի գեղեցկության,
Այդ ձյան համար մեծ ու մաքուր,
Այդ տխրության,
Այդ աղջկա
Եվ այն բարակ մառախուղի,
Որի կապույտ
Ծփանքի մեջ
Ներշնչանքի աստղն է ծագում...

* * *

Ես սեպագիր եմ հողմերից եղծված,
Ես վերծանվել եմ կիսատ ու թերի,
Ո՞ւր են կսկիծներն իմ մեջ անթեղված,
Ո՞ւր են հետքերը մարած շանթերի...

Չպեղված Անի՝ փոշիներիս տակ
Գեղեցկությունը դեռ լալիս է լուռ,
Հրդեհից ճաքած արծաթե զանգակ՝
Որ պիտի զնգար վսեմ ու տխուր:

Եվ մշուշ եմ ես անանուն ցավի,
Իմ մեջ դեռ անհայտ աստղեր են դողում,
Տառապանքն եմ այն հավատացյալի,
Որի սրտի մեջ կասկածն է սողում:

Ու կարապներ են հեկեկում իմ մեջ՝
Վիրավոր, որպես սերը աշխարհի,
Եվ տանջում է ինձ այն երաշտը մեծ,
Որ պիտի ոգու թևերը այրի:

Ու դեռ փնտրում եմ ես այն բանալին,
Որ գաղտնարանի դռներն է բացում,
Այն երգը միակ, այն զարմանալին,
Որ խիղճ է ու սեր, ցավ ու հիացում:

Հոգնած սերմնացան՝ գիտեմ, ո՜ւշ է շատ,
Գիշերս է իջնում նման մորմոքի...
Ո՞ւր ես, հայտնվիր, հրդեհիր ինձ, շա՛նթ,
Եվ ոտից գլուխ դարձրու ոգի:

ՏՐՏՈՒՆՋ

Ես քնքշության ձորտն եմ եղել,
Գորովանքի խոնարհ գերին,
Եվ քնքշանքի խոսքեր եմ ես
Ասել անգամ անշուք կանանց...
Ես այնպես եմ հաճախ նայել
Նրանց տխո՛ւր, որբ աչքերին,
Որ մի վայրկյան շիկնեն նրանք
Եվ շիկնելով՝ գեղեցկանան...

Ախ, ես գիտեմ, ապրելն այնքան
Գեղեցիկ է ու ահավոր,
Սերն ու բարին այս աշխարհում
Գեղեցիկ են, որպես ցորեն,
Բայց ծովերի մեծ սիրտն անգամ
Տրոփում է հիմա ցավով,
Եվ ինչ-որ բան այս աշխարհում
Մահանում է անհուսորեն:

Եվ ուզում եմ ես ինձ փրկել
Տեսիլներով պատանության,
Կարոտներով այն աղջկա,
Որ նման էր արծաթ զանգի,
Լողարկել եմ ուզում անվերջ
Ալիքներով անհայտության
Ու կղզիներ գտնել ցողոտ,
Ու թավուտներ երազանքի:

Եվ իմ ձեռքն եմ պարզում անվերջ
Ճառագայթին ու կապույտին,
Երազում եմ, որ իմ հոգում
Լո՜ւյսը լողա, որպես կարապ,
Սակայն անզոր սպասումից
Խառնարան եմ դառնում մութի,
Ու մնում է ձեռքերիս մեջ
Ինչ-որ ստվեր, ինչ-որ պարապ:

Անագորույն տարիների,
Ո՛չ, դարերի բեռն է ուսիս,
Սակայն, ավաղ, ներիր ինձ, կյանք,
Դեռ չգիտեմ՝ ինչպե՞ս ապրել...
Ախ, կուզեի, շատ կուզեի
Ապավինել միայն լույսին,
Բայց ցողունս շատ է բարակ,
Իսկ հողմերը՝ խորշակաբեր...

* * *

Նորից օդն է բռնկվել ինչ-որ կապույտ սոսափով,
Հովի բարակ ձեռքերում ինչ-որ քնքշանք կա ծավի...
Եվ իմ մարմինը նորից դարձել կավե մի սափոր
Ու լցվել է արցունքով կարոտների ու ցավի...

Գարո՛ւն, իմ հին տառապանք ու քնքշություն դու ահեղ,
Գարո՛ւն, իմ հին ներշնչանք՝ անհղացում ու անբառ...
Կարծում էի, թե իրար մենք կորցրել ենք հավետ,
Ինչպե՞ս, ասա, հիշեցիր, ինչպե՞ս գտար իմ ճամփան...

Նման էիր դու այնպես հմայության հրաշքին,
Դու ինձ տանջել գիտեիր երանելի մի ցավով,
Կանգնում էիր դու իմ դեմ անմեկնելի, որպես կին,
Ժպտում էիր ինձ անմեղ, ժպտում էիր հանցավոր:

Եվ դու հպարտ էիր շատ, քո պարեգոտը, գարուն,
Արշալույսից էր ձևված ու կապույտի կոհակից,
Ի՞նչ մրրիկներ են հիմա խենթ շառաչել աշխարհում,
Որ ծվատել են այդպես լույսն ու կապույտը հագիդ:

Եվ կանգնել ենք իրար դեմ մենք հոգնաբեկ ու տրտում,
Արտասուքներ են դողում մեր խոնարհված կոպերին...
Քո կարապները քեզ հետ, ախ, չեն դարձել նորից տուն,
Իմ երազներն ինչ-որ տեղ հոգեվարում են լռին:

Եվ ծաղիկներդ հիմա, մանուկների նման որբ,
Դեպի լեռներն են ելնում, որ աղբյուրներ որոնեն,
Ու գնում են նրանց հետ կարոտներն իմ վիրավոր,
Որ նրանց որբ ծարավին իրենց արցունքը ձոնեն:

Եվ դու տխուր ես, գարուն, ծվատված ես խղճի պես,
Քո հովերի մեջ հիմա շշուկներ կան մահահոտ...
Ու չգիտեմ, չգիտեմ, դո՞ւ պիտի ինձ սփոփես,
Թե՞ ես պիտի քեզ վրա կարդամ տրտում մի աղոթք...

ԲԱՌԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«ՀԱՎԱՏ»

Ես հազար անգամ ծնվել աշխարհում
Ու մահացել եմ ես հազար անգամ:
Եվ մեծագույնը տառապյալներից
Ես եմ երևի,
Քանզի երկունքն իմ դժվար է անչափ,
Կյանքս՝ փորձություն,
Եվ հոգեվարքս անչափ տանջալի:

Ծնվելու պահին
Մանկորեն մաքուր
Ու մերկ եմ լինում,
Խղճի պես արդար
Եվ արդարության նման գեղեցիկ:

Եվ սակայն, ավա՛ղ,
Տեսնում եմ հանկարծ,
Որ դարձել եմ կուռք,
Փոխվել եմ քարի,
Պղնձի, ոսկու,
Զոհասեղան եմ դարձել ես արնոտ,
Եվ զոհն առաջին հենց ի՛նքս եմ որ կամ: _

Ես կուռք չեմ, օ, ո՛չ,
Խաչ չեմ ես բնավ,
Ես մանուկ եմ մերկ,
Հող եմ ու ծաղիկ,
Աղբյուր եմ ու լույս,
Եվ անհնար է ապրել առանց ինձ...

«ՀՈՂ»

Ես սևն եմ սևի,
Բայց ես եմ տալիս արար աշխարհին
Բոլոր գույների թիթեռը ցոլուն՝
Խարտյաշը հասկի,
Կարմիր ծիծաղը ճաքճքած նռան,
Մանուշակների թախիծը կապույտ,
Արծաթը բարդու
Եվ կանա՜չ, կանա՜չ
Այն քնքշությունը,
Որ մայրն է բարյաց:

Ես անհուն, ես մեծ, ամենակարող,
Բայց խղճի պես թույլ,
Բարու պես անզոր
Եվ գեղեցկության նման անպաշտպան...

Հոշոտում են ինձ,
Ծվատում են ինձ,
Իմ ծաղիկներն են տանում արմատով,
Մուր ու մոխիրով ցողերս եղծում...

Եվ այս աշխարհում իմ երկվորյակը
Երևի միայն սիրտն է հանճարի:

* * *

Լեռներում ձնհալ է,
Լալիս է բարձունքը,
Այս որքան զուլալ է
Մեծերի արցունքը:

Իջնում է հեղեղը,
Ամեն ինչ քանդում է,
Հովիտը ի՜նչ նեղ է,
Ի՜նչ նեղ է անդունդը:

Լալիս է բարձունքը,
Ծաչում է հեղեղը,
Մեծերի արցունքը
Այս որքա՜ն ահեղ է..

ԱՐՇԱԼՈՒՅՍ

– Քանի չի զարթնել դեռ աղմուկը բիրտ,
Տո՛ւր ինձ լռության ոսկե մի փշուր...

Եվ աչքով արեց ինձ լուսաստղը հուր:

– Քանի չեն շնչում դեռ ծուխն ու փոշին,
Տո՛ւր ինձ մաքրության մի կապույտ կաթիլ...

Եվ ցողը զնգաց ձայնով արծաթի:

– Քանի փակ են դեռ շուրթերը ստի,
Տո՛ւր ճշմարտության մի քանի խոսքեր...

Եվ երկինք ելավ արտույտը ոսկե:

«ՍԱՂՄՈՍԱՐԱՆ» շարքից

ՍԱՂՄՈՍ Ա.

Տեր, հանիր այսօր ունկերդ խցող ամպերն սպիտակ,
Կապույտի փառքը ինձանից փակող մռայլը վանիր,
Քանզի ուզում եմ զրուցել քեզ հետ...

Եվ խոսքն առաջին, որ դողդողում է շուրթերիս վրա՝
Հարց է մեղավոր, հերձվածող մի հարց.
– Ինչպե՞ս է եղել, որ արարելով չքնաղ Եվային,
Չես սիրահարվել հենց ինքդ նրան...

Ներիր նվաստիս, եթե հանդգնեմ քո դեմքին ասել,
Որ քո սրտի մեջ երևի սերը չի էլ գիշերել,
Եվ դրանից է, որ քո արարած աշխարհը թերի,
Անկատար է խիստ,
Եվ անկատար եմ ես այդ աշխարհում:

Ես գիտեմ վերին մի ճշմարտություն.
Ինչ արարվում է առանց տաք սիրո՝
Աշխարհ լինի դա,
Մանուկ
Թե սափոր,
Անկատար է միշտ...

Ի՞նչ ես ինձ տվել...
Միայն ու միայն հինգ զգայարան:
Մինչդեռ կուզեի իմանալ այնպես համն արշալույսի...
Երևի թե նա համ ունի նռան,
Հասկի համ ունի

Կամ աղբյուրի համ...
Կուզեի զգալ բուրմունքն աստղերի,
Երևի նրանք առաջին սիրո բուրումներն ունեն
Կամ բուրումն ունեն հենց նոր արարված առաջին բառի...

Ինչո՞վ շոշափեմ գաղտնիքն սկզբի,
Ես գեղեցկության անքնին ոգին ինչո՞վ վերծանեմ
Եվ ինչո՞վ բռնեմ ես այն երազը,
Որ լուսաբացին այցելում է ինձ
Ոսկեվարս, թեթև աղջկա տեսքով
Եվ փախչում, ինչպես իր երկվորյակը
Իմ պատանության լացող ձեռքերից...

Ես ինչո՞վ, ինչպե՞ս իմանամ, ասա,
Թե ի՞նչ գույն ունի
Ինքը՝ ճշմարիտ ճշմարտությունը,
Քանզի հաճախ է նա փոխում գույներ ու փոխում զգեստ,
Եվ մոլորվում եմ...

Շատ է պատահում՝
Քայլում է ահա կինը՝ չքնաղը.
Եվ քո աչքերի ճառագայթներով վայրկյանների մեջ
Թոթափում է նա զգեստներն ամեն
Եվ ընթանում է արշալույսի պես մերկ ու հիասքանչ:

Տայի՛ր ինձ, տայիր
Մի այլ ճառագայթ,
Եվ այն կենտ, միակ ճշմարտությունը
Ամենքին ի տես այդպես մերկանար,
Քայլեր գեղեցիկ՝ որպես արշալույս,
Եվ անհերքելի՝ որպես արշալույս...

Օգնակա՛ն եղիր,
Իմ վաղնջական տառապանքներին
Գումարիր նորը, մեծը գումարիր,
Տո՛ւր ինձ լիաբուռն ահեղը սիրո,
Ո՞վ գիտե, գուցե նրանց բախումից
Ծնվի տենչալին,
Եվ զգամ հանկարծ համն արշալույսի,
Բուրմունքը աստղի,
Շոշափեմ հանկարծ ոգի ու կրակ,
Շոշափեմ հանկարծ ոգի ու գաղտնիք...

ՍԱՂՄՈՍ Զ.

Տե՛ր, սիրտս ահա... Ամոքիչ եղիր,
Շա՜տ է ծվատվել նա կասկածներից,
Սիրուց ու խանդից, գինուց ու շանթից
Շատ է ծվատվել...
    Նրա խորքերում
Ավերակներ կան արշալույսների:

Նրա մի խորշում սկզբից ի վեր
Բնավորվել է կապույտ մի թռչուն,
Այնքան հարազատ և իմը այնքան,
Որ հաճախ անգամ մոռանում եմ ես,
Թե նրա խորշում սկզբից ի վեր
Բնավորվել է մի կապույտ թռչուն:

Տե՛ր, սիրտս ահա, իմն է նա թեև,
Բայց ես չգիտեմ գաղտնիքը նրա,
Այն գիտեմ միայն, որ նա բյուր անգամ
Լավն է ինձանից...

Անգամ կարեվեր խոցվելուց հետո

Լվացվում է նա իր իսկ արցունքով
Ու դառնում նորից անքեն ու ներող,
Որպես առավոտ ու որպես Հիսուս...

Խորան է փոքրիկ,
Եվ սակայն սիրո աղոթքը այնտեղ
Նման է այնպես
Ալեբախությանն ահեղ ծովերի:

Երբ նվաղում է կամ ցավում է նա,
Այնպես է նայում իմ աչքերի մեջ,
Ասես մանուկ է մեղավոր ու որբ:

Ու ես շշուկով ասում եմ նրան.
Ծտապելուց ես դու այդպես ցավում,
Ո՞ւր ես շտապում,
Գիշեր է շուտով,
Եվ դու կննջես անխռով ու լուռ:

Բայց նա չի ննջում,
Եվ գիտեմ ինչու՝ երգ ունի նա դեռ,
Դեռ չի ավարտել
Նա երգը կյանքի ու երգը մահի...

Եվ ցավում է խիստ...
Վերջերս հաճախ ու խիստ է ցավում...
Ու եթե հանկարծ չլռի հավետ,
Գուցե իր խորքից
Հանի լեռնային մի մաքուր աղբյուր,
Մի նոր արշալույս
Կամ նոր մի հավատ...

* * *

Ես ճամփա ընկա, որ այս տանջալի կասկածը մարեմ,
Որ ապավինեմ ապառաժներիդ անխախտ հավատին,
Որ ջրերիդ հետ քարեքար ընկած անփույթ թափառեմ,
Քամիներիդ մեջ խշխշամ, ինչպես արծաթե բարդին:

Մայրամուտ եղավ... թվաց՝ ուր որ է կզարկվի ժայռին
Ու կզրնգա անդունդից ելնող լրած լուսնկան...
Չգիտեմ հաստատ, զարկվեց նա իրոք, և սակայն վայրի
Անդունդներն ի վար արծաթի մաքուր բեկորներ ընկան:

Եվ հրաբուխի հոտ էի առնում ես քո քարերից,
Եվ ջրհեղեղի հոտ էի առնում կավից քո տոչոր,
Ինչ-որ անմեկին շշուկ էր գալիս մթին այրերից,
Ինչ-որ բան էին շշնջում իրար մացառները չոր:

Ու ես չիմացա, ցնորք էր, տեսիլք... Եվ սակայն հանկարծ
Դարեր թաքնված հեթանոսները դուրս եկան այրից:
Աստվածների պես կիսամերկ էին ու կարծրամկան,
Ու գրաբարյան պղինձն էր զնգում նրանց բարբառից:

Կրակ վառեցին... Դափի դոփյուն էր ու փողերի կանչ,
Որոտում էին քարանձավներն ու վիհերը լեռան,
Կաքավում էին ու նազում էին կանայք հիասքանչ,
Իսկ մեկը, մեկը հույժ էր գեղեցիկ ու երգեր ձեռամբ:

Եվ նրանց համար չկար աշխարհում դրախտ ու դժոխք,
Եվ նրանց համար գոյություն չուներ մեղք ու քավարան,

Աշխարհն այս արար լոկ հող էր ու ջուր, կրակ էր ու շողք՝
Գեղեցիկ, ինչպես հարության Աստվածն՝ այն մանուկ Արան...

Խառնվել նրանց ու ազատ էի ես նրանց նման,
Եվ նրանց նման՝ հարբած աստղերով, կապույտով վերին,
Սոսու սոսափով ինձ սեր ու բախտ էր գուշակում հման,
Ու ես հմայված հավատում էի նրա խոսքերին:

Առավոտ եղավ... Ու թվում էր ինձ կասկածն իմ մարել,
Եվ սիրտս նորից ապավինել է լույս ու հավատին...
Ես ջրերի հետ զրնգում էի՝ շուրթերիս արև,
Քամիների մեջ խշխշում, ինչպես արծաթե բարդին...

* * *

Կապույտ մշուշն է ելնում վիհերն ի վեր, ձորն ի վեր,
Եվ անդունդներն են նորից անհունորեն խորանում,
Այնտեղ՝ հեռու քարափին ինչ-որ մի վանք կա ավեր,
Ու գաղտնիքն է երևի նիրհում մամռած խորանում:

Վիհերն ի վեր, ձորն ի վեր ելնում կապույտ մի մշուշ,
Նստում այրված քարափին, բարդիներին է թառում,
Ու թվում է, թե այնտեղ վաղնջական ինչ-որ հուշ
Ոգիների հետ զարթնել ու ծեսեր է կատարում...

Կապույտ մշուշն է ելնում վիհերն ի վեր, ձորն ի վեր,
Ոտից գլուխ ինձ նորից թախիծով է մկրտում,
Եվ թվում է սրտիս մեջ ինչ-որ մի վանք կա ավեր,
Ու ես ինքս էլ չգիտեմ նրա գաղտնիքը տրտում...

ԵՐԳ ՀՈՂԻ ՈՒ ԵՐԿՆՔԻ

Պառկել եմ մենակ իրիկնամուտին,
Հանգչող արևի սուրբ ծեսն եմ դիտում,
Արծիվն իջնում է, խառնվում մութին
Եվ իսկույն նորից երկինք է միտում:

Երկնքի մեջ են գյուղերը քարե
Ու կորնգանի արտերը լազուր,
Երկնքի մեջ է վանքը ծվարել,
Երկինք է խրել իր գմբեթը սուր:

Եվ ինչ-որ մի ցավ՝ խոնավ ու տրտում,
Կարծես ինքն իրեն փոխվում է երգի,
– Ինչո՞ւ ինձ այսքան քիչ հող տվիր դու
Եվ ինչո՞ւ տվիր ինձ այսքա՜ն երկինք...

Քո ձգնակեցը՝ քո Նարեկացին,
Համարյա միայն երկնքում ապրեց,
Քո դեմ երկնքի դռները բացին,
Երբ տառապանքդ Աստծո չափ էր մեծ:

Ախ, գիտեմ, երկի՛ր, նոր բան չեմ ասում,
Երևի մորը չեն ասում նոր բան...
Ուզում եմ շոյել այս արտը հասուն,
Ուզում եմ բռնել երկնքի ճամփան:

Երևի վանքի քարերին՝ մամուռ
Եվ պատերի տակ թփեր կան ուրցի...

Հին ոգիներն են գիշերվա մեջ լուռ
Երևի նստել խոնարհ զրույցի:

Կամարների տակ մութն է խտանում,
Կապուտակ աստղը փոխվում է մոմի,
Երևի նրանք զրույց են անում
Վասն աստղերի ու Պղատոնի...

Չգիտեմ... գուցե, ի՜մ մայր, ի՜մ երկիր,
Քեզ երկինք էր պետք հողից ավելի,
Գուցե բախտ է դա ու ճակատագիր,
Գուցե խաչն է դա առաքյալների:

Ներիր նվաստիս այս խոսքը տրտում,
Որ սփոփանքն է գուցե իմ վերքի,
– Թեև ինձ այսքան քիչ հող տվիր դու,
Բայց և փա՛ռք, տվիր ինձ այսքա՜ն երկինք...

* * *

...Եվ ամեն գիշեր ես խոսք եմ բացում քո անդունդների,
Քո ընդերքներում նիրհող պղնձի զնգոցի հետ խուլ,
Ցոլանքների հետ քո ադամանդյա առասպելների,
Աղբյուրների հետ քո լացակումած,
Իմ իսկ արյան հետ,
Եվ սակայն, ավաղ,
Լավ չեմ հասկանում դեռ նրանց լեզուն:

Եվ այնքան եմ ես հասկանում միայն,
Որ քո բիրտ քարի մթին խորքերում,
Ոսկե ու կապույտ թռչունների պես,
Շանթեր կան պահված...

Եվ այնքան եմ ես հասկանում միայն,
Որ անդունդներդ վերքեր են խորին,
Արշալույսները՝
Վերքերդ լիզող շեկ հարալեզներ...

Եվ այնքան եմ ես հասկանում միայն,
Որ թեև այնտեղ՝
Մութ վիհերիդ մեջ,
Քարե խռովք է
Ու անհաշտություն,
Բայց քարափն ի վեր վանք է սրբատաշ՝
Բյուրեղյա ու նուրբ ներդաշնակություն...

Եվ այնքան եմ ես հասկանում միայն,
Որ գիշերային կայծակների մեջ
Քո անդունդները
Դառնում են հանկարծ առավել խորին,
Եվ առավել է անմեկին դառնում գաղտնիքդ, իմ հող...

ԵՍ ԽԱԶԵՐՆ ԵՄ ՎԵՐԾԱՆՈՒՄ

Խորհուրդ՝ հիասքանչ ու զարմանալի...

Ես գիշերային կիսաքնիս մեջ
Վերծանում էի դարերով լռած խազերը մեր հին,
Ու մեղեդին էր հնչում աշխարհում:

Նա գարնանաբեր հարավի հևոցն ու շունչը ուներ
Եվ հունչը ուներ որձաքարերից բխող աղբյուրի,
Կապույտի նման անսկիզբ էր նա
Եվ անվախճան էր ճառագայթի պես:

Քրմորեն արդար ծունկի էր իջնում նա արևի դեմ,
Փառաբանում էր շողն արեգական
Ու կրկին, կրկին՝ շողն արեգական...
Հղում էր ապա օրհնանքն իր անբառ
Գարնան ամպրոպին,
Ծիրանի ծաղկին
Ու շեկ հասկերի ծանրությանը ձույլ:

Եվ հուշում էր նա,
Որ գեղեցկագույն դեմքը աշխարհում
Դա ազատության դեմքն է սրբազան,
Ամենամաքուր ձեռքերն աշխարհում
Ձեռքերն են խղճի,
Եվ արարիչը ամենազորեղ
Քրտինքի ցողն է՝ փոքրիկ ու ցոլուն...

Խորհուրդ՝ հիասքանչ ու ցավո՜ւտ, ցավո՜ւտ...

Տնքում էր հետո մեղեդին այդ սուրբ,
Ասես սրտի մեջ նիզակ էր խրվել,
Ասես թե նրա թրթիռը ոսկե
Ընկել էր վարգող սմբակների տակ,
Եվ ասես նրա թելը հրեղեն
Հատել էր ուզում ինչ-որ կեռ մի թուր...

Եվ թվում էր ինձ, երկի՛ր հայրենի,
Թե ես հենց ինքս եմ մեղեդին այդ սուրբ,
Ես, որ քո լույսի գուսանն եմ երդվյալ,
Քո թախիծը հին,
Արյունը ցաված,
Ուխտավորն եմ քո անաղարտ խղճի
Եվ տառապանքիդ ճգնավորը հեգ...

Խորհուրդ՝ հիասքանչ ու ցավո՜ւտ, ցավո՜ւտ...

Եվ թվում էր ինձ,
Թե այդ մեղեդու խորքերից անհուն,
Կանխագուշակման ու տագնապի պես
Ինչ-որ պղնձե զանգեր են հնչում
Եվ այսպես ոգում ձայնով պղնձե.
– Ես ասում եմ ձեզ,
Եթե պղտորեք ակունքը խղճի,
Մոլեգնի պիտի մեղքը սանձակոծ,
Ոգին մահանա,
Եվ ամենուրեք
Ծծումբի շունչը պիտի տարածվի...

Խորհուրդ հիասքանչ ու զարմանալի...

Եվ կրկին թերթում մագաղաթների էջերը դեղնած,
Ես լսում էի մեղեդի մի այլ,

Եվ այդ մեղեդին այնքան էր մաքուր,
Այնքան ոգեղեն,
Որ թվում էր ինձ, թե հույսի նման ու լույսի նման
Այցի է եկել ինձ սերն առաջին,
Այցի է եկել խոստովանության այն պահը ահեղ,
Երբ խառնվում են
Երկինք ու գետին,
Արցունք ու կրակ,
Ճառագայթ ու ծուխ,
Եվ թվում է, թե ուր որ է ահա
Բարձրանաս պիտի, գնաս սխրության...

Եվ գնում էի ես ահա կրկին
Մաքո՜ւր,
Ոգեղե՜ն
Ու սիրահարված...

Եվ ինքս էլ, ինքս էլ չիմացա անգամ.
Որտեղից ելան
Ու սկսեցին ընթանալ ինձ հետ
Կապույտին տվող ու ոսկուն տվող մի հին առասպել,
Թոնրի հրաշեկ շրթունքից պոկված հացաբույր մի բոց,
Հարսնեշոր հագած ծիրանի մի ծառ...

Եվ գալիս էին ինձ հետ աղբյուրներ,
Եվ գալիս էր մի մոլորված եղնիկ,
Եվ գարնանային մի մաքուր անձրև,
Թևին՝ ծիածան...

Եվ այդ ամենը
Գալիս, խառնվում այն հին մեղեդուն,
Դառնում էր անհուն մի համանվագ,

Որ այնքան էր սուրբ,
Այնքան էր վսեմ,
Որ թվում էր ինձ, թե բոլոր մարդիկ
Ուր որ է ահա
Նրա լույսի մեջ
Կօծվեն,
Կսրբվեն
Ու կաստվածանան,
Իսկ աստվածները ցած կիջնեն վերից
Ու գոնե մի քիչ,
Ու գոնե մի քիչ
Կմարդեղանան...

* * *

Նա գալիս է գիշերով ու ականջիս շշնջում.
–Դու հոգնած ես, դու հիվանդ ու տրտմորեն կարեվեր,
Եկ, քեզ հովիտն այն տանեմ, ուր տառապանքն է ննջում,
Ուր անթախիծ մի ոգի անհուններն է արևել:

Ի՞նչ եմ տվել քեզ կյանքում, որ դու կառչել ես կյանքից.
Ես խլեցի քեզանից մի ողջ աշխարհ ու մի տուն,
Մանկությունդ նմանվեց մի տխրագին զանգակի,
Որի հեռու ղողանջից դեռ արցունք է կաթկթում:

Բիրտ թաթերիս մեջ առա պատանությունը ես քո
Եվ արձիձե հողմերի շառաչյունին զարկեցի,
Մերթ կանգնեցի քո դիմաց սարսափի սև այն տեսքով,
Մերթ կասկածի կրակով անխղճորեն խարկեցի:

Երբ սիրեցիր, տվեցի քեզ տառապանքն անհասի,
Առեղծվածի բանալին չտվեցի քեզ սակայն,
Մոլորվեցիր դու հաճախ աչքերի մեջ կանացի,
Մաքրությունդ փոխեցիր գիշերներով մեղսական:

Եվ դու ապրում ես հիմա տագնապներով բեռնավոր,
Անքնությունն է անվերջ գիշերներդ ծվատում,
Քեզ պատեպատ ես զարկում իբրև անմեղ-մեղավոր
Երբ մեռած խիղճ ես տեսնում ու բարուն չես հավատում...

Եկ, քեզ տանեմ այն հովիտն, ուր տառապանքն է ննջում,
Վերքդ ցողով լվանամ, զով ամպերով իմ կապեմ...
Իսկ ես ժպտում եմ նրան ու կիսաձայն շշնջում.
–Ճնորհ արա, հեռացի՛ր, թող մի քիչ էլ տառապեմ...

ԶՐՈՒՅՑ ԶՎԱՐԹՆՈՑԻ ՀԵՏ

Ես չգիտեի, որ քանի գնա, այնքան ավելի
Նմանվեմ պիտի, Զվարթնոց իմ, քեզ,
Որ իմ մեջ պիտի ծանրանա անվերջ քարը ցավերիդ
Եվ արծիվներիդ թախծությունը վես:

Ու չգիտեի, որ գիշերներով, երբ գամ քեզ այցի,
Քեզ, ոգու հրաշք, տապալված գետին,
Ես պիտի լսեմ շշուկների մեջ աստղային լացի
Հրեշտակներիդ տխուր մեղեդին:

Երբ սյունդ շոյեմ, ինձ պիտի թվա, թե նրա մեջ դեռ
Անկումի թաքուն տագնապ կա ու դող,
Այն տագնապը նույն, որ գուժկանի պես իմ սիրտը մտել,
Մորմոք է դարձել, ցավ մի տվայտող:

Ու երբ գիշերվա ինքնաթիռների շառաչյուններից
Հրեշտակներիդ երամն ահառած
Բեկված թևերով ու բեկված երգով ցած իջնի վերից,
Լաց պիտի լինի իմ սրտին թառած:

Եվ պիտի թվա, թե լալիս է դա քո բեկված ոգին,
Թե իմ հավատն է տրտմորեն ծնկել,
Թե քո քարակոփ այն ողկույզները լուսնյակի շողքից
Շողում են որպես խոշոր արցունքներ:

Ու երբ խոնարհվեմ քո մկրտության սուրբ ավազանին,
Որի մեջ միշտ էլ աստղեր կան տրտում,

Կթվա, թե դա սիրտս է, որ հլու բարության ձայնին
Դեռ երազներ ու սեր է մկրտում...

Եվ չգիտեի, որ վաղուց այնպես նման ենք իրար,
Որ հարազատ ենք ու արյունակից,
Որ քո փշրված հրաշքի նման ինչ-որ մի հրաշք
Հուրհուրում է դեռ որմերիս տակից...

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԹՌԻՉՔ

Թեև չեմ հավատում ես ոգու հարության ցնորքին,
Բայց կարոտն աշխարհում երևի զորավոր է մահից...
Ու խավար մի գիշեր աձյունից անջատված իմ ոգին
Կգնա թևելու եթերում իմ կորած աշխարհի:

Կփռվեն ներքևում հայրենի հովիտները կանաչ,
Արծաթե մշուշում կթախծեն ուռիները մեր հեզ...
Իմ կիսված հայրենի՛ք, գեղեցի՛կ՝ որպես սերը անհաս,
Ավերված իմ եզե՛րք, դու ցավո՛ւտ՝ տապալված փառքի պես:

Եվ կիջնի իմ հոգին Անիի սրբատաշ քարերին,
Վիրավոր հավքի պես կձչա գիշերվա խավարում
Ու կզգա նա իսկույն, որ կրակն անթեղված դարերի
Կարոտից ծանրացած իր թևերն ու իր կուրծքն է այրում:

Այդ այրված, այդ խանձված թևերի տխրագին շառաչով
Կգնա նա նորից չափելու սահմանները ցավի...
Մամռապատ մատուռներ՝ մեսրոպյան գրերով հառաչող,
Եվ ձաքած խաչքարից ծիլ տված մանուշակ մի ծավի:

Երևի Նարեկա հանձարեղ ննջեցյալը հանկարծ
Զգալով, որ վերից հարազատ մի ոգի է թռչում,
Կշարժվի շիրիմում, կբացի շրթունքներն իր հանգած
Եվ աղոթք կըոգի՝ մի ցավոտ հեծություն ու զղջում:

Ու այնտեղ՝ Եփրատի ափերին, հայրենի իմ տնակ,
Անմեկին հրաշքով քո ձրագը հանկարծ կվառես,

Ու քեզ հետ ողջ գիշեր կմնամ ես տխուր ու մենակ,
Ողջ գիշեր քո կոպիտ քարերի քնքշանքին կփարվեմ:

Առավոտ կլինի... Մեր այգու յասամանը ցողոտ
Կսկսի իր կապույտ աստղերի շշուկով սոսափել,
Ես կուզեմ այդ թփերը շոյել սրբազան մի դողով
Եվ սակայն չեմ շոյի, որ աստղերը հանկարծ չթափեմ...

Որ հետո, որ հետո, երբ դառնամ ես իմ հողը մի բուռ,
Այդ ցողերն արցունքի ծանրությամբ հետքերիս վրա լան,
Եվ աստղերն այդ կապույտ՝ կարոտի ու հույսի պես մաքուր,
Հեռավոր մշուշից հավերժող կրակով ցոլցլան...

ԵՓՐԱՏԻ ԿԻՐՃՈՒՄ

Այս գիշեր նորից թափառում էի Եփրատի կիրճում
Եվ ոտից գլուխ ողողված էի ես ջրափոշով,
Երամն աստղերի մոլորել ասես երկնային իր չուն,
Փշրել էր ձորում արցունքն իր խոշոր...

Ժեռ քարափները զրնգում էին զանգերի պես ձույլ,
Եփրատի շուրթին բամբ որոտմունքն էր իր բառ ու բանի,
Մենակ էինք մենք... Ու մերթ նման էր նա ձերմակ Աստծու,
Ու մերթ՝ ալևոր ջրաղացպանի:

Եվ ասում էր՝ Ե՛կ, ճակատիդ դնեմ ես մի պաղ ալիք,
Ոտքիդ տակ փռվեմ իմ նվիրական, գաղտնի կածանով,
Ե՛կ, ես քեզ համար պահել եմ ծաղիկ մի հրաշալի,
Որ երգել գիտե երկնային ձայնով:

Ե՛կ, ես քեզ համար պահել ջրտուքի գիշերները զով,
Օրհներգությունն եմ պահել մամռոտած այս ջրաղացի:
Իմ քարափներին դեռ ձեր ծխանի ծուխն է երազող
Ու բուրմունքներն են ձեր ցորենհացի:

Քարանձավներիս մութ խորքերի մեջ քեզ համար այնքան
Առասպելների ոսկի եմ պահել ու տաղ, ու հայրեն,
Եկ ու հավաքիր, ու թող որ նրանք հրով մոգական
Քո շրթունքներն ու քո մատներն այրեն:

Ու երբ աշխարհում դու հոգնած լինես, լինես կարեվեր,
Երբ այս աշխարհի ճանապարհներին փոշոտվի հոգիդ,

Ես, որ վայրենի քնքշանքս նետեմ քո հասակն ի վեր,
Լույսով փարատեմ սևը մորմոքիդ:

Երբ այս աշխարհի մութ տագնապներից քունդ խուսափի,
Ես, որ իմ ահեղ որոտմունքի մեջ քնես դու խաղաղ,
Երբ հավատը քեզ կնոջ պես դավի ու հույսը խաբի,
Ես, տամ քեզ հավատն իմ ցողաշաղախ:

Երբ ներշնչանքիդ հուրը մարմրի ու դառնա մխանք,
Ես, քեզ սպիտակ իմ խենթության մեջ նորից թաթախեմ,
Քո ամեն տողից իբրև աստղ, իբրև հրեղեն մի զանգ
Մաքուր ցողերիս ցոլանքը կախեմ...

ԿԱՊՈՒՅՏԸ

Չէ՛, երազ չէ, պարզապես փակում կոպերն իմ ցավոտ
Ու իմ վձիտ մանկության վձիտ աչքերն եմ բացում...
...Եվ կապույտ է ամեն ինչ, գարնան կապույտ առավոտ,
Կապույտ ծուխ է ու մշուշ, կապույտ աստղ է ու արցունք...

Գիշերն ամբողջ երևի գարնան անձրևը լացել,
Հիմա հողի ծալքերից քնած կապույտն է հանում,
Երմոնյա տատս ահա այգու դռնակը բացել,
Անցորդներին ցողաթաց կապույտներ է բաժանում:

Չէ՛, երազ չէ, պարզապես յասամանը մեր այգու
Շատ էր առատ ու կապույտ, կապույտ հեղեղ էր ասես,
Մեր տան քարե պատերին իր ալիքները զարկում,
Դուրս էր հորդում մեր այգուց՝ կապը կտրած գետի պես:

Ամեն ծյուղը բյուրավոր աստղերից էր գոյացել,
Ամեն ծյուղը հեքիաթի մի թռչուն էր անանուն...
Երմոնյա տատս ահա այգու դռնակը բացել,
Կապույտ աստղեր ու կապույտ թռչուններ է բաժանում:

Թե տողերիս մեջ հիմա արցունքի շաղ կա առատ,
Թե չափից շատ է առատ հիմա կապույտն իմ երգում,
Ես մեղք չունեմ, դա կորած այգու շաղն է անարատ,
Ես մեղք չունեմ, դա կապո՛ւյտ յասամանն է հեկեկում...

ԵՎ ՆՈՐԻՑ ՇՈՒՆԸ...

Տեր իմ, տեսի՞ք է արդյոք, թե իմ երազն է վերին...
Նա պառկած է դռան մոտ՝ դունչը դրած թաթերին:

Ձյունամրրիկ մի ահեղ լքված տունն է սասանում,
Իսկ նա պառկել հողմի տակ, ասես աղոթք է անում:

Նա՝ ընկերն իմ մանկության, նա՝ սևուկն իմ տխուրաչ,
Որ օրերի մշուշում քարավանի հետ սուրաց...

Ու հետ դարձավ՝ աչքերում անմարելի մի կսկիծ,
Ու հետ դարձավ, որ նորից այս մաշված սեմը հսկի:

Ես՝ միամիտ, ես՝ մանուկ, կարծում էի, թե նրան
Գորշ գայլերն այն հոշոտել, խրախճանել են վրան:

Ի՞նչ իմանար իմ հոգին ու իմ սիրտը մորմոքուն,
Որ նա կարոտ է անմահ, որ նա հավատ է տոկուն...

Մենք նայում ենք մեկմեկու, և ճանաչում է նա ինձ,
Մոտ է գալիս՝ աչքերում սովահարված մի թախիծ:

Իսկ երբ հանում է լեզուն, որ իմ ձեռքերը լիզի,
Ասես այրող իր շնչով պիտի դեմքս հրկիզի...

Ձյունամրրիկ է ահեղ, ողջը՝ սառույց, ողջը՝ քար...
Մենք փարվում ենք մեկմեկու ու ոռնում ենք խելագար...

ԲԱՌԵՐ

Ամունքող Սիլվա Յուզբաշյանին

Երևի բառն առաջին տառապանքից է ծնվել՝
Նախամարդու վայրենի տառապանքից ու ցավից,
Նրա ճաքած շուրթերի արյան շիթով է սնվել
Ու սնվել է զնգոցով այն ծխամած անձավի:

Երկրորդ բառը երևի սիրո մրմունջ է եղել,
Տաք արյան մեջ խշշացող անմեկնելի մի շշուկ,
Երանելի մի ծարավ ու թրթիռ մի հրեղեն,
Ու ցոլացել է հոգու խորհրդավոր մշուշում:

Հիացմունքից է ծնվել երևի բառը երրորդ,
Խառն են եղել նրա մեջ երևի ձիչ ու հնչյուն,
Բայց գեղեցիկ է եղել, որպես գարնան առավոտ,
Որպես որոտ ու կայծակ, որպես արծվի կոնչյուն:

Հետո բառեր են ծնվել, բարի բառեր օրհնության,
Ահեղ բառեր անեծքի, ընդվզումի, բողոքի,
Բառեր, որ պարզ են եղել, որպես պտուղ ու ցորյան,
Խորհրդավոր են եղել, որպես Աստված ու ոգի...

Բառեր՝ ցողի պես ցողուն, բառեր նման կայծքարի,
Բառեր, որոնց խորքերից դեռ հրաշքն է շողշողում,
Բառեր, որոնց շուրթերին ծաղկում ծաղիկը վայրի
Եվ քնքշության ու լույսի մեղեդիներն են դողում:

Եվ բոլորը երկունքի ահեղ ցավով են ծնվել,
Եվ բոլորը տքնությամբ, ինչպես կրակը՝ քարից,
Եվ բոլորը նախ հողի արարչությանն առնչվել
Ու ջրդեղվել են հետո ցողերի մեջ աստղային:

Եվ հիմա քոնն են նրանք՝ այդպես հողոտ ու ցողոտ,
Եվ հիմա քոնն են նրանք՝ այդպես բարի ու ահեղ...
Ու խաղ չանես նրանց հետ, հեգի՛ր դժվար այն դողով,
Որով ծնվել ու մարդու ճաքած շուրթերն են վառել...

* * *

Հանգչող կրակի կապույտ մխանքում
Դեռ ցոլանքը կա վերջին կայծերի...
Ինձ մի երազ է մնացել կյանքում,
Իսկ քեզ դեռ հազար երազ կայցելի:

Թեև երազից չեն հայցում ոչինչ,
Բայց բարի եղիր, եղիր կանացի
Ու այնպես արա, որ գիշեր մի ջինջ
Երազներիդ մեջ ես գամ քեզ այցի:

Հոգնած կլինեմ, կլինեմ փոշոտ
Եվ տրտում, որպես աշուն ու գիշեր...
Ու երբ խոնարհվեմ աչքերիդ խոշոր,
Նրանք երևի ինչ-որ բան հիշեն:

Հիշեն, որ կար մեկն այս տխուր կյանքում,
Որ ինքն իրեն էլ լավ չհասկացավ,
Որ չտարբերեց թռիչք ու անկում
Եվ իրար խառնեց լույս, գինի ու ցավ:

Որ աշնանային մի ցուրտ գիշերով
Մատներիդ մրսած քնքշանքը շոյեց
Ու հանկարծ սիրեց իր վերջին սիրով
Եվ սակայն սիրեց հեթանոսորեն:

Ու գնաց հետո աշխարհից այս կույր
Եվ տարավ իր հետ իր չարն ու բարին,

Եվ տարավ իր հետ տենչանք մի մաքուր,
Որ հողի տակ էլ պիտի չմարի:

...Ու երբ արթնանաս, քո թարթիչներից
Թող մաքուր, մաքուր արցունքներ ծորեն,
Իսկ թռչունները սլանան վերից
Ու թող քեզ օրհնեն հեթանոսորեն:

ԳԻՇԵՐՆԵՐՆ ԻՄ ՋՐՏՈՒՔԻ...

Ո՞վ գողացավ ինձանից գիշերներն իմ ջրտուքի,
Բարդիներն իմ վեհափառ, իմ լուսնկան, իմ առուն,
Ո՞վ գողացավ ու տարավ արծաթ սրինգն իմ սյուքի,
Այն ո՞վ փշրեց իմ հրաշքն՝ իմ աշխարհն այս աշխարհում...

Ծղրիդները ինձ համար պիտի ոսկի մանեին,
Դաղձը խոնավ հողի հետ պիտի խունկի պես բուրեր,
Պիտի երկինքն ինձ շոյեր այդ աստղային ժամերին,
Եվ գոհությունը հողի բոբիկ ոտքս համբուրեր:

Ու երևի ինձ թվար, թե ես էլ ծառ եմ ու հող,
Տաք բուրումներն են իմ մեջ իրիկնային արևի.
Կամ քարանձավն եմ այն մութ, ուր հեքիաթներ կան նիրհող,
Կամ աստղերի հետ խոսող թրթռոցն եմ տերևի:

Ու երբ ցոլար վերևում մաքուր ոսկին լուսաստղի,
Ննջեի տաք մի խուրձի՝ վրաս կապույտ ու բեհեզ,
Չիմանայի, չզգայի, որ ես հոգնած եմ սաստիկ,
Որ մաքո՜ւր եմ ու զտված առաքյալի խղճի պես...

ՕՁԸ

Ու ես կանգ առա... Քարացա ահից...
Օձ էր...
Հասկացա...
Շապիկն էր փոխում...
Սուր քարերի մեջ գալարվում ցավից
Ու տառապանքի լեղին էր ցողում:

Սողում էր անվերջ, սուլում էր նա ձիգ,
Դեղին աչքերն էր փակում ու բացում...
...Եվ հանկարծ կանգնեց մերկ ու գեղեցիկ,
Եվ կանգնեց իբրև ահ ու հիացում:

Արևը դիպել բարակ իրանին,
Ոսկի էր խառնել կանաչին նրա,
Եվ հագին այդ նոր, ցոլո՜ւն ծիրանին,
Նայում էր հպարտ աշխարհի վրա:

Եվ տառապանքով այդպես նորացած
Ու գեղեցկացած ցավոտ այդ ծեսից,
Լույսի հրձվանքը աչքերի մեջ թաց,
Հեռացավ՝ որպես հրաշք ու տեսիլ...

ՆԵՐՇՆՉԱՆՔ

Երբ կանչում ես ինձ վերից, շանթն է զարկում թևերիս,
Եվ մրրիկները սաստիկ իմ շրթունքներն են խանձում,
Իսկ երբ անկում ես դառնում ու տապալում ես վերից,
Ցավը փոխվում կարոտի ու նորից վեր է կանչում:

Լոկ դու գիտես անհայտի ճանապարհները թաքուն,
Որ մոլորվում ես անվերջ անդունդների մեջ խորին,
Քո բարության ժամերին դու այնպես ես նվագում,
Որ ես լսում եմ հեռու ալեբախումը ծովի:

Քո մեջ հողմեր են շաչում, ու ցուլեր են բառաչում՝
Մեհենական աստղերի ցոլանքներով պսակված,
Մասսյաց մթին վիհերի որոտմունքն է հառաչում,
Եվ անձավներն են թախծում, ուր ոգիներ կան փակված:

Դու կարող ես վայրկյանում ինձ դարձնել մարգարե,
Այնպես անել, որ բախտի գաղտնագիրը վերծանեմ,
Այնպես անել, որ անգամ անձավներից այդ քարե
Կապույտների ու ոսկու առասպելները հանեմ:

Եվ ինձ տանում ես անվերջ կղզիները կուսական,
Որ հեռավոր ծովերում դեռ անհաս են ու անհայտ,
Կղզիներն այն երազի, ուր չկա վիշտ ու կական,
Ուր թռչունները՝ կապույտ, ու ոսկեգույն են կանայք:

Անլռելի դու իմ կանչ, տառապանք իմ հիասքանչ՝
Ծարավի պես ծվարած իմ արյան մեջ ու ցավի,
Եվ օրհներգում եմ ես քեզ, որ չես հանգչում, որ դեռ կաս,
Որ խղճիս մեջ են խրվում կայծակները քո ծավի:

1985-86

ՀՈՂՄԱԾՈՒՆՉ ԳԻԾԵՐՆԵՐ

Երգ իմ,
Քեզ համար ամեն ինչ արի՝
Քո ճորտը դարձա, դարձա քո գերին,
Որ գոնե մի քիչ նման լինես դու
Խոստովանության
Առաջին սիրո
Եվ մահապարտի
Վերջին խոսքերին...

* * *

Չեմ հիշում հիմա,
Առաջին անգամ ե՞րբ այն գյուտն արի,
Թե հայ եմ ծնվել ես այս աշխարհում,
Գուցե այն օրը, երբ բոբիկ ոտքս դեմ առավ քարի,
Ու բթամատիս պտղեց մի կաթիլ ալ ու սև արյուն:

Գուցե այն գիշե՞ր,
Երբ հայրենի տան կավե կտուրից
Նայել երկնքին, տեսել, թե աստղերն ինչքան են առատ
Եվ ափս պարզել, աղերսել եմ.
– Տե՛ր, գեթ մեկը տուր ինձ...
Բայց Տերը ափն իմ թողել է պարապ...

Գուցե այն գարո՞ւն,
Երբ տեսել եմ ես զարմանքով մանկան,
Որ քարը ճեղքել ու դուրս է եկել մի կապույտ ծաղիկ,
Ծաղիկ մի ցողոտ, բայց այնքան տխուր, մենավոր այնքան,
Որ թվացել է, թե ցող չէ կոպին՝ արցունք է աղի:

Չեմ հիշում ես, ո՛չ,
Բայց մինչև հիմա իմ բթամատին
Պտղում է ասես կաթիլն այն արյան, որ սև է ու ալ,
Պարզված ափիս մեջ ոչ մի աստղ չկա, իսկ ծաղիկն այն բիլ
Ճեղքում է սիրտն իմ ու գիշերն ի լույս սկսում սգալ...

1994

ՏԱԳՆԱՊ

Ոչ ոք չի քնել...
Գարսիա Լորկա

Չի քնել ոչ ոք, Հայոց աշխարհում ոչ ոք չի քնել,
Ընդերքի կրակն անքնությամբ է նորից տառապում,
Մասսի անդունդը խորացել է խիստ ու խիստ մթագնել
Եվ ասուպների անկումներով է խորքերն իր չափում:
Կիսավեր մի բերդ իր մեղքն է քավում հեծությամբ քարե.
– Ինչպե՞ս, ախ, ինչպե՞ս ես չվանեցի հեղեղն այդ քոչի...
Իր քարանձավում զարթնել, զղջում է մի ծեր մարգարե,
– Աղոթք չէ, օ, ոչ, սուր էր հարկավոր ընդդեմ անկոչի...

Չի քնել ոչ ոք... Լեռները դարձել ծովական ալիք,
Մերթ իրենց թևին երկինք են տանում վիրավոր մի ոխ,
Մերթ ալեբախում իբրև բնազդի մութ սպառնալիք
Ու մերթ հառաչում խառնարանների շուրթերով այրվող:
Մեկի սրտի մեջ կսկիծն է լալիս իբրև քարանձավ,
Մեկի կոկորդով վերուվարում է հրեղեն մի ցավ,
Մեկը շառաչով իր գաղտնարանի դռներն է բացում,
Ուր մեր հարության առասպելներն են հոգնած թևածում:

Չի քնել ոչ ոք... Չի քնել նաև տառապած մի այր,
Նա, որ ողջ կյանքում այրվել է իբրև անկեզ մորենի,
Նա, որ կորցրել Ավետյաց երկիր ու ծննդավայր
Եվ չի կարենում ելնել իր ցավի մթին ձորերից:
Մենակ է թվում, մենակ չէ սակայն, ինքն իր դեմ նստած,
Ինքն իր կասկածն է, ինքն իր հավատո քննիչն է դաժան,

Նա անպատասխան հարցերն անդադար, իբրև շանթ ու կայծ,
Իր սիրտն է խրում ու տառապում է այսպես տարաժամ:
Չի քնել ոչ ոք... Լուսինը՝ գունատ հացադուլավոր,
Նայում է վերից, ասես աշխարհի սիրտն է խուզարկում.
– Տեր, անապատն այս ինչ ամայի է ու ինչ ահավոր,
Եվ ոչ մի տեղից աղբյուրի բարակ շիթ իսկ չի զարկում:
Տեր, անապատում և ոչ մի բարբառ արձագանք չունի...
Եվ սովահարի ձայնն է խլանում կոկորդում տոչոր,
Իսկ կույսը՝ նման դավի գնդակով զարկված թռչունի,
Թպրտում անվերջ, արյամբ է ցողում անապատն այդ չոր:

Չի քնել ոչ ոք... Արթուն է տագնապն ու սոսկումն՝ արթուն,
Երկինք է միտել, երկինք է մտել մի զանգակատուն,
Շողն առավոտի տատրակի նման թառել է քիվին,
Ու թվում է, թե մայր զանգն է հանկարծ զնգում ոգևին,
Մայր ցավն է զնգում, զնգում ամեհի, ընդերկար զնգում,
Մայր հողն է տնքում, ու խենթանում է կրակն ընդերքում...
Եվ թվում է այգն արյամբ է շիկնել ու շառագունել,
Չի քնել ոչ ոք... Հայոց աշխարհում ոչ ոք չի քնել...

1988, դեկտեմբերի 6

ՀՈ՛Բ, ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ...

Եվ ահա նորից
Իմ գիշերները դարձել անվախճան,
Եվ գիշերները փոխվել են նորից ողբի ու ոխի,
Եվ դու ես իմ դեմ՝ քո հառաչանքով աստվածաշնչյան,
Շուրթերիդ՝ բողոք, մազերիդ՝ մոխիր:

Հիշո՞ւմ ես տունս,
Նա էլ քո տան պես հացով էր բուրում,
Իսկ կանթեղի տակ մի հին Նարեկ էր ու մի փունջ ցորեն,
Խիղճը, հարսի պես, ամեն եկվորի ձեռքն էր համբուրում
Եվ աջը սրտին՝ հսկումի կանգնում երկյուղածորեն:

Հրաշք էր որդիս...
Նա, որ հիվանդ էր ցավով հանճարի,
Նա, որ արևի ու ճառագայթի ծարավից հանգավ,
Բայց անանձնական ուրախությունն էր պարզել նա չարին
Եվ ամեն դռան կախ տվել որպես արծաթե զանգակ:

Բայց հիշո՞ւմ ես, Հո՛բ,
Թե այն գայլը գորշ ծարավից արյան
Արար աշխարհի քնած խղճի դեմ ինչպես կաղկանձեց,
Ինչպես հոշոտեց նա մայր ու մանուկ, ողկույզ ու ցորյան,
Ինչպես իր շնչով ծիրանի ծառիս ծաղիկը խանձեց:

Հո՛բ, իմ երկվորյակ,
Եվ մենք, որ քեզ հետ գութ էինք ու սեր,
Որ ոտքից գլուխ օրհնություն էինք գինու ու հացի,

Մոխիրների մեջ նստած, ոռնացինք Աստծո դեմքն ի վեր,
Եվ ի՜նչ էր մնում մեզ անզոր ու որբ ոռնոցից բացի:

Բայց լսի՛ր, լսի՛ր,
Տագնապ է նորից, ոճիր է ու դավ,
Մթան մեջ նորից պատառոտում են զգեստն իմ դստեր,
Վայրի ոհմակով լլկում են նրա մարմինը արդար
Եվ այս աշխարհի փշոտ կողերով քաշքշում են դեռ...

Դե, լսիր դու ինձ,
Երկվորյակ իմ հեգ, տառապյալ իմ Հոբ,
Ես ու դու այստեղ բաժանվենք պիտի,
Զգո՞ւմ ես, ցավիս ամպը խտանում, դառնում է ամպրոպ,
Որ արդարության ցոլացումներով հողն իմ մկրտի:

Ես պիտի ելնեմ,
Ջրդեղվեմ պիտի իմ իսկ արցունքով,
Անզոր մորմոքի մոխիրն ու մուրը պիտի թոթափեմ,
Պարուրվեմ պիտի իմ լեռնաշխարհի կապուտակ բուքով,
Իմ լեռնաշխարհի արշալույսներով ինքս ինձ չափեմ:

Նայի՛ր, աշխարհով
Սլանում է դեռ հրավառ մի կին,
Գալարվում է դեռ, որ իր մաշկի հետ այդ բոցը պոկի,
Ու ես էլ ահա նրա հետքերով սլանում կրկին,
Այրվում նրա հետ, դառնում ողջակեզ, դառնում եմ ոգի:

Ու գիտեմ հաստատ,
Աշխարհում միայն ոգին է անխոց.
Եվ անհնար է նրա մեջ խրել տապար ու դաշույն,
Թեև նա հաճախ անդունդների մեջ փակվում է անխոս,
Բայց երբ հառնում է, հառնում է իբրև հրեղեն մի սյուն:

Եվ հառնել է նա...
Իմ լեռնաշխարհում ամպրոպ է դարձյալ,
Որոտն է խոսում, և ոգում է շանթն իբրև մարգարե...
Տեղատարափ է, և ամեն շիթը հույս է խտացյալ,
Եվ ամեն շիթը՝ մաքրության կապույտ, բարության արև:

Իմ լեռնաշխարհում
Ոգու հանդես է, ծես է օծության,
Ու թվում է, թե ուր որ է վերջին ամպը կցրվի,
Հողն այս հողմահար, ելած մի վսեմ ալեկոծության,
Գոնե մեկ անգամ արդարության հետ կժամադրվի...

Եվ թվում է, թե
Ուր որ է պիտի հավատի հյուլեն
Կիսվի ու հանի մեր երազների լույսը հիասքանչ,
Մեր հովիտներով ընթանան պիտի զորության ցուլեր,
Մեր արտույտները դառնան սուրբ հացի հրավեր ու կանչ:

Եվ տունս նորից
Պիտի կրակով ու կավով բուրի,
Հարկի տակ նրա հավերժեն պիտի Նարեկ ու ցորեն,
Խիղճը, հարսի պես, ամեն եկվորի ձեռքը համբուրի
Եվ աջը սրտին՝ հսկումի կանգնի երկյուղածորեն:

Ու ես թոթափած
Իմ ալիքներից սև մոխիր ու մուր,
Հո՛ր, քեզ իմ ճամփին հանդիպեմ պիտի, ողջունեմ էլի՛
Ու քեզ պես նորից առած երկնային շնորհը մաքուր,
Ընթանամ պիտի արդար, փառահեղ ու երանելի...

1988

ԶԱՐԿ, ԻՄ ԶԱՐՄԱՆԱԼԻԴ

Արցախում զոհված
ազատամարտիկների հիշատակին

Աստվածաշունչ էիր, լեռնաշխարհ իմ հայոց,
Աստվածաշունչ էիր ու սուրբ Ավետարան,
    Ո՞ւր են, սակայն, ախ, ո՞ւր
Այն էջերդ, որոնց խորին խորհուրդն ի վար
Քո եփրատն էր իջնում, որպես ճերմակ Աստված,
Ու որոտով ահեղ «Լույս եղիցին» ոգում...
Այն էջերդ, որոնց լույսերի մեջ կապույտ
Լեռնաշխարհն էր Սասնա, որպես Հոբի բողոք,
Եվ գեղեցիկ, որպես Դավիթ հրաշալին:
Այն էջերդ, որոնց մշուշի մեջ լազուր
Վանա լիճն էր ծփում ու խռովյալ հոգով
Աղոթքներ էր հուշում քո ճգնակեց սրբին:

    Լեռնաշխարհ իմ հայոց,
Դու ծվատված, հատված, դու հրկիզված, կիսված
Մատյան Աստվածաշունչ ու սուրբ Ավետարան:
    Եվ ի՞նչ մնաց քեզնից,
    Ավա՜ղ, միայն մի էջ,
Հողմահարված, խանձված մի էջ մնաց միայն,
Որպես խաչյալ կսկիծ ու առկայծող կերոն...
Ու եթե դա էլ տանք,
Բոց չի ելանելու էլ եղեգան փողից,
    Ու եթե դա էլ տանք,
    Օ, Ծովինար, օ, մայր,

Ո՞ր աղբյուրից պիտի դու ջուր խմես բռով:
Ու եթե դա էլ տանք – չկանք ու չենք եղել:

Ուրեմն, զա՛րկ, Արցախ,
Չկա ուրիշ հնար, և ուրիշ ելք չկա,
Քանզի հավերժի մեջ սա ակնթարթն է այն,
Որ կարող է հանգչել իբրև վերջին հառաչ,
Բայց կարող է նաև
Ուղեկիցը դառնալ հավերժության:

Ուրեմն, զա՛րկ, Արցախ,
Զա՛րկ, իմ զարմանալիդ...

Եվ տեսնում եմ, սակայն, որ հենց այս նույն պահին
Սրբեր թխամորուս, ձեզանից մեկն այնտեղ
Հոգեվարում է լուռ ու անխռով հանգչում:
Եվ տեսնում եմ ահա, որ հենց այս նույն պահին
Մի բուռ հող է առնում ջղաձգվող ձեռքով,
Որ հավիտյան պահի բռունցքի մեջ իր կուռ...

Ու ների՛ր ինձ, ների՛ր, մա՛յրդ հանգչող քաջի,
Ես քեզ համար չունեմ ամոքումի խոսքեր
Ու չեմ գտնի երբեք...
Եվ դու ներիր նաև,
Հրաշալի՛ աղջիկ,
Դու, որ քո ուսերին ծածանեիր պիտի
Երազորեն մաքուր, երազորեն թեթև
Քողը հարսանեկան,
Չես ծածանի սակայն...
Եվ նաև դու ներիր, դու՝ հրաչյա մանուկ,
Դու, որ չծնվեցիր ու չես ծնվի երբեք...
Արցա՛խ, մի բուռ Արցախ,

Դու աշխարհի համար մի փշուր հող ես լոկ
Եվ սակայն մեզ համար հսկա զոհասեղան...
Ու թե հնար լիներ կայծակները խաչել,
Ես զոհերիս վրա կվառեի խաչերն այդ հրեղեն,
Ու թե հնար լիներ Հարդագողի ճամփան
Ոլորել ու դարձնել հսկա ծաղկեպսակ,
Ես զոհերիս վրա կդնեի պսակն այդ արցունքոտ,
Որ աշխարհին արար տեսանելի լիներ...

Ուրեմն, զա՛րկ, Արցախ,
Զա՛րկ, իմ զարմանալիդ...
Չկա ուրիշ հնար, և ուրիշ ելք չկա,
Քանզի ոսոխը քո՝ այդ քոչվորը վայրի,
Այդ լեզուն է միայն, որ հասկանում ճշտիվ
Եվ այդ լեզվից է լոկ, որ փոխվում է կրկին
Խուճապահար հոտի...

Իսկ դու, գարնան ծիծառ,
Որ քո բույնն ես հյուսել իմ քիվի տակ,
Բույն, որ վերք է թվում հիմա աչքիս,
Քո թևերը ծալիր
Ու ծվարիր լռին այդ վերքի մեջ:
Ինձ լռություն է պետք,
Որ մոգության շնորհ հայցեմ վերին ոգուց,
Վերին ոգուց հայցեմ խոսքեր ոգեկոչման
Ու բարբառեմ.
– Ելե՛ք, մահապարտյալ գնդեր,
Վեր բարձրացեք հողից, սրբեր թխամորուս,
Որ դառնայիք պիտի նահապետներն ազգիս,
Սակայն, ավաղ, դարձաք նահատակներ...
Վեր բարձրացիր, քաջդ, որ հենց այս նույն պահին
Մի բուռ հող ես առել ջղաձգվող ձեռքով,
Որ հավիտյան պահես բռունցքի մեջ քո կուռ...

Վեր բարձրացիր, ելի՛ր,
Քանզի մոտ է թվում ինձ այն ժամը վերին,
Երբ իմ հայոց հողի խորին խորհուրդն ի վար
Պիտի քայլի Աստված
Եվ որոտով ահեղ «Լույս եղիցին» ոգի...
Ելիր, որ լույսն այդ մեծ, այդ արշալույսն առած,
Փռես սև-սուգ հագած ոտքերի տակ քո մոր,
Փռես ոտքերի տակ այն աղջկա,
Որ քեզ սիրահարված պիտի մնա հավետ...

Իսկ դու դեռ զարկ, Արցա՛խ,
Զա՛րկ, իմ զարմանալիդ,
Չկա ուրիշ հնար, ուրիշ ճար չկա,
Զա՛րկ դեռ ու հավատա, որ արշալույսն այդ մեծ
Սրի ծայրին է քո,
Իսկ քո հողը մի բուռ
Քո քարակոփ ու կուռ բռունցքի մեջ...

1993, օգոստոս

ՀՈՂՄԱՇՈՒՆՉ ԳԻՇԵՐՆԵՐ ՇԱՐՔԻՑ

* * *

... Եվ բուքն ամբողջ գիշեր, իբրև ձերմակ կախարդ,
Ինձ երգում էր ուրիշ մի աշխարհի մասին.
– Ախ, դու իզուր, իզուր քո երազից փախար,
Իզուր վերադարձար դեպի ափերն այս հին:

Ամենայն ինչ այնտեղ երանորեն թեթև,
Այնպես կապույտ էին այնտեղ տուն ու կտուր,
Լույսի սյուն էր սոսին, բարդին՝ երգող եթեր,
Եվ մահիկը լուսնի՝ հրեշտակի փետուր:

Հավքեր կային այնտեղ՝ թևերին աստղ ու կայծ,
Եվ մերկորեն չքնաղ ջրահարսեր կային,
Եվ չկային ժայռեր՝ տառապանքից կքած,
Քարանձավներ, որ խուլ ցավից հեկեկային:

– Լռիր, – շշնջացի, – դու՝ շրջմոլիկդ սին,
Դու, որ ոչ տուն ունես, ոչ հայրենիք, ոչ հող,
Դու ի՞նչ գիտես խանձված այս ժայռերի մասին,
Անձավների մասին՝ գիշերն ի լույս վայող...

Զուր արեցիր դու, հողմ, գովքը ջրահարսի,
Դու, որ ծանոթ ես լոկ քղանցքներին կանանց...
Դու ի՞նչ գիտես արդյոք Աստվածամոր մասին,
Նրա ցավի մասին՝ հավերժորեն անանց:

Եվ իմ և իմ մասին դու ի՞նչ գիտես, անտո՛ւն,
Գիտե՞ս ինչ է խառնել Աստված մի բուռ կավիս,

Գիտե՞ս, որ ողջ գիշեր ուխտավորն եմ անքուն
Արցունքի ու խղճի, կրակի ու ցավի...

...Եվ բուքն հանկարծ հայացքն իմ աչքերին հառած,
Նայում երկար, երկար, զղջումի պես նայում,
Հետո բրդոտ գլուխն այրվող սրտիս դրած,
Ինձ հետ վայ՜ում է խուլ, եղբայրորեն վայում...

* * *

Հողմը մերթ լալիս, մերթ հեկեկում է ու մերթ մռնչում,
Եղերամայրերն ասես հավաքվել, եկել են ի մի,
Եվ ինչ-որ տեղից, ինչ-որ անհայտից զանգեր են հնչում,
Թախծալի զանգեր, զանգեր թաղումի:

Ու սիրտս է ծակում մթին մի տագնապ՝ այդ ոմ են թաղում,
Արդյոք հավատիս սիրեցյալներից որ մեկն է հանգել...
Լույսը՝ սիրուհիս, վաղուց է ննջում հողմի դագաղում,
Վաղուց են կապույտն իմ առևանգել:

Դեռ Երևանում կա մի հինավուրց, խաղաղ մի փողոց,
Եվ բարդիներ կան, որ գիշերն ի լույս աստղեր են մաղում,
Այնտեղ մի գիշեր խոստովանել եմ սրբազան դողով,
Գուցե ձնեբուքն այդ դողն է թաղում:

Ամառվա արտում հասկը՝ Հիսուսի սուրբ խոնարհություն,
Եվ մկրտության անբառ աղոթք էր երգը արտույտի,
Հողմ, ոիր ես տանում բույրն արդարության, բույրը բարության,
Բույրն անձրևների, հողի, կապույտի:

Մի արծաթաձայն աղբյուր ունեի Լոր գյուղից վերև,
Որ ցերեկն անգամ աստղերի հետ էր խայտում ու խաղում,
Գուցե սառույցը նրա արծաթե ակունքը գերել,
Նրա ցոլցլուն աստղերն է թաղում:

Բայց և մի վսեմ ամպրոպ ունեի, որոտմունք մի բամբ,
Եվ սակայն, հողմդ, որքան մռնչաս, որքան կատաղես,
Դու այդ ամպրոպի տարափն աստղային ու շանթն ապստամբ
Ի՞նչ դագաղի մեջ և ոիր կթաղես...

* * *

Հողմ, իմ ահեղ ընկեր, փշաքաղված իմ գայլ,
Գնանք, ու թող մեզ հետ գա և գիշերն այս կույր,
Ես ուզում եմ ինքս նախ ինձ վրա սգալ,
Հետո խաղաղ հանգչել թևերիդ տակ մաքուր:

Ես չգիտեմ, կյանքում ծանո՞թ ես դու օղուն...
Ներիր, ի՞նչ եմ ասում, ով տառապյալ հոգի,
Դու ինձնից լավ գիտես, որ մաղձ է նա ու թույն,
Բայց կապուտակ է բոցն իբրև Աստծո ոգի:

Ես այս գիշեր ահա ըմպել եմ այդ օղուց,
Ըմպել լիագավաթ ու ըմպել եմ անզուսպ,
Իմ կոպերին հիմա արցունքներ են դողում,
Իսկ սրտիս մեջ միայն Աստծո ոգին է սուրբ:

Ես ուզում եմ քեզ հետ, իմ հարազատ, իմ հողմ,
Թևել ինչ-որ բարձունք, որ մոտ լինեմ Աստծուն,
Որ թաթերիս ելած, ոռնամ աղիողորմ,
Ոռնամ, իրար խառնեմ արցունք, կրակ ու ձյուն:

Ոռնամ կյանքիս վրա, որ գրավ էր դրված,
Իմ երազի վրա, որ աձյուն է մի բուռ,
Այն բառերի, որ իմ ձակատին են գրված,
Եվ վերծանել եմ ես տառապանքով անլուր:

Իմ բարության վրա, որ ինձ անվերջ փորձել,
Փորձություն է դարձել, դարձել հրե օղակ,
Եվ այն մեղքիս վրա, որ ակամա գործել
Ու չեմ ապաշխարել՝ վերջին օրվան թողած:

Սքանչելի մի մեղք, երգ-երգոցյան մի սեր,
Որ և ամռան գիշեր, և լուսաբաց էր ջինջ,
Նա նվաստիս համար կյանքն ու սիրտը կիսեց,
Սակայն, ավաղ, նրան ես չտվի ոչինչ...

Թե ուզում ես, մտնենք քարանձավն այս վայրի,
Ապաշխարեմ, ու նոր ձամփա ընկնենք հանգիստ:
Բայց իզուր է, գիտեմ, նա արցունքով կայրի
Մեղքն իմ սքանչելի, որ շնորհն էր կյանքիս...

Դե, ուրեմն գնանք, վերջին ոխդ վատնիր,
Որ ինձ վրա փռես քո քնքշությունն ահեղ...
Իսկ թե կապույտ մի բոց իմ տեղը չմատնի,
Դու ոչ ոքի չասես, թե ինձ ուր ես թաղել:

Միայն ծեգին, երբ նա տնից դուրս գա լռին,
Չար երազի թողած տագնապն իր աչքերում,
Հողմ, ալիքդ մաքուր ոտքերի տակ փռիր
Ու իմ տեղակ հայցիր մի ահավոր ներում...

* * *

Բուք, սպասիր մի քիչ, կանգ առ դռանս դեմ,
Մոմս մարեմ ու գամ, ընկերանամ ես քեզ,
Դու մինչև լույս պիտի ահագնանաս, գիտեմ,
Ըմբոստանաս պիտի, ամենայն ինչ հերքես...

Իսկ ես բավ է նստեմ և սպասեմ իզուր,
Թե Հիսուսը կգա, որ իմ դուռը թակի,
Բավ է հուսամ, թե նա կբերի լույսն իր սուրբ
Ու կփռի վրաս թևը հրեշտակի:

Թե ինձ կդարձնի անանձնորեն թեթև,
Իմ ուսից վար կառնի ապառաժն այս կոպիտ,
Եվ հրաշքով մի պարզ ինձ կտանի եթեր,
Որ աստղե աստղ անցնենք ու սլանանք բոբիկ:

Ո՛չ, այս գիշեր ցավից հերձվածող եմ դարձել,
Ու բողոքն է ոռնում՝ շուրթերին ծուխ ու շանթ,
Հեկեկում են իմ մեջ անպատասխան հարցեր՝
Մահու նման ահեղ, կյանքի նման դաժան:

Բուք, եկ մեկտեղ գնանք, քարափներին բախվենք,
Բախվենք քար ու փշի, ծամենք հող ու մոխիր,
Անդունդների վրա թևատարած կախվենք
Եվ այնտեղից հանենք քնած ոգին ոխի:

Ու թե մեր դեմ հանկարծ ելնի սոված մի գայլ,
Ծոյենք ցավը վզի, մրսած դունչը փայենք,
Եվ սկսենք մեկտեղ մերթ խենթորեն ոռնալ,
Մերթ ընկեցիկ մանկան նվաղումով վայենք:

...Բայց և զուր է, գիտեմ, չի հասկանա ոչ ոք,
Որ կորցրած հուսո ամեն նշույլ ու փայլ,
Քարեքար են զարկում ու կաղկանձում անօգ
Մի բանաստեղծ, մի բուք ու սովահար մի գայլ...

ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ՎԵՐԱՆԱՄ

Մաքուր էի սիրո պես, գորովանքի պես քնքուշ,
Լույսի շշուկն էր շուրթիս, ու կապույտն էր կոպիս տակ...
...Արձիձն ինձ զուր խնայեց... Արդեն վաղուց երկնքում
Կձախրեի ես թեթև, իբրև թեթև հրեշտակ...

Եվ կինչեր լույսի մեջ մի ոգեղեն մեղեդի,
Որ կիյուսվեր մայրական աղոթքների շշուկից,
Սոսափյունից իմ բարդու, թախծությունից իմ գետի
Եվ իմ կորած աշխարհի աստղալույսից ու սյուքից:

Կտխրեի ես այնտեղ պատանորեն ու մաքուր,
Հաստատ գիտեմ, որ նույնիսկ չէի մտնի քավարան...
...Ի՞նչ կտանեմ ես հիմա՝ անհայտությունը այս կույր
Եվ այս սիրտը վիրավոր, որի հրաշքը տարան...

Ու թե ձախրեմ ես հիմա, պիտի ձախրեմ երևի
Մրրիկներից սևացած ու հալածված հավքի պես,
Ճանթի հետքեր կլինեն իմ բզկտված թևերին,
Ծանր մի ցավ կլինի նրանց ամեն զարկի մեջ:

Եվ հոգուս մեջ կլինեն խիղճ ու հավատ մի խաբված,
Դավի խայթեր կլինեն, փուշ կլինի կասկածի,
Ու թևաբեկ կարոտներ, ու բնազդներ տագնապած,
Ու քարացած արցունքներ, որ զսպելով՝ չլացի:

Այդ ծանրության տակ քարե ինչպե՞ս պիտի վերանամ,
Ինչպե՞ս պիտի մերձենամ ես կապույտին ու Աստծուն,
Ինչպե՞ս պիտի ոգևին գարնան ամպրոպ ես դառնամ,
Ինչպե՞ս պիտի վերևից տեղամ մաքուր, որպես ձյուն...

1988

ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐ

Հրանտ Թամրազյանին

Մեզ պետք չէր ոչինչ – գինետան թախիծ,
Իսկ հետո՝ կապույտ քո հայացքը, Տե՛ր,
Տողեր էին պետք չարենցյան տաղից
Ու երևանյան ամայի մայթեր...

Ծներ էին պետք անտեր ու անտուն,
Որ մեր հետքերով լուռ ու մունջ գային,
Ու երբ նստեինք, նստեին տրտում,
Ու երբ ոռնայինք, մեզ հետ ոռնային:

Իսկ մեր ոռնոցը շատ էր ահավոր,
Իսկ մեր արցունքը շատ էր անարատ,
Առաջին սիրո թախիծ էր նա որբ
Եվ հանճարների մահվան պատարագ:

Մեզ պետք չէր ոչինչ – մի բուռ ծխախոտ,
Որ կուշտ ծխեինք գիշերվա կեսին
Եվ դառնությունն այդ անզոր մի ոխով
Փչեինք այս նենգ կյանքի երեսին:

Զնգում նաիրյան արծաթե առուն,
Աստղերի ցողն էր մեզ վրա կաթում,
Այնքան էինք մենք տխրորեն հարուստ,
Որ լուսաբացն իսկ չէինք նկատում:

...Ի՞նչ է կատարվել, չգիտեմ, ների՛ր,
Հին մայթերն արդեն մեզ չեն ճանաչում,
Իսկ որբությունն այն անտուն շների
Մեր այս որբության վրա է հաչում...

1990

* * *

Հիմա արդեն աշխարհում հարկավոր չէ ինձ ոչինչ,
Միայն մանուկ օրերի մի վաղորդյան կիսանինջ:

Չիմանայի, չզգայի՝ քնած եմ դեռ, թե՞ արթուն,
Բայց զգայի, որ վրաս մայրս աղոթք է կարդում:

Եվ զգայի, որ արդեն ծաղկավորվել նշենին
Ու աղջկա պես եկել և կանգնել է մեր շեմին:

Որ մեր բարդին երկնքի զովերի մեջ սոսափում
Եվ գիշերվա շնորհած կապույտ աստղերն է թափում:

Որ Հրազդանը ձորում շաչ ու շառաչ է դարձել,
Եվ անձավում բնակվող ծեր կախարդն է արթնացել:

Մայրս նայեր ու ժպտար, թե ինչ թեթև եմ շնչում,
Ու մտածեր, որ այդպես լոկ հրեշտակն է ննջում:

Հիմա արդեն աշխարհում հարկավոր չէ ինձ ոչինչ,
Միայն մանուկ օրերի մի վաղորդյան կիսանինջ:

Լոկ մի անգամ աշխարհում նորից այցի գար նա ինձ,
Հետո երբեք, էլ երբեք չարթնանայի այդ քնից:

1993

* * *

Սրտիս թելը, մայրիկ, ախ, բարակել է շատ,
Կոմիտաս է հնչում, ու դառնում եմ արցունք,
Խղճի մահն եմ տեսնում՝ փուլ եմ գալիս ուժատ,
Դառնում ավեր մատուռ, ծխացող մոմ ու խունկ:

Մի ժամանակ իմ մեջ ալ նժույգներ կային,
Որ սլացան հեռու ճամփաներով փոշոտ...
Գիտեմ, ինձ հետ հիմա նրանք պիտի լային,
Իսկ արցունքը նրանց շատ է տաք ու խոշոր...

Ինչի՞ս էր պետք, մայրիկ, ինձ այսպիսի մի սիրտ,
Այնպիսինը տայիր, որ լիներ կոշտ ու գոց:
Գիտեմ, հեռու ես շատ, բայց քո հեռվից լսիր,
Թե ինչ հառաչ է ձիգ ու ինչ անհույս հոգոց...

Իմ նժույգներ, լավեր, դո՛ւք էլ հեռվից լսեք,
Ցուրտ է քավարանն այս, դժոխքն այս շատ է շոգ,
Վերադարձեք, գրկեմ ձեր պարանոցը սեգ,
Ու սլանանք անդարձ ճամփաներով փոշոտ...

1985

ՄԱՀԱՐՈՒ ՀԵՏ

Աշնան շեկ շուկան ողկույզ է ու նուռ,
Գինին եռում է, մեղուն՝ խենթանում...
Իսկ երգն աշուղի տառապանք է կույր,
– Ա՜խ, Մագադան են, մայրիկ, ինձ տանում...

Օրը բուրում է որպես խունկ ու դեղձ,
Եվ թափառում են շուկայում այդ հին
Մի սիրահարված, անտիպ բանաստեղծ
Եվ սիբիրական Գուրգեն Մահարին:

Դեռ պսպղում են նրա աչքերում
Ագահ մի կարոտ ու ագահ մի քաղց,
Տառապում է մի վիրավոր ներում,
Ուրախ մի թախիծ ու տխուր մի կայծ:

Հետո՝ գինետուն, մորմոք է ու մուր,
Թառը լալիս է, դափը խենթանում...
Դրսում երգում է դեռ աշուղն այն կույր,
– Ա՜խ, Մագադան են, մայրիկ, ինձ տանում...

Ծուրթիս Մահարուց տողեր են գալիս.
«Արծաթ դույլի մեջ աստղերն են խաղում»...
Մեր երակներում գինին է լալիս,
«Լուսինն է մեռել կապույտ դագաղում»...

Կապույտ գիշեր է: Մամռոտ Գետառից
Գորտերն են երգում միևնույն հանգով:

Բարդին աղոթք է, ուռենին՝ թախիծ,
Օծված աստղերի լուռ հեկեկանքով...

Ու թափառում ենք, ցողն է մեզ թրջում,
Թափառում անվերջ... Եվ գիտենք, սակայն,
Որ մեր հետքերով անհայտն է շրջում,
Եվ քմծիծաղում մի սև ուրվական:

Շրջում է, ձեռքին գերանդին իր կեռ,
Եվ սպասելով աստղերի հունձին,
Ասում է. «Հիշե՛ք, այն բակում, այնտեղ
Այս գերանդիով եմ հնձել Բակունցին»...

Գունատ եթերը մաղում ցուրտ ցողեր
Ու ցողերի հետ սարսափ է մաղում:
Իսկ տողն իմ շուրթին մի բառ է փոխել.
– Աստվա՛ծ է մեռել կապույտ դագաղում...

1947

ԵՍ ԵՎ ԵՍ

Եվ այդպես էլ ապրեցինք՝ ծվատելով մեկ մեկու,
Եվ այդպես էլ երբևէ մենք հաշտ չեղանք աշխարհում...
Ես ուզեցի խենթանալ, փոխվել բոցի ու ոգու,
Դու բռնացար, որ մխամ, դառնամ թաքուն մի այրում:

Երբ հավատն իմ վիրավոր մահանում էր հոգուս մեջ,
Եվ կսկիծը օձի պես դեպի իմ սիրտն էր սողում,
Գիշերները ականջիս շշնջացել ես անվերջ,
Որ տառապանքս ես տամ ոչ թե տողին, այլ օղուն:

Ծնվել էի, որ ապրեմ հարբած ու բաց ու անտուն,
Ստիպեցիր, որ դառնամ ես ձգնակեց մի խոհեմ:
Գիշերները, երբ հաճախ իմ հունն էի ես քանդում,
Լուսաբացին իմ դիմաց նորից քարափ էր ու վեմ:

Ինչո՞ւ, ինչո՞ւ ես այսքան շատ ապրեցի աշխարհում,
Պիտի վաղուց կախվեի՝ թողած ցավերն այս վարար,
Բայց մուրհակն իմ չմարված անվերջ մատներս էր այրում
Ու չէր թողնում, որ կապեմ ես օղակն այն փրկարար:

Եվ հիմա ուշ է արդեն, ամեն ինչի համար՝ ուշ,
Եվ կախվելու համար իսկ արդեն ուշ է աշխարհում...
Շուրջս գիշեր է ու հողմ, սև մղձավանջ է ու մուժ,
Իսկ մուրհակն այն չմարված դեռ իմ մատներն է այրում...

1994

* * *

Հնար չկա, մորմոքն իջել, փոխվում է լուռ հեկեկանքի,
Ո՞ւր ես, թունոտ իմ սփոփանք, դու՝ ոխերիմ սերն իմ կյանքի...

Դու, որ ցոլում գավաթիս մեջ, իրար խառնում աստղեր ու կայծ
Եվ մեղավոր հողեղենիս աստծո էիր փոխում հանկարծ:

Իջնում էիր երանորեն երակներիս թախիծն ի վար,
Եվ ծովն արդեն թվում ծունկիս, սեր էր թվում աշխարհն արար:

Բայց ուրիշ է ցավս հիմա, էլ չի թվում ծովը ծունկիս,
Հիմա արդեն ինձ կխեղդի անգամ կաթիլն արտասուքիս...

1988

* * *

Այս քանի օր է արդեն հեռախոսս համրացել
Ու նմանվել է այնպես փոքրիկ ու սև դագաղի,
Անգամ լարն այս մետաղի ասես ուզում է լացել,
Բայց զսպել է կոկորդում իր հեկեկանքը աղի:

Դու հեռու ես, դու չկաս... Դու որ նման ես այնպես
Իմ բախտի մեջ բռնկված ոսկեվորիկ կրակի:
Աշնան այս մութ գիշերով ես ի՞նչ անեմ առանց քեզ,
Երբ մրսում են իմ քնքշանքն ու արյունն իմ երակի:

Գլխապտույտ իմ վերջին, իմ վերջին լույս ու խավար,
Վերջին կատար ու անդունդ, վերջին վայելք, վերջին սով...
Չգիտեի սկզբից, որ կդառնաս դու հավատ,
Որ հացի պես կլինես և օդի պես պակասող:

Դու հեռու ես, իսկ դրսում աշնան քամին է վայում,
Քանի՞ աշուն դեռ ունեմ... գիտեմ, որ քիչ են, ախ, քիչ...
Բայց քո աչքերը շողուն դեռ աստղորեն են նայում,
Եվ քո մարմինը ջահել դեռ սրսփում է մեղքից:

Ուշ հասկացա քեզ, ավաղ, ուշ հասկացա ամեն ինչ,
Եվ ամեն ինչ հասկացա անակնկալ մի ահով,
Որ իմ բախտն է ցոլցլում քո աչքերի մեջ այդ ջինջ,
Եվ ինչ խաղով սկսվեց, կվերջանա իմ մահով:

Ու երբ գնամ, երևի ապրես ուրիշ մի սիրով,
Սիրտդ ուրիշ կարոտի ու քնքշանքի դեմ բացած,
Բայց եթե դուռդ հանկարծ ծեծեն աշնան գիշերով,
Բաց, սիրելիս, դա երգիս մանուկներն են որբացած...

1986

ԱՆԵԾՔ ԴԱՐԱՎԵՐՋԻ

Գիտեմ, ես չեմ հասնի շառագունող դարին,
Գավաթս չեմ զարկի արշալույսին նրա,
Այս է բաժինն իմ լոկ, այս մեծն, ամոթալին,
Այս մոգությունը սև՝ հագին լույս ու հրաշք:

...Տուն ունեի այնտեղ – Իմ Ավետյաց հողում,
Հիսուսն ինքն էր հաճախ նստում դռան քարին,
Երբ ելնում էր տեղից, մաշված քարն այն շողում,
Շառավիղ էր նետում, որ շատանա բարին:

Շառավիղն այդ, ավաղ, իր տիրոջ պես խաչվեց,
Եվ դարն այս լուռ մնաց, խուլ էր ասես ու կույր,
Ու ների՛ր ինձ, ների՛ր, ով պատգամողդ մեծ,
Թե անեծքով պղծեմ շրթունքներն իմ մաքուր...

...Իմ մանկության ձորում խենթություն էր կապույտ,
Գետափը զուտ ոսկի, զմրուխտ էր ու հակինթ,
Եվ տարերքը գետի ծիածան էր կապում,
Որ մանկությունը մեր անցներ նրա տակից:

Ո՞ւր եք, ո՞ւր եք հիմա, խաղընկերներ իմ ջինջ,
Ոտաբոբիկ սրբեր, դարն այս ինչ՞ եր արեց,
Նախ ձեզ վրա փլվեց իբրև հուր ու արձիձ
Ու հետո մերկ կնոջ իր ցոփությամբ պարեց:

...Եվ ունեի մի սուրբ, մի արարիչ թախիծ,
Որից երգի մաքուր աստղալույսն են քամում,

Բայց իմ թախծի վրա հսկում ժանիքն ահի,
Իմ ներշնչման վսեմ վայրկյաններս էր ծամում:

Ա՛յս էր դարն իմ... Ու սա թիարան էր երգի՛,
Հավատո նենգ քննիչն իր վճիռն էր կարդում,
Որ չընկնի ոչ մի սերմ հայրենական հերկին,
Ու չծախրի օդում ոչ մի ոսկե արտույտ...

Եվ անիծում եմ քեզ, դարըդ ամենաչար,
Եվ անիծում եմ ես հրաշքներդ դաժան,
Դու՝ աքսորյալ հավատ, արդարություն խաչյալ,
Դու՝ ծառագայթ մահու և օրհասի դու ժամ:

...Գիշերներս հիմա զառանցանք են ու թույն,
Երակների մեջ իմ՝ հողմի մահերգն է ժանտ...
– Տե՛ր, առաքիր վերից Քո տառապյալ Որդուն,
Բայց խաչի տեղ ձեռքին դիր ոխի շեկ մի շանթ...

1994

ԵՐԱՆԻ ԷՐ ՔԵԶ...

Իմ զրպարտիչներին

Եվ այնպես հաճախ,
Երբ արթնանում ես առավոտ կանուխ,
Որ հերկերիդ մեջ ցորյանը ցանես քո խոսք ու հանգի,
Ինչ-որ դարանից դավի ու ստի նետը սլանում
Ու մխրճվում է թրթռոցի մեջ քո ներշնչանքի:

Դու՝ հավատացյալ, –
Խոստովանանքիդ սուրբ ժամն են պղծել,
Դու՝ լույսի ճամփորդ, –
Քո շողքն են առել սմբակների տակ,
Զառամ շուրթերով անունդ են ծամում խեղկատակ մի ծեր,
Ինչ-որ գեր առնետ,
Արնոտ աչքերով ինչ-որ ստահակ...

Երանի՜ էր քեզ, ոգի՜ դիվական, որ ձեռնոց նետած
Դարի դեմ, դավի, խարդավանքի դեմ ու սրտմաշուկի,
Կանգնեցիր հպարտ,
Ու երբ սրտիդ մեջ գնդակը տնքաց,
Ամպրոպն իր շանթով քեզ օրհնաբանեց լանջին Մաշուկի:

Բայց այս գալարվող,
Այս խայտաճամուկ նենգությանն ի տես,
Որ ունի միայն ծամածուռ երախ ու փտած ժանիք,
Կմոլորվեիր՝ ո՞ւմ դեմքին մաքուր ձեռնոցդ նետես,
Ո՞վ է քո պատվո դատին արժանի...

Ի՞նչ ասեմ, ավաղ,
Այստեղ էլ անգամ բախտն ինձ չժպտաց,
Ոսոխ էր տալիս – թող հաներ իմ դեմ ոհմակն իսկ գայլի,
Բայց այս առնետը, Տեր իմ, սաստիկ է լպրծուն ու թաց,
Խեղկատակն այս ծեր շատ է նողկալի:

Ի՞նչ անես, ասա,
Պատվո օրենքը վաղուց է ջնջված,
Ճար չունես, պիտի լոկ վերից նայես ու քմծիծաղես,
Ամեն առավոտ արթնանաս նորից մաքուր, ներշնչված
Եվ հերկերիդ մեջ ոգուդ սրբազան ցորյանը շաղես...

1994

ԳԻՐՔ ՈՂԲԻ ԵՎ ԳՈՎՔԻ

Զայնիվ տոչորման քեզ բարեբանեմ,
Ծարավ ոգեղեն,
Քեզ, որ ինձ համար ճակատագիր ես,
Տաժանք ու գեհեն:

ՈՂԲ ՄԵՂՎԻ

Սգացեք թախծության ցողով,
Ծաղիկներ ամենայն գույնի,
Սգացեք, հարսնացյալ ծառեր,
Սգացեք բողբոջներ բեղուն,
Աշխարհի դաշտերի վրա
Նեկտարը փոխվում է թույնի,
Աշխարհի ճամփեքի վրա
Մեռնում է բարության մեղուն:

Աշխարհի արարման օրից,
Աշխարհում լեղին է առատ,
Աշխարհի արարման օրից,
Թախիծ էր ու մաղձ էր դեղին,
Եվ ցավից արարվեց մեղուն՝
Մի փոքրիկ, ոսկեթև հրաշք,
Որ այդ ծով դառնության վրա
Գեթ մի պուտ քաղցրություն հեղի:

Իմ փոքրիկ, ոսկեթև մեղու,
Դաշնության գաղտնիք դու անլույծ,
Այդ ինչպե՞ս նյութեցիր, ասա,
Անսպառ քո սերն ու բարին,
Այդ ինչպե՞ս ժայռերի կողից
Կախեցիր դու ծանր մի լույս,
Որ իր հաստ շուրթերով լիզի
Ու մի քիչ մարդանա վայրին...

Դու զարմանք, դու արմանք-զարմանք,
Խայթ ունես, չես խայթում սակայն,
Թևում ու թռչում ես հեռու
Քեզ հսկող ցավից ու դավից,
Իսկ եթե չի մնում հնար,
Ու մեկին խայթում ես հանկարծ,
Դու ինքդ ես մահանում, իմ մեծ,
Քո խղճի տանջալի ցավից:

Աշխարհում Աստծո որդին
Երևի հենց դու ես, որ կաս,
Ծնորհում, բաշխում ես առատ
Ու դեմը չես հայցում ոչինչ,
Ինչքան է կարկուտը չարի
Քեզ խաչել ծառերին ծաղկած,
Բայց հառնել, նյութել ես նորից
Քո լույսը, որ ծանր է ու ջինջ:

Բարության դու անվարձ մշակ,
Բարության արարիչ ճարտար,
Դու՝ թևող գթություն ու սեր,
Դառնության դու անճառ լուծիչ,
Դու՝ ծաղկի ուխտավոր հոգնած,
Դու՝ ծաղկի ճգնավոր արդար,
Դու՝ կյանքի զորություն ահեղ,
Բայց անզոր, իբրև գութ ու խիղճ:

Գարուն է... իմ այգում ահա
Դեղձենին արբունքի հասել,
Զգում եմ, հազիվ է զսպում
Իր կիրքն ու քնքշանքը վայրի,
Թե չգաս ու նրա ծոցում

Չդառնաս դու տարփանք ու սեր,
Հարսնության իր քողը նետած,
Կդառնա սգավոր այրի:

Բայց չկաս... Շարմաշուղ ծաղիկ,
Վեր պարզիր շեփորը քո հիր,
Ղողանջեք, ծաղիկներ զանգակ,
Թող հնչի ձեր գույժը վսեմ,
Մասրենի, սպիտակ բոցով
Աստղծո ոտքերը խանձիր,
Որ մի պահ աշխարհին նայի
Ու սանձի արհավիրքն այս սև...

Բողոքի անողոք ձայնով
Որոտա՛, բողբոջդ բեղուն,
Հնչեցնե՛ք տագնապով ահեղ,
Ծաղիկներ ամենայն գույնի,
Աշխարհի ճամփեքի վրա
Խղճի պես մեռնում է մեղուն,
Աշխարհի շուրթերի վրա
Մեռոնը փոխվում է թույնի...

ՈՂԲ ՉԱՐԵՆՑԻ

Քնած է քաղաքը: Դրսում
Մրսում է սարսափը դեղին,
Մասիսի վիհերին կախված,
Թևաթափ ասուպներ մեռան:
Լսում եմ քո ձայնը.
– Օ, Տեր,
Մեկնիր ինձ բաժակդ լեղի,
Թեև դեռ շուրթերիս վրա
Կիսատ է Աղոթքը լեռան...

Ներիր ինձ, հանձարդ խաչյալ,
Ուշացած այս ողբս ներիր,
Տասնևհինգ տարիս էր միայն
Այն թվին բոլորել հազիվ,
Եվ գուցե այն օրը, երբ դու
Հանգել ես շնչի տակ նեռի,
Ես անգետ ծիծաղել, վազել,
Քաշել եմ աղջկա մազից...

Հետո իմ տեսիլքն այդ տեսել,
Սև խաչ է, ու դու ես վրան,
Կողեր են նիհար ու խոցված,
Ճակատ է արդար ու դալուկ...
Նայում ես, քո Կարսն է հեռվում,
Հանգչում է արևը նվաղ,
Հանգչում է ողողանջը զանգի,
Որ այնպես նման է լալու:

Խշշում են ծառերը այգու,
Մաղում է թախիծը դեղին,
Աղջիկը քո վարդը չառավ –
Մորմոք է ու ցավ է անել...

Աշխարհում երեքը միայն՝
Մայր հողը, արգանդը ցեղի
Ու մեկ էլ կրակը գիտեն,
Որ իրենք հանձար են ծնել...

Եվ ի՞նքդ, և ի՞նքդ գիտես,
Չի ծանր է քո սիրտը սաստիկ,
Արյունդ ցավում է սաստիկ,
Սաստիկ է թախիծը մխում,
Մերթ դալուկ աղջիկն է կանչում,
Մերթ հեռու ցոլանքը աստղի,
Կանչում է ոգի մի անհայտ,
Որ շատ է վսեմ ու տխուր...

Գնում ես, նախձիր է ու մահ,
Հողմերը ահեղ են, ախ, շատ,
Գնում ես, հետևում թողած
Ցնորքն ու տասնևութ տարիդ,
Աշխարհում լոկ չորսդ գիտեք,
Որ այդպես վտիտ ու գունատ
Քայլում է հողմերի միջով
Մարգարեն ու սուրբը դարի:

Եվ հիմա՝ այս խաչը ահա,
Եվ հիմա՝ զնդանը այս ժանտ,
Լույսի տեղ արյուն է կաթում
Քո արդար, քո խաչյալ աջից...
– Տեր, մեկնիր, աշխարհում արար
Կա՞ պատիժ առավել դաժան,
Քան խաչվել սեփական ուխտի,
Սեփական հավատի խաչին...

Եվ մեկնիր, այդ ինչպե՞ս եղավ,
Որ դավը գումարեց գնդեր,

Եվ խիղճը կարծրացավ այնքան
Որ դարձավ պողպատ ու արձիձ,
Որ սուտը բարձրացավ ատյան
Ու վայեց քսությամբ ընտել,
Իսկ երգը թիարան նետվեց
Կամ փոխվեց վաճառյալ հարձի:

Լռում է քաղաքը: Դրսում
Մրսում է սարսափը դեղին,
Մասիսի վիհերին կախված,
Թևաթափ ասուպներ մեռան:
Լսում եմ քո ձայնը.
– Օ, Տեր,
Մեկնիր ինձ բաժակդ լեղի,
Թեև դեռ շուրթերիս վրա
Կիսատ է Աղոթքը լեռան...

Այդ պահին, ես գիտեմ հաստատ,
Սգացել զանգերը Կարսի,
Լացել է արգանդը ցեղիս
Ու ցեղիս արյունը հրե,
Եվ դարի հողմերին տված
Ալ բոցն ու սև ծուխը վարսի,
Լացել է կրակն այն թաքուն,
Որ գիտե հանճարներ սերել...

Ու սուգը ձգվում է դարձյալ,
Լալիս է շիրիմդ անհայտ,
Հեռավոր լույսերից ելած
Լալիս է մանուկը գալիք,
Փշրված հրաշքի նման
Լալիս են երգերդ կիսատ,
Եվ անհայտ հրաշքի նման
Չգրված երգերդ են լալիս...

ԳՈՎՔ ԻՄ ՈՍՈԽԻ

Ձայնիվ բերկրության քեզ բարեբանեմ,
Իմ թունոտ ոսոխ,
Քեզ, որ նենգության աչք ես արնամած,
Նախանձ ես ու ոխ:

Իմ ամբողջ կյանքում սիրտս էր ծվատում
Տանջող մի կասկած,
Միթե երկնայինն ինձ չի շնորհել
Թեկուզ թույլ մի կայծ:

Միթե իմ գրած երգի ոչ մի տող
Չի փոխվել շողի
Ու չի խոցոտել սիրտն ինչ-որ մաղձոտ
Ապաշնորհի:

Եվ տրտում էի – ամեն բանաստեղծ
Իր դահիճն ունի,
Իմն ուր է սակայն, մատնացույց արա,
Տերդ անհունի...

Բայց ես՝ միամիտ, ինչ իմանայի,
Որ այն պահերին,
Երբ տառապանքով բառ էի փնտրում
Լույսերում վերին,

Երբ երանելի ներշնչանքի մեջ
Ու տանջող դողի,
Անկեզ մորենուց հուր էի հայցում,
Որ փոխեմ տողի,

Երբ այգաբացին արտույտների հետ
Լույսը սաղմոսում
Կամ գիշերն ի լույս Նարեկա սրբի
Հետ էի խոսում,

Դահձիս արյունը փոխվում է մաղձի,
Փոխվում է թույնի,
Ու ժանիքներն է սրում նա անվերջ,
Նման դաշույնի:

Եվ արդ, ի վերջո, անզոր զսպելու
Մաղձ, նախանձ ու թույն,
Հայտնվել է նա՝ դեմքը սևակնած,
Աչքերը՝ արյուն:

Փառք քո հայտնությանն, իմ բարի դահիճ,
Իմ նենգ խղճալիս,
Ինքդ էլ չգիտես, թե քո հայտնությամբ
Ինձ ինչ ես տալիս:

Ինքդ էլ չգիտես, որ կասկածի փուշն
Իմ սրտից հանում,
Ու քո նենգությամբ դու իմ ինքնության
Ներբողն ես անում:

Որ նոր հավատ ես գումարում դու իմ
Ոգեղեն ջանքին,
Նոր դող ու թրթիռ, նոր լույս ու կապույտ՝
Իմ ներշնչանքին:

Օրենք է, կյանքում ամեն բանաստեղծ
Իր դահիճն ունի,
Շնորհապարտ եմ շնորհիդ համար,
Տերդ անհունի...

ԳՈՎՔ ԾԻՐԱՆԻ ԾԱՌԻ

Ձայնիվ ցնծության քեզ փառաբանեմ,
Ով ծառդ ազնիվ,
Հայոց ծառերի մեծամայրդ սուրբ,
Պայծառդ ազնիվ:

Ո՞վ գիտե, գուցե դեռ դրախտից են
Կորիզդ բերել
Կամ ներքև ընկած մի ոսկեվորիկ
Աստղից ես սերել:

Քանզի պտուղդ ինչ-որ երկնային
Համ ու հոտ ունի,
Եվ քո բնի մեջ վերուվարում են
Լույսերն անհունի:

Չգիտեմ, գուցե ինչ-որ մի անհայտ
Ու խոր փչակում
Հրե ծաղկի պես ինչ-որ գաղտնիք ես
Ինձանից փակում:

Խորշակ է եղել, եղել խանձահոտ
Մորեխ ու խավար,
Բայց խորշակի մեջ դու՝ կանաչ աղոթք,
Դու՝ ալ վարդավառ:

Հողմեր են շաչել, որ քեզ տապալեն,
Բզկտեն քո դին,

Բայց քո բնի մեջ չի լռել լույսի
Մաքուր մեղեդին:

Գարնան ամպրոպից դու խլել զորեղ
Զարկը կայծակի,
Քո արմատին ես շնորհել, որ նա
Որձաքար ծակի:

Արշալույսների շիկնանքն ու շողերն
Անվերջ հավաքել,
Սաղարթներիդ մեջ ու բնիդ մեջ ես
Գաղտնորեն փակել:

Տիրամայր դու սուրբ, խոցված ամենից
Ահեղ կայծակով,
Եվ հարս երկրային, ծոցիկդ լեցուն
Արևածագով:

Արմատ բարության ու համբերության,
Ծառ իմ ծիրանի,
Հավատիս ուսին՝ դու արշալույսի
Ծփուն ծիրանի...

ՈՂԲ ԱՆՁՆԱԿԱՆ

Թե Հայոց աշխարհում դեռ կա
Մի թաքուն, մի ծպտյալ ծմակ,
Թե դեռ կան անձավներ անհայտ,
Թե անհայտ անդունդներ դեռ կան,
Վեր կենամ, ընթանամ տրտում,
Ընթանամ մի թեթև խմած
Ու սգամ ինքս ինձ վրա,
Ինքս ինձ հառաչեմ երկար:

Նախ սգամ իմ արյան վրա,
Իմ այս հին ու ցաված արյան,
Որ իմ մեջ հեկեկաց՝ որպես
Իմ ցեղի առեղծվածն անլույծ...
Եվ սգամ հույսերիս վրա,
Որ դարիս հողմերը տարան
Ու թողին այս բողոքն անզոր,
Ու թողին տառապանքն այս լուռ...

Ասում են աշխարհի վրա
Ինչ-որ տեղ կա լացի մի պատ,
Երևի արցունքից մամռել,
Երևի սևին է տալիս,
Երևի հողմերով տարված,
Իմ հույսի աղջիկը ծվատ
Գնացել, փարվել այդ պատին
Ու իր սև կսկիծն է լալիս:

Եվ սգամ իմ խղճի վրա,
Իմ ցաված, վիրավոր խղճի,
Երևի աղբյուրի նման
Նա պիտի ծիծաղեր ու լար,
Երևի նմանվեր պիտի
Նա մաքուր լեռնային լճի,
Որի մեջ կապույտը միայն
Եվ Աստծո գաղտնիքը ցոլար...

Ասում են, կա ահեղ մի օր,
Կա խղճի դատաստան ահեղ,
Եվ ոչ ոք չի կարող գտնել
Նրանից փախչելու հնար,
Ուրեմն, երկարիր, հառաչ,
Ուրեմն, արցունքներ, սահեք,
Որ մի քիչ մաքրված, զտված
Ու մի քիչ գեղեցիկ գնամ...

1986-1987

ԵՐԲ ԵՍ ՀԵՌԱՆԱՄ ...

Երբ ես հեռանամ, կտանեմ ինձ հետ միայն ցավն իմ կույր,
Եվ տենդն այս վայրի, որից անընդհատ շուրթերս են ծաքել,
Իսկ մնացյալը, որ խիղճ է արդար ու սեր է մաքուր,
Կուզեի այնպես ես ձեզ կտակել:

Կտակել դո՛ղն այն, որով պատանու մատներն են դողում,
Երբ նա ուզում է աղջկա կրծքի կոճակը քանդել,
Հրեղեն շո՛ղն այն, որ թրթռում է մի կաթիլ ցողում
Եվ այդ կաթիլը դարձնում կանթեղ:

Եվ այն սուրբ ձյո՛ւնը, որ անհայտության հեռու ոլորտից
Մանուշակների հրաշքն ու հասկի ոսկին է բերում,
Եվ այն հնչյո՛ւնը, որ ծնվում ինչ-որ հեռու կարոտից
Ու հավքի փոխված ճախրում է վերում:

Եվ բարդինե՛րը՝ կանաչ հավատի ցոլցլուն մոմեր,
Եվ գետակնե՛րը, որ ցող են ցանում մանկանց ոտներին,
Մասրենիները, որ բոցերն իրենց երկնքին ձոնել,
Շիկնանք են տալիս առավոտներին:

Եվ քարափնե՛րը, որոնց կապուտակ քարանձավներում
Բնակեցրել են իմ երազների կախարդ մոգերին,
Եվ խաչքարե՛րը, որ ասես լուսե խիղճ են ու ներում
Ու միշտ խոսել են ինձ հետ ոգևին...

Եվ իմ տո՛ւնը հին, իմ տո՛ւնը խլված... երբ արդարության
Ձեռքը բաց անի ճամփաներն այն փակ, ախ, եղեք բարի,
Գնացե՛ք, գտե՛ք մամռած թախիծը դարավոր այդ տան
Ու սիրտս դրեք սեմի սուրբ քարին...

ՊՈԵՄՆԵՐ

...Որ խաչքար դառնամ
Իմ մարմնի խաչով։

ՌԵՔՎԻԵՄ

Ա

Ես եկել էի, որ այստեղ լռեմ,
Ես եկել էի, որ չոքեմ ծունկի,
Քարանամ այստեղ առանց արցունքի,
Հետո իմ փոքրիկ հողը հեռանամ,
Գլուխս դնեմ նրա քարերին
Ու թե լամ՝ այնտեղ,
Մորմոքամ՝ այնտեղ...
Եվ սակայն ինքս էլ չիմացա՝ ինչպես
Շուրթերս դիպան աղի տաք համին...

Ախ, ոսկորները...
Դեր-Զորի քամին
Մանկան ոսկորից սրինգ էր սարքել
Եվ արշալույսի խաղաղության մեջ
Սուլում էր մահվան անմահ նվագներ:
Սրինգն էր սուլում
Ու տեսիլներ էր կախում լազուրում:
Պատառոտվում էր պատանքն ավազի,
Ավազի տակից ելնում էր, ծփում
Մի խարտյաշ մանկան գանգուր մի ալիք...

– Ա՛խ, գնանք, որդի,
Քելք արա, ո՞ւշ է...
– Մերիկ, ա՛խ, մերիկ,

Ոտի՞կս է ցավում,
Այս ճամփան՝ ավազ,
Այս ճամփան փուշ է,
Ու ծարավ եմ ես,
Ծարավ եմ,
Ծարա՜վ...

Դեր-Զորի քամին
Մանկան ոսկորից սրինգ էր սարքել
Եվ նվագում էր ծարավի, մահվան
Անմահ նվագներ:

Ես եկել էի, որ այստեղ լռեմ,
Ես եկել էի, որ չոքեմ ծունկի,
Քարանամ այստեղ առանց արցունքի,
Բայց ագռավները...

Ի՞նչ ունեն արդյոք սև ագռավները
Չոր ու ամայի այս անապատում,
Որ գալիս, լույսը սևով են պատում,
Ճախրում են, ճչում, կոնչում են չոր,
Կտուցով քանդում ավազը տոչոր,
Բախվում են իրար, թևին են տալիս,
Ասես թե որս են խլում իրարից...

Ու ես հիշեցի.
Երկար են ապրում ագռավներն այս սև
Ու հեռվից կրկին այստեղ են հասել,
Որ կերակրվեն վաղեմի հուշով,
Որ մանկան մաքուր աչուկներ հանեն,
Սրտեր ծվատեն
Ու խրախճանեն...

Ագռավնե՛ր, սակայն,
Իզո՞ւր եք եկել,
Նրանք վաղուց են մոխրացել այստեղ,
Վաղուց են դարձել փոշի ու աճյուն,
Եվ ձեր թևերը զուր են շառաչում
Այս դեղին, այս սև
Ավազի վրա՝
Այս անծայրածիր գերեզմանոցի...

Բ

Աշխարհում՝ անթիվ գերեզմանոցներ,
Անթիվ շիրիմներ՝ հողագունդն ի վար...
Եվ սակայն շիրիմն իմ ժողովրդի,
Իմ մի բուռ, փոքրիկ իմ ժողովրդի,
Ամենամեծն է
Աշխարհում արար...

Դեր-Զորի քամին
Մանկան ոսկորից սրինգ էր սարքել
Եվ արշալույսի խաղաղության մեջ
Սուլում էր մահվան անմահ նվագներ:
Սուլում էր, հուշում,
Որ ավազի տակ
Մի կարմիր-կանաչ
Ու մի կապուտակ
Երազ կա թաղված...
Եվ անապատը,
Որ հսկա ու փակ
Մեռյալի կոպ էր թվում իմ աչքին,
Շարժվում էր ասես,
Ու այն կապուտակ,
Այն կարմիր-կանաչ
Երազն էր ցոլում...

...Գյուղի բարդին էր կատարն օրորում,
Ու լույսերի մեջ արևագալի
Ձիլ զրնգում էր օրհներգը կալի:
Արեգակի մեջ ու մղեղի մեջ
Որոճում էին եզներն սպիտակ,
Եվ մանուկների ատամների տակ
Համ էր ցորենի,
Համ էր արևի
Ու համ էր կաթի...

Տաք մղեղի մեջ ու արեգակի
Հարս ու աղջիկներն օրորվում էին
Ու ցորեն էին էրնում մաղերով,
Աշխարհի վրա ասես շաղելով
Սեր ու բարություն:

Հետո գիշերը՝ սոսափյունի մեջ,
Աստղալույսի մեջ ու անհունի մեջ
Կավե կտուրներն անրջում էին,
Եվ հոգնած, փակված կոպերի տակով
Լուռ շրջում էին
Երազանքները՝
Հույսերի ոսկե աստղերով առլի:

Շեկ անապատը
Դեղին ու հսկա կոպ է մեռյալի,
Որ իր տակ հավետ ու անդարձորեն
Թաղել էր արև ու լույսի ցորեն,
Թաղել տերևի թրթիռ ու սոսափ,
Ողկույզի շնորհ, ջրերի հոսանք,
Հողի բուրումներ, մրգի բարություն,
Մեղվի տաք տքնանք ու համբերություն,

Արարչությունն է թաղել մայր հողի
Եվ արարողի երազն է թաղել:

Սուլում է քամին ու երգում ահեղ,
Որ ավազի տակ
Թաղված են աստղեր ու մարգարեներ...

Եվ ավազները շարժվում են ասես,
Եվ ավազներից ելնում է ահա
Մի ասպետական կորովի հասակ,
Հեթանոսորեն գեղեցիկ մի այր
Ու շշնջում է լուսե բարբառով.
– Ես կարող էի դարիս ճակատը
Բանաստեղծության աստղերով զուգել,
Բայց իմ ճակատը փշրեցին քարով...

Սուլում էր քամին ու երգում ահեղ,
Որ ավազի տակ թաղված են երգեր
Ու մարգարեներ...

Եվ ավազները շարժվում են ասես,
Եվ ավազներից ելնում է ահա
Մի սքեմավոր, սևավոր մի այր:
Սև թևերի պես սքեմը բացած,
Սավառնում է նա իբրև սև մի տենդ,
Սավառնում իբրև ոգու ցավը խենթ,
Սավառնում, հածում, հետո թևաբեկ
Ծունկի է իջնում նա անապատին,
Ծունկի է իջնում
Իբրև խելագար,
Սևասուն սամում...
Ավազ է առնում նա անապատից,
Մոխիր է առնում նա անապատից

Ու ծամում,
Ծամում...

Եվ հետո
Հանկարծ
Մոխրից սևացած նրա շուրթերին
Թառում են, դողում լույսերը վերին,
Եվ սկսվում է
Մի սուրբ պատարագ...

Հողմեր են սուլել,
Սլացել վայրագ,
Չվել են տարիք,
Եվ ավազներ են չվել տարագիր,
Բայց անապատում ալիքվում էր դեռ
Զնգացող ցավը,
Զնգացող ծուխը,
Զնգացող բոցը
Այդ պատարագի...

Եվ պատարագի ալիքի միջով
Դեռ քայլ են անում մի խարտյաշ մանուկ
Ու ցամքած մի մայր...

– Ա՜խ, գնանք, որդի,
Քելք արա, ո՜ւշ է...
– Մերի՜կ, ա՛խ, մերիկ,
Ոտիկս է ցավում,
Այս ճամփան՝ ավազ,
Այս ճամփան փուշ է,
Ու ծարավ եմ ես,
Ծարավ եմ,
Ծարա՜վ...

Ակնա ջրերը, ախ, արար-վարար,
Ակնա ջրերը կապուտաչ էին,
Ակնա ջրերը քարափներն ի վար
Զրնգոց էին ու կարկաչ էին,
Ակնա ջրերը
Աստղերի անհայտ
Ակունքից գալիս
Ու լալիս էին,
Ծիծաղից լալիս...

Արևն ընկնում էր ակնաղբյուրի մեջ
Ու սառնությունից սարսռում, դողում,
Իսկույն ձաքում էր,
Ակնա ջրերի պաղպաջյունը ջինջ
Շուրթերիդ վրա աստղային կում էր...
Երկրի անձրևը, ախ, արար-վարար
Ու կապուտաչ էր,
Երկրի անձրևը քարափներն ի վար
Շունչ ու շառաչ էր,
Երկրի անձրևը երակ-երակ էր,
Երկրի անձրևը կապույտ լեղակ էր,
Երկրի անձրևը հորդ էր, հեղեղ էր,
Եվ ահեղ կիրճը նրա դեմ նեղ էր,
Գետը ուռչում էր տեղատարափից
Եվ հովազի պես
Վեր էր մագլցում
Ժայռ ու քարափից:
Տեր, այդ անձրևից մի երակ տայիր,
Գեթ մի շիթ տայիր,
Խարտյաշ մանկիկը ընկել ավազին,
Հևում է, նայի՛ր,
Հևում, լռում է

Ու մարմրում է...
Բայց դու՝ խուլ,
Դու՝ կույր,
Դու այս աշխարհի
Խիղճը անմաքուր,
Մայրը քեզանից չի հայցում ոչինչ,
Լոկ վեր է հղում սայրասուր մի ճիչ,
Հետո երգում է,
Երգում ծիծաղով,
Ցնորված երգում,
Որ կախօրրան է պարտեզում կապել
Ու վրան վարդի թերթեր է թափել,
Սոխակին կանչել, ասել է. «Արի՜
Ու քունը հսկիր իմ մինուճարի»...

Սակայն սոխակի թևը չէ, օ՜, ոչ,
Ավազի թևն է
Իջնում զավակին,
Ագռավի սևն է
Իջնում զավակին...

Գ

Իմ Արարատյան սրբազան հողից
Երկնքի միջով ես այստեղ հասա...

Ու եղավ մի ժամ, մեծ, ահեղ մի ժամ,
Երբ ինքնաթիռի շուքը հեշտասահ
Եվ իմ հայացքը շոյում էին լուռ
Մեզանից հատված,
Մեզանից զատված
Մեր հովիտները կանաչ ու տխուր...

Ու ես իմ կյանքում առաջին անգամ
Զգացի, երկիր, քո ձգողական
Ուժը ահավոր:
Ձգում էին ինձ,
Ձգում էին վար,
Մեր հովիտները,
Վիհերը խավար,
Ճանապարհները մեր կայծակնաձև,
Որ շառաչել են մեր պատմության հետ
Ու ահագնացել...
Բայց լուռ են հիմա,
Թափուր են հիմա...

Մշուշ կար ցածում,
Մշուշ մի թեթև,
Ու ինձ թվում էր, թե դա ծուխն է լուրթ
Այդ հսկայական զոհասեղանի,
Որ մխում է դեռ:
Ու ես երկնքից Եփրատը գտա,
Ու լեռնապարը գտա Տավրոսի,
Ու գտա մի վանք,
Որ թվում էր, թե
Ուր որ է պիտի հայերեն խոսի:

Ու շեներ տեսա հովիտներն ի վար,
Ու շեներ տեսա լանջերին քարոտ,
Ո՞րն ես, Արաբկիր, իմ ծննդավայր,
Իմ արյան մորմոք, իմ արյան կարոտ...

Ու ես երկնքից իջել էի վար,
Թափառում էի երկրում իմ ավեր
Եվ ոգում էի անդունդներն ի վեր.

Մեր շեներն այստեղ
Ավերվում են լուռ,
Ավերակներս են
Ինձանից խլել...

Ակնա ջրերը
Հոսում են տխուր,
Աղբյուր-ակներս են
Ինձանից խլել...

Աստղիկը մերկ է
Մշո մուժի տակ,
Իմ աստվածներն են
Ինձանից խլել...

Միերի դուռը
Մնացել է փակ,
Առեղծվածներս են
Ինձանից խլել...

Այստեղ հանգչում է
Շիրիմը պապիս,
Պապիս աձյունն են
Ինձանից խլել...

Ահեղ Եփրատը
Զարկում է ափին,
Այդ շառաչյունն են
Ինձանից խլել...

Թափառում էի հովիտներն ի վար,
Դեգերում էի անդունդներն ի վեր...
Մշուշն էր ծփում.
Մշուշ չէր դա, ո՛չ,

Դա ծուխն էր կապույտ
Այն հսկայական զոհասեղանի,
Որ մխում է դեռ:
Եվ աչքերիս մեջ արցունք էր դառնում
Ծուխն այդ մահահոտ:
– Ախ, իմ հայրենիք,
Իմ ծննդավայր,
Իմ ասպատակված,
Իմ որբ, իմ ցավոտ,
Գնում եմ դեպի շիրիմդ հսկա,
Որ ավազներին ընկնեմ ծնկաչոք,
Որ լռեմ այնտեղ,
Քարանամ այնտեղ,
Որ խաչքար դառնամ
Իմ մարմնի խաչով...

Դ

Արևը ելել,
Իմ գլխի վրա կանգնել հսկումի
Եվ ինձ ձուլել էր իմ ստվերի հետ:
Անապատային շիկացած մի տենդ,
Իմ ներբանների մաշկը այրելով,
Հասնում ճակատիս
Ու բոցկլտում էր ճակատիս վրա:

Ինձ քամի էր պետք, ու քամի չկար:
Ես ուզում էի քայլել ավազով,
Բայց ձայներ էին խճճվում ոտքիս,
Եվ հառաչանքի թեժ բոցերն էին
Կտրում իմ ճամփան:
Ջուր էր աղերսում անապատը շեկ,
Եվ անապատի ալիքները շեկ
Մարող, մարմրող մանուկների պես
«Ջո՜ւր» էին ճչում...

Ես ուզում էի շշնջալ նրանց.
– Ելե՛ք, մանուկներ,
Ես ջուր կբերեմ ձեզ Արագածից,
Մեր աղբյուրների սառնորակ լացից
Ալիք կբերեմ,
Որ դնեմ այրվող ձեր ճակատներին,
Հովեր կբերեմ,
Զովեր կբերեմ,
Սոսափ կբերեմ,
Զով ամպ կբերեմ,
Որ ձեզ պարուրեմ...

Ես ուզում էի այդպես շշնջալ,
Եվ սակայն ձայնս ելնում, դիպչում էր
Անապատի պես իմ չոր հագագին
Ու խլանում էր,
Մարում տխրագին:

Կանգնել էի ես
Համրությամբ կքած,
Քարե արցունքիս
Ծանրությամբ կքած,
Կանգնել էի ես
Ու խրվում էի ավազների մեջ:
Կարմիր էր ավազն ու ավազը՝ սև,
Բոսոր էր ավազն ու ավազը՝ սև,
Դեղին էր ավազն ու ավազը՝ սև,
Ու խրվում էի ես դեղին ու սև
Այդ հառաչի մեջ...
Ես խրվում էի իմ դաժան դարի
Մղձավանջի մեջ...

Եվ անապատը հառաչում էր ձիգ.
– Դա՛ր քսաներորդ,
Ես խարան էի քո խղճի վրա,
Բայց այդ խարանից քո խիղճը չայրվեց
Եվ նոր, նորանոր սև խարաններից
Քո դեմքը եղծվեց
Ու ծաղկատարվեց...
Ծաղկատար դեմքով դու ինչպե՞ս պիտի
Պտտվես չքնաղ արեգակի շուրջ...

Եվ անապատը հառաչում էր ձիգ,
Եվ անապատի այդ հառաչանքում
Ասես մահացած մարգարեների
Բողոքն էր զանգում.
– Դա՛ր քսաներորդ,
Դարեր ու դարեր մենք սեր նյութեցինք,
Բջիջ առ բջիջ քամեցինք բարին,
Մեր մի բուռ սրտով մենք փոթորկեցինք
Ու փոթորկումի
Մեր մաքրությունը տվինք աշխարհին,
Մենք խարույկ ելանք,
Ողջակիզվեցինք,
Դարձանք լույս ու հուր,
Կայծակների պես
Մենք փշրվեցինք,
Որ քեզ պարգևենք երկինք մի մաքուր
Եվ հայացքիդ դեմ կախենք հարության
Առասպելները
Հիասքանչ ու մեծ...
Դու ի՞նչ արեցիր սերը մեր նյութած,
Մեր նյութած բարին.
Ինչպե՞ս կարեցար Դեր-Զոր արարել,

Ինչպե՞ս կարեցար այս քուրան վառել,
Ինչպե՞ս կարեցար սև խրախճանքի
Կանչել դու չարին...
Եվ հառաչում էր անապատը ձիգ.
– Տեր, քիչ էր կարծես ինձ վերուստ տրված
Բախտն ամայության,
Հավերժ ամլության,
Հավերժ համրության
Այս բախտը տխուր,
Որ բերիր հետո իմ մեջ թաղեցիր
Ողջակիզության փոթորիկն այս խուլ
Եվ տվայտանքը այս խուլ ձայների...

– Ա՛խ, գնանք, որդի,
Քելք արա, ո՛ւշ է...
– Մերիկ, ա՜խ, մերիկ,
Ոտիկս է ցավում,
Այս ճամփան՝ ավազ,
Այս ճամփան փուշ է,
Ու ծարավ եմ ես,
Ծարավ եմ,
Ծարա՜վ...

Եվ արթնանում էր հուշն անապատի,
Եվ հուշերի պես արթնանում էին
Ալիքները տաք,
Նախ շնչում էին ալիքները տաք,
Հետո հառաչում,
Մոնչում էին ալիքները տաք,
Պտտվում էին կրունկի վրա,
Դառնում ամեհի մի պտուտահողմ
Ու երկնքի մեջ մխրճում էին
Դեղին,

Շիկացած,
Հրեղեն մի ոխ...

Ե

Հետո գիշեր էր:
Դեռ լուսին չկար:
Ագռավներն ասես
Իրենց թևերի սևի սևն էին
Քամել ու փռել այդ անապատին:
Դեռ շրջում էի ես դառնապատիր
Ավազների մեջ
Ու մաքուր էի որպես առաքյալ:
Այս անապատի բոցը ինձ զտել,
Ավազե այրող հողմը մկրտել,
Եվ արցունքներս մաքրել էին ինձ...
Ես մաքուր էի, զուտ էի ու ջինջ
Որպես առաքյալ...

Հեռվից նայողին կարող էր թվալ,
Թե անապատի թախծության վրա
Շրջում է այրվող, մերկացած մի սիրտ
Կամ առկայծում է թափառիկ մի հուր...
Քամին դեռ մանկան ոսկորը առած,
Սուլում էր տխուր,
Ու սև էր, սև էր, սև էր ամեն ինչ...
Ու միայն տեղ-տեղ
Մահացող մանկան աչքերի նման
Ֆոսֆորափայլն էր շողում տենդագին.
Ֆոսֆորի փայլը,
Ոսկորի փայլը,
Այդ ահավորը,
Այդ սարսռագին
Ամեհի ցուրտը...

Անապատներում գիշերը ցուրտ է:
Եվ ցերեկային շոգ տենդից հետո
Ես ոտից գլուխ
Սարսռում էի...

– Ո՞ւր եք, ագռավներ, ո՛ւր եք հեռացել,
Եկեք, ֆոսֆորի այս փայլը կտցեք
Ու տարեք, գցեք
Աշխարհի սրտին
Ու խղճի վրա:

Սև էր գիշերը...
Ու սև գիշերը,
Ֆոսֆորափայլի մոմերը ձեռքին,
Հսկում էր մահվան այդ մեծ եզերքին:
Բայց մոմերն ի՞նչ են,
Ո՛չ, մոմեր պետք չեն,
Ես Արարատի ճակատից պոկած
Կայծակ կբերեմ, շանթեր հրեղեն,
Նրանց արմատը այստեղ կխրեմ,
Որ ծառերն աճեն շանթ ու կայծակի
Ու նման ոսկե արևածագի՝
Նահատակներիս վրա շողշողան...

. . . . . .

Հետո գիշերը կանգնել էի ես
Եփրատի դաժան կամուրջի վրա:
Լուսինը ելավ:
Անապատային կարմիր մի լուսին:
Կարմիր լուսնի տակ
Եփրատը կարմիր ցոլանք էր տալիս,
Ու թվում էր ինձ,
Թե երակն է նա,

Բացված երակն է
Հայոց աշխարհիս:
Կանգնել էի ես:
Սպիտակ հագած մի բարակ աղջիկ
Եփրատի դաժան կամուրջի վրա
Եվ լուսնկայի անուրջի վրա
«Սուրբ-Սուրբ» էր երգում:
«Սուրբ-Սուրբ»-ը՝ սարսուռ,
«Սուրբ-Սուրբ»-ը՝ ոգի,
«Սուրբ-Սուրբ»-ը՝ լույսը
Անմահ մորմոքի,
«Սուրբ-Սուրբ»-ը՝ կարոտ
Ու վերին թախիծ,
«Սուրբ-Սուրբ»-ը՝ հյուսված
Կիրակնալույսից ու մթնշաղից,
Հյուսված արցունքից
Ու խնկաբույրից,
Պոկված դեղձենուց,
Լեռան աղբյուրից,
Պոկված մայր հողի բացված երակից,
Զոհասեղանի կապույտ կրակից,
Մեր անդունդների խորացումներից,
Մեր կատարների ցոլացումներից...

«Սուրբ-Սուրբ» էր երգում:
Լսում էր, լսում Եփրատը լռած
Ու հետո ասես ինչ-որ բան հիշում
Ու հայերեն էր Եփրատը խշշում:
«Սուրբ-Սուրբ» էր երգում...
Ու տիեզերքում
Լռություն էր խոր:
Ու «Սուրբ-Սուրբ»-ի մեջ
Իմ հայրենիքն էր ցոլում հեռավոր:

Լեռները կապույտ
Ու թանձր կապույտ ալիքներ տալով,
Ծփում են, ծփում ու չեն քարանում,
Տիեզերական զրնգուն ու զով
Մի լռություն է այդ վեհարանում:

Արարատ լեռը անհունին թիկնել,
Ցոլքեր է նետում ձյան ու սառույցի,
Կատարի ամպը արևից շիկնել
Ու բաշ է դարձել քնած առյուծի:
Իսկ այնտեղ՝ ցածում,
Ապրիլ է նորից...
Ձնհալը լացել,
Խենթացել,
Անցել,
Հետքից թողել է փրփուրը ծաղկի...
Ցոլանքների մեջ արևածագի
Մեղվի
Ու ծաղկի
Ներդաշնությունն է քաղցրորեն զնգում,
Դաշտը ծայրեծայր այրվում է քնքուշ,
Դաշտը ծայրեծայր հեղեղ է ծաղկի,
Հրդեհ է ծաղկի,
Ծաղկի զրնգոց...
Ապրիլը դաշտից առել կայծ ու բոց,
Լեռներն է ելել
Ու լեռներն ի վեր
Վառել մասրենու վայրենի թփեր,
Վառել կակաչներ ու հորոտ-մորոտ,
Զանգակածաղկի ծիծաղն արևոտ
Եվ հրաշքներ է վառել անանուն,
Իսկ հավերժության կապույտ սահմանում

Վառել է, ահա՝
Հարության նման
Հրեղեն ու բորբ
Մի ցայգածաղիկ...
Ախ, իմ հայրենիք,
Անապատները նետեցին վրադ,
Որ դու չծաղկես...
Ու հիմա հեռվից,
Այս անապատից
Նայում եմ ես քեզ:
Ես քեզ եմ նայում, իմ հին տառապանք,
Ես քեզ եմ նայում, դարավոր իմ խաչ,
Եվ մահվան մթին այս անապատում
Ես ծնկաչոք եմ
Քո ծաղկի առաջ...

Լեռները կապույտ
Ու թանձր կապույտ ալիքներ տալով,
Ծփում են, ծփում ու չեն քարանում...
Արևածագի լույսերով օծված
Խաղաղություն է այդ վեհարանում...
Այնտեղ՝
Հավերժի կապույտ սահմանում
Վառվում, ցոլում է ծաղիկը հրկեզ...
Քո ցայգածաղկի
Կերոնի առաջ
Ծնկաչոք եմ ես...

1977
Հալեպ–Երևան

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԶՐՈՒՅՑ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՀԵՏ

Դատավոր արդար,
Մեր հավերժության վճիռն ես գրել,
Կնքել կնիքով քո սուրբ հանճարի։

Նարեկա վանքը՝ երկնքից կախված քարե մի բուրվառ,
Եվ այրվող մի սիրտ,
Հրդեհվող մի սիրտ՝ բուրվառում քարե...
Ու ես իմ դարից խենթ ու հողմավար
Այցի եմ գալիս
Քեզ, խղճի ճորտակ, բարու մարգարե,
Քեզ, բուժիչ բարբառ, լույս անպարագիծ,
Աստծո ախոյան ու զրուցակից,
Քանզի սրբորեն չոքելու համար,
Իմ տագնապները ոգելու համար,
Խոկալու համար,
Տոկալու համար,
Թեթևանալու, հառնելու համար
Խղճիդ խորանն է ամենից հարմար...

Ներիր, ճգնակյա՛ց,
Իբրև ուխտավոր մի ոտաբոբիկ,
Վանա կապուտակ լճակի ափով ես պիտի գայի,
Ես գերեզմանդ պիտի փնտրեի երկնքի կոպին,
Ծունկի իջնեի
Ու քեզ իմ դարի օրհնանքը տայի:

Եվ սակայն ներիր, ներիր, բարեգո՛ւթ,
Ներիր, ոգու հաց, լույսի մանանա,
Անկարող եմ գալ,

Ինձնից խլված է լեռնաշխարհն իմ լուրթ,
Գերեզմանը քո ու լիճը Վանա:

...Տո՜ն պիտի լիներ այդ վանքի բակում,
Լիներ Վարդավառ,
Երգեին պիտի ու կաքավեին հարսն ու աղջիկներ,
Ջուր պիտի տեղար,
Լո՜ւյս պիտի տեղար անձիկներն ի վար,
Եվ օրը պիտի
Նրանց ծիծաղի ցոլանքից շիկներ:

Եվ պիտի լիներ նաև այլ մի տոն,
Շիրիմիդ վրա
Տո՜ն պիտի լիներ բանաստեղծության,
Եվ քերթողները կարդային պիտի ներբողներ ու ձոն՝
Վասն արևի,
Սիրո,
Թախծության:

Բայց լսիր, ահեՀ,
Այն աղջիկները,
Որ գային պիտի բակը քո վանքի
Եվ ամեն մեկը նմանվեր պիտի մի Աստվածամոր,
Ոսոխի բրդոտ ու բիրտ թաթերում մեռան լլկանքից,
Մերկությունն իրենց
Ծածկած լոկ իրենց սև ու սուգ ծամով:

Եվ մանուկներն այն,
Որ վանքիդ բակում
Զոհվող գառների անհույս մայունից տխրեին պիտի,
Իրենք, հենց իրենք
Գառների նման ձերմակ ու մաքուր

Սրահար եղան ավազների մեջ սև անապատի:

Եվ քերթողները,
Որոնց ճակատին քո մատն էր վերին,
Եվ ամեն մեկը լույսի ճամփորդ էր,
Խղճի սուրբ մի աստղ,
Անապատների ճանապարհներին
Ջարդված գանգերով ընկան դիտապաստ:

Գիշեր է հիմա,
Աստղերի տխուր զրնգոցի տակ
Ինչ-որ նահատակ ասուպներ մեռան,
Եվ Կաթնծիրը,
Որ երկարում է հրեղեն ու տաք,
Ասես հառաչն է Արարատ լեռան...
Գիշեր է նորից.
Արթնացել նորից ցավն իմ տվայտող
Ու մորմոքում է կրկին ու կրկին,
Եվ Կաթնծիրը մի տող է միայն,
Հրեղեն մի տող,
Մեր տառապանքի չգրված գրքից:

Լսիր ինձ, անո՛ւխ,
Ու ես ոխ ունեմ, քեն ունեմ քո դեմ,
Ես գանգատ ունեմ և ունեմ անեծք,
Ինչո՞ւ սուզվեցիր
Դու աստվածային ոլորտն այն վսեմ,
Ինչո՞ւ բերեցիր ու դրիր մեր մեջ
Այս խիղճը անեղծ...

Եվ ինչո՞ւ պիտի
Քո աստվածային ու սուրբ բարբառով
Մեր անձն ու հոգին
Այդ անզոր խղճին մենք առնչեինք,

Կանգնած վայրենի այս լեռների մեջ՝ վայրենի քարով
Մեր ժանիքները պիտի սրեինք ու կոնչայինք:

Մեր ինչի՞ն էին, ասա, հարկավոր
Ոստան ու վանքեր,
Օծված ինքնության այս վսեմ ոճով,
Սրեինք պիտի մեր ժանիքներն ու սրերը մեր կեռ,
Ասպատակեինք վայրենի քոչով:

Պիտի ելք տայինք
Մեր բնազդների վայրենի բուքին,
Նենգեինք պիտի ու խարդավեինք,
Շողոմ խոսքերով դանակ խրեինք
Հանդիպողների մեջք ու թիկունքին,
Բարեկամներին պիտի դավեինք...

Բայց մեղա՛, մեղա՛, բյուր անգամ մեղա,
Ինչե՞ր եմ ասում,
Բերանս ծեփիր քո արդար աջով,
Խափանիր, քավի՛չ, խոսքն իմ սևասուն
Լուսե հեղեղիդ ահեղ շառաչով...
Մաքրիր ինձ անձառ ճառագայթներով,
Կասկածանքներիս սև մուժը վանիր,
Աստծուն առնչված քո սուրբ մատներով
Խղճիս մեջ խրված այս խայթը հանիր,
Լվա ինձ կապույտ քո ամպրոպներով,
Արտասուքներիդ մաքրությամբ ցողիր,
Սրբիր ճակատս աջով քո ներող
Եվ ինձ օրհնությամբ նորից ողողիր:
Մեղք չունես, գիտեմ,
Դեռ ջրհեղեղյան տապանից իջել,
Այգի ենք տնկել մենք ձեռքով Նոյան,
Մեր քրտինքն ենք տաք

Տվել ողկույզի բարությանը ջեռ
Եվ վայրի հասկը դարձրել ցորյան:
Խղճի արմատը
Ապառաժների ոխի մեջ խրած,
Ծիրանի ծառի խոնարհ տքնանքով
Բարին ենք հինել,
Լեռներից պեղված մեր ցոլուն ոսկուց չենք հատել դրամ,
Ոսկուց ձուլել ենք աստվածուհիներ:

Մեր քարերը բիրտ
Գետերի վրա կամուրջ ենք արել,
Որ սիրո ազնիվ քարավանները այցելեն մեր տուն,
Մեր վանքերի հետ երկինք ենք միտել դարեր ու դարեր
Աշխարհի համար
Հայցելու բարիք ու խաղաղություն:

Բայց գիտեմ հաստատ,
Նարեկա վանքը սրբաքար ու հին,
Ուր դու ծնկաչոք խիղճ ես արարել,
Ուր դու Աստծո հետ
Զրույցն ես արել քո աստվածային,
Հիմա ոչխարի փարախ են արել:

Ու ներիր, ահեղ,
Քեն ունեմ քո դեմ և ունեմ բողոք,
Որ քո հեծության մեծությունն ունի,
Մեր ինչի՞ն էր պետք,
Ասա, զրույցն այդ արցունքով ողող,
Որ դու, մարդասեր,
Բացիր Աստծո հետ, լույսի, անհունի:

Մենք կանգնած էինք

Դաժան աշխարհի չորս հողմերի մեջ,
Քառուղու վրա նենգության, նետի, ստության, սրի,
Խավարից, չարից ու դավից հյուսված
Զրահ էր մեզ պետք,
Դու մեզ Աստծո լույսը հագցրիր:

Ինչո՞ւ ուզեցիր,
Որ ապավինենք մտքի կանթեղին,
Որ լույսի փոխենք մեր սիրտը այրվող,
Երբ անապատից սրարշավ եկող հորդան այն դեղին
Արտաշնչում էր լոկ մոխիր ու ոխ:

Մարեինք պիտի
Մեր կանթեղների լույսը ոսկեվոր
Ու մեր արտերի ոսկեվոր լույսը պիտի մարեինք,
Լույսը ողկույզի, լույսը հավատի, որ մթան մեջ խոր
Այն աչքերը շեղ մեր ցոլցլանքը չնշմարեին:

Բայց մեղա՛, մեղա, ստուգապես մեղա,
Ներիր քուշանիս ու հոնիս կոպիտ,
Որ բարբառեցի անմահ լույսի դեմ,
Մտոք կույր եղա,
Ներիր կամ շանթիր ինձ, որպես Հոբի:

Լույսն է աշխարհի ճշմարտությունը,
Միակն ու մերկը,
Լույսն է աշխարհի գեղեցկությունը,
Միակը դարձյալ,
Լույսը ծաղիկն է արևածագի
Ու լույսը երգ է:
Լույսն է երևի այն անքննելին,
Որի անունը կյանք է հանդերձյալ:

Քո Աստվածն ինքն էլ
Խտացած լույս էր ու լույսի գումար,
Քո մատյանն ինքն էլ
Տառապած շուրթով լույս է բարբառում,
Ամեն ինչ կյանքում սպառում ունի,
Ունի վերջ ու մահ,
Եվ լույսը միայն չունի սպառում:
Լույսի համար են բարձրացել խարույկ ու փոխվել լույսի,
Ու լույսն է միայն, որ պարզ է այդքան,
Այդքան անմեկին,
Ու լույսն է միայն, որ անկշիռ է,
Նման է հույսի,
Ու անկշիռ է տրվում ամենքին:
Լույսն է խտանում ու դառնում է հասկ,
Բողբոջ է դառնում,
Լույսն է ծիծաղում
Ակնաղբյուրների կապուտակ կոպին
Եվ առավել է լույսն իմաստնանում
Ու գեղեցկանում,
Երբ փոխվում աստղի
Ու շողշողում է շեղբի մեջ խոփի:

Եվ ինքը՝ խոփը, հենց շեղբ է լույսի,
Մենք խոփն ենք դարեր Աստծո պես պաշտել,
Եվ դուք եք վկան,
Հովիտներ Մուշի, Տարոնի, Կարսի,
Եվ դուք եք վկան, իմ Կարնո դաշտեր:
Լուսնյակ է եղել,
Անուշ է եղել քունը հոտաղի,
Կապույտ անհունը
Մեզ վրա կապույտ օրհնանք է հեղել,

Մեզ վրա ոսկե շշուկն է փռվել աստղային տաղի,
Եվ մեր խոնջանքը վաստակած Աստծո խոնջանք է եղել:

Բայց արյուն հոսեց մեր ակոսներով,
Մեր լույսի հասկը
Գլխատվեց անհույս ու անապավեն,
Ու ես վեճ ունեմ, քեն ունեմ, ներո՛ղ,
Նախնիներիս դեմ ոխ ունեմ ու քեն:

Առաջին մետաղն, ասում են, դու ես ձուլել, իմ երկիր,
Բայց խոփն ո՞ւմ էր պետք,
Սրեր էին պետք ու մկունդ, ու նետ,
Եվ ո՞ւմ էին պետք
Մեսրոպյան տառերն այս երկաթագիր,
Մեզ երկաթակիր հրոսակների շառաչյուն էր պետք:

Դուք մեր ափի մեջ ինչո՞ւ դրեցիք խղճի մաճն արդար,
Յաթաղան տայիք, տապար ու կացին,
Եվ ինչո՞ւ դրիք
Աստղոտ ցորենի հրաշքը խարտյաշ,
Որո՛մ դնեիք,
Որ թույն խառնեինք օտարի հացին..

Բայց ների՛ր, ների՛ր,
Վեհորեն ներիր մի վերջին անգամ,
Իսկ թե ներումի խոսքեր չգտնես,
Անեծքով շանթիր,
Ես չէի, դա իմ մորմոքն էր անկամ,
Որ մերթ կուրանում
Ու նմանվում է սևասուն խանդի:

Ներիր, բարեգո՛ւթ,

Փարատիր մաղձի մոլուցքն այս դեղին
Եվ կասկածանքիս ամպերը ցրիր,
Հուշիր ինձ նորից
Դու ճշմարտությունն այն հայտնի ու հին,
Որ նա, ով սուր է իր ձեռքը առնում,
Ընկնում է սրից:

Եվ դու դարեդար
Շնորհել լույսը քո սուրբ կանթեղի
Եվ արտասուքիդ
Ցողերով ես մեզ անվերջ լվացել,
Որ մենք կարենանք, ներքևում թողած մաղձը մեր լեղի,
Ոգու պես թեթև երկինք թևածել:

Քանզի գիտեիր,
Որ փոքր է հողը ու փոքր է ածուն,
Եվ դար ու դարեր
Հողմը այդ հողից սահման է պոկում,
Ուրեմն պիտի երկինք վերանանք,
Հասնենք Աստծուն,
Ուրեմն պիտի խորանանք, իջնենք անդունդը ոգու:

Եվ դու, նորոգի՛չ,
Մերթ վերին լույսին մեզ առնչեցիր,
Մերթ անդունդները,
Ոգու վիհերը տարար գահավեժ,
Ու մենք լույսի հետ մութը շնչեցինք,
Մենք ժառանգեցինք ալեբախության տանջանքը հավերժ:

Մե՛ծդ, գիտեիր,
Տիեզերական խորհուրդը վերին,
Որ շարժման մեջ է ամեն զորություն,
Ալեբախումն է,

Որ մաքրություն է բերում ծովերին,
Ու տառապանքն է բերում խորություն:
Ու մեզ մաքրեցիր,
Որ դառնանք վերին լույսին արժանի,
Որ անդունդներից հանենք բարության աստղերը կորած,
Եվ մեր քարը բիրտ,
Որ պիտի դառնար լոկ ոխ ու ժանիք,
Լույսի սյուն արինք,
Հրաշքի խաչքար
Ու խղճի խորան...

Մեր տառապանքից
Ոգու հրեղեն սյուներ բարձրացան,
Որ ճշմարտության ու գեղեցկության տեղն էին հուշում,
Մեր կարոտները
Արծաթե մաքուր զանգակներ դարձան
Եվ աստղերի պես
Լույսի ղողանջներ փռեցին մուժում:

Ամենն այդ գիտեմ,
Բայց երբ գիշերն է իջնում աշխարհին,
Ներիր, անարատ,
Զարթնում է նորից թախիծն իմ արյան,
Զարթնում է նորից պարտությունների մորմոքը դեղին
Եվ հեկեկում է երակների մեջ իմ բազմադարյան:

Ու երբ հիշում եմ,
Որ իմ Եփրատը, քարեքար ընկած,
Ծիածաններ է հորինում անգամ գիշերվա մթնում,
Որ իմ հայրենի տնակին իջած խոշոր լուսնկան
Մեր երազներն է այնտեղ որոնում, սակայն չի գտնում,
Հիշում, որ վանքը, Նարեկա վանքը,

Ուր դու, հանձարեղ,
Զրուցում էիր
Աստծո հետ,
Լույսի
Ու առեղծվածի,
Հիմա ոչխարի փարախ են արել,
Արյունս նորից փոխվում է մաղձի:

Ու երբ հիշում եմ,
Որ չի ավարտվել այն նախձիրը դեռ,
Շարունակվում է գիշերվա դավով, ստով տվնջյան,
Որ այն Գայլը Գորշ
Սողալով ելնում Արարատն ի վեր
Եվ ժանիքներով ջնջել է փորձում
Նրա անունը աստվածաշնչյան,
Որ ամեն գիշեր
Քար են գողանում սրբաքար Անուց,
Որոնց նախշերում
Մեր տաք քրտինքի արծաթը դեռ կա,
Որ մեսրոպատառ մեր հիշատակն են այնտեղ սպանում,
Ու մորթվող հուշն է գիշերների մեջ հառաչում երկար,
Որ ջնջում,
Հերքում,
Եղծում են ոձիրն այն եղեռնական
Եվ աշխարհով մեկ դրամով գնված սուտն են որոձում,
Ու երբ մենք, սեղմած ատամները մեր,
Լռում ենք անգամ,
Ու մեր փոխարեն քարերն են գոչում,
Ուզում եմ այնպես,
Ով արդարախամնդ,
Որ մռնչայիր դու երկինքն ի վեր,
Եվ քո մռունչով

Նարեկա վանքը դարձած նետ ու շանթ,
Երկինք սլանար
Ու այս աշխարհի խղճի մեջ խրվեր:
Եվ խռովքի մեջ,
Խառն ու խուռներամ այդ մառախուղի,
Որ մորեխների թուխպեր են ասես խավար ու ահեղ,
Այդ մոխիրների, մխանքների մեջ սև ու անուղի
Խեղվում եմ ասես
Ու խարխափում եմ խենթ ու շնչահեղձ:

Ես սարսափում եմ ու շշնջում եմ,
– Բացվի՛ր, առավոտ,
Ծո՛ւխ, երկինք ելիր,
Հուրհրա նորից, հայրենի օջախ,
Խաղաղվիր նորից, արյուն իմ ցավոտ,
Ու թող համրանան քո շրթունքներին հառաչանք ու ախ...

Բացվի՛ր, առավոտ,
Թող քո լույսերը անձրևեն առատ,
Թող բարին քայլի
Ամեն կածանով ու արահետով,
Հայրենի աղբյուր, ցոլա՛ անարատ,
Ինչպես արցունքը հավատացյալի՝
Աղոթքից հետո:
Ու երբ զարթնում են մանուկները մեր,
Լույսով թաթախվում,
Դառնում ձնձղուկ և խառնվում են ծաղկին ու հովին,
Ու երբ արտույտն է
Հայրենի փոքրիկ մեր արտին կախվում,
Հաշտարա՛ր վսեմ,
Հաշտվում եմ քեզ հետ, հաշտվում ոգևին...
Հաշտվում եմ քեզ հետ,

Ջրաղա՛ց արդար, որ դար ու դարեր
Մեր խղճի մաքուր ալյուրն ես նյութել,
Փեթա՛կ անխափան,
Ծոցիդ մեջ առած ծաղիկ ու արև,
Մեր ոգու մեղրը զտել ես թույնից
Ու զտում ես դեռ...

Լուսարա՛ր անքուն,
Անպակաս արել յուղը կանթեղի
Ու հալածել ես չարքը մթության,
Դեղապե՛տ հմուտ,
Բուժիչ զորությամբ բանական դեղի
Մաղձը փարատել, մեզ ուժն ես տվել ողջամտության:

Դարբի՛ն կորովի,
Դու լույսի անխոց զրահ ես կռել,
Որ հագնենք ընդդեմ խավարի, չարի,
Դատավո՛ր արդար,
Մեր հավերժության վճիռն ես գրել,
Կնքել կնիքով քո սուրբ հանճարի:

Հավատում եմ ես,
Դու պիտի քայլես աշխարհե աշխարի,
Քեզ հետ քերթության մեր լույսը տանես...
Առաքյա՛լ անբիծ,
Դու ամենեցուն, իբրև սուրբ նշխար,
Մեր սիրո հացը պիտի բաժանես:
Պիտի ընթանաս
Այս ահեղ դարի ճամփեքով խրթին,
Մեր արդարության բարբառը հաստես,
Պարտիզպա՛ն հմուտ ու հրաշալի,
Աշխարհի սրտին
Մեր խղճի ոստը պիտի պատվաստես:

Հավատում եմ ես,
Հայոց աշխարհի լեռներից այս մով
Ալիքի նման դու պիտի պոկվես լույսով քո վերին,
Փոթորի՛կ անդուլ,
Պիտի հավերժող ալեբախումով
Մի քիչ մաքրություն խառնես աշխարհի պղտոր ծովերին:

Իսկ թե կա, իրոք,
Ու լինելու է դատաստան ահեղ,
Իսկ պատմությունը հաճախ է արդար ատյանն իր բացում...
Տառապյա՛լ դու մեծ,
Դու պիտի կանգնես
Մաքո՜ւր,
Փառահեղ,
Իբրև մի վկա,
Որ հավասար է հենց իրեն՝ Աստծուն...

1983

ՏԵՆԴ

...Ակունքին իջնեի ծունկի,
Այդ ջրից խմեի մի կում...

Հագինը կրակ է ու ծուխ,
Հագինը կարմիր է ու սև,
Իսկ ինքը աղջիկ է բարակ,
Երևի տասնվեց տարու...
Բացում է թևերը ահա,
Պարում է, ծփում է ասես,
Ծփում է իրանը ճկուն,
Կրծքերը դողում են առույգ:

Պարում է, ծփում է ասես,
Բարձրանում, իջնում է ներքև,
Կարմիրը և սևը խառնած,
Կրակե մրրիկ է դառնում...
Պարո՜ւմ է, պարո՜ւմ է, պարում,
Ու մի զույգ բարալիկ ձեռքեր
Քնքշորեն իջնում են ահա,
Արծաթե սկուտեղն առնում:

. . . . . .

Զարթնել եմ... գիշեր է խավար,
Քունքիս մեջ զարկեր են մուրճի,
Այս ի՞նչ է պատահել ինձ հետ,
Ո՞ւր էի և ո՞ւր եմ հասել...
Գիշերը աշխարհին թեքված
Մի հսկա գավաթ է սուրճի,

Ու մեկը մրուրով նրա
Իմ բախտն է գուշակում ասես:

...Իսկ հեռու գետակի ափին
Կանգնել է սևաչ մի մանուկ,
Նայում է, արև են բերում
Գետակի ջրերը ելած,
Եվ հետո քարեքար տալով,
Սպիտակ փրփուր են տանում,
Նայում է, չգիտե սակայն՝
Ամենն այդ ծիծաղ է, թե՞ լաց...

Նայում է, չգիտե սակայն,
Թե ինչո՞ւ ինչ-որ չար ձեռքեր
Քաշելով տանում են իրեն
Ու պոկում գետակի ափից...
Ախ, ամեն առավոտ այնտեղ
Կապուտակ հավքեր են երգել,
Իսկ բարդին խշշում էր խաղաղ,
Որ վերից աստղ ու ցող թափի:

Ախ, այնտեղ անուշ էր այնպես
Ծխի հոտն ու հոտը հացի,
Մայում էր սպիտակ մի գառ,
Եվ օրը լույսով էր լեցուն...
Նայում է, գետակը ոսկե
Ճերմակել, փոխվել է լացի,
Ճերմակած իր տատի նման
Հառաչում, ծնկներն է ծեծում:

...Բայց ո՞վ է հետևում պատի
Եվ ինչո՞ւ չի գալիս, ախ, ներս,
Այդ ո՞վ է իմ մասին խոսում,

Թե՞ ես եմ զառանցում ցավից.
«Ապրել ես այսքան ու այսքան,
Պոետի համարում ունես,
Էլ ո՞ւր ես երկնչում այդքան,
Էլ ո՞ւր ես վախենում մահից»...

Խավարը խտացել ասես
Ու վրաս ամպեր է փռել,
Որ մերթ տոթ քրտինք են քամում,
Մերթ փոխվում սարսուռ ու դողի:
Թվում է, ուր որ է ահա
Ուղեղիս ծալքերում հրե
Պիտի որ կայծակը շողա՝
Նման մի հանճարեղ տողի:

Այդ ո՞վ էր, դու ինքդ հուշիր,
Որ քսան տարեկան մեռավ,
Հանճարեղ տրտունջը ոգեց
Ու հանգավ իբրև հուր ասուպ...
Ինչո՞ւ ես հապաղում այդպես,
Շշնջա աղոթքդ լեռան
Ու գնա, միացիր հավետ
Մայրիկիդ ու հողին քո սուրբ:

Այդ ե՞րբ էր, որտե՞ղ եմ տեսել՝
Բարալիկ, մենավոր մի ծառ
Բռնկվել կրակով աշնան
Ու բոցը երկինք էր նետել,
Կապույտը անհուն էր այնպես,
Անհունը այնպես էր պայծառ,
Ու բոցը թրթիռ էր ոգու,
Ու բոցը ոգի էր թեթև:
Հիշո՞ւմ ես, աշխարհում մի օր

Ապրել է պոետ մի գանգուր,
Երգել է Շահանե ու սեր,
Դաշտային անամոք թախիծ...
Եվ այդպես գեղեցիկ, ջահել,
Եվ այդպես թեթև ու անփույթ,
Կտրել է երակը մի օր,
Կախվել է առաստաղից:

Չգիտեմ, ինչու են այս սև
Հուշերը շանթի պես զարկում,
Չգիտեմ՝ կայծակի սպին
Կապո՞ւյտ է լինում, թե՞ կարմիր...
Ախ, եթե մի հնար լիներ,
Թողնեիր իմ հոգին արթուն,
Իսկ ինքդ չքվեիր հավետ,
Իմ անզոր, տառապած մարմին:

Ախ, եթե մի հնար լիներ,
Մարեի քեզ, այրող իմ տենդ,
Գնայի լեռները մեր զով,
Կորչեի կապուտակ միգում:
Ես այնտեղ Լոր գյուղից վերև
Սառնորակ մի աղբյուր գիտեմ,
Ակունքին իջնեի ծունկի,
Այդ ջրից խմեի մի կում:

Ես գիտեմ, հաճախ է այդպես՝
Մի աղբյուր, շաղոտ մի ծաղիկ
Կամ գարնան ամպրոպ մի մաքուր
Կամ անհայտ, անծանոթ մի կին
Հայտնվում հրաշքի նման,
Քեզ հանկարծ փրկում են ցավից,
Ու կրկին աշխարհը անցավ,

Ու հաշտ է աշխարհը կրկին:
Բայց հիմա հոդերս նվում,
Հոդերս դարձել են հրե,
Թևերս կախվել են, որպես
Վիրավոր կռունկի թևեր,
Ուզում եմ շշնջալ, ասել.
«Ձեռքերս գլխիս տակ դրեք»,
Բայց բառը քարացել իմ մեջ,
Չի ելնում չոր կոկորդս ի վեր:

Երևի նման եմ հիմա
Աշխարհի առաջին մարդուն,
Որ ցավից ուզել է խոսել,
Շարժել է շուրթերը իր գոց,
Չեն ծնվել բառերը սակայն,
Բառերը տառապել արթուն,
Բառերը շուրթերը այրել,
Դարձել են հառաչ ու տնքոց:

. . . . . .

Հագինը կրակ է ու ծուխ,
Հագինը կարմիր է ու սև,
Ծփում է իրանը ձկուն,
Կրծքերը դողում են առույգ...
Աստված իմ, այդ ո՞վ է, ասա,
Հուշի՜ր ինձ, այդ ո՞ւր եմ տեսել,
Աստված իմ, չքնա՜ղ է որքան
Եվ հազիվ տասնվեց տարու:

Պարո՜ւմ է, պարո՜ւմ է, պարո՜ւմ,
Գալարվում բոցի պես ահեղ
Եվ այդպես գալարքով բոցի

Ծունկի է իջնում նա հլու...
Եվ հետո ելնում է կրկին
Ու կրկին սկսում է պարել,
Ձեռքերում սկուտեղն արծաթ
Ու վրան՝ մի արնոտ գլուխ...

. . . . . .

Այդ ո՞վ է հետևում պատի
Եվ ինչո՞ւ չի գալիս, ախ, ներս,
Այդ ո՞վ է իմ մասին խոսում,
Թե ես եմ զառանցում ցավից,
«Ապրել ես այսքան ու այսքան,
Պոետի համարում ունես,
Էլ ո՞ւր ես երկնչում այդքան,
Էլ ո՞ւր ես վախենում մահից»:

Հասկացի՛ր, վախ չունեմ ես, ո՛չ,
Ես գիտեմ, վայրկյան է դա լոկ,
Ես գիտեմ, ցավ չկա բնավ,
Կա միայն կտրվող մի թել...
Եվ սակայն իմ խորքից մի ձայն
Ինքն իրեն արձագանք տալով,
Ասում է. «Ստո՛ւմ ես, ներիր,
Ու մեղք է ցավի մեջ ստել»:

Հասկացի՛ր, ասում եմ կրկին,
Դու զուր ես բարբառում, ա՜խ, զուր,
Աշխարհում կարող էի ես
Վաղուց, շատ վաղուց չլինել:
Ես եղա կռվում այն ահեղ,
Հյուսիսի հողմերի մեջ ցուրտ...
Մի գիշեր, սոսկալի, հոգնած,

Ձյան մեջ եմ, հասկացիր, քնել:

Ու քունս թեթև էր այնպես,
Ես ասես ամպերից կառչել
Ու թեթև փետուրի նման
Բարձրանում, վեր էի հառնում...
Այդպես է, ասում են, երբ մարդ
Քնի մեջ սկսեց սառչել,
Ինքն այդպես անկշիռ, թեթև,
Մահն այդպես անցավ է դառնում:

Եվ զուր ես բարբառում այդպես,
Ես մահից վախ չունեմ բնավ,
Ես նրան մոտիկ եմ եղել,
Ես անգամ տեսել եմ նրան...
Եվ սակայն, սատանա՛ն տանի,
Արշալույսն, ա՜խ, շա՜տ է չքնաղ,
Չքնաղ է ծաղիկը ցողոտ,
Հրա՜շք է աղբյուրը լեռան:

Հրա՜շք է շշուկը աստղի,
Մամուռի արցունքը՝ հրաշք,
Հրաշք է այն դողը թեթև,
Որ կապույտ ավարտն է բոցի,
Հրաշք է շամանդաղը լուրթ
Վաղորդյան անդունդի վրա,
Հրա՜շք է բուրմունքը՝ բխած
Կանացի լուսեղեն ծոցից:

Եվ դեռ կան վայրկյաններ վերին,
Որ կանչել ու կանչում են դեռ,
Եվ դեռ կա առեղծված մի մեծ՝
Արարման մուժի պես թովիչ,

Եվ բավ է առնչվի հանկարծ
Ինձ նրանց ծվենը թեթև,
Որ հոգիս հրեղեն դողով
Վերանա մեղավոր հողից:

...Բայց գիշերն այս ինչքան երկար,
Եվ լույսն այս ինչքան է դեղին,
Այրվում եմ, թվում է դարեր
Հենց այսպես խաչված եմ եղել...
Ու ջուր են շուրթերիս քսում,
Ու ջուրը թվում է լեղի,
Թվում է՝ ափերիս մեջ խոր
Խրվել են ժանգոտած մեխեր:

Թվում է՝ գալարվում ահա,
Ելնում է սնկաձև մի ծուխ,
Կախվում է աշխարհի վրա
Իբրև մի անողոք հարցում...
Ծխի մեջ ճչում ու իսկույն
Կորչում է խարտյաշ մի մանուկ,
Ու հետո դողում է կոպիս
Մի խոշոր, շողուն մի արցունք:

Այդպես էլ չիմացա կյանքում,
Թե արցունքն ինչո՞ւ է շողուն,
Ինչո՞ւ է նա այդքան հստակ,
Երբ դառն է այսքան ու աղի...
Հիմա էլ չգիտեմ նույնիսկ
Ինչո՞ւ ես կոպերիս դողում,
Արմատդ ցավիս մեջ խրած
Արցունքի հրեղեն ծաղիկ:
Ասում են, թե մարդուց բացի

Ձիերն էլ արտասվել գիտեն,
Ձիերն էլ կարոտից լալիս,
Կախում են բաշերը տխուր:
Նժույգնե՛ր, ձեզ շատ եմ սիրել,
Ձեր խոշոր աչքերն են իմ դեմ,
Նժույգներ, այս գիշեր գայիք,
Տանեիք, դուք գիտեք, ա՜խ, ուր...

Լեռներում կապույտ է ու զով,
Լեռներում քամին է զնգում,
Լեռներում ցավ չկա բնավ,
Կա միայն թախիծ մի թեթև,
Նժույգներ, իմ կրծքի վրա
Փռեիք բաշերդ քնքուշ,
Սուրայիք հովերի միջով,
Մարմինս հանեիք եթեր:

Այդ ո՞վ էր, չեմ հիշում հիմա,
Հներից, քաջերից մեր սեգ,
Ցավի մեջ գալարվել անքուն,
Մորմոքել, հառաչել մի օր,
Թե մահն իր վատթար է, քանզի
Անկողնում պառկած է հասել,
Երանի, հազա՜ր երանի,
«Դիպեալ էր ի վերա ձիոյ»...

. . . . . .

Հագինը կրակ է ու ծուխ,
Հագինը կարմիր է ու սև,
Ծփում է իրանը ճկուն,
Դողում են զիստերը նրբին...
Կարմիրը և սևը խառնել,

Պարում է, պարում է թեթև,
Ձեռքերում սկուտեղն արծաթ
Ու վրան՝ Գլուխը սրբի...

Սալոմե՛, այդ դու ես, գիտեմ,
Կյանքի պես չքնաղ ու ջահել,
Կյանքի պես դաժան ու ահեղ,
Սալոմե՛, այդ դու ես, գիտեմ,
Արնամած գլուխը սրբի
Բարալիկ ձեռքերով պահել,
Պարել ես դարեր ու դարեր,
Հիմա էլ պարում ես իմ դեմ:

. . . . . .

Այդ ի՞նչ է մթան մեջ հեռու,
Թափո՞ր է արդյոք, թե՞ անտառ...
Թվում է, հողմեր են ելնում
Եվ պիտի ուր որ է վայեն:
Թվում է, մթան մեջ նստել,
Քամու հետ սուլում է դանդաղ
Եվ նորից դանակ է սրում
Մի ինչ-որ սևադեմ Կայեն:

Ու շեղբը ցոլում է մթնում,
Ու շեղբը ցոլանք է տալիս,
Ու շեղբի ցոլցլուն սայրին
Խիղճն ինքն է արնոտվում ասես:
Եվ հետո խավարի խորքից
Մի զսպված քրքիջ է գալիս,
Երևի ծիծաղը մահու
Եվ մահու կատակն է դա սև:

Ու ահա թեքվում է վրաս

Մի գունատ, ոգեղեն մի դեմք,
Քիթը կեռ, աչքերի մեջ խոր
Հրաշքի տեսիլք է ու բոց...
Շշնջում, ասում է կարծես,
Թե ի՜նչ է քո ցավն իմի դեմ,
Ինձանից խլեցին հավետ
Մի վերին սրբություն սրբոց:

Մարմինս ցնդել էր ասես,
Թափանցիկ ոգի էր դարձել,
Ոգու պես այրվում էր անվերջ՝
Նաիրյան մորմոքը վրան:
Եվ սակայն մթան մեջ ահեղ
Բարձրացավ անողոք մի ձեռք,
«Նավզիկեն» անմշակ մնաց
Ու կիսատ՝ «Աղոթքը լեռան»:

Ասում եմ՝ վարպետաց վարպետ,
Ցավը չէ ինձ այդքան տանջում,
Դեռ ունեմ չքված մեղքեր,
Մուրհակներ ունեմ չմարած,
Դեռ հեռու-հեռավոր ափից
Անհայտի խորհուրդն է կանչում,
Ծաղիկը՝ հրաշքի նման
Ու ցողը աստղի պես վառած:

Դեռ մեղքեր ունեմ չքված,
Ակամա ու կամա մեղքեր,
Որ գալիս ու սիրտս են խրվում
Իբրև խայթ, իբրև փուշ ու մառ...
Այդ ե՞րբ էր, կապուտակ մի բոց
Իմ սիրտը մեջտեղից ձեղքել,
Ցերեկն ինձ հարբած էր պահում

Եվ ամբողջ գիշերը՝ խումար:
Ու եղավ հանձարեղ մի օր,
Նա ասաց. ո՞ւր կուզես գնանք,
Ես այսօր շռա՛յլ եմ ասաց,
Ես այսօր նման եմ հողի...
Ի՞նչ ասեմ քեզ, անզոր իմ սիրտ,
Չգտար ճամփա ու հնար,
Եվ թռավ վայրկյանը հավետ,
Ծուխ դարձավ ու դարձավ մոխիր:

Կապուտակ այդ բոցի համար
Դու պիտի քո կյանքը տայիր,
Պահեիր, ինչպես մեր նախնիք
Սրբազան կրակն են պահել:
Իսկ հիմա ամեն ինչ կորած,
Ամեն ինչ փոխվել է ցավի,
Ու սրտիդ ավերի վրա
Սգում է կսկիծը ահեղ:

Եվ մեղքեր ունեմ չքաված,
Որ արդեն անզոր եմ քավել,
Որ պիտի ցավիս հետ տանեմ
Ու խառնեմ մեղավոր հողին:
Իմ մայրը գիշերը մեռավ,
Երբ հանգիստ քնած եմ եղել,
Չտվի համբույրս վերջին,
Մահու դեմ մեն-մենակ թողի:

Եվ մեղքեր ունեմ չգործած,
Որ սակայն առավել լեղի,
Առավել թունոտ մի խայթով
Խոցել են ու խիղճս պեղել...

Որտեղ որ արնել է մի սիրտ,
Մոլեգնել սարսափը դեղին,
Թվում է, ես էլ եմ կյանքում
Այդ չարին մեղսակից եղել:

Ի՞նչ ասեմ, Նարեկա վանքի
Ճգնավոր ահեղ ու արդար,
Որ ինձ էլ քո ձորտը արիր,
Որ ես էլ աղոթեմ առ քեզ,
Որ անգամ տենդի մեջ այս տոթ
Ինքս իմ վճիռը կարդամ,
Չգործած մեղքերիս համար
Ինքս ինձ պատեպատ զարկեմ:

Եվ պարտքեր ունեմ չմարած,
Չմարած մուրհակներ ունեմ,
Ու դեռ կան մոգական բառեր,
Որ փնտրել ու դեռ չեմ գտել:
Հոգուս մեջ դողում է անվերջ
Թախծության հրաշքը գունեղ
Եվ նյութը ոգու հետ կապող
Աննշմար, հրեղեն, մի թել:

Գեղարդա վիմափոր վանքի
Հանձարեղ վարպետին եմ պարտք,
Ծնկածալ աղոթք եմ ես պարտք
Տքնանքիդ, քարագործ Մոմիկ:
Ես պարտք եմ ժայռերից կորզած
Ձեր ոգուն խոնարհ ու հպարտ,
Պարտք եմ ձեր հրաշքին անձառ,
Ձեր անձար ծարավ ու ծոմին:

Չգիտեմ, որտե՞ղ եմ տեսել,

Երևի ձորում էր Գառնո,
Մի բեկոր ապառաժ քարից
Մի կաթիլ արցունք էր ծորում,
Այդ կապույտ կաթիլից ծնվել,
Ցոլում էր ծաղիկ մի արնոտ,
Արցունքից ծնված այդ ծաղկին
Ես պարտք եմ թախիծ մի խորունկ:

Մի հսկա քնքշություն եմ պարտք
Խանդի պես այրվող մի կնոջ,
Որ մի օր իմ խուցը եկավ,
Երբ սիրտս հոգնած էր ու ծեր,
Եկավ նա հողմի պես վայրի
Ու եկավ նա իբրև շնորհ,
Որ հետո օրերիս վրա
Իր վայրի քնքշանքը գցեր...
. . . . . .

Հագինը կարմիր է ու սև,
Հագինը՝ կրակ ու արյուն,
Հագինը վառվում է անվերջ,
Այրում է զիստեր ու իրան...
Ա՜խ, այդպես չքնաղ ու թեթև
Այդ մե՛ղքն է աշխարհում պարում
Ձեռքերին սկուտեղն արծաթ,
Արնամած գլուխը վրան:

. . . . . .

Զարթնել եմ... Գիշեր է նորից,
Քունքիս մեջ զարկեր են մուրճի,
Այս ի՞նչ է կատարվել ինձ հետ,
Ո՞ւր էի և ո՞ւր եմ հասել...
Գիշերը աշխարհին թեքված

Մի հսկա գավաթ է սուրձի,
Ու մեկը մրուրով նրա
Իմ բախտն է գուշակում ասես:

Գուշակի՛ր, մի քաշվիր, ասա՛,
Ես ինքս էլ տեսնում եմ անգամ,
Որ նրա մրուրի մեջ սև
Հազիվհազ մի աստղ է դողում:
Բռնում եմ ես շողը նրա,
Ուզում եմ քայլ անել դանդաղ,
Բայց մինչև ծնկներս, ավաղ,
Խրվում եմ, թաղվում եմ հողում:

Խրվում եմ, թաղվում եմ ուժատ,
Ասես թե Միերն եմ ես որբ,
Հոդերս նվում են սաստիկ,
Ցավում են կոպերս մարող:
Բայց շողը ամուր եմ բռնել,
Բռնել եմ ձառագայթն այդ բորբ
Ու ինքս խորհում եմ իմ մեջ,
Որ դա հենց քո շողն է, Կարո՛տ...

Կարծում եք վաղո՞ւց է արդեն,
Ինչ կյանքում հրաշքներ չկան,
Կարծում եք վաղո՞ւց են արդեն
Կարոտն ու հավատը մեռել...
Եվ ահա հավատով քուրմի
Այդ ոսկե աստղի դեմ ծնկած,
Ուզում եմ մոգական խոսքով
Երկնքից նրան վար բերել:

Ու նա էլ ցոլանքով իր հուր
Հմայում ու ինձ է կանչում...
Չգիտեմ, նա՞ է ցած գալիս,

Թե՞ ես եմ սլանում եթեր...
Մեր տունը, հովիտն է այնտեղ,
Մեր ոսկե գետակն է հնչում,
Կապույտի թրթիռը հագած,
Մեր բարդին դողում է թեթև:

Ախ, այնպես անուշ է այնտեղ
Ծխի հոտն ու հոտը հացի,
Եվ շաղոտ խոտերում կորած
Սպիտակ մի գառ է մայում...
Թվում է, թե ոչինչ չկա
Կապույտից ու լույսից բացի,
Ու մայրս թեքվել է վրաս,
Թեքվել ու վերքիս է նայում:

Նայում է, մատներով բարակ
Առնում է արևի մի շող
Ու նրա ասեղով ոսկե
Իմ ցավի փշերը հանում...
Ու հետո լեռնային ճամփան
Զրնգուն հովերի միջով
Մեզ տանում ակունքն այդ գետի,
Մեզ դեպի երկինք է տանում...

1983

ԱՍՔ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ

Տուր ինձ խորհուրդը
Քո այդ սրբազան խելագարության...

Եվ ամբողջ գիշեր
Հայոց աշխարհում տագնապ էր ու ցավ,
Եվ ամբողջ գիշեր
Մոլեգնեց սարսափն ու ահագնացավ,
Կույր բախտի նման
Խավարում վայեց չարագույժ մի բու,
Կույր մոլուցքի պես
Երկարեց ոռնոց մի արյունարբու,
Մահը ողջ գիշեր
Հեսանում էր ժանտ ժանիքը գայլի,
Որ կուրծքը ձեղքի
Ու խմի արյունն արևագալի...

Հույսը՝ հոգեվար,
Հավատը կույրի բիբ էր ձերմակած...
Եվ սակայն հրաշք՝
Հայոց պղինձը արթնացավ հանկարծ...
Լուսաբացի դեմ
Արթնացան հանկարծ զանգակներն ամեն,
Մեկը՝ հեծություն,
Մեկը՝ դեռ անզոր վրեժ էր ու քեն,
Մեկը՝ մորմոք էր,
Մեկը՝ նաիրյան անամոք թախիծ,
Մեկը՝ հառաչանք,

Պոկված մեր բախտի մթին անձավից,
Մեկը՝ մայրորեն
Ծնկները ծեծող աղերսանք ու կոծ,
Մեկը՝ հարսի լաց,
Մեկը՝ որբության մրսած հեկեկոց,
Մեկը՝ բարալիկ,
Շատ էր բարալիկ, որպես հուսո թել,
Ու մեկն աղոթք էր,
Որ ոգու թևով երկինք էր միտել,
Հասել էր Աստծո կապույտ դռներին,
Սեմն էր համբուրում շուրթերով պապակ,
Ծեծում էր, ծեծում հավատով խորին,
Բայց Աստծո դուռը շանթերով էր փակ...

...Հայոց աշխարհում
Կարմիր մայիս է ու կապույտ մի լույս,
Եվ լույսերի մեջ
Կանգնած է մենակ բոբիկ մի Հիսուս,
Շուրթերի վրա
Դեռ գեթսեմանյան գավաթի լեղին,
Կանգնել է մենակ,
Լալու չափ շվար, մահու չափ դեղին,
Ամենայն ինչից
Եվ անգամ շնչից արյուն է ծորում,
Եվ սիրտն է միայն
Սև սքեմի տակ աստղի պես ցոլում...
Կանգնել է մենակ...

Իսկ մշուշի մեջ արևագալի
Բանակ է ոխի, քանակ է գայլի,
Արնոտ երախ է,
Որ որոճում է ոճիրն իբրև քաղց,

Արյան ծարավ է
Ու արյան հոտից խենթացող կաղկանձ...
Հիսուս իմ բոբիկ,
Մահդ ստույգ է, քեզ հոշոտելով,
Քո վերջին արյան
Վերջին սրբազան շիթը ոթելով,
Ուր որ է պիտի
Աստղի պես ցոլուն քո սիրտը ճանկի
Ու նստի վերջին մի խրախճանքի...

Երկի՜ր Հայաստան,
Դու՝ խղճի Հիսուս, դու՝ սիրո հանճար,
Հաճախ եմ տեսնում ես պահն այդ զարհուր,
Վեր թռչում, վանում մղձավանջն այդ չար,
Հետո ողջ գիշեր տվայտում եմ լուռ,
Հետո ողջ գիշեր մորմոքով արթուն,
Ես՝ որդիդ նվաստ, ես՝ հետին քերթող,
Առեղծվածներիդ մատյանն եմ կարդում,
Ջանում վերծանել գեթ մի բառ, մի տող,
Եվ բառերն, ասես,
Ինձ աստղերի պես աչքով են անում,
Բայց ես հրեղեն
Այդ ակնարկները լավ չեմ հասկանում...

Ու չեմ հասկանում, ինչպես արթնացավ,
Ինչպես խենթացավ ու ահագնացավ
Պղինձը ջղիդ, պղինձը ոգուդ...
Պղինձը՝ հրաշք ու պղինձը՝ գյուտ,
Պղինձը՝ ցասում ու պղինձը՝ ոխ,
Պղինձը՝ երակ մի խելագարվող
Պղինձը՝ արյան աղաղակ ու ճիչ,
Պղինձը՝ համրի ահավոր կռինչ,

Պղինձն՝ ընդերքի ղողանջն առաջին,
Երկնքի վերջին ու ահեղ կանչը:

Եվ առաջինը՝ հլու այդ կանչին,
Եկավ նա ինքը՝ մեծասքանչը,
Եկավ մայրենին, մեր հրե սյունը,
Մեր տառապյալը, մեր հողմասունը,
Բյուր անգամ կիզված մեր այդ անկեզը,
Մեր ինքնությունը, մեր գոյն ու «ես»-ը...
Բոբիկ ոտքերին
Նախաստեղծության մշուշ էր ու ցող,
Շրթունքները դեռ
Ցոլցլում էին եղեգան բոցով,
Ցորյանի համը,
Խորհուրդ խորինը և սքանչելին,
Գումարել էր նա
Սուրբ Ավարայրից առած կանչերին,
Նա, որ դարեդար
Ծեծվեց այն քոչվոր հողմ ու խավարով,
Բայց և դարեդար
Խղճի նշխարով ու լույսով սնվեց,
Եկավ գերագույն իր զորավարով
Ու զինվորներով իր երեսունվեց...

Եվ ահա պոկված
Մամռած որմերից հին Զվարթնոցի,
Քարե արծիվը՝
Կեռ կտուցի մեջ ծվենը բոցի,
Իսկ թևերի մեջ կապույտ մի շառաչ,
Բարձրացավ երկինք ու թևատարած՝
Ծողերի միջով արևագալի
Սլացավ դեպի ոհմակը գայլի...

Գեղեցկությունը պարզելով մահին,
Խաչքարը եկավ իբրև շարքային,
Եկավ ու կանգնեց դաշտի մեջ այն բաց,
Կանգնեց գեղեցիկ, որպես առեղծված:
Մամռած էր ու հին, բայց այնքան անեղծ,
Հիասքանչորեն այնքան տանջալի,
Որ ասես ոտքը հենց նոր դուրս հանեց
Քուրայից Աստծո և կամ հանձարի...

Եվ եկավ ահա
Ինքը՝ սուրբ խենթը, ինքը՝ վրեժը,
Բոցերի բոցը, ամենաթեժը,
Եկավ նա արդար, եկավ ոգեղեն,
Եկավ նա հպարտ ու ինքնավայել,
Նա, որ տեսել էր Դեր-Զոր ու գեհեն
Եվ անզորության սև խայթից վայել,
Հիմա բարձրացել, ելել մոլեգին,
Մերթ ցոլցլում էր, որպես Աստծո սուր,
Մերթ ճչում, որպես խելագար մի կին,
Անեծքով խանձում երկինքը լազուր...
Ելած Սասունից ու Խանասորից,
Նահատակները գալիս էին դեռ,
Մանուկներ էին գալիս Դեր-Զորից,
Որպես սրբերի ահարկու գնդեր...
Եվ գալիս էին
Եփրատ շպրտված աղջիկներն անբիծ,
Սավառնում էին
Հրեշտակների նման հրեղեն,
Կայծակներ խլում,
Շանթ էին խլում գարնան խոլ ամպից,
Որ այդ ոհմակի ողերին խրեն...

Եվ մահն էր գալիս,
Բայց ոչ այն կույրը, անիմանալին,
Այլ իմացյալը, որ քույրն է կյանքի,
Նա, որ նման է
Ցորյանի, ցողի, անձրևի մահին
Եվ գեղեցիկ է
Ընկնող աստղի պես ու ներշնչանքի:
Այդ մահն էր գալիս նման սուրբ ոխի,
Որ մութ կասկածը հավատի փոխի,
Հուսո նշույլը՝ արևածագի,
Անթեղված կայծը՝ ահեղ կայծակի,
Որ ոգու ողբը դարձնի մռունչ,
Սրտերը՝ քուրա, մատները՝ բռունցք,
Ըմբոստությունը՝ խելագարություն,
Ավարտը՝ սկիզբ, մահը՝ հարություն...

Լռություն եղավ...
Եվ լռության մեջ
Ոգեց Արարատն իբրև մարգարե,
Ոգեցին հանկարծ
Անդունդներն ամեն կոկորդով քարե,
Իրենց խորքերից
Առասպելների բամբյունը հանած,
Որոտում էին
Քարանձավները մեր խավարամած,
Մեր պղնձաշուրթ
Քարափներն էին վերացած ոգում,
Որձաքարը բիրտ
Պղնձե ջղից ղողանջ էր պոկում,
Անգամ լեռնային
Կապույտ մի ծաղիկ, պատռած քողը ձյան,
Խառնել էր նրանց ձայնն իր թախծության...

Եվ այդ ձայները
Ահագնանալով, փոխվում ամպրոպի,
Ելնում էին վեր,
Իբրև հառաչն ու բողոքը Հոբի...

Եվ փա՛ռք քեզ, ամպրոպ,
Քեզ, որ փոխվեցիր տեղատարափի...
Լույսի շառաչ էր,
Սրբության մեռոն, ցող էր հավատի,
Եվ մենք, որ ասես
Խեղված էինք, խեղճ, ցավից աղարտված,
Սպառված ոգի,
Ծվատված մարմին, հույս էինք պարտված,
Հանկարծ բարձրացանք,
Կնքվեցինք լույսի շանթով, կայծակով
Ու մաքրվեցինք
Մի անպարագիծ արևածագով:

Շանթի հարվածից
Մեր սիրտը բացվեց, որպես գաղտնարան,
Հրաշք՝ այնտեղ էր
Մեր անխոց ոգին, մեր չքնաղ Արան...
Եվ ահա կրկին
Պղինձը զնգաց հայոց ընդերքում,
Եվ հայոց շուրթին
Արդեն խենթության տարերքն էր երգում,
Հուսո նշույլը
Արդեն փոխվում էր արևածագի,
Անթեղված կայծը՝ ահեղ կայծակի,
Հառաչը արդեն դառնում էր մռունչ,
Սիրտը՝ շեկ քուրա, մատները՝ բռունցք,
Ցասումի ցուլը

Գնում էր արդեն խոյահարության,
Եվ ինչ-որ տեղից
Ցոլում էր ասես լույսը հարության...
Կա՛նգ առ, ակնթարթ,
Նայիր, ամենից սուրբն ու սոսկալին,
Որ ընդառաջ է ընթանում գայլին,
Դեր-Զորից եկած
Այն մանուկների գունդն է ահարկու,
Նայիր, թե նրանց
Թաթիկները թույլ ինչպես են զարկում...
Եվ կրկին նայիր,
Կույսերն այն ննջած Եփրատի ջրում,
Որ փոխվել ոգու և հրեշտակի,
Գայլի ողերին ինչպես են խրում
Իրենց ցասումի շանթը շեշտակի...

Կա՛նգ առ, ակնթարթ,
Դու, որ վեհորեն արդար ես այդքան
Եվ արդարորեն այդքան պանծալի,
Կա՛նգ առ ու նայիր, թե գեհենական
Ինչ սարսափով են
Մարում աչքերն այդ սովահար գայլի:

Եվ նայիր նաև,
Թե իմ մայրենին իր արդարությամբ
Ինչպես է չարի թաթը թրատում,
Նայիր խաչքարին,
Տես, թե հրաշքի փխրուն բարությամբ
Ինչպես է ոխի ժանիքը ջարդում:

Եվ լյառն Արարատ
Նայում էր ահեղ վեհափառությամբ

Եվ անդունդներից
Հղում էր անվերջ օրհնությունն իր բամբ,
– Զա՛րկ, իմ տառապյալ,
Զա՛րկ, իմ հրեղեն, զա՛րկ, իմ պանծալի,
Քո ձեռքերի մեջ
Սուր չէ, կռինչ է, մռունչ է ցավի,
Քո ձեռքերի մեջ
Մանկան հառաչ է, անեծք մայրական,
Զա՛րկ, իմ սխրալի,
Եվ թող, որ լինի ակն ընդ ական:
Եվ անգամ արտույտն իմ ոսկեթևիկ
Երկինք վերացել,
Նա, որ ողջ կյանքում
Ցորենի ծիլն է ոսկու վերածել,
Նա, որ ողջ կյանքում
Աշխարհն է օծել միայն օրհնությամբ,
Իր ձռվողյունի
Ցասումն էր խառնել որոտին այդ բամբ...

Եվ հողն իմ հայոց
Ցավն իր թոթափում, դառնում էր ոգի,
Եվ հողն իմ հայոց
Փոխվում սրբազան խելագարության,
Եվ հողն իմ հայոց
Փոխվում կախարդի, փոխվում էր մոգի,
Որ առաջինը աշխարհում արար
Մահը վերածի ստույգ հարության...
Փա՛ռք քեզ, ակնթարթ,
Փա՛ռք, որ լսեցիր,
Թե գայլի մեջքը ոնց է ձարձատում,
Թե ժանիքներից թույնի ու մաղձի
Անզորությունը ինչպես է կաթում:

Փա՛ռք, որ լսեցիր,
Թե պարտված չարն ինչ քսու է վայում,
Ինչ աղիողորմ,
Ինչ զարհուրիկ է լացը չախկալի,
Փա՛ռք, որ ի վերջո
Չտեսնվածը տեսար աշխարհում,
Տեսար արնամած արցունքն այդ գայլի...

Լռեց ամեն ինչ...
Լռեց ամպրոպն իր շանթ ու կայծակով,
Ծիածան եղավ,
Կամար էր ասես կապուտակ վանքի,
Մեր մահն էր անցնում
Այդ ծիածանի կամարի տակով
Ու փոխվում կյանքի...

Մայր Հայաստանը
Սևի տեղ հագնում ճառագայթ փառաց,
Հարության հրաշքն,
Իբրև մերկ մանուկ ձեռքերին առած,
Պարզում էր վերև,
Պարզում արևին, պարզում երկնքին,
Որ լույսով, ցողով
Ու արծիվների կռինչով կնքի...
Լսի՛ր զինվորիդ,
Դաշտ իմ ոգեղեն, իմ Սարդարապատ,
Զանգ իմ պղնձե,
Ցուլ իմ կորովի, քարակոփ իմ պատ,
Գիտեմ, ախ, գիտեմ,
Դեռ չի ավարտվել մարտն այդ խելահեղ,
Ու երբ տանջում է ինձ կասկածն ահեղ,
Երբ հույսն իմ նվում ու լաց է լինում,

Երբ տագնապներն են խոցում ինձ խորին,
Գալիս եմ այստեղ ու ապավինում
Քարե ցուլերիդ կարմիր կորովին,
Քո արծիվներին, սլացքին քո սյան
Ու զանգակներին այս կոմիտասյան...

Ոչինչ չեմ հայցում ես արդեն կյանքից,
Կուշտ եմ և՛ ցավից, և՛ տառապանքից,
Լոկ քեզնից ունեմ ես հայցում մի լուռ,
Հող իմ, հրաշք իմ, դաշտ իմ հարության,
Քո պղնձաջիղ այդ ընդերքների
Գաղտնիքը ինձ տուր,
Տուր ինձ խորհուրդը
Քո այդ սրբազան խելագարության...

1988, մայիս

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ



Անգամ

Անգամ. ես կամ կյանքում ոչ մի երգ չունեմ մի հանգ գրած,
Ես չեմ կանգնել երգչուհու առաջ փոխարկել ֆառ,
Խորհել եմ միայն, որ կամ աշխարհում մի այլ ազգում
Լեզվում գոնաստան ու այսքան բառ:

Գիշեր և հիմա... քայլում եմ ու ցանկանում,
Եվ հուզվում եմ դու նրա նման ազնվորեն դեռևս վառվում,
Մի քանի ես գոյություն ունենում ես ու ոչ մի բան հասում,
Անցնում ես խաղաղ մի հանգիստում:

Երբեմ խորհիր, որ ասվում կարդվեց ու «ներքեմ» կարդում,
Հարցնում էի ես, իսկ դու վա ասվեց ինչ էիր խոսում,
Ձանձրանում վառ դարձում էր ասես այլ լայնում ապրում,
Որ գնում ես լաց վազելիս մեջ ասելը:

Լայն լայնորդ մեջ երբեմ մեր ցան քարերն էր խշշում,
Լարնաթ էր ցատում ու լայն էր ցատում հեռավոր մի գիրք,
Կարդ հուշանիկ ըմբռնել ապրեր ամեն մի վշում
Ու խաղ էր ասում իմ մանկությունս հետ:

Դու մանկությունս-ում կցանեն վիթ հեր իրար սարդ ոգեղոյ,
Ցեռան ջրերում կցանեն խաղաղ այլ մրցաշարդ,
Կցանեն վիթ հեր մի կարմիր, կապույտ, մի կարմիր աշխարհ,
Եվ համբ հայր և համբ ապրի:

Հարազատ եմ, մայրիկ, դու խեղճ իմ արյունդ, խորունկ իմ յուղի,
Դու՝ առաջին տեսարանդ, դու՝ զարգացման վիճակդ ահռելի պայծառ,
Գիտեմ օրերում, երբ ոչինչ արթուն ու անդուռ չունի,
Հարյուրամյակներ արդեն անվերջ...

– 2 –

Ու երբ մեր շեմերը կարծես ասեղներն վիրակ մի առնում,
Ոչի պիտի գնանք մեր գուգանարան, մեր խեղճը կանգ...
Հարազատ եմ, մայրիկ, ընտիր եմ տանջանք, այդ քիչ եմ ասում,
Եմ՝ ոգեղ, ներկայան պիտի արձանում...

Յակոբ Գրիգորյան

1980

Պարոյր Սևակին

Պ... ոչ հյուրամ եղբեկ գիր կրքամ խեղ գիր,
Հիրա ասվեր կրեվոր, գասարդ հրաց ու գասրեր.
Գրանիս ու ասլան են ասաս, թե ոչ երբ գրաղասվեր
Ու գարասվերեան հիր գրաս, իսկ հեռ մեռաս ուր կարեր...

Գրե գասվեր վեր ամերիկ վերջաց ասրեն լասվեր.
Ամեներ ի վերջաց ու գի ճրաս ի՞նչ ասրաս,
Հիրա ասրամ ես, ասես, խրաս, գրասրեր ինչ գասրեր,
Ամենա գրանիս ես ասվեր, ասրվեր ես, խասրաս...

Եղասրվես ոչիս ես ասրամ ես հիր գասրաս վերեր.
— Գասրեր ինչ, — ասասրեր գրասրեր հի ասրաս ես ասրեր,
Բ ասրեր ասրեր ասրեր ասրվասրամ ինչ ես հիրամ խասրեր
Ու գասրամաս խասրաս, ասվաջ գասրասրեր հեչ կասրասրեն...

Շրջասրեր ինչ՝ — Հիրա...
իսկ ինչաս Տասրեր կա ես գասրաս,
„Հիրա՞" կասրամ կա հի ան „ինչաս՞" գիրեր կա գա գասրեր...
Հիրա կասրեն հի ես, գասրասրեր հաս գա գասրամ,
Գասրասրասրամ իսկ խասրամեն գրասրեր ասրասրեն...

...Ինչա ասասրեր կասրեն ասրեր գասրա ի ասրասրեն,
ինչ հի գա ասրեր. իսկ գասրեր, իսկ խասրեր, իսկ ասասրեր,
Եվ ասրեր հիրաս ես գասրամ, ասրասրեն գիրեն գա գասրեր,
Եվ ասրեր հիրաս ես հիրամ, ասրասրեն գասրասրեն ասրեն գասրամ...

Լևոն Գասրամեան

24/VI.82

– 3 –

Եվ վեկ են գիշերն հազար սին ցեղերը անեղ հեռանքներ,
Գոռ այս ազգում դու նշեր արդար ու նշեր տիրոջ։
Հուր խոսքեր գոռան գ մեռանքներ։

Մոլոր ուռեցյալ դու խաղաղության շուրջը վիթխարի,
Հիշեր ուռուց արդարության դրոշն մաքուր,
Իսկ թշ վիշ կ պիտի։
Քանի գիր սառույցով իմ քարյուղաթեթի
Հայոց մաքուրն իր ոչիր գոռ։

... Գիշերը ամբողջ ընկերոջ ասպետի արյունոտ կոպիտ։
Եվ աչքերի կամ ժեղրակ ճշտի հեռու ալիքներ,
Լցուռ իմ Արարատ տուռ հեռուն մեջ ցնծայուն Հայրենի
Լեռներն հր խաղաղ
Լեշերի,
Կարմիր
Ու հավերժի հեռու։

Հայոց սառույցներ,
Գոռ, որ տուռ են հավերժության,
Գոռ, որ հավերժն են,
Ուղարկեր նշեր իմ Արարատին,
Լուռիր ծխոտին մի լույս կամարյան այս ծաղիկ տուռ,
Լեռներում այս տրուռ մի վիթխար ու արդար գոռան։





Երգ

Դարձ է ապրել, բա՞ զարթ... Ես արդեն գիտեմ,
Աշխարհ գիտեմ է ուրախ երգել փարոսին...
Ու զգվարում եմ ինձանից ես այլ ապրելու,
Որ դեռևս ես սպասում դղրդոց ունեմ։

Ամպագոգում է, արդեն խելքս, արդեն սեր է գալիս,
Ու գնդիկով, գնդիկով, արդեն բանաստեղծությունս...
Բանի ինձանց է տեսա ես դեղով իմ ցավերս,
Թեթևանում է ճանապարհս փարոսով ես ելնում։

Իսկ ես դղրդոց ունեմ, բանանում է գնա,
Բանանում է սիրտս գնա ես մարդ հանգիստ,
Բարձրանում ահագնանք արյունքս է սառել
Ու մարդիկ մեզ նայում կանգնած է մեզանից։

Բայց գիտեմ մեզ հանգիստ դեռ է ես ապրի,
Ոնցի ցավերդ է կանգնում երբեմ ապրելուն։
Անգամանալ թեզանց ցնծի երգ է խառնել
Եկիր լույսի հետ սառած ես լայնում ցավերդ։

Ես մտածում եմ արդեն իմ երգերդ է գրա,
Որ թեզ հետ ես գլխարկում խելքս խելքն ես նրա,
Դա պրոցեսի իմ մասով ես պրոցեսին գիրս
Բանանում է գլխարկում ապրելուն ես մարդ։

Ես ուզում եմ թարգմանել հանգամանքն ես ուժգին,
Գիրքս սառել ես դրել գնդիկիս վերևում...
Եվ սոսկալի գիրք կանգնում, հանգիստ դարձ է դառնա,
Ու ես նորից հանգիստ գալ հեկեկում եմ քեզ...

Գուրգեն Մահարի

Մոսկվա 1981.



×
× ×

Աշխարհ մանկան բաց է ամենքից,
Աշխարհ մանկան ուրախ է ամենուր։
Օրը արևոտ և արշալույսի պես,
Բայց և գիշեր է արդեն արշալույսի։

Իմ մանկությունը պարփակած է կնոջ
Իմ մանկության թախծալի երազ,
Եվ մի պատիր՝ լուսավոր ապագան,
Դեռ խոստացված են իմ բախտի վրա։

Եվ մի հեռատես, թող լույսն ապագաի
Էլ մեկ էլ պրկա իմ թարթիչներս,
Թե ապագայում արդարանա ուրախ,
Նայիր մեզ հոգ չ՝ ցավերին վրան։

Շատով կլուսի հոգիս ֆանտի,
Ուրախ ամբ կրակ կրակոնորդ,
Եվ մի պատիր՝ ապագայ ապագան
Լուսաբանվում է իմ բախտի վրա...

Լուսանագ Ստեփանյան

24/II-81



4

Կրակի Տարազ

Հայոց լեռներում միշտ խառնաձեռ, Տարազ ազգենք,
Քեզ, որ իմ հոգու խնամարարն ես, գրանցե՛ ու գնենք։

Քեզ, որ խորհում ես իմ ոգեղ զուտ խոշտանգեր տալով,
Քոյր և կրակում ես ուսերս ազգայուն կրակ դրոշմելով։

Ու հե՜ռանկարներ, նրանք կարա՞ ի վեր, մեկնում կարծես ու Տարազ,
Քեզ ես գտնում, ազգայուն գրանցում։ Կիրեցին ազգուտ։

Վերադառնում ես դեռ կռվարար, հայրենում ես քո շիտա հանար,
Բոլոր հարազատներ ի կանչում սեռ ու կանչում սեռ կոչ։

Ու քեզանով գաղտնում, խորհում ես կրակը իմ, ոգեղ գնենք,
Քոյր ուսերում, օրհնվարար ես մեզ, Տարազ ազգենք։

Եվ կրակը հեռվից նայում սեռ կռվարար ցայտերը առասպել։
Հասարակ բնում մեռնում ես ուսերդ գնենքի ազգուտ։

Կարում ես հեռվից նայում մի գեղեցիկ, ազգուտ մի սառուց,
Հասարակ ես... Հեռվում՝ սեռում ի կանգնած, հոգեզարթ սառույց։

Ու Տարազ ես դու... Տարազ ազգայուն ազգուտ ազգայնություն,
Որ բնում ի գալ ազգեցիկ, իրենց, մեզնից կրակնություն։

Եվ քեզանով ազգեցիկ նայելու, գաղտում ես իմ, ոգեղ գնենք,
Քոյր ուսերում ազգեցիկ առասպելներ, Տարազ ազգենք...

Դանիել Վարուժան

Գրաբար Հանձն գիտության հետ

Այս գաղտնի հոգեվարքն ինչպես ասեմ,
Ոչ մարդ ի՛նչպես կարողանա զգալ։
Ա. Բաբիլ

Հայրենի՛ երգեր ես գլուխս եմ հանում ձեզանից,
Կլուսե՛ր, արքա՛ն նվիրյալներ դեռ,
Գինով լցվեր եք դուք սրան տան և դուռ մեռած
Գաղջությա՛ն ես ես ինքս տխրեցի։

Քեզ մոլորած իմ անուշ ե՛ս ասել դարեր ես դարեր,
Մեռա՛ ես գոլորշի՝ ես այդ մոլորումներ,
Քո նայվածքում ինչ բանաստեղծական ոգեշունչ նաև
Գոգավոր գաղտնի, գեղեցիկ ես ասում։

Եվ սոսկալի գրեթե՝ սրբեցին քեզ տան գիրքն լույս դառնալ
Ես գիրքս դառնալ ինձա գաղտնիքներ,
Քեզ կարդալ նրան հրամանի, ոչխարներ, լույսեր ոգեղեն,
Քեզ կարդալ վիթխարի գեղեցիկ, մեռա ես դարեր։

Եվ գիրքն ինձա՝ սրբեցրեցին ես դուռ ինչպես դեռ
Եվ քանանելով մարդ անասնորեն,
Գիրքդ սրբեց ես դուռ ինչպես կարդալ դարեր,
Անանուն երգեր հայրենի՝ ինչպես։

Հոգիս. գիտեմ՝ ինչպես դեռ ես ես էլ մեռա,
Ինչպես նրանք ես նրանք դարեր,
Այս գաղտ գիրքդ, այս գաղտնիքներ ոգեղեն,
Ոչ ասեց գրեթե լույս ես ես դարեր։

Ինչպես նրանք ես այս գաղտ, գրքեր, գաղտնիքներ սանում,
Անկարողանալով ոգուս այս գեղեցիկ...



- 2 -

Եվ սոխոյք, սոխոյ, նրա կրծքը ասեղով քո վերագրառ
Նա վազում, վազում հասցած կլիներ...

Լսիր, գիտես, մեզ հոյս ոչնչից եք հասանում արդեն,
Ճանապարհ, դարձ իմ գիշերվա վերջ,
Որ. կարդացած վեց տող կարդաց ու մեռնում այդտեղ,
Հենց դառնալ, փոքրիկ իմ ագռավներս։

Եվ հեռու հեռվից լսում իմ ամեն գիտակցությունը ասվեր,
Լսում ենք լոքը ու աշխարհ ասում,
Հենց դյուցազուն իշխան երկնքի ու ասման խորքեր։
Որ սոխոյ, սոխոյ, դեռ չեն հասկացան...

10. III. 86

ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ





*
* *

Ու քաղաքացի լեռի գագաթին,
Լեռի գագաթի ու լռության,
Եվ արևաթաթավ բարեհաճության մեջ
Հիշեցի Ձեզ ինձանից կարոտ...

Քաղաքի գագաթին կանգնած
Արևաթաթավ լեռներին,
Որի հանգիստ երկնքի ներքո
Լռություն ու անհունություն։

Քաղաքի հշտության մեջ
Այնքան բան լսելիք կա,
Ու ցիրուցան հոգի հանգիստ
Ծաղկի նման կարոտաբաղձ։





× × ×

Հասել ա խոսքերը,
որ խոսքոր մի պեղ մնացած ասքերն,
Աղուսա իր վիրքն նորա ի հավերն,
Զվոց երանը ֆանտիքով վիրնը,
Վիրքն կապարանա ի ցանում գեներնը...

Հասել ա խոսքերը,
որ խոսքոր մի պեղ կա սեռնչ մի կնա,
Որ կարոյ ինչ ասելոց սառանչ
Իր սարքը նրանցիս,
Գրելիս մեկ փեղքերը ա գրաբար նրա...

Հասել ա խոսքերը,
Շատան, ինչ, ասելու դրա չի լինելու...

*

× ×

Գրա՞ ես կարող մեզանում
Հայի՞ տուն ապրող,
Լեզվով հայի՞ տուն,
Հո՞ւն ազգ-էր,
Որտե՞ղ մեկալներ
ոչ աստեղոտ հագուստ,
Որտե՞ղ փոխվեցեր մոգոտ
Լերդատոտ-էր...

Ու ես օրհնած եմ քեզ,
Ես օրհնյալ եմ քեզ
Հերոսատուր տուն
Լեռան Տաճկի,
Օրհնած հայի հոգի,
Օրհնած հայի հոգի,
Էլ ~~քեզ~~ կրկնում եմ
Եվ արդյունքի...





Ж XII - 88
Գիշեր

* * *

Մանուկ էի ես դեռ, անգետ չարին, բարուն,
Աշխարհը երգ էր դեռ, կյանքը հրաշք,
Չէի տեսել ես դավ, չէի տեսել արյուն,
Ու թեթև էր այնպես հոգուս վրա:

Աշնան տխուր մի օր մաշված սեմին մեր տան
Հայրս ծերմակ-ծերմակ մի գառ մորթեց...
Իմ առաջին արցունք, իմ տրտմության
Իմ մորմոքի կապույտ ծաղկաթերթեր...

Հետո օրեր անցան, հետո հրաշքն անցավ,
Կյանքը դարձավ մի մութ, խրթին հարցում,
Ու տեսնում եմ հիմա մահեր, դավեր, հանցանք,
Բայց քարացել հոգիս, չունի արցունք...

1942

ՄՂԶԱՎԱՆՋ

Գիշեր... Սուգն իր վարսերի տված հողմին ու բուքին,
Ինչ-որ կին է սլանում ու որոնում որբուկին...

Արդարության առաքյալն արնոտ ծնկները գրկել
Ու լալիս է ինչ-որ տեղ՝ իր աչքերով կիսակույր,
Ինչ-որ մթին անդնդում ցավի ձիչը մորկել
Ու ինքն իրեն փշերին, մացառներին է զարկում:
Եվ իմ սրտի մեջ ասես ինչ-որ սեպեր են խրված,
Չեմ կարենում հավաքել բեկորներն իմ փշրված,
Ճանապարհն եմ կորցրել ժայռից բուսած այն ծառի,
Որ պղնձի զրնգոց ու սխրանք էր պանծալի:
Այն աղբյուրն եմ կորցրել, որ մաքրությամբ իր տրտում
Եվ աստղերի արցունքով իմ հավատն էր մկրտում:

Գիշեր... Սուգն իր վարսերի տված հողմին ու բուքին,
Ինչ-որ կին է սլանում ու որոնում որբուկին:

Լեռնաշխարհը քարե՝ անքնություն է ու տենդ,
Խավարի մեջ թավալվում, չի քնում հողն իմ հայոց,
Եվ աչքերով, որ բորբոք, որ ոգեփայլ են ու խենթ,
Ուրվականներ են շրջում քամիների մեջ վայող:
Իսկ ես ծվատ ու տրտում ու՞ր եմ գնում, չգիտեմ,
Ինչ-որ վիհեր են խավար, ինչ-որ անդունդ է իմ դեմ,
Ինչ-որ անտառ է մթին, և խաչեր են, սև խաչեր,
Որ քարացել խավարում ու անզոր են հառաչել,
Հետո շներ, որ սակայն նորից փոխվել են գայլի
Ու երկինք են մխրճել ոռնոցն իրենց սոսկալի...

Գիշեր... Սուգն իր վարսերի տված հողմին ու բուքին,
Ինչ-որ կին է սլանում ու որոնում որբուկին...

1993

ԵՌԱԳՈՒՅՆԸ ՇՈՒՇՎԱ ԲԵՐԴԻՆ

Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Եվ չտեսան, և չտեսան նրանց աչքերն արնոտ ու կույր,
Որ դու, Արցախ, ոչ թե մի բուռ, այլ բռունցք ես պղնձակուռ...
Եվ չտեսան, և չտեսան, որ Դեր-Զորից այն հեռավոր,
Պատռած պատանքն իր ավազե, ելավ մանուկ մի թևավոր,
Ելավ մանուկ մի հրաչյա, չքնաղ՝ նման հրեշտակի,
Որ իր փոքրիկ բռունցքներով նախ երկնքի դուռը թակի,
Ապա մաքուր իր ձեռքերով առած նշխարն արդարության,
Իջնի Արցախ, շրթունքներին երգը ոխի ու հարության.

- Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

Եվ չտեսան, և չտեսան, որ դարձած լույս, դարձած ոգի,
Նորից Նժդեհն է արշավում՝ նման մի նոր Սուրբ Գևորգի,
Որ բոցերից Սումգայիթի ելնում աղջիկ մի սիրասուն,
Ելնում փխրուն ու բարալիկ, բայց և ահեղ, որպես ցասում,
Որ ելնում են ամեն կողմից ֆիդայիներն այս ոգեղեն,
Դառնում անտես մի զորագունդ, թշնամու դեմ դառնում գեհեն,
Եվ եռագույնն են ծածանում մեր հինավուրց Շուշվա բերդին,
Վրեժի շանթն աչքերի մեջ, վրեժի երգն իրենց շուրթին.

- Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

Ներեք, տղերք, ձեզ բոլորիդ ես չգիտեմ անուն-անուն,

Բայց շուրթերիս ամեն մեկիդ փառքի երգն է հասունանում,
Լոկ քեզ գիտեմ, քեզ՝ քաջ Մոնթե, սակայն գիտեմ իբրեւ լեգենդ,
Գիտեմ, որ դու խոնարհ ու հեզ, բայց կռվի մեջ կրակ ես խենթ,
Ես քեզ գիտեմ, նոր Անդրանիկ, մաքրամաքուր, դու լույսի սյուն,
Դու անմարմին, որպես Հիսուս, և էպոսի դու դյուցազուն,
Երդումի պես ձեր շուրթերին հնչեց նորից երգն առնացի,
Որ երգն է սուրբ մեր քարեղեն ու ոգեղեն առեղծվածի.

-Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

Փառք քեզ, հայոց անմահ ոգի, փառք հառնումին քո հիասքանչ,
Դու լույսի սերմ, ցայգածաղիկ, լեռան աղբյուր ու հողի կանչ,
Ծիրանի ծառ դու ծաղկավոր ու շեկ ժայռից բխած գիհի,
Երկինք միտող տաճար ու վանք և խորություն անհուն վիհի,
Համբերություն որձաքարի և կայծակի դու շառաչուն,
Դու նորածին հուրհեր մանուկ և հերոսի դեռ տաք աճյուն,
Եվ քանի դեռ սուր են խրում քո սրտի մեջ ու քո վերքի,
Քո շուրթերին թող չլռի վրիժառու տողն այդ երգի.
- Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

1992, մայիսի 9

ՀԱՅԸ

Եվ մենք կանգ առանք ձյունոտ կատարին Արարատ լեռան,
Եվ բուքը մեր դեմ ծառացավ՝ նման ձերմակ հովազի,
Մեզ կիզեց հետո դաշտի շոգը շեկ ու բոցը նռան,
Բոցը եղեգան ու բոցը վազի...

Մենք հայ ենք, այո, ժառանգներն ենք մենք նահապետ Նոյան,
Մենք բուք ենք ու բոց, բարության շշուկ ու ձիչ ենք ոխի,
Ցասում ենք ու ցավ, անդունդի անկում ու լեռան խոյանք,
Եվ խոնարհ՝ որպես վազը խաղողի:

Որձաքար ենք մենք, ու մեր ջղերի կարծր կապույտից
Ցողեր են ցոլում, անարատ, որպես ներշնչման աղբյուր,
Եվ անդունդ ենք մենք, որի խելագար գլխապտույտից
Հառնում են հանկարծ կատար ու բարձունք:

Մենք վիհերն ի վար քարեքար ընկած գետ ենք ու վտակ,
Որ խղճի պես են քրքրում իրենց, իրենց ծվատում,
Ապառաժ ենք բիրտ, բայց մեր շուրթերից ձաքձքած ու տաք,
Ծաղկաթերթերի քնքշանք է կաթում:

Եվ այդպես ըմբոստ , և այդպես խոնարհ կանգնած ենք դարեր
Այն ամենանենգ քառուղու վրա, ուր մահն է վայում,
Եվ դար ու դարեր մեր աչքերին է նայում նա ահեղ,
Ու մենք էլ անթարթ նրան ենք նայում:

Բայց նա չգիտե, որ մեր սուրբ հացը ծվենն է լույսի,
Բայց նա չգիտե , որ մեր ջուրն ըմպած արցունք է մի կում,

Մեր մագաղաթներն առասպելներ են ոսկու, փիրուզի
Եվ արեգական հավերժ ճառագում:

Հողմածաղիկ ենք, ցողունը՝ բարակ, թերթերը՝ շաղոտ,
Բայց որի արմատն ահնարին է մայր հողից պոկել,
Որ այսքան տանջված, բայց ոգել ենք մի այնպիսի աղոթք,
Որ դեռ աշխարհում ոչ ոք չի ոգել...

Մենք՝ մթին անձավ, մենք՝ խրթին բարբառ ու անբառ երդում,
Մենք՝ խորհուրդ խորին, որ մատչելի չէ կյանքում ոչ ոքի,
Ոչ ոք չգիտի, որ օրհասական մի ակնթարթում
Կարող ենք վառվել ու դառնալ ոգի:

Եվ մեզնից բացի երևի ոչ ոք չի տեսնում կյանքում,
Որ մեր հոգու մեջ ու հայացքի դեմ մեր տառապագին
Հարության չքնաղ այն հրեշտակի լույսն է հորձանքում,
Որ փայլակ ունի, շանթ ունի հագին:

Մենք հայ ենք, այո, ժառանգներն ենք մենք նահապետ Նոյան,
Մենք տքնությունն ենք ու ձգնությունն ենք մեր խոնարհ վազի,
Մենք բուք ենք ու բոց, անդունդի անկում ու լեռան խոյանք
Ու մոլեգնություն՝ խոցված հովազի...

15.08.93

ՀԱՎԱՏ

Ես՝ ճառագայթ խղճի, նա՝ ոխի սև նիզակ,
Ես՝ ցորենհասկ արդար, նա՝ ավազե սամում,
Ես՝ մենավոր խաչքար, որ շանթով է կիսած,
Նա՝ հողմային ժանիք, իմ հրաշքն է ծամում:
Բայց ես ապրեմ պիտի...
Երազի ճորտ ու զոհ՝
Ես ընթանամ պիտի՝ նման առաքյալի.
Պիտի ճամփաս փնտրեմ մեն մի աստղի լույսով,
Մի շիթ աղբյուր պիտի հանեմ ամեն քայլի,
Տատասկի մեջ պիտի փնտրեմ վայրի մի հասկ,
Որ նա պատմի ինձ լուռ, թե ինչպե՞ս է տոկում,
Պիտի ծունկի իջնեմ ակունքի դեմ այն պարզ,
Որ անդունդի գաղտնիք ու աստղ ունի հոգում:
Պիտի ոգեմ , կանչեմ ճգնակեցի մի ծեր,
Որ նա պատմի վասն մի կում ջրի, հացի,
Պիտի փնտրեմ, գտնեմ տքնության սև խուցեր,
Ու այնտեղից հանեմ ցոլքը լուսաբացի:
Պիտի ականջ դնեմ քեզ, անդունդի հառաչ,
Ու վերծանեմ պիտի քո բարբառը խրթին,
Պիտի ծունկի իջնեմ ես այն ծաղկի առաջ,
Որ բացվում է անգամ հրաբուխի շուրթին,
Մազարմատից պիտի նոր գաղտնիքներ հայցեմ,
Գաղտնուղիներ հայցեմ մեր բերդերից մամռած:
Պիտի գնամ, գտնեմ ես ջրաղաց մի ծեր,
Որ խորհրդի նստենք գլուխ գլխի տված:

...Հիմա գիշեր է խոր: Լեռներն իրենց ուսին
Հավերժության կապույտ աստղալույս են բարձել,

Եվ այնպես է թվում, թե լեռնաշխարհն իմ հին
Դարերի հետ խոսող վեհարան է դարձել:
Ի՞նչ է խոսում, ավաղ, չեմ հասկանում ոչինչ,
Ի՞նչ եք պատասխանում, անհայտության դարեր,
Բայց բառեր են հասնում ինձ աստղերի պես ջինջ,
Հասնում բառեր հուսո ու հավատի բառեր:
Եվ թվում է, Մեր, թե անձավում այն մութ
Բնազդի պես հանկարծ վրնջում է քո ձին...
Ու ես անհուսության սև ամպերը վանում,
Հավատում եմ նորից ցեղիս առեղծվածին:
Հավատում եմ, Մեր, որ դու զորեղ ես դեռ,
Որ ծառանա պիտի դեռ հրեղեն քո ձին,
Պողովատիկ պայտով պեղի կայծ ու շանթեր
Եվ քարանձավն այն մութ արշալույսով օծի:
Թե մոտենա պիտի հովիվն այն ժեռ քարին,
Կանգնի քո դեմ որպես առաքյալ մի հառնած
Եվ որոտա.
- Մեր, ել, ցորենն ու գարին
Պիտի շուտով խոշոր արշալույսներ դառնան...

1993

ԱՌԱՔՅԱԼԸ

Ա.Դ. Սախարովի հիշատակին

Առաքյալներն են միայն այդպես զարկվում կայծակով,
Մարգարեներն են միայն շանթահարված մահանում...
Քայլում էիր՝ ճակատիդ փշե պսակը ծակող,
Քայլում էիր ու ձեռիդ խղճի կերոնը տանում:

Թող ղողանջեն զանգակներն իմ Հայաստան աշխարհի,
Արձագանքեն լեռ ու վիհ նրանց տրտում հնչյունին,
Քո սիրո մեջ տառապած, տառապանքիդ մեջ բարի
Դու բույն տվիր մեր բախտի արնոտ ու սև թռչունին:

Ու երբ քայլում էիր դու պատառոտված իմ հողով,
Թվում էր, թե սրբի պես ոտաբոբիկ ես քայլում,
Թվում էր հողն իմ հայոց դարձել կրակ ու բողոք,
Քո ներբանները, օ, ո՛չ, սրբիդ ճակատն է այրում:

Դու ջուր էիր աղերսում ոչ քեզ համար՝ աշխարհի,
Սակայն տեսա, թե ինչպես շուրթիդ լեղի են քսում...
Կանգնել էիր դու խոնարհ ընդդեմ շեղաչ այն չարի,
Բայց և կանգնել էիր դու՝ ըմբոստ, իբրև հրո սյուն...

Այսօր հայոց աշխարհի արշալույսը հառաչեց,
Հառաչեցին նրա հետ ավերակները հայոց...
Արդարությո՛ւն, բարձրացի՛ր, քո առաքյալը խաչվեց,
Խի՛ղճ մարդկային, խոնարհի՛ր դրոշներդ ալեկոծ:

Ձեռքս դրել եմ սրտիս ու քո լուռ ողբն եմ անում,
Ձեռքս դրել եմ սրտիս, որ զսպեմ ցավն այս ծակող...
Մարգարեներն են միայն խաչի վրա մահանում,
Առաքյալներն են միայն այդպես զարկվում կայծակով...

15.12.1989

* * *

Անդրանիկ Հարությունյանի՝
Բերդաձորի Անդոյի հիշատակին

Ոչ լեռան արծիվ ու ոչ դյուցազուն,
Ոչ կաղնեբազուկ, ոչ բոցամորուս,
Վտիտ ես, բարակ՝ որպես լույսի սյուն,
Եվ գունատ՝ որպես տառապյալ Հիսուս:

Քո մկրտության սուրբ ծեսն են արել
Կապույտ լեռները անառ Արցախի,
Քո կնքահայրը վրեժն է ահեղ,
Եվ քո մեռոնը՝ լեղին մեր ցավի:

Քեզ շատ են փորձել արձիձ ու կրակ,
Բայց նահանջել են ոգուդ ցոլանքից,
Լույսի սուրբ սյունը որքան էլ բարակ,
Բայց զորավոր է ական ու արկից:

Դու՝ նոր Անդրանիկ, նոր Աղբյուր Սերոբ,
Աչքերիդ խորքում շանթն է նույն տենդի,
Դու՝ դեռ անանուն, դեռ անհայտ հերոս,
Բայց շուտով պիտի փոխվես լեգենդի...

Գունատ ես՝ որպես տառապյալ Հիսուս,
Վտիտ ու բարակ՝ որպես լույսի սյուն,
Բայց դու՝ կորովի ու բոցամորուս,
Դու՝ լեռան արծիվ, դու՝ նոր դյուցազուն...

1992

* * *

Ես մի ձորակ գիտեմ,
Բարակ մի գետ ունի,
Ու բարդիներ բարակ,
Քարերի մեջ կորած
Մի արահետ ունի
Ու մի այրված քարափ...

Երբ աղքատ եմ լինում,
Ու երբ հոգս է լինում
Հոգուս վրա բարձած,
Ես գետակից այն ջինջ
Հավաքում եմ ոսկի
Ու հավաքում արծաթ:

Երբ ցաված եմ լինում,
Ծարաված եմ լինում,
Ու չի օգնում ոչինչ,
Մտքով գնում անտեղ
Ու ծունկի եմ գալիս
Գետակի դեմ այն ջինջ...

1976

* * *

Երբ արմատս եմ փնտրում,
Ձգում է քարը բիրտ,
Քանզի ծանր է այնպես
Տրտմությունն իմ արյան...

Երբ սաղարթս եմ փնտրում
Դու սլանում ես, սի՛րտ,
Դեպի երկինքը լուրթ
Ու երգում ես «Հարյա՛վ»...

1987

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ. ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է Արևմտյան Հայաստանի, ավելի ճիշտ՝ Փոքր Հայքի Արաբկիր գյուղաքաղաքում, 1922 թվականի օգոստոսի 15-ին, եղեռնից փրկված էրզրումցի հոր և արաբկիրցի մոր ընտանիքում: Հայրը հողագործ է եղել, մայրը՝ ջուլիակուհի:

Չորս տարեկան է եղել, երբ թողել է ծննդավայրը: Հետագա ամբողջ գիտակցական կյանքն անցել է Հայաստանում: Մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին: Կրթությունը բանասիրական է, 1948 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը:

Ռազմաճակատից վերադառնալուց հետո սկսել է թղթակցել «Ավանգարդ» թերթին, ուր աշխատել է մինչև 1954 թվականը:

Այնուհետև աշխատել է մի քանի լրատվամիջոցներում՝ «Գրական թերթի» պատասխանատու քարտուղար (1954-1962) և գլխավոր խմբագիր (1962-1965), «Հայրենիքի ձայն» թերթի հիմնադիր-գլխավոր խմբագիր (1965-1967): Այնուհետև նշանակվել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ (1967-1981), «Վերածնված Հայաստան» հանդեսի գլխավոր խմբագիր (1981-1991):

1991 թվականին ընտրվել է Հայաստանի գրողների միության նախագահ, որը ղեկավարել է մինչև 1994 թվականը: 1986 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1995 թվականին՝ ակադեմիկոս:

Մահացել է 1996 թվականի փետրվարի 22-ին՝ Երևանում: Հանգչում է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

Վահագն Դավթյանի անունով են կոչել Երևանի թիվ 149 դպրոցը և Արաբկիրի զբոսայգին, որտեղ տեղադրված է

բանաստեղծի հուշարձանը: Արաբկիր վարչական շրջանում նրա անունով նաև փողոց կա:

2012 թվականին Երևանի Արաբկիր համայնքի Նաիրի Զարյան փողոցի 80 հասցեում բացվել է Վահագն Դավթյանի հուշատախտակը:

Վահագն Դավթյանը պարգևատրվել է՝

- «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով:
- «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով
- «Պատվո նշան» շքանշանով

Վահագն Դավթյանն արժանացել է՝

- ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման
- Հայաստանի պետական մրցանակի (կրկնակի անգամ) և Չարենցի անվան մրցանակի

Վահագն Դավթյանի ստեղծագործությունները

Վահագն Դավթյանի ստեղծագործությունները սկսել են տպագրվել 1935 թվականից: Հեղինակ է 40-ից ավելի բանաստեղծական ժողովածուների, գրական-հրապարակախոսական հոդվածների 2 գրքերի, «Բարի հսկան» (Վիլյամ Սարոյանի մասին) գրքի, «Համառոտ պատմություն հայոց» պատմագրության, «Անխորագիր» վիպակի, «Զուգահեռ ճանապարհ», «Ի սկզբանե էր Բանն» և մամուլում տպագրված հազարավոր հոդվածների, գրախոսությունների, էսսեների, հուշագրությունների:

Թարգմանել է Ա. Պուշկինի, Ս. Եսենինի, Ա. Բլոկի, Վլ. Մայակովսկու, Շ. Պետեֆիի, Ռ. Բյուրնսի, Ռուդաքիի, Էդ. Մեժելայտիսի, Ա. Կիրակոսյանի և այլոց բանաստեղծությունները:

Վահագն Դավթյանի բանաստեղծական ժողովածուները

- Առաջին սեր (1947թ.)
- Աշխարհի առավոտը (1950թ.)
- Ճանապարհ սրտի միջով (1955թ.)
- Լուսաբացը լեռներում (1957թ.)
- Թոնդրակեցիներ (1961թ.)
- Ամառային ամպրոպ (1964թ.)
- Բայց ծնվեցի (1965թ.)
- Ծուխ ծխանի (1969թ.)
- Անկեզ մորենի (1972թ.)
- Երկերի ժողովածու 2 հատորով (1975թ.)
- Զուգահեռ ճանապարհ (1976թ.)
- Կապույտ գիրք (1978թ.)
- Բարի հսկան, հուշագրություն (1979թ.)
- Լույսն իբրև հաց, հատընտիր (1980թ.)
- Ասք սիրո (1982թ.)
- Լույս առավոտի (1984թ.)
- Երկերի ժողովածու 2 հատորով (1985թ.)
- Անքնություն (1987թ.)
- Ծննդավայր (1988թ.)
- Ի սկզբանե էր Բանն (1989թ.)
- Հայաստան 88 (1991թ.)
- Համառոտ պատմություն հայոց (1992 թ.)
- Գիրք ողբի և գովքի (1994 թ.)
- Հողմաշունչ գիշերներ (1995թ.)
- Անխորագիր (էսսե-վիպակ) (2003թ.)
- Օրհնության նվագներ (2003թ.)
- Արևոտ հովիտ (2007թ.)
- Հայերգություն (2008թ.)
- Ընտրանի (2012թ.)

Գրքեր Վահագն Դավթյանի թարգմանությամբ

- Ալիսիա Կիրակոսյան, Արմատ և էություն, (1967, 1971 թթ.)
- Ռոբերտ Ռոժդեստվենսկի (1975թ.)
- Ռոբերտ Բյորնս, Իմ սիրտը լեռներում է (1977 թ.)
- Էդուարդաս Մեժելայտիս, Քարե գինի (1980թ.)
- Շանդոր Պետեֆի (1981թ.)
- Աստղային ձայներ (1983թ.)
- Գարսիա Լորկա, Արյունոտ հարսանիք (1986թ.)
- Ռուդաքի (1995թ.)

Վահագն Դավթյանը՝ օտար լեզուներով

- Рассвет в горах (1960թ.)
- Летний зной (1960թ.)
- Poème d'amour et d'épée (1974)
- Неопалимая купина (1980թ.)
- Свет как хлеб (1981թ.)
- Libro Azul (1981թ.)
- Сказания о любви (1984 թ.)
- Ռեքվիեմ՝
  - լիտվերեն (1980թ.)
  - իսպաներեն (1981թ.)
  - ռուսերեն (1981թ.)
  - գերմաներեն (1986թ.)
  - ֆրանսերեն (1986թ.)
  - արաբերեն (1996թ.)
  - վրացերեն (2015թ)

Վահագն Դավթյանի մասին մենագրությունները

- Հենրիկ Գալստյան, Վահագն Դավթյանի պոեզիան, 1978թ.
- Ժենյա Քալանթարյան, Վահագն Դավթյան, 1991թ.
- Լևոն Հայրապետյան, Վահագն Դավթյանի խոսքարվեստը, 1999թ.
- Անցողիկն ու հավիտենականը, Վահագն Դավթյանի հիշատակին, կազմող՝ Սիլվա Յուզբաշյան, խմբագիր՝ Գ. Ջանիկյան, 2005թ.
- Դավիթ Գասպարյան, Վահագն Դավթյան, 2007թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ

* * *

Երգդ շուրթեր ունի՝ մի խոր
Կարոտանքից ճաքած,
Հողոտ ոտքեր, ձեռքեր հողոտ
Ու երկնքոտ ճակատ:

Նայում են ինձ , նայում՝ արթուն
Քո տողերի տակից
Եվ մի ցողոտ ուրախություն,
Եվ մի շողոտ թախիծ:

Քո երգի մեջ երազային՝
Մի երկիր կա քարոտ,
Եվ հավատ կա Հրազդանի,
Եվ Եփրատի կարոտ:

Ի՞նչ ասեմ, թող երգդ մնա
Նաիրական այդպես,
Երազային, երկնագնա
Եվ իրական այդպես:

Համո Սահյան

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ ԿԱՐԴԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Երանի թե օրը այդ գար,
Դու գնայիր քո տունդարձի ճանապարհով,
Քեզ կրծքասեղմ համբուրեի
Ու ասեի՝ գնա՜ս բարով:
Ու ասեի՝ երբ որ հասնես
Կարոտահույզ գետը Եփրատ,
Քո սիրո հետ խառնիր նրան
Մեր սրտեղեն սերն անարատ:
Ու ասեի՝ երբ ծխացնես
Մարած օջախը պապերիդ,
Մեր աչքերի հուրն էլ խառնիր
Նրանց նործուխ կրակներին:
Ու ասեի՝ երբ բարդենիդ
Քեզ ընդունի ստվերապարզ,
Մեզանից էլ խառնիր նրան
Կանաչ արև, կանաչ երազ:
Ու ասեի՝ երբ ամայի
Կալդ նորից լցնես հասկով,
Մեր քրտինքի լույս էլ խառնիր
Աստղացոլուն քրտինքին քո:
Ու ասեի՝ երբ որ կտրես
Պատառն արդեն քո սուրբ հացի,
Մեր խնդության լացն էլ խառնիր
Քո խնդության պայծառ լացին:
Ա՜խ, երանի՜ օրը այդ գար,
Դու գնայիր քո տունդարձի ճանապարհով,
Քեզ կրծքասեղմ համբուրեի
Ու ասեի՝ գնա՜ս բարով:

Լյուդվիգ Դուրյան

* * *

Լույսի շառաչ է կրկին, ամպրոպի ճիչ, ուրցի բույր,-
Վեր կաց, վեր կաց, Բանաստեղծ, գնա լեռները կապույտ:
Այնտեղ նվագ է հիմա, շողի թրթիռ է վետ-վետ,
Արթնացել են մշուշից ամեն ծերպ ու արահետ,
Ու շաղ տալով քարափին շամանդաղ ու աստղաջուր՝
Քո տեսած այն առաջին առավոտն է ղողանջում:
Մեկն անձրևի շղարշից կանչում է քեզ կարոտած,
Նրա չթե շորերից ծաղիկներ են թափվում ցած...
Ի՜նչ գործ ունեն օրերի խառնուխռիվ հորձանքում
Քո թախիծը աստղային ու քո երազը մաքուր,
Վեր կաց, վեր կաց, Բանաստեղծ, թողած և մեղք, և ներում,
Գնա, սուզվիր հեռավոր քո մանկության ձորերում:
Գնա, կտրիր քեզ համար շամբուտներից Մայր գետի
Մի եղեգնյա ձեռնափայտ՝ ներսում շունչ ու մեղեդի,
Բարդին իր զով ստվերից մի թաշկինակ կտա քեզ,
Որ ճակատդ սրբելով՝ հոգնությունդ ամոքես:
«Քելե, լաո» երգելով գնա երկիրը քո հին,
Ուր նարնջե ցոլքերով բոցկլտում է մորենին:
Քո շուրթերին՝ օրհնություն, քո աչքերում՝ երգ ու սեր,
Վեր կաց, վեր կաց, Բանաստեղծ, ճամփա ընկիր լեռն ի վեր:
Գնա բարձրիկ ու հեռու այն աշխարհը մշտասուրբ,
Որի խռով զանգերի փոթորիկն էր քո ներսում...
Հավք ու ծաղիկ, ցոլք ու խոտ շշնջալով ամպի տակ՝
Կառաջնորդեն քեզ դեպի անձրևները կապուտակ:
Գնա, հասիր քո Երկրի հովիտները թխպասույզ,
Ուր հինավուրց տաղերով Ոսկեգետակն է հոսում:
Եվ կտեսնես ջրի մեջ բրդի թելերն արծաթե,
Եվ շուրթերդ կդողան, և արցունքդ կխեղդե...
Եվ լեռների մշուշից՝ կարոտալի հաչոցով

Մի շուն կգա ընդառաջ՝ մորթը սևուկ, չալ պոչով,
Կփարվի քո ոտքերին՝ հայացքի մեջ հին մխանք,
Կհարցնի տխրահաչ. «Ու՞ր եք ախր, ի՞նչ եղաք...»:
Հետո կամաց կցրվի ցավի մլարը դեղին,
Կտեսնես՝ ծուխ է ելնում քո հայրական օջախից,
Կասես՝ մայրս է այնտեղ, մայրս, որ լույս էր դառել,
Ահա եկել է նորից, մեր հին թոնիրը վառել:
... Վեր կաց, վեր կաց, Բանաստեղծ, ճամփան երկար,
կյանքը կարճ,
Վեր կաց, գնա մորենուդ մխանքներին ընդառաջ:
Գնա, ու թե մոլորվես մութ կիրճերում, ժայռի տակ,
Կդարձնի բախտը քեզ երկրիդ ասուպ շողարձակ:
Եվ կարոտից դողալով, և զնգալով տխրաշուք,
Կցոլցլաս հավիտյան հին լեռների մշուշում...

Իգնատ Մամյան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱՄԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Բա՞խտ է, թե՞ նզովք բանաստեղծ լինել...
Գիտեմ ինչպես է ցավում վերքը ձեր:
Ասում եք՝ Բառը Աստծո չափ հին է,
Այսօր ինչպե՞ս եք քնից վեր կացել:

Դեռ չի հորինվել այն սպեղանին,
Որ բանաստեղծի վերքերը բուժի...
Իսկ Աստվածորդու քարե սեղանին
Կավե սափորը նման էր կուժի:

Օրը բացվեց: Ես ցավում եմ, այո՛,
Որ մեր զրույցը անավարտ մնաց:
Ձեր շուրթերին մի բառ կար հմայող,
Որն անհայտության կածանով գնաց:

Հուշը օգնում է: Բայց ի՞նչ եք կարծում,
Ու՞ր էր խենթացած Տերյանը գնում...
Չկային բառեր: Կա՛ր ուղի, կա՛ր ձյուն,
Հույսը հատնում էր, լույսը՝ չքանում:

Պիտի պահպանենք սյուները մեր վեհ,
Թող վայրահաչի այլասերվածը...
Բարին չի կարող չարի հետ մերվել,
Վկան՝ Չարենցի մորֆու սրվակը...

Գիտեմ, դժվար է, սակայն ինձ ասեք.
Այդ ե՞րբ է դառնում զավակը ծնող...

Ի՞նչ էր մտորում Վարուժանը սեգ,
Երբ հեռանում էր անդարձ կածանով:

Զանգվի ձորում այդ ո՞մ արյունն էր
Հեղվում զորացած չարի թաթերով...
(Տե՛ր, անշրջելին մի՞թե մարում է,
Հղփացած չարին պիտի դատեր ո՞վ...):

Տառապանքից է պոեզիան քամվում,
Այսօր գտե՞լ եք մի տող լուսեղեն,
Դուք ամեն անգամ խաչին եք գամվում,
Որ հետո ձայնեք՝ տիա՜րք, լույս եղև...

Ես գիտեմ, այո՛, ես հաստատ գիտեմ,
Որ դուք հրեղեն կարոտներ ունեք:
Որ հաղթ կանգնած եք տառապանքի դեմ,
Եվ ձեզ ձգում է տեսիլքը գունեղ...

Ո՞վ տեր կկանգնի Ձեր անտեր Ցավին,
Ո՞վ կմեկնի ձեր տագնապը թաքուն...
Մգանում է մեր ոգեղեն ծավին,
Օրհասը կրկին մեր դուռն է թակում...

Ներեք ինձ, զի Ձեր վերքերին դիպա,
Որոնք երգ դարձած ինձ էլ են թովել...
Օ՜, անբառ երգի երկնահույս դիպակ,
Օ՜, բանաստեղծի անբուժելի վերք:

Ձնհալի ճամփով գարունն է գալիս,
Թող ցայգալույսը ձեր վերքը ցողի,
Զի Ձեր մանկության մանրանկարի
Ծաղիկը երգ է, իսկ երգը՝ ծաղիկ:

Արտաշես Ղազարյան

ԴՈՒ ԱՐԵՎԻՑ ԾՆՎԱԾ ԼՈՒՅՍԻ ՑՈԼԱՆՔ

Դու արևից ծնված լույսի ցոլանք,
Ու արևի համար զոհաբերվող ոգի,
Դու կարոտի մորմոք ու երազի խոյանք,
Արաբկիրում ծնված դու նաիրյան որդի:

Դու հայրենի հողի շքեղ փառաբանանք,
Փայլատակող հոգու անմատչելի բարձունք,
Դու անմոխիր կրակ, բարու բարի բաղձանք.
Դու եղեռնից ծնված չորացող արցունք:

Դու կապույտով սնված կապտամշուշ թախիծ:
Քո սուրբ սիրո առաջ դու ծնկաչոք աղոթք,
Խղճի շողով հյուսված դու ճառագայթ անբիծ
Եվ Աստծուն ուղղված ցասումնալի բողոք:

Դու ներշնչման հրաշք ու ներշնչող արվեստ,
Թաքուն տենչանքների դու գունագեղ փթթում,
Դու աստղերի հառաչ, դու մարտնչող ասպետ,
Դու խաղողից քամված գինու լուռ փղձկում:

Դու տուն բերված խաչքար, դու ցորենի բուրմունք,
Դու Եփրատի ափին կորցրած գյուղի մխանք,
Դու երազի բեկոր, դու հևասպառ հուզմունք,
Եվ հավերժող լույսի պատարագված ըղձանք:

Քո աշխարհն է հիմա իմ մեջ ալեկոծվում,
Դու իմ հեռու ընկեր, դու երգ իմ արտույտի,
Դու արվեստի նշխար, դու կարկաչող հուզում,
Հավերժություն մեկնող դու «Լույս առավոտի»:

Վահրամ Հաճյան

ԱՆԴԻՆ

Ճնճղուկներ, ճնճղուկներ հուրհրան
Լուսաթավ դաշտերին ճախրելիս,
Ի՞նչ կուզես, իմ հոգի, այս ժամին,
Արդյոք ա՞յն, ինչ արդեն դու ունես:

Արդյոք ա՞յն, ինչ կյանքում ունեցար՝
Եվ սերեր, և դավեր մեկուսի,
Կյանքը քո, խեթ մի ձի թամբելով՝
Սլացավ կեռմանով ահալի:

Գուցե ա՞յն, ինչ երբեք չունեցար,
Ինչ որ դու կուզեիր որ լիներ,
Չէ՛, հոգի՛ս, իմ հոգին չի ուզել
Պարուրվել խնդումով ահալի:

Իսկ հիմա սգասյուք դաշտերին
Մի անգույն իրիկուն է իջել
Եվ քամին կորուսյալ իր ձայնով
Շեփորում է վախճանն արևի:

Ի՞նչ կուզես, իմ հոգի, ինձ ասա,
Ի՞նչ կուզես մենավոր այս ժամին,
Արդյոք ա՞յն, որ շուքով քեզ տանեն՝
Քո անցած դաշտերով արյունի:

Որ կրկի՛ն,որ էլի՛ դու անցնես
Զինավառ շարքերով հույզերիդ
Եվ հետո գիշերով սպանեն
Քո մտքի բեկորները այրի:

Ո՛չ հոգիս, կար հրաշք մի ցերեկ,
Ճնճղուկներ, ճնճղուկներ դաշտերում,
Ծննդիս այդ օրում առաջնեկ
Տիրոջ տաք օրհնությունն է սպասում:

Վահան Վարդանյան

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆԻ ՀԵՏ

Բոցը խաղաղ յօնքերիդ,
Պահը մեղմ էր ու կարմիր,
Նայում էի ձեռքերիդ,
Վիպող տեսնում ու դպիր...

Լսում էի Գինու երգ,
Գինիդ մնաց գավաթում,
Այնտեղ մի շիք տիկին շեկ
Տատանվում էր ու... հատնում:

Անպարտ էիր ու խոհուն,
Աչքս բռնեց ամէն պահ.
Նոյնպէս նայուածքն այն սահուն,
Որ խաղում էր ինձ վրայ...

Քեզնով տեսայ Արտաւազդ՝
Հողից հեռու թագաւոր.
Բանաստեղծ մի ազնաւազան,
Փոքր Հայաստա՜նը բոլոր:

Ձիգ լռեցինք այդ գիշեր,
Դու բարեսիրտ կուռքի պես.
Չգրեցի ես «յուշեր»,
Էլ չտեսայ երբէք քեզ...

Խոցն խորացաւ իմ արնող,
Ուզում էի հանել ձայն,
Գեղջուկական երգի տողն.
Ի՜նձ էլ տարէք Հայաստան...

Վարանդ

ԿԱՐԾԻՔՆԵՐ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Վահագն Դավթյանը բազմաշնորհ բանաստեղծ է, նրա բանաստեղծությունները միջնադարյան մեր երգերի խորությունն ունեն և արևմտահայ պոեզիայի շքեղությունը, պոետական կուլտուրան բարձր է, տեխնիկապես կուռ է, հողի բույր ունի, բայց և եթերային է...

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Վահագն Դավթյանը թե՛ շատ ազնիվ հոգի է և թե՛ սքանչելի բանաստեղծ: Հայ բարեգործական միության համագումարում նրա կարդացած պոեմը ոգեշունչ էր: Փառք Աստծուն Վահագնի, Սևակի, Մահարու, Թոթովենցի, Չարենցի համար:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Վահագն Դավթյանն ապացուցում է, որ լիարյուն կյանքով ապրող իսկական բանաստեղծի համար մեր հին հողագունդը նրա հետ նորից է ծնվում, և այն, ինչ մենք կոչում ենք նորարարություն, նրա արյան մեջ է: Դավթյանը ընթերցողին կաշառում է իր անկեղծությամբ: Նա հմուտ, նուրբ վարպետ է բնությունը գրով նկարելու գործում:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Իր զուսպ, զորեղ, սթափ ներկայությամբ՝ ոչ մեկի, ոչ մեկիս բերանը մի անգամ չշարժվեց մեծարման խոսքով պսակավորելու իրեն, և միայն հիմա, իր լռությունից օգտվելով, ասենք. ինչ մեծ, ինչ սև խոռոչ է իր լքած տեղը՝ բանաստեղծի տեղը և գործչի տեղը, ապաստարանը մշակութային ողջ ժառանգության և ապաստարանը կենդանի բոլոր թրթիռների:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Վահագն Դավթյանը՝ իմաստուն բանաստեղծը, մեծ սրտի տեր

հոգեբանը, խորունկ քննադատն ու մտածողը, ստեղծում էր աշխարհներ, որոնք լայնացնում են հայ բանաստեղծության ուղիները և լույս նետում առաջացող սերունդների գալիք ճանապարհին..

ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Իր բանաստեղծություններց մեկում նա խոստովանում է, որ իր սիրելի զբաղմունքն է. «Բարձրանալ կատար... ու կանգնել արծվի հարևանությամբ»: Մարդ, որ արծիվների ցեղից է: ...ես սիրում եմ Վահագն Դավթյանի պոեզիան, որը իսկապես «մաքրում է արյունը», մարդկային երակների մեջ արևի լույս է ներարկում, մարդուն դարձնում ավելի լավ, ավելի ազնիվ, հանում մինչև Արարատի բարձունքները:

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

1982 թ. լրանում է Վ. Դավթյանի վաթսուն տարին: Դա համարվում է այն հասակը, որն անվանում են «իմաստության հասակ»: Վ. Դավթյանի բանաստեղծական աշխարհը, իսկապես, թևակոխել է այդ հասակը, որն արդեն շփման եզրեր է բերում հայ դասական բանաստեղծության մեծ հասակի հետ:

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ
գրականագետ

Ես շատ եմ մտածել, թե ինչ ահավոր ու պատասխանատու բան է Նարեկացուց հետո Հայաստանում բանաստեղծ լինելը: Հիմա մտածում եմ, որ այդպիսի բանաստեղծ կորցնելը ևս մեր երկրում առանձնապես ահավոր է: Բայց և այնպես այն ժամին, երբ մեծ բանաստեղծ Վահագն Դավթյանը հեռացել է, որպեսզի հանդիպի Պարույրի ու Համոյի հետ, այդ անուններն արտասանելիս անգամ ակամա հպարտություն եմ զգում: Պոեզիայի, ուրեմն նաև պոետների համար անցյալ չկա:

ՍՏԱՆԻՍԼԱՎ ՌԱՍՍԱԴԻՆ
ռուս քննադատ

Լինելով նույնքան տաղանդավոր, որքան իր գրչակիցները՝ Համո Սահյանը, Պարույր Սևակը, դժբախտաբար, Վահագն Դավթյանը չունեցավ իր անձնական քարոզիչը: Դա ցավալի է, որովհետև նրա ժառանգությունն այսօր արժանի չափով տարածված չէ: Իմ հիշելով, որևէ մեկն այնպիսի խանդով ու նախանձախնդրությամբ չէր պահպանում գրական չափանիշներն ու ճաշակը, ինչպես դա անում էր Վահագն Դավթյանը: Նրա ճաշակի ու չափանիշների հետ հաշվի էին նստում գրող Գուրգեն Մահարին, գրաքննադատ Սուրեն Աղաբաբյանը: Նրա հարազատ եղբայրությունն էին փնտրում Վիլյամ Սարոյանն ու Հրանտ Մաթևոսյանը: Վահագն Դավթյանի հետ այսպիսի մարդկանց միասնությունը թույլ չէր տալիս, որ մանր-մունր բաներ ներթափանցեն գրականություն...

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ
բանաստեղծ

Նա չափազանց բծախնդիր էր և չէր սիրում , այսպես կոչված, բանաստեղծական անփութությունները՝ գրեթե կատարելության էր հասցնում իր բանաստեղծական տեխնիկան, ինչի շնորհիվ էլ մեզ թողեց նաև բարձրարվեստ թարգմանությունների հրաշալի նմուշներ...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ
բանաստեղծ

Իսկական բանաստեղծի կյանքն էլ, մահն էլ ցավագին չի լինում: Նրան գտնում են շարունակաբար, թե՛ կենդանության օրոք, թե՛ մահից հետո: Մի անգամ, Գառնիի ձորում, ժայռերի ընդերքից ընկնող կաթիլքը ափերի մեջ որսալով՝ ասաց. «Ես այս կաթիլն եմ»: Թե՛ իր պոեզիան ի նկատի ուներ, թե՛ իր կյանքը: Եկեք սուզվենք այդ ծով- կաթիլի անհատակ խորությունների մեջ:

ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
արձակագիր

Բառի արժեքը գիտեր: Բառից էր գալիս ու գնում էր դեպի իր բառը, իր կշռույթը, իր պատկերը, գույնը, հանգը... Անպայման ստեղծեց բանաստեղծական իր տարածքը, իր խորհրդանշանները, իր արմատական բառ- պատկերները:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
գրականագետ

Կապույտի և լույսի չընդմիջվող ներկայությամբ՝ Վահագն Դավթյանը քար առ քար, բառ առ բառ վերակերտել է իր կորցրած ծննդավայրը, իր ժողովրդի խաձված հանգույցները թելթել բացելով՝ կիսել է ցավը, խինդը և ապա փառավորվել նրա հավերժության հրձվանքով:

Ապրելը հեշտ է, երբ շուրջդ բանաստեղծի ներկայությունը կա՝ որպես աստվածային շնորհով օժտված երևույթ, որպես խղճի ձայն, որպես զորացնող թռիչք՝ դեպի հեռուները շոշափելի ու անկշիռ:

ԽԱՉԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
բանաստեղծ

«Արվեստում ցավն է ստեղծում արժեք»,– ասում էր նա: Եվ իր պոեզիան» կորցրած հայրենիքի անընդհատ մխացող գիտակցության, իրական ու անիրական կանացի իդեալի որոնումի, գենետիկ կոդ սողոսկած հեթանոսի և Լյառը բարձրացող Աստծո որդու դրոշմն ուներ: Արդեն 20 տարի է, որ մեր կողքին չէ նա՝ գրականության ու մշակույթի Մեծը: Ետչարենցյան ամենախոշոր հայ պոետներից մեկը, գուցե ամենաամբողջականը: Եվ վաղուց հասունացել է Վահագն Դավթյանի ստեղծագործական ժառանգության համակարգված ուսումնասիրության խնդիրը:

ԱՆԱՏՈԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
բանաստեղծ

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԿԱՄ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՄԵԾ ՀՈՒՆՁՔԸ

Հարգելի ընթերցող, ձեր սեղանին է Վահագն Դավթյանի ստեղծագործության ծավալուն ժողովածուն: Այս մտահղացումը իրագործել ենք ՀՀ վաստակավոր արտիստ, ասմունքող Սիլվա Յուզբաշյանի հետ: Հանդիպելով ու քննարկելով ժողովածուն ստեղծելու գաղափարը, արձանագրեցինք, որ երկար տարիներ՝ շուրջ երկու տասնամյակ, Վահագն Դավթյանի ստեղծագործությունները ամբողջական տեսքով չեն հրատարակվել, իսկ եկող ու առաջ գնացող սերունդները միշտ դրա կարիքն ունեն: Սկսվեցին որոնումները, փնտրտուքները: Թվում էր, թե այստեղ խնդիրներ չպետք է լինեին, մանավանդ որ ժողովածուն կազմելու բարդ գործը ստանձնել էր Վահագն Դավթյանի պոեզիայի գիտակ և անզուգական կատարող Սիլվա Յուզբաշյանը:

Ինչպես և սպասելի էր, ինքը՝ Սիլվան, ավելի ու ավելի խստապահանջ դարձավ: Ցանկություն կար հնարավորինս ավելի շատ ստեղծագործություններ ընդգրկել, որ դրանք արտահայտեին մեծ բանաստեղծի ստեղծագործության ողջ պատկերը: Եվ արդյունքում ստացվեց ոչ թե հատընտիր, այլ մի ժողովածու, որը ընդգրկուն է, և կարող է ներկայացնել Վահագն Դավթյանի ստեղծագործության ամբողջականությունը: Փաստորեն այստեղ ներկայացված են Վահագն Դավթյանի պոեզիայի լավագույն նմուշները: Համաձայն եմ Սիլվայի հետ, ամենադժվարինը ընտրությունն է... Մանավանդ՝ քանի ժամանակը առաջ է գնում, այնքան Վահագն Դավթյանի պոեզիան ավելի հրատապ, լեցուն ու խորիմաստ է դառնում:

Մոտ և մտերմիկ բարեկամություն չի եղել իմ և մեծ բանաստեղծի միջև, չնայած նրա հետ դիպվածային հանդիպումների

ժամանակ ջերմ ու մարդկային վերաբերմունքի եմ արժանացել: Նրա խոսքի ինքնատիպ հնչերանգների և ասելիքի ազդեցությունն այնքան մեծ էր, որ անընդհատ ուզում էիր լսել նրան: Իսկ նա ուրախանալ գիտեր երիտասարդության ձեռքբերումներով և նաև խոր մտահոգվել նրանց առջև ծառացած խնդիրներով:

1981 թվականն էր. սովորում էի Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում և ամռանը Երևան էի եկել՝ մասնագիտական պրակտիկայի: Մի օր անցնում էի այսօր Հանրապետության, այն ժամանակվա Ալավերդյան փողոցով, ուր գտնվում էր Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն և նրանց կողմից հրատարակվող «Վերածնված Հայաստան» ամսագրի խմբագրությունը: Ծանոթ էի ամսագրին, և այն ձգում էր իր տեսքով ու ձևավորումով, բովանդակությամբ ու ասելիքով: Մտածում էի՝ հենց այստեղ կուզենայի նյութեր հրապարակել Մոսկվայի հայության մասին:

Ներս մտա, փնտրեցի գլխավոր խմբագիր Վահագն Դավթյանի աշխատասենյակը, ասացի, որ ապագա լրագրող եմ, կուզենայի հանդիպել և առաջարկել համագործակցություն: Հարցրեց. «Երբևէ տպագրվե՞լ ես հայկական մամուլում»: Ի պատասխան՝ պայուսակիցս հանեցի «Ավանգարդում» տպագրված թերթերի մի խուրձ ու մեկնեցի իրեն. «Ամեն ինչ հասկանալի է, գրիր Մոսկվայի ճանաչված և նշանավոր հայերի մասին, ինչպես որ կան,- ասաց նա՝ ավելացնելով,- վստահ եմ, որ հետաքրքիր ու ուշագրավ հերոսներ կգտնես»... Այդպես սկսվեց ծանոթությունը և համագործակցությունը և ինչ-որ տեղ նաև բարեկամությունը Վահագն Դավթյանի հետ: «Վերածնված Հայաստան» ամսագրի էջերում սկսեցին լույս տեսնել իմ ակնարկներն ու հարցազրույցները: Ամեն մի հրապարակումից հետո ստանում էի Վահագն Դավթյանի քաջալերող, ոգևորող գնահատականները, նաև նոր հանձնարարականները:

Ամեն անգամ Երևան գալով այցելում էի խմբագրություն,

ոչ միայն իմ երախտագիտությունն ու շնորհակալությունը արտահայտելու, այլև, նախ և առաջ նրա հետ որպես լրագրող շփվելու, ով անցել էր լրագրություն տանող դժվարին ճանապարհը: Առաջին հերթին նա քաղաքացի-լրագրող էր, մեծ հրապարակախոս, ով կարևոր առաքելություն էր կատարում՝ հետաքրքիր ու ինքնատիպ կրթամշակութային, մարդասիրական պատուհան ստեղծելով դեպի սփյուռք:

Այն ժամանակ դժվար էր պահել ու փայփայել նույն արժեքային համակարգը, որ ստեղծվում ու ձևավորվում էր հայրենիքի ու սփյուռքի միջև: Վահագն Դավթյանը այն առաջամարտիկներից էր, ով ձգտում էր այնպես անել, որ ճիշտ և նպատակային ճանաչեն միմյանց՝ մայր հայրենիքը և սփյուռքը. լրագրողական հողի վրա ստեղծված բարեկամությունը հետագայում էլ շարունակվեց: Արդեն հանդիպումների առիթներ եղան որպես հեռուստալրագրող:

Միշտ նրան տեսա որպես իր երկրի նախանձախնդիր քաղաքացի, ով ոչ միայն հստակ հասկանում էր իրավիճակը, այլ ուներ խնդրի լուծման իր առաջարկը և բանալին:

Շուրջ 20 տարի է, ինչ մեզ հետ չէ մեծ բանաստեղծը, կավելացնեի՝ տաղանդավոր լրագրող-հրապարակախոսը, հասարակական գործիչը, բայց այսօր էլ նրա ստեղծագործությունները զարմացնում են իրենց ասելիքով, ինքնատիպ փիլիսոփայությամբ, պոետական բարձրարվեստ կերտվածքով: Ավելի քան վստահ եմ, որ որքան մեզանից հեռանում է Վահագն Դավթյանը, նույնքան մեզ են մոտենում նրա ստեղծագործությունները՝ մեր ժամանակին ավելի համահունչ, ավելի խոր ու համամարդկային ասելիքով...

Եվ այս ճամփաբաժանում Վահագն Դավթյանի այս նոր ժողովածուն, որը վերնագրված է «Աստղ ու ցորեն», կատարելու է իր աստվածահաճո առաքելությունը: Մյուս կողմից ցորենի խորհրդանիշով նրա պոեզիան բարի հունդեր է ցանում մեր հոգիներում, որն այդքան շատ ունի դրա կարիքը: Մյուս կողմից նրա աստղը մեզ առաջ է տանում՝ ճիշտ

կողմնորոշելով այս դժվարին ու բարդ աշխարհում, ուր բարու, գեղեցիկի, մարդկայինի աստղապահն է մեծ բանաստեղծը:

Վահագն Դավթյանի աստղաբույլի և ցորենի հասկերի խրձերի մեջ նրա լուսապայծառ պոեզիայի հետքերն ենք տեսնում ու ցանկանում, որ այդ ճանապարհը, որը դեպի ապագա է տանում, լինի կողմնորոշիչ հուսո աստղ և լուսե ցորեն մեր ժողովրդի համար:

Իսկ այս ամենն անհրաժեշտ է հավատի զորավոր ծառը միշտ կանաչ պահելու համար, քանի որ առանց հուսո աստղի չկա ցորեն հասկ:

Չգիտեմ որն է լավագույնը՝ երբ որ ինքդ ես կարդում լուսե պոեզիան, ինչպիսին Վահագն Դավթյանինն է, թե՞ երբ այն քեզ մատուցում են: Երևի թե երբ կա այս ամենի ոսկե միջինը: Հենց այդ հնարավորությունն էլ ձգտել ենք ստեղծել ընթերցողի համար, որ ցանկության դեպքում կարողանանք Սիլվա Յուզբաշյանի օգնությամբ վայելել Վահագն Դավթյանի պոեզիայի լավագույն նմուշները:

Մի խոսքով ներկայացվող ժողովածուն ինչ-որ տեղ համարենք ընթերցողի հետ վաղուց սպասված հանդիպման հնարավորություն, երբ ամեն մի ընթերցող իր համար կարող է բարձրակարգ պոեզիայի մեծ տոն ստեղծել:

Իսկ մենք էլ ամեն ինչ պետք է այնպես անենք, որ այդ տոնը միշտ շարունակական լինի:

Սերգո Երիցյան

«Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամբողջական մի աշխարհ 4

Երբ վերջին անգամ 7

ԱՆԿԵՌ ՄՈՐԵՆԻ

Նախերգանք 10
Ծննդավայր 11
Կանչ 12
Առաջին հուշ 13
Գառը 15
Ջրհորը 16
Հեքիաթը 17
Գիշեր 18
Վիրավոր կռունկը 19
Համր քարեր 20
Ոսկեգետակը 21
Արյունոտ լույս 22
Ամպել էին, մթնել էին 23
Ծունը 24
Եփրատը 26
Փուշը 27
Եվ մի աշխարհ մնաց այնտեղ 28
Մեր ծիծեռնակը 29
Այնտեղ, արևոտ այն քարափներին 30
Կապույտ անդունդ 31
Ձայներ 32
Եվ դարձել են հեկեկանք... 34
Մեղեդի 36
Ակնա ձորում 37
Աստղի պես 38
Թե հրաշքով... 39

Մի գիշերով արթնանայիր... 40
Փշրված լուսին 41
Դեպի սկիզբը 42
Ճանապարհ 43
Մշո լեռներում 44
Հողմերի դեմ 46
Ծունկի եկ, ծունկի... 48
Մանկության գիշեր 50
Առավոտը 52
Էլ բավական է... 53
Ծուխը 54
Տեսիլք 56
Կալը 58
Ամռան օր 59
Վայրի մեղր 60
Նուռը 61
Ամռան գիշեր 62
Մորեխը 64
Իրիկնամուտ 68
Անկեզ մորենի 69

ԱՍՔ ՍԻՐՈ

Հիմն կնոջ 73
Ժամ հայտնության 74
Այսօր քեզ նորից հիշել եմ 76
Առուներում փշուր-փշուր 76
Դաշտով վազում է 77
Մի հեռավոր ծղրիդի կանչ 78
Գալիս էր՝ բոբիկ, մազերը արձակ 79
Երկու ծաղկած փշատենի 80
Գարնան ջրերն են հորդում, գարնան ջրերն են երգում 81
Ձմռան գիշեր 82
Ալիքը խփում ու տանում է նավակը 83

Հովի շունչը կար ու հովի թև 84
Շաղոտ փեշը քամուն տված 85
Քեզ 86
Եվ ամեն անգամ քեզ հանդիպելիս 87
Սպասում 88
Ո՞ւր գնամ հիմա և ո՞ւր թափառեմ 89
Նորից ձնհա՛լ է, ձնհա՛լ... 90
Արեգակն է համբուրում 91
Իմ պատանության կապույտ գիշերներ 92
Վայելք 93
Գիշերն ի լույս իմ բոլոր 94
Ասում են հին վերքն հաճախ է ցավում 95
Դու եկար այն գիշեր, դու եկար ինչպես սերն է գալիս 96
Ծաղկի, ցողի ու լույսերի մեջ ծավի 97
Անանուն 98
Երազիս մեջ այսօր քեզ հետ էի նորից 99
Ամառային ամպրոպ 100
Դու խուժեցիր իմ բախտի մեջ 102
Գնանք, սիրելիս... 103
Սեր 104
Գիտեմ, սիրված ես եղել կյանքում 105
Եթե հարցնես... 106
Ես հաշտ էի ապրում իմ բախտի հետ 107
Տաք ձյունը 108
Կեսն է գիշերվա... 111
Ես չգիտեմ, ի՞նչ ես շահում 112
Իմ քսան տարին և տասնութը քո... 113
Սրտիս զարկերը և ժպիտը քո... 116
Կարմիրն ու սևը 120
Այնպես մի անի, որ ես ուրանամ իմ սրբությունը 124
Մենախոսություն 125
Այո, սիրելիս, իմ և քո սերը նման եղավ շատ 128

Գիշերը անցավ ու ծանր անցավ..... 129
Վերջերս հաճախ երազներիս մեջ..... 130
Քոնն է մեկընդմիշտ 130
Տարելից 131
Տար ինձ, քամի 133
Ներիր, սիրելիս, ներիր ինձ լուռ..... 137
Խոսք նոր տարուն..... 138
Ժամն է արդեն, սիրելիս, եկ բաժանվենք մենք անձայն..... 139
Տխուր էր չուն..... 140
Շնորհապարտ եմ քեզ 140
Քո մասին խորհելիս..... 142
Մենք բաժանված ենք..... 143
Ինչ-որ տեղ հիմա..... 144
Այն կինը, որի մատները պիտի..... 145
Իրիկնամուտ է 146
Զարթնում է նորից խռովքն իմ վայրի..... 147
Ես չկանչեցի, դու ինքդ եկար..... 148
Մենք իրարից զատված երկու շշուկ..... 149
Եվ ահա կրկին ցավոտ մի թախիծ 150
Հեռանում ես դու... 151
Եվ դու, որ մի օր եկար քնքշորեն ու անակնկալ..... 152
Փխրուն է ավազն ու ավազը տաք 153
Եվ կար ժամանակ, որ իմ քաղաքի 154
Եվ հիշում եմ ես՝ կարմիր էր գինին 155
Կայիր դու այդպես, կայիր իմ կյանքում 156
Եվ հիմա միայն 157
Հեռու ծովափին նստել երևի 158
Անծանոթ ծես 159
Բարալիկ էր նա, խալ ուներ այտին 160
Աստղի պես 161
Կախարդուհին 162
Ի սկզբանե 163

Այդ ես նկատեցի, որ չես քայլում դու, ոչ 165
Հայտնություն 166
Դու անհայտն ես 167
Օրհնյալ լինես դու... 168
Աշնան ծառերը բոց են ու բեհեզ 169
Ես, սիրելիս, շատ եմ ապրել 170
Դրսում նորից ապրիլ է մեծ 172
Սեպագրեր 174
Անակնկալ ամպրոպ 175
Մայրամուտ է ու մշուշ... Այրվող ամպերն են մարում 176
Եվ առեղծվածն է ինձ դեռ կուրորեն տանջում 177
Նախազգացում 178
Ակնթարթ 179
Գարուն 180
Երևան, ինձ ներիր 181
Կորուստ 182
Թվաց, գիշերվա հողմի մեջ ահեղ 183
Դու կհեռանաս, ու թղթերիս մեջ 183
Գիշերային երթ 184
Ես բաց եմ ապրել ու սիրել եմ բաց 186
Գիշերն այս մութ ու խորհրդավոր է՝ որպես բնազդ 187
Աստված քեզ պահի 188
Քաղաքը թողինք 189
Որմնանկար 190
Ու ես գիտեմ 191
Պահը 192

ԵՐԿԻՐ, ԳԱՂՏՆԱՐԱՆ

Երկիր, քարի մոլուցք 195
Հարստություն 196
Ասում են հեռու Եփրատն է մի օր 197
Հայրենիք 198
Կարմիր բլուր 200

Ճնճղուկը 201
Ես՝ Հայաստան, ես՝ քարե... 202
Դու փոքրիկ ես, իմ աշխարհ 203
Երգն Հայաստանի 204
Զվարթնոցի արծիվը 205
Երկիր հայրենի 206
Հավատում եմ քեզ 208
Քարե մրրիկն է այստեղ ննջում թևերը ծալած 210
Մի փոշոտ, փափուկ ճամփա 211
Քարե քնքշանք 212
Քարափ է, քար է... 213
Երբ կարոտել եմ խոյանքի՝ Արարատիդ եմ ես նայել 214
Յոթ երգ՝ երկրին 215
Անի 221
Շնորհապարտ եմ քեզ 223
Իմ հողը 224
Իմ մայրենի, իմ բարբառ 225
Կա մի հայ աղջիկ 226
Խաչքար 229
Մարմաշեն 230
Քանի հազար տարի 231
Հեռվից 232
Ավերակ վանքում 235
Հայոց լեզու 236
Քար է ու լույս 238
Քեզ հետ եմ, երկի՛ր... 239
Ձայն իմ արյան 240
Որձաքարի բեկոր 241
Մորս հիշատակին 242
Զվարթնոց 244
Մայր 245
Ո՞ւր ես գնում 246

Ներբող մայրենի լեզվին 248
Լուռ է լինում ու խավար, քունն է կանչում այն ափից 250
Նա այդ գիշեր մինչև լույս խոնարհված էր սնարիս 251
Հող իմ կիսված 252
Երկիր, գաղտնարան 253
Ձորի մշուշ, վիհի մխանք 254
Երգող խաչքար 255
Կայծքար 257
Պարտք 258
Ցորեն 259
Ինքներգություն 260
Արագածն է այնտեղ, այնտեղ՝ Արան 262
Գառնո ձորը 263
Ինձ թվում է միշտ 264
Հայոց լեռներ 265
Մենավոր ծառ 266
Մեր տառերը 267
Գրոհը կարճ տևեց... Գիշերը խիտ էր, թավ 267
Ո՛չ, ես չեմ կարող մոռանալ նրան 268
Բալլադ 269
Զինվորը վերջին բարձունքի վրա 270

ԳԻՆՈՒ ԵՐԳԸ

Նախերգ 273
Այգեպանը 274
Այգեպանի աղջիկը 275
Այգեպանի խոսքն արեգակին 276
Այգեբաց 278
Ծաղկում 279
Գարնան անձրև 280
Վազն է լալիս 281
Այգեպանի խոսքը հողին 282
Կանաչ հրդեհը 284

Ամառ 285
Կարասներ 286
Քրտինքի կաթիլ 287
Վազն է խոսում 288
Շոգը 289
Այգեպանի խոսքը ջրին 290
Առուներ 292
Դարձյալ վազն է խոսում 293
Սիրո գիշեր 294
Այգեկութ 295
Գինով է լցվում... 296
Բարդիներ 297
Ողկույզներ 298
Աշուն է... 299
Այսօր խաղող է ճմլում... 300
Գինին 301
Մառանը 302
Հարսանիք 303
Այգեպանի խոսքը մարդուն 305
Վերջերգ 306

ՏԱՂԵՐ

Տաղ ներշնչման 309
Տաղ անանձնական 310
Տաղ ամպրոպի 311
Տաղ կարոտի 312
Տաղ առաջին ձյան 314
Տաղ հողի 316
Տաղ ձնծաղկի 318
Տաղ նժույգի 319
Տաղ կնոջ 320
Երկրորդ տաղ կնոջ 321
Տաղ անծանոթուհու 323

Տաղ երգի 325
Տաղ երազի 327
Տաղ արյան 329
Տաղ ճանապարհի 330
Տաղ ծառի 331
Տաղ կրակի 332
Տաղ սպասման 333
Տաղ ժամանակի 335
Տաղ հայրենի տան 336
Տաղ անձնական 338

ԵՐԳԻ ԾՎԵՆՆԵՐ

Բոլոր բառերից ամենաշատը 343
Երկիր, ես քո դեմ ծունկի եմ իջնում 343
Գարնան ամպրոպը 344
Գնա՛մ... 344
Իմ հայոց երկինք 345
Աղքատ եմ նորից... 345
Արշալույսն այնտեղ 346
Տո՛ւն իմ հայրենի 346
Աղբյուրը... 347
Այս ծաղիկները երևի հողի 347
Անձրևը անցավ... 348
Գարնան անձրևի առաջին կաթիլ 348
Գյուղի առավոտ... 349
Ամառ է 349
Մայրամուտն ասես հնդիկ է մի թուխ 350
Ցողի կաթիլը 350
Բարդինե՛ր 351
Ծիծեռնակները վերադարձել են 351
Աղբյուրը... 352
Ամենատխուր 352

Ես երեկ արտում մի կակաչ տեսա... 353
Ժայռի շրթունքին՝ աղբյուրի ծիծաղ 353
Շանթի հետքեր կան ժայռի կողերին 354
Արցունքի կաթիլ 354
– Թռչուններ, ասեք 355
Բառը դողում է 355
Երբ լուսաբացին ճանապարհ ընկնես 356
Եվ փաթիլը ձյան իմ բաց ափի մեջ 356
Վաղն առավոտյան ինձ շուտ արթնացրեք 357
Գարո՞ւն է 357
Բարձրացել էիր ոտներիդ ծայրին 358
– Անձրև հուլիսյան 358
Դու նման էիր այնտեղ բոլորին 359
Ու նախ անձրևի մի կաթիլ իջավ 359
Թե իմ պատճառով 360
Նորից ու նորից կարոտը գալիս 360
Ամառ է 361
Գիշերը դրսում անձրև էր գալիս... 361
Գարունն է անցնում 362
Եվ ես ասում եմ 362
Գիշերը հողմ էր, գիշերը մրրիկ 363
Եվ լիներ այնպես 363
Երգել եմ ուզում... 364
Թեթև որպես լույս ու որպես ներում 364
Երբ երգ եմ գրում, ինձ թվում է միշտ 365
Բանաստեղծություն 365
Ամպրոպն անցել է 366
Ես սրտիս ցավից արթնացա հանկարծ... 366
Լեռների վրա զրնգաց տխուր 367
Մի զարմանալի, մենավոր թռչուն 367
Աստղերը նայում 368

ԼՈՒՅՍ ԱՌԱՎՈՏԻ

Լույս առավոտի, դու, որ նման ես երաժշտության 371
Լույս առավոտի, դու, որ նման ես Հարությանն այն մեծ 373
Լույս առավոտի, դու, որ նման ես մի մեծ կրկնության 375
Լույս առավոտի, դու, որ նման ես ոսկե կածանի 376
Լույս առավոտի, դու, որ նման ես օրհնաբանության 378
Լույս առավոտի, դու, որ նման ես կնոջ շիկնանքի..... 380
Լույս առավոտի, դու, որ նման ես մի մեծ շնորհի..... 382
Լույս առավոտի, դու, որ նման ես երկրպագության..... 384
Լույս առավոտի, դու, որ նման ես սուրբ ճշմարտության 386
Լույս առավոտի, դու, որ նման ես մի մեծ հայտնության 388
Լույս առավոտի, դու, որ նման ես անմոխիր այրման 390
Լույս առավոտի, դու, որ նման ես հսկա արտույտի 392
Լույս առավոտի, դու, որ նման ես մի մեծ մաքրության 394
Լույս առավոտի, դու, որ նման ես հավիտենության 395

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՍՏՂԸ

Բանաստեղծի աստղը 401
Տրտունջ..... 402
Սիրտս 404
Անքնություն 405
Անքնության պահերին 406
Սի՛րտ, ես գլուխս եմ խոնարհում քո դեմ..... 408
Սիրտ իմ, նման ես Գեղարդա վանքի... 409
Ու ցավում ես, սիրտ... 410
Ինչ-որ հեռու տեղ մոլորված գառի 411
Ճանապարհ 412
Կատարներ կան այնտեղ 413
Աշնան բարակած ջրերը լալիս 414
Տերև են այրում 415
Երգը 416
Անորոշություն..... 417
Անանձնություն 418

Քարը 419
Պոետական խրախճանք 420
Վայրկյան 422
Կարոտ 424
Քնքշանք 425
Ներշնչանք 426
Երգից հետո 428
Եղիշե Չարենցի հետ 430
Միսաք Մեծարենցի հետ 432
Սերգեյ Եսենինի հետ 433
Գարսիա Լորկայի հետ 435
Գուրգեն Մահարու հետ 437
Համո Սահյանի հետ 439
Տենդ 440
Առանց հեծյալի 441
Նիագարա 442
Ինքս իմ դեմ 444
Սրնգահարը 446
Երազ 448
Երկխոսություն 449
Հավատ 450
Գուշակություն 452
Բաղձանք 453
Գիշերային տրտունջ 454
Ո՞ւր եք 456
Ընկել են ջահել 457
Կրկնվող երազ 458
Գարնան առավոտ 459
Այրված կտավներ 460
Իմ մուսային 462
Կորած տողը 464
Ես և ես 465

Պատրանք 466
Հավատում եմ քեզ 468
Ամպրոպը լեռներում 469
Ես փախա ցավից 470
Դեղին անքնություն 471
Կանչ 472
Գիշերամուտ 473
Ներեցեք, տղերք... 474
Գիշերային այց 476
Իրիկնային տեսիլ 478
Հարցում 480
Աստղային բախտ 481
Աշնան անտառ 482
Յոթ խորհուրդ իմ երգին 483
Լեռան ճամփա 486

ՀՐԱՇՔԸ

Հրաշքը 489
Գարնանային 490
Աշո՛ւն, տխրաչյա աղջիկ ես դու 490
Նժույգներ 491
Այնպես տխրում է հոգիս, այնպես թախծում է լռին 492
Առաջին ձյունը 493
Հինա է դրել բարալիկ թխկին 494
Ամառ է 495
Ապառաժ է վայրի 496
Դեղին տոթ է ու քար 497
Ամառային մի արշալույս 498
Կանչում է 499
Տեսիլք 500
Որտե՞ղ որոնեմ 502
Աշնան օր 503
Առավոտ 504

Դու՝ իմ հանցավոր 505
Օրհնություն քեզ, կյանք... 506
Ծնորհ 507
Ծաղիկները 508
Աղբյուրը 509
Լիծը 510
Սիրտս հաշվում է ժամ ու ժամանակ 511
Այն հեռավոր լազուրում 512
Ելնեի կանուխ 513
Իրիկնամուտ 514
Կանչ 515
Այսքանը միայն 516
Ես հավատում եմ 517
Ամպրոպ կլինի 518
Լեռան աղբյուր 519
Ակնթարթ 521
Թեկուզ գիտեմ 522
Այնտեղ 523
Աշնանային 524
Սպասիր մի քիչ 525
Ամպրոպի կարոտ 526
Աղբյուրի կարոտ 527
Լեռան կարոտ 528
Ձյան կարոտ 529
Գույների կարոտ 530
Նա եկել է նորից 531
Անտառի կարոտ 532
Լիներ այնպես, լուսաբացին 533
Դաշտի կարոտ 534
Գարնան գիշերն անտառում 535
Արարչություն (փոքրիկ պոեմներից) 536

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Անքնություն 549
Անքո՛ւն գիշեր 551
Գիշերն ահա երևակվում 553
Ես սեպագիր եմ հողմերից եղծված 555
Տրտունջ..... 556
Նորից օդն է բռնկվել ինչ-որ կապույտ սոսափով 558
«Հավատ» 559
«Հող» 560
Լեռներում ձնհալ է 561
Արշալույս 562

«Սաղմոսարան» շարքից

Սաղմոս Ա 563
Սաղմոս Զ **565**
Ես ճամփա ընկա, որ այս տանջալի կասկածը մարեմ 567
Կապույտ մշուշ է ելնում վիհերն ի վեր, ձորն ի վեր 569
Երգ հողի ու երկնքի 570
...Եվ ամեն գիշեր ես խոսք եմ բացում 572
Ես խազերն եմ վերծանում 573
Նա գալիս է գիշերով ու ականջիս շշնջում 577
Զրույց Զվարթնոցի հետ 578
Գիշերային թռիչք 580
Եփրատի կիրճում 582
Կապույտը 584
Եվ նորից շունը... 585
Բառեր 586
Հանգչող կրակի կապույտ մխանքում 588
Գիշերներն իմ ջրտուքի... 590
Օձը 591
Ներշնչանք 592

ՀՈՂՄԱՇՈՒՆՉ ԳԻՇԵՐՆԵՐ

Չեմ հիշում հիմա 595
Տագնապ 596
Հո՛ր, ցտեսություն... 598
Զարկ, իմ զարմանալիդ 601

«Հողմաշունչ գիշերներ» շարքից

...Եվ բուքն ամբողջ գիշեր, իբրև ձերմակ կախարդ 605
Հողմը մերթ լալիս, մերթ հեկեկում է ու մերթ մոնչում 607
Հողմ, իմ ահեղ ընկեր, փշաքաղված իմ գայլ..... 608
Բուք, սպասիր մի քիչ, կանգ առ դռանս դեմ 610
Ինչպե՞ս պիտի վերանամ 611
Պատանության գիշեր 612
Հիմա արդեն աշխարհում հարկավոր չէ ինձ ոչինչ 613
Սրտիս թելը, մայրիկ, ախ, բարակել է շատ 614
Մահարու հետ 615
Ես և ես 617
Հնար չկա, մորմոքն իջել, փոխվում է լուռ հեկեկանքի 618
Այս քանի օր է արդեն հեռախոսս համրացել 619
Անեծք դարավերջի 620
Երանի էր քեզ... 622

ԳԻՐՔ ՈՂԲԻ ԵՎ ԳՈՎՔԻ

Ողբ մեղվի 627
Ողբ Չարենցի 630
Գովք իմ ոսոխի 633
Գովք ծիրանի ծառի 635
Ողբ անձնական 637

Երբ ես հեռանամ 639

ՊՈԵՄՆԵՐԻՑ

Ռեքվիեմ 643

Գիշերային զրույց Նարեկացու հետ 662
Տենդ 677
Ասք Սարդարապատի 692

Վահագն Դավթյանի ձեռագրերից

Ձեռագրեր 703

Անտիպ բանաստեղծություններ

Ձեռագրեր 717
Մանուկ էի ես դեռ, անգետ չարին, բարուն, ... 725
Մղձավանջ 726
Եռագույնը Ծուշվա բերդին 727
Հայը 729
Հավատ 731
Առաքյալը 733
Ոչ լեռան արծիվ ու ոչ դյուցազուն 734
Ես մի ձորակ գիտեմ 735
Երբ արմատս եմ փնտրում 736
Վահագն Դավթյան. Հակիրճ կենսագրությունը 737

Բանաստեղծություններ Վահագն Դավթյանի մասին

Երգդ շուրթեր ունի՝ մի խոր 742
Ծննդավայրը կարդալուց հետո 743
Լույսի շառաչ է կրկին, ամպրոպի ճիչ, ուրցի բույր 744
Բանաստեղծություն՝ նամակի փոխարեն 746
Դու արեվից ծնված լույսի ցոլանք 748
Անդին 749
Վահագն Դաւթեանի հետ 750
Կարծիքներ Վահագն Դավթյանի մասին 751
Վերջաբանի փոխարեն կամ
Վահագն Դավթյանի մեծ հունձքը 755

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱՍՏՂ ԵՎ ՑՈՐԵՆ

ВААГН ДАВТЯН

ЗВЕЗДА И ПШЕНИЦА

Հրատարակչական խմբագիր՝	Գալյա Հովհաննիսյան
Համակարգչային շարվածքը՝	Ալինա Մելքումյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կազմի ձևավորումը՝	Լիանա Մինասյանի Արաբո Սարգսյանի
Լուսանկարները՝	Գագիկ Հարությունյանի Վարազդատ Սևոյանի Պողոս Պողոսյանի ընտանեկան արխիվից

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Բրյուսովի 12
Հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ЭДИТ ПРИНТ
Ереван, ул.Туманяна12
Тел.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am